

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՅԻՆ
ՆՏԳԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

— — — — —

ՊԱՏՄԱՌԱՆԱՍԻՐԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
Ա

ՊԱՎԵԼ ԶՈՐԱՆՅԱՆ

ՆԱՅ - ՈՒՐՄ - ՎՐԱՅԱԿԱՆ
ՓՈԽՆԱՐԱԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԺԸ ԶԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՄԻՆ



ՄԱՅՐ ԱԹՈՌ Մ. ԷԶՄԻԱՅԻՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
Մ. ԷԶՄԻԱՅԻՆ - 2006

Հրամանաւ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ

ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԵՒ ՎԵՅԱՓԱՌ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տպագրվում է
Մխիթար Հերացու անվան
Պետական Բժշկական համալսարանի
հովանավորությամբ

MOTHER SEE OF HOLY ETCHMIADZIN
NATIONAL ACADEMY OF SCIENCES of RA

HISTORICAL-PHILOLOGICAL RESEARCHES
I

PAVEL CHOBANYAN

ARMENIAN - RUSSIAN - GEORGIAN RELATIONS
ON THE SECOND HALF OF XVIII CENTURY

Publication of Mother See of Holy Etchmiadzin
Holy Etchmiadzin - 2006

ПЕРВОПРЕСТОЛЬНЫЙ СВЯТОЙ ЭЧМИАДЗИН
НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РА

ИСТОРИКО- ФИЛОЛОГИЧЕСКИЕ ИССЛЕДОВАНИЯ
I

ПАВЕЛ ЧОБАНЯН

АРМЯНО- РУССКО – ГРУЗИНСКИЕ ОТНОШЕНИЯ
ВО ВТОРОЙ ПОЛОВИНЕ XVIII ВЕКА

Издательство Первопрестольного Св. Эчмиадзина
Св. Эчмиадзин – 2006

9(47 323)
19-72
42

ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾԻՆ
ՆՏ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա

ՊԱՎԵԼ ՉՈԲԱՆՅԱՆ

ՆԱՅ - ՌՈՒՄ - ՎՐԱՅԱԿԱՆ
ՓՈԽՆԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԺԸ ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՄԻՆ



ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷԶՄԻԱԾԻՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
Ս. ԷԶՄԻԱԾԻՆ - 2006

ՀՏԴ 941 (479.25)
ՊՄԴ 63.3 (2Հ)
Չ – 721

Խմբագիրներ՝

ՀՀ ՊԱԱ ակադեմիկոս Վ. Բ. Բարխուդարյան
պատմական գիտությունների դոկտոր, պրոֆ. Պ. Մ. Մուրադյան

Չորանյան Պ. Ա.

Չ – 721 Հայ-ռուս-վրացական հարաբերությունները ժԸ. դարի երկրորդ կեսին: Խմբագիրներ՝ Վ. Բ. Բարխուդարյան, Պ. Մ. Մուրադյան.– Էջմիածին: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատարակչություն, Սուրբ Էջմիածին - 2006.– 560 էջ:

Աշխատության մեջ ուսումնասիրվում են ժԸ դարի երկրորդ կեսի հայ-ռուսական, հայ-վրացական, ռուս-վրացական տնտեսական ու քաղաքական փոխհարաբերությունների խնդիրները:

Նախատեսվում է հայագետ-արևելագետ պատմաբանների և ուսանողության համար:

ՊՄԴ 63.3 (2Հ)

ISBN 99930-75-42-6

© Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2006 թ.
© Պ. Չորանյան, 2006 թ.

Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Յուրաքանչյուր ժողովրդի գերբորոշումը կամ պետության վարած քաղաքականությունը թելադրվում է ինչպես այն իրավիճակով, որի մեջ հայտնվել է նա պատմական ավյալ ժամանակահատվածում, այնպես և ունեցած պատմական իր ավանդույթի բնույթով: Ըստ այդմ՝ ճիշտ հասկանալու և գնահատելու համար որոշակի ժամանակաշրջանում վարվող քաղաքականությունն ու քաղաքական կողմնորոշումները, պետք է ստույգ պատկերացում ունենալ մեկ կողմից ավյալ շրջանում ժողովրդի իրավիճակի մասին և մյուս կողմից՝ պարզել, թե որքանով ճշգրիտ են կողմնորոշվել ավյալ պատմական իրավիճակում ժամանակի գործիչները¹:

ԺԸ. դարի վերջին քառորդը հայ ժողովրդի պատմության շրջադարձային իրադարձություններից մեկի՝ Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միացմանը անմիջականորեն նախորդող ժամանակաշրջանն էր, որի ամբողջական և հիմնավոր ուսումնասիրությունը կարող է պատասխան տալ այն հարցին, թե որքանով անհրաժեշտ ու անխուսափելի էր ժամանակի հայ գործիչների որդեգրած արտաքին քաղաքական գերբորոշումը:

Հայ-ռուսական հարաբերությունները առավել աշխուժացան ժԸ. դարի 80-ական թվականներին, որով և պայմանավորված է հայ պատմաբանների հետաքրքրությունը նշված թվականների իրադարձությունների լուսաբանման խնդիրների նկատմամբ: Կարևոր է նաև այն փոխհարաբերությունների վերհանումը, որ առկա էին ինչպես հայ և վրաց գործիչների, այնպես էլ հայ գործիչների և ինքնուրույնության ուղին բռնած մահմեդական խա-

¹ Վերջին ժամանակներս հրատարակվում են ուսումնասիրություններ, որտեղ հարցականի տակ է դրվում Ռուսաստանի կողմից Այսրկովկասի նվաճման նպատակահարմարությունը՝ Ռուսաստանի պետական շահերի տեսանկյունից: Խոսելով 1768-74 թթ. Ռուս-թուրքական պատերազմից հետո կնքված Քյուչուկ Կայնարջի պայմանագրի մասին, ասվում է մասնավորապես. "Россия начинает продвигаться в иное, Закавказское геополитическое пространство. Политические мотивы, толкавшие ее к такому продвижению, явно преобладают, оттесняя на задний план собственно российские государственные интересы. Имперская алчность и относительная легкость продвижения России в Закавказье заставляли забыть о мотивах целесообразности такого расширения и возможностях освоения новых территорий". (С. Ф. Орешкова, Н. Ю. Ульянов. Россия и Турция (проблемы формирования границ), Москва, ИВ РАН, 1999, с. 39). *Նման պնդում տե՛ս նաև* «Российско-турецкие отношения: История, современное состояние и перспективы», М., 2003, с. 28.

նությունների միջև: Հակադիր էին Հաճախ նաև Ռուսաստանի նկատմամբ նրանց դիրքորոշումները: Պակաս կարևոր է է միջազգային փոխհարաբերությունների իրական պիճակի և այդ բնագավառում Հայ գործիչների ունեցած իրազեկության լուսարանումը:

Եթե մինչև ԺԸ դարի սկիզբը Այսրկովկասը գտնվում էր Հիմնականում Պարսկաստանի ու Օսմանյան պետության շահարնդրությունների ռւլորում, ապա ԺԸ դարի 20-30-ական և Հստկապես 60-ական թվականներից նրանց միանում է նաև Ռուսաստանը: Հայ գործիչները պարտավոր էին միաժամանակ հարաբերությունների մեջ լինել կամ նշված երեք պետությունների հետ և կամ դաշինքի գնալով նրանցից որևէ մեկի հետ՝ ելք փնտրել ժողովրդի անվտանգության ու ազատագրության համար: Ուշագրավ է այդ առումով այն Հաղորդումը, թե դեռևս ԺԸ դարի առաջին քառորդին ազատագրական պայքարի ելած արցախահայության ներկայացուցիչներինց ոմանք թուրքերի կողմն են, ոմանք՝ պարսիկների և ոմանք էլ՝ ռուսների, և այդ այն պահին, երբ կնքվում էր ռուս-թուրքական 1724 թ. պայմանագիրը, և նրանց արդեն հայտնի էր դարձել բնթացող բանակցությունների ու պայմանավորվածության փաստը²: Դերբենտի ռուսական պարետին ուղարկած նամակում Մարտիրոս վարդապետը Արցախից ժամանած բանագնացի տեղեկատվության հիման վրա 1724 թ. փետրվարի 24-ին հաղորդում էր. «Էլիքի Կարապետ Իվանով գեղ է Հասել, Աւան ևւ Միրզա ուղարաչոց մոտն է, լաւ ուզում են, ևւս առաւել Եսայի կաթողիկոս: Սարգիս Չարարերթցի Կարմիր աչքի կողմն է: Եսայի Գուլուստանեցի Օսմանցունց կողմն է. Եսային գնացել է, թէ Օսմանլու բերէ: Մէլիք Պաղի թոռնը՝ մէլիք Պաղըր, կանա՝ Կարմիր աչքի կողմն է: Մէլիք Թամրազ ևւ այլ ուղարաչիք ձեր հրամանոց ծառայ են»³: Իվան Կարապետի 1724 թ. ապրիլի 4-ով թվագրված նամակում ասվում է, որ թեև ցանկալի, սակայն «Ոչ ով հաւատման է, թէ թաղայորէն ղոշուն կուկո էստեղ. թէ Հայ, թէ Ղլլպաչ, և թէ Վրացի, ոչ ով հաւատման է. ասում ան, թայ Գ. (3) դարի է լսում էնք, թէ Ըռուստն դալիս է, էնք տեսման: Եւ էս երկրումս թէ ինայ, թէ Ղլլպաչ, թէ Վրացի մարդ կուվարար շատ կայ: Ասում ան, թէ վախման էնք Ըռուստն չգայ, ետոյ մեծ նեղութիւն խասնի մեղ: Եւ էս ինայրին մէշտեղն Քուրդ կայ: էս ինայրն ասում ան, թէ Չատիկն առենք, երեքշապաթ կամ չորէք»

² Армяно-русские отношения в первой трети XVIII века (Сбор. документов), т. II, ч. II, под ред. А. Иоаннисяна, Ереван, 1967, с. 72.

³ Կրկին, դարձյալ, ևս:

⁴ Армяно-русские отношения в первой трети XVIII века..., т. II, ч. II, с. 72.

չապաթ որ կու գնանք Քուրտին վերէն. Քուրտն փչացնէնք, որ տեղէն մինչ է Երեւան ողջ ինայր ան, Ա. (1) կու տառնան»⁵:

Ավիին, 1726 թ. նոյեմբերի 15-ի՝ Ավան և ՕՀան յուղարաչիների նամակից պարզ է, որ ռուսական օժանդակության ստացման հեռանկարը այլևս հուսադրման համար անգամ պիտանի չէր, և հայրենիքը լքելու ռուսական առաջարկություններին ի հակակշիռ՝ Արցախում ձևավորվում էր թուրքական ռազմակալման հետ բանակցությունների, համակերպման ու ժամանակավոր դաշինքի տեսակետը: «...Եսայի հոգևոր տէրն քանի որ Ղարայազղումս մէլիք կայ, ևս քաթխուղայ կայ ժողովէց, ղոշուն կապէցին, որ ըստուքիւ և մեզ յես կուիւ ին անում, թէ մէք օսմանցուց ղուլուղկան ենք, ձեզ ուղլլ էէնք: Հոգևոր տէրն կանկնել է, թէ Գ. (4) տարի է, որ Ուռուսն մեզ խափում է՝ ես կուկամ զձեզ անօրինաց ծեռաց ազատեմք, էլ եկաւ ոչ, յիմայ օսմանցունց ղուլուղական եմք»⁶:

Խոսուն է այն փաստը ևս, որ արցախահայությանը երկար հուսադրելուց հետո Պետրոս Առաջինը, նրանց առաջարկելով տեղափոխվել Մերձկասպյան տարածքներ⁷, Հստակ գիտակցում է միաժամանակ հրահանգում էր Կ. Պոլսի իր գեապանին, թե՛ թուրքական կառավարության կողմից բողոքի դեպքում պետք է պատասխանել, որ Հայերի տեղափոխումը ձեռնառու է նաև սուլթանին, քանզի հայերի հեռացումով ավլիլ դյուրին կդառնա թուրքերի կողմից Հայաստանի գրավումը⁸:

⁵ Նույն տեղում, էջ 99:

⁶ Նույն տեղում, էջ 286-287: Դեռևս 1722թ. սեպտեմբերի 3-ին Պետրոս I-ինը տեղեկանալով թուրքական արքունիքի տեսակետին, թե «...ежели Всероссийский монарх кроме Шемахи не пожелает себе предвосприятъ большихъ прогрессовъ в Персии, иво хотя де Шемахою и овладеет, то может отговориться причиною за учинение обиды в российскимъ купцамъ отъ лязговъ, что Порты вытерпятъ, хотя и не приятно» (АВІР, ф.СРТ, 1722, д. 4, с.237) հանձնարարում էր Նեպոլեոնին պնդորեն վստահեցնել Օսմանյան արքունիքին, որ «...хотя наши войска и приужлены к Шемахе для сатисфакции надъ известными перскимиъ ребелями..., но оныс к турецкимъ границамъ в Жоржию и Армению не будутъ приближатиа, но токмо поле береговъ Каспийского моря маршировать имсет, в чемъ тебе и ныне сему повелеваемъ Порте накрепко овнадеживать» (АВІР, ф. СРТ, 1722, д. 4, с. 56. Բերված են ըստ ձ. პაპაშვილი, საქართველოს სავაჭრო-პოლიტიკური ურთიერთობანი (XVIII საუკუნის პირველი მეოთხედი), თბილისი, 1992, გვ. 104).

⁷ Պետրոս Առաջինը Մերձկասպյան տարածքներ տեղափոխելու առաջարկ կատարել էր նաև վրացիներին. տե՛ս ընթացի յաճարաջա. საქართველო-რუსეთის ურთიერთობის საკითხისათვის (XVII- XVIII სს.).- ქართული დიპლომატია, წველიწველი. 4, თბილისი, 1997, გვ. 324-325.

⁸ Эзов Г. А. Сношения Петра Великаго с армянскимъ народомъ. Документы. СПб, 1898, с. LXVII-LXVIII. «Петр послал к Румянцеву в Константинополь рескрипт:

ժԸ. դարի առաջին երեսնամյակի Հայոց ազատագրական պայքարի շրջանը, սակայն, ավարտվեց Նազիր շահի կողմից Իրանի տիրապետությունների հետ համաձայնագրով՝ Հայ բնակչությանն ու նրա ավագանուն արտոնություններ տալու և Արցախի Հայկական իշխանություններին որոշակի կարգավիճակ շնորհելու արդյունքով:

Նազիր շահի սպանությունից հետո, ինչպես ողջ Պարսկաստանում, այնպես էլ այսրիովկասյան տարածաշրջանում տեղի ունեցած տեղաշարժերն ու իրադարձությունները մեծ հարված հասցրին Հայկական իշխանությունների միասնությանն ու նրա էթնիկ տեղաբաշխվածության հարաբերակցությանը: Պարսկաստանում կենտրոնական իշխանության փաստական վերացման պարագայում կրկին իրական հնարավորություն էր ստեղծվել տեղական կառավարիչներին և ժողովուրդներին համար վերականգնելու իրենց անկախությունը, սպառնալից ինքնապաշտպանությունը, ցուցադրելու կամ դրևորելու քաղաքական կենսունակություն: Ստեղծված համեմատաբար նպաստավոր հնարավորությունների օգտագործումով իրենց համար անկախ գոյավիճակ սպառնալից Բարսիլի կառավարիչ Թեյմուրազ Երկրորդը, Կախեթի կառավարիչ Հերակլ Երկրորդը, Շաքի-Շիրվանի կառավարիչ Հաջի Չելեբին, Արցախի մատույցներում թափառող Փանահ խանը և ուրիշներ: Նազիր շահի դահակություն ընթացքում Արարատյան երկրում մեծ դեր ունեցավ Մելիք Մանուչարը, որ «ուներով միշտ ի պատրաստի բազմութիւն զօրականաց ի քաջաց Հայոց, որոց սպարապետ էր Հաւատարմն իւր Գրիգոր»⁹, Նազիրից հետո գավազրություն զոհ դարձավ: Իր իշխանության ամրապնդմամբ մտահոգված Երևանի խանը, որը Հասկանալով, թե իրական հնարավորություն է Մելիք Մանուչարի համար «բազմացուցեալ զզօրս իւր՝ տիրեսցէ ամրոցաց և բռնասցի յերկրին Արարատայն» (ՄՄ, ձեռ. 2888, թ. 341ր):

«Приехали к нам армянские депутаты с просьбою защитить от неприятелей... Мы им объяснили, что помочь им войском не можем вследствие заключенного с Портою договора, а поселиться в прикаспийских наших провинциях позволили и нашу овладевательную грамоту послали. Если турки станут вам об этом говорить, то отвечайте, что мы сами армяны не призывали, но они нас по единоверию просили взять их под свое покровительство; нам, ради христианства, армянам, как христианам, отказать в том было нельзя, как и визир сам часто объяснял, что "по единоверию просящим покровительства, отказать невозможно. Надобно смотреть только, чтоб земли принадлежали тому, за кем выговорены в договоре, а народам не надобно препятствовать переходить в ту или другую сторону. Порте еще выгоднее будет, когда армяне выйдут, потому что она тогда без сопротивления землями их овладеет».

⁹ Տե՛ս «Յովհաննու Մելիք-Սելիմեանց. Համառութիւն պատմութեան Հայկազունեանց» (ՄՄ, ձեռ. 2888, թ. 341ր):

տայ», 1747 թ. հունիսի 22-ին կարողանում է խաբուրթյամբ հրավիրել նրան Երևանի այգիներից մեկը և սպանել տալ¹⁰, «Իսկ զօրք Մանիչարայ յուսահատեալ ցրուեցան աստանդական»¹¹: Մելիք Մանուչարին Երևանի մելիքի պաշտոնում հաջորդած Մելիք Հակոբջանը, որին Սահակ Ահաբեկյան կաթողիկոսը պատվիրել էր հովանավոր լինել Էջմիածնի նկատմամբ իր բացակայության պայմաններում¹², այլևս ի վիճակի չեղավ Երևանում իր ձեռքում կենտրոնացնել իշխանությունը:

Հայոց պայքարը անհաջողությամբ է ավարտվում Նախիջևանում, որտեղ ինքնապաշտպանություն կազմակերպած Շահկերտ գյուղի բնակչությունը չի հաջողվում ընդլայնել դիմադրական ճակատը: Արցախի մելիքությունները ուժերը քաղաքական նպաստավոր այդ պահին ոչ միայն չեն վերածվում միասնական բանակի, մեկ բառնացքի, այլև մելիքներից մեկը՝ Մելիք Շահնազարը, Արցախի կենտրոնում հարմարագույն բնական ամրությունը՝ Շուշին, գեղում է հակառակորդին: Այդ ամենը, սակայն, բնավ չի ենթադրում, թե Հայ գործիչները համակերպվում են տիրող իրավիճակին և դադարում են ձգտել իրենց հայրենիքում ստեղծելու անվտանգ կյանքի պայմաններ, փնտրել ապահովության նոր հնարավորություններ:

Ինչպես հայտնի է, Էջմիածնի և ուսական արքունիքի միջև պաշտոնական փոխհարաբերությունները սկիզբ են առել Սիմեոն Երևանցու կողմից Հատուկ պատվիրակության Պետերբուրգ առաքումով, որից հետո Հայկական եկեղեցիներում հիշատակվում էր Ռուսաց կայսեր սնունը, և այդ՝ մահամեղիկ տիրակալության պայմաններում: Սիմեոն Երևանցին, սակայն, կորականապես դեմ ելավ Հովսեփ Էմինի գործունեության ձևին (1760-ական թթ.) ու Շահամիր Շահամիրյանի հովանավորությամբ գործող Մովսես Բաղրամյանի «Նոր Տետրակի» հրատարակմանը (1772 թ.), գտնելով, որ դրանք վնասակար են, քանզի չնախապատրաստված ապստամբություն

¹⁰ ՄՄ, ձեռ. 2888, թ. 341ր: Հմմտ. Հայ ժողովրդի պատմություն, IV, Երևան, 1972, էջ 191.

¹¹ «Յետ որոյ զօրացեալ պարսից՝ տիրեցին տանց և կայից, կահուց և կարասից և ամենայն երևելի ընչից Մանիչարայ և կայան յարքունիս: Իսկ կին նորա յետ բազում տառապանաց, ամուսնացուցեալ զմին ի գստերաց իւրոց ընդ միոյ առն իշխանաւորի Հայոց յաշխարհէն Սիւնեաց, և զմիւս դուստրն իւր առեալ զնաց ի վրաստան և ամուսնացոյց զնա ընդ մէլիք Աւետիսի, յորմէ ծնաւ քնեազ Տարչինն» (ՄՄ, ձեռ. 2888, թ. 341ր): Մելիք Ավետիքի կինը մահացել էր 1777 թ.

¹² Մելիք Հակոբջանի 1756 թ. մայիսի 26-ի նամակը «Իսահակայ Ամենից Հայոց կաթողիկոսին» տե՛ս ՄՄ, ձեռ. 6241, թ. 48ր:

յան պարագայում Հարցականի տակ կղզիի հայ ժողովրդի ֆիզիկական գոյությունն խնդիրը¹³:

ԺԸ. դարում Հայաստանի և Հայ ժողովրդի վարած քաղաքականության ուղղորդումը և միասնականության ապահովումը բարդանում էր, քանզի ժողովուրդը գտնվում էր սոցիալ-տնտեսական տարբեր մակարդակի, իրարամերձ շահեր ունեցող ու քաղաքականություն վարող պետությունների կազմում: Յրված գանդավածների տարբեր հատվածներում, բնականաբար, առաջացել էին նաև տեղական շահեր, որոնք հաճախ չէին համընկնում նրա այլ հատվածների շահերին: Յուրաքանչյուր հատված առաջադրում էր իր շահերի արտահայտմանը որդեգրված հասարակական-քաղաքական գործիչներ¹⁴, իսկ այդ գործիչները իրենց գործունեությունը ծավալելու ժամանակ չէին կարող հաշվի չառնել այն քաղաքականությունը, որը իրականացվում էր ինչպես տարբեր երկրներում հայերի նկատմամբ, այնպես էլ պետությունների միջև եղած փոխհարաբերությունները, որոնց կազմի մեջ գտնվում էին Հայ ժողովրդի տարբեր հատվածները պատմական տվյալ պահին¹⁵:

Հայոց պատմության նույն ժամանակահատվածի բացառիկ կարևորությունը ներկայացնող Հարցերից է այն ընդհանուրի վերահանումը, որը

¹³ “Армяно-русские отношения в XVIII веке. 1760–1800”. Сборник документов. т. IV, Ереван, 1990, с. 61–62.

¹⁴ 1792 թ. Գրիգոր վարդապետին գրած նամակում Հովսեփ Արղունյանը Գրիգորի կողմից ներկայացված ռազմական գնահատման և զհաւատու մեր, խնդիրք է տուեալ թուրքաց սուլթանին և Ռէյիեղ աֆանդուն, թէ Յովսէփ արքեպիսկոպոսն Ռուստաց մի Ընդհանրական գիրք է տպեալ ընդդէմ է մեր հաւատոյն և ձերոյ տերութեանն: Ձի ոյ որ կարգայ ուսւ լինի, նոքայ հրամայեալ են թարգմանել և տեսանել, թէ ի՞նչ է ընդդիմութիւնն, այժմ թարգմանեն, և բոլոր քաղաքն, իբրև զծով ծփայ, և նա նախանձու զհաւատ եկեղեցւոյն իւրոյ ուրանայ և զսուրբ Ներսէս Ենորհային, իւր մեղաբարութիւն բանիւն մատնեալ է անհաւատից, որպէս Հրեայքն՝ զՔրիստոս: Իշխանքն կշտամբեալ են, բայց չէ լուեալ: Մէջ զհարկաւորն գրեցար իշխանացն, գուրեւնաթին գրեաց զեսպանին, գրաֆն ևս գրեաց է» (ՄՄ, ձեռ. 2949, թ. 270ր):

¹⁵ Հայ մատենագրության մեջ առկա են այնպիսի վկայություններ, երբ սեփական կամ օտար տիրակալների մասին արտահայտվում են արամազծորեն Հակառակ ու իրարամերձ կարծիքներ: Եթե մեկ դեպքում սկզբնաղբյուրներում բաղմամբիկ են նկարագրված օտար տիրակալների կատարած ավերածություններն ու բռնությունները, ապա այլ Հեղինակների կողմից նույն տիրակալները ներքին ներկայացված են որպես Հայաստանի և կամ Հայաստան գործիչներ: Տե՛ս Հայերեն ձեռագրերի Հիշատակարաններ, ԺԸ դար, Հ. Ա, Կազմեցին Վազգեն Հակոբյան, Աշոտ Հովհաննիսյան, Երևան, 1974, էջ 144:

միավորում էր տարբեր երկրներում ապաստանած հայությունը, այն, ինչը անվանվում է Համազգային շահ, Համազգային խնդիր¹⁶:

ԺԹ. դարի սկզբին Ռուսաստանի կողմից Վրաստանի նվաճումից հետո վերացվեց վրաց թագավորությունը, որը, ինչ խոսք, խոշոր հարված էր վրաց պետականության զարգացման գործընթացին: Սակայն այն իրավիճակի ուսումնասիրությունը, որի մեջ Հայտնվել էր Վրաստանը ԺԸ. դարի վերջին, ապացուցում է, որ չնայած Հերակլ Երկրորդի անուղղ ջանքերին, Վրաստանը ևս ի վիճակի չէր այլևս դիմագրավելու Պարսկաստանի և Թուրքիայի գնալով ավելի սպառնալի գարձող նվաճողական քաղաքականությունը, որը թիկադրված էր տարածաշրջանում խոշոր տերությունների շահերի բեռնացումով ու բախումով: Կովկասյան լեռնաշղթան այլևս դադարեց բաժանաբար խոչընդոտ Հանդիսանալ Հյուսիս-Հարավ կապերի համար՝ Արևելք-Արևմուտք արագ զարգացման միտումներ դրսևորող Հարաբերությունների պայմաններում, կապիտալի կուտակման ուղին բռնած պետությունները այլևս չէին կարող հանդուրժել Կովկասի ռազմա-քաղաքա-

¹⁶ Պետականության վերականգնման ճգնաժամը երբեք չի լքել հայերին. տարբեր ժամանակներում նրանք դրսևորել են այդ երազանքը նաև գրավոր հուշարձաններում բանաստեղծության ու արձակի ձևով, աղթքի ու դիմումի տեսքով և այլն: Նման դրսևորման մի փաստի ենք Հանդիսում նաև ՄՄ 1760 ձեռագրի մեջ, որտեղ գրիչը 263 թերթ արտագրելուց հետո, խոսքն ուղղելով Աստուծո, գրում է. «...ըզձմամբ հայեսցուք յարարչագործ և ի նախախնամական զթութեանցն Աստուծոյ, զի քաղցր և յաշտ ակամբ հայեսցի ի մտանդութիւն և յանդամս որդւոյ իւրոյ սիրելոյ, Հովանաւորեալ պահեսցէ ընդ ամբածածուկ թևօք իւրոյք, յամենայն փորձութեանց Հոգոյ և մարմնոյ, անխտով յազգաութեամբ այժմ և յաւիտեանս, ամէն: Մանաւանդ զագագ հայկազեան, զտաժանեալս և զվարատեալս մեղօք գցր(թ. 267թ)ունեալս ընդ երես երկրի, իբրև գիտչի մեղացն հողմով հոսեալ, ի յազգս և յազինս օտարաւետս, հայեսցոր յամենայնեալ և յամենազոթ աւորչէն, զի որ եհարն դարձեալ բժշկեսցէ, և գրգամբ հողոյն իբրև հա զձագս իւր ժողովեալ՝ ընդ թևօքն իւրովք և ամբածածուկ աջովն իւրով հաւաքեալ վերջաւորն ի սեպհական ի բնիկ և ի հայրենի երկիրս և ի գաւառս հայկազեան վիճակի. նոր հորոգեալ հորոգեսցէ իբրև գաղաջնաստեղծն պերճ փառք և բարգաւաճեալ բարի ամրակալք, կարողացուցէ, կազդորացուցէ և հաստահիմն արասցէ թագաւորական և քահանայական ճոխութեամբ և ամենայն որպիսութեամբ բարեաց, յալթօղ և զօրատր աւուսցէ, ընդդէմ ամենայն ներհակաց ճշմարտութեան, ամէն: (թ.274ա)... Մանաւանդ զստորաւոյցեալ և ներգեւեալ տունս Թորգոմայ Ասքանազեան ազին, Սարեթեան ազգին Հայկազեան զվերջացեալս և զթշուռացեալս յամենայն բարեաց ի թագաւորական գահոյց, ի պատրիարքական աթոռոց, ի յիշխանական պերճութեանց, ի Հայրենական ժառանգութեանց և ի փարթեմ արգասեաց, և յամենայնէ թափուր և ունայն եղեալ, ցրուեալ և վարատեալ, Ասքանազեան և տարաշխարհիկ ընդ ոլորտս տիեզերաց և նմք տառապեալ ի յերկրի այսօր վասն մեղաց մերոց... և վերստին դարձեալ զառաջինն նորոգեսցէ, որպէս հարցն նախ գերագոյն քան զայն և պատիւ փառաց, անալէկոծ կենեք, և յազգաութեան արգասիւք Հաստասեսցէ զպթոս և զգաւազան իշխանութեան թագաւորական պետութեան և քահանայական օժտութեան ազգին Հայկազեան...»:

կան ու առևտրա-անտեսական կարևոր նշանակության ԺԸ. դարի երկրորդ կեսի ինքնավար կարգավիճակը:

ԺԸ. երկրորդ կեսին և ԺԹ. դարի առաջին կեսին Ռուսաստանի Հետ ունեցած իրենց փոխհարաբերությունների պատմության զնահատման գործում տարբեր Հետազոտողներ սահմանափակվելով, որպես կանոն, միայն սեփական ժողովրդի Հետ ունեցած հարաբերությունների փաստից, Ռուսաստանի քաղաքականության մեջ չեն շեշտադրել այն ընդհանուր մոդելը, որ կիրառվում էր այլ ժողովուրդների նկատմամբ Ռուսաստանի վարած դիվանագիտական քայլերի ժամանակ: Կովկասյան ժողովուրդների նկատմամբ Ռուսաստանի վարած քաղաքականության դրսևորումները մեծ չափով նմանություններ են բացահայտում անգամ տարբեր կարգավիճակ ունեցող Վրաստանին, պարսից խանություններին և պետականություն չունեցող ու ազգային ձգտումներ դրսևորող ժողովուրդներին Ռուսաստանի գերիշխանությունը ընդունելու դարձնելու ուսուսական քաղաքականության մեջ: Պետականություն ունեցող ժողովուրդներին պայմանադրերի միջոցով խոստում էր տրվում պահպանելու, իսկ չունեցող ժողովուրդներին՝ վերականգնելու պետականությունը: Միայն Ռուսաստանի կազմի մեջ մտնելու և ուսուսական տիրապետության ամրապնդումից Հետո էր նշված ժողովուրդների Համար պարզվում, որ նախկինում ունեցած Հավատարմություններն ու խոստումները այլևս կիրառում չեն կարող գտնել, իսկ հողարձի ուղին փակված էր շատ ամուր կերպով: Նման փաստեր են արձանագրված ինչպես Հայ, վրաց և այլ կովկասյան տարբեր խանությունների Հետ հարաբերություններում, այնպես էլ Հյուսիսային Կովկասում, կովկասյան և այլոց Հետ Ռուսաստանի ունեցած փոխհարաբերություններում:

Մեր ժողովրդի ճակատագրում խոշոր իրադարձություն էր 19-րդ դարի սկզբից Այսրկովկասի և այդ թվում նաև Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին, որով մինչ այդ երկատված Հայաստանը թեև Հայտնվեց եռատված վիճակում, սակայն այն ոչ միայն Հետագա ուսումնասիրողներին, այլև բուն իսկ ժամանակակիցների կողմից դիտվում էր, այնուամենայնիվ, որպես առաջինը քայլ: Ի տարբերություն Վրաստանի, Հայաստանի նվաճումը Ռուսաստանի կողմից պատմագիտության մեջ միանշանակ գրականորեն է դիտարկվում: Առաջին անգամ արտագաղթի փոխարեն տեղի ունեցավ ներգաղթ, մի Հանգամանք, որը երազում էին ԺԸ. դարի Հայ ազատագրական շարժման գործիչները և որը կարևոր դեր պետք է ունենար Հայոց պետականության վերստեղծման Համար: Հայության ներգաղթի ալիքը, նրանց կարծիքով, կարող էր ընդգրկել անգամ Հնդկաստանը: Հատկանշական է այդ առումով Մակուի խանության ճակատագիրը: Եթե Ռու-

սաստանին միացումից Հետո Այսրկովկասում աճում էր Հայ բնակչության քանակը, սպա Մակուի խանությունը մշտապես բնակեցված լինելով Հիմնականում Հայերով և գտնվելով Երևանի ու Նախիջևանի խանությունների Հետ սերտ կապի մեջ, Թուրքմենչայի պայմանագրից Հետո, սակայն, մնալով Պարսկաստանի կազմում, աստիճանաբար Հայաթափ եղավ¹⁷:

Մեզ Համար առանձնահատուկ նշանակություն ունի երկրամասի Հետագա ճակատագրի Հարցում իրադարձություններին ժամանակակից ու մասնակից գործիչներին վերաբերմունքի դրսևորումների պարզաբանման խնդիրը: Քաղաքական իրադարձությունները հասունանում և դարգանում էին արագորեն: Արդ, կարևոր է պարզաբանել, թե որքանով էր Այսրկովկասի միացմանը նպաստել Հայ ժողովրդի որդեգրած քաղաքականությունը, ի՞նչ ակնկալություններ ու սպասելիքներ են եղել և որքանով արդարացված ու հիմնավոր, ինչ՞ու՞ն և ինչպե՞ս էր ներկայացվում ու ընկալվում Ռուսաստանի կողմից իրականացվող՝ Այսրկովկասի նվաճումը որպես տեղի ժողովուրդներին օժանդակության ցուցաբերում, և այդ՝ ոչ միայն Հայ, այլև մնացած ժողովուրդների կողմից: Այսպիսով, ուսումնասիրության նպատակ է ներկայացնել միացմանը անմիջականորեն նախորդող ժամանակաշրջանի քաղաքական մտքի ելևէջներն ու իրական պատկերը:

Դեռևս կենդանի էր Գեորգի 12-րդ Վրաց թագավորը, երբ (1800 թ. օգոստոսի 2-ին) Աստրախանից Աղալո Լազրովը գրում էր Հովակիմ Լազարյանին. «Փոստումս Թիֆլիզուցն շատ ձախ լուր եկաւ ի կողմանէ բարբարոս պարսիցն, որ Բաբախանի որդին եւ սարդարն եկել են մօտ Սուրբ Էջմիածնայ, միաբանքն բոլորն ցրուեալ են, եւ Թիֆլիզ եւս մեծ երկիւղի միջի է, նախ Աստուծոյ եւ սպա ողորմած կայսեր ողորմութիւնն Հասանի, որ չլինի թէ կրկին փորցութիւն պատահի ողորմելեացն»¹⁸: Նույն թվականի սեպտեմբերի 20-ին գրած նամակում Աղալո Լազրովը նշում է. «Թէպէտ վեհազնութիւն ձեր մեծապէս յուսադրէ՛ չունիլ ինչ հողս ի կողմանէ Պարսից, բայց տարբարող բնակիչք Թիֆլիզու կան ի մեծ կասկածանս. օրաւոր

¹⁷ 1828 թ. Հունվարի 25-ին կազմված «Предположение на составление проекта для управления Эриванскою и Нахичеванскою провинциями» փաստաթղթի առաջին իսկ կետում նշված էր «Местное положение сих провинций, Макинского магала и народы оныя населяемая требуют, чтобы управление оными было нераздельно... Округи, принадлежавшие прежде к Грузии Шурагел и Бомбаки, по местному своему положению отделяем цепью гор от Грузии и заключая в себе народ одинакий с провинциею Эриванскою, должны присоединится ко оной» (ՄԴՅԱ, և. 35, օր. 5, և. 2488, և. 14):

¹⁸ Մաշտոցի անվան Մատենադարան, Լազարյանների արխիվ, թղթ. 102, գործ 6, վավ. 281, բնագիր:

ուսնձնապես կարևոր էր Ա. Ռ. Հովհաննիսյանի այն հետևությունը, որ նա կատարեց մինչ այդ արդեն շրջանառվող գրքերին պատասխանելու համար. «Իրո՞ք Ռուսական կառավարությունը ձգտում էր այդ տարիներին (իմա՝ 1780-1787 թթ.) Անդրկովկասում կախյալ հայկական պետության ստեղծմանը, թե՞ հայկական հարցի առաջադրումը լուկ խաղաքար էր դիվանագիտական խաղի մեջ, որ նպատակ ուներ անդրկովկասյան այս կամ այն խանությանը պարտադրել ենթակայություն»¹⁵: Ա. Ռ. Հովհաննիսյանը իր եզրահանգումը, որ նա թեև կատարել էր մանրակրկիտ հետազոտություն արդյունքում, սակայն քաղաքական բռնաճնշումների տարիներին ստեղծված ծանր իրադրություն մեջ¹⁶, որոշ խմբագրումով պահպանեց գրքի նաև հետագա վերահրատարակման ժամանակ, այն է, թե «ռուսական դիվանագիտությունը լրջորեն զբաղվում էր այն ժամանակ Իրանին ենթակա հայկական տարածքներին (առաջին հերթին Ղարաբաղի և Երևանի խանության) հայկական պետության ստեղծման հարցով, նախանշելով անգամ ապագայում վերստեղծված Հայաստանի սահմանների ընդարձակման հնարավորություն Թուրքիային ենթակա հայկական հողերի հաշվին»¹⁷: Այս եզրակացությունը թեև միանգամայն համահունչ էր 1780-ական թվականների առաջին կեսի դիվանագիտական որոշ գրագրությունների ոգուն, սակայն իր լիարժեք արդարացումը չի գտնում Ռուսաստանի ձեռնարկած իրական-գործնական քայլերի մեջ:

Կարևոր առաջընթաց կատարվեց 1950-ական թթ.: Վ. Ռ. Գրիգորյանի «Երևանի խանությունը ԺԸ. դ. վերջում» աշխատությունը գալիս էր հանդամանորեն ներկայացնելու այն իրավիճակը, որ ստեղծվել էր հայոց ազգային-քաղաքական զարգացման գործում էական դերակատարում վերապահված երկրամասում: Աշխատության մեջ հայկական, կամ այսպես կոչված, տեղական ծագում ունեցող սկզբնաղբյուրների լայնորեն օգտագործումով, ավելի հստակորեն էր պարզաբանվում ու հիմնավորվում ներքին

¹⁵ А. Р. Ноантсия, Россия и армянское освободительное движение в 80-х годах XVIII столетия, Ер., 1947, с. 189:
¹⁶ Այդ գրքի ստիժով իր դեմ կազմակերպված արշավին ընկրկելով, Ա. Ռ. Հովհաննիսյանը ստիպված հանդես եկավ իր իսկ գրքի մասին հատուկ դրամատիկանով. «по поводу моей книги» Россия и армянское освободительное движение в 80-х годах XVIII столетия», որտեղ ընդունում էր իր պատմագիտական «խալները», - տե՛ս «Տեղեկագիր Բ. Զ. Գիտ.», 1950, թիվ 4, էջ 83-88:
¹⁷ А. Р. Ноантсия, Россия и армянское освободительное движение в 80-х годах XVIII столетия, Ер., 1990, с. 190.

ապմա-քաղաքական իրադարձությունների ազդեցությունը ազգային-գաղափարախոսական դիրքորոշումների ձևավորման վրա¹⁸:

Գ. Հ. Գրիգորյանի հեղինակած աշխատության մեջ վերլուծության են ենթարկվում Հեղհահայ միջավայրում ձևավորված հայոց ազգային-լուսավորական ու ժողովրդավարական ապագա պետական շինարարության հիմնահարցերը, ներկայացվում էր նրանց առաջադիմական բնույթը և խաղացած դերը Հայ ազգային գաղափարախոսության ստեղծման մեջ¹⁹:

1960-70-ական թվականները Հայ պատմագիտական մտքի կարևոր ձևաբերումների փուլ էր: Այդ ժամանակաշրջանում ինչպես առանձին ժողովածուներով, այնպես էլ պարբերական հանդեսներում ի թիվս Հայոց պատմության այլ հարցերի, լույս ընծայվեցին կարևոր ուսումնասիրություններ ու վավերագրերի հրատարակումներ նաև ԺԸ. դարի երկրորդ կեսի հայ-ռուսական ու հայ-վրացական հարաբերությունների պատմության վերաբերյալ:

Հետազոտությունների կարևոր ուղղվածություն արձանագրեցին Մ. Գ. Ներսիսյանի հրատարակած աշխատությունները²⁰, որոնցում լուսաբանվում են ռուս պետական գործիչների, մասնավորապես Ա. Վ. Սուվորովի, հետ հայազգի հասարակական քաղաքական գործիչների համագործակցության կարևոր դրվագներ, հայազգի գործիչների մասնակցությունը Ռուս-թուրքական 1787-91 թթ. պատերազմին և այլն:

1964 թ. լույս ընծայած իր «Ղրիմահայ գաղթօջախի պատմություն» աշխատության մեջ Վ. Ա. Միքայելյանը ներկայացրել է Արևմտա-Արևելք առևտրական հարաբերություններում կարևոր դերակատարում ունեցած հայկական այդ նշանավոր գաղութի ամբողջական պատմությունը, որն իր ավարտը գտավ 1778-79 թթ. Ռուսաստանի կողմից Ղրիմի զբաղման պայքարում քրիստոնյա բնակչության նկատմամբ իրականացրած տեղահանման քաղաքականությունը²¹: Այդ փաստով պայմանավորվեց Ղրիմահայոց գաղթօջախի մարումն ու նրա հենքի վրա նոր գաղթօջախի, այն է՝ Նոր Նախիջևանի, առաջացումը:

¹⁸ Վ. Ռ. Գրիգորյան. Երևանի խանությունը XVIII դարի վերջում (1780-1800), Եր., 1958.
¹⁹ Գ. Հ. Գրիգորյան. Հայ առաջավոր հասարակական-քաղաքական մտքի պատմությունից (XVIII դարի երկրորդ կես). Եր., 1957:
²⁰ М. Г. Нерсисян. Из истории русско-армянских отношений, кн. I, Ереван, 1956. Его же, А. В. Суворов и русско-армянские отношения в 1770-1780-х годах. Ер., 1981.
²¹ Վ. Ա. Միքայելյան, Ղրիմի հայոց գաղութի պատմություն, Եր., 1964: Վ. Ա. Միքայելյան, Ղրիմահայոց պատմություն, Եր., 1989:

Հայ պատմագիտության մեջ կարևոր ներդրում էր Վ. Բարխուդարյանի «Նոր Նախիջևանի Հայկական դադութի պատմություն» աշխատությունը, որով նշանավորվեց Հայ-ուսական հարաբերությունների և Ռուսաստանում Հայ գաղթօջախների կայացման պատմության հիմնահարցերի մենադրական ուսումնասիրությունը: Մենագրությունը փաստորեն առաջին գիտական խոշոր ու համալիր հետազոտությունն էր, որով սկիզբ առավ Ռուսահայ, իր նշանակությամբ եզակի, գաղթօջախներից մեկի պատմության ուսումնասիրության նոր փուլը: Աշխատության մեջ համակողմանի ուսումնասիրության են ենթարկվել գաղթօջախի դերը ինչպես Հայ-ուսական հարաբերությունների ոլորտում, այնպես էլ Հայոց ազգային-մշակութային ու ազգային ինքնագիտակցության զարգացման մեջ գաղթօջախի ունեցած դերի ու նշանակության հիմնախնդիրները²²: Այնուհետև իրականացվեցին Ռուսաստանի Հայոց հնագույն գաղթօջախ Աստրախանի²³, Գրիգորիովի²⁴ և Հյուսիսային Կովկասի²⁵ հայկական գաղթօջախների մենագրական հետազոտությունները: Կարևոր ներդրում էր Ծ. Պողոսյանի իրականացրած «Դատաստանագիրք Աստրախանի Հայոց» հրատարակությունը²⁶:

²² Վ. Բ. Բարխուդարյան, Նոր Նախիջևանի Հայոց գաղութի պատմություն, հ. 1, Եր., 1967: Վ. Բ. Բարխուդարյան, Վ. Կ. Ոսկանյան. Հայ-ուսական պատմական կապերը և Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին. Եր., 1978: В. Е. Бархударян. Армянские колонии в России и их роль в армяно-русских отношениях. - "Из истории вековой дружбы", Ер., 1983, с.124-135. Վ. Բ. Բարխուդարյան. Ռուսաստանի և Հնդկաստանի հայկական գաղութները XVIII դարի վերջին քառորդի Հայ ազատագրական շարժումներում. - «XVI-XVIII դարերի Հայ ազատագրական շարժումները և Հայ գաղթավայրերը» (Հոգվածների ժողովածու). Եր., 1989, էջ 187-216:

²³ В. А. Хачатурян. Административно-правовое положение астраханских армян во второй половине XVIII века.-Известия АН Арм. ССР (обществ. Науки, 1963, № 12, с. 57-68). Он же. Сулебно-административные органы астраханских армян XVIII-XIX вв. и их архивные фонды.-Вестник архивов Армении, 1971, № 3, с. 135-144. В. А. Хачатурян. Население армянской колонии в Астрахани во второй половине XVIII века. - "ՀԱՍՈՒ ԳԱ Տեղեկագիր", 1965, № 7, էջ 77-87: Վ. Ա. Խաչատրյան. Հայ ժողովրդի ազատագրական շարժումները և Աստրախանի Հայ գաղութը XVIII դարում, - «XVI-XVIII դարերի Հայ ազատագրական շարժումները և Հայ գաղթավայրերը» (Հոգվածների ժողովածու). Եր., 1989, էջ 140-154:

²⁴ Анянян Ж. А. Армянская колония Григориополь. Ер., 1969. Ж. Анянян, В. Хачатурян. Армянские общины России. Ер., 1993.

²⁵ Լ. Ա. Պողոսյան. Հյուսիսային Կովկասի հայկական գաղթավայրերը XVIII դարի Հայ-ուսական հասարակական-քաղաքական հարաբերություններում, - «XVI-XVIII դարերի Հայ ազատագրական շարժումները և Հայ գաղթավայրերը» (Հոգվածների ժողովածու). Եր., 1989, էջ 155-170:

²⁶ Երևան, 1967:

Հայ-ուսական հարաբերությունների ոլորտում առանձնակի տեղ ունեին Լազարյանները: Նրանց գործունեության համակողմանի հետազոտությանն էր նվիրված Վ. Ա. Դիլոյանի փաստաուսումնասիրությունը²⁷: ԺԸ դարի երկրորդ կեսի մի շարք խնդիրներ արձարծված են նաև Վ. Ա. Դիլոյանի հաջորդ ուսումնասիրության մեջ²⁸:

1778 թ. հրատարակվեց ակադ. Գ. Ա. Գալոյանի «Ռուսաստանը և Անդրկովկասի ժողովուրդները» աշխատությունը, որտեղ ներկայացված է նաև ԺԸ դարի երկրորդ կեսին տիրող իրավիճակը²⁹: Միանգամայն իրավացի էր հեղինակը, երբ Թեյմուրազ 2-րդի Պետերբուրգ զեսպանագնացությունից հետո շատ արագ Երևանի շրջանում միջնորդադիր-նամակի վրա հենվելով եղբակացում էր, թե «Հակոբ Ծամախեցու խնդրանքը լիովին համընկնում էր Հովսեփ Էմինի մխիթայի նպատակների հետ»³⁰: Գ. Գալոյանը ներկայացնելով Հովսեփ Էմինի փորձերը՝ Հայ-վրացական պետություն ստեղծելու նպատակով դեռևս Պետերբուրգում Թեյմուրազ թագավորի հետ հանդիպումներով Հայ-վրացական մերձեցում ձևավորելու ուղղությունը, կարծում է, թե արդեն իսկ Վրաստանում «Հերակլ 2-րդը հակված էր հավանություն տալ այդ նախագծին, բայց ստիպված էր հրաժարվել դրանից, քանի որ բուն Հայաստանում ազդեցիկ հողերականությունը (մասնավորապես Սիմոն կաթողիկոսը) դեմ էր դրան՝ վախենալով պարսիկների վրեժխնդրությունից»³¹: Հայ հողերականությունը այս դեպքում մեղադրվում է թուրք-պարսկական լծից Հայաստանի ազատագրման նպատակով Հայ-վրացական համագործակցությանը դեմ լինելու մեջ, թեև իրականում Սիմոն Երևանցին դեմ էր ոչ թե ազատագրման դադափարին, այլ վերնապահ էր միայն այն գործելակերպին, որով փորձում էին հասնել դրան՝ առ այդ օգտագոր-

²⁷ Վ. Ա. Դիլոյան. Լազարյանների հասարակական-քաղաքական գործունեության պատմությունից (XVIII դարի երկրորդ կես), Եր., 1966.

²⁸ Վ. Ա. Դիլոյան. Արևելյան Հայաստանը ԺԹ դարի առաջին երեսնամյակին և Հայ-ուսական հարաբերությունները. Եր., 1989:

²⁹ Գ. Ա. Գալոյան, Ռուսաստանը և Անդրկովկասի ժողովուրդները. Ուրվագծեր նրանց փոխհարաբերությունների քաղաքական պատմության հին ժամանակներից մինչև Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ հեղափոխության հաղթանակը. Եր., 1978:

³⁰ Նույն տեղում, էջ 109:

³¹ Նույն տեղում, էջ 111: Վերջերս լույս ընծայած իր աշխատության մեջ Գ. Գալոյանը խմբագրել է այդ դրույթը՝ հիմնավոր համարելով Սիմոն Երևանցու դիրքորոշումը. «վրաց թագավորը մեծ զոհուշավորություն էր հանդես բերում Էմինի գաղափարների նկատմամբ, մանավանդ որ դրանք չէր բաժանում նաև 1763 թվականին Ամենայն Հայոց կաթողիկոս ընտրված Սիմոն Ա. Երևանցին»: Տես Գալոյան Գալոյան, Հայաստանը մեծ տերությունների աշխարհակալական առճակատում (XVI դարից 1917 թ.), Եր., 2004, էջ 106:

ծելով ոչ լրջմիտ սուբհանդակների ծառայությունը: Գ. Գալոյանը անուշազիբ չի թողել նաև ուս-թուրքական 1768-74 թթ. պատերազմի ժամանակ գեներալ Գ. Յազեթյանի և Ն. Յազեթյանի գործունեությունը Վրաստանում: Ռուսական արքունիքից Վրաստան առաքված գործիչները փոխանակ համադր-ծակցությունը ընդհանուր թշնամու դեմ պայքարի, հանձնարարություն ունենին դահլիճից անկող շերտից և նրան հեռացնելու Վրաստանից: Խոսելով Գեորգիեյան դաշնագրի մասին, Գ. Գալոյանը զրականորեն է գնահատում այն Վրաստանի համար. «Այդ իմաստուն ակտով շերտի 2-րդը գրեց Ռուսաստանի հովանավորության ամուր հիմքը և դրանով իսկ երաշխավորեց Վրաստանի անվտանգությունը Թուրքիայի ու Պարսկաստանի էքսպանսիայից»³²: Չնայած հեղինակը լավատեղյակ է թուրքերի կողմից Գեորգիեյան պայմանագրի դեմ հակաքայլերի զիմելու փաստերին ու Վրաստանի կրած ավերածությունը, սակայն գրում է, թե Երևանի ու Գանձակի խաների կողմից շերտի գերագույն իշխանության ճանաչումով «ինչ-որ չափով վերականգնվում էր Ռամարա թագուհու ժամանակների (1181-1213) Բագրատունյաց պետության տարածքը»³³: Նույն տեղում արձանագրվում է նաև, թե Գեորգիեյան դաշնագրից հետո Հայ մկրթներին, որոնք ունենին ուսական կողմնորոշում, ցույց էր արվում հովանավորություն³⁴:

ԺԸ. դարը երկրորդ կեսի Հայ-վրացական հարաբերությունների ուսումնասիրության բնագավառում իր սրուշակի ներդրումը ունի Վ. Մ. Մարտիրոսյանը: Նա արժեքավոր հոդվածներ է նվիրել ինչպես Թեյմուրազ 2-րդի Ռուսաստան կատարած առաքելությանը և Հայերի կողմից այդ առաքելությանը օժանդակելու խնդիրներին, Գեորգիեյան դաշնագրի կնքմանն ու Հայոց վերաբերմունքի դրսևորումներին, այնպես էլ Հայոց ունեցած դերակատարումին Վրաստանի առևտրա-տնտեսական կյանքում, Հայ-ուսական հարաբերությունների մասին Հայաստանի և հրապարակել է նոր վավերագրեր³⁵:

³² Գ. Ա. Գալոյան, Ռուսաստանը և Անդրկովկասի ժողովուրդները, էջ 127:
³³ Նույն տեղում, էջ 129:
³⁴ Հավանաբար նկատի է առնված խոստումները: Իրական օգնություն մասին վկայություն չկա:
³⁵ Վ. Մ. Մարտիրոսյան, Անդրկովկասի ժողովուրդների ազատագրական ձգտումները 1768-1774 թթ. ուս-թուրքական պատերազմում, «Լրագրեր Հաս. գիտ.», 1973, թիվ 5, էջ 41-44: Նույնի, Հայերը Քարթլ-Կախեթի տնտեսական կյանքում (XVIII դ. երկրորդ կես), «Լրագրեր Հաս. գիտ.», 1976, թիվ 11, էջ 20-26: Նույնի, Հայերի առևտրական գործունեությունը Քարթլ-Կախեթի թագավորությունում (XVIII դ. երկրորդ կես), «Լրագրեր Հաս. գիտ.», 1974, թիվ 11, էջ 65-71: Նույնի, Նոր վավերագրեր Գեորգիեյանի 1783 թ. Դաշնագրի մասին, «Պատմա-բանա-

Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանի խնդիրները բննարկված են նաև Օ. Պ. Մարկովայի աշխատության մեջ³⁶: Օ. Մարկովայն մեծ թվով արխիվային վավերագրեր մտցնելով գիտական շրջանառության մեջ, սակայն իր հիմնական եզրակացություններում զգալիորեն հետևել է ուսական պաշտոնական պատմագիտության գրույթներին՝ հաճախ արդարացում գտնելու ցարական կառավարության վարած քաղաքականության համար: Հեղինակին, սակայն, հասու էին վրացերեն և Հայերեն լեզուներով առկա վավերագրերն ու այլ սկզբնաղբյուրները:

ԺԸ. դարի երկրորդ կեսի պատմության շատ հարցեր իրենց լուսաբանում են դեռ նաև շատ ավելի լայն ժամանակաշրջանի պատմության շարադրանք ընդգրկող աշխատություններում: Ժամանակաշրջանի քաղաքական իրադարձությունների և Հայ-ուսական հարաբերությունների ուսումնասիրությանը նվիրված աշխատություններից նշելի են Աշոտ Աբրահամյանի³⁷, Մատուր Աղայանի³⁸, Մանվել Զուլալյանի³⁹, Պ. Ա. Սեյրանյանի⁴⁰, Մ. Մ. Թեյլունցի⁴¹ և այլոց աշխատությունները:

Նախատրհակների շրջանի գիտնականների աշխատություններից իրենց տարողունակությամբ ու աղբյուրագիտական արժեքով առանձնանում են Ի. Շոպենի⁴², Պ. Բուտկովի⁴³, Ն. Դուբրովինի⁴⁴, Կ. Եղյանի⁴⁵ և մի շարք այլ գիտնականների ուսումնասիրություններն ու հրատարակումները:

սիրական հանդես», 1978, թիվ 3, էջ 235-243: Նույնի, 1783 թ. Գեորգիեյանի դաշնագրեր և Հայերը, «Լրագրեր Հաս. գիտ.», 1978, թիվ 9, էջ 92-100:
³⁶ Օ. Պ. Маркова, Россия, Закавказье и международные отношения в XVIII веке, М., 1966.
³⁷ Ա. Գ. Աբրահամյան, Վավերագրեր Հայ-ուսական հարաբերություններից (XVIII դարի վերջին քառորդ), «Բանբեր Երևանի համալսարանի», 1978, թիվ 2, էջ 50-70:
³⁸ Ս. Պ. Агаян. Роль России в исторических судьбах армянского народа. М., «Наука», 1978.
³⁹ Մ. Կ. Զուլալյան, Արևմտյան Հայաստանը XVI-XVIII դարերում, Եր., 1980: Նույնի, Հայ ժողովրդի XIII-XVIII դարերի պատմության հարցերը ըստ Եվրոպացի հեղինակների. Գիրք Ա, Քաղաքական պատմություն. Եր., 1990:
⁴⁰ Ս. А. Сейранян. Карабах и Россия. Страницы истории. М., 1997.
⁴¹ Մ. Մ. Թեյլունց. Հայ ազգային-ազատագրական շարժումը XVIII դարի երկրորդ կեսին և իրավաքաղաքական միտքը. Եր., 1995:
⁴² И. Шопен. Исторический памятник состоянию Армянской области в эпоху ея присоединения к Российской империи. СПб, 1852.
⁴³ П. Бутков. Материалы для новой истории Кавказа, ч. II, СПб, 1869.
⁴⁴ Н. Ф. Дубровин. История войны и владычества русских на Кавказе. тт. I-VI, СПб, 1871-1888.
⁴⁵ Г. Эзов. Сношения Петра Великого с Армянским народом. СПб, 1898.

Հայաստանի արևելյան մասը ու նաև Արևելյան Վրաստանն ու Արևելյան Այսրկովկասն ամբողջությամբ ժԶ. դարից մինչև 1750-ական թվականները սկիզբ գտնվում էին Իրանի քաղաքական գերիշխանության ներքո: Արևելյան Հայաստանը կառավարվում էր դեռևս Հայոց պետականությունից ժամանակ ձևավորված և հիմնականում պանդական դարձած վարչատարածքային բաժանումների հիման վրա իրենց գոյությունը շարունակող, սակայն, արդեն պարսկական արքունիքին ենթակա վարչատարածքային միավորների միջոցով պարսից արքունիքի կողմից նշանակվող նահանգապետները (բեկլարբեկ, խան) պահպանվում: Այդ նահանգները սեֆյան տիրապետության ընթացքում անվանվում էին բեկլարբեկություններ կամ խանություններ: Պարսկաստանում Սեֆյան Հարստության կործանումից և ապա Նադիր շահի սպանությունից հետո առաջացած անիշխանության և կենտրոնական իշխանության թուլացման հետևանքով կամ բացակայության պայմաններում ժԸ. դարի երկրորդ կեսին նրանք, ինչպես նշվեց, ձեռք էին բերել զգալի ինքնուրույնություն: Արևելյան Վրաստանում մինչև ժԸ. դարի երկրորդ կես պարսկական կենտրոնական իշխանությունների կողմից կառավարվել են նշանակվում Պարսկաստանի գերիշխանությունը ճանաչող վրաց Բագրատունյաց տան ժառանգական ներկայացուցիչները, իսկ Հայաստանի և Հարակից այլ տարածքներում՝ հիմնականում կիսաբոլորական կյանքով ապրող տարբեր ցեղախմբերի առաջնորդներ կամ պարսկական արքունիքին հավատարիմ պաշտոնյաներ՝ "խանի" տիտղոսով (ինչպես սիբ էին Երևանի, Գանձակի, Նախիջևանի, Շամախու և այլ խանությունները), որոնք որպես պարսկական պետության պաշտոնյաներ, արքունիքից ստանում էին վարձատրություն:

Հարկ է ընդգծել, որ չնայած պարսից տիրապետությանը, Շահ Աբաս 1-ինի կողմից իրականացված Հայ բնակչության բռնազաղթին դեպի Պարսկաստանի խորքերը և օտար ցեղախմբերի առատ ներհոսքին, Հայ ժողովուրդը կազմում էր Հայկական լեռնաշխարհի հիմնական բնակչությունը, և ինչպես Հայերի, այնպես էլ բազում օտարների կողմից շարունակվում էր Հայաստան անվանման օգտագործումը բոլոր հիշյալ նահանգների վերաբերյալ:

Ինչպես ամբողջ Այսրկովկասի, այնպես էլ Հայաստանի ու Հայ ժողովրդի ճակատագրի համար կարևոր դեր խաղացած հանգամանք էր, սակայն, նաև այն, որ Այսրկովկասի բոլոր նահանգները դեռևս ժԶ-ժԷ. դարերում

պարսկական արքունիքին ենթարկվում էին Ատրպատականի կառավարչի միջոցով, այլ խոսքով՝ ենթարկվում էին Թավրիզում նստող Ատրպատականի կառավարչին³: Ողջ այդ տարածքը ընդգրկված էր ֆինանսա-հարկային և ռազմական մի համակարգի մեջ, որը մեկն էր Պարսկաստանի չորս նմանատիպ վարչատարածքային միավորներից⁴: Այդ հանգամանքը իր կնիքն է թողել ինչպես նոր տերմինարանության առաջացման⁵, այնպես էլ էթնոզապատական գործընթացների հետագա թյուրընկալման և ներկայացման վրա⁶, վերածվել քաղաքական շահարկումների միջոցի ու կռվանի: Երևույ-

³ Մուհամմադ - Ռաֆի Անսարի «Դասուրե ալ-Մուլուկ» երկի երրորդ բաժնի երկրորդ գլուխը նվիրված է Պարսից զորահրամանատարի՝ սիֆահալարի, պաշտոնի ներկայացմանը. «После курчивашия - он главный из оруженосцев и должностных лиц в войске. Замена правителя, султанов и прочих победоносных воинов зависит от мнения и одобрения высокостепенного [сипахсалара]. Ему поручены любого рода указы и распоряжения, касающиеся распрей, военных действий на поле битвы, войны и сражений. Управление Тевризом, Муганом и другими провинциями Азербайджана поручено высокостепенному [сипахсалару]...Доходы сипахсалара во времена Рустам хана, кроме натуральных продуктов на неопределенную сумму, составляли семь тысяч четыреста шестьдесят четыре тумана и семь тысяч двести девяносто восемь динаров, поступившие из провинций Азербайджана и Ирака» (տե՛ս *Мухаммад-Рафи Ансари*. Дастан аш-Мулуқ, Ташкент, 1991, с. 32-33): Չնայած դրան, պարսից արքունիքում ոչ միայն օգտագործում էին նաև Հայաստան անվանումը, այլև Հայաստանը, հավանաբար, ուներ իր առանձին մուստաուֆիին: Այսպես, մուստաուֆիների թվարկման և ներկայացման դեպքում ասվում է, թե «пятьи - мустауфи окраини и мустауфи населенных местностей Армении. Обязанности упомянутых также же, как у мустауфия передаваемых владений...» (տե՛ս նույն տեղում, էջ 104):

⁴ Վաղագույն շրջանի պատմության մասին տե՛ս *Р. А. Габриелян*. Армения и Атропатена. Ер., 2002. Վրաց մատենագրության մեջ Ատրպատական տերմինի վաղագույն գործածության և նրա բովանդակության դրսևորումների քննությունը տե՛ս *ձեռքից տալիս*. «ქართველის ცხოვრების» გეოგრაფიული ნიშნები, 1999, № 3, 53-64.

⁵ Այդ տերմինը Այսրկովկասում ստեղծված պետության բնակչության համար ժամանակակից էթնիկ իմաստով պաշտոնական ու գանդվածային լայն կիրառում է ստացել միայն 1936 թ. Անդրֆեդերացիայի կազմավորումից հետո. «Азербайджан - основная национальная - азербайджанская...» տե՛ս *И. Сталин*. Марксизм и национально-колониальный вопрос. М., 1934, с. 110. «Это название получило широкое употребление среди азербайджанского населения лишь с 1936 года. До этого же времени вместо *азербайджанцы* употреблялось название *тюрки*...». См. *А. К. Алекперов*. Азербайджанцы. - «Исследования по археологии и этнографии Азербайджана», Баку, 1960, с. 71-77.

⁶ Դեռևս ժԹ. դարի սկզբին Հայ գործիչներից ոմանց մոտ ևս առկա էր այն պատկերացումը, թե Գանձակ քաղաքը գտնվում է «յԱտրպատականի աշխարհի»: 1804 թ. Հունվարի 15-ին Մինաս եպիսկոպոսը ուսուների կողմից Գանձակի

թի արժանների լուսարանումը անհրաժեշտ է նաև ժամանակակից շահարկումներին դիմակայելու համար:

Եթե Նաղիր շահի գահակալության ժամանակ այսրկովկասյան խաները ենթարկվում էին Թավրիզի բեկլարբեկին, ապա ԺԸ. դարի երկրորդ կեսն ընդգրկող ժամանակաշրջանում ևս, արդեն Անֆյան հարստության կործանումից ու Նաղիր շահի սպանությունից հետո ստեղծված նոր պայմաններում, երբ այսրկովկասյան խանությունները ձեռք էին բերել հարաբերական, իսկ մի քանիսը անգամ լրակատար անկախություն, Ատրպատական-Ազրբեջան տերմինով շարունակվում էր նշվել ողջ Արևելյան Այսրկովկասի նախկին ֆինանսա-վարչական տարածքը և այնտեղ իրենց կիսանկախ գոյությունը ստեղծած և մասամբ նաև շարունակող խանությունները անվանվում էին ազրբեջանական խաներ, սակայն, քանի որ այդ այլևս չուներ իր նախկին ուղղակի ենթակայության հանդամանքի ընկալումը, հետզհետե սկսեց ձեռք բերել նոր իմաստ և նոր՝ զուտ տարածքային ընդգրկման պայմանական բովանդակություն⁷: Եթե այդ անվանման վերակենդանացմամբ Աղա Մահմադ խանն ու Բարա խանը (Յասթալի շահ) ԺԸ. դարի վերջին ու ԺԹ. դարի սկզբներին փորձում էին իրենց հավակնությունները ներկայացնել՝ վերականգնելու Իրանի տիրապետությունը Այսրկովկասում, ապա ռուսական ու հայկական գործիչների կողմից այդ անվանումի օգտագործումը զուտ սուրբ էր պարսից հիշողությանը: Իրականում այսրկովկասյան խանությունները ոչ միայն հարկ չէին վճարում պարսից արքունիքին, այլև չէին ճանաչում պարսից գերիշխանությունը և հանդես էին գալիս առանձին վարչա-տարածքային ու աշխարհազարկան անվանումներով ու տեղական շահերով: Այսրկովկասյան խանությունների տարածքի ընդհանուր նշանակման համար Ազրբեջան տերմինն օգտագործված է, օրինակ, գեներ. Վ. Զուբովի 1796 թ. հոկտեմբերի 10-ին գրած շրջաբերական նամակում: Հաղորդելով Եկատերինա Երկրորդ կայսրուհու հրամանով Աղա

գրավման առիթով շնորհավորելով Եփրեմ արքեպիսկոպոսին, գրում է. «Ջիարդյանցից անաղան պատմելով զուրախությունն զարտիս, քանզի ի մուսն նոր տարուսյ կործանեալ եղև ապստամբ քաղաքն Գանձակ և նորին բռնաւոր գրոտոն Ջաւատ Հանդերձ որդով և զօրօք ընկղմեալ եղև ի հոսանս հրացանի, ձեռամբ անպարտելի զօրացն հիւսիսականաց և խաչն Բրիտոսոսի պայծառացեալ երևի յԱտրպատականի աշխարհի: Ուստի միաբանութեամբ օրհնեսցուք զաստուած, զրաշխօղն սոյն պարզևի, յուսասցուք ի նոսա...» (տե՛ս "Присоединение Восточной Армении к России", т. I, Ер., 1972, с. 193.

⁷ Միայն XX դարում այդ տերմինի տարածքային պայմանական բովանդակությունը խեղաթյուրվեց և նրան վերագրվեց նաև էթնիկ իմաստավորում:

Մահմադ խանի դեմ ձեռնարկված արշավանքի մասին, նա գրում է. «Այժմ եկել է ժամանակը գործողության մեջ դնելու մեր հիշյալ ընդհանուր թշնամու դեմ Նորին Կայսերական Մեծության կողմից ինձ հանձնարարված բոլոր միջոցները, ուստի և ապահովագրելու համար Ազրբեջանական սահմանների [անվտանգությունը], ես հանդերձավորեցի ուժեղ մի կորպուս դեպի Գինջե՝ նորին գերագանցություն գեներալ-մայոր և կավալեր Ա. Մ. Ռիմսկի-Կորսակովի հրամանատարությամբ... Հուսով եմք, որ Ձեր Բարձրաստիճանությունը և ողջ Ազրբեջանական երկրամասը գործնականում տեսնելով Ն. Կ. Մ. կողմից Ձեր նկատմամբ [ցուցաբերած] բարեգործությունը՝ ձեր երկրներին նման հզոր պաշտպանության տրամադրումը, կջանաք ձեր կողմից ևս երախտագիտություն գրսեւորել՝ ջանադրաբար միացնելով Ազրբեջանական բոլոր ուժերն ու միջոցները մեր հաղթական զորքերի հետ ... Ռուսական զորքերի կորպուսը կմնա որպես ձեր մարզերի մշտական պաշտպան ... և Ազրբեջանական սահմաններում բոլոր կողմերից հաստատված անվտանգությունը հնարավորություն կընձեռի այդ կորպուսին անցնելու այլ դիրքավորման...»⁸: Ազրբեջան և ազրբեջանցի տերմինների բովանդակությունը առավել ցայտուն կերպով երևում է գործածման հետևյալ օրինակներում: 1783 թ. նոյեմբերի 30-ին Պավել Պոտյոմկինին ուղղված իր զեկուցագրում Ս. Գ. Բուրնաշևը գրում էր. «Երևանի մարզի խան Հուսեյնը սուլթն նոյեմբերի 9-ին վախճանվեց: Նորին պայծառափայլությունը Հերակի թագավորը, որպես դրա գերագույն տեր, նախապես տեղյակ լինելով նրա հիվանդության մասին, այնտեղ էր ուղարկել [իր ներկայացուցչին] հրովարտակով, որպեսզի նրա մահվան դեպքում կասեցնի ազրբեջանական ժողովուրդներին բնորոշ ընդվզումը, որով և կանխեց այն...»⁹.

1783 թ. օգոստոսի 5-ի զեկուցագրում Պավել Պոտյոմկինը Գրիգոր Պոտյոմկինին հաղորդում էր, թե «Ի թիվս այլ Ազրբեջանական խաների, նրան (խմա՝ Իբրահիմ խանին - Պ. Չ.) ևս ուղարկեցի Ձեր պայծառափայլությունյան շրջաբերականը և նվերներ»¹⁰: Նշված տերմինը օգտագործվում էր ոչ միայն հայկական, ռուսական, այլև պարսկական պաշտոնական ու պետական զրադրություններում: Այսպես, 1798 թ. հունիսի 5-ի Բաբա խանի նա-

⁸ АВПР, СРГ, опись 110/3, 1795-1797, л. 459, л. 70-72.
⁹ Армяно-русские отношения..., т. IV, с. 267.
¹⁰ Армяно-русские отношения..., т. IV, с. 255.

մակում, որով կոչ էր արվում Գեորգի 12-րդին Հնազանդվելու Պարսկաստանին, ասվում էր. «Քանի որ Վրաստան երկիրը լավագույնն է Ազրբեջանում և մշտապես վրացական թագավորների նկատմամբ [Պարսից] տիրակալները բարեացկամ են եղել, և նմանապես Վրաց թագավորները Պարսից տիրակալների ժամանակ եղել են գործուսյա և բարի ջանադրությամբ ու ծառայություններով են վերաբերվել և դրանով իսկ իրենց բարձացրել...»¹¹:

Վրաստանի՝ «Ազրբեջանում» գտնվելու Հանգամանքը նշվում էր նաև Ռուսաստանի Արտաքին գործերի կոլեգիայից 1799 թ. ապրիլի 16-ին Պ. Պ. Կովալենսկուն արված Հրահանգում (инструкция). «Վրաստանը գտնվելով Ազրբեջանում՝ Օսմանյան Դուռն և բազմացեղ լեզգիների Հարևանությամբ [գտնվող] մարզում, որը նախկինում պատկանում էր Պարսից պետությանը՝ ընդգրկելով բացի Վրաստանից նաև առանձին խաների կողմից կառավարվող այլ տիրույթներ, ինչպիսիք էին Գանձակի, Երևանի, Խոյի, Ղարաբաղի, Թավրիզի և այլ...»¹²:

Ղուկաս Ինճիճյանը Հետևյալ ձևով է ներկայացնում Ատրպատականը. «Այս աշխարհ, որ է մի ի նահանգացն Պարսից, ի բազմաց Հեաէ ինքն պարունակէ գերիս նահանգս Մեծին Հայոց՝ կոչեցեալ Պարսկահայք, Կորճայք, Փայտակարան, նաև զմասն ինչ Վասպուրականի, և ըստ այսմ առեալ ի Հրեւիտոյ՝ առ երի կայ Շիրվանայ և այնր մասին Մեծին Հայոց, որ այժմ կոչի Կրեւճիսթան, և ըստ մասին Երևան, յարեւից՝ Կիլան գաւառին Պարսից և ծովուն Կասպից, ի Հարաւոյ՝ Իրազ Աճեմին, իսկ յարեւմտից՝ երից փաշայութեանց Օսմանեանց՝ Պայեգիտոյ, Վանայ (որք են մասն Մեծին Հայոց) և Շեհրիզուրայ: Ոմանք նաև զՆափան և զըջակայս նորա գրեթէ զամենայն մասն Մեծին Հայոց, որք անկանին ընդ տերութեամբ Պարսից, դենն յԱզէրպայճան...»¹³:

Վավերագրերում հաճախակի հղվվող այդ տերմինի շահարկումով ներկայիս ազրբեջանական պատմագրության կողմից փորձ է արվում այդ տերմինի տակ ներկայացնելու «միասնական էթնո-պատմա-մշակութային

¹¹ АВІР, СРГ, оп. 110/3, 1793–1799, л. 455, л. 54.

¹² АКАК, т. I, с. 93–94.

¹³ Ղ. Ինճիճեան, Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի. հ. Ա, Հայաստան, Վենետիկ, 1806, էջ 401

գոտի, որտեղ ապրում է մեկ ժողովուրդ՝ ազրբեջանցիներ»¹⁴. Ելնելով այս կանխադրությունից, ազրբեջանական պատմաբանները կամայական նույնացումներով փորձում են ոչ միայն թյուրբական ցեղեր փնտրել և «գտնել» այսրեկովկասյան Հնագույն տեղանունների մեջ¹⁵, արդարացի Արաքսից Հյուսիս ընկած տարածքում նման անվանումով պետութայն ներկայիս գոյություն¹⁶ իրավունքը՝ անտեսելով, որ անկախ ընդհանրական այդ անվանումից, գոյություն ունեին էթնիկական իրական անվանումներով գավառներ՝ իրենց բնակչությամբ (Հայեր, վրացիներ, թաթեր, թուրքեր, լեզգիներ, թալիշներ, ուտիներ և այլն), այլև ժԸ. դարի մահճեղական խանությունները, անկախ նրանց գտնվելու վայրից, Հայտարարել «ազրբեջանական»՝ այդ տերմինի ներկա ընկալումով: Այդ առումով Հատկանշական է Օ. Մարկո-վայի որդեգրած սկզբունքը: Նա իր աշխատությունը կցած քարտեզում Երևանի, Նախիջևանի ու Գանձակի խանությունները անվանելով «ազրբեջանական», միաժամանակ ժԸ. դարի վավերագրերում եղած «թաթարներ» տերմինը դարձնելով «ազրբեջանցիներ», մեղադրում է վավերագրերի Հեղինակներին տերմինները ճիշտ չօգտագործելու Համար՝ ծանոթագրելով, թե «Վավերագրերում "ազրբեջանցիներ"-ի փոխարեն օգտագործվում է ոչ ճիշտ անվանում. "թաթարներ" և "պարսիկներ"»¹⁷:

Ի տարբերություն վարչա-քաղաքական ստեղծված բաժանումների թողած ազդեցություն, այնուամենայնիվ ինչպես տեղական բնակչության մեջ, այնպես էլ Հայաստան այցելած ճանապարհորդների երկերում տարածաչրջանը մշտապես զիտակցվում էր որպես Հայաստան աշխարհի մասը¹⁸:

¹⁴ С. А. Мамедов, Армянские источники об истории Азербайджана и азербайджано-армянских взаимоотношениях в XV – первой половине XVIII вв., Баку, 1982, с. 4 (автореф. докт. дисс.).

¹⁵ Н. Ю. Ломоурн, П. А. Абуладзе, В. Т. Джангидзе. По поводу одной статьи В. Л. Гукасяна. – "Известия АН Груз. ССР" (серия языка и литературы), 1982, 3, с. 147–149. Бинали Алиев. Месхетия и месхи (турки-месхетинцы): этно-политическая история народа. – "Центральная Азия и Кавказ". Общественно-политический журнал. 2002, № 1 (19), с.180–182.

¹⁶ Հանգամանորեն տե՛ս Էնայտ Օлла-Քեսա. Азербайджан и Арран (Атурпатакан и Кавказская Албания). Перевод с персидского, предисловие и дополнения Г. Асатрян. Ер., 1993, с. 126–135.

¹⁷ Օ. Մ. Մարկова. Россия, Закавказье и международные отношения в XVIII веке. М., 1966, с.77 прим. 53.

¹⁸ Ուշագրավ է այդ առումով ներսես Աշտարակեցու նամակներից մեկը (1821 թ. հունիսի 4), որտեղ նախատիք է հղված «գերարգոյ աղայ Յակոբ Նաւասարգեանն» իր կողմնորոշման համար. «Ի Թէվրիզոյ գրեալոյ պարոն Աղաճանին տե-

Այսրևիվկասի վարչական բաժանումները ԺԸ. դարի ընթացքում կրել են մի շարք փոփոխություններ, ներկայացրել վարչա-քաղաքական տարբեր իրավիճակներ, որոնց լուսաբանումը կարևոր է մի շարք առումներով: Այդ վերաբերում է հատկապես պատմական Հայաստանի Արցախ, Ուտիք և Գուգարք նահանգներին և նրանց մի շարք գավառներին (Տաշիր, Լոռի, Ղազախ և այլն):

Հայաստանի տարածքում իրենց իշխանությունը հաստատած ոչ միայն մահաճակատները, այլև վրաց թագավորները ևս գիտեին, որ իրենց իշխանությունն այս կամ այն հատվածը պատկանել են պատմական Հայաստանին, որ մահաճակատ բնակչությունը բնակություն է հաստատել հայկական գյուղերում՝ քանակապես աստիճանաբար դուրս մղելով հայ բնակչությունը¹⁰: Միմեռն երևանցու գահակալության շրջանում «Ղազախեցի ժողո-

սի և յոյժ ցաւեցայ, գմտաւ ամելով զգրեալսն ի մարդարէէն, թէ՛ եղիցի, զոր օրինակ փարնու ի դայրոյ, պատահեցի նմա արջ, և փարնուցու յարջոյն՝ պատահեցի առիւծ, ընդ որոյ ահա և ձեզ հանդիպեալ այն օրինակ տեսանի յայտնապէս, զի փարնուցայ յարջոյ՝ պատահեալ էք առիւծու, որոց ամենեցուն միևնոյն է վտանգն, զի որոց բնաւորութիւն է պատահելն, ոչ ոք ի պատահելի նոցին կարողանայ յուսալ պահպանութեան կամ բարեխաւութեան նոցին: Իմ սիրելի, դու լաւ գիտես, թէ յԵրևան, Խոյ, Նախշուան և Թէվրիզ Հայաստան են ի սկզբանէ և յիրաբանչիւրսն ի նոսա եղեալ են իշխանք, մեծամեծք, տեաք դաւառաց և գիւղից և ամենայն ճոխութեամբ և փարթմութեամբ առաւելեալ երևելի անձինք և տունք: Արդ նկատես արժանապէս, թէ գտանի՞ ուրեք ի մեջ Հայոց այնպիսի նշան կամ այժմ և կամ յաւուրս հարց քոց և նախնեաց. և եթէ ի բազմաց անտի ոչ գտանի նշան այս ահա քանի հարիւր տարի, դու զի՞նչ կարող ես յուսալ այժմ, թէ ունեցոց ես այդք գլաւութիւն և զյաջողութիւն վասն քոյ կամ վասն որդւոց քոց: Գրես, թէ՛ շահգատայն շալ պարգևեաց և բարի է յոյժ. բայց եթէ զինն շալի Հայեցես, քեզ լաւ յայտնի, իսկ թէ պատին հայեցես, կարծես թէ ոչ բնաւ ուրէք կարողացի նկատել՝ միլիոնաւոր հարստութեամբ գնացին յԱսպահան քսան և երեսուն հազար տուն հայք, արդ ո՞ր են նշանք հարստութեան նոցա, կամ ինքեանք իսկ... » (ՄՄ, Ն. Աշտարակեցու դիվան, թղթ. 165, վավ. 434):

¹⁰ Նադիր շահի մահից հետո տիրող իրավիճակի մասին Ա. Երևանցին գրում էր. «Թէ ի մարմնական պետութիւնսն և թէ ի հոգևոր պետութիւնսն ի ժամանակս այս դոյր անպատմելի և անգրելի խռովութիւնք և մարտք: Կարճատատ այսքան իմաստէք, զի ի ներ քանեաց ամացս ութն շահ փոխեցան՝ մին զմիւսն սպանանելով և գտեղին յաջորդելով: Մտածեա, թէ որքան իցէ լեալ վնասքն ի Հնձե-լագօրաց սոցա և երկիրն որպէ՞ս իցէ ոտնակոխ լեալ հանդերձ գերեզմարութեամբ, թող զգրամաշ և սովամահ լեալսն, իսկ զփախստեալսն ո՞ թուիցէ: Գրեթէ երկիրն Պարսից և Այրարատեան ամայի եղև: Իսկ ի հոգևորս ներկայիս կաթողիկոսն, որ էր Ղազար Ճահկեցին, ընդ միաբանից Սրբոյն Աթոռոյն վէճուենակ լեալ, նաև միաբանքն ընդ 4. Պոլսոյ պատրիարքին և այլոց առաջնորդաց ի յայնր վայր եղելոց, ընդ Ղազարու մարտեան բանիւ և թղթով յամս երկուս և թէ որքան վրդովմունք եղին ի յազգս մեր և որքան անուանաբեկութիւն եղև վարդա-

վուրդքն, զոյով երեք և չորս տամբք յիրաբանչիւր գիւղորայս տաճկաց՝ սուսնց քահանայի և օրինաց և ուսեալք զբարս և զգործս նոցա, մինչև բազումք ի նոցին մանկանց ոչ կարէին խօսիլ զհայրենի լեզուն, գրեալ էին մեծաւ աղերսանօք զթուղթ առ սրբազան Վեհշըն և խնդրեալ էին գրել վասն իւրեանց զխնդիր առ Հերակլ արքայն՝ հանել զինքեանս ի միջոյ տաճկացն և ի մի վայր ժողովել և յանձնել Իսկեանդար բեկին, որ մեծն էր Ղազախու»²⁰: Կատարելով բնակչության խնդրանքը, Միմեռն երևանցին նամակով դիմում է Հերակլին և առաջարկում, «զի, հանեալ նոցա ի միջոյ տաճկացն, ի մի տեղ ժողովեսցէ և ի մի աղայ հանձնեսցէ, զի ի քրիստոնեական կրօնս իւրեանց ամբողջ մնասցեն»²¹: Դեռևս ԺԺ. դարի սկզբին (1800 թ. հոկտ. 6) գեներալ Լազարևը գեներալ-լեյտ. Կնորինգին ուղղած զեկուցագրում նշում էր. «[Գեորգի] թագավորի իշխանությունից Շորագյալ գավառը խլիլու համար երևանի Մագոմեդ խանը որոշ քանակությամբ երևանցիներին հետ այնտեղ ուղարկեց իր մոտ գտնվող Բեյլը-Ալի-խանին, որը դեռևս Աղա-Մահմադ խանի կողմից զրկվել էր տեսողությունից: ... Շորագյալ գավառը, այնպես ինչպես ես բանավոր լսել եմ՝ Նորին Մեծություն թագավորի [իմա՝ Գեորգի ԺԲ.- Պ. Չ.] բացատրությամբ, սկզբնապես պատկանել է Մեծ Հայքին, որից անցել է վրաց տիրապետության ներքո, որտեղ և գտնվել է մինչև այն ժամանակ, քանի դեռ Հերակլ թագավորը չէր նվիրել այն իր իշխանության ներքո գտնվող Երևանի խանին: Սրանից քիչ անց Հերակլ թագավորը, բարկացած լինելով այդ խանի վրա, այդ ժամանակ էլ հրամայել էր ետ վերցնել այդ գավառը նրանից և այդ ժամանակից մինչև այժմ այն խաղաղ ձևով գտնվել է վրացական տիրապետության մեջ»²²:

Մահաճակատ տիրակալները փորձում էին յուրացնել կամ տիրանալ նաև քրիստոնեական սրբավայրերին: Նման վկայություններ պահպանվել են մեզ հետաքրքրող ժամանակաշրջանից ևս: ԺԸ. դարի երկրորդ կեսին գրված «Կաթողիկոսուներ Աղուանից» երկում պատմվում է. «Տէր Շուքահաղիչոյ բարեկարգէ զՏօտն իւր, լինի զլուս ժողովոյն, որ ի Պարտայ, յաւուրս

պետաց և վանականաց, ոչ է գրելի և թէ ու՞մ էր մեղն, Աստուած գիտէ» տե՛ս «Արարատ», 1888, էջ 155-156:

²⁰ Դիւան հայոց պատմութեան, գիրք Գ. Միմեռն կաթողիկոսի Յիշատակարանը, Թիֆլիս, 1894, էջ 303:

²¹ Նույն տեղում, էջ 306:

²² AKAK, I, c.158-159. .

բարեպաշտին Վաճախանյա դնէ կանօնս ԻԴ (24): Լցեալ զժամանակ կենաց իւրոց մեռանի մերձ ի Բելական քաղաքի, ապա շինի ի վերայ մղկթաձև զմբէթ ի խանէն Շուշույ բերթաքաղաքին Իրբահիմէ, թէպէտ կաթողիկոսն Սարգիս Հասան Զալալեանց ջանացեալ է խափանել զայն, բայց խանն այսու առթիւ ի կատար հասուցեալ է, ասելով՝ չէ փոյթ թէ կաթողիկոս է Հայոց, զի գործն իմ է աստուածահաճոյ»:²³

Վարչա-տարածքային փոփոխություններ

Սեֆյանների օրոք Իրանը, ինչպես նշվեց, բաժանված էր չորս ֆինանսական վիճակների՝ Իրաք, Ֆարս, Ազերբայջան և Խորասան:

Ըստ 1720-ական թթ. ստեղծված «Թազքերթաթ ալ-մուլուք» աշխատության, որտեղ ներկայացված է Պարսից պետության վարչա-տարածքային կառուցվածքն ու պաշտոնները²⁴, Սեֆյան պետության մեջ մինչև 1722 թվականը կար 4 վայր (փոխարքա), 13 բեգլարբեգություն (զորապետություն): Այսբեկովհասում վայրություն համարվում էր Քարթլիի թագավորությունը, իսկ բեգլարբեգությունների կարգավիճակ ունեին Թավրիզի (բուն Ազերբայջան), Երևանի (Չուխուր-Սա'աղ), Ղարաբաղի (Գանձակի) և Շիրվանի նահանգները²⁵: Ղարաբաղի բեկլարբեգ համարվում էր նաև Կախեթի հաքիմը, իսկ նրա նստավայրն էր Գանձակ քաղաքը²⁶: Շիրվանի բեգլարբեգության մեջ էին Շամախու, Բաքվի և Դերբենտի ամրոցները:

Եթև սեֆյան տիրապետության ողջ ժամանակաշրջանում Արևելյան Հայաստանի տարածքը հիմնականում ընդգրկված էր Երևանի և Գանձակի բեկլարբեգությունների մեջ, ապա նրանց տիրապետության ավարտին Նադիր շահի (1736-1747) կողմից կատարվեցին էական փոփոխություններ: Երևանի բեկլարբեգությունից անջատվեց Նախիջևանը և վերածվեց առանձին խանություն, իսկ Գանձակի բեկլարբեգությունից անջատված Արցա-

²³ ՄՄ, ձեռ. 8066, թ. 62ր:

²⁴ Н. П. Петрушевский. Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI-XIX вв., Ленинград, 1949, с.101.

²⁵ Հանգամանքն տե՛ս «Երևանի քաղաքի պատմությունը», II, տձ., 1999, թ. 80-87. Հմտ. նաև *МУХАММАД-РАФИ АНСАРИ*. Дагтур ал-Мулуқ (устав для государей). Предисловие, перевод, примечания и указатели А. Б. Виллановой, Ташкент, 1991, с.21-25.

²⁶ Тбилисская коллекция персидских фирманов, т. II. Составители М. А. Толуа, И. К. Шамс. Подготовка к печати, перевод, комментарии и словарь М. А. Толуа. Тбилиси, 1989, с. 26-27.

խում ստեղծվեց Հայկական «Սամալ» անունով հայտնի իշխանությունը՝ մելիք Եգանի գլխավորությամբ: Նադիր շահի կողմից Քարթլիում թագավոր հաստատվեց Թեյմուրազ 2-րդը, իսկ Կախեթում՝ նրա որդի Հերակլ 2-րդը (1745-1798 թթ.): Նադիր շահի մահից հետո այսրկովկասյան մնացած խանությունների նման Վրաց թագավորությունները ևս, օգտվելով Իրանում ստեղծված անիշխանությունից, ձեռք բերեցին փաստական անկախություն: 1748 թ. ապրիլի 1-ին Հերակլին հաջողվեց համառ պայքարում ջախջախել ոչ միայն Քարթլիի գահի հավակնորդ Իսսի որդի Աբդուլլաբեկի զորքերին, կոտորելով 900 և գերի վերցնելով 726 մարդ²⁷, այլև հաղթել պարսկական կայազորին, դուրս վանել նրանց Թիֆլիսի ամրոցներից, այնտեղ դնել իր զինվորներին և քաղաքում հաստատել իր գերիշխանությունը²⁸: Հերակլի սրենթաց գործողությունները մեծ տպավորություն էին թողնում չրջակա իշխողների վրա, թեև «անկախություն ձեռք բերելուց հետո ևս Քարթլ-Կախեթի արտաքին քաղաքականությունը ծայրահեղ զգուշավոր և զուսպ էր, այն հիմնվում էր կոնկրետ իրավիճակի ճշգրիտ վերլուծության վրա»²⁹:

Լոռի-Ղազախ գավառները իրենց տեղական կառավարիչներով, որ 1604 թվականից Շահ Աբասի հրամանով առանձնացվել էին Վրաստանից³⁰ (այնտեղ բնակեցվել էր Բորչալու ցեղախումբը, որից և գավառի անվանումը) ու ենթարկվում էին Գանձակի բեկլարբեգությանը, Նադիրի ժամանակ հայտարարվել էին անկախ: Իրանում երկու տարի մնալուց հետո 1749 թվականին Թեյմուրազ 2-րդը վերադարձավ Վրաստան՝ բերելով Ղազախ-Բորչալուն կրկին Քարթլիին հանձնելու մասին շահի հրովարտակը: Վրաստանի սահմանները հասան մինչև Աղստե գետ, սակայն երկրում մեծացավ ոչ վրացի ազդուություն բնակչության քանակը³¹: 1755 թ. Հերակլը Ղազա-

²⁷ Հայագի Ի. Էլզեմլրոյի Հաղորդամբ, «однако Эрекли Царевич взятых в полон отпустил всех по-прежнему, а лошадей и военную их збрую все взял в добычу» տե՛ս Армяно-русские отношения во втором тридцатилетии XVIII века. Сборник документов. том III, Ереван, 1978, с. 207.

²⁸ Армяно-русские отношения во втором тридцатилетии XVIII века. том III, с. 205-207. Նախորդված օստորոտի Նարկեքեքեք, IV, տձ., 1973, թ. 610.

²⁹ Նախորդված օստորոտի Նարկեքեքեք, IV, թ. 612.

³⁰ Նախորդված օստորոտի Նարկեքեքեք, IV թ. 226.

³¹ Նախորդված օստորոտի Նարկեքեքեք, IV, թ. 612. Երբձաձ ձօսեքեքեքեք յարեքեքեք Եձաձ Նարկեքեքեքեք XIII-XVIII Նարկեքեքեքեքեք, տձ., 1982, թ. 235.

միջնորդել ամենախնամ կայսրուհու մոտ՝ հրամայելու այս ձեռն ուղարկել ութ հազարանոց զորք, որով ես հուսով եմ Աղա-Մահմադ խանի կողմից ինձ պատկանող վերոհիշյալ վայրերը վերադարձնել նախկին իշխանությունը՝ ոչ սակավ դերի քրիստոնյաներով հանգերձ, որոնք ընկել են Աղա-Մահմադ խանի զորքերի ձեռքը, իսկ այժմ գտնվում են Գանձակում, Երևանում ու Նուխիում»⁴⁴:

Երևանի խանություն մեջ եղած բոլոր բնակավայրերի ու բնակչության քանակի մասին ուղղակի և ճշգրիտ տվյալներ սկզբնաղբյուրներում թեև չեն պահպանվել, սակայն ժԸ. դարի երկրորդ կեսին եղած իրավիճակի մասին ետադարձ հայացքով մոտավոր պատկերացում կարելի է ունենալ Ի. Շոպենի կողմից իրականացված նկարագրության հիման վրա: Ըստ այդ նկարագրության, որ կատարվել է Երևանի խանությունը Ռուսաստանին միացումից հետո, Երևանի գավառը ունեցել է 521 շեն և 310 ավերակ բնակավայր, նախիջևանի գավառը՝ 179 շեն և 42 ավերակ բնակավայր, իսկ Օրդուբադի շրջանը՝ 52 շեն և 6 ավերակ բնակավայր⁴⁵: Թվարկված գյուղանունները մեծագույն մասի համար հնարավոր չէ անդամ կռահել նրա բնակչության ազգային էթնիկ պատկանելությունը, քանզի հայկական գյուղերի մի ստվար զանգվածը ևս կրում էր թյուրքական իմաստավորմամբ անվանումներ, թեև հայտնի է, որ 1780-ական թթ. Երևանի խանություն բնակչության մեծամասնությունը դեռևս կազմում էր հայ բնակչությունը⁴⁶: Այդ մասին ուղղակի և հստակ վկայություն կա նաև Պ. Ա. Պոտյոմկինի գեկուցազրույթում, որ ուղարկվել էր Գ. Ա. Պոտյոմկինին. «... Երևանի խանի⁴⁷ անբազմաթիվ մեծ մասը հայերից է բաղկացած»⁴⁸:

ԺԸ. դարի առաջին քառորդի իրավիճակը ներկայացնող  «Թագքերթաթ-ալ-Մուլյուք» երկում Ջուխուր-Սաադի (իմա՝ Երևանի խանության) մեջ են թվարկված նախիջևանը, Մակուն, Ջարուզերիլը

⁴⁴ АВВР, ф. 110/3, л. 455, 1793-1799гг., л. 224-225. Копия.
⁴⁵ И. Шопен. Исторический памятник состояния Армянской области в эпоху ее присоединения к Российской империи. СПб, 1852, с.484-518.
⁴⁶ Մ. Մ. Կարապետյան. Բնակչության էթնիկ կազմը և էթնիկ պրոցեսները Երևանում 1724-1800 թթ., - ՊԲՀ, 1987, թիվ 3, էջ 103:
⁴⁷ Երևանի խաներ - Հուսեյն Ալի խան զաջար (1762-1783), Ղուլամ-Ալի-խան Ղաջար (1783-1784), Մուհամմադ - խան Ղաջար (1784-1805):
⁴⁸ ШТАДА, ф. 23, л. 13, ч. 8, л. 418. А. Р. Иоаннисян. Россия и арм. осв. движение..., Ер., 1990, с. 99.

(Ծար), Սադարակը, Մադասերկը, Բայադեղը և քրդական Շադլու և Դուբաուլի ցեղախմբերի երկու համայնքները (օլթաններ):

ԺԸ. դարի երկրորդ կեսին, ինչպես ողջ Ծար գավառը, որ ենթարկվում էր Երևանի խանին, այնպես էլ ինքնավանքը (Դադի վանք) մտնում էր էջմիածնի տիրությունների մեջ: Սիմեոն Երևանցի կաթողիկոսը իր «Ջամբու» աշխատության մեջ, որտեղ թվարկված են էջմիածնի վանքի տիրությունները, հատուկ նշում է այն բոլոր գյուղերն ու կայվածները, որոնք գտնվում էին Ծարում ու Առքում Արեգունիի հարևանությամբ և որպես ինքնավանքի կալվածներ, պատկանում էին էջմիածնին (ընդհուպ մինչև Ջափար գյուղն ու ինքնավանքը): Սիմեոն Երևանցու հաղորդումը, որպես առավել իրազեկ ու հավաստի սկզբնաղբյուրի և որ վերնագրված է «Խուժանից որպիսութիւնքն», բերում ենք ամբողջությամբ. «Վանքս այս... նախապէս հիմնաւորեցաւ ի թուոջ... Ունի վիճակս զբոլոր երկիրն Քեօլանու, որոյ հայերէն անունն Ծարայ երկիր կոչի, որ է սահմանակից իսամայու, բայց էջմիածնի է վիճակեալ և ընդ ձեռամբ Երևանու իշխողին, որոյ գեօղորայքն են այսոքիկ. Էրք, Ծնիլանց, Կարմիրչէն, Սալամալիք, Քաւթառանց, Ուուլցփոր, Ատարէնիս, Ծուղրուղաշէն, Հոսարակ, Կեաւալու. սոքա յայտկոյ լերինն են կից Արեգունույն Գեղամայն: Իսկ յայնկոյ լերինն՝ Մեծ Ծար, Կաթ, Անուխս, Խօթանց, Դաշտակ, Հաճար, Ապահէն, Ճուճէն, Քարատակ, Ջուար, Մոս, Սեաջուր, Ծովատեղ, Խրանց, Հալուճ, Մոթանց, երկու Դաւաշխուր, Մեծ և Փոքր Լև, Եանշաղ, Բարսեղի շէն, Մէլտանն, Երիցիչէն, Խուժանք, Ջափար, Կեարաք, Նորչէն, Խնթրավանք: Ունի և դանապատս ընդ ձեռամբ իւրով զմնդրավանից անապատս և զԾարայ անապատս»⁴⁹:

* * *

ԺԷ. դարի վերջերից ու ժԸ. դարի սկզբներից հայ ազատագրական շարժումների նախապատրաստումների գործընթացի սկզբնավորումը ընդգրկել էր նաև Հայաստանի նախիջևան երկրամասը: Շահաբասյան բռնազավթից հետո երկրամասը կրկին վերաբնակեցվում էր, վերականգնվում և վերականգնանում էին առևտրի ու արհեստների նախիջևան ձաղկուն կենտրոնները:

1722 թ. Աֆղանների կողմից Իրանի մայրաքաղաք Սպահանի գրավումը ազդանշան դարձավ կարևոր քաղաքական շրջադարձերի համար: Դեպի

⁴⁹ Սիմեոն Երևանցի, Ջամբու, էջ 283-284:

Այսրևովկաս շարժվեցին ինչպես Ռուսական զորքերը, այնպես էլ Օսմանյան բանակը: Թուրքերը 1724 թ. օգոստոսին զբաղվեցին Նախիջևանն ու Օրդուբադը: 1722 թ. ազատագրական-ինքնապաշտպանական պայքարի ելավ Սյունիքի ու Արցախի Հայ բնակչությունը: Զգալով իրենց տիրապետությանը սպառնացող վտանգը, Հայ ազատագրական շարժման դեմ միավորվեցին Օրդուբադի և Նախիջևանի խաներն ու Բարգուշատի սուլթանը: Հայ ժողովրդի մղած հակաթուրքական պայքարը թեև հավանություն արժանացավ Պարսից իշխանությունների կողմից, սակայն լուրջ օժանդակություն չստացավ և որոշ վայրերում ստիպված էր համակերպվել ուժերի անհավասարությանը թելադրված իրավիճակի հետ: 1724 թ. օգոստոսին Երևանի պաշարումը զեկավարող Արիֆ Ահմեդ փաշայի մոտ էր եկել Նախիջևանի Հայերի պատվիրակությունը: Բնակիչները պարսիկներից օգնություն ստանալու հույսը կորցնելով և թուրքերի դաժանությունից վախենալով, որոշել էին համաձայնության գալ թուրքական բանակի հետ և առաջարկել փաշային զբաղվելու իրենց երկիրը: Նահանգում թուրքական զորքի հայտնվելուն պես, Հայերը դիմեցին զենքի և զուրս քննելու պարսիկներին Նախիջևանից ու Օրդուբադից⁵⁰: Նման դիրքորոշման ընտրությունը թելադրված էր նաև թուրքական հրամանատարության քաղաքական ակտիվ ու խորամանկ դործունեությամբ, որ փորձել է սիրաշահել տեղական բնակչությունը մեծամեծ խոստումներով և տիրանալ առևտրական մայրուղու վրա գտնվող Օրդուբադ, Ազուլիս, Նախիջևան և այլ քաղաքներին⁵¹: Թուրքական տիրապետությունը, սակայն, ունեցավ դաժան հետևանքներ երկրամասի բնակչության կյանքում: «Սովը, անբերրիությունը, թանկությունը և համաճարակները դարձան սովորական երևույթներ բոլոր շրջաններում, ուր ոտք էր դնում թուրքական հեծելազորը: Չհերկված դաշտեր, այրված ցանքեր, տների փլատակներ, անօթևան մնացած մարդիկ – ահա այն աննախանձելի տեսարանը, որ ստեղծվեց թուրքական նվաճողների տիրապետության հետևանքով»⁵²:

⁵⁰ Jonas Hanway. *An Historical Account of the British Trade over the Caspian Sea. The second edition, revised and corrected.* vol. II, London, 1754, p. 213. Հմտ. Ա. Մ. Այվազյան, *Իրադարձությունները Ղափանում և Նախիջևանի խանությունում 1724 թվականին*, – ՊԲՀ, 1991, թիվ 2, էջ 108, 112-13:

⁵¹ Հայ ժողովրդի պատմություն, IV, Եր., 1972, էջ 169-170:

⁵² М. Алиев. К предьстории образования Нахичеванского ханства. – "Известия АНАЗ. ССР", 1986, № 3, с. 61.

ԺԸ. դարի 20-ական թթ. օտար նվաճողների դեմ պայքարի ընթացքում Հայկական բնակավայրերը զգալի կորուստներ էին կրել: 1730-ական թթ. Նախիքի կողմից հակաթուրքական հաջող պայքարի փաստից օգտվելով, ինչպես Աբրահամ կաթողիկոս Կրետացին (1734-1737)⁵³, այնպես էլ Ղազար Զահկեցի կաթողիկոսը (1737-1751) փորձել են Երևանի ու Նախիջևանի գյուղեր վերադարձնել նրանց նախկին բնակիչներին, որոնք տարադրվել էին դեպի արևմուտք՝ խույս տալով թուրքական իշխանությունների բռնություններից ու իմամ Զաֆարի օրենքի կիրառումից: Նախիք շահը Ատրպատականում կառավարիչ և զորահրամանատար նշանակելով իր եղբորը՝ Իբրահիմին, Նախիջևանը, Երևանը և Արևելյան Վրաստանը հանձնեց նրա կառավարմանը: Աբրահամ Կրետացին գրում է. «Նախ եղբորն իւրում, որ բովանդակ Ատրպատականի աշխարհ, որ է պարսիկերէն Ատրպէճան, վերակացու և սէրտար արար, որ է սարասգէր: ԶՆախշուան, զԵրևան և զըսլոր նահանգն Արարատեան և զՎրացտան ի նա հանձնեաց, որ է պէկէր պէկէ՛ իշխօղ և Հրամանատու և մեծ ի վերա այլոց խաներաց»⁵⁴: Հայոց կաթողիկոսները փորձում էին զսպել մահմեդական իշխողների կողմից իրականացվող բնակչության կողոպուտը⁵⁵ և Նախիջևանում Հայ համայնքի միասնականությունը կազմալուծող կրոնավորների պառակտիչ գործու-

⁵³ 1736 թ. Մուղանի դաշտում Նախիքի թագադրման արարողությանը հրավիրվել էր նաև Նախիջևանի Հայոց պատվիրակությունը, որին այնտեղ այցելել էր և Աբրահամ Կրետացի կաթողիկոսը. «Տաղազս դնալոյն իմոյ ի վրանն Նախշուանցոց, այսինքն պարոն Աստուածատուրին, պարոն Խարխախտին և պարոն Ստեփանին և խորհելոյ ընդ նոսա զպատշաճաւոր բանս» (Աբրահամ Կրետացի, Պատմություն, Քննական բնագիր, Լուսերեն թարգմանություն, առաջաբան և ծանոթագրություններ Ն. Կ. Լորդանյանի, Եր., 1973, էջ 86): Այսպիսով, Նախիջևանը ներկայացված էր ինչպես Ռիդա-խանով (Նույն տեղում, էջ 94), այնպես էլ Հայոց պատվիրակությամբ:

⁵⁴ Աբրահամ Կրետացի. Պատմություն, էջ 121: Աբրահամ Կրետացու կողմից Նախիջևանի նկարագրությունը իր վերադարձի ժամանակ տե՛ս նույն տեղում, էջ 155-159, 163-179: Աբրահամ Կրետացին մերզա Ռեկայի մասին, «որ էր վէքել և զպպոթ նահանգին Նախշուանայ», գրում էր, թե «այս մերզէս զպպոթ էր և իշխօղ Նախշուանայ յոյժ գոռոզ և տմարդի և ատեցող բրխատոնէից» (էջ 166), իսկ «նայիպն Նախշուանայ Աղայ Հասանն Խորասանցի՛ այր բարեբարոյ, խելօք, խոնարհ և բարեմիտ» (էջ 175):

⁵⁵ Հ. Ա. Անապյան, Թուրքական Ֆութուվաթը և Հայերը (Օսմանյան կայսրության մուսուլման քաղաքականությունը պատմությունից), Վիեննա, 1985: Մ. Մ. Կառապետյան, Իմամ Զաֆարի օրենքը և արևելահայերը (XVII-XVIII դարեր), – ՊԲՀ, 1988, թիվ 1, էջ 219-221: ՄՄ, Կաթ. դիվան, թղթ. 1գ, վավ. 369, 370, 377, 391, 399, 400:

նեւթյունը⁵⁶: Նաղիր շահը էջը վստահում կենդերու ցեղի օրինապահութ-
յանը, ուստի նրա որոշ ներկայացուցիչների աքսորեց Աֆղանստան: Ի
տարբերութուն այլ երկրամասերի, Նաղիրը Նախիջևանում կարգեց երկու
կառավարիչ: Առաջինը կոչվում էր հաբիմ-ե օլբայն Նախիջևան, իսկ երկ-
րորդը՝ հաբիմ-ե թուսանն Նախիջևան: Առաջինը նշանակվում էր կենդեր-
ու ցեղից, որը Նաղիրի ժամանակ մերդա Թեզան էր, և որը պետական հա-
վաքված հարկերը թաքցնելու համար հեռացվեց պաշտոնից ու պատժվեց,
իսկ երկրորդը՝ հեծելազորի հրամանատար նախը Աղա Հասանը⁵⁷, որին Աբ-
րահամ Կրետացին անվանում է Խորասանցի և զոփստի արժանի անձնավո-
րութուն⁵⁸: Նախիջևանում հավաքվել էին կենդերու ցեղի մի շարք տոհ-
մեր՝ Կըրըլը, Սարբանլար, Աղարեյի, Կարաղուլաղ, Ալիխանլը, Կարախան-
բեյի, Կարաբաղլար և այլն⁵⁹: 1747 թ. մարտի 15-ին Իրանում ուստական
գեպարտորդ Մ. Մ. Գոլիցինը հաղորդում էր, թե «այժմ պարսկական շատ
նահանգներում վտանգավոր իրավիճակում է, և մեծ խառնակություն է
սկսվում Գանձակում, Երևանում, Նախիջևանում, Թիֆլիսում՝ նրանց վրա
զրված անչափ ծանր դրամական տուգանքների պատճառով»⁶⁰:

Ինչպես Արևելյան Հայաստանի մնացած շրջաններում, Նախիջևանում
ևս իրազրութունը արմատապես փոխվեց, երբ Նաղիրի սպանությունից
հետո սաստկացան գահակալական կռիվները: Այսրկովկասի բոլոր նախկին
նահանգապետները շարունակեցին կառավարել որպես անկախ տիրակալ-
ներ: Աղիլ շահի կառավարման օրոք Նախիջևանում ծայրահեղ կեղեքված
հայ բնակչությունը հրաժարվել էր ճանաչել Պարսից իշխանությունը՝ ի
դեմս Մուհամմադկուլի խանի: Ինքնապաշտպանություն դիմած հայ բնակ-
չությունը կենտրոնացել էր Աստապատ հայկական գյուղում՝ զորեղ դի-
մադրություն ցույց տալով խանին: Հնարավորություն չունենալով ճնշելու
հայոց դիմադրությունը, անօգնական մնացած խանը փախչում է երկրից:
Նրա փոխարեն խան է նշանակվում տեղի աղաներից Հեյդարկուլին, որը ևս

⁵⁶ Մ. Օրմանեան, Աղգապատում, հատ. Բ, մասն Գ, Բեյրութ, 1960, էջ 2929-2935:
ՄՄ, Կաթ. դիվան, թղթ. 1գ, վավ. 375, 380:
⁵⁷ Միրզա Թեզային պաշտոնանկ անելուց հետո այլևս թույլ չտրվեց վերադառնալ
Նախիջևան, նրան իր մոտ պահեց Նաղիրի եղբայր Իբրահիմ խանը, և Նախ-
իջևանում միանձնյա կառավարում էր Աղա Հասանը:
⁵⁸ Ազրբեջանական պատմագիտությունը պատվամբ վերջինիս ևս համարում է
կենդերու ցեղի ներկայացուցիչ: Տե՛ս Մ. Ալևեզ, նշված աշխ., էջ 62:
⁵⁹ ՀՊԳԱ, ֆ. 93, գործ 38, թ. 11:
⁶⁰ Մ. Ք. Արսուր, Կ. Յ. Արաբյան, Государство Надир-шаха. М., 1958, с. 125:

հալածանքներ է սկսում հատկապես հայ մեծատունների նկատմամբ⁶¹: Ա-
ղիլ շահին հաջորդած Իբրահիմ Միրզայի գահակալության շրջանում մե-
ծացավ հարկապահանջությունը: Նախիջևանի, Ջահուկի, Գողթնի հայերը
լուր ստանալով թավրեղում Իբրահիմի գահակալության մասին, պատվի-
րակություն⁶² ուղարկեցին այնտեղ և, տեսակցելով գահակալի հետ, բողո-
քեցին Հեյդարի դեմ: Իբրահիմ շահը⁶³ տեղի տալով հայոց պահանջին, Հեյ-

⁶¹ Մ. Չամչեան, Պատմություն հայոց, հ. Գ, Վենետիկ, 1786, էջ 842. Համտ. Հայ
ժողովրդի պատմություն, հ. IV, էջ 192:
⁶² Պատվիրակության կազմում էին Շոտթից Ալեքսանդր Աղանյանցը, Մխիթար,
Ղազար և Հովհաննես շահկերտցիները, Աստապատի Մխիթ Բարաղամը, Մխիթ
Պալումը, Աստապատի իշխան Կարապետ Աստվածատուրյանը և ուրիշներ (Մ.
Չամչյան, Պատմություն հայոց, Գ, էջ 842):
⁶³ Ուշագրավ է Իբրահիմ շահի 1748 թ. (22.XI-21.XII) մի հրովարտալը, որով նա
Շահ-Կուլի խանին է նվիրում հայկական 15 գյուղերը և նրանց կառավարիչ է
նշանակում եղբորդուն՝ Դավիթ բեկին. «Ввиду того, что высокопоставленный,
сила искренности и увещания... Шах-Кули хан... проявил прилежное служение и
самоотверженность...ему отдельно назначили пятнадцать нижеупомянутых армян-
ских селений в нахичеванском махале: Аколис, Нижний Аколис, Мегри, Шорот,
Джахрик, Лулу (?), Баламлу, Шахкард, посевное поле Сал, посевное поле Нора-
шен, посевное поле Камал, посевное поле Парге, посевное поле Тер-Погос, по-
севное поле Есраил (известное под названием Кара-Килтса), Шейх-Махмуд. Мес-
то управляющего ими пожаловали опоре великих исповедующих веру Иисуса,
сливкам христианских ученых Давид бегу, племяннику (сыну брата) вышеуказан-
ного высокопоставленного, и от начала четырех [оставшихся] месяцев текущего
года, года крокодила, соизволили определить ему двести тебризских туманов в год,
чтобы он ежегодно получал его за счет государственного малийата тех мест, рас-
хододал на свои нужды и как следует и как полагается и как подobaет его спо-
собностям и опыту, вел вышеуказанную службу и показывал свою старания в делах
распоряжения малийатом, заботы для благосостояния мест, совирания [рас-
сеявшихся] райатов; наказания черни и сврода, воров и грабителей, обеспечения
безопасности дорог. Пусть он соверет и возвратит на прежние места рассеявшихся
райатов, перешедших в Турцию или другие страны, население вышеуказанных
мест ввунит уверенность в [наших] царских милостях, чтобы они снова занялись
своими ремесленными и крестьянскими делами. Цель назначения опоры великих
среди христиан на должность заведующего вышеупомянутых мест заключается в
том, чтобы, собрав рассеянное население в вышеназванном махале, согласно
обстоятельству, он занимался земледелием и благоустройством; не допускал,
чтобы кто-нибудь, нарушая указ и порялок, всепокоил население дастандазом,
шиглаком или [каким-нибудь другим] насиллем; пусть он считает своим авзав-е
джама'ом малийат и мутавалджихат вышеназванного махала и пусть восстановит
справедливость; пусть ежегодно составляет и посылает [в наш] августейший
лафтар-хане подробный и требуемый по условию описание положения дел [в этих
селениях]. Отныне хахим, 'амилы, калантар и кедходы Нахичевани никоим образом
не могут иметь никаких доходов и владений, все тамошние дела находятся в руках
опоры великих. Хахим, 'амилы, калантар и кетходы Нахичевани написанное [нами]

դարին հրավիրում է Թավրիզ, գրկում իշխանությունից և Նախիջևան է ուղարկում Հեյդարի եղբորորդուն Ալիդուլի բեկին: Հայաստան ուղարկվելիք հարկահանների հետ ուղևորվելով, Ալիդուլի բեկը Հեյդարի խորհրդով Իրանց հետ վերցնում է նաև Թավրիզ ժամանած հայոց պատվիրակության անդամների մի մասին և, ժամանելով Նախիջևան, «հասնոցս և այլոց հայոց վիշտ անհնարին»: Նման իրավիճակում Իբրահիմ շահը Նախիջևան առաքել ծագումով վրացի Բեհնամ խանին: Վերջինիս հետ Նախիջևան վերադարձան նաև Թավրիզում մնացած հայ պատվիրակության մյուս անդամները ևս: Բեհնամ խանը Հայերին ազատեց հարկահանների բռնություններից և «յանդորրս կալաւ զրնակիչս Նախջուանայ և շրջակայ գաւառաց»: Նա իր գորբերը համարեց հայագրի զինվորականներով ու զորավետերով և նրանց օժանդակությամբ հաղթելով իր հակառակորդներին՝ «զօրացաւ յոյժ»: Օրդուբադի մահմեդական բնակչությունը փորձեց չենթարկ-

путь считают установленным; отныне они ни коим образом не могут иметь дохода из упомянутых мест и не будут иметь никакого отношения [к ним]: пусть они больше не считают малыйт тех мест своим и пусть считают его абва-е джам'ом вышеуказанного, опоры великих; состоящие на службе в этих селениях пусть считают себя находящимися на службе у вышеупомянутого хакима и пусть направлят государственную службу.

Хакимы, амины, забыты, ришсефиды, калантары, келходы и население тех мест, где обосновались рассеявшиеся райяты с вышеназванных мест, как только прибудут к ним люди, присланные от вышеуказанного хакима, пусть соберут рассеявшихся райятов и переправят их на свои места, не оставляя ни одного человека у себя. Келходы, ришсефиды и население вышеназванных селений пусть признают вышеупомянутого опоры тамошним самостоятельным и независимым хакимом, пусть слушают его слова и назидания и пусть выполняют его приказы.

Великие мустоуфи высочайшего дивана содержание славнейшего ракама пусть внесут в дафтары; и пусть признают себя ответственным [в исполнение данного фирман]. Написан 4 числа месяца зи-ль-хидже 1161 года». (Тбилисская коллекция персидских фирманов. Том II. Составители: М.А.Тодуа и И.К.Шамс, Тбилиси, 1989, с.76-78).

Պապուհա Օրբելյանիի Պատմությունից պարզվում է, որ վերոհիշյալ Դավիթ բեկը եղբորորդին էր Գիվի Ամիխաորի: Վերջինս հայտնի լինելով Շահ-Կուլի-խան անունով, շահի «կուլարադասին» էր, մեծ չափով գանձեր էր ուղարկել Վրաստան իր ազգականներին և իր մոտ՝ Թավրիզ, էր հրավիրել նաև իր եղբորորդուն Դավիթ բեկին: "ამიღაბორს, რომელსა ერქვა შაჰ-ყული-ხან და ყულარადასი ეახისა, გამოეგზავნა ქართლში თქრო და ევერცხლი მრავალი თვისისა მხახურ ახნაურ-შვილთათვის და ესენიც სულ და თვისი მძისწულიც დავით დაეპარებინა თავრიზს" (პაპუნა ორბელიანი. ამბავნი ქართლისანი. ტექსტი დაადგინა, შეხვედლი, დექსიონი და საძიებლები დაურთო ელენე ცაგარეიშვილმა, თბ., 1981, გვ. 151).

վել Բեհնամ խանին: Վերջինս տեղեկանալով այդ մասին, նրանց դեմ ուղարկեց հայոց զորքերը՝ Ղազար և Վարդազար Շահկերտցիների հրամանատարությամբ: Աթոռագուրկ եղած Հեյդարը, որ թշնամացած էր Հայերի դեմ, կաշառելով Թավրիզի բեկլարբեկին, կրկին ստացավ Նախիջևանի կառավարչի պաշտոնը: Թավրիզում գտնվող Կարապետ Աստապատցին, ուրանալով հավատը, գործակցեց Հեյդարին, և նրանք միասին վերադարձան Նախիջևան: Մինչ Հայոց զորքերը պաշարել էին Օրդուբադը, Հեյդարը թիկունքից հարձակվելով, ձերբակալում է Ղազար և Վարդազար զորահրամանատարներին, ապա ներխուժելով Նախիջևան, նա արտաքսեց Բեհնամ խանին և ստանձնեց Նախիջևանի կառավարումը: Մեծ թշնամանք տածելով շահկերտցիների նկատմամբ, նա պաշտոնադուրի արեց շահկերտցի իշխանավորներին և սպանել տվեց նրանցից ոմանց: Զգուշանալով Հովհաննես Շահկերտցուց, Հեյդարը չհամարձակվեց սպանել Վարդազար Շահկերտցուն, որ Հովհաննեսի եղբորորդին էր: Հեյդար խանը որոշեց այնուհետև վրեժխնդիր լինել Շահկերտ ավանի բնակչությունից և, զորք ժողովելով, արշավեց Շահկերտ, որ կոչվում էր նաև Ղազաւնի: Ըստ ժամանակակից աղբյուրների. «էին շահկերտցիք արք զօրաւորք և հաստարագուկք, իրոխտք և դիմակալք, ամենեքին հայք և ըստ մեծի մասին պղնձագործք և մեծ իշխանն նոցա՝ Յովհաննես Խանդամիրեան, հզօրագոյն էր ի մէջ նոցա և քաջ պատերազմօղ, միանգանայն և խոհեմամիտ և հանճարեղ ի գործ կառավարութեան»⁶⁴:

Տեղեկանալով հայոց նախապատրաստությունների մասին, Հեյդարը որոշեց ամրոցը գրավել խորամանկությամբ: Նա սուրբ Կարապետի վանքից

⁶⁴ Տեղեկանալով Հեյդարի արշավանքի մասին, Հովհաննես Շահկերտցին հրամայեց շուտափույթ հնչեցնել դանդերը և այդ մասին զգուշացնել քաղաքի բնակչությանը: Նա բոլորին հրամայեց իրենց ընտանիքներն ու կաշ-կարասին հավաքելով, ելնել քաղաքից և ամրանալ մոտակա լեռան անմատչելի ամրոցում: Նկատի ունենալով, որ ամրոցում չեն կարող տեղավորվել բոլոր բնակիչները, աճապարանքով լեռան ստորոտով կառուցվեցին պարիսպներ և ամրացան քաղաքակողմ հայոց պատնեշի ներսում: Հովհաննես իշխանը ընտրելով հինգ հայուր կրովի ոսպմիկ, զինեց նրանց և կարգելով հայուրապետներ ու ստանապետներ, սկսեց մարզել նրանց՝ թշնամու գեմ մարտնչելու համար: Շահկերտցիները ձուլեցին թնդանոթներ ու մեծ քանակությամբ պղնձե արկեր և պատերազմական այլ գործիքներ: Ջրի մատակարարումը դուրսացնելու նպատակով մտադարձրվեց բլրի վրա ևս կարգվեց կայազոր, որ պետք է հսկեր ջրամատակարարների անվտանգությունը: Բաղաքային պահեստներում կուտակած պարենամթերքը տեղափոխվեց ամրոցի ներս, որ բավարար էր եռամսյա պարենավորման համար: Մ. Չամչյան, Պատմություն հայոց, Գ, էջ 844:

Ղազար Զահկեցի կաթողիկոսի եղբորը՝ Մկրտիչ վարդապետին, և նրա հետ նաև Զահկեցի Թավար անունով մի իշխանավորի ուղարկեց Հովհաննես Շահկերտցու մոտ: Մտնելով ամրոց, պատվիրակները փորձեցին համոզել Հովհաննես Շահկերտցուն ցած դնել զենքը խաղաղությանը, սակայն համոզված լինելով Հեյդարի դավադիր էության մեջ, Հովհաննես Շահկերտցին ետ վերադարձրեց զեսպաններին և ավելի ամրացրեց պաշտպանությունը: Համոզված լինելով, որ սեփական ուժերով ի վիճակի չէր գրավել ամրոցը, Հեյդարը դիմեց Թավրիզի բեկլարբեկին և խնդրեց օժանդակ գործ: Օգնություն եկած զորքի մեջ էր և դավանափոխ Կարապետ Աստապատցին, որ գործակցում էր Հեյդարի հետ: Պարսից զորքին հաջողվեց գրավել Ջրամատակարարմանը հսկող պահակազորի աշտարակը, որտեղ տեղադրվել էր ընդամենը 15 զինվոր, որից հետո Հայոց զորքը սկսեց ստանալ միայն գեշերային մթնոթյան մեջ Ջրամատակարարների կողմից բերվող ջուրը: Այդ անհարմարությունը շակելու համար Հայոց զորքից առանձնացվեց մեկ ջուրկատ՝ Գրիգոր Շահկերտցու գլխավորությունով, որը համարձակ ու անակնկալ հարձակումով կարողացավ ետ գրավել Ջրամատակարարմանը հսկող աշտարակը Պարսից զորքից՝ ոչնչացնելով Պարսից կայազորը ու ավերելով աշտարակը՝ վերադարձավ յուրայինների մոտ՝ ամրոց: Այս ձախողումը ևս գազազեցրեց Հեյդարին, որը սաստկացնելով հարձակումը, 5-6 օր անընդհատ շարունակեց գրոհը, սակայն հաջողության հասնել չկարողանալով, կրեց նորանոր կորուստներ: Դադար տալով մի քանի օր, Հեյդարը սկսեց տեսնել նոր պատրաստություններ և վերսկսեց գրոհը: Սակայն «Իբրև տեսին Պարսիկք, թէ անհնար է առնուլ զզոհակն և կամ վնասել ինչ Հայոց, լուծան և լքան և, զի պակասեալ էր պաշար զօրաց երեցունց նախարարացն Պարսից, յորդորեցին զՀեյտար առնել հաշտութիւն ընդ Հայս»⁶⁵: Որոշ ժա-

⁶⁵ Հովհաննես Շահկերտցին, կասկածելով Հեյդարի առաջարկի անկեղծությունը, ետ վերադարձրեց ժամանած պատվիրակությունը առանց զրախան պատասխանի: Իր առաջարկի անկեղծությունը հայկական կողմին ներկայացնելու և վստահեցնելու նպատակով Հեյդարի գլխավոր երեք նախարարները երկուսական սպասավորներով առանց թիկնապահ զնդի մոտեցան լեռանը և բանակցությունների նպատակով թույլտվություն ստանալով, մտան ամրոց: Բանակցությունները ձգձգվում են, որի ընթացքում Հովհաննես Շահկերտցու ազգականներից ոմանք հակվում են հաշտության մտքին, որը և ստիպում է նաև հրամանատարին՝ ակամա գիջելու և կնքելու հաշտություն: Հեյդարը զորքով հեռանում է դեպի Նախիջևան, իսկ Հայ բնակչությունը վերադառնում է իր քաղաքը: Պայմանագրի համաձայն Հովհաննես Շահկերտցու ընտանիքը կարող էր բնակվել նաև Նախիջևանում, որով պետք է հաստատվեր նաև Հեյդարի անկեղծությունը: Մ. Չամչյան, Պատմություն Հայոց, Գ, էջ 846:

մանակ անց Հեյդարը, բազում երդումներով վստահեցնելով Հովհաննես Շահկերտցուն իր անկեղծության մեջ, նրան առաջարկում է տեսակցել Նախիջևանում: Կազմակերպում է փառավոր ընդունելություն, որի ժամանակ և նրան թունավորում են: Այդ ազդանշան է ծառայում նրա վիճակիցների համար, որպեսզի հեռանան Նախիջևանից դեպի Կապան և ապա, դաշնակցելով Փանահ խանի հետ, պատերազմի ելնեն Հեյդարի դեմ: Շուտով, սակայն, կրկին հաշտություն է կնքվում նրանց միջև և պատերազմական գործողությունները դադարում են:

1751 թ. կրկին պահակալական կոիվները բորբոքվում են Իրանում, և անիշխանությունը իր ծանր ու ողբերգական հետևանքներն է թողնում ինչպես Իրանի, այնպես էլ Հայաստանի կյանքում: Զորանալով Իրանում, Ազատ խանը Բեհնամ խանի հետ միասին, որ Նախիջևանից հեռանալուց հետո հարել էր Ազատ խանին, հարձակվում և գրավում է Թավրիզը, սպանում Մեհտի խանին և ապա արշավում Նախիջևան, բանակում է Հին Զուղայի մոտ և հպատակություն ու պաշեն պահանջում Հեյդար խանից: Հեյդարը, սակայն, պատասխանի փոխարեն իր զորքով շարժվում է Ազատ խանին ընդառաջ և բանակ դնում Արաքսի մյուս ափին: Հնազանդության առաջարկներին չընդառաջելու համար, Ազատ խանը իր բանակով հարձակվում է Հեյդարի զորքի վրա, գերեվարում Հեյդարին, որին և Բեհնամ խանը սրախողխող է անում «ի վերա սեմոց դրան Հին Զուղայու»⁶⁶: Բեհնամ խանը այնուհետև ստանձնում է Նախիջևանի կառավարումը, ազատություններ չնորհում հայ բնակչությանը:

Նույն 1751 թ. Ազատ խանի դեմ հանդես է գալիս Սամաստի Նազիլ խանը, որը ևս իր բանակ էր զորակոչել հայազգի զինվորականների, սակայն պարտվում է և սպանվում: Մեծապես տուժելով այդ պարտություն պատճառով, Հայ զինվորները ցրվում են: Սրվում են այնուհետև հարաբերությունները Ազատ խանի և Հերակլ 2-րդ թագավորի միջև, սակայն Բեհնամ խանին հաջողվում է հաշտեցնել նրանց: Հերակլ 2-րդը վրաց զորքի ուղեկցությամբ դեսպան է ուղարկում Նախիջևան, որտեղ և կնքվում է հաշտությունը:

Պարսկա-թուրքական տիրապետության ժամանակաշրջանում, ինչպես այլ ժողովուրդների մոտ, այնպես էլ Հայաստանի այլևայլ նահանգներում

⁶⁶ Մ. Չամչյան, Պատմություն Հայոց, էջ 850: Առ, Հայոց պատմություն, Հ. Գ, գիրք Բ, եր., 1973, էջ 232:

և այդ թվում նաև Նախիջևանում, մեծ չափեր էր ընդունել քրիստոնյաների բռնի և Հարկադրյալ մահմեդականացումը: Ինչպես Հայտնի է, ուրացողները առավել անդուժ վերաբերմունք են դրսևորել հատկապես իրենց նախկին դավանակիցների, և անգամ արյունակիցների նկատմամբ⁶⁷:

Նախիջևանի պատմության համար ուշադրով է նաև հետևյալ փաստը: Հայաստանում ձմեռելուց հետո Ազատ խանը շարժվում է դեպի Հեր գավառ և ապա Ուրմիա քաղաք, ստանում հարկերը և ապա որոշում զբաղվել Երևանը ևս, որը այդ ժամանակ հարկատու էր վրաց թիսմուրաց 2-րդ թագավորին: Պատերազմական գործողությունները նրանց միջև դառնում են անխուսափելի: Նախիջևանի Բեհնամ խանը իր ընտանիքով հեռանում է և անցնում իր Հայրենի վրաստան: Ազատ խանը նրա փոխարեն Նախիջևանի խան է նշանակում Հեյդար խանի եղբորորդուն՝ Մազսուտ խանին: Վրաստանի հետ ունեցած պատերազմում պարտվելով և խույս տալով հետապնդող վրացական բանակից, որ արգեն մոտեցել ու բանակել էր Նախիջևանի

⁶⁷ Ուշադրով և բացառիկ միջադեպ է Նախիջևանում նման մեկ անձնավորություն նկատմամբ կատարված դատաստանը, որի մանրամասնությունները վերապատմել է Հ. Միքայել Չամչյանը: Արդեն իսկ հիշատակված Կարապետ Աստապատցի ուրացալը Հեյդարի մահից հետո մերձենալով Բեհնամ խանի հետ, որը ևս, ինչպես սովեց, մահճակական վրացի էր, պաշտոնավորություն մեկնում է Հայրենի Աստապատ, որտեղ և մեծամեծ չարքերն ու ոճիրներ գործում: «Ոչ է թող չարիս, զոր ոչ անցոյց ընդ քաղաքացիսն, թող զանպարտ արիւնսն, զորս ևհեղ»: Աստապատի Հայ բնակչությունը հոծ բազմությունը Կարապետ Աստապատցու գործողությունների դեմ բողոքելու նպատակով գնում է Նախիջևան և դիմում Բեհնամ խանին: Բեհնամը իր մոտ հրավիրելով Կարապետ Աստապատցուն առերեսման և համոզվելով նրա չարագործությունների մեջ, որի համար նա արժանի էր մահվան, փորձեց արքայից հեռավոր և անձանտթ մի վայր: Նախիջևանի Հայ երեկելիների պահանջով, սակայն Բեհնամ խանը Կարապետ Աստապատցուն հանձնում է Հայրենակից աստապատցիների դատաստանին, որոնք «ոմանք թքանէին յերեսս նորա, և ոմանք քարչէին զհերսն, ոմանք կուռփս տալին նմա և ոմանք ապտակս. կեսք բռնցի Հարկանէին և կէսք ոտամբ կոխտէին և այլ ևս պէսպէս ծանակօք տանջէին զնա»: Հերակլ 2-րդի դեսպանություն անդամները, որոնք այդ ժամանակ ներկա են եղել տեսարանին, վերջնելով Կարապետ Աստապատցուն, ապարանքից հանել են դուրս և, սրբախղճող անելով, սպանել նրան: Չարագործի նկատմամբ կատարված դատաստանի արդարությունը վկայում է նաև մի պարսիկ, որը բացելով իր կուրծքը, ցույց է տալիս այն սպիները, որոնք մնացել էին այդ ուրացողի կողմից հասցված խարանների վերքերից: Մանակելով դիտելն անդամ, այնուամենայնիվ նրա դին ամփոփում են «ոմանք ի պարսից»: Մ. Չամչյան, Պատմություն Հայոց, III, էջ 851-852:

Այս միջադեպը, որ եզակի էր ողջ պարսկա-թուրքական տիրապետության ժամանակ Հայաստանի համար, ցույց է տալիս Նախիջևանի Հայազգի բնակչության դերն ու կշիռը մահմեդական գերիշխանության տարիներին, վկայում է Հայ բնակչության կորույթի և արժանապատիվ դիրքի մասին:

մոտ, Ազատ խանը իր ճանապարհին հարձակվում է հայկական բնակավայրերի վրա և կողոպտում: Նախիջևանի Հայ բնակչությունը որոշում է թշնամուն դիմագրավելու համար համախմբվել Աստապատում, սակայն դեռևս Աստապատ չհասած վրա են հասնում Ազատ խանի զորքերը և կողոպտում բոլորին: Համոզվելով, որ վրացիները այլևս չեն հետապնդում իրեն, Ազատ խանը 1752 թ. որոշում է գնալ Ազուլիս և իր բանակի պարենավորման համար մթերք հայթայթել տեղի բնակչությունից: Նա Ազուլիս է ուղարկում պատվիրակություն և բացի պարենից, պահանջում է նաև 200 քսակ դրամ: Քաղաքապետը Եսայի Ազուլիցին, «այդ հզոր և յոխորտ», մերժում է այդ պահանջը և ժողովելով բնակիչներին՝ պատրաստվում է դիմագրավել թշնամու հարձակմանը: Ազատ խանը երկրորդ և երրորդ անգամ պատվիրակությամբ կրկնելով իր պահանջը, ի վերջո հրաժարվում է դրամի պահանջից և բավարարվում պարեն խնդրելով, միաժամանակ սպառնալիքներ տեղում իր խնդրանքը չկատարելու դեպքում: Չանսալով քաղաքացիները չորդորներին, Եսայի Ազուլիցին կրկին մերժում է Ազատ խանի պահանջը, որը և թնդանոթներով ուժեղացնելով քաղաքը, հարձակում է կազմակերպում քաղաքի ոչ այն մասից, որտեղից պատրաստի սպասում էին Հայ պաշտպանները: Հայ զինվորները «յորժամ իմացան, թէ մտին զորք ի ներքս ընդ միևս կողմն՝ շուարեցան», իսկ խանի զորքը սկսեց կոտորել խուճապահար բնակչությունը:

Աստապատի Կարմիր վանքի առաջնորդը, որ այդ ժամանակ գտնվում էր Ազուլիսում, մեկը Եսայի Ազուլիցին ու մյուս երեկելիները ապավինեցին թովմա Առաքյալի վանքի ամրությունը, սակայն տեղեկանալով այդ մասին, թշնամին կարողացավ խորտակել դարպասները և սրախողխող անել նրանց ևս: Ազատ խանի բանակը հեռացավ Ազուլիսից մեծաքանակ ավարով ու գերիներով, որոնց մեկ մասը միայն փրկագնացից Բայազետի և այլ քաղաքների Հայերի կողմից ու ազատ արձակվեց⁶⁸:

Ազուլիսի այս ավերումը սկիզբ դրեց մի գաղթականության, որը «մի ծայրով հասավ Կ. Պոլիս և թուրքիայի մյուս մասերը⁶⁹, մի ծայրով՝ Դարա-

⁶⁸ Մ. Չամչյան, Պատմություն Հայոց, էջ 854: Լեո, Հայոց պատմություն, հ. Գ, մասն Բ, էջ 236:

⁶⁹ Արտագաղթը ընդգրկում է նաև հայկական մյուս բնակավայրերը: Թովմաս Իսավրեոսնցի զլխավորությամբ Նախիջևանի Հայոց համայնքի մի մասը (Խոչ-կաչեն և այլք) գաղթում է Ջմյուռնիա, որտեղ Հայտնի է դատուն «պարսիկներ» (աճեմներ) անվանումով: (Տե՛ս Ա. Ա. Խառատյան, Հայ գաղթականությունը էգիպտոսի մերձավոր շրջանում (XIV-XVIII դդ.),- Պատմա-բանասիրական հան-

բազ, իսկ մյուսով՝ Հնդկաստան»⁷⁰: Նկարագրված իրադարձությունների արդյունքում⁷¹ 1750-ական թվականներից Նախիջևանում իրենց ժառանգական գերիշխանությունը հաստատեցին ղզլբաշական Ուստաջուլու ցեղախմբի Կենդերուլու ցեղի ներկայացուցիչները⁷²:

Հայկական բնակավայրերը, սակայն, շարունակում էին կառավարվել հայ ժառանգական իշխանական դերդաստանների ներկայացուցիչներին կողմից: Այսպես, 1765 թ. Հակոբ վարդապետին նվիրակության ուղարկելով Նախիջևան, Սիմեոն Երևանցին նրա միջոցով նամակներ է ուղարկում Նախիջևանի մելիքների անունով. «Եւ անուամբ ԺԱ Թուղթք ևս առ մելիքսն, այսինքն՝ Պետրոսն, Անդրէասն, Բատայն, Ոսկանն և պարոն Աղամիրզայն, Ասփուաղն, Քօլին, Մարութայն, Վարդազարն, Մանուչարն, Յօհանն և Ասեփանն: Գրեցաւ նաև Դ. (Վ) Թուղթք առ քեալանթար Պետրոսն և պարոն Աւետիքն, և առ Քեարամ, Աղայ և Խաչատուր տանուտեաբանս»⁷³: Քեարամ խանի հրամանով 1774 թ. Աղաղջիրանի (Գողթն գավառ) Հայոց քալանթար է նշանակվում Վերին Ագուլիսի մելիք Աղամիրզայի ժառանգ Մե-

դես, 1988, թիվ 4, էջ 40-42: Marie-Cermen Smyrnelis. Les Arméniens Catholiques de Smyrne aut XVIIIe et XIXe siècles.- "Revue du monde Arménien", tome 2, (1995-1996), Paris, 1996, p. 29-33:).

⁷⁰ Առ, Հայոց պատմություն, Գ. Գ. մասն Բ, էջ 236:

⁷¹ Ազրբեջանական պատմագրությունը ևս արձանագրել է արտագաղթի մեծացումը, այդ բացատրելով, սակայն, որպես թե «ճանր ֆեոդալական շահագործումը նպաստեց դասակարգային պայքարի (sic) սրմանը: Բնակչության այն մասը, որը չէր կարողանում պաշտպանել իրեն, ստիպված էր լքել իր հայրենի վայրերը և թաքնվել հարակից երկրներում» (M. M. Азиев, К предьстории образования..., с. 61-62): Այդ արտագաղթի գոհերից էր նաև Գրիգոր Տաթևացու «Հարցմունքի» ստացող «Արևելցիին», որ ձեռագրի հիշատակարանում արձանագրել է, թե «Ի ժամանակս յեախն թվականութեանն հայոց ԽՄԺ (1761), մարդի Ժ (10) օրն, որ ևս Արևելցի, ի յերկրէն Նախուլվանու, ի գիւղէն Նորայհողաց, որ բոս մերում ժամանակաց վասն մեզաց իմոց Հայաստան Օսմանցուց, ի քաղաքն Դանկիրլու: Իպրև եղէ ևս քսանամեայ, մեռաւ հայրն իմ ևս եղէ խանութայազ, և անտ առի զաս Դաթևացի Հարցմունքս ի վասակոց իմոց, օր որ հանդիպիք, յիշէք զիս ևս զժրնօղրն իմ մին հայր մեղայիս» (Մահալ վրդ. Մեմնևմեան. Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հ. է, Վենետիկ-Ս. Ղաղար, 1996, էջ 970):

⁷² И. П. Петрушевский. Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI- начале XIX вв., II., 1949, с. 132-133. Նրանք իրենց իշխանությունը պահպանեցին մինչև Ռուսաստանի կողմից Այսրկովկասի, այդ թվում և Նախիջևանի, գրավումը:

⁷³ Դիւան հայոց պատմութեան, գիրք Գ, Սիմէոն կաթողիկոսի Յիշատակարանը: Հրատ. Գիւտ քազ. Աղանեանց, Թիֆլիս, 1894, էջ 321:

լիք Հարությունը⁷⁴: 1797 թ. փետրվարին Աղա-Մահմադը շահի կողմից Գողթն գավառի քալանթար է հաստատվում Մելիք Հարությունի որդին՝ Շմավոն բեկը⁷⁵: Վերջինիս միաժամանակ հանձնարարվում է. «որպեսզի նա հավաքի հիշյալ մահալի հայ հրացանակիրներին (թուանկչիներին), ինքը ստանձնի նրանց հրամանատարությունը, զինի և վարժեցնի կատարելապես, որպեսզի շուտով՝ երկու-երեք ամսից, երբ ինքը ճանապարհվի դեպի Ղարաբաղ, սպասի առանձին նոր հրամանի: Եվ ցանկացած ժամանակ, երբ ստանա մեր թագավորական հրամանը, առանց ուշացման կամ ձգձգման, կարողանա միանալ արքայական ճամբարին, որը կշարժվի Խուզավերինից»⁷⁶:

ԺԸ. դարի երկրորդ կեսը ընթացավ Այսրկովկասում և Հյուսիսային Իրանում խանությունների միջև նորանոր խմբավորումների ստեղծումով ու նրանց միմյանց դեմ ծավալված պայքարով: Նախիջևանի նկատմամբ հավակնություններ դրսևորող Արցախի Իրազհիմ խանին դիմադրաբար համար Նախիջևանին սատար կանգնեց Երևանի խանը, որից և սկսվեց Երևանի ու Նախիջևանի խանությունների երկարատև դաշինքն ու հավատարմությունը: 1780-ական թվականներին Իրանում հզորացած Ալի Մուրաա խանին շահ ճանաչելուն ի պատասխան՝ Ռուսաստանը ակնկալում էր այսրկովկասյան մի շարք խանությունների նկատմամբ Իրանի հավակնությունների դադարեցում և նրանց միավորման միջոցով Ռուսաստանի հովանուները պետական միավորի ստեղծում: Այդ նպատակով վարվող բանակները ակնկալում էր համարձակ միջոցներով Ռուսաստանի ղեկավար Տամարան, գտնվելով դեռևս Նախիջևանում, տեղեկացավ Շիրազում Ալի Մուրաա խանի մահվան մասին:

1790-ական թվականներին Իրանում հզորացած Աղա Մահմադ խանը փորձեց վերականգնել Իրանի ազդեցությունը Այսրկովկասի նկատմամբ: Հնազանդության կոչող և սպառնալիքներով ուղեկցվող նրա ղեմումին ընդառաջեցին մի շարք խանությունների՝ համաձայնելով հարկ վճարել նրան,

⁷⁴ Тбилисская коллекция персидских фирманов. Том II. Составители: М. А. Тодуа и И. К. Шамс. Подготовка к печати, перевод, комментарии и словарь М. А. Тодуа. Тбилиси, 1989, с. 94-95.

⁷⁵ Тбилисская коллекция персидских фирманов. Том II, с.107-108.

⁷⁶ Тбилисская коллекция персидских фирманов. Том II, с. 108.

բացի վրաց Հերակլ և Արցախի Իբրահիմ խանից: Երևանը և Նախիջևանը,⁷⁷ գտնվելով Հերակլի ազդեցության ոլորտում, վերապահորեն արձագանքեցին Աղա Մահմադ խանի պահանջին⁷⁸: Աղա Մահմադ խանը որոշեց արշավանքով պարսաղրել նրանց և 1795 թ. ներխուժեց Այսրկովկաս: Շուշիի բերդի անհաջող պաշարումից հետո, սրի պաշտպանները արժանի հակահարված հասցրին Աղա Մահմադ խանի զորքերին, խանը արշավեց դեպի Գանձակ և ապա՝ Թիֆլիս: Պարսկական մեկ զորամաս ներխուժեց Նախիջևան և ապա պաշարեց Երևանը, որը 35 օր դիմադրելուց հետո, ստիպված եղավ զենքը ցած դնել և ընդունել հպատակությունը: Այդ իրադարձությունները հանդամանորեն ներկայացված են նաև Ազուլխի սր. Թովմա առաքյալի վանքի ձեռագրերից մեկում Աբրահամ Աստապատեցու կատարած նկարագրության մեջ⁷⁹, որի վկայությունը, Աղա Մահմադ խանը «ի թուականիս մերում ՌՄՆ (1791) եկն անթիւ բաղմութեամբ զօրաց ի Կարէփ քաղաք և ի Մարանդ և անտի հրաւիրակս առաքեալ՝ զԱտրպատական երկրի յինքն կոչեաց զամենայն նախարարս, այսինքն զխանս Հատրպէճանու, սկսեալ ի յՈրմոյ մինչև յԱրտաւիլ, ընդ որս և զքաջ իշխողն Նախջուանու՝ զՔալպալի խանն՝ զորդին Հասան խանին: Որք հնազանդութեամբ գնացին առ նա և եղեն նմա հարկատուք: Եւ նորս մեծապէս պատեալ զոսա զամենաին, զարձոյց յիւրաքանչիւր տեղիս, առնելով պատանդս, այսինքն՝ զաւակս ի նոցանէ, զոմանց կանայս և զոմանց որդիս և գեղարայրս...»: Երկու տարի անց կասկածելով Քալբալի խանի հավատարմությանը և «կասկա-

ծեալ ի նմանէ վասն քաջութեան նորին, զի մի ապստամբիցի», նրան հրավիրում են Թավրիզ և ապա տանում Թեհրան: Այնտեղ նա մնում է երկու տարի «բազում քաջութիւնս և յաղթութիւնս արարեալ՝ պատուեցաւ և և փառաւորեցաւ յոյժ ի նմանէ և ստացաւ անուն քաջութեան»: Ըստ Աբրահամ Աստապատեցու «Քեալպալա խանն էր իրաւասէր և արգարաղատ, խնամող Հայկազեանս ազգի, սիրող եկեղեցեաց և վանորէից, միանգամայն և քաջահմուտ և յաջողակ ի զինուորական իրողութիւնս և առիւծանման հօր ի պատերազմի, որ անձամբ անձին՝ մղեալ է զբազում պատերազմունս՝ յաղթական գտեալ յամենայնի օգնականութեամբ վերին զօրութեան»: Որպէս ապացույց նշվում է այն փաստը, թե «Քանզի ի թուականութեան մերում ՌՄԼԸ (1789) նախարարն Ահարայ, այն է Ղարաղալի Մուստաֆայ խանն՝ եկն բազում զօրօք ի վերայ Գողթան դաւառիս, և կողպտեալ՝ յաւարի էառ զամենայն ինչս մեծի առաքելական Աթոռոյս, և եկեալ Քեալպալի խանին՝ խորտակեաց զզօրութիւն նորս՝ մեծաւ քաջութեամբ և փախոյց զնա ամօթով յեսս»: Քալբալի խանին հաջողվում է պարտության մատնել նաև Շուշիի Իբրահիմ խանին, որը «ժողովեալ զինուականս, որք Լեկզի կոչին, եկն ի վերայ սորա ծանր զօրօք: Եւ սա ամբացաւ ի բերդն իւր ի Նախջուան: Եւ յետ քանի մի աւուրց օգնութիւն գտեալ ի յերևանայ և ի ինոյս, ել ի յամրոցէն և եհար հարաչար զզօրս նորս և ցանկցիր կացուցեալ՝ փախստական արար»:

Երևանը գրավելու համար ուղարկվել էր Ալիդուլի խանը 12 հազարանոց բանակով: Պարսկական կողմը օգտագործում է Քալբալի խանի միջնորդությունը, որ Երևանի խանի փեսան էր: Գալով Երևան, նա «միամտեցոյց զաներն իւր՝ երաշխաւոր զնելով զինքն վասն նորս առաջի Աղայ Մահմադ խանին և առեալ ընդ իւր՝ տարաւ առ նա: Չոր բազում սիրով ընկալեալ Աղայ Մահմադ խանին, մեծապէս պատուեաց, իբրև զազգական իւր, քանզի և իշխողն Երևանայ բուն ազգաւ պարսիկ էր, որոյ ցեղն յատուկ անուամբ Ղաջար կոչի...»: Աղա Մահմադ խանը մեծ պատիվներով ետ է ուղարկում Երևանի Մահմադ խանին՝ «կացուցեալ զնա մարդպան, այսինքն է պէկլարբակի»:

1795 թ. սեպտեմբերին Աղա Մահմադ խանը Թիֆլիսի գրավումից հետո վերադառնում է Մուղան, սակայն, այստեղ ևս երկար ժամանակ չի մնում և հեռանում է դեպի Խորասան, իսկ ինչի, Երևանի և Նախիջևանի խաներին հրամայում է հարձակվել Արցախի վրա և ավերել այն՝ որքան հնարա-

⁷⁷ Այդ մասին տե՛ս Վարդան Օձնեցու ընդարձակ հաղորդումները («Հայկական աղբյուրները Աղա Մահմադ խանի Անդրկովկասյան արշավանքների մասին», աշխատ. Ռ. Տ. Տրտանյանի, Եր., 1981, էջ 176-177):
⁷⁸ Ըստ Գևորգ Խուրբովի հաղորդման, Երևանի խանը իրեն ուղարկել էր Թիֆլիս՝ տեղեկանալու, թե ուսաներ օգնության կզա՞ն արդյոք և ճշտելու նաև Հերակլի դիրքորոշումը. «Ճանապարհահին [իմա՝ Թիֆլիսի – Պ. Չ.] ես միացա Նախիջևանի Քեալբալի խանի կողմից նույն նպատակով այնտեղ ուղարկված նախիջևանցի հայ Մալկար Մելիքովի հետ»: Նրանք բարեհաջող հասնում են Թիֆլիս, սակայն «այնտեղ հանդիպեցինք մեր հրազանի ու ցանկություն լրիվ հակառակը: Ուստի ես անմիջապես տեղեկացրի այդ մասին խանին, որպեսզի նա իմանա անհաջող դեպքանագնացության մասին, հնազանդվի շահական կամքին» (Описание достопамятных происшествий в Армении, случившихся в последняя тридцать лет, т. е. от патриаршества Симеонова (1779) до 1809 года", Сочинение князя Егора Хувова. СПб, 1811, с. 9-10):
⁷⁹ "Сборник материалов для описания местностей и племен Кавказа", вып. XXIX, Тифлис, 1901, с. 3-6. ուսու. թարգ.՝ էջ 7-10: «Բանասեր», հ. 5, Փարբից, 1903, թիվ 1, էջ 209-213: «Հայկական աղբյուրները Աղա Մահմադ խանի Անդրկովկասյան արշավանքների մասին», էջ 66-70:

վոր է: «որք և զնացեալ յաւուրս հնձոց, արարին ըստ սրտի նորա և զբազում գերիս և քրիստոնէից ածեալ վաճառեցին Օսմանցոց: Յաղազս որոյ ծանրացաւ սոյն ի վերայ աշխարհին Արցախու...»⁸⁰: Սոսի սասակութիւնից Արցախի բնակչութիւնը սկսեց արտագաղթել ու ցրվել դեպի Երևան, Գանձակ, Նախիջևան, Խոյ, Վան, Բայազետ և այլ վայրեր⁸¹:

Աղա Մահմադ խանի արշավանքին հաջորդեց 1796 թ. Ռուսաստանի կողմից Այսրկովկաս ուղարկված զինեակ Վ. Զուբովի հրամանատարութեամբ գործող բանակը, որի զբաղումները ընդգրկեցին Դերբենտ, Բաքու, Շամախի, Գանձակ տարածքները, նույն թվականի նոյեմբերին եկատերինա 2-րդի մահից հետո գահ բարձրացած Պավել Առաջին կայսրը հրամայեց դադարեցնել նվաճումները և բանակը ետ կանչեց Այսրկովկասից: Արդեփրութեամբ գտնվող Աղա Մահմադ խանը անակնկալ իր մոտ է կանչուած Նախիջևանի Քալբալի խանին և կուրացնել տալիս⁸², իսկ իր եղբորը՝ Ալիդուլի խանին, ուղարկուած է Երևան՝ որպէս սարգար (խան և սպարապետ), որը Երևան հասնելուն պես իրեն զիմավորելու զնացած Երևանի Մահմադ խանին ձերբակալուած և ուղարկուած է Թեհրան⁸³: Արդեփրոյ բեկի վկայութեամբ, ուստաց գորապետին նամակներով իրենց հնազանդութիւնն էին հայտնել ինչպէս Իբրահիմ խանը, այնպէս էլ Թալիշի Միր Մուսաֆա խանը և Նախիջևանի ու Ղարաբաղի կառավարիչները⁸⁴:

⁸⁰ «Կուսնի Հայոց աշխարհին», 1862, թիւ 4, էջ 287-288: «Հայկական աղբյուրները Աղա Մահմադ խանի Անդրկովկասյան արշավանքների մասին», էջ 103:

⁸¹ Նույն տեղում:
⁸² Ի. Շոպենը հետեյալ ձևով է ներկայացնում այդ փաստը. «Ռուսական զորքերի զեպի Դաղստան արշավանքի ժամանակ Երևանի Մուհամմադ խանը և Նախիջևանի Քալբալի խանը բանակցութիւններ են սկսում գնն. Զուբովի հետ Ռուսաստանի հպատակութիւն ընդունելու համար: Նրանց վարքագիծը չէր կարող ծածուկ մնալ շահի ուշադիր հայացքից, որը Երևանի խան նշանակելով իր եղբորը՝ Ալի-Կուլի խանին, հրամայում է Մուհամմեդին և Քալբալի խանին ձերբակալել և ուղեկցութեամբ հասցնել Թեհրան: Մուհամմեդ խանը իր նախնիների ծառայութիւնների զիմաց հարգվելով՝ հասցրեց Հայցել ներողամտութիւն: Բարկուժյան ողջ ծանրութիւնը ընկավ Քալբալի խանի վրա. նա զրկվեց տեսողութիւնից» (Исторический памятник состояния Армянской-области в эпоху ея присоединения к Российской-империи. Сочинение И. Шопена, СПб., 1852, с. 164):

⁸³ «Հայկական աղբյուրները Աղա Մահմադ խանի Անդրկովկասյան արշավանքների մասին», էջ 96:

⁸⁴ «Որպիսութիւնք խանացն Գանձակայ». ՄՄ, ձեռ. 4463, Հմմտ. «Հայկական աղբյուրները Աղա Մահմադ խանի Անդրկովկասյան արշավանքների մասին», էջ 169:

Աղա Մահմադ խանի Պարսկաստան հեռանալուց հետո Արցախի և Թիֆլիսի ավերումներին ի պատասխան Հերակլ Երկրորդն ու Իբրահիմ խանը ունենալով նաև լեզգիների 12 հազարանոց վարձու բանակը հարձակվում են Գանձակի Զավադ խանի վրա, պաշարում քաղաքը և հիւնորյա պաշարումից հետո զրավում այն: Գանձակի պաշարման լուրն առնելով Թեհրանում, Աղա Մահմադ խանը Երևանի ու Նախիջևանի խաներին հրամայում է օգնութեան հասնել Գանձակին և նրանք «գործողով երթան ի դաշտն Մուշկիսմաբար մերձ Ղարատաղ, լսեն զգարձ պաշարողաց և ինքեանք դառնան ի տեղիս իւրեանց: Առ այն սրտմտեալ Մահմադ շահ՝ կուչէ առ ինքն զՔալբալալի խանն Նախիջևանայ՝ պատուհասեալ կուրացուցանէ զերկու աչս նորա և զրկեալ յիշխանութենէ՝ արկանէ ի բանդ, որ զհնի սակաւուց փախչի յԵրևան՝ կալով անդ երկար ժամանակ ընդ խնամարկութեամբ Մահմադ խանին Երևանայ»⁸⁵:

Ռուսական զորքերի հեռանալուց հետո Աղա Մահմադ շահը 1797թ. կրկին արշավում է Արցախ և մտնում Շուշի, որտեղից Իբրահիմ խանը նախորդ արդեն փախել էր Դաղստան: Շուշիում Աղա Մահմադ շահը սպանվում է իր իսկ ծառաների կողմից, Պարսից զորքը հեռանում է Իրան, Երևանից հեռանում է նաև շահի եղբայր Ալիդուլի խանը: Մակուի սուլթանի որդի Հասան խանը, որ մինչ այդ գտնվում էր շահի մոտ և շահվիբիլի (շահի փոխանորդ) էր կարգված Երևանի վրա, եկավ և նույնպէս փորձեց մտնել բերդ: Ստանալով երևանցիների մերժումը, Հասան խանը գնաց Նախիջևան: Մինչ երևանցիները օգնութիւն կստանային Ղազախում գտնվող վրաց արքայազն Ալեքսանդրից, Հասան խանը Նախիջևանի գործով և այրումցիների հետ հարձակվեց Երևանի վրա⁸⁶: Երևանում գտնվող մուղանցիները փախան, իսկ քաղաքացիները ստիպված եղան զիմավորել Հասան խանին ու բերդը հանձնեցին նրան: Ղազախից Երևան ժամանած Հերակլի որդուն՝ Ալեքսանդրին, քաղաքացիները նվերներ տալով ետ վերագարձրին, որը այդ ընթացքում այցելել էր էջմիածին և 3 օր մնացել այնտեղ⁸⁷:

⁸⁵ Վարդան Օձնեցի. Նոր քաղաքական և եկեղեցական պատմութիւն Հայաստան աշխարհի Մեծի և Փոքու: Տե՛ս ՄՄ, ձեռ. 4331, Հմմտ. «Հայկական աղբյուրները Աղա Մահմադ խանի Անդրկովկասյան արշավանքների մասին», էջ 191-192:

⁸⁶ Վ. Ռ. Գրիգորյան, Երևանի խանութիւնը, Երևան, 1958, էջ 185:

⁸⁷ «Հայկական աղբյուրները Աղա Մահմադ խանի Անդրկովկասյան արշավանքների մասին», էջ 120:

Ազա Մահմադ շահի մահից հետո Իրանում գահը անցավ նրա եղբորորդուն՝ Բարա խանին (Յաթալի շահ): Նախիջևանում շարունակում էր կառավարիչ մնալ կուրացված Քեալբալի խանը:

1801 թ. հունվարին Պավել Առաջինը հրամանագրում է Վրաստանի միացումը Ռուսաստանին, իսկ 1804 թ. սկսվում է ռուս-պարսկական պատերազմը: Վրաստան ուղարկված գեն. Պ. Յիցիանովին հրահանգված էր նվաճել Այսրկովկասը ամբողջությամբ: Ռուսական բանակը շուտով գրավում է Գանձակը, Արցախը, Շամախին, Շաքին և Բաքուն: Դեպի Երևան կատարած արշավանքը Ռուսական բանակի համար ավարտվում է անհաջողությամբ և Ռուսական զորքը նահանջում է Վրաստան: Նախիջևանի խանը գտնվում էր երկրնորանքի առջև. նա Յիցիանովի մոտ է ուղարկում երնջակ գավառի մելիք Մարգար Խոջա-Միրիջանյանին: Վերջինս Ալեքսանդր Առաջին կայսրին Թիֆլիսից 1806 թ. սեպտեմբերին գրած նամակում հայտնում է, որ ինքը, ցանկանալով ազատագրվել պարսիկների դաժան տիրապետությունից և ընդունել ռուսական հպատակություն, Յիցիանովին է ներկայացել և իր հետ բերել նաև Նախիջևանի կուրացված Քեալբալի խանի նամակը: Վերջինս, զգալով Ռուսական բանակի ուժը, Մարգար Խոջա-Միրիջանյանի խորհրդով որոշել էր մտնել Ռուսաստանի հովանավորության ներքո: Յիցիանովը, սակայն, Քեալբալի խանին պատասխանելու փոխարեն, բանտարկել է աալիս մելիք Մարգար Խոջա-Միրիջանյանին և ճանապարհով Նիզամիստուլ ու այնուհետև՝ Բաքու, որտեղ և կնքում է իր մահկանացուն: Մելիքը բանտում մնացել է 18 ամիս, իսկ նրա ունեցվածքը կողոպտվել է իր բացազայություն ժամանակ: Մելիքը հայտնում է, թե բանտից ազատվելով, այժմ ինքը վերադառնում է Նախիջևան, որտեղից եկել էր և խնդրում է կայսեր ողորմածությունը իր նկատմամբ⁸⁸:

ժժ. դարի առաջին քառորդին Նախիջևանի խանությունը անմիջականորեն ենթարկվում էր Ատրպատականի կառավարիչ, գահաժառանգ Աբաս-Միրզային: Նախիջևանի խանությունը բաժանված էր հետևյալ մահալաների. Երնջակի, Նախիջևանի, Մավազիխաթունի, Խոքի և Դարպալազայի: Օրդուբադի գավառը ևս բաժանված էր մահալաների՝ Ագուլիս, Դասթին, Բելևի,

⁸⁸ "Кавказская старина". ежемесячный журнал исторический, археологический, этнографический и вилюнографический. Год I, № 2, под ред. А. Л. Ерицова, Тифлис, 1872, с. 39.

Չանանափ⁸⁹: Մահալաների կառավարիչներն էին միրրուլուքները կամ նախըները, որոնց նշանակում էր սարդարը կամ խանը: Նախըները հետևում էին իրենց տնօրինությունը հանձնված մահալաներում տուրքերի գանձման գործին, լուծում ծագած վեճերը և ի կատար ածում դատաստանական վճիռներն ու որոշումները:

* * *

1730-ական թթ. կեսերից Արցախում առաջնությունն անցել էր Դիզակի Տոդ ավանտաճ հանգրվանած Մելիք Եգանին, որը 1735 թ. ստանում է Արցախի հայկական մելիքությունների՝ «Քրիստոնյա ազգի 6 մահալաների՝ Թալիշի, Չարարերդի, Խաչենի, Վարանդայի, Քոչիզի և Դիզակի» ընդհանուր կառավարչի (խան-բեկլարբեկի) տիտղոս⁹⁰: Նաղիր շահի կառավարման շրջանում զգալի արտոնություններ ձեռք բերած Արցախի մելիքությունները, սակայն, չկարողացան ընդարձակել իրենց տիրապետությունները, պահպանել զեթ իրենց ինքնուրույնությունը և կամ վճռականորեն դիմագրավել մահմեդական ընդհանրության ներհոսքին: Բուն հայրենիքում հայերը թեև ոչ միանոս, սակայն շարունակում էին բարձր տոկոս կազմել: Նրանց դիրքորոշումը որոշակի ազդեցություն էր թողնում Հայաստանում տեղի ունեցող քաղաքական իրադարձությունների ընթացքի վրա⁹¹:

⁸⁹ Исторический памятник состояния Армянской-области в эпоху ея присоединения к Российской-империи. Сочинение И. Шопена, СПб, 1852, с. 318-338, 446-447. Հայ ժողովրդի պատմություն, հ. V, եր., 1974, էջ 15:

⁹⁰ Հ. Փափազյան, Մելիք Եգանի ընդունարանի մուտքի արձանագրությունը. «Լրագրի մաս. գիտ.», 1985, թիվ 5, էջ 76-77:

⁹¹ 1700 թ. մարտի 28ին Կ.Պոլսի Զաքարիա պատրիարքին ու Հարություն ամիրային գրած նամակով Ղուկաս կաթողիկոսը հայտարարում էր, թե «Վանայ թաժուր փաշայն վախճանեալ է և երկրացիքն համակամութեամբ զգոյվէթլու Ահմադ փաշայն յաջորդեցուցեալ են նմա և մահարական արց են գրեալ այդր ի դուռն արքունի՝ խնդրելով զփաշայութիւնն վասն նորա, որ յառաջ ևս երբեմն փաշայութիւն արքեալ է անդ, և որպէս բազմիցս լուեալ եմք ի մերայնոց, է այր հանգարտաբարոյ, իբաւարար և խաղաղասէր, մանաւանդ և ինամածու առ ազգ մեր և եկեղեցիս և վանորայսն, որք յայնմ երկրի: Ուստի և մեք զայս սիրանիշ թուղթ գրեալ առ սիրելութիւն ձեր, խնդրեմք, զի և դուք որքան ի դէպն իցէ, օգնեալիք յայդր բանի նորին, որպեսզի իշխանութիւնն փաշայութեան ի վան առ իզեթլու Ահմէտ փաշայն գայցէ: Յայս գրելս մեր ոչ այլ ինչ է, եթէ ոչ առ օրուս մերացեալսն, որք անդ և առ անդորրութիւնն և պայծառութիւն վանորէից և եկեղեցեացն մերոց...» (ՄՄ, ձեռ. 4501, էջ 1442: Տե՛ս նաև Դիվան հայոց պատմութեան, նոր շարք, դիրք Առաջին, հ. Բ, Աշխատ. Վ. Գրիգորյանի, եր., 2003, էջ 527):

Փանահը նահանջում է և դիրքավորվում լեռնային հատվածում: Հետագայ-
դելով նրան, Հերակլի զորամասը սաստիկ պարտություն է մատնում Փանա-
հին, որը նահանջում է դեպի Ղարաղալ: Վրացիները այնքան թշնամու
զինվոր էին կոտորել և գերլի վերցրել, որ Պ. Օրբելիանին գնահատեմք,
վրաց թագավորները կողմից Իրանում երբեք այսպիսի հաղթանակ չէր ե-
ղել: Վրաց բանակը հասավ «Աղնախի վերջին» թուղ⁹⁸ ամրոցին, որտեղ Փա-
նահը թողել էր զինարանը... եկավ թուղի մելիքը, որ մեծ զորքով գտնվում
էր Փանահ խանի մոտ, խնդրեց իր հանցանքի ներումն և հանձն առավ ծա-
ռայել արքաներին:... Ներեցին նրա սխալը, հրամայեցին սղնախցիներին
տալ զորքի վեց օրվա պարեն և պատրաստվեցին դեպի Բարգուշատ և Փա-
նահ խանի փախած ցեղերի դեմ»⁹⁹: Վրաց բանակը շարժվում է դեպի Բար-
գուշատ և "Սոգավունի" կամրջի մոտ նկատում Փանահ խանին՝ փոքրաքա-
նակ մարզկանցով: Տեղեկանալով վրաց զորքի ժամանելու մասին, Փանահը
թողնում է քոչվորներին և փախչում Արաքսից հարավ¹⁰⁰: Բարգուշատից
վրացական բանակը մեծաքանակ ավարով ու գերիներով վերադառնում է
Տոզ, իսկ այնուհետև՝ Գանձակ¹⁰¹:

Օգտվելով վրացական բանակի հեռանալուց, Փանահին հաջողվում է
կրկին մուտք գործել Արցախ:

⁹⁸ Ըստ Լ. Մելիքսեթ-Բեկի, «գուցե այստեղ "թալիշի" կամ "թալի" մասին լինի
խոսքը» (Լ. Մ. Մելիքսեթ-Բեկ, Վրաց պոլոսները, Գ, էջ 147): Այդ նույնացումը
չի կարող ճիշտ համարվել, որովհետև վրացական բանակը շարժվում էր
Հյուսիսից հարավ, իսկ թալիշը չէր կարող Արցախի վերջ կամ ծայր գիտվել:
Ճիշտ է նույնացրել Բրոսսե. "un lieu nommé Toug, un peu S.-E. de Choucha"
(M. Brosset, Hist. de la Géorgie, II, p. 151, n. 1):

⁹⁹ ձոչոցն օտձոցլոսնո. ամձոցն յօտոցլոսնո, ՅՅ. 169-170. 1. Մ. Մելիքսեթ-Բեկ,
Վրաց պոլոսները Հայաստանի և Հայերի մասին, Գ, էջ 132:

¹⁰⁰ Հասնելով Բարգուշատ, վրացական բանակը չնայելով խանի հայտնած հնա-
զանդությունը, Հերակլի հրամանով ավերում և կողոպտում է երկիրը: «այնքան
ավար հավաքվեց, որ այն պահել ոչ ոք ի վիճակի չէր»:

¹⁰¹ Վերորենյալ իրադարձությունները 1750թ. մայիսի 13-ին այսպես է ամփոփված
Ռուսաստան ուղարկված հաղորդագրություններից մեկի մեջ. "В бытность мою в
Дербенте слышал, что ширванской Пена-хан взял Генжу, а к нему, Пена-хану,
пришле с войсками грузинской Ирекли-хан и ево, Пена-хана, выгнал из Генжи и
вступил в Генжу, и войска две тысячи порубил, четырнадцать тысяч в плен взял с
разным скотом, которого и изчисления не можно. Аревань, Нахичувань и Каравах
к нему, Ирекли-хану, пришли в подданство, також и теверизские жители по тому ж
пришли". (Армяно-руссские отношения во втором тридцатилетии XVIII века, Сб.
док., том III, с. 245):

Փանահը և մելիք Շահնազարը Շոշ գյուղի բնակիչները մի մասին Շու-
շի բերդաքաղաք տեղափոխելուց հետո¹⁰², ստիպված էին Շուշիի համար
մշտական բնակիչներ որոնել նաև Արցախի սահմաններից դուրս: Օգտվե-
լով Նախիջևանում ստեղծված իրավիճակից, նրանք 1750 թ. Շահկերտ
(Ղազանչի) գյուղի հայ բնակչություն մի մասին, որ ապաստանել էր Կա-
պանում, փոխադրեցին Շուշի: 1752 թ. Շուշիում բնակություն հաստատեց
նաև Ագուլիսի հայերի մի մասը, որ խույս տալով Ազատ խանի արշավան-
քից, թողել էր Ագուլիսը¹⁰³: Շուշի փոխադրվեց այնուհետև Մեղրիի բնակ-
չություն մի մասը, որով և Շուշիում հիմնադրվեցին Ղազանչեցոց, Ագուլի-
ցոց և Մեղրեցոց թաղամասերը: 1750-ական թթ. սկզբին Փանահի կողմից
Ղարաբաղի խանություն ստեղծման հայտարարումը թշնամանքով ընդուն-
վեց ոչ միայն հայ մելիքների, այլև շրջակա մահմեդական խանություննե-
րի կողմից: Ըստ Աղիզյոզալ բեկի վկայության՝ «ժողովուրդ Օթուզիքի և
Ջիվանշիր գաւառականացն, որոց սիրտ հարեալ կայր գնախանձու և թշնա-
մուլեան, միշտ ջանային կարճել զայս իշխանութիւն, ուստի և զիմասայ
մէլիքան ևս ընկեր ինքեանց արարեալ առ Հաջի Չալապին, որ ի նմին ժա-
մանակի բոլոր Շիրուանայ տիրէր, գրելով զինզիրս յայտնեցին նմին»¹⁰⁴:
Փանահ խանի դեմ հայ մելիքների պայքարի մասին ուղղակի վկայություն
է թողել ռուսական ծառայության մեջ գտնվող հայազգի Օթմար թումանո-
վը՝ վրացերենով ներկայացրած 1754 թ. դեկտեմբերի 1-ին գրած իր զեկու-
ցագրում. «Հայերը (իմա՝ հայկական զորքը - Պ. Զ.) ամրացված գտնվում են
Կուլիստանի բերդում: Գլխավոր անձերն են Մելիք Հովսեփը և Մելիք Ա-
թամը, սրանք ունեն հազար Հինգ հարյուրի չափ մարդ: Այս հայերի վրա
հարձակվել է Փանահ խանը, հայերը հաղթել են, սպանել են Փանահ խանի
մարզկանցից երեք հարյուրի չափ: Այս կոիվը տեղի է ունեցել 1754-ի օ-
գոստոսի քսանվեցին»¹⁰⁵. 1755 թ. նոյեմբերի 20-ին գրած զեկուցագրում Օ-

¹⁰² Ընթացի, նշվ. աշխ., էջ 454:
¹⁰³ Մ. Պետրոսյանի հաղորդումով, Ագուլիսում Ազատ խան Աֆչարի կողմից «սպան-
վեցին երկու հազար» քրիստոնյաներ, իսկ հազար Հինգ հարյուրը գերեզարվե-
ցին: Տես Մ. Զուլալյան, Հայ ժողովրդի XIII-XVIII դարերի պատմության հարցերը
ըստ եվրոպացի հեղինակների, գիրք Ա, Քաղաքական պատմություն, եր., 1990,
էջ 327: Հմմտ. Մ. Զամչյան, նշվ. աշխ. էջ 848-854: Լեռ, նշվ. աշխ., էջ 234-236:
¹⁰⁴ ՄՄ, ձեռ. 4463, թ. 4-5: Հմմտ. Միրզա-Ալիքզալե-Բեկ, Карабаг-наме, Баку, 1950,
с. 53-54.
¹⁰⁵ "Սոմեթքո ռմյոլոթքոն և իճնաճաճ յլլոցլոսնոն ցոնեթմ. տաջո յոցո
թլլոցլո յլլաջ ճա թլլոցլո յոսմ յլլոցն, անտ անտ և յլլոցնաճնոն յոցո յլլոց
լլոցն. ան իոմեթքն իոնեոմոն օնանան, իոմեթքն ցամաթլլոցն, իլլոցլոցն

խակ և խակ զողայր առաջի նորա»¹¹⁷: Այդ հանգամանքը հավանաբար վճռական դեր է ունեցել նրա իշխանությունից հրաժարման համար և պատահական է, որ Շուշիում հայկական սովարարների թաղամասերի գոյությունը պայմաններում, այնտեղ ժԸ. դարի երկրորդ կեսին հայկական քարաշեն եկեղեցու կառուցման մասին վկայությունն չունենք¹¹⁸: Նշված թվականներին է վերաբերում¹¹⁹ Հայոց ազատագրական շարժման նշանավոր գործիչ Հովսեփ Էմինի այցելությունը Շուշի: Կարելի է ենթադրել, թե Հովսեփ Էմինի տպավորությունն է փոխանցվել «Նոր տետրակ»¹²⁰, որտեղ ասվում է, թե «...Ոչ քաջութեամբ ինչ և կամ բռնաբար բնա մտին Պարսիկք ի սահմանս նոցա (Արցախի), այլ հրապուրեալ պատրանքոք նոցին բնիկ խորամանկութեան, իբր օգնականութեան աղապառ մուծին զիշխան Պարսից յաշխարհս իւրեանց և յորմէ յտէ մինչև ցայսօր տիրէ նոցա: Բայց ոչ այնպէս, որպէս են ոմանք ուրեք ուրեք յազգէ մերմէ յիսպառ ծառայութեան, այլ տակաւին գոյ յոյս փրկութեան: Բանգի թեև տիրեալ է նոցա, այլ սակայն թաքցնոցա ոչ կարէ առնել զիր ինչ, զի ամենայն գործակալութիւն ի ձեռս ազգին մերոյ է և զոր ինչ կամի՝ առնէ նոքօք: Զի թէ հարկք կամ մաքս՝ հանէ ի նոցունց, պահպանի նոքօք և տայ պատերազմ ընդ թշնամեաց նոքօք, առնէ և յաղթութիւնս նոքօք և այլ ամենայն առնէ նոքօք, մինչ զի և հանապազօրդական պահակքն կամ պահպանիչք ապարանիցն և սենեկացն իւրոց են Հայք և զի ըստ մեծի մասին մարտիկք զօրքն իւր՝ յազգէ Հայոց ելանեն: Ուստի ոչ է դժուար, այլ զիւրին է յոյժ, զի եթէ յիշատակեալ իշխանքն այնոքիկ (իմա՝ մելիքները - Պ. Չ.) կամիցին բառնալ ի միջոյ զիշխան պարսիկ, կամ հերքել և հալածել ի սահմանաց իւրեանց և լինիլ ազատ ի հարկաց, որպէս զոյն ինչ ամանակա յառաջ քան զինքեանս էին նախնիքն իւրեանց ունելով զպատուութիւն ըստ ամենայնի ընդարձակութիւն ամենուստ: Ասացաք թեև այս զիւրին կարէ լինիլ նոցա, բայց մինչ ոչ միաբանեցին ասա-

¹¹⁷ ՄՄ, ձեռ. 7823, թ. 102ա:
¹¹⁸ Շուշիում հայկական եկեղեցիների կառուցումը լայն թափ է ստացել ժԹ. դ. առաջին կեսին՝ Իրրահիմ խանի սպանությունից և ուստական տիրապետության հաստատումից հետո:
¹¹⁹ Հ. Էմինը Շուշիում եղել է 1767թ. աշնանը, այցելել Խաչենի մելիք Միրզախանի և Դիզակի մելիք Եսայու պալատները: Շուշիում իր պալատն ուներ նաև մելիք Շահնազարը (A. P. Ноаиниця. Носиѳ Эмин, с. 222).
¹²⁰ Աս. Մնացականյանը առաջադրել էր վարկած, ըստ որի «Նոր տետրակ...» գրքի հեղինակ կարող էր լինել Հակոբ Շահմիրյանը և ոչ Մովսես Բաղրամյանը: Տե՛ս Ա. Ծ. Մնացականյան, Ո՛վ է «Նոր տետրակ, որ կոչի յորդորակ...» գրքի հեղինակը, - ՊԲՀ, 1962, թիվ 2, էջ 131-142:

ցեալ իշխանքն մեր՝ սիրով և միախոհ համակամութեամբ՝ ոչ զիւրանայ (ընդժ. մերն է - Պ. Չ.)»¹²¹:

Ուշադրով է, որ նույնպիսի հետևություն է արձանագրել նաև Հերակլ 2-րդը 1769 թ. ուսուական արքունիք ուղարկած «Վրաստանի շրջակա իշխանությունների նկարագրության» մեջ: Նրա վկայությամբ, Խամսայի կենտրոնում է գտնվում «վաղնջական ամրոց, որը նրա (իմա՝ Փանահ խանի - Պ. Չ.) կողմից խաբեություն է գրավվել ... իսկ քանի որ նշված յոթ իշխանությունները միմյանց միջև անհամերաշխ են, ուստի նրանց այդ անհամերաշխության արդյունքում են ջեփանջիրները [նրանց] իրենց լծի տակ գցել»¹²²: Հերակլ 2-րդի տեղեկությամբ Իբրահիմ խանը կարող էր պատերազմի դաշտ հանել 2500 զինվոր, իսկ հայ մելիքները՝ 4500¹²³:

Նկատառելի է այն հանգամանքը, որ Արցախ նշանակելու համար Հերակլը օգտագործում է Խամսա անվանումը՝ Նադիրի ժամանակ ընդունված պաշտոնական անվանումով, որի ներքո բնկալվում էին Արցախի հինգ մելիքությունները, սակայն նշում է հայկական յոթ իշխանություններ, որոնք

¹²¹ Նոր Տետրակ, որ կոչի Յորդորակ: Շարադրեցեալ սակս սթափելոյ երիտասարդացն և մանկանցն Հայկազանց... Աշխատութեամբ Մովսիսի Բաղրամյան, Մադրաս, 1772, էջ 119-120: Հմմտ. «Նոր տետրակ, որ կոչվում է Նորդորակ», Թարգմանությունը գրաբար բնագրից և ծանոթագրությունները Պ. Մ. Խաչատրյանի, Եր., 1991, էջ 103-104: «Նոր տետրակը» չի պատասխանում այն հարցին, թե ինչու՞ արցախահայերը, որոնք դրա հնարավորությունն ունեն, «չեն կամենում» տապալել պարսիկ իշխողին, քանզի նրան իրենք են ներս բերել Արցախ, սակայն չըջանցվում և անպատասխան է մնում նաև այն, թե ինչու՞ մնացած մելիքներին ևս, այնուամենայնիվ, չի հաջողվում դուրս բերել նրան: Արցախի իրադրությունը մասին Թուսաստան ուղարկված տեղեկատվություններում անգամ Արցախում իշխող հինգ մելիքները հաճախ ներկայացվում են որպես միական ու համախումբ միասնություն, որը կարող է պատերազմի դաշտ հանել 5000-անոց բանակ այն դեպքում, երբ նրանց հակառակորդ խանը ունի ստավիլազույնը 3000-անոց բանակ հանելու հնարավորություն, որոնց մի մասը ևս Հայազգի զինվորներն են: Արցախի Վարանդա գավառի մելիք Ջիմեջիդը Պապե Ի-նի ուղղված խղճազարում, դժգոհելով Իբրահիմ խանի կողմից Հայոց մելիքների դեմ հարուցված Հայաստանից զրուս է. «...մեք թեպետ թագմիցս ապրեցուցեալ էաք զանձն անրս ի ձեռս թշնամեաց, բայց կասկածն ոչ կլանէր ի սրտէ նորա...» (Դիւան Հայոց պատմութեան, գիրք Թ, Թիֆլիս, 1911, էջ 399):

¹²² Грамоты и другие исторические документы XVIII столетия, относящиеся к Грузии. Т. I, под ред. А. А. Цагарели, СПб, 1891, с. 434-435. յաջողածն ձեռնարկ, ձեռնարկ XVIII եռյուշյեօս ձեռքը հեռյեցրօս Երևեցո-Ենթարտեղլոս յրօտեղրօտօձօս օնճրօտօսեղլոս, հե՛ղլոց III, հեռյեցրօտ I, օձ., 1988, թջ. 364. Армьяно-русские отношения..., IV, с. 94-95.

¹²³ Նույն տեղում: Ըստ Ս. Բուրնաշևի, 1786 թ. Շուշիի խանի տիրությունը կա- լին 7.000 ծուխ բրիտանյաներ: (Տե՛ս С. Бурнашев. Описание областей Адри- жанских в Персии и их политического состояния. Курск, 1793, с. 15).

Չնայած հայկական մելիքությունները 1760-ական թվականների կեսերից խոր ճգնաժամի մեջ էին և անջատ-անջատ այլևս ղեկավարանում էին դիմադրավիլ խանի հարձակմանը, սակայն նրանք բնավ չէին հաշտվել ինքնուրույնություն կորստի հետ և երազում էին առաջիկայում բարենպաստ պայմանների դեպքում կրկին պայքարի դիմելով վերականգնել իրենց անկախությունը¹³²:

ԺԸ. դարի 70-80-ական թթ, Շուշին գարձել էր այն հենակետը, որտեղ պատասխարված էրբա՛հիմ խանը բոլոր միջոցներով փորձում էր կախման մեջ զցցել նաև Գանձակի, Նախիջևանի և շրջակա այլ խանություններին: Իբրբահիմի համար բնական դաշնակից էր Օսմանյան կայսրությունը և նա ինտենսիվ նամակագրական ու սուրհանդակային կապ էր պահպանում ինչպես Ախալցխայի, այնպես էլ ուղղակի Օսմանյան արքունիքի հետ: Այդ կապերն ափսիհի հաճախակի դարձան 1783 թ. Գեորգիեյան դաշնագրից հետո: Հերակլ 2-րդի խորհրդով Իբրահիմը թեև քաղցրալիզու նամակ էր ուղարկել Գետաբուրգ, որը սրտակի ազդեցություն ունեցավ ռուսական կառավարող շրջանների տրամադրվածություն վրա և անդամ արժանացավ Եկատերինա 2-րդի հատուկ ուշադրությունը, սակայն, ինչպես արդեն նկատված է, «Նրա ձգտումը չէր կարող լինել անկեղծ, քանզի խանը գիտեր անկախ Հայաստանի վերականգնման դեպքում իրեն սպասող ճակատագրերին»¹³³: Եւ իրոք Գ. Պոսոմկիինի 1783 թ. ապրիլի 6-ի հրահանգով, որ նա առաքել էր Պ. Ա. Պոսոմկիինին, կարգադրվում էր. «տապալել Իբրահիմ խանին...որից հետո Ղարաբաղը կկազմավորի, բացի Ռուսաստանից, ոչ ոքից

չենի մելիք Մնացականի 1744 թ. (10.VIII-8.IX) տրված պարսկերեն շնորհագիրը: Ռուսերեն թարգմանությունը. "На основании царского милосердия относительно привержица величия и высокого качества мелика [Мина]цакана местостей Курак-Басана Ганджийского округа от начала шести [осташихся] месяцев текущего года, года мыши, [мы] соизволили определить упомянутому жалование в количестве ста надирн. Каждый год вышеназванную сумму пусть он получает от амылов указанной области и расходует на свои нужды. Вследствии совершенного усердия пусть он занимается на вышеупомянутом поприще, пусть старается в деле благоустройства вышеназванного места и собирания [рассеянных] крестьян..." (Тбилисская коллекция персидских фирманов, т. II. Тб., 1989, с. 67): 1745 թ. պահպանված մելիք Մնացականի մի կալվածագրից պարզվում է նաև նրա հայրանունը. "Покупает лично для себя мелик [Мина]цакан из общества Чайкенди, сын Саркиса Чайкенди" (Նույն տեղում, էջ 68-69):

¹³² А. Р. Ноантсия. Носиф Эмин. Ер., 1945, с. 215-216.

¹³³ О. П. Маркова. Россия, Закавказье и международные отношения в XVIII веке. М., 1966, с. 182:

կախյալ հայկական մարզ»¹³⁴: Նույն թվականի մայիսի 19-ին Գ. Ա. Պոսոմկիինը դրում է թագուհուն¹³⁵, թե «Դեռևս չունենալով Ձեր Կայսերական Մեծություն կարգադրությունը, ես հաղորդել եմ զեն-պոր. Պոսոմկիինին Շուշիի Իբրահիմ խանի վերաբերյալ վճիռ, որը կմոտեցնի նրան հնազանդություն: Այստեղ ենթակա է քննարկման, որպեսզի հարմար պահին նրա մարզը, որը բաղկացած է հայկական բնակչությունից, հանձնել ազգային կառավարմանը և այդ միջոցով վերականգնել Ասիայում քրիստոնյա պետություն՝ համաձայն Ձեր Կայսերական Մեծության խոստումների, որ տրվել են իմ միջոցով Հայ մելիքներին»:

Օսմանյան թուրքիան եռանդուն զորձուներություն է ծավալում թույլ չտալու Ռուսաստանի ազդեցության տարածումը Այսրկովկասյան խանություններում: Այդ նպատակով Այսրկովկաս առաքված թուրքական ներկայացուցիչները դրամ և նվերներ են բաժանում խաներին և վերադառնում իրենց «շտար-բնակարանը դարձած»¹³⁶ Շուշի: 1784 թ. հունվարին Իբրահիմ խանը Շուշի է հրավիրում Խունձախի և Տարկի տիրակալների որդիներին և Հյուսիսային Կովկասի այլ տիրակալների՝ իրենց 8 հազարանոց զորաձևակառով: Դժվար չէ կոտակել Արցախի հայկական բնակավայրերի վիճակը այդ զորքերի ներկայություն պայմաններում:

1787 թ., երբ առավել լարված էին ռուս-թուրքական հարաբերությունները, իրավիճակը սրվեց նաև Այսրկովկասում: 1787թ. հունիսին Հերակլ 2-րդի ձեռքն ընկավ Իբրահիմ խանի նամակը՝ ուղղված թուրքական սուլթանին, որտեղ Իբրահիմը օգնություն էր խնդրում՝ զիմադրավիլու ռուսական առաջխաղացմանը. «Օրինական մեր Տեր, եթե հաճո է Ձեզ արժանացնել նվաստագույն ծառային անհամար շնորհներ, ապա Ձեր այլ ծառաներից առաջ հանձնարարի ինձ ջանալու մեր հավատի օգտի համար, հանուն որի ես կյանքս չեմ խնայի, և եթե մե՞ն աիրակալից Հավաստիացում ստանամ, ապա ես ունեմ դեռևս բավականաչափ ուժեր ջարդելու մեր Հավատի չաբխոսների քթերը: Ամենաողորմած տիրակալ, հրամայող ժամանակների ժամերի, ապաստեմ եմ օգնության, և եթե մեզ օժանդակեք, ապա մեր հավատի թշնամիներին գլխիվայր կընենք»¹³⁷:

¹³⁴ Նույն տեղում, էջ 183: Армяно-русские отношения..., IV, с.239.

¹³⁵ Նույն տեղում: Армяно-русские отношения..., IV, с.241.

¹³⁶ Նույն տեղում, էջ 204:

¹³⁷ Նույն տեղում, էջ 228: "Исторический вестник", № 23-24, Тбилиси, 1970, с. 140. Армяно-русские отношения..., IV, с. 353.

Ռուսաստանը նախընտրեց Վրաստանից դուրս հանել իր փոքրիկ դոմանար (1787 թ. սեպտեմբեր)՝ Թուրքիայի հետ պատերազմական երկրորդ ճակատ ստեղծելուց խուսափելու համար:

Արցախի դիրքորոշումը էական նշանակություն է ստանում Այսրեկովկասի վրա պարսկական արշավանքների ժամանակ: Իրանին ենթարկվելու Աղա Մուհամմադ խանի հորդորներին ու պահանջին չհենթարկվելու համար Սուլեյման շահգադան 1793 թ. ամռանը հրաման է ստանում Իբրահիմ խանին ուժով պարտադրելու ընդունել պարսից հպատակություն: Հակոբ Շուշեցու վկայությամբ, պարսից տիրապետության վերականգնման վտանգն այնքան էր անհանդուրժելի, որ հայկական «զորքն ու բնակիչք զաւառին առհասարակ կամակիցք եղեն Իբրահիմ խանին»¹³⁸: Արցախի բնակչությունը ամրանում է հիմնականում Սաշենում, Ջրաբերդում, Ասկերանի ամրոցում, իսկ նրանք, որոնք չունենին անասուն, փախչում և ապաստանում են Շուշիում¹³⁹: Սուլեյման Շահգադանի 6000-անոց զորքը շրջապատում է Շուշին և երեք օր ու զիշեր ոմբակոծում բերդը, սակայն «քաղաքին վնաս ոչինչ եղև»¹⁴⁰: Արշավանքի ձախողման մեջ էական դեր են կատարում Ասկերանի բերդում գտնվող զորքերը, որոնք Հասան-Բեկի զլխավորությամբ դիշերով հարձակվում են պարսկական քնած բանակի վրա և «չարաչար սատակեցին զբազումս ի նոցանէ: Եւ նոքա ընդոստացեալ ի քնոյ, աճապարեալ այսր և անդր ի խավար գիշերի, ոմն՝ զկնի սուսեր, մինչև եկեալ զօրքն Հասան-Բեկին և քաջքն շուշեցիք խառնեցան ընդ զօրս նոցա, շփոթեցին զնոսա և փութով ելին և փախան... Իսկ նոքա խելագարեալ առին զսուսերս և կոտորէին զմիմեանս ի մթին գիշերի՝ թշնամի կարծելով զիրևարս: Եւ այսպէս, հարկանէին զմիմեանս մինչև ծագել լուսոյ առաւօտուն և տեսին զմիմեանս, զի չիք թշնամի ի միջէ, այլ զիրեարս հարկանէին»¹⁴¹:

Այս ճակատամարտում կրած պարտությունից հետո Սուլեյման Շահգադան ստիպված էր, Հակոբ Շուշեցու վկայությամբ, խորհել հեռանալու մասին. «Զի՞նչ արացուք, երկնչիմ՝ մի գուցե ամենայն զօրութիամբ դիմեցնեն առ հասարակ ի վերայ մեր և սրոյ ճարակ տայցն զմեզ: Վասն զի սոքա ամենեքեան քրիստոնեայք և թուրք, այր և կին, մեծ և փոքր միաբա-

¹³⁸ Տե՛ս Ռ. Տ. Տիտանյան. *Նորահայտ նյութեր Շուշիբերդի պաշտպանության մասին*. - «Լրագրեր հաս. գիտ.», 1966, թիվ 9, էջ 35:

¹³⁹ *Նույն տեղում*:

¹⁴⁰ *Նույն տեղում*, էջ 36:

¹⁴¹ *Նույն տեղում*, էջ 37:

նեալ և յապտումբել ընդդէմ թագաւորին մերոյ, և մեք ըստ չափու զօրաց սոցա չունիմք աստ զօրս...ազդ արասցուք շահին՝ թող ինքն հոգացէ»¹⁴²:

1795 թ. ամռանը, ինչպես հայտնի է, Աղա Մահմադ խանը մոտ 80 հազարանոց բանակով շարժվում է Այսրեկովկաս: Իր զորքը երեք մասի բաժանելով, նա, մեկ մասը իր եղբոր՝ Ալիդուլի խանի զլխավորությամբ ճանապարհում է Երևան, մյուսը՝ դեպի Թալիշ, Շամախի և Շաքի, իսկ երրորդ մասը իր զլխավորությամբ շարժվում է դեպի Շուշի: Շուշին պաշտպանելու համար այնտեղ հավաքվեցին ինչպես շրջակա վայրերի բնակչությունը, այնպես էլ ընդհանուր թշնամու դեմ պայքարում միմյանց հետ համագործակցելու պատրաստակամություն զբևեռած Իբրահիմ խանի, Մելիք Զումշուղի ու Միլիք Աբովի զորաջոկատները: Երջապատելով Շուշին, Աղա Մահմադ խանը պատվիրակ է ուղարկում Իբրահիմ խանի մոտ և հանձնարարում ասել՝ «Ես ոչ մարտեաց ընդ քաղաքացիդ մինչև ի սովու զմիմեանս կերթիք և յայնժամ ինքնակամ կամօք աղահաջիք անձնատուր լինել ինձ»¹⁴³:

Շուշիի շրջակա գյուղերի մոտ 12 հազ. ծուխ հայ բնակչություն ապաստանում է անմտչելի կիրճերում և հաճախակի հարձակումներ զործում պարսկական բանակի վրա: Բերդի մեջ կազմվել էր մի խումբ, որը գիշերային անակնկալ հարձակումներով մեծ վնասներ էր պատճառում թշնամուն: Ի վերջո թշնամուն հաջողվում է բռնել խմբի մի մասին, իսկ մյուսները վերադառնում են բերդ¹⁴⁴:

Շուշիի պաշարումը տևեց 33 օր: Ի վերջո, Աղա- Մահմադ խանը «խրրե ետես, եթէ պաշարումն քաղաքին երկարի յոժ և դժուարին է առնուլն», ստիպված էր թողնել պաշարումը և շարժվել դեպի Թիֆլիս: Այդ մասին նա անմիջապես տեղեկացրեց իր եղբորը. «Հայտնի լինի քեզ, որ թեև Շուշու երկրի բնակիչները՝ Ղարաբաղցիները, այժմ թուլացած են, բայց ես դեռ չհրամայեցի վերցնել Շուշին, որովհետև մտադիր եմ այստեղ ձեռնել, իսկ մինչ այդ՝ թողնելով այստեղ Սուլեյման խանին, ուզում եմ 20 հազար զորքով գնալ Վրաստան և հրամայում եմ քեզ, թողնելով Երևանի մոտ 4000 զորք, պատրաստ լինել մնացած զորքի հետ ինձ մոտ գալու և սպասել այս մասին իմ հրամանին...»¹⁴⁵: Ուշագրավ է, որ այս նամակը Հերակլի ձեռքն

¹⁴² *Նույն տեղում*, էջ 37:

¹⁴³ *Նույն տեղում*, էջ 39:

¹⁴⁴ *Նույն տեղում*, էջ 76-77:

¹⁴⁵ *И. Дубровин, История войны и владычества русских на Кавказе, т. III, с. 35.*

անցնելով, ուղարկվում է Հյուսիսային Կովկասում գտնվող կոմս Գուդոպիլ-
չին, որպեսզի «ուսուհի Հրամանատարն անհերքելի ապացույց ունենա պար-
սից արշավանքի մասին»¹⁴⁶:

Թիֆլիսը գրավվեց սեպտեմբերի 12-ին, որտեղ Պարսից բռնակալը
մնաց ընդամենը մեկ շաբաթ: Այս արշավանքի ժամանակ Ռուսաստանից
օգնություն չստանալու փաստը Վրաստանում և Այսրկովկասյան տարա-
ծաշրջանում խիստ սասանեց Ռուսաստանի վարկը: Ադա Մահմադ խանի
հետանալուց հետո Այսրկովկասում Ռուսաստանի ազդեցությունը վերա-
կանդեցու նպատակով 1796 թ. թեև կազմակերպվեց պատժիչ արշավանք
Վ. Զուբովի հրամանատարությամբ, որը մեծ ոգևորություն առաջացրեց
բնակչության մոտ և որի հաջողությամբ օժանդակում էր նաև Հովսեփ Ար-
ղուիսյանը իր եսանդուն գործունեությամբ, սակայն այն շուտով ընդհատ-
վեց՝ Եկատերինա 2-րդ կայսրուհուն հաջորդած Պավել 1-ինի հրամանով:
Ուշագրավ է, որ նշված արշավանքի ժամանակ (1796 թ. սեպտեմբեր), Հ.
Արղուիսյանը ռուսական զորքերի հրամանատարին էր ներկայացրել գործո-
ղությունների մի ծրագիր, որտեղ որոշակի զբաղված էր նաև Արցախի հարցը:
«...Կարելի է,- գրում էր Հ. Արղուիսյանը,- անցնել Կուր գետը և, կանգ առ-
նելով Մուղանի դաշտում, հրաման տալ Շուշու Իբրահիմ խանին, որ նա
ինքը դա Ձեր պայծառափայլության մոտ, կամ դո՛նե ուղարկի իր ավագ որ-
դուն՝ Հայ մելիքների հետ: Ձեր պայծառափայլության այդ հրամանի կա-
տարումը կդառնա Իբրահիմի՝ զեպի Ռուսաստանն ունեցած հավատար-
մության և Ջերմեռանդության ապացույց: Այնտեղ բոլոր կարևոր գործերը
վերջացնելուց հետո, կարելի է անարգել գնալ Թավրիզի կամ Արզերի
վրա, ուր որ ավելի նպատակահարմար կդատվի: Իսկ հիշյալ Իբրահիմ խա-
նից անհրաժեշտ է պահանջել նրա որդուն՝ հազար զինվորի հետ և հինգ
հայ մելիքներին՝ նրանց հինգ հազար զորքի հետ՝ դանազան գործողու-
թյունների համար, մասնավորապես, իբրև առաջապահ գնդեր, որովհետև
նրանց խորթ չէ պատերազմական ոգին: Եթե Շուշու խանը ձեր հրամանը
կատարել չկամենա, այդ կլինի նրա անհավատարմության և խորամանկ
խաբուսության բացարձակ ապացույց: Այդ զեպում կարելի է գործադրել
հայ մելիքներին, որոնք հարմար զենք կդառնան նրան պաշտոնանկ անե-
լու և բարձր աստիճանից ու բերդից զրկելու համար, իսկ այնուհետև
ամբողջ Ատրպատականը կարելի է հնազանդության մեջ պահել առանց զեն-

¹⁴⁶ Լեո, նշվ. աշխ., էջ 387:

քի: Հայոց զորքի թիվը, ի մեծ օգուտ Ռուսաստանի, կբազմապատկվի և
կհասնի մեծ քանակության, և բոլոր ձեռնարկությունները վերջիվերջո
կհանգեն բարեհաջող վախճանի: Շուշու խանը իր բերդը համարում է անա-
ռելի, բայց այդ կարծիքի մեջ կարող է հեշտությունը խաբված լինել, որով-
հետև նրա բերդը և ուժն առավելապես ճայտն են կազմում, որոնք թեև կորիճ
ու քաջ են, բայց ճշմարտապես անձնատուր եղած լինելով Ռուսաց զահին,
ոչ միայն զենք չեն վերցնի ռուսների դեմ, այլև ամեն կերպ կաջակցեն Իբ-
րահիմի կորստյանը, եթե նա ուխտադրուժ հանդիսանա: Պետք է միայն հայ
մելիքներին դադարաբար հուսադրել նորին մեծություն ողորմածությամբ և
հովանավորությամբ»¹⁴⁷: Հ. Արղուիսյանը ոգևորվելով նման հեռանկարով,
իր հերթին հաղորդում է Շուշու և այլ վայրերի հայերին, թե ռուսական
արշավանքի նպատակներից մեկն էլ հայերին ազատելն է¹⁴⁸: Այդ լուրերը
տարածվելով հուզումներ առաջացրին մասնիկական բնակչության մեջ:
«Իբրահիմ խանն իր մոտ հրավիրեց Վարանդայի Մելիք Զուլուղին և մահ
սպառնաց նրան, եթե հայերի մեջ որևէ շարժում սկսվի»՝ հայտարարելով,
թե ինքը «ուսաններից վախենում է նույնքան, որքան Ադա Մահմադ խա-
նից»¹⁴⁹: Իբրահիմ խանը Վ. Զուբովի բանակ առաքելով իր ներկայացուցչին
և ապա իր որդուն, հրամանատարին տեղեկացնում էր «թե իր համար մեծ
երջանկություն է Ռուսաց հպատակություն ընդունելը»¹⁵⁰ և միաժամանակ
մասնակցում զլխավոր հրամանատարի դեմ դավադրության կազմակերպ-
մանը¹⁵¹: Դավադրությունը բացվելուց հետո Իբրահիմը նամակով հավա-
տացնում էր Վ. Զուբովին, թե ինքը ամենաջերմ բարեկամական զգացում-
ներով է լցված ռուսաց հաղթական զորքի զլխավոր հրամանատարի նկատ-
մամբ, թե Շուշին ռուսական քաղաք է և խնդրում է նրան զորք ուղարկել
իրեն, որպեսզի կարողանա հպատակեցնել նաև հարևան խանություննե-
րը¹⁵²: Ռուսական զորքերը Ղարաբաղի տիրույթներ չմտան և Գանձակի ա-

¹⁴⁷ АВПР, ф. СРА, оп. 10/3, 1764-1800гг., л. 462, л. 34-39: Հայ. տե՛ս Լեո, նշվ. աշխ.,
էջ 395-396:

¹⁴⁸ Н. ДУБРОВИИ. Поход графа В. А. Зубова в 1796 г., - "Военный сводник", 1874, №
5, с. 13-15.

¹⁴⁹ Н. ДУБРОВИИ, նշվ. աշխ., էջ 16:

¹⁵⁰ Լեո, նշվ. աշխ., էջ 398:

¹⁵¹ Н. ДУБРОВИИ, նշվ. աշխ., էջ 16-19:

¹⁵² Н. ДУБРОВИИ. Поход графа В. А. Зубова в 1796 г., - "Военный сводник", 1874, №
6, с. 181. Հմմտ. Լեո, նշվ. աշխ., էջ 398: Իբրահիմի որդուն ռուսական բանակա-
յին ճամբարում ընդունելության մասին տե՛ս АХМЕДЪСК ДЖЕВАНШИР. О политич-

նարյուն գրավումը, փաստորեն այդ արշավանքի վերջին էջն էր, որից հետո, ինչպես հայտնի է, ռուսական զորքերը անմիջապես բռնեցին տուն-դարձի ճանապարհը¹⁵³: Պարզվում է, որ ռուսական բանակից երկու հայ սպաներ որոշակի հանձնարարություններ ապացուցել էին Շուշի: Ռուսական զորքերի հեռանալու հանգամանքը շտապից օգտագործել Աղա Մահմադ շահը և 1797 թ. դարնանը կրկին արշավից Արցախ: Իրբահիմ խանը այս անգամ չփորձեց արդեն անձամբ կազմակերպել Շուշիի պաշտպանությունը, այլ շտապ փոխադրվեց Ավարիայի Ռամա խանի մոտ՝ թողնելով «էր» տիրություններ բախտի բանահաճույքին¹⁵⁴: Լսելով Իրբահիմի փախուստի մասին, շահը երկու հազար հեծյալներ ուղարկեց նրա ետևից, սակայն Իրբահիմը թարթառ գետի մոտ կարողացավ խույս տալ այդ զորախմբից և հեռանալ, հակառակորդի ձեռքն անցավ նրա ունեցվածքի որոշ մասը միայն¹⁵⁵: Դժվար է ենթադրել, թե նա կարող էր կանխատեսել Աղա Մահմադ շահի սպանությունը և կամ դեռևս փաստված չէ, թե որևէ կերպ Իրբահիմ խանը և կամ Հերակլ Զորը մասնակից էին շահի սպանություն կազմակերպմանը, ինչպես ենթադրվում է երբեմն¹⁵⁶: Շահի հրամանով ավերվեց նաև մելիք Ջուժ-

շուղի տունը Ավետարանոց գյուղում¹⁵⁷: Աղա Մահմադ շահը մտնելով Շուշի «արկեալ գձեռն առ յոմանս իշխանս՝ առնէր զնոսա գոյաթափս, ընդ որս և զմէլիք Ջիմշիլը՝ զորդին մէլիք Շահնազարի»¹⁵⁸: Ըստ Դուկաս Կարնեցու. «յես ներքինւոյ կործանման մելիք Ջուժշուտ կասկածեալ յիրբահիմ խանէն, որ դառնալոց էր ի Կովկասու, ամենայն տամբ խոյս ետ ի Տիփլիս»¹⁵⁹:

Շահի թիկնապահ զորքի մեջ ծառայող Հակոբ Բեհբուդյանի վկայությամբ, որ ակնատեսն ու լավատեղյակ էր իրադարձություններին, Շուշիում շահի «զորականներն սկսեցին, բռնություններ մտնել քաղաքացւոց տները, ուր ինչ գտնուեմ էին, խլում էին, երբեմն չտվողին կամ հակառակողին սպանում էլ էին: Թեև ողորմելիքն գանդատվում էին, բայց ո՞վ էր նոցա լսողը... Զօրականքն երկու անգամ ժողովեցան շահի դռանը՝ յայլաճ, յայլաճ գոռացին, թե քաղցած ենք, հաց տուր մեզ կամ հրաման տուր գնանք մեր տներն: Էս պատճառ էր տված շահին կասկածել, որպես թե յուր ավագանիքն են էս զօրաց անբավականությունը պատճառն կամ սովորցնողը: Սրա էլ պատճառն էն էր, որ պալատականները և զորավարները միմյանց հետ թշնամի էին, այսինքն՝ Քարսերն ու թուրքերն երկու կողմնակցությունից էին բազկացած»¹⁶⁰:

Աղա Մահմադ շահի սպանությունը և պարսկական բանակի իրարանցումը և ապա խուճապահար փախուստը նպաստավոր դրուվելու էր ստեղ-

чекском существовании Каравахского ханства (с 1747 по 1805 год), Баку, 1961, с. 77.

¹⁵³ Ռուսական զորքերի վերադարձը մեծ հուսախարություն առաջացրեց հայ ժողովրդի մեջ: Սարգիս Հասան-Ջալալյանցի արձանագրմամբ. «Դարբանդեցի և զուրեցի հայք, որք ի ժամանակս Աւան իւզբաշոյ զաղթեալք յԱրցախայ մնալին անդանոր, ձանձրացեալք ի հալածամաց Պարսից և զվերջին հետեանս զօրս ունէին կրել ի զօրաց Պարսից, առաջի աչաց բերելով բարւոք զադարելուն գաղթել ի տեղւոջն և գնալ ի Ռուսաստուն զհետ Զուրովայ, բայց քաղցր է հայրն և քաղցր են հայրենիք, և բաժանումն ի հայրենեաց ի հարկէ դժնդակ, սակայն ազատութիւն հաւատոյ և աստուածապաշտութեան առաւել քաղցր. որոյ վասն պատրաստեցան ի շուշի զհետ Զուրովայ: Թողին այնուհետև գնորատունն այգիս, դժարկեալ բուրաստանս և դաշտս ամենայն լիալիք վաստակօք... ի վերջոյ Զուրով առեալ տանի գերզս հազարս և բնակեցուցանէ ի Ղզլար գաւառի...» («Հայկական աղբյուրները Աղա Մուհամմադ խանի Անդրկովկասյան արշավանքների մասին», էջ 161-162):

¹⁵⁴ Փաստագրեր է, հետաքրքիր, Իրբահիմ խանի «նվիրվածությունը» Ռուսաստանին ապացուցելու համար Շուշից փախչելու հանգամանքի օգտագործման փորձը ն. Մ. Իրբահիմբեյի կողմից. "Ибрагим-Халил хан Каравахский и на этот раз доказал свою преданность России и, покинув Шушу, бежал в Джарский округ, но не перешел на сторону Ирана" (X. М. Ибрагимбеyli. Նշվ. աշխ, էջ 56).

¹⁵⁵ Ахмедбек Джеваншир. О политическом существовании Каравахского ханства, с. 83-84.

¹⁵⁶ П. Носелтани. Описание древностей города Тифлиса. Тифлис, 1866, с. 259. "История Азербайджана" I, Б., 1958, с. 388. Յ. Յոճոյ Յեցոճոյ, օրհմօ XVIII և II հսկայնոթ. օձ., 1970, թթ. 194-200. "Եսթրոտոյն օնթրօտօս Եճրճոյնոթ",

IV, օձ., 1973, թթ. 771. Հայկական ավանդությունը տե՛ս ՄՄ, ձեռ. 10117, թ. 51-52: ՄՄ, Կաթ. դիվան, թղթ. 18, վավ. 193:

¹⁵⁷ Ըստ Սարգիս Հասան-Ջալալյանի. «Մելիք Ջուժշուտ, որ նախքան զգալն շահին փախչեր ի Վիրս, կողոպտեալ ի տեղական պարսից, դառնայ ի ճանապարհէն և զայ առ շահն և խոնարհեալ ի ծունկ երկրպագէ նմա: Շահն քաղցրութեամբ հարցանէ նմա, թէ ու՞ր էիր, զի համեցար: Ասէ Ջուժշուտ՝ տէր իմ արքայ, պարսիք կողոպտեցին զկայս իմ, զլուխ իմ շաղիսեալ կայր, վասնորոյ յամեցայ ուրեմն, ներեա: Եւ ապա որպէս նախընթաց առեալ օձէ զշահն ի քաղաքն Շուշի, յեա որոյ բարկացեալ շահին ի վերայ տաճկաց կողոպտողաց գտունս մէլիք Ջուժշուդա, տա զգունդ մի զօրաց ի ձեռս մէլիքին և հրամայէ՝ դնացեալ աւար հարկանիցէ գնոսին և զափշտակեալ կայս իւր ի նոցունց յինքն դարձուցանէ, և զպարսիկս ամենայն գերս արարեալ հասուցէ ի Շուշի: Ի վերջոյ ի տեսնելն երկրորդ անգամ նորս գմելիք Ջուժշուտն. Տեր իմ արքայ, զոր էնչ և հրամայես, պատրաստ եմ ի կատարել: Եւ ապա պահանջէ ի նմանէ զհարկուր հազար մանեթ, հուսկ յետոյ ի մտեալ յես կողոպտելոյ դրոյր քաղաքն գհիմն ի վեր առնել բոլոր շինուածոց և գամենայն բնակիչս նորին վարել ի Պարսկաստան» («Հայկական աղբյուրները...», էջ 163-164):

¹⁵⁸ «Հայկական աղբյուրները...», էջ 103:

¹⁵⁹ «Հայկական աղբյուրները...», էջ 97:

¹⁶⁰ Գ. Շիրմազանեանց. Ճանապարհորդութիւն Հայաստանում. «Արարատ», 1877, էջ 306: Հմմտ. Լեռ, Նշվ. աշխ., էջ 402-403:

ծուժ Շուշիում նոր իշխանությունն ձևավորելու համար, որը սակայն տեղի չի ունենում: Շուշիի թուրք բնակիչները հարձակվում են պարսիկների վրա, կողոպտում, իսկ շահի գործերը, խլելով շահի հարստությունները և կողոպտելով բնակչությունը, սկսեցին «անկարգ փախուստ դեպք»՝ Պարսկաստան»: «Հայերը երկիրդն մասն իւրեանց տները, դռները ամրացրած, ամենևին ձեն-ձուն չհար, որպէս թէ մահացու մեռելութիւնն կլթազավորեր նրանց թաղի մէջն, նշան էլ չէր երևում, թէ էն տեղրանք կենդանի շունչ կա եղել»¹⁶¹: Շահական զորքերի փախուստից հետո Շուշիի կառավարումը ստանձնում է Իբրահիմի եղբորորդի Մամադ բեկը, մինչ երկու ամիս անց վերադառնում է Իբրահիմը: 1796-1797 թթ. Արցախում սովից ու համաճարակներից փրկվելու նպատակով սկիզբ է առնում հայոց զանգվածային արտագաղթ¹⁶² դեպի Վրաստան, Ռուսաստան, Օսմանյան կայսրության տարածք ու Պարսկաստան: Պարսից արշավանքից և այդ տարիներին արտագաղթից հետո Արցախի 60 հազար ծուխ բնակչությունից մնաց ընդամենը 20 հազարը:

Հովհան Ռոկերչյանը ցավով է արտահայտել այդ երևույթի հետևանքները. «բարձեալ եղև աւերիչն եկեղեցւոց և թշնամին խաչին (իմա՛ շահը – Պ. Զ.), բայց և յոյսն տարաշխարհիկ ցրուեալ ազգիս հայոց՝ զոր ի հեռուստ վայրաց իբրու դիտակամբ հայէին յայս աշխարհ՝ յազագս բազմախումբ քրիստոնեութեանն և զինու զօրութեան նոցա, այն ևս էանց իբրև երազ խոր գիշերոյ կամ պղպղազ ինչ կաթուածոյ՝ ըստ Շնորհալուոյն բանի»¹⁶³:

* * *

Դեռևս Ժ.Զ. դարից Գանձակի բեկլարբեկի պաշտոնը վարող Զիադօղլուների տոհմի տիրապետությունը սկիզբ էր առել Սեֆյան շահ Թահմասպ Առաջինի (1524-1576) ժամանակ՝ Գանձակի (Ղարաբաղի) բեկլարբեկ նշանակված Շահվերդի սուլթան Զիադօղլուից: ԺԸ. դարի առաջին քառորդին Գանձակում նստող Ղարաբաղի բեկլարբեկը համարվում էր նաև Կախեթի «հաքիմը» և փաստորեն նրա ենթակայությունները էր գտնվում նաև Կախեթը: 1724 թվականին Գանձակի մահմեդականների և արցախահայոց դիմադրական ուժերի միջև կնքվել էր պայմանագիր Օսմանյան բանակների

¹⁶¹ Գ. Շիրմազանեանց. Ժանապարհորդութիւն Հայաստանում, էջ 334:

¹⁶² И. Дубровин. История войны и владычества русских на Кавказе. Т. IV, СПб, 1886, с. 230.

¹⁶³ Կոունկ Հայոց աշխարհին, 1862, էջ 288: Հայկական աղբյուրներ..., էջ 103-104:

դեմ համատեղ հանդես գալու մասին: Սեֆյան արքունիքին և Իվան Կարապետի միջոցով Ռուսաց կողմին ուղղած պարսկերեն նամակներում Գանձակի իշխողները հստակ հակասմանյան կողմնորոշում էին զբաղեցրել: Նրանք կարողացել էին դիմակայել Օսմանյան բանակի արշավանքներից մեկին: Օսմանյան տիրապետության հաստատումը, սակայն, իրականում ի չիբ դարձրեց Զիադօղլուների իշխանությունը, ուստի նրանք մեծ հույսեր էին տածում Պարսից տիրապետության վերականգնման հետ: Նաղիր շահի թագադրվելու ժամանակ ևս Զիադօղլուները քարոզչություն ծավալեցին դաճը հօգուտ Սեֆյանների տոհմից որևէ մեկին հանձնելու՝ դրանով իսկ բացահայտորեն հակադրվելով նաև Նաղիրին: Թագադրվելուց հետո, Նաղիր շահը նրանց գերիշխանությունը թուլացնելու համար Ղազախ-Լոռի հատվածը անջատեց նրանց գերիշխանությունից, իսկ Արցախը ենթարկեց Պարսից արքունիքի անմիջական ենթակայությանը:

1736 թ. Գանձակի բեկլարբեկությունը այսպիսով տրոհվեց, և Գանձակից առանձնացվեց ոչ միայն Ղարաբաղի կամ Խամսայի հայկական իշխանությունը (Ջրաբերդ, Գյուլիստան, Խաչեն, Վարանդա և Դիզակ դավառներով), այլև Գանձակից Խորասան փոխադրվեցին Օթուղիքի, Ջիվանչիր և Բերբերլի մահմեդական թյուրքախոս ցեղախմբերը: Ըստ Միրզա Ադիգեոզլու բեկի, Նաղիր շահը «եւ Խամսայ մէլիբաց ևս ետ հրաման, զի ամենևին չհնազանդելով խանացն Գանձակայ, զինքեանս ազատ գիտասցին և զհարկաւորեալ խնդիրս առանց հաղորդութեան ուրուք, ինքեանք առաջի արասցեն շահին: Խանք Գանձակայ վասն ելանելոյ ի ձեռաց իւրեանց իշխանութեան և ի բաց լինելոյ յայնմանէ կարի յոյժ նուաղեալ եղեն»¹⁶⁴: Զիադօղլուների զաջարական «նուաղեալ» տիրապետության ընթացքում, որ ընդդրեց ԺԸ. դարի ողջ երկրորդ կեսը, հայ բնակչությունը, ինչպես Գանձակ քաղաքում և շրջակայքում, այնպես էլ Գանձակից հարավ գտնվող լեռնաշղթայի ողջ երկայնքով պահպանում էր իր տեղական վարչաքաղաքական ու տնտեսական ինքնուրույնությունը: 1783 թ. Աղամ և Աբով մեքեների Պ. Ս. Պոտյոմկինին գրած նամակի մեջ բուն Արցախի հինգ մեքեներից հետո թվարկվում են նաև Հյուսիսային Արցախի հիմնական մեքեները ևս, որոնք չէին գտնվում Իբրահիմի ենթակայության ներքո. «Յարութիւն Մէլիք Մնացախանեան Գետաշինոյ, Մէլիք Գասպար Եււրոյ Կանչոյ

¹⁶⁴ Միրզա Ադիգեոզլու Բեկ, Որպիսութիւնք խանացն Գանձակայ, ՄՄ, ձեռ. 4463, թ. 3ա:

քաղաքին, Մէլիք Գարրիէլ Յոսկանապատու և այլն, թող զԶականն Շամսարին և Շամքոու, թէ որքան մէլիքներ կան մհալոյ»¹⁶⁵: Պահպանվել է Նազիր շահի կողմից Գետաշենի Մելիք Մնացականին 1744թ. (10. VIII – 8. IX) տրված պարսկերեն շնորհագիրը: Ահա նրա ուսերեսն թարգմանությամբ. «На основании царского милосердия относительно прибежища величия и высокого качества Мелика [Мна]цакана местностей Курак-Басана Ганджийского округа от начала шести [оставшихся] месяцев текущего года, года мыши, [мы] соизволили определить упомянутому жалование в количестве ста надирри. Каждый год вышеназванную сумму пусть он получает от амиллов указанной области и расходует на свои нужды. Вследствии совершенного усердия пусть он занимается на вышеупомянутом поприще, пусть старается в деле благоустройства вышеназванного места и собирания [рассеянных] крестьян...»¹⁶⁶: Առավել ուշագրավ է սակայն մեկ այլ վավերագիր-խնդրագիր, որով մելիք Մնացականը դիմել է Նազիր շահի օժանդակությանը և ստացել համապատասխան կարգադրություն. «Ничтожнейший рав Мнацакан Армани из местности Курак-Басана доводит до допущенных к аудиенции к подножию высокого, как девятое небо, трона государства, священнейшего, высочайшего: [Я], ничтожный, имею три селения: Тукана (?)...лу¹⁶⁷, Дрзпаке (?), Нримуф и другие селения. Вот уже сорок... лет, как там обитают райаты и ничтожнейший..., они из поколения в поколение платили мутаваджихат. Теперь пришли люди из Кулани¹⁶⁸ и из других местностей и предьявляют претензию, постоянно беспокоя вспомощное население. Просим милости благословенного, славнейшего, священнейшего, наивысшего, – да стану я его жертвой.– издать благословенный *ракам*, которому подчиняются, чтобы никто из Кулани и других мест не беспокоил меня; пусть они дадут возможность вышеназванным райатам заниматься земледелием и справляться с хукук-е дивани, что вселит надежду ничтожнейшему, что его

¹⁶⁵ Армяно-русские отношения..., IV, с. 222–223.

¹⁶⁶ Тбилисская коллекция персидских фирманов, т. II, с. 67. 1745 թ. Պահպանված Մելիք Մնացականի մի կալվածադրից պարզվում է նաև նրա հայրանունը. «Покупает-лично для себя мелик [Мна]цакан из общества Чайкенди, сын Саркиса Чайкенди» (նույն տեղում, էջ 68–69):

¹⁶⁷ Իմա՝ թյուրքարենակ զարձած ներկայիս Թողանալու գյուղը Գանձակի մոտ:

¹⁶⁸ Իմա՝ Կողանի:

поступок не будет напрасен перед Аллахом и перед Посланныком. [Требуется] ваш приказ, которому подчиняются»¹⁶⁹.

Հայ բնակչությունը պահպանում էր իր ներքին ինքնավարությունն ու հաճախ նաև վրեժխնդիր լինում մահամեղականներից՝ հայկական գյուղերի կամ առևտրական քարավանների կողպուտի դիմաց: Նման փաստերի արձանագրումներ կան անգամ Գանձակի մահամեղական ճարտարապետական կոթողի վրա եղած վիճագիր արձանագրությունում: Այստեղ պատմվում է 1748/9 թ. Գանձակ կատարված հարձակման ու «Շահ Աբբաս» մզկիթի ավերման մասին¹⁷⁰: Նման վրեժխնդրությունը թիվադրված էր հավանաբար Շահվերդի խանի կողմից հայոց նկատմամբ հալածանքներով: 1754 թ. դեկտեմբերի 1-ին Ռուսաստանի Արտաքին գործերի կոլեգիային ուղարկած ղեկուցադրում Օթար Թումանովը հաղորդում էր. «Գանձակում իշխում է Շահվերդի խանը և իր մոտ ունի զորք՝ մինչև յոթ հարյուր մարդ, և կեղեքում է ինչպես յուրային բնակիչներին, այնպես էլ քրիստոնյաներին»¹⁷¹: Գանձակի խանի անօրինություններից ու կամայականություններից փրկվելու համար «Շամշատին կոչեցեալ ազգն Տաճկաց, որք ընդ մէջ կան Գեանձայու և Ղաղախու և են ընդ իշխանությունս Գեանձայու խանին, ապստամբեալք ի Շահվերդի խանէն, եղեն ընդ իշխանությունս Զեբակի արքային»¹⁷²:

Հավատակիցներին ևս կողպուտելու Շահվերդի խանի քաղաքականությունը շարունակվում է նաև նրա կառավարման հետագա տարիներին, որի արդյունքում 1766 թ. նրա դեմ կազմակերպվում է դավադրություն: Գավադիրները որոշել էին սպանել խանին և ոչնչացնել նրա զերգաստանը և

¹⁶⁹ Тбилисская коллекция персидских фирманов, т. II, с. 71. Նազիր շահի հրովարտակում ասված է. «вышел августейший фирман: Истец с древних времен всегда владел райятами Курак-Басана и вот уже тридцать-сорок лет как он обосновался там и мутаваджихат и государственные налоги от них, что соответствует... в Курак-Басане, внесенный в авба-е джам'. Пусть никто из населения Кулани не выступает против высокопоставленного хакина Ганджи и не беспокоит вышеуказанных райятов, пусть дадут им возможность, чтобы они оставались на своем месте и справлялись с государственными налогами. И пусть признают ответственными [в исполнении данного фирмана]» (նույն տեղում, էջ 71):

¹⁷⁰ М. С. Нематова. Азербайчаньин епиграфик абиделеры (XVII-XVIII асрлар), Бақы, 1963, с. 149–151.

¹⁷¹ "Документы по взаимоотношениям Грузии с Северным Кавказом в XVIII в.", с. 140.

¹⁷² Դիւան հայոց պատմութեան, գիրք Գ, Սիմէօն կաթողիկոսի Յիշատակարանը, էջ 492:

իր»¹⁸²: Դեռևս մինչ իր կալվածքներին հասնելը, Մելիք Աղամբ մեկ անգամ ևս կանգ առնելով ճանապարհին ու վարանելով, կրկին հավաստիացումներ է պահանջում Իբրահիմ խանից՝ «բայց ի տեղի ինչ զկայ առեալ, տակաւին խնդրէր յԻբրահիմ խանի զուխտ հաւատարիմ»¹⁸³: Բնականարար, Մելիք Աղամբի այդ երեւուն կեցվածքը էջեր կարող հնարավորութիւն տալ նրան հանդես գալու Իբրահիմ խանի դեմ, ուստի նրա հետացումը ևս Հյուսիսային Արցախից կարելի է ենթադրել, թե ուղղակի թելադրվել էր Հերակլ 2-րդի և բարեհաճորէն ընկալվել Իբրահիմ խանի կողմից:

Այսպիսով, ինչպես Մելիք Հովսեփի, իսկ այնուհետև նաև Մելիք Աղամբի հետացումը Հյուսիսային Արցախի տարածքից թելադրված էր նաև նշված տարածքներում նրանց դիրքերի ամրապնդումը թույլ չտալու մտահոգութիւններ: Չնայած այդ հանգամանքին, հայ բնակչութիւնը դիրքերը Գանձակում մնում էին զեռևս ամուր և ինչպես վրացական, այնպես էլ մահաձեռնական իշխողներն ու բնակչութիւնը ստիպված էին հաշվի նստել նրանց ուժի հետ: Այդ մասին է վկայում նաև հետևյալ փաստը:

Ուշագրավ վավերագիր է 1772/3 թվականին պարսկերենով կազմված Գանձակ քաղաքի մահաձեռնական բնակչութիւնը ներկայացուցիչների կողմից կազմված և ստորագրված պայմանագիր-պարտավորագիրը, որտեղ համաձայնութիւն է հաստատվում հայ և մահաձեռնական համայնքների միջև՝ այլևս դադարեցնելու հակամարտութիւնը բնակչութիւնը հայ և մահաձեռնական խմբերի միջև ու մահաձեռնական կողմը պարտավորութիւն է ստանձնում դադարեցնելու հայ բնակչութիւնը նկատմամբ բռնութիւններն ու անօրինականութիւնները: Հապավելով փողոցների անվանումների թվարկումը, ստորև բերում ենք այդ վավերագիրը, որ հայտնաբերել էր Աշոտ Հովհաննիսյանը, իսկ հայերենի թարգմանել է Հր. Աճառյանը:

«Ձեր գոհութեան և օրհնութեան այս ճշմարիտ բառերի գրութեան պատճառը և այս անկեղծ գրերը տողելու հիմքն այն է, որ ներկայ եղած սէյիտների խումբը, ուլէմաները, ֆուլէլաները, հօջաները, տանուտէրերը, բարան, քալանթարը, նաղիբը, ալեդրները, իզբաշիները, պատանիները և Աբասաշէն Գանձակ քաղաքի (թող Աստուած նրա վիճակը բարեկալ) բնակիչները այլ բազմութիւնները, ստորև գրուած յաւելուածի համաձայն, փողոց առ փողոց, փափաղելով խաղաղութեան և հաշտութեան և գործերի

¹⁸² Դիւան հայոց պատմութեան, գիրք Գ, էջ 775:

բարելաւութեան, բոլոր ծառաներն Աստուծոյ երդուելով Աստուծոյ սուրբ անձի վրայ...

Ձրի ու Հողի վրայ, յայտնապէս խոստովանեցան և ճշմարտանապէս ընդունեցին, որ ընդմիջտ այսօրուանից յետոյ, սերնդից սերունդ և որդոց որդի, քանի որ հայ քրիստոնեաների ցեղը ձեռք են վեր կալել աւագակութիւնից և հպատակութեան ու հրամանի շրջանակը (մտնելով), առաջուայ պէս հնազանդ են եղել և եկել՝ ծառայութիւն են ցոյց տալիս, և այն միջոցին (որ) նրանց քոչերի պատանիներից և ջահելներից յարձակում գործեն յիշեալ հայ ժողովրդի վրայ և թալանեն ու ձեռնձուլութիւն անեն, այդ բաները զործողներին բռնելով՝ այդ անձին այնպիսի պերճախօս խրատ պիտի տան, որ ուրիշներին օրինակ լինի: Իրեն պիտի խրատեն, տունը պիտի քանդեն և բոլոր ինչ-որ աւարից ու թալանից է բերել՝ կրկնակին գրաւելով՝ ախրձը պիտի յանձնեն և իրեն այս րանում չպիտի ներեն: Այս մասին բոլորը միասիրտ և միաբան, երգմնակից և համախորհուրդ լինելով, իբրև քարի վրայ արձանագրուած՝ հաստատուն ուխտ ու պայման դրին և խոստովանեցան: Եւ եղև այս ի սկզբան ոչջէր ամսոյ մեծարելուց, յամսոյն ամի 1186 (1772/3):

Ժողովուրդը, պատանիները, երիտասարդները, տանուտէրները և ակառուները 81 փողոցների, թաղերի ինչպէս գրուած է այս էջում, խոստացան և երդուեցան, որ այսուհետև հայ ժողովրդին և քրիստոնեաներին, որ անգիտութեան և ագիտութեան ճամբան են ընկել, հրամանի և հնազանդութեան շրջանակը բերեն, սպանութիւնից և իրարու՝ մահաձեռնականների ու կարաւան թալանելուց ձեռք վերցնեն, քաղաքը երթևեկութիւն ունենան, վնաս ու նեղութիւն չտան, մենք էլ մեծ հաւանութեամբ խոստովանում ենք և երաշխաւոր ենք այս բնագրում գրուածին, և այն մարդիկը և ցանուցիւր երիտասարդները, որ քաղաք են մտել, մենք յանձն ենք առնում, որ նրանց արդիւր լինենք և ձերբակալենք: Եւ չենք թող տալ, որ այս կամ այնտեղ հայերին մի վնաս հասնի. ամէն բանում հանգիստ ու ապահով թող լինին: (Ստորագրել և կնքել են շեյխուլիսլամը, 7 ախունդ, 8 մուլլա, սէիտներից՝ 20 միրզա, բոլորը՝ 36 հոգի)»¹⁸³:

¹⁸³ «Վաւերագրեր հայ-պարսկական յարաբերութեանց մասին»: Ընդօրինակեց, տառագրածեց և թարգմանեց Հ. Աճառեան, Երևան, 1927, վաթ. թիվ 6 (Համալսարանի ապակետիպ հրատարակութիւն, 40 օրինակ): Օգտվել ենք ակադ. Մ. Գ. Ներսիսյանի արխիւում եղած օրինակից:

Ակնհայտորեն վավերագրում արտացոլված է ինչպես հայ բնակչութ-
յան նկատմամբ եղած անօրինականությունների ու բռնությունների փաս-
տը, այնպես էլ հայ բնակչության կողմից արժանի հակահարված տալու ու-
նակության գրանորման հանգամանքը:

1.2 ԱՐԵՒՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Հայ-ուսական հարաբերությունների ձևավորումը, նրա բնույթը և
գնահատականը հայոց մեջ անբաժանորեն հարաբերվել է նաև հայ-թուր-
քական հարաբերություններին, զարգացել վերջինիս հետ մշտական համե-
մատության ու հակադրության հենքի վրա, ուստի հայ-ուսական հարա-
բերությունների ու կողմնորոշման գնահատականը պետք է ներկայացվի
որպես քաղաքական զարգացման երկրնորանքի դրսևորում, որը արտացոլ-
ված ենք գտնում բազմաթիվ վավերագրերում:

Հայ-թուրքական հարաբերությունները չեն եղել միազիժ և միանշա-
նակ: Մտցիալական շերտավորումը հայ իրականության մեջ պայմանավորել
է տնտեսական ու քաղաքական շահերի բազմազանություն, որն իր հերթին
անդրադարձումներ է ունեցել հայ-թուրքական հարաբերություններում և
այդ հարաբերությունների հետագա գնահատումներում: Ուստի նշված
փոխհարաբերությունների տարբերակված ներկայացումը ևս կարող է
հստակեցում մտցնել արձանագրված գնահատումներում: Մեկ կողմից քիչ
չեն Օսմանյան կայսրության տնտեսական, քաղաքական ու մշակութային
տարբեր բնագավառներում հայերի ունեցած դերի ու ծառայությունների
արձանագրումները¹⁸⁴, իսկ մյուս կողմից բազմաթիվ են փաստերը կյանքի
բոլոր սասպարեզներում և հատկապես բուն Հայաստանում Օսմանյան կայս-
րության վարած նպատակաույաց հայահալած քաղաքականության մասին,
որոնք դումարվելով երկրում տիրող ընդհանուր քայքայվածության հան-
գամանքին, հաճախ անգամ անհնարին էին դարձնում իրենց հայրենիքում
հայ բնակչության հետագա կենսադորձունեությունը:

ԺԸ. դարի վերջին քառորդին մեր ժողովուրդը հիմնական մասով դե-
ռևս ապրում էր պատմական իր տարածքում՝ Հայաստանում, թեև արդեն

¹⁸⁴ Հրաչյա Աճառյան, Հայոց դերը Օսմանյան կայսրության մեջ, Երևան, 1999:

իսկ նախորդ դարերի բազմաթիվ արտագաղթների հետևանքով մեծ չափով
սփռվել էր նաև աշխարհի բազում երկրներում ու քաղաքներում: Օսման-
յան կայսրության ու Պարսկաստանի միջև բաժանված Հայաստանը իր եր-
կու հատվածների միջև փոխադարձ կապի ու շփումների հնարավորություն
ունենալով հանդերձ, այնուամենայնիվ տարբեր և հակամարտող պետու-
թյունների կազմի մեջ գտնվելը նրա հատվածների համար կանխորոշում էր
խնդիրների լուծման ոչ միանման ուղիներ: Օսմանյան կայսրության մեջ
ԺԸ. դարի երկրորդ կեսին առավել չափով դրսևորվեցին այդ պետու-
թյան ներքին թուլացման ու կենտրոնախույս ուժերի աշխուժացման գործնթաց-
ները: Կենտրոնական իշխանությունը այլևս ավելի ու ավելի մեծ չափերով
էր դիմում պետական զանձարանը լցնելուն ուղղված ներքին աղբյուրնե-
րին, հարկահանության խստացմանն ու բնակչության կեղեքմանը: ԺԸ.
դարի երկրորդ կեսին Օսմանյան կայսրությունը ոչ միայն չկարողացավ
դիմադրել Ռուսաստանի առաջխաղացմանը դեպի մերձսևծովյան տարա-
ձառջան, այլև կրած պարտությունների ու կորցրած երկրամասերի պատ-
ճառով ավելի սրվեցին ներքին դժգոհություններն ու կենտրոնական իշխա-
նության հնարավորությունները՝ զսպելու Օսմանյան կայսրության մեջ
ընդգրկված բազմազգ ժողովուրդների ազգային ազատագրական ձգտում-
ները: Գնալով ավելի հուսահատ ու աղբյուրի էին դառնում ինչպես կենտ-
րոնական իշխանությունների ձեռնարկումները՝ հպատակության ու հնա-
դանդության մեջ պահելու կայսրության երկրամասերը, այլև ներիշխանա-
կան շրջաններում ևս հասունանում էին կառավարման բարեփոխություն-
ների դիմելու անհրաժեշտության գիտակցումները: Սելիմ երրորդի քաղա-
քականությունը ուղղված էր ցուցադրելու բարեփոխումների դիմելու իր
մտադրությունը: Ենիշերիական բանակը վերացնելու և եւրոպական ձևով
նոր բանակ ստեղծելու ուղղությամբ Սելիմ երրորդի նախաձեռնությունը,
որ հայտնի էր “Նիզամի ջեդիդ” անվամբ, կատարելի դիմադրության է հան-
դիպում և ենիշերիների, և թե պետական պաշտոնեության կողմից: Սուլ-
թան Սելիմի այդ փորձը վերջանում է նրա զահրենկեցությամբ և ապա՝
սպանությունը¹⁸⁵:

Օսմանյան կայսրության ունեցած բոլոր կարգի դժվարությունները
այս կամ այն ձևով անդրադառնում էին նաև Արևմտյան Հայաստանի հայ

¹⁸⁵ Հանգամանքներն տե՛ս Миллер А.Ф. Мустафа паша Байрактар. Османская исто-
рия в начале XIX века, М.—Л., 1947.

բնակչության կենսապայմանների, նրա սոցիալ-տնտեսական, իրավա-քաղաքական ու զավանական կացության վրա: Ժողովուրդը շարունակում էր իր իսկ հայրենիքում ենթակա լինել զաժան ստորացումներին ու շահագործման, որ շարունակվում էր կարծես առանց որևէ թեթևացման հույս ներշնչելու: Հարկային-տնտեսական գծավարություններին գումարվում էին նաև իրավական կարգի այնպիսի սահմանափակումներ, որոնց խախտման մեղադրանքները ցանկացած ժամանակ կարող էին օգտագործվել ոչ մահամեղադան բնակչությանը կամայական բնույթի ու չափի կեղեքումների ու պատիժների ենթարկելու նպատակով: Նման սահմանափակումները ուղղակի վերաբերում էին ժողովրդի սոցիալական ու ազգային կարգավիճակին:

Դեռևս ԺԶ. դարի երկրորդ կեսին Օսմանյան պետության մեջ ևս ոչ մահամեղադանների տարազի մասին հաստատված սահմանափակումները¹⁸⁵ և այդ մասին սուլթանական իշխանությունների կողմից հաճախակի հրամանագրերն ու հիշեցումները¹⁸⁷, շարունակում էին ուժի մեջ մնալ անզամ նաև ԺԹ. սկզբներին՝ ամբողջությամբ տարածվելով նաև հայազգի բնակչության վրա:

¹⁸⁵ Առաջին հիշատակումը վերաբերում է XIV դարին. «ՌՅԼԳ (1334) կապուտ նշան դրին քրիստոնեից» (Ասմուլի քահանայի Աննցուլ Հաաբումը ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 168): 1568թ. օգոստոսի 1-ին Կ. Պոլսի կաղիբն ուղղված հրամանագրում ասվում էր. «Սրանից առաջ իմ կայսերական հրամանը եղավ, որ հրեաները, քրիստոնյաները և այլ անհավատներ բարձր տեսակի պատրաստի հագուստներ չհագնեն:.. Այսուհետև հրեաների և այլ անհավատների ֆերաջները լինելու են սև չուխաներից, թեմկաները ոչ թե կերպասից, այլ աստառացու կտորից... մաշիկները պետք է լինեն սև գոյնի, հասարակ և առանց աստառի: Այլ գոյն չլինի: ...Հայերը ևս հրեաների նման թող հագնեն: Միայն թե զլխներին կարմրավուն փաթթոց կապեն, այն էլ ոչ շատ արժեք ունեցող: Հայ կանայք ևս ֆերաջն չեն հագնելու: Ֆերաջի փոխարեն թող Փահիր հագնեն, իսկ ոտքերին էլ՝ բաթիկներ, ներսից՝ սև գույնի բուրսայի քուժնու, ոտքերին՝ կապուտ չաբչիբ, մաշիկն հողաթափ և շիրվանի մաշիկներ...»: Տե՛ս Ավետիսի Փափազյան, Թուրքական վավերագրերը Հայաստանի և հայերի մասին (16-19-րդ դարեր), Եր., 1999, էջ 214-215:

¹⁸⁷ 1568 թ. օգոստոսի 15-ին մեկ այլ հրամանագրով պարսեների գնի բարձրացումը (գործվածքներ, մահուգն կերպասներ, կոշիկեղեն) պատճառաբանված է «անհավատների» կողմից սահմանված կարգի խախտումներով: Ավետիսի Փափազյան, Թուրքական վավերագրերը, էջ 215-216: Նման հրամանագրեր հրապարակվել են նաև 1577 թ., 1580 թ. (տե՛ս նույն տեղում, էջ 221-222): Սամվել Անույու Շարունակողի կողմից ևս արձանագրվել է. «ԲԼ. (1581) սուլթան Մուրատն երազճ պիակեյն ի գլխոյ հայոց ևս հրէից՝ զի պատկզ զիցեն» (Ասմուլի քահանայի Աննցուլ Հաաբումը ի գրոց պատմագրաց, էջ 176): Հմմտ. Ա. Հ. Փափազյան, Արևմտահայության վիճակը բոս Օսմանյան սուլթանական ֆերամաններին (XVI-XVIII դդ.), -ՊՔԶ, 1988, թիվ 2, էջ 131:

չուլթյան վրա¹⁸⁸: Հովհաննես Սեբաստացու հաղորդմամբ «Յաւուրս յայսոսիկ (ՌՃԾԹ-1710) նահատակեցաւ ի Կոստանդնուպոլիս Աստուածատուր Սեբաստացին: Սա որդի էր Անմեղուկենց Պաղտասարին և Թուրվանտային և ուսեալ զարհեստ ոսկեգործութեան և մտեալ ի կարգ աշխարհի և եղև, զի վասն վաճառականութեան գնաց ի Կոստանդնուպոլիս և իրբև հնաս ի Ղալաղիա, ոմանք այլազգեաց տեսեալ զնա ծպտեալ՝ ասեն ցնա. «Այր դու, ո՞ր յազգ՝ ես»: Եւ նա ասաց. «քրիստոնեայ եմ, յազգէ հայոց»: Ասեն ցնա. «Ապա վասն է՞ր զգեցեալ ես հանդերձ, որ վայել է տաճկի»: ...Յայնժամ կրճտեալ զատամուշս իւրեանց ի վերայ սբբոյն և գրոհ տուեալ միմեանց և իլեալ զտուրն՝ տարան առ դատաւորն և կացուցին վկայս սուտս ասել, թէ «Լուաք զդմանէ լինիլ ընդ օրինօք մերովք»: Հետեանքը մահվան դատապարտվելն ու գլխատու թյունն էր¹⁸⁹:

¹⁸⁸ 1803 թ. Կ. Պոլսի հայոց պատրիարքի նամակը ս. Հրեշտակապետ եկեղեցու ծխականներին: «Յորմէ սիրով սուրբ Հոգւոյն և աստուածային օրհնութեամբ ծաներուք ի Պալատ սուրբ Հրեշտակապետ եկեղեցւոյ բարեկրօն քահանայք, քրիստոսասէր իշխանք և առհասարակ օրհնեալ ժողովուրդք, արք և մանասանդ կանայք, երիտասարդք և կուսանք: Զի ահա յերեկեան աւուրն թագաւորական սաստիկ հրաման եւ Ֆէրման եկն ի յարքունական դրանէն, թէ բայէն ամենեւին իսլամի միաթալիս ուսուպայ չի հազնի տէյու թախափիրու թէնպիհ կեցած իբէն մէկ ժամանակն է ի վերէ, որ հարայէթնին չեն ճանաչեր, իլլէ կանանց թայֆէն ամենեւին իւրեանց հարայէթն ի տաճկաց կանանց լոֆարխեն, որոց, յայնքն՝ արանց և կանանց սաստիկ հրաման է ներկայապէս, որ զչափ անձանց իւրեանց ճանաչեն, տաճկի միաթալիս լաթ չհագնին, դեղին էֆտիկ բարուն պետաֆէկ, ֆէրաճէ մեծ եսխայով, եաշմախինն ևս գլուխինն (թ. 82ա) էտէպիղճէ չլինի բնաւ: Նաև բաց ի յայնց մարդկանց, որք հրաման ունին ձի Հեծնալու, ուրիշ մարդ ձի չհեծնայ: Հրաման ունեցողքն ևս փալանով Հեծնան, որպէս հարկ է բայէին, որ հայ լինիլն ևս բայէ լինիլն ճանաչելի, ամէն մարդ իւրեան չափ անձին ճանաչէ:

Արդ ի բանիս յայսմիկ, թէ ամէն մարդ թող իւր չափն ճանաչէ ևս բայէ լինիլն պլլելու անէ, ամենայն ինչ պարունակեալ է էտէպիղճէ չըրլիլ, չհագնիլ, կապուլիլ զալփան բարուն ևս այլն: Սոյնպէս ևս կանանց գլուխն չէվլիլմէ եաշմախ չլինիլն և կերպիւ կերպիլ գլուխ չկապելն. այլ մեր հայոց օրհնեալ ազգին ի բնէ անտի պարկեշտութեան ինչպէս որ կվայելէ, մանաւանդ թէ հարկ է, այնպէս պարկեշտ գլուխ կապել ևս պարկեշտ ֆէրաճէ հագնիլ ևս այլն:

Ապա թէ ոչ գրեալ է, թէ անազատելի պատժօք պատժելոց են այնպիսիքը, թէ այսուհետև տեսանիցին, զի տանջանք նոցա պատրաստեալ են: Ահա բոլորիցք զհրաման մեծագոր և բարեբախտ թագաւորին մերոյ ծանուցաք, որ եւ բոլորիցք զոհունակ լինելով ևս մեծագոր թագաւորին մերոյ կեանս երկարս խնդրելով կատարել պարտիք, որ անվնաս մնայցէք ի փորձութենէ: Որ ևս տէր աստուած զամենեանց յամենայն երեւելի ևս յաներևոյթ փորձութեանց փրկեալ ազատեցէ ի իննամս իւր պահելով պահպանեցէ: Ամէն: ՌՄԾԹ» (տե՛ս ՄՄ, ձև. 2622, թ. 81բ-82ա):

¹⁸⁹ Յովհաննէս Արքայապետի, Պատմութիւն Սեբաստիոյ: Աշխատ. Բ. Լ. Չուգասգյանի, Եր., 1974, էջ 78-79:

Օսմանյան կայսրության մեջ հայ ժողովրդի իրավա-քաղաքական անպաշտպան կարգավիճակի մասին օտարազգիները ոչ միայն լավատեղյակ էին¹⁹⁰, այլև իրենք ևս երբեմն հայտնվում էին նմանատիպ վիճակում: Ըստ Պ. Ա. Լևաշովի նկարագրության, ուս-թուրքական պատերազմի ընթացքում Կ. Պոլսից ուղղված կատու ուղևորվող զորքերի հետ մահմեդական դրոշմը ուղարկելու արարողության ժամանակ «ծեծված և խեղանդամված են ոչ քիչ քրիստոնյաներ, ընդ որում տուժել է նաև Կայսերական դեսպանորդը իր ողջ ընտանիքով և շքախմբով»¹⁹¹:

ԺԸ. դարի երկրորդ կեսին Արևմտյան Հայաստանում տիրող իրավիճակի մասին հավաստի տեղեկություններ են արձանագրված հայկական մանր ժամանակագրությունների մեջ, որոնք կազմված լինելով իրադարձություններին ակնատես ու մասնակից զործիչների կողմից, որևէ չափ իրենց արժանահավատությանը չեն զիջում վավերագրական սկզբնաղբյուրներին: Նման տեղական բնույթի ժամանակագրություններից են Անանուն Վանեցու¹⁹², Հակոբ Տիվրիկցու¹⁹³, Մարտիրոս Խալիֆայի¹⁹⁴, Հովհ. Սեբաստացու¹⁹⁵, Ուրախ Գրիգորի, Էրզրումի բնակիչ Տեր Հարություն քահանայի¹⁹⁶, կարսեցի Ավետիս քահանայի¹⁹⁷ և այլոց երկերն ու գրառումները:

¹⁹⁰ Արևմտահայոց գաղթից հետո ուսական իշխանությունները հայերի յուրաքանչյուր բողոքին ի պատասխան հիշեցնում և հակադրում էին նրանց ունեցած կարգավիճակը Օսմանյան տիրապետության պայմաններում: Բնութագրական է այդ առումով գեն.-լեյտ. Պանկրատևի պատասխանը Թիֆլիսում Ախալցխայի հայոց ներկայացուցիչներ Կարապետ արքեպիսկոպոսին, Գրիգոր Բեշիշովյանին, Գևորգ Բաղդասարյանին և այլոց, 1832 թ. հունիսին. «Армяне-переселенцы хорошо знают те права, которыми они пользовались у турок: нельзя было выдумать мер стеснительных, какие они претерпевали: они безгласно предавали свою участь и веру свою власти и суду мусульман, но теперь, пользуясь вполне свободой и защитой под покровительством Российской империи, спрашивают для себя национального судилища.» (ШИА Грузин, ф. 2, оп. 1, 1832, л. 4488, л. 60):

¹⁹¹ Путешествия по Востоку в эпоху Екатерины II. М., 1995, с. 29.

¹⁹² «Մանր ժամանակագրություններ XIII – XVIII դդ.», I, Կազմեց Վ. Ա. Հակոբյան, Եր., 1951, էջ 378-382:

¹⁹³ «Մանր ժամանակագրություններ XIII – XVIII դդ.», II, Կազմեց Վ. Հակոբյան, Եր., 1956, էջ 447-465:

¹⁹⁴ «Մանր ժամանակագրություններ XIII – XVIII դդ.», Հ. II, էջ 479-496.

¹⁹⁵ Յովիաննես Արաստացի, Պատմութիւն Սեբաստիոյ, Աշխատ. Բ. Լ. Զուգաս-դյանի, Եր., 1974:

¹⁹⁶ Պ. Ա. Չորսնյան, Հայաստանի պատմության նորահայտ «Ժամանակագրություն», – ՊՅԸ, 1997, թիվ 1, էջ 241-248; թիվ 2, էջ 269-284:

¹⁹⁷ Ավետիս քահանայ, Ժամանակագրություն, Քաղերություն, բազմամիլիոն ժառանգություն. Կազմողներ՝ Ա. Ղազիյան, Ա. Բալյանթարյան, Եր., 2001. («Վավերագրեր-2»):

Օսմանյան ժառանգություն էր բաժին ընկել Սիմեոն Երևանցուն: Հայոց եկեղեցու միասնականությունը պահպանելու համար նա պետք է պայքար մղեր ոչ միայն կաթոլիկ քարոզչության, կամ Արցախի թեմում առաջացած գոթությունները կասեցնելու, այլև Արևմտյան Հայաստանում քուրդ բեկերի հետ զործակցության մեջ մտած հայ հոգևորականությանը դադարեցնելու: Սիմեոն Երևանցու Դիւանում արձանագրված փաստերից հայտնի է դառնում, որ Աբրահամ ոմն «սեպարտիստ» «բունացալ ի կողմանս Մոկաց գաւառին զթիկունս յայլազգիս տալով, ոչ հնազանդէր նմա (իմա՛) Աղթամարի կաթողիկոսին – Պ. Ջ.) և բռնութեամբ և ուժով քրտաց պարունին, ժողովէր գտեղոյն գառաջնորդական և զնուիրակական հասս և զիրաւունս, և տար բէկին, և ինքն ևս մսխէր: Իսկ կաթողիկոսն ոչ կարէր առաքել անդ զնուիրակ յաչէ նորին և ոչ տեսանէր անտի գարդէնս ինչ: Եւ յորժամ պակասէր մեռոն ի վիճակէն յայնմանէ, անօրէնն յուսադէր զնոսս, թէ ես ի սուրբ էջմիածնէ գմեռոն և զնուիրակ բերել տալոց եմ, և յԱղթամարու հաննալ՝ ընդ իշխանութեամբ նորին առնելոց եմ զձեզ: Եւ թէպէտ այսու գնոսս խարէր, այլ հաստատեալ էր ընդ հագարու քրտաց խանին զխորհուրդ, զի լինիցի ինքն այնմ կողմանն ինքնազուրկ կաթողիկոս և ծառայիցէ նմա զամենայն աւուրս կենաց իւրոց»¹⁹⁸:

Արզուլա խանը նամակ է հղում Սիմեոն կաթողիկոսին, խնդրելով թույլ տալ վերոհիշյալ Աբրահամին ու ոմն Մարգարի իրականացնել իրենց մտադրությունը՝ «ցուցանելով զխոտելի իմն սնտոի պատճառ, թէ երկիրս այս տարակաց է ի յԱթմարու և անյաջող է անտի առ մեզ գալն, և երկրիս Հայքն մնան առանց մեռոնի: Վասնորոյ կամիմք, զի մի յերկուց սեպարտաց աստի լիցի առանձինն յերկրիս մերում կաթողիկոս, զի մի ևս կարօտեցին Հայքն մեր մեռոնի»¹⁹⁹: Սիմեոն Երևանցին, բնականաբար, մերժում է պառակտիչ նման քայլը:

Էջմիածնի միաբան Գրիգոր վարդապետ Եղվարդեցու նկարագրությամբ «...ի յայսմ ժամանակի (1769 թ.) ի մէջ Կարսայ և յերևանու քուրդ մի զօռայ եղև, որ անուն նորա կոչիւր Ալի-բեկ, սա զբազում վնասս գործէր աստի և անտի և ոչ թողուր հանգարախլ և խաղաղ մնալ զճանապարհ և զկարաւան: Վասն որոյ Կարսայ փաշայն իւր մեծամեծօքն և քիւրդ Սուլեյմանն և Եաղուպ աղայն և այլք զրեցին առ արքայն Վրաց Հերակլէ, զի

¹⁹⁸ Դիւան հայոց պատմութեան, գիրք Գ. (Սիմեոն կաթողիկոսի Յիշատակարանը), էջ 116-117:

¹⁹⁹ Նույն տեղում, էջ 117:

զայց և բառնայցէ վայն ի միջոյ: Վասնորոյ և յանկարծակի եկն Հերակ-
լեան բազում զօրօք յերկիրն Կարսայ, և իմացեալ Քրդին՝ փախեալ յետ և
մնացեալ ինչք առին, և ոչ նոքօք լիացան, այլ պատճառաւ քրդին զերեցին
զբազում գիւղորայս խղճալի ազգին Հայոց և կոտորեցին: Որ և անդ էր տե-
սանել զճեղուճն արեան և զհատաչուճն մարց և որդուց: Եւ զձայն զօրացն,
զի որպէս բաժանումն աշտարակի էր, ոչ եթէ վասն բազմութեան զօրացն,
այլ վասն այլ և այլ լեզուացն, որք էին նախ Վրացիք, Չարբեզ, Օս, Թուշ,
Փշաւ, Խնեսուր, Լազկի, Տաճիկ և այլն պէսպէս միլլէթ շատք: Արքայն Հե-
րակլ այնքան զօրն ընդ ձեռամբ իւր առնելով հնազանդութեամբ, զամե-
նայն զերինս դարձոյց, և յաւարն՝ ոչ, և ինքն դարձաւ դէպ յերկիրս մեր Ե-
րևան»²⁰⁰:

Կարսի փաշայի կողմից Հերակլին դիմելու փաստը պատահական էր:
Օսմանյան կայսրութեան մեջ ԺԸ դարակներ առանձնապէս հատկանշվում է կենտրոնախույս դիրքորոշում որպէզբաժնի նահանգապետ-փաշաների միջև տեղի ունեցող անընդհատ բախումներով: Այդ փաստը արձանագրվել է բազմաթիվ սկզբնաղբյուրներում²⁰¹: Բախումները չղաղարեցին անգամ 1768-1774 թթ. ընթացող առաջնութեամբ պատերազմի ժամանակ: Պատե-
րազմը որոշակի հույսեր էր արթնացրել հպատակ ժողովուրդների մոտ, ու-
րոնք հնարավորինս փորձում էին օժանդակել ռուսական կողմին: Պատե-
րազմի ընթացքում էր նաև, որ Մոսկոս Սարաֆյանը հատուկ գրութեամբ
դիմեց Ռուսաստանի արտաքին գործոց կոլեգիային՝ առաջարկելով պատե-
րազմական գործողությունների զարգացումը Օսմանյան պետության դեմ
ուղղորդել Կովկասյան ճակատով դեպի Հայաստան, հուսադրելով առավել
մեծ հաջողությունների գրանցում բնակչության ըստ ամենայնի օժանդա-
կության պայմաններում: Այդ առաջարկը համահունչ էր ռուսական ծրագ-
րերին և Ռուսաստանը, իրոք, բանակ ուղարկեց Արևմտյան Վրաստան, որը
մինչ այդ էլ պատերազմական վիճակի մեջ էր Օսմանյան կայսրութեան դեմ
Սողոմոն 1-ին թագավորի գլխավորությամբ: Վրաց իշխանությունների հետ
ռուսական հրամանատարությունն արձանագրությունների պայմաննե-
րում, սակայն, լուրջ հաջողություններ չարձանագրվեցին և ռուսական բա-

²⁰⁰ ՄՄ, Մագիստրոսի թղթապանակ, թիվ 133, էջ 1769: Հրատարակումը տե՛ս Մ. Կ. Զուլպլան, Արևմտյան Հայաստանը XVI-XVIII դդ., Եր., 1980, էջ 118-119:
²⁰¹ Այդ թիվում նաև Օսմանյան պետության տարածքով Երուսաղեմ ճանապարհոր-
դած Տիմոթեոս Գարաշվիլին: Տե՛ս Պ. Չոբանյան, Տիմոթեոս Գարաշվիլու «Ճանա-
պարհորդության» նրա հայտ տարբերակը, ՊԲՀ, 1977, թիվ 4 (79), էջ 232-236:

նակը ստիպված էր հո քաշվել Վրաստանից²⁰²: Ստորագրված Քյուչուկ
Կայնարջի պայմանագրերը (1774 թ.) թեթևություն չբերեց Օսմանյան կայ-
սրութեան քրիստոնյա բնակչության վիճակի մեջ, չնայած պայմանագրի
մեջ նման պահանջով հոգիվածի գոյությունը: «ԽՄԻԹ (1775) ամին եւս ա-
ռաւել ոչ գոյ երբէք հանդարտութիւն... և ի վարնան եկեալ, ի յարեմտից
կողմանէն, Սախըր փաշան մի երեք թուղթով բազում էսքերով և շատ մա-
լով կեցեալ ի քաղաքն մեր հօթ օր, շատ խարճ և շատ մասրաֆ եղեալ վասն
բազում զօրացն. և զապիթ քաղաքին յետոյ ժողովեալ զամենայն գունդս
իւր բաշխ արարեալ զպարտսն քաղաքին, յետոյ ժողովեալ քրիստոնէից ինը
քեսէ զուրուշ պարտք, որ թէ և թէրով 130 տուն էին, այսմ տարուջ ոմանք
տոււին 150 զուրուշ, ոմանք տոււին 100 զուրուշ, և ես՝ տառապեալս, տուի
70 զուրուշ, այսպիս զամենեքեան բռնադատութեամբ պէս պէս նեղու-
թեամբ հատուցին զպարտս իւրեանց, ոմանք պարտեղան եղեալ գնացին ի
յօտար երկիր, և ոմանք չքաւորեալ փախեան ի յօթեանէն իւրեանց»²⁰³:

«Սուլթան Արդուլ Համիդ Առաջինի ժամանակ- գրում է Մ. Զուլպլա-
յնը,- Արևմտյան Հայաստանի հարավային քրդաբնակ շրջաններում
բռնկվեց մի մեծ ապստամբություն, որը ղեկավարում էր իրեն «Մահդի»
հորջորջած, նախկինում իտալացի կաթողիկ մի կրոնավոր: Նա իր առաջ
նպատակ էր դրել զավթել ամբողջ Փոքր Ասիան: 1785 թ. քրդական զորքե-
րի զլուխ անցած նա գրավում է Արևմտյան Հայաստանի մի մասը, ներառ-
յալ Կարինը (էրզրումը): Ընդունելով Մանսուր («Հաղթական») անունը,
նա արշավանք է ձեռնարկում նաև Սեբաստիայի, Թոխատի և Զմյուռնիայի
վրա: Կառավարությունը մեծ դժվարություններ հաջողվում է ճնշել ապստա-
մությունը»²⁰⁴:

Նման կարգի անհնազանդություններն ու ապստամբությունները հա-
ճախ հրահրվում և հրահանգավորվում էին Հենց կենտրոնական իշխանութ-
յունների կողմից, որոնք պետական զանձարանը լցնելու նպատակով ա-
նընդամենը փոփոխելով նահանգապետ-փաշաներին, նրանց կառավարման

²⁰² Այդ իրադարձությունների մասին մանրամասն տե՛ս Վ. Մաճարածի կազմած
վավերագրերի ժողովածուն. Յ. Յաջարածյ. “Յաճաղըծ XVIII եայթյոնե յետոյ
Եսեցցրոն Բոյեյո-Յայարոյցլոն Երտոյրտոմոն օնճորոնեաճոյն”, Եսթո-
լո III, Եայթյո I, Բոյեյո-տոյրթյոն օմո 1768-1774 Կլըծմո ճա Եայարո-
յցլո, տժ., 1988.
²⁰³ «Մանր ժամանակագրություններ», հ. 2, էջ 456: Հմտ. Մ. Կ. Զուլպլան,
Արևմտյան Հայաստանը XVI-XVIII դդ., Եր., 1980, էջ 125:
²⁰⁴ Մ. Կ. Զուլպլան, Նշվ. աշխ., էջ 125:

վայրերն էին ուղարկում Կ. Պոլսում վճարած գումարները տեղերում հավաքագրելու պայմանով ու հանձնարարություններով: Կենտրոնական իշխանությունը իրականում լիովին տեղյակ ու իրազեկ էր նահանգներում տիրող իրավիճակին: 1787-1791 թթ. պատերազմը թեև ընթացավ Հայաստանի սահմաններից հեռու, սակայն և մեծ աղետներ բերեց հայերին: Հայ բնակչությանը ևս հավաքագրվեցին զինվորներ, իսկ նրանց հանդերձավորման պարտավորությունը դրվեց հինգ հազար հայ ծխերի վրա²⁰⁵:

18-րդ դարի երկրորդ կեսին ու հատկապես նրա վերջին քառորդին Արևմտյան Հայաստանի փառաբանություններից առանձնապես նշանակալի դեր էին խաղում Դիարբեքլի, Էրզրումի, Տրապիզոնի, Ախալցխայի, Կարսի, և Վանի փառաբանությունները: Ինչպես ամբողջ Օսմանյան կայսրության մեջ, այնպես էլ Արևմտյան Հայաստանում ժողովրդի տնտեսական վիճակը առավել վատթարացավ Յոթնամյա պատերազմի (1756-1763 թթ.), իսկ այնուհետև 1768-1774 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ: 1758 թ. տարածված սովի հետևանքները սոսկալի ավերածություններ գործեցին Արևմտյան Հայաստանում²⁰⁶: Այդ իրավիճակում բազմապատկեր կենտրոնական իշխանության նկատմամբ անհնազանդությունները ինչպես եզրագոտում, Միջագետքում, այնպես էլ Փոքր Ասիայի մի շարք վայրերում: Մեծ չափով կրճատվեց բնակչության քանակը մահացություններից և ուժեղացած արտագաղթից: 1768-74 թթ. պատերազմը ավելի կազմալուծեց կենտրոնական իշխանության դիրքերը և շատ նահանգներում կառավարիչ փառանքները դադարեցին ենթարկվել կենտրոնական իշխանությանը²⁰⁷: Արդուլ Համիդ Առաջին (1775-1791) և Սելիմ Երրորդ (1791-1808) սուլթանների կողմից 1775-1800 թ. միայն Էրզրումում նշանակվել և պաշտոնանկ է արվել 24 փառա²⁰⁸:

Ըստ է. Կոնուկչուի կազմած ցանկի, նրանց հերթականությունը հետևյալն է.

1. Կասապբաշի Ալի փառա 1775
2. Ջանիկցի Հաջի Ալի փառա 1776

²⁰⁵ Մ. Կ. Զուլպյան, *Նշվ. աշխ.*, էջ 129:

²⁰⁶ Մ. Կ. Զուլպյան, *Նշվ. աշխ.*, էջ 280-281:

²⁰⁷ Մ. Կ. Զուլպյան, *Նշված աշխ.*, էջ 282:

²⁰⁸ Enver Komükcü, Sıcukluklardan cumhuriyete Erzurum, Ankara, 1992, s. 226-250. Գրախոս. տե՛ս Մ. Զուլպյան, *Էնվեր Կոնուկչու, Էրզրումը սելջուկներից մինչև Հանրապետություն*.- ՊՔՀ, 1997, 1, էջ 265-268:

3. Իբրահիմ փառա 1777
4. Հալիլ փառա 1778
5. Հաջի Ալիփառազադե Միկդադ 1779
6. Դադոսանցի Հաջի Ալի փառա 1779
7. Իբրահիմ փառա 1780
8. Իզզեթ Մեհմեդ փառա 1780
9. Մուստաֆա փառա 1781
10. Դանաչի Մեհմեդ փառա 1782
11. Վանեցի Թիմուր փառա 1783
12. Մեհմեդ փառա 1783
13. Սուլեյման փառա 1783
14. Ջանիկցի Հաջի Ալի փառա 1783
15. Բատալ Հյուսեին փառա 1784
16. Մուստաֆա փառա 1786
17. Սեիդ Ահմեդ փառա 1787
18. Արդուլահ փառա 1789
19. Ֆեյյի Սուլեյման փառա 1790
20. Սեիդ Ահմեդ փառա 1791
21. Յուսուֆ Զիյա փառա 1794
22. Սեյիդ Ահմեդ փառա 1797
23. Ալա Էդդին փառա 1799
24. Բատալ Հուսեին փառա 1800
25. Արդուրահման փառա 1801

Էրզրումի նշված ժամանակաշրջանի իրադարձությունների մանրամասն նկարագրությունը պահպանվել է ախանաթես տարեգիր Տեր Հարությունի կազմած «Ժամանակագրության» մեջ, որտեղ թվարկվում են այն պայքարի բազում դրվագները, որ ուղեկցում էին այդ փոփոխություններին: Դրանք ընթացել են արյունալի ընդհարումներով, որոնց ժամանակ մեծապես տուժել է խաղաղ բնակչությունը և միայն մեկ դեպքում է, որ «Ժամանակագրության» մեջ արձանագրված է, թե նորընտիր փառայի պաշտոնավարությունը (որը տեղի մեկ տարուց էլ պակաս) «Հայոց ազգին լավ էր»²⁰⁹: Տեր Հարությունի «Ժամանակագրության» մեջ զբանցված որոշ

²⁰⁹ Հայաստանի պատմության նորահայտ «Ժամանակագրություն»,- ՊՔՀ, 1997, թ. 1, էջ 244:

փաստերից կարելի է կատարել նաև այն հետևությունը, թե էրզրուժի նահանգի հայ բնակչությունը ամբողջությամբ չէ, որ գտնվում էր լիակատար անպաշտպան ու անզոր վիճակում, կային առանձին վայրեր, գյուղախմբեր, որոնք կարողանում էին ինքնապաշտպանությունը գիմազրավել իրենց ներքին գործերին Օսմանյան միջամտություններից: Ավիլին, պարզվում է, նրանք որոշ չափով դուրս էին Օսմանյան վերահսկողությունից և իրենց մեջ ապաստան էին տալիս անգամ Օսմանյան իշխանությունների հետապնդումներից խույս տվող թուրք գործիչներին ևս: Թեև մեզ հետաքրքրող վիկայությունը Տեր Հարությունի «Ժամանակագրության» մեջ գրանցված է 1805 թվականի իրադարձությունների առիթով, սակայն կասկածից վեր է, որ այդ վերաբերում է նաև նախորդ ժամանակաշրջանին և նշանակում է, թե նշված վիճակը շարունակվել ու գոյություն է ունեցել նաև 19-րդ դարի առաջին տասնամյակներին ևս: Այսպես, Տեր Հարությունը հաղորդում է, թե 1805 թ. արքունական հրամանով էրզրուժի նոր նշանակված փաշան երբ փորձում էր հաշվհարգար տեսնել անհնազանդ ու Տրապիզոնում ապաստանած Մահմուդ փաշայի հետ, «տարապակի»²¹⁰ մեկն գնաց ծածուկ Մահմուտ փաշին՝ քեզի յրսպանը պիտի, պապըտ, հայրըտ փախան Հայոց մեջն, յետոյ կան, դուռն ևս գնայ: Նայ ևս դնաց Հային մեջըն»²¹¹: Ամենայն հավանականությամբ, «Հային» անվան տակ նկատի է առնվում Համշենը և Համշենահայությունը, որոնց անհնազանդության ու ինքնավարության մասին գոյություն ունեն նաև այլ վիկայություններ²¹²:

Մեզ քիչ բան է հայտնի 18-րդ դարի վերջին քառորդին Հայաստանում Օսմանյան իշխանությունների անօրինականությունների դեմ հայ բնակչության մղած պայքարի մասին: Ուստի մեծ արժեք ունի նաև այն հաղորդումը, որ պահպանվել է այս ժամանակագրության մեջ: Այստեղ պատմվում է երզնկացի Մըթոյի (Մարտիրոս անվան տարբերակը) անհաշտ պայքարի մասին, որի ղլխի համար 1793 թ. փետրվարի 16-ին սուլթանական Փերման էր եկել: Ի կատարումն ստացված Փերմանի, էրզրուժի փաշան, ինչպես պատմում է Տեր Հարությունը, "քեհին հետ շատ յասկար զրկեց

²¹⁰ Դերերեյ:

²¹¹ "Հայաստանի պատմության նորահայտ «Ժամանակագրություն»", - ՊԲՀ, 1997, թ. 2, էջ 273:

²¹² Լ. Սաչիկյան, Էջեր Համշինահայ պատմությունից, - «Բանբեր Երևանի համալսարանի», 1969, թիվ 2, էջ 135-139: Բ. Գ. Թովաթյան, Էջեր Համշենահայերի XVII-XVIII դարերի պատմությունից, - ՊԲՀ, 1972, թիվ 4, էջ 133-136:

թէրճնու (Դերջանի) Մուղտատ բակին, դնացին գուղն կօխեցին"²¹³: Մըթոն, սակայն, կարողանում է խույս տալ (բնագրում՝ փախել) և զինակիցներին հետ ամբանալ ամրոցաշտարակում: Օսմանյան զորքերի ներկայացուցիչը՝ "ղափուջի պաշին" Մըթոյի հետ փորձում է բանակցություններով ու կաշառքով լուծել հարցերը և նրան առաջարկվում է հինգ հարյուր քիսայ թուրքական դրամ: Տեր Հարությունի համառոտ զբանցումով, Մըթոն "չի լինիլ՝ սոաց, (թուրքերը) գնացին տեղերին" (իմա ելման դիրքերը): Մեկամսյա պաշարումից հետո, այնուամենայնիվ, թուրքերին հաջողվում է քրդերին միջոցով, որոնց հայերը հավանաբար վստահել էին, խորամանկությամբ տիրել ամրոցին՝ "Յիսուսն Քուրթ տերեց (ղրեց) վերի քարըն Մուղտատ բակըն, Քրդթին հետ մուշավարայ էրաւ, յերիշ էրին՝ դուլան առին, հինք մարդ սպանըցին, Մըթոն եղբարն, տղաքն սպանըցին, մինչ ի յընտանիքն մերկացուցին, շատ յըռքավայրութիւն արին, մարտի 15ին դըլըխներն բերին": Տեր Հարությունի արձանագրած այս փաստը մեզ հայտնի առաջին հիշատակությունն է Օսմանյան իշխանությունների կողմից քրդերին հայ ազատագրական պայքարի դեմ օգտագործելու մասին: Հայ բնակչության «ըմբոստացման» օրինակներ են արձանագրվել նաև եվրոպացի ճանապարհորդների և դիվանագետների կողմից: Ըստ Ա. Ժորբերի, Խնուսի ավազանի հայկական Քոշլի (Cousli) գյուղ իրենց այցելության ժամանակ, հակառակ «Յուսուֆ փաշայի հրամաններին, համառորեն մերժեցին մեզ ապաստան տալ, եթե չհամաձայնեինք վարձատրել նրանց: Առաջին անգամն էր, որ պատահում էինք քրիստոնյաների, որոնք թուրքերին ընդդիմադրություն էին ցույց տալիս, սակայն Հայաստանի այս մասում, կառավարության իշխանությունը համարյա թե չէին է: Գյուղացիները զինված են և պատրաստ կռվելու քրդերի հարձակումների դեմ, որոնց հետ հաճախակի կռիվներ են մղում և չեն վախենում ոչ սպառնալիքից, ոչ նախատիքից և ոչ էլ մահից»²¹⁴:

²¹³ Իմա՝ շրջապատեցին գյուղը:

²¹⁴ Հովն. Հակոբյան. Ուղեգրություններ. հ. 2, ԺԹ դարի առաջին քսանամյակ (1800-1820), Եր., 1934, էջ 208: Մ. Կ. Զովաթյան. Հայ ժողովրդի պատմության հարցերը ըստ եվրոպացի հեղինակների. XIII-XVIII դարեր. Գիրք Ա. Քաղաքական պատմություն. Եր., 1990, էջ 248:

Ըստ Ֆերիեր-Սովբեֆի, Բայազետի փաշան Հայերին ընդգրկում էր գինվորական ծառայության մեջ, որը «բացառիկ երևույթ էր կայսրության մեջ»²¹⁵ :

Օսմանյան կայսրության տնտեսական ու քաղաքական փիճակը, ինչպես ասվեց, առավել ծանրացավ 1787-1791 թթ. ռուսթուրքական պատերազմի ընթացքում, որի արդյունքում Օսմանյան պետությունը ստիպված եղավ Ռուսաստանին զիջել Հյուսիսային մերձսևծովյան տարածքները: Բնակչությունը, սակայն, միշտ չէ, որ հնազանդությունը էր կրում տնտեսական ու սոցիալական ճնշումները Օսմանյան կայսրության նաև այլ քաղաքներում: 1781 թ., ըստ Սերաստիայի Ս. Նշան վանքի միաբան և Սերաստիայի առաջնորդ Հովհաննես Սերաստացու վկայության, «սաստիկ խռովություն անկառ ի մէջ այլազգեաց, որք հանեալ զսանճախն և միաբանեալք այրեցին զատարանս քաղաքապետին, որ կոչիւր Սարողլի: ...Եւ յետ Բ. (2) ամաց (ՌՄԼԹ.-1790) եկն իշխանութեամբ ի քաղաքս Սերաստիա Թուրուն-ճօղլի կոչեցեալ բղեչին և սկսաւ նեղել զքաղաքացիսն Հարկապահանջութեամբ, վասն որոյ միաբանեալ քաղաքացւոցն՝ ընդդիմացան նմա և, պատերազմեալ, արտաքսեցին ի քաղաքէն... և բղեչին գնացեալ նստաւ ի Բոզնիկ՝ օգոստոսի 10 և մնաց անդ զաւուրս իրր 60: Եւ երկուցեալ քաղաքացւոցն, թէ զուցէ յանկարծ արձակեցցի ի վերայ, վասն որոյ մարտիոց չինեալ պահէին զցայդ և զցերեկ»²¹⁶: Երբեմն տեղի էին ունենում Հայ և մահաճեղովան բնակչության համատեղ ելույթներ փաշաների անիրավությունների դեմ և հասնում Հաջողությունների կոնկրետ անձնավորությունների նկատմամբ: Բնակչությունը, սակայն, պարտավորություն ուներ օթևանով ապահովելու զորքին. «Յաջորդ ամին (ՌՄԼԹ-1791) յաւուր Հինգշաբթին եկն Սերաստիա անթիւ զօրօք Չափանօղլի կոչեցեալ Սուլէման պէկն, առ ի վարել զսպայակոյտ զօր քաղաքիս ի պատերազմ, և օթեցուցին զօրս նորին ի բնակութիւնս Հայոց և այլազգեաց և յուրով նեղութիւն և վիշտս Հասուցին սզգլիս մերոյ, զի դարձաւ տօն զատկին նոցա ի սուդ, և յետ 6 աւուր դնացին»²¹⁷:

²¹⁵ Մ. Կ. Զովալյան. Հայ ժողովրդի պատմության հարցերը ըստ եվրոպացի հեղինակների. XIII-XVIII դարեր, էջ 248: Մինչև Ֆերիեր Սովբեֆի առաքելությունը, Ֆրանսիան արդեն արձագանքել էր 1783 թ. Գեորգիայի դաշնագրի կնքմանը (տե՛ս լատիշերէն լեզուի մասին, Գ. 9, թ. 237-240, 242-243):

²¹⁶ Յովհաննէս Սերաստացի, Պատմութիւն Սերաստիոյ, էջ 103:

²¹⁷ Յովհաննէս Սերաստացի, Պատմութիւն Սերաստիոյ, էջ 103:

Հովհաննես Սերաստացու աշխատության մեջ թվարկված են Հետևյալ «բղեչիլ» փաշաները, որոնք նշանակվել են Սերաստիայում 1775-1800 թթ.

- 1774 թ. Զառաղյուր Սայիա պէկ
- 1775 թ. Սայիտ պէկ
- 1781^o Զառաղյուր Ռէճէպ պէկ
- 1790 թ. Թուրունճօղլի բղեչիլ
- 1797 թ. Սէյիա Ահմէտ բղեչիլ
- 1798 թ. Իւսուֆ բղեչիլ
- 1798 թ. Զառաղյուր Ռէճէպ պէկ
- 1802 թ. փետրվարի 3 Ուսէին Ֆնտիս բղեչիլ

Այս վերջինիս մասին Հովհաննես Սերաստացին գրում է. «Յայսմ ամի (ՌՄՄԱ.-1802) փետրվարի 3, ընկալաւ զիշխանութիւն քաղաքիս Ուսէին բղեչին Յնտիս կոչեցեալ և զի վաղուց յետէ ի հեռուստ անտի Հնէէր համբաւ անգութ և մարդախողիտոյ բարուց նորին, վասն որոյ միաբանեալ քաղաքացւոցն զինեցան ընդդէմ նմին Հայք և այլազգիք և ոչ թողին նմա մտանել ի քաղաքն, և, մինչդեռ պաղատէր առնուլ զքաղաքն, ամենից զիմաց դանգատաւորք յորդորեալք՝ ի մեծն Պօլիս զուսկն արքայի զրդէին, յորմէ ցատուցեալ արքայի՝ Հրաման էՀան հատանել զզլուիս նորա, վասն որոյ զօր բազում ժողովեալ՝ պաշարեցին զնա ի Խան գիւղն և յետ իբրև Բ(2) ամսոց հատին զզլուիս նորա ապրիլի 12»²¹⁸:

Արևմտյան Հայաստանում ժողովրդական կացության վրա որոշակի ազդեցություն էր թողնում նաև եկեղեցա-դավանական հակամարտությունը տարբեր դավանանքների ազդեցության ոլորտ ընդգրկվող Հայ բնակչության միջև: Ծարունակվում էր կաթոլիկ դավանանքի տարածումը բնակչության մեջ: Այդ Հատկապես ակնհայտ էր Ախալցխայի փաշայության մեջ գտնվող ոչ միայն զուտ Հայաբնակ գյուղերում, այլև խառը բնակչություն ունեցող Ախալցխա քաղաքում²¹⁹:

²¹⁸ Յովհաննէս Սերաստացի, Պատմութիւն Սերաստիոյ, էջ 108:
²¹⁹ Ժ. տաճրահայտ, օնթուրոս յատուկութեան լատիշերէն Մորոն, Երևան, 1901, թ. 468-69. Տե՛ս նաև Ա. Մելքոնյան, Զավաքը 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին քառորդին, Եր., 2003, էջ 95-103:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԳ

ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 ՀԱՅ ԲՆԱԿԶՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

Վրաստանի¹ հետ Հայաստանը ունեցել է ամենատերտ ու բազմապիսի փոխհարաբերություններ, իսկ հայ բնակչությունը Վրաստանում՝ բազմադարյա ու անընդմեջ առկայություն: Այդ պայմանավորված էր ինչպես Հայաստանի քաղաքական կացությունը, այնպես և ուշ միջնադարում հայկական մի շարք դավառների Վրաստանի կազմում գտնվելու փաստով:

Որքանով հայկական գաղթօջախները պետականություն առկայություն պայմաններում կարող են դառնալ այս կամ այն երկրի հետ փոխհարաբերություններում Հայաստանի համար հենակետ, կամ ստեղծել բարենպաստ պայմաններ հարաբերությունների սերտացման համար, նույնքանով պետականության բացակայության պայմաններում շատ երկրներում, որոնք որևէ ձևով հավակնություն ունեին Հայաստանի և կամ հայոց հոգևոր կենտրոն էջմիածնի նկատմամբ, իրենց երկրներում ստեղծված հայկական գաղթօջախները դարձնում էին պատանդ և կամ լծակ՝ Հայաստանում իրենց քաղաքականությունը պարտադրելու կամ իրականացնելու համար: Այդ առումով Վրաստանը ևս բացառություն չէր: Վրաստանում հայ բնակչության կարգավիճակը պայմանավորվում և ձևավորվում էր սոցիալական հարաբերությունների մի ոլորտում, որը մեծապես տարբերվում էր Հայաստանում ու հարակից այլ երկրներում տիրող իրավիճակից: Ճորտատիրական հարաբերությունների ըացարձակ գերակայությունը թեկադրում-պարտադրում էր հայ բնակչությանը ընդգրկվելու հարաբերությունների այդ ոլորտ և ներկայանալու որպես վրաց թագավորի, վրաց եկեղեցու, հա-

¹ Վրաստան անվանումը ստորև ամենուրեք, եթե չի կատարված լրացուցիչ վերապահում, գործածվում է Քարթլ-Կախեթի (արևելավրացական) թագավորության նշանակման համար, որը XVIII դարի երկրորդ կեսին միավորված էր Հերակլ II թագավորի իշխանության ներքո: Վավերագրերում Վրաստան եզրը գործածվում էր Հիմնականում որպես միայն Քարթլիի հայերեն անվանում: Վրացերենում ևս Վրաստան եզրը կազմված է քարթլի/վիլի (վրացի) անվանումից: Սա-քարթվել-ո:

Ըստ 552-րդ հոդվածի «Հայերը ոչ մի դեպքում չեն լինում մղիվանքեզ, քանզի նրանք վաճառական ժողովուրդ են»⁹: Նույն հիմնավորումով Հայոց նկատմամբ արգելքը ընդգծվում է նաև մոուրավների պաշտոնում Հայագրի ներկայացուցիչների ընտրության համար. «Մուուրավի պաշտոնները բաշխում է անձամբ թագավորը (հոդվ. 650)»: «Մուուրավի պաշտոնում մշտապես ընտրվում են վրացական առաջնային իշխաններից և ազնվականներից: Հայագրի ընտանիքները, ինչ ծագման էլ նրանք լինեն, այս պաշտոնում անդ ունենալ չեն կարող, քանզի նրանց ազգը վաղընջական ժամանակներից Վրաստանում համարվում է ոչ ավելին, քան միայն առևտրական և, ժողովրդի մեջ արմատացած կարծիքով, չպիտի մամակցի հասարակական պաշտոնների վարմանը»¹⁰: Ա. Ռոգավան արձանագրելով, թե նախորդ օրենսդրություններում ու իրավական հուշարձաններում բացակայում են այդ հոդվածները, գտնում է, թե «կասկածից վեր է, որ այդ հոդվածները մտցված են Հերակլի կողմից կազմված և դեռևս մեզ համար անհայտ "Նոր իրավունքի" օրինակի հիման վրա: Դավիթ Արքայազնի ձեռագրով 552-րդ հոդվածի լուսանցքում գրված է. "այգպես է բնագրում"»¹¹:

Դավիթ Արքայազնի «Տեսութան» այդ հոդվածները նկատի ունենալով, Ծ. Մեսխիան նման վերաբերմունքը Հայոց նկատմամբ բացատրում է դասակարգային պայքարի առկայությամբ, թեև ստիպված է արձանագրել նաև, թե նման վերաբերմունքը դրսևորված է միայն Հայոց նկատմամբ¹²: Բնավ չթերազնահատելով Վրաստանում սոցիալական պայքարի առկայությունը, նման վերաբերմունքի ձևավորման գործում նրա դերն ու նշանակությունը, անհրաժեշտ ենք գտնում ընդգծել նաև, որ այդ վերաբեր-

մունքը տարածվում էր հայագրի սոցիալական բոլոր շերտերի վրա՝ ընդգրկելով Հայ Հասարակությունը իր ամբողջության մեջ՝ զննելով այն ստորադրյալ իրավական կարգավիճակում: Անշուշտ առկա էր նաև ավատատերերի և թագավորական իշխանության միջև պայքար, որով և կարող էր բացատրվել Հայոց, որպես թագավորական իշխանության հենարանի, նկատմամբ վերաբերմունքը, որը ստանում էր նաև ազգային կրթության:

832-րդ հոդվածով արձանագրվում է, թե «վաճառականական գործունեությունը իր առևտրական շրջանառությամբ մյուսներից առավել կարող է ձեռք բերել կապիտալներ և քաղաքներում ավելի մեծ օգուտներ, և ամբողջը, ժառանգների բացակայության դեպքում, ըստ պետական կարգի, պատկանում է թագավորին: Որպեսզի պետական ունեցվածքը չանցնի մասնավորի ձեռքը, առանց թագավորի թույլտվության կալվածատերերին արհեստավորի ձեռքը»¹³:

Հայագրի բնակչությունը զգալի թիվ էր կազմում ոչ միայն գյուղական բնակչության մեջ (առանձնապես հայկական գավառներում), այլև մեծ չափով ներկայացված էր նաև վրաց ազնվականության և իշխանական դասի մեջ: Հայ բնակչությունը կազմում էր Վրաստանի առևտրա-արհեստավորական դասի գերակշիռ մասը՝ սոցիալական առումով գտնվելով ճորտական կախման մեջ վրաց և Հայագրի ավատատերերի ենթակայության ներքո:

Վրաստանում ԺԸ դարում դեռևս պահպանվում էր դյուղական համայնքը, որը պարտավոր էր հարկերը վճարել համայնքում գրանցված բոլոր անդամների, այդ թվում նաև համայնքից տարբեր ուղիներով հեռացած անդամների փոխարեն: Պահպանվել են խոսուս վավերագրեր՝ խնդրագրեր, գյուղական համայնքի անդամների անունից, որտեղ առաջարկներ են ներկայացվում ավատատերին՝ իրենց հարկերի չափերը վերանայելու մասին՝ ելնելով բնակչության իրականում առկա թվաքանակից: Գյուղացիները հաճախ իրենք էին ճշտում և իշխանություններին տեղեկություններ հաղորդում փախած գյուղացիների գտնվելու վայրի վերաբերյալ:

⁹ Ժողովուրդի կազմում են վրացական թագավորական ընտանիքի անդամների կալվածային տիրույթները, իսկ ոմանք իշխանական և ազնվականական են» (Նույն տեղում, էջ 242):

¹⁰ Գալուստ Բաղդատյան. Նախադասական ժամանակների և ժամանակների կալվածային տիրույթները, իսկ ոմանք իշխանական և ազնվականական են» (Նույն տեղում, էջ 242):

¹¹ Գալուստ Բաղդատյան. Նախադասական ժամանակների և ժամանակների կալվածային տիրույթները, իսկ ոմանք իշխանական և ազնվականական են» (Նույն տեղում, էջ 242):

¹² Ա. Ա. Ռոգավ, Зачатки капитализма в Грузии, с. 37.

¹³ Մուսա Մյեխոս. Նախադասական ժամանակների և ժամանակների կալվածային տիրույթները, իսկ ոմանք իշխանական և ազնվականական են» (Նույն տեղում, էջ 242):

¹³ Գալուստ Բաղդատյան. Նախադասական ժամանակների և ժամանակների կալվածային տիրույթները, իսկ ոմանք իշխանական և ազնվականական են» (Նույն տեղում, էջ 242):

Հայազգի բնակչությունը վրաց ազնվականության կողմից պարտադրվող ճորտական կախումից խուսափելու համար հաճախ նախընտրում էր էջմիածնի հպատակ ու ճորտ ներկայանալու ուղին¹⁴։ Էջմիածնի ճորտ էին դրվում անգամ այլոց ճորտությունից ազատագրվելուց հետո՝ նոր պարտադրանքների ենթարկվելուց խուսափելու նպատակով։ Այսպես օրինակ, Ղուկաս կաթողիկոսի դիվանում արձանագրված էր, թե «Գ (3) ոմանք յայլոց ճորտութենէ ազատեցեալք, հանդերձ տամբք իւրեանց, զդաշնագիրս էին յղեալ և զճորտական թուղթս էին խնդրեալ ի սրբազան վեհչէն՝ առ ի լիւնիլ ծառայս սրբոյ Աթոռոյս յորդոց յորդիս։ Առ որս գրեաց սրբազան Վէհն զթուղթս ճորտութեան» (1781 թ. հուլիս)¹⁵։ Էջմիածնի ճորտազրուժը առավել երաշխիքներ էր պարունակում նաև հետագայում ճորտությունից ազատվելու համար¹⁶։

1790 թ. ապրիլի 15-ի կոնդակով Ղուկաս կաթողիկոսը հավաստում է թիֆլիսում 7 տարի բնակվող կարնեցի Մուրատի որդի Մովսեսին էջմիածնի ճորտ ընդունելու փաստը։ Կոնդակում նշվում է Մովսեսի «խնքնահոծար կամօքն իւրովք» ճորտագրման հանգամանքը, և արձանագրվում, թե «ահա զայս օրհնութեան և հաստատութեան նամակս առ քեզ գրեցաք ի միամտութիւն քեզ, որպեսզի ունիցիս զսա ի ձեռին քուժ նշան և կնիք հաստատութեան ի սրբոյ Աթոռոյս վասն ճորտութեանդ և յատկապէս ծառայութեանդ քոյ, զոր առնելոց ևս սմա։ Զի մի ոք իշխեսցէ յայտուհեան զբան ինչ ունիլ ընդ քեզ, և կամ զիր ինչ պահանջել ի քէն՝ արտաքոյ կանոնաց Սրբոյ Աթոռոյս ճորտիցն, յորոց ոչ է օրէն պահանջել ինչ ուժէք, որպէս է սովորութիւն ի բնէ անախ հաստատեցեալ արքունական թղթով։ Որ ևս այսու կանոնաւ ոչ ումեք գոյ իշխանութիւն ի քէն իր ինչ պահանջելոյ, զի դու Սրբոյ Աթոռոյս ևս ճորտ ևս յատուկ ծառայ։ Վասն որոյ զամենայն ճորտական տուրսդ, թէ հարկ և թէ մաքս, բոլորապէս պարտիս սրբոյ Աթոռոյս հասուցանել՝ ձեռամբ ի Սրբոյ Աթոռոյս յայգը նստող առաջնորդին»¹⁷։

¹⁴ Դիվան Հայոց պատմության, Նոր շաբբ, գիրք առաջին. Ղուկաս Կարնեցի, հատոր Բ, 1786-1792, աշխատ. Վ. Գրիգորյանի, Եր., 2003, էջ XCV, 255, 531-532։

¹⁵ Դիվան Հայոց պատմության, Նոր շաբբ, գիրք առաջին, հատոր Ա, էջ 255-256։

¹⁶ ՄՄ, կաթ, դիվան, թղթ. 124, վավ. 368, թ. 30։ Հրատարակությունը տե՛ս "Документы и материалы по истории армянского народа". Социально-политическое и экономическое положение Восточной Армении после присоединения к России (1830-1870). Под ред. Н. Тавакаляна, Ер., 1993, с. 216-217.

¹⁷ Դիվան Հայոց պատմության, Նոր շաբբ, գիրք առաջին. Ղուկաս Կարնեցի, հատոր Բ, 1786-1792, էջ XCV, 531-532։

Առավել ուշագրավ է այն հանգամանքը, որ նամակի մեջ գրված ապա և ջնջված է հետևյալ նախագաստությունը. «Ընդ այս դեկամ եղեալ այլոց ոմանց՝ արզ ես արարեալ քրիստոսազօր արքային ևս նորին բարձր հրամանաւ և զքեզ հաստատեալ ես ի ճորտութիւն Սրբոյ Աթոռոյս»¹⁸։

Թագավորական իշխանությունը երկրում առավել ուժեղն ու զսպիչն էր տեղական ֆեոդալական կամայականությունները հաղթահարելու և հասարակական համաձայնություն ստեղծելու գործում։ Ունենալու համար թագավորական զբոյգատանի հովանավորությունը, հայ բնակչությունը իր հիմնական մասով, այնուամենայնիվ, նախընտրում էր արքունի ճորտության կարգավիճակը՝ դրանով իսկ վերածվելով նաև թագավորական իշխանության հենարանի ու պաշտպանի։ Աստիճանաբար սերտանելով վրաց ավատատիրական հասարակության մեջ, հայ բնակչությունը իր ազգային գիմազիժը պահպանելու համար դիմում էր առավելագույն զավանական համախմբման միջոցին՝ կազմելով Հաղբատի հոգևոր թեմը։ Վրաստանում հայ բնակչությունը ենթարկվում էր կամ ուղղակի էջմիածնի Մայր Աթոռին և ներկայանում Հաղբատից առանձին համայնք, և կամ ընդգրկված էր Հաղբատի թեմի մեջ՝ որպես Վրաստանի «լիիրավ» բնակիչ։

Դավիթ արքայազնը "Վրաց իրավունքի և օրենսգրքի տեսություն" մեջ արձանագրում էր, որ «Վրաստանում գտնվող հայերը հոգևոր կառավարման առումով բաժանվում են երկու թեմերի. այն է՝ Հաղբատի և էջմիածնի, որոնցից առաջինը կախում ունի անմիջականորեն թագավորից, իսկ երկրորդը՝ Արարատյան Պատրիարքից, որի առաջնորդը լինում է Պատրիարքի հավանություն, իսկ Հաղբատինը ընտրվում է թագավորի կողմից և միայն օժան համար ուղարկվում Պատրիարքի մոտ։ Ըստ այդմ վերահսկվում է նաև, որպեսզի մեկ թեմը չկարողանա մյուսի նկատմամբ որևէ ազդեցություն ունենալ ոչ կառավարման, ոչ ունեցվածքի, իսկ առավել ևս էջմիածնի հովվապետի կողմից որևէ մեկ ճնշում ու հայց (նկրտում) կատարել Հաղբատի եպիսկոպոսի ու հոգևորականության նկատմամբ»¹⁹։ Նշելի է, որ նման կարգավիճակի ընդորոշումը ընդգծվեց առանձնապես ԺԸ. դ. երկրորդ կեսին և այդ պայմանավորված էր մի շարք հանգամանքներով, ուստի հարկ է լուսարանել այդ ևս։

¹⁸ Նույն տեղում, էջ 531։

¹⁹ Ընդհատ մշտնաշարժ. Նախորդող և Նախորդող և Նախորդող ժամանակագրություն, 3-րդ. 232-233.

ԺԸ. դարի առաջին կեսին Հաղբատի թեմական կենտրոնը Գրիգոր Ե- պրևիտոս Սուրբուհյանի առաջնորդության տարիներին (1716 – 1751 թթ.), ունենալով նաև Բնհրուդյան տոհմի աջակցությունը, բարգավաճ գարգացում էր արձանագրել անգամ ինչպես Օսմանյան, այնպես էլ Նաղիբ շահի տիրակալության ծանր պայմաններում²⁰: Նաղիբ շահի սպանությունից հետո ստեղծված քաղաքական անկայունությունը և ռազմական բախումները ստեղծել էին ռազմա-քաղաքական ու տնտեսական ծանր իրադրություն: «Ընակիչք դաւառաց և աշխարհաց, աւանաց և գիւղորէից կողմանցս խոյս տուեալ՝ ամբանային յամուրս լիբանց և ձորոց և յայլս քարանձաւաց»²¹:

Նման իրավիճակում Հաղբատի առաջնորդը ևս անվտանգություն նկատառումներով փոխադրվելով Թիֆլիս²² և մշտապես մնալով այնտեղ, մասնակից էր դառնում այն դավանական, միջկեղծեցական ու ներկեղծեցական հակամարտություններին, որոնք գլուխ էին բարձրացրել Վրաց մայրաքաղաքում՝ ինչպես հայոց, այնպես էլ վրաց եկեղեցու մեջ: Այդ առավել քան վերաբերում է Գրիգորի մահից հետո Հաղբատի առաջնորդությունը ինքնակամ զավթած Զաքարիա Պաթինյանին, որի առաջնորդությունը պարտադրված էր և «ոչ ոք ի քահանայից, յիշխանաց և ի ժողովրդոց քաղաքին հաճ էր և հաւան ընդ առաջնորդութիւն նորա, և ինքն իսկ չև ևս էր ձեռնադրեալ եպիսկոպոս»: Նման փոխհարաբերությունների պայմաններում շարունակելով մի քանի տարի պարտադրել իր առաջնորդությունը ժողովրդին, «ապա ի զօրանալ շփոթի և հակառակութեան ի մէջ նորա և ժողովրդեան, բռնութեամբ արտաքսեն զնա ի քաղաքէ անտի»²³: Աղեքսանդր Բ Բյուզանդացի կաթողիկոսը հայոց հետագա պառակտումը կանխելու և էջմիածնի վերահսկողությունը ուժեղացնելու նպատակով Հաղբատի ու Սահահի առաջնորդներին հրավիրելով Էջմիածին, հատուկ կոնզակով Վրաց պետության մեջ եղած ողջ հայ բնակչության վերահսկողությունը զնում է

Թիֆլիսում Էջմիածնական առաջնորդի իրավասությունները²⁴: Այդպիսով, փաստորեն նա միավորում է այդ աթոռները և այն դարձնում տերունի: Բնականաբար, այդ հարուցում է կաթողիկոսությանը հարած Վրաց Անտոն 1-ին կաթողիկոսի դժգոհությունը: Նման իրադրության պայմաններում էր, որ Վրաց եկեղեցու ևս տեղի ունեցավ հանգուցալուծում: Քարթլիի թագավոր Թեյմուրազի և Կախեթից Թիֆլիս ժամանած Հերակլի հրամանով 1755 թ. գեկտեմբերին հրավիրված եկեղեցական ժողովը կարգալուծ է անում Թեյմուրազ թագավորի քրոջ որդուն՝ կաթողիկոս Անտոն Ա-ին (1744-1755, 1762-1788)²⁵: Անտոն 1-ինը հեռանում է Ռուսաստան, իսկ Զաքարիան «չկացեալ ուրէք ի մերձակայս, գէմ եղեալ գնայ ուղղակի ի հեռուոր աշխարհ Պարսկաստանի և հարեալ առ Քերիմ խան իշխանապետ Պարսից, ըստ իւրում ընդաբոյս ճարտարութեան, հաճոյանայ նմա»²⁶: Եկեղեցական-դավանական հակամարտությունները Թիֆլիսում աստիճանաբար թուլանում են և նման իրադրությունը շարունակվում է մինչև 1760 թ.: Այդ թվականին Թեյմուրազ թագավորը, Քարթլիում իրեն տեղապահ կարգելով իր որդուն՝ Կախեթի թագավոր Հերակլ 2-րդին, ինչպես արգեն նշել ենք, գնապանագնացությանը ճանապարհվում է Ռուսաստան, որտեղ և վերադարձի ճանապարհին մահանում է: Հերակլ 2-րդը, 1760 թվականից իշխելով Քարթլիում, ձեռնամուխ է լինում իր իշխանության ամրապնդման գործին: Վրաստանում ակնհայտորեն որդեգրվում է նոր քաղաքական ուղղություն: Վրաստան է վերադառնում ինչպես Անտոն կաթողիկոսը (1762 թ.) և անմիջապես կրկին գրավում կաթողիկոսական աթոռը, այնպես էլ Քերիմ խանի միջնորդագրով Էջմիածին է ժամանում և Հակոբ Շամախեցուն ներկայանում Զաքարիա վարդապետը և «ձեռնադրի ի նմանէ եպիսկոպոս և առեալ զկոնդակն Առաջնորդութեան զայ ի Տփլիս»: Թիֆլիսում Զաքարիան «ներկայանայ առաջի Հերակլեայ արքայի՝ հանդերձ երևելի բնծայիւք», իսկ Վրաց թագավորը «հաճի ընդ նա մեծապէս և մեծազոր սի-

²⁰ Յովհաննու Արմենցույ Պատմութիւն հռչակաւոր վանից Հաղբատայ Ս. Նշանին, հրատարակեց Հ. Համազասպ Ոսկեան, Վիեննա, 1965, էջ 114:
²¹ Նույն տեղում, էջ 116:
²² «Գրիգոր եպիսկոպոս ևս յայնժամ անճարացեալ թողու զմենաստանս ամայի և գնայ հանդերձ միարանիւք ուխտիս ի Տփլիս քաղաք, ուր և մեռաւ նա ի ՌՄ (1751) թուականին Հայոց» (Յովհաննու Արմենցույ Պատմութիւն հռչակաւոր վանից Հաղբատայ Ս. Նշանին, էջ 116):
²³ Յովհաննու Արմենցույ Պատմութիւն հռչակաւոր վանից Հաղբատայ Ս. Նշանին, էջ 119:

²⁴ ՄՄ, ձեռ. 9120, թ. 39-40. Հմմտ. Ա. Ալվազյան, Հայոց եկեղեցին XVIIIդ. ազատագրական շարժման քառուղիներում, Եր., 2003, էջ 27:
²⁵ 1. Մելիքսեթ Բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և Հայերի մասին, Գ, Եր., 1956, էջ 109; В. Мартirosян, П. Чобанян. Документы по истории армяно-грузинских взаимоотношений и общественной жизни Грузии (II пол. XVIII в.).- "Кавказ и Византия", вып. 3, Ер., 1982, с. 233-235.
²⁶ Յովհաննու Արմենցույ Պատմութիւն հռչակաւոր վանից Հաղբատայ Ս. Նշանին, էջ 119:

ճշմարիտ բարեկամէջ մերմէ, զի յատկապէս սակս Սրբոյ Աթոռոյս ազատութեանն պարտիս նախապէս հոգալ և զհնարս գտանել և առնել փութով և ոչ զանց առնել»³²:

Ակնհայտ հակասութիւնները, այսպիսով, գնչուով սրվում էին Էջմիածնի և Հաղարտի միջև: Հերակլը բոլոր միջոցներով նպատաւում էր Հաղարտի թեմի ընդարձակմանը և այդ, բնականաբար, ի հաշիվ տերունի և կամ Սանահնի ու Հաղարծնի վանքերի: Ուշագրաւ է, որ, ինչպէս արձանագրել է հետագայում (1808 թ.) Դանիել կաթողիկոսը, դեռևս 1738 թ. Ղազար Զահեցի կաթողիկոսը «կոնդակ է տուեալ յանուն սրբոյ վանիցն Հախպատու, նորին պատճէնն, այսինքն՝ սուրաթն աստ գոլով տեսաք, որ բաց ի Բամբա-կաձորոյ, դամենայն վերոյգրեալ թէմսն յանուն Հախպատա վանիցն էր յատկացուցեալ և զվանքն Սանահնու գրկեալ (թ. 232ա) իսպառ: Ուստի հոգելոյս Սիմէօն սրբազան կաթողիկոսն յետոյս նոյն կոնդակի սուրաթին իւր իսկ ձեռամբ գրեալ և կնքեալ վկայեալ էր այսպէս՝ ի գիտութիւն ճշմարտութեան յայպայ տեսողաց. «Ի ՌՄԺԲ (1763) թուին մերոյ, յորժամ նստաւ անարժանութիւնս մեր Հայրապէտ ի Սուրբ Աթոռոջ Էջմիածնի, զայս կոնդակս (որ է ի բուն Ղազար կաթողիկոսի կոնդակի երեսն) Հերակլ արքայն ի լուսանցն գրեալ՝ իբր թէ իսկն տեսի և գուրաթն կնքեցի, մեզ էր առաքեալ, խնդրելով, զի և մեք սոյնանման կոնդակ տայցեմք: Մեք ևս նոր նստեալ և ոչ Սանահնու և ոչ Հախպատու կոնդակսն տեսեալ և թէմից նոցին տեղեկացեալ, հաւատալով սորին՝ կոնդակ գրեալ՝ յղեցաք առ ինքն, բայց յետ ամաց ինչ ի տեսանելն մեր զկոնդակսն Սանահնու տեսաք, զի շատքն ի թէմիցս այսոցիկ Սանահնու և Աղարծնու վանիցն են և ոչ (թ. 232բ) Հախպատու, և զի նոքա զմեզ խարեցից, վասնորոյ զայսքանս գրեցի ես՝ Սիմէօն կաթողիկոս, իմով ձեռամբ և կնքեցի, զի յայպայ տեսողոյ գիտաւջիք, զի սուտ է թէ իմ տուեալ կոնդակն և թէ իմապիսեաց տուեալ կոնդակքն վասն Հախպատու վանից վիճակացն սոյն օրինակա: Ի ՌՄԻԱ (1772) թուոջն և ի հոկտեմբերի է (7)»³³:

Ուշագրաւ տեղեկութիւն կա Ղուկաս Կարնեցու նամակներէջ մեկում Երնդիսի գլուղի մասին. «Թուղթ օրհնութեան և շնորհակալութեան սրբազան վեհն առ Երնդիս գիւղի մովրով պարոն Զաքարիայն գրեաց, որ ի ներկայումս ի Զանալն Հախպատիցուց զնոյն գիւղն թեմ ինքեանց, այլ գոլով

³² ՄՄ, ձեռ. 2911, թ. 100ա:

³³ ՄՄ, ձեռ. 3031, թ. 231բ-232բ:

այնր բնականապէս վիճակ Սրբոյ Աթոռոյս, սա ևս ջատագովութիւնս էր արարեալ և օգնեալ մերայնոցն, որք կրկին հաստատեալ էին զայն գիւղն վիճակ Սրբոյ Աթոռոյս»³⁴: Այլիւր, Հաղարտի թեմից արտաքսված հոգևորականը կաթողիկոսի կարգադրութեամբ պաշտպանութիւն էր գտնում Էջմիածնի թեմում: Ղուկաս կաթողիկոսը 1782 թ. մայիսին գրում է Թիֆլիսի առաջնորդ կարգված Կարապետ վարդապետին. «Բամբկուձորու պարոն Գարրիէլի աներ՝ տէր Զաքարիայ քահանայն, որ ի Հաղարտու թեմի եկեղեցւոջն քահանայութիւն առնէր, անտի այժմ զնա դուրս են արարեալ... Վասն որոյ գրեմ քեզ, զի բերեալ անտի զայն քահանայն, ի կողմն քո պահեսցես և ի մեր թեմի եկեղեցւոջն տեղի տացես»³⁵:

Վրաստանի գրեթե ամբողջ ներքին և արտաքին առևտրի մեջ ունենալով լիովին դերակաշիւ վիճակ ու իրենց տնտեսական գործունեութեան մեջ վայելելով թագաւորի հովանավորութիւնը, Հայ բնակչութիւնը իր ամբողջութեան մեջ, սակայն, չունէր որոշակի իրավական արտոնութիւններ, որպիսիք գոյութիւն ունեին, օրինակ, Ռուսաստանում: Ի տարբերութիւն Ռուսաստանի, Վրաստանում ճորտագրումը պարտադիր պայման էր և ունէր համատարած բնույթ: Վրաց արքունիքում ծառայութեան անցած Հայազգի գործիչները ստիպված էին Էջմիածնի նկատմամբ որդեգրել այնպիսի քաղաքականութիւն ու վերաբերմունք, որը թելադրվում էր Վրաց արքունիքի կողմից: Հաճախ Հայազգի գործիչները, որ պաշտոնի բերումով մեծ ազդեցութիւն էին ձեռք բերել վերահայոց միջավայրում և մասնավորապէս Թիֆլիսի Հայոց մեջ, հաճախ հակամարտութեան մեջ էին Հայտնվում Էջմիածնական գործիչների հետ իրենց փոխհարաբերութիւններում: Էջմիածնի հետ հարաբերութիւններում առավել անկաշկանդ վերաբերմունք էր պահանջում Սիմեոն Երեանցին օրինակ Թիֆլիսի մելիք Ավետիքից և նախատում նրան՝ իր վերաբերմունքը «Հիմնավորող» պատճառաբանութիւնները համար. «գու ևս եթէ զբնական կարգն որհնեսցես, արքայն քեզ զի՞նչ է ասելոց»: Սիմեոն Երեանցին նույն նամակում պահանջում է այլևս «չառնել այնպէս և հարազատ լինիլ սրբոյ Աթոռոյս»³⁶: Նամակում ուշագ-

³⁴ Դիվան Հայոց պատմութեան, Նոր շարք, գիրք Առաջին, Ղուկաս Կարնեցի, հատոր Ա, աշխատ. Վ. Գրիգորյանի, Եր., 1985, էջ 277:

³⁵ Դիվան Հայոց պատմութեան, Նոր շարք, գիրք Առաջին, Ղուկաս Կարնեցի, հատոր Ա, էջ 299:

³⁶ Սիմեոն Երեանցու ակնարկած «չառնել այնպէս»-ը մատնացուցում է մելիքի կողմից կատարած մի քայլ, որից նա ետ էր կանգնել և այլևս նման քայլի չպիտի գիմեր: Էջմիածնի համար առավել անհանդուրժելի և դատապարտելի էր դավա-

տա...»⁵⁵: Ուշագրավ հանգամանք է, որ, ըստ Դավթի որդու Մմբատի հազորդան, գրեթե նույն ժամանակ համակովկասյան տիրակալի զիրքի ու ազդեցությունների հավանում էր նաև Վրաց Բագրատ 3-րդը (978-1014 թթ.) Այդպես է ներկայացնում պատմիչը⁵⁶. «Գրավեց ամբողջ Կովկասը միապետություն՝ Զիքերի երկրից մինչև Գուրգան, իսկ Ատրպատականն ու Շիրվանը հարկատու դարձրեց, Հայաստանի թագավորներին ըստ իր կամքի էր կառավարում»:

ԺԲ-ԺԳ. դարերում Հայ-վրացական հարաբերությունները և Զաքարյան տոհմի խաղաղած դերը շատ ավելի հանդամանորեն ուսումնասիրված է և իր մանրամասնությունների մեջ մեծ չափով հայտնի: Աշոտ Հովհաննիսյանը Իրավացիորեն շեշտում է, որ «XI-XIII դարերում վրաց Բագրատունիները հանդես էին գալիս Հայաստանում ոչ որպես նվաճողներ, այլ որպես պահպանողներ, որոնց զենքի հաղթանակին, որչափ այն ուղղված էր օտարակալության դեմ, նաև ժողովուրդը ակտիվորեն ընդառաջում և աջակցում էր: Վերամիավորելով Հայաստանն ու Վրաստանը, վրաց Բագրատունիները չէին դիտում Հայաստանը որպես իրենց անձնատուր եղած մի երկիր, այլ որպես իրենց տոհմին պատկանած մի տիրույթ, որի ֆեոդալական ազատությունները վերականգնվել էին հայ և վրաց ուժերի համատեղ ջանքերով»⁵⁷: Ս. Երեմյանի ընդհանրացումով. «Հայկական հողերի՝ Վրացական ավատատիրական միապետության կազմի մեջ գտնվելու ժամանակաշրջանը ազդել է նաև հաջորդ սերունդների մտածողության վրա հետագայում ևս (XVIII դ.)»⁵⁸:

Հայոց և վրաց ընդհանուր մտահոգության ու ձեռնարկումի արդյունք էր 1238-1240 թթ. Նոր Գետիկից ու Խաչենից հայազգի պատվիրակության ժամանումը Հռոմ՝ Վանական վարդապետի, Վարդան Արևելցու և այլոց մասնակցությամբ՝ Մոնղոլական արշավանքների դեմ օժանդակություն գտնելու հույսով⁵⁹: Մենք հավանական ենք համարել այդ խմբի կողմից

⁵⁵ Դիվան հայ վիմագրության, պրակ I. Անի քաղաք: Կազմեց Հ. Ա. Օրբելի, Եր., 1966, էջ 35:
⁵⁶ *Сумбат Давитис-дзе*, История и повествование о Багратинах, Перевод, введение и примечания М. Д. Лордкипанидзе, Тб., 1979, с.37.
⁵⁷ Աշոտ Հովհաննիսյան, Գրվածքներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք առաջին, Եր., 1957, էջ 161:
⁵⁸ С. Т. Еремян. Общность судеб и культурно-политическое содружество народов Закавказья в IX-XIII вв.,— Кавказ и Византия, вып. I, Ер., 1979, с. 9.
⁵⁹ P. Chobanian. *I Manoscritti Armeni di Roma ed I Loro Colofoni (XIII secolo)*, — "Roma - Armenia", a cura di Claude Mutafian, Roma, 1999, p. 213-215. Հմմտ.

Հռոմի Գրիգոր Թ. պապին ուղղված նամակի Հռոմ տանելու և պատասխան նամակը բերելու հանգամանքը⁶⁰, որտեղ պատվը պատասխանելով Վրաց Ռուսուդան թագուհուն և նրա որդուն՝ Դավթին, գրում էր. «Ձեր նամակում եղած տեղեկությունը, որ թաթարները՝ կաթոլիկ եկեղեցու թշնամիները, հարձակվել են ձեր թագավորության վրա և ձեզ ծանր վնասներ են հասցրել, նվազեցրեց մեր ուրախությունը և վշտացրեց մեզ»⁶¹: Հայ-վրացական նման ձեռնարկումը միանգամայն բնական էր, քանզի Կիրակոս Գանձակեցու զիպուկ բնորոշմամբ. «Ընդ այն ժամանակա թագաւորութիւնն Վրաց նուազեալ էր, զի էր ընդ ձեռամբ կենջ, որում անուն էր Ռուզուդան, դուստր Թամարին, քոյր Լաշային... վաբէր զիշխանութիւն թագաւորութեանն ի ձեռն զօրագլխացն Իւանէի, և որդւոյ իւրոյ Աւագին, և Շահնշահի՝ որդւոյ Զաքարէի, և Վահրամայ և այլոցն»⁶²:

Ուշագրավ է, որ մոնղոլական տիրապետության պայմաններում անգամ, Դավթի Արքայազնի կողմից իր հոր՝ Դեմետրի, թագավորությունը (Ավանում գտնվող վանքի նվիրատվական արձանագրության մեջ) բնորոշվել է որպես «Վրաց և Հայոց». "Ի թուխ ԶԼԴ (1285) յաշխարհակալութեան արքայից արքային Արդունին, ի թագաւորութեան Վրաց և Հայոց Դեմետրէի, ես՝ Դաւիթ, որդի Դեմէտրի թագաւորին, թողի զԱւանայ այգեաց շարէտն վանն միամտութեան սոցա և յերկարութեան կենաց մերոց և թողութեան մեղաց մերոց...»⁶³:

ԺԴ. դարում ևս վրաց Բագրատունիները փորձում են մոնղոլ - թաթարական լծի դեմ պայքարում հենվել հայ-վրացական գինակցության վրա: Երևանն անգամ երբեմն ընկալվում էր Վրաստանի մեջ: Այսպես, օրինակ, Վարդան Այգեկցու քարոզների ժողովածուն Դրեմի Սուրխաթ քաղաքում 1336 թ. ընդօրինակող Տերտեր Երևանցին իր հիշատակարանում գրում էր, թե

նույնի, Հռոմում գրված հայերեն ձեռագրերի հիշատակարանները (XIII դար) — «Հայաստանը և Գրիստոնյա Արևելքը», Եր., 2000, էջ 127-132:
⁶⁰ P. Chobanian. *I Manoscritti Armeni...*, p. 214. Պ. Չոբանյան, Հռոմում գրված..., էջ 128-129:
⁶¹ *Օ. Եւանգելյա*. Նախորոշված յեղոտոն յայտնայեան և յօրոշման յայտնայեան, Թ. I, տծ., 1984, թթ. 85:
⁶² Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, աշխատ. Կ. Ա. Մխիթ-Օհանջանյանի, Եր., 1961, էջ 238:
⁶³ Մ. Սմբատեանց, Տեղագիր Գեղարքունի ծովագար գաւառի, Վաղարշապատ, 1895, էջ 254; Պ. Մ. Մուրադյան, Հայաստանի վրացիներն արձանագրությունները, Եր., 1977, էջ 18-19:

Հարկ է արձանագրել, թե ընդգծված հատվածի վրացերենից ուսուսերն թարգմանություն մեջ Վ. Գամբելիկին, որ Մոսկովյան արխիվներում այդ վավերագրի բնագրի հայտնաբերողներից և այն առաջինը հրատարակողներից մեկն է⁸³, թույլ է տվել բնագրի ընկալման աղատություն և ներկայացրել հետևյալ կերպ. «А эти Сомхити и Сабаратиано, вместе если сопоставить, равны половине Картли, называются Картли и в настоящее время именуются Нижней Картли»⁸⁴. Հերակլը միայն արձանագրում էր, որ այն այժմ արդեն անվանում են Քարթլի, այդպիսով ընդգծելով նախկինում նրանց Քարթլիի մաս չկազմելու փաստը: Ըստ այդմ, ուսուսերնում վրացերենից թարգմանությունը պետք է լինի «А этот Сомхити и Сабаратиано приравнены Картлини, половина [людей] называют Картли и ныне именуют как Нижняя Картли»:

Յաս. Լորթքիփանիձեն, «Ստորին Քարթլի» իր աշխատության մեջ ստիպված է լստատվանել, որ «Քարթլիի թագավորության այն նահանգի անվանումը, որը կազմում է այս ուսումնասիրության առարկան, մենք անվանեցինք "Քվեմո Քարթլի" (Ստորին Վիրք), թեև ժամանակակից, այսինքն՝ ԺԸ. դարի առաջին քառորդի, աղբյուրներում այս անվանումը հազվադեպ է հանդիպում: Այդ անվանումը գտնում ենք միայն 1720 և 1749 թթ. երկու հրովարտված (Հնութ. I - № 215, 217); փոխարենը վավերագրերում հիշատակվում է "Ջեմո Քարթլի" (Վերին Քարթլի) և "Շիրզա Քարթլի" (Ներքին (=Միջին) Վիրք), հետևաբար եղել է "Ստորին Քարթլի" և: Այս անվանումը հանդիպում է հետագա ժամանակների վավերագրերում [հզվում է վերոբերյալ 1770 թ. մարզահամարի ցուցակը]⁸⁵:

Վրաստանի մարզահամարի ցուցակում արձանագրված Սոմխիթի ավերածության ու մարդավաժի լինելու ժամանակի ու հանգամանքների մասին ակնառեսի իրազեկությունը հաղորդում է Պապուհա Օրբելիանին: Նկարագրելով 1748/49 թթ. դինված հակամարտությունները Վրաստանում թեյ-մուրազ 2-րդի կողմից Քարթլիի կառավարիչ նշանակված Հերակլ 2-րդի ու

⁸³ ვახტანგ გამბეკელი, ზურაბ ციციშვილი. 1770 წლის 5 აპრილის დეკლარაციული ნუსხა, "მაცნე", 1973, № 1, გვ. 154.
⁸⁴ Межкавказские политические и торговые связи Восточной Грузии (конец 60-х – начало 90-х годов XVIII в.): Документы и материалы. I выпуск, с.34.
⁸⁵ იას. ლორთქიფანიძე. ქვემო ქართლი მე-XVIII საუკუნის პირველ მეოთხედში, ნაწილი I და II, წყაროების გამოკვლევა და საგეოგრაფიო ცნობები. თბ., 1935, გვ. 237.

Աբղուլլա բեկի⁸⁶ միջև, նա գրում է. «Ելավ Սամչվիդեից լեկի⁸⁷ զորքը, կողակտեցին Սոմխիթի ձորահովիտը և բերեցին Սամչվիդեի բերդը: Նեղուսթյան մեջ ընկավ Սոմխիթի ձորահովիտը, չկարողացան այլևս մնալ իրենց երկրում, գաղթեց Սոմխիթի մելիքը իր գերդաստանով ու հպատակներով, նույնպես և Արզուլթյանները, Սանահինի ողջ ձորահովիտը և Հաղպատի ձորահովիտը, եկան քաղաք [իմա՝ Թիֆլիս] և քաղաքից⁸⁸ միասնաբար գնացին Մուխրան: Մուխրանի սեր կոնստանտինեն [նրանց] տեղ հասկացրեց և տեղավորեց իր երկրում: Ամբողջ Սոմխիթում, Բուլնիսից բացի ու Սամծեվրիսից բացի, չի ունեցել ոչ մի տեղ չկար: Օրբելիանների տիրույթը ևս այնպես դատարկվեց, որ Դմանիսից ու Փիտարեթից բացի չի ունեցել ոչ մի տեղ չկար»⁸⁹:

ԺԸ. դ. երկրորդ կեսին Վրաց թագավորները իրենց ստորագրություններում և արտոնաշարում այլևս դադարում են Սոմխիթ = Հայաստանի արձանագրումը, սակայն այդ բնավ չի նշանակում, թե նրանք դադարում են հավանություններ ունենալ Հայաստանի նկատմամբ: Առավել ուշադ-

⁸⁶ Վախթանգ VI-ի եղբայր Իսահ որդին՝ Աբղուլլա բեկը, Սոմխիթի կառավարիչ էր նշանակվել դեռևս օսմանյան տիրապետության ժամանակ: Նրա անվան հետ է կապվում նաև Սամչվիդեի բերդի վերակառուցումը (საქართველოს ისტორიის ნარკვევები, IV, გვ. 515): Ըստ Չելեբի-Ջադեի. «Թիֆլիսի էյալեթին ենթակա Սոմխիթի գավառում (նահիյե) բնակվող հայերը հպատակություն և հնազանդություն հայտնելով և ընդհանրապես օրինական տուրքերը ընդունելով, խնդրում էին, որ իրենց համար մի իշխող նշանակվի: Հիշյալ գավառը ընդունելով իբրև լիվա, այնտեղ մարզահամար կատարվեց և նրանց հարկերն առանձնապես "Չիրայիթ" լինելու պայմանով, երևանի սերասբեր, փեյր Ահմեդ փաշայի առաջարկությամբ, օջաքլքքի կարգով իբրև սանջակ տրվեց և շտրհվեց Վախթանգի եղբոր՝ Իսախանի որդուն, որն իրամական կրոնը ընդունելով Աբղուլլահ բեյ էր կոչվում» (Թուրքական աղբյուրները Հայաստանի, Հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին. Թարգմանություն թուրքերեն ընդգրկից, ներածությունով, ծանոթագրություններով, սերբիաբանական բառարանով և հավելվածով, կազմեց Ա. Խ. Սաֆրաստյան, հ. Ա, Եր., 1961, էջ 138):

⁸⁷ Միմյանց դեմ պայքարում ինչպես Հերակլը, այնպես էլ Աբղուլլա բեկը դիմել էին լեկերի (լեզգիների) օգնությանը:

⁸⁸ Դեպի Թիֆլիս հայոց 3000-անոց բնակչության մի այլ բռնազավթ Գանձակից իրականացրել էին օսմանները դեռևս 1723 թ., որի մասին հաղորդում է Չելեբի-Ջադեին (Նույն տեղում): Հմմտ. Ս. Մ. Մուրադյան. Армянская эниграфика Грузии. Тбилиси, Ер., 1988, с.92-93:

⁸⁹ პავუნა თრბელონი. აშბავბო ქართველთა, გვ. 139. Ուստի միանգամայն իրավացի է այս վկայության հիման վրա Պ. Մուրադյանի կատարած այն հետևությունը, թե «Следовательно, предки основной части нынешних жителей Мухрани армянского происхождения – это выходцы из Северной Армении, т. е. лорийцы» (Ս. Մ. Մուրադյան. Армянская эниграфика Грузии. Тбилиси, Ер., 1988, с.118):

կամքն է կակղեցուցանել զդոսս և կոչել ոչ միայն թագաւոր Վրաց, այլև Հալոց»⁹⁷։ Այստեղ ուշագրաւ է նաև այն, որ 1783 թ. Գեորգիեյան պայմանագրի կնքումը ևս վրացական կողմի համար զիտարկվել ու բնութագրվել է որպես Վրաստանի զոհարեւում Ռուսաստանին, և Հ. Արղուժյանի վերոբերյալ ընդգծված արտահայտությունը, լիովն է, համահունչ է նրան, ինչ որ արտասանել է Գ. Ճավճավաձեն 1783 թ. հուլիսի 19-ին Պ.Ս.Պոպովիկինի հետ առաջին տեսակցության ժամանակ Հերակլ Բ-ի անունից. «Հերակլը զոհարեւում է ինչպես ինքն իրեն, այնպես էլ իր թագավորությունը»⁹⁸։ Զ.Յքիտիլվիլու մեկնարանմամբ, «Գարսեանը այս հայտարարությունը, ինչպես և Հերակլը, ձայնակցում է Ռուսական ցարի նվաճողական ձգտումներին, որպեսզի նրան օգտագործի Վրաստանի օգտի համար և ստանա Ռուսաստանի իշխանության սպառնալուծական օգնությունը երկրի վերականգնման ու փրկության համար»⁹⁹։

Ի տարբերություն հայոց դիրքորոշման, վրաց վերաբերմունքը հայոց նկատմամբ զնալով առավել կոշտանում էր, որով և պայմանավորված էր այն «կակղեցուցանելու» ձգտումը։ Ակնհայտ է, որ «կակղեցուցանել»-ի ներքո Հ. Արղուժյանը ակնկալում է որոշակի վերաբերմունք՝ Վրաց արքունիքից զիջումներն ու շնորհների կորսում իր և իր տոհմակիցների համար, որի դիմաց նա չի պատրաստվում «փեղքաչ» կամ «քրթամ» կաշառք տալ, և այդ սպասումների մեջ նրա մրցակիցն է վիրահայ ազգեցիկ տոհմերին մեկի ներկայացուցիչը՝ «Ղորղանի որդին»։ «Յնազգս մեր խանդարեալ զիւղօրէիցն զիտասցես, որ ևս ոչ փէշքաչ և ոչ քրթամ տալոյ ֆիւքը չունիմ, այժմ և ամօթ է ինձ և դոցա, որովհետև ոչ են տուեալ, այլ իւր հայրն իւր գրովն Ղաղան զունքէթ և Գօգ զունքէթ ինձ է տուեալ թէ՛ յորժամ Ռուստայ գօրքն մնան և այլն. այլ Ղորղանի որդին գօրեզ էր, հրաման նորա ոչնչացոյց, որպէս ինքն արքայն զիտէ»¹⁰⁰։ Հ. Արղուժյանի հավակնությունները, ինչպես ակնհայտ է, նոր չէին։ Դեռևս Հերակլի կողմից 1783թ.

օգոստոսի 28-ին ստացած հրովարտակով Արղուժյանները հայտարարել էին, որ իրենց տոհմը ուղղակի շարունակությունն է Երկայնաբազուկ-Ջաբրայանների՝ դրանով իսկ փորձելով Հիմնավորել Վրաստանում իրենց հավակնությունները, պահանջներն ու իրավունքները¹⁰¹։ Ինչպես ակնհայտ է Հովհան արքայազնի «կամաստբայից», վրաց միջավայրը փորձում էր վերապահություն դրսևորել և ընդգիծմանալ Արղուժյանների և նրանց հավակնությունների նկատմամբ։ Այսպես, երբ Սուլտան Արղուժյանը սնդուում էր, թէ՛ «ես վաղուց էի Մխարզբձև և ահա Սանահինն էլ սրանց իբրև դամբան ունիմ», Հովհան արքայազնը պատասխանում է. «Չվիրավորվեք, դուք Գյանջեցի եք, Թանից կամ Ղարաբաղից եկած, Գյանջայի հայ Արղուժյանի զավակներ, որը Ջաբրիա Մխարզբձևիի արտամուսնական զավակն էր, եկել եք Ռոստոմ թագավորի [1632-1658] օրով։ Իսկ երբ մախարբաչը Նազըր Շահին գիջել տվեց Թեյմուրազ և էրեկկե թագավորներին Քարթլին և Կախեթը, իսկ Արղուլարեկին հանց տեղից, ապա [էրեկկե] թագավորը ձեզ շնորհեց ազնվականություն աստիճան և այս դամբանն ու դուռը, թեև հնում այս տեղն ու դամբանը Հայոց թագավորին էր, իսկ հետո Թամար

¹⁰¹ Հրովարտակում ասվում է. «Որովհետև ամենայն երեկելի ազգաբնակիչն ի հնուկների ազգաց հաստատի և երեկելի նախնեօք, մասն որոյ չէ անպատճառ և անտեղի, որ ի մէջ վկայութիւն տացի Արղուժեանցն, որք են Երկայնաբազուկք, զի են ի միջոյ Սամխէթու, այսինքն՝ Հայաստանու, և Իվերիայու, այսինքն՝ Վրաստանու, ազգ մեծ և երեկելիք, որպէս վկային պատմագիրքն մեր և մանաւանդ թագուն մեծ Սպասուարին և Հօսաննէս Աթաբէկին, որոց հաւատարմութիւնն, որ առ Բագրատունի թագաւորսն Վրաց, քաջայայտ իսկ է յամենայն արձանագիրք, ևս առաւել է ի վերայ իշխանական նշանաց նոցա, ուր գրուցեցեալ է այսպէս. վահան տեղն արծաթեով, ի վերայ նորա գրուցալ՝ որպէս նշան սպարապետութեան, յորոյ վերայ նկարեալ կայ պատկերն ամենասուրբ Աստուածամօրն, որ ընդ ձախմէ ընդգրկեալ ունի զՈրդին իւր, զԲանն Չօր հաւիտեանականի, և ի ներքոյ պատկերին՝ ալ կողմն կայ կարկանդակ Բագուկ հանդերձ սրով, իբր բացայայտեմք ամենեցունց, թէ՛ այսպիսի Զսոցա ամենահօգնակ ազգաբանութիւնն բացայայտեմք իսկ ի սմա ըստ պատշաճին, պատուելի անձինքն են եղեալք, որպէս բացայայտեցաք իսկ ի սմա ըստ պատշաճին, պատուելի անձինքն և նշանաւ։ Եւ խնդրեմք յԱմենամեծ Կայսերական բոլորովին արդարութեամբ և նշանաւ։ Եւ խնդրեմք յԱմենամեծ Կայսերական դրանէն ամենայն Ռուսաց, զի ի կարգս Ռուսաց պայծառամին Իշխանաց համարեցեալք իցեն Երկայնաբազուկ անուամբք»։ Տե՛ս Դիւան հայոց պատմութեան, գիրք Թ. (Յովսէփ կաթողիկոս Արղուժեան, մասն առաջին, 1778-1800), Հրատ. Գիւտ ա. քհն. Աղանեանց, Թիֆլիս, 1911, էջ 194։

⁹⁷ Դիւան հայոց պատմութեան, գիրք Թ. (Յովսէփ կաթողիկոս Արղուժեան, մասն առաջին, 1778-1800), Հրատ. Գիւտ ա. քհն. Աղանեանց, Թիֆլիս, 1911, էջ 194։

⁹⁸ Ն. Ելիշիւցեան, Երեւան, 1982, թ. 60. «1783 Վոլոս 19 օգոստոսի ցօնեյ լալալ յարցօցօցեյն... Զ լալալ լալալ լալալ լալալ, ինչ որ յարցօցեյն "մեքքեթալալ լալալ լալալ լալալ"»։

⁹⁹ Նույն տեղում։

¹⁰⁰ Դիւան հայոց պատմութեան, գիրք Թ. (Յովսէփ կաթողիկոս Արղուժեան, մասն առաջին, 1778-1800), Հրատ. Գիւտ ա. քհն. Աղանեանց, Թիֆլիս, 1911, էջ 193-194։

թագուհու կողմից սա իբրև դամբան տրվեց Մխարզը ձեռններին՝ թագավորի սարդարաններին: Եվ ի վերջո քո հորեղբայր Հովսեփ վարդապետը էրեկն թագավորից [գիր] խնդրեց իր ազգատոհմի հաստատման մասին, և էրեկն շնորհեց ձեզ այն, և նա հաստատել տվեց ձեզ այս թագավորի տված գրի ուժով իբրև Մխարզը ձեռնների իշխանների՝ Ռուսաստանի կայսր Պավել Պետրովիչի կողմից, և գյուղն էլ այնտեղ ձեռք բերեց»¹⁰²:

ԺԸ. դարի երկրորդ կեսին, երբ, ինչպես ասվեց, սակավամարդ կամ մարդաթափ դարձած Սոմխիթը և հարակից տարածքները Վրաց իրականության մեջ մասամբ արգեն սկսել էին ընկալվել ու անվանվել որպես Ստորին Քարթլի, Վրաց իշխանությունները, այնուամենայնիվ, հանուն Վրաստանի տնտեսական վերականգնումի և գայթակղված Շ. Շահամիրյանի առաջարկներին, շարունակում են չմոռանալ նաև այն դիտելու որպես Հայք և ստիպված են լինում կոչ անելու հայերին՝ գալ և ապաստանել «ընդ եղբայրս իրեանց, քնակեցնից ի սեպուրս աշխարհս իրեանց»¹⁰³:

Առավել խոսուեն է Գեորգի 12-րդի 1800 թ. հունվարի սկզբներին գրած նամակը էջմիածնի միաբանությունը, որ փորձում է "Հայոց թագավոր" ներկայանալու հիմնավորումով միջամտել Հայոց կաթողիկոսի ընտրություններին խնդրին և ոչ միայն առաջադրել Հովսեփ Արղղությանի թեկնածությունը, այլև սպառնալ, թե. «Յայտ իսկ է ձերումդ սրբութեան, որ տեբուժիւնն մեր ոչ է օտար ի Սրբոյ Աթոռոյդ, այլ ունիմք և մեք մասն և բոլոր ազգն Հայոց կոչնն գմեզ արքայ ինքեանց: Նաև գիտնն գմեզ ազգական արքայիցն Հայոց: Արդ, եթէ այդպէս է, ապա ուրեմն պարտիք և դուք լսող լինիլ Սրբոյ Աթոռոյդ օգտական բանիցն մերոց և տալ հաւանութիւն իսկ...և որքան ի յիս կարողութիւն գոյ, մինչև ի ձեղումն արեանս քանալոց եմ ի վերայ օրինա-

¹⁰² Լ. Մ. Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և Հայերի մասին, հատոր Գ, էջ 244-245:

¹⁰³ Պ. Չորանյան, Հնդկահայ գաղթօջախի պատմությունից (նորահայտ վավերագրեր)՝ ՊՂ, 1988, թիվ 1, էջ 188: Շ. Շահամիրյանի ժառանգին՝ Հովհաննես Շահամիրյանին, ուղղած իր նամակում Գեորգի 1799 թ. հոկտեմբերի 23-ին գրում էր. «Ի սահմանի մերում եղեալ զբոլոր ազգն և զժողովուրդն Հայոց առանց խտրութեան ազգէ մերմէ (այսինքն ի Վրաց) ունիմք ընկալեալ ի ծառայ զթութեան և պահպանութեան մերոյ ըստ իւրաքանչիւր արժանեացն իրեանց և դայնս, որք տարագրեալք են ի հօտէս մերմէ և զրուեալք ի գանազան գաւառս նժգեհ կենօք կեան ընդ տերութեան այլազգաց մեծաջան աշխատութիւն, գայնս և սանկ կամիմ առ մեզ, զի ընդ եղբարս իրեանց քնակեցնից ի սեպուրս աշխարհս իրեանց՝ ի վայելել զսէր և զգթութիւն մեր, և յատկապէս զձեզ իսկական հաւատարիմ բարեկամոյ մեր ցանկամք ունիլ ի պատիւ, ի սէր և յատիճան նախագահութեան ի մէջ նախարարաց մերոց, որք ընդ մեզ են» (նույն տեղում):

տր առաջադրութեանս...»¹⁰⁴: Հայոց և Վրաց թագավոր ներկայանալու փաստը, որ միանգամայն համահունչ էր Վրաց իշխանությունների շահերին ու հավակնություններին, նպաստավոր ձևով օգտագործվում էր Վրաց պետության կողմից իր ներքին ու արտաքին քաղաքականության ձևավորման ժամանակ: Նկատուելի է այն հանգամանքը, որ Գեորգի 12-րդը իր թելադրանքը պարտադրելու և հայոց թագավոր ևս ներկայանալու ժամանակ Երևանի ու Գանձակի խանությունները այլևս չէին գտնվում Վրաստանից կախման մեջ: Նրանք 1795 թ. Աղա-Մահմադ խանի արշավանքից հետո փաստորեն ընդունել էին Պարսից գերիշխանությունը և, օգտվելով Պարսից իշխանության վերահսկողության թուլացումից, փորձում էին ընդամենը վարել արտաքին խուսանավման քաղաքականություն՝ մնալով պարսից գերակայության ոլորտում: Հերակլին գրած իր նամակում "Վրաստանի և Հայաստանի թագավոր" է անվանում նրան Հովսեփ էջմիցը՝ երազելով նրա միջոցով ազատագրել ողջ Հայ ժողովրդին¹⁰⁵: Ուշադրալ է նաև Հակոբ Շամախեցի կաթողիկոսի 1760 թ. գրած նամակը Ելիզավետա թագուհուն՝ թեյմուրազ Երկրորդի խնդիրներին ընդառաջելու միջնորդությունով¹⁰⁶: Հայոց կաթողիկոսը իր միջնորդությունը հիմնավորում է նրանով, որ թեյմուրազն ու նրա որդի Հերակլ 2-րդը «զցայգ և զցերեկ ընդդիմացան և ընդդիմանան ևս Լեզգիեաց և յաղթեցին ևս բազում անգամ և... մնացեալ քրիստոնեայք՝ թէ Հայք և թէ Վիրք և թէ այլազգիք ևս, զի գնոսա ևս զերեն, Գախ Աստուծոյ և սպայ դոցա պահպանութեամբն կան այժմ»¹⁰⁷:

Հայ պատմագիրտության մեջ տարածում էր ստացել, սակայն, նաև այն տեսակետը, թե 1720-ական թթ. սկզբներին, «տակավին արշավանքից առաջ Պետրոս ցարը բանակցություններին մեջ էր մտել Հայ և վրացի ներկայացուցիչների հետ, խոստանալով կազմակերպել Հայ-վրացական պետություն՝ Ռուսաստանի հովանու ներքո»¹⁰⁸: Իրոք, Պետրոս I-ինը մտադիր էր Վախ-

¹⁰⁴ ՄՄ, ԿԳ, 9/168, հայ. թարգմ.:
¹⁰⁵ А. Р. Иоаннисян. Иосиф Эмин. Ер., 1989, с. 41.
¹⁰⁶ Армяно-русские отношения (св. док.), IV, с. 19-22. Վ. Մարտիրոսյան. Հայ-վրացական առնչությունները 18-րդ դարի 50-60-ական թթ.՝ «Լրարբեր հաս. գիտ.», 1980, թիվ 1 (445), էջ 41:
¹⁰⁷ Армяно-русские отношения (св. док.), IV, с. 21.
¹⁰⁸ В. И. Лысов, Персидский поход Петра I. 1722-23гг., 1951, с. 190, 216. Армяно-русские отношения в первой трети XVIII века. Сборник док. Том II, часть I, Под ред. Ашота Иоаннисяна, Ер., 1964, с. XXIX-XXXII. Հայ ժողովրդի պատմություն, հատոր IV, Երևան, 1972, էջ 146-147: Վ. Ա. Դիրոյան, Արևելյան Հայաստան

թանդին Հանձնել Երևանը¹⁰⁹: Այդ մասին Վախթանգը իմացավ միայն 1722 թ. նոյեմբերի 24-ին, երբ Գանձակում Արցախահայոց բանակի հետ երկու ամիս ապարդյուն սպասելուց հետո վերադարձավ Թիֆլիս և ընդունեց Պետրոսի պատվիրակ Ի. Տոլստոյին, որ Թիֆլիս էր ժամանել Թուրքեստանովի ուղեկցությամբ: Վախթանգը մինչ այդ արդեն Հանդես էր եկել Շամախին ավերած լիզգիների դեմ և Շահ Հուսեյնի կողմից դեռևս 1721թ. սեպտեմբերին լիազորվել էր զորավելու Կախեթի և Ղարաբաղի պաշտպանությամբ¹¹⁰: Ի. Տոլստոյը պետք է Վախթանգի մոտ մնար մինչև նոր կարգադրություն ստանալը և նրան հաղորդեք արշավանքի դադարեցման պատճառների մասին, Վախթանգին և Եսայի Հասան-Ջալալյանին Հանձնեք Պետրոսի նամակները¹¹¹ և տեղեկացներ նաև 1723թ. արշավանքի ծրագրերի մասին¹¹²: Ռուսական կողմը Վախթանգին խորհուրդ էր տալիս, որ եթե նա նպատակահարմար գտնի, ապա թող Պարսից շահին առաջարկություն անի նաև բոլոր քրիստոնյաներին իր (իմա՝ Վախթանգի – Պ. Չ.) հպատակությանը Հանձնելու մասին՝ և, որպես փոխհատուցում՝ շահին խոստանա օգնություն ընդդեմ խոտվարարների¹¹³: Ռուսական կողմը իր վրա էր վերցնում շահի հետ այդ խնդիրների շուրջը բանակցելու և պայմանագիր կնքելու նախաձեռնությունը¹¹⁴:

տանը 19-րդ դարի առաջին երեսնամյակին և հայ-ռուսական հարաբերությունները, Եր., 1989, էջ 6:
¹⁰⁹ Վ. Մ. Մարտիրոսյան, Հայ և վրաց ժողովուրդների համագործակցությունը ազատագրական պայքարում (XVIII դարի 20-ական թվականներ), Եր., 1971, էջ 96:
¹¹⁰ П. И. Петров. Ферман Шаха Султан-Хусейна Вахтангу VI, – "Советское востоковедение", 1957, № 4, с. 128.
¹¹¹ Պետրոս I-ինը Վախթանգից պահանջում էր "о склонении шаха к принятию против бунтовщиков Росейской помощи и об уступке за то России Персидских провинций, прилежащих Каспийскому морю... и ежели он в деле сему успеет, то из того доставится преевеликая польза и ему, иво он освободится от ига неверных и будет содержан в милости государевой и дана будет ему власть над всеми тамошними христианами..." (П. Г. Бутков. Материалы для Новой истории Кавказа, ч. I, СПб, 1869, с. 31): Ըստ Պ. Բուսովի «Подобное сему писано тогда же от его величества и армянскому патриарху Исаю. Вахтанг принял на себя охотно предложить шаху вышеписанное, но то было уже поздно» (Նույն տեղում):
¹¹² Վ. Մ. Մարտիրոսյան, Հայ և վրաց ժողովուրդների համագործակցությունը ազատագրական պայքարում, էջ 95:
¹¹³ Նույն տեղում, էջ 93:
¹¹⁴ Նույն տեղում, էջ 93-94: Այդ իրոտում-առաջարկը պետք է դիտել անիրական, բանգի, ինչպես Հանրահայտ է, Պետրոս I-ի և Վախթանգի միջև հաստատված կապերի և Չոլակի մոտ կայանելու մասին տեղեկանալով, շահ Թահմասը 2-րդը անմիջապես նրան մեղադրեց պետական դավաճանություն մեջ և հրամանով

Արձանադրելով այդ տեսակետը, ակադ. Աշոտ Նովհաննիսյանը իրավա-ցիտորեն շեշտում է, թե «Իհարկե, սխալ կլինեք ենթադրել, թե ցարը առաջ էր քաշում հայ-վրացական թագավորության գաղափարը՝ ելնելով հայ և վրաց ժողովուրդների ինքնորոշման ձգտումներից: Նա ընդառաջում էր հայ և վրաց ղեկավարների «ազատագրման» գաղափարին, որչափ գա կարող էր վրաց ղեկավարների «ազատագրման» Ռուսաստանի ամբանալուծում»¹¹⁵: Ուստիև այդ գաղափար-խոստումը Պետրոս I-ի կողմից գուտ դիվանագիտական քայլ կարող է դիտվել և ոչ ավելին: Բնականաբար, տվյալ դեպքում Պետրոսը ընդամենը փորձում էր հենվել հայ և վրաց գործիչների նախորդ ժամանակներում ունեցած համագործակցության ծրագրերին՝ շահելու համար նրանց աջակցությունը:

Միանգամայն հիմնավոր է, ուստի, այն հետևությունները, որոնք ձևավորվում էր ռուս-վրաց-հայկական քաղաքական ու ռազմական դաշինքը, և սկսվել էին գործնական քայլեր՝ դաշինքի ամրապնդման և ապագա գործողությունների նախապատրաստման համար»¹¹⁶: Հետևաբար հայ և վրաց գործիչների համար ազատագրական պայքարում հայ-վրաց-ռուսական համագործակցության ընդունելի լինելու խնդիրը արդեն ուղիղագծվել էր 1720-ական թվականներից շատ ավելի առաջ, իրենց իսկ՝ հայ և վրաց գործիչների կողմից և ոչ՝ ռուսական իշխանությունների նախաձեռնությամբ: Հայագրի գործիչները որոշակի ակնկալություններ հետևում էին նաև դեռևս Պարսկաստանում բանտարկության ժամանակ Վախթանգ VI-ի կողմից Հոռոմի և Ֆրանսիական արքունիքի հետ վարվող գաղտնի բանակցությունների ընթացքին ու արդյունքներին¹¹⁷: Նույն այդ ժամանակ (1716 թ.) Պարսկաստանում գտնվող Պետրոս I-ի պատվիրակ Ա. Վոլինսկին թեև Վախթանգին ազատելու մասին միջնորդելու կամ ջանքեր գործադրելու հրահանգ ուներ, բանցի նման խնդրանքով

գրկեց Քարթլիի վալիի ու իրանական զորահրամանատարի իրավունքներից: Շահը այդ պաշտոնները Հանձնեց նրա հակառակորդին՝ Կախեթի Կոստանդին թագավորին (Մուհամմադուլի խան): Զորահրամանատարության հետ մեկտեղ վերջինիս Հանձնեց նաև Երևանի, Գանձակի ու Ղարաբաղի բեկլարեկությունները: 1722 թ. վերջերից ղինարխոման մեջ մտնելով Վախթանգի հետ, 1723 թ. մայիսին Մուհամմադուլի խանը արդեն գրավեց Թիֆլիսը, իսկ Վախթանգը ստիպված էր հեռանալ Ռուսաստան:
¹¹⁵ Հայ ժողովրդի պատմություն, Հ. IV, էջ 147:
¹¹⁶ Վ. Բ. Բարխուդարյան, Վ. Կ. Ոսկանյան. Հայ-ռուսական պատմական կապերը և Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին, Եր., 1978, էջ 93:
¹¹⁷ Պ. Չոբանյան, Վրաց ուղեգրությունները..., էջ 16-22:

Պետրոս I-ին դեռևս մինչև Ա. Վոլինսկու ճանապարհվելը¹¹⁸ Պետերբուրգում դիմել էին (1715 թ. մարտ) Իմերեթի թագուհի Եկատերինան և ուրիշներ, սակայն Ա. Վոլինսկին Պարսկաստանում կասկածանքով էր վերաբերվում Վախթանգի կողմից արված համադրժակցության առաջարկներին և զգուշացավ նրա հետ կապեր հաստատելուց¹¹⁹: Վախթանգը դեռևս չգիտեր, որ չնայած այդ ամենին, Ռուսական արքունիքից Պարսից շահին և Հնդկաստան ուղարկվելիք նամակներում ցարի տիտղոսաշարի քննարկման առիթով Սենատը 1716 թ. մայիսի 18-ին արդեն որոշել էր Պետրոս I-ի տիտղոսաշարի մեջ մտցնել «Государь Иверские земли, Карталинских и Грузинских царей и Кабардинские земли Черкасских и Горских князей» («Տիրակալ Իբերական երկրի Քարթլիի և Վրաստանի թագավորների և Կաբարդական երկրի Չերքեզական և Կոնսական իշխաններ»)՝ ձևակերպումը և այն պետք է օգտագործվեր բոլոր դեպքերում, բացի միայն Պարսից շահին ուղղված նամակներից: Իրոք, նույն ժամանակ Հնդկաստան «падишаху Индии Джаханदार шаху» ուղարկված նամակում առկա է այդ ձևակերպումը¹²⁰:

720-ական թվականների իրադարձությունները, սակայն, միանգամայն ապացուցեցին Իսրայել Օրու խոստումների իրական լինելը՝ Վախթանգ VI-ի բանակը և հայկական զորքերը Գանձակի մոտ Չուլակ ուխտավայրում իրոք միասին սպասում էին Ռուսական բանակի ժամանելու մասին հաղորդումներին: Հայ և Վրաց զորքերի այդ հանդիպումը կարող էր հայ-վրաց զինակցության հիման վրա հայ-վրաց թագավորության ստեղծման հնարավորության համար նախադրյալ ընկալվել: Սակայն երկու ամիս անց հայ-վրաց զորքերի վերադարձը, իսկ 1723 թ. մայիսին Վախթանգ VI-ի իշխանությունից զրկվելն ու Վրաստանից Ռուսաստան հեռանալը բացառեցին այդ միտումների հետագա զարգացումները: Չիրականացավ նաև Իվան

¹¹⁸ П. П. Бушев. Посольство Артемия Вольнского в Иран в 1715–1718 гг. (по русским архивам). М., 1978, с. 23, 29:

¹¹⁹ П. П. Бушев. Посольство Артемия Вольнского в Иран, с. 220–223, 263. Ա. Վոլինսկու անտարրեր նման վերաբերմունքից բողոքում էր նաև Մինաս վարդապետը՝ Պետրոս I-ին զրած զեկուցադրում ու հաշվետվություններում. «զմեղ էլչուն ումուսովն ուղարկեցին, նա հէջ մեղ մտիկ չի տար» (տե՛ս Армяно-русские отношения в первой трети XVIII века (Сборник документов), том II, часть I, с. 365, հմմտ. նույն տեղում, էջ 366, 369):

¹²⁰ Русско-индийские отношения в XVIII веке, (Сборник документов). М., 1965, с. 47–48:

Կարապետի միջոցով հայոց ազատագրական պայքարին օժանդակելու Պետրոս I-ի խոստումը, և Վրաստանը, իսկ այնուհետև նաև Հայաստանը, զրեթե մերողություն չէին ցուցաբերում Օսմանյան լծի ներքո: Այուրևայց և Արցախահայոց պայքարը օսմանների դեմ շարունակվեց մինչև Նադիրի կողմից թուրքերին վճռելու շրջանը՝ ունենալով նաև Ռուսաստանից օժանդակություն ստանալու խոստումն ու հուսադրումը, իսկ փոխարենը՝ Հայոց ազատագրական պայքարը կարևոր ներդրում էր Ռուսաստանի կողմից Մերձկասպյան տարածքների գրավումը դյուրացնելու գործում¹²¹: Կարևոր է ընդգծել նաև, որ Հայ ազատագրական ուժերը շարունակում էին պայքարը Օսմանյան և, որ Հայ ազատագրական ուժերը շարունակում էին պայքարը Օսմանյան նվաճողների դեմ, այլևս չհուսալով թուրքերի կողմից գրավված Վրաստանի օգնությունը կամ, առավել ևս, չմտածելով Հայ-վրացական թագավորության ստեղծման մասին: Արդեն իսկ նկատված է¹²², որ «1723 թվականին հաջորդած իրադարձությունները՝ թուրքերի կողմից Թիֆլիսի գրավումը և Վախտանգին իշխանությունից զրկելը, որ չհասցրեց ստանալ ռուսական զորքերի օգնությունը, որոնք մոտ երկու ամիս անց գրավեցին Բաքուն, վերջնականապես թաղեցին հայ-վրացական պետության ստեղծման Պետրոսի ծրագիրը»:

Իրավացի է դիտված, թե «Բաքուն գրավելու հարցում նա [իմա՝ Պետրոս I-ինը՝ Պ. Օ.] չհասպղեց զորք ուղարկել, մի բան, որ ըստ հույժան չկատարեց Վրաստանի և Հայաստանի հարցում»¹²³:

Միանգամայն ակնբեր է, որ ԺԸ դարի երկրորդ կեսին հայ-վրացական պետության ստեղծման հնարավորության հարցը և Վրաց Բագրատունիներին Հայոց թագավոր ևս ճանաչելու ձգտումները չէին կարող հիմնված լինել Պետրոս I-ինի 1722 թվ. տված խոստումի վրա: Այն հայ-վրացական երկարատև հարաբերություններին ուղեկցող դադարի արդյունք էր: Ռուսաստանը, ինչպես ԺԸ դարի առաջին քառորդին, այնպես էլ դարի վերջին քառորդին հմտորեն օգտագործում էր մահմեդական լծի դեմ հայ-վրացական համադրժակցության հնարավորության հույսը և անկախություն

¹²¹ Армянское войско в XVIII веке. Из истории армяно-русского военного сотрудничества (исследование и документы), Подготовил к изданию А. Н. Хачатрян, Ер., 1968, с. 80–84.

¹²² Армяно-русские отношения в первой трети XVIII века. Сборник документов. Том II, часть I, с. XXXII. Հմմտ. Հայ ժողովրդի պատմություն, հատոր IV, եր., 1972, էջ 147–149:

¹²³ Վ. Մ. Մարտիրոսյան, Հայ և վրաց ժողովուրդների համագործակցությունը ազատագրական պայքարում (XVIII դարի 20-ական թվականներ), եր., 1971, էջ 103:

ձեռք բերելու երազանքը: ԺԸ. դարի երկրորդ կեսի առանձնահատկությունն էր Ռուսաստանի կողմից Վրաստանի նկրտումներին Հայաստանի տարածքի նկատմամբ բավարարում տալու միջոցով՝ շահելու վրացի և հայ գործիչների օժանդակությունը՝ Այսրկովկասում իր տիրապետությունը հաստատելու համար: Այդ առումով հասկանալի և բացատրելի է դառնում նաև այն փաստը, որ 1796 թ. Վ. Ջուրովի հրամանատարությունում Ռուսական բանակի այսրկովկասյան արշավանքի ժամանակ ևս Երևանի գրավումը վերապահվում էր Հերակլ 2-րդին՝ բավարարում տալու ինչպես վրաց հավակնություններին, այնպես էլ ղրվանդադիտական հիմնավորում ստեղծելու՝ Օսմանյան Թուրքիայի հետ անմիջական ընդհարումից խուսափելու համար:

Թերևս առանձին արձանագրման արժանի է միայն 1783 թ. ապրիլի 6-ին Գ. Պոտյոմկինի հայտնի հրահանգը Պ. Ս. Պոտյոմկինին. «Ձեզ ուղարկված կարգադրություններից դուք կհասկանաք ինչպես պետք է կապերը սերտացնել Հերակլ թագավորի հետ: Ձեռք բերելով նրա վստահությունը, Գուռք անվերապահ կկառավարեք նրան: Շուշիի խան Իբրահիմին պետք է տապալել, քանզի դրանից հետո Ղարաբաղը կկազմի Հայկական, բացի Ռուսաստանից, բոլորից անկախ, մարզ... Սրանով և Հայկական մյուս ուժեղ նահանգները կամ կհետևեն նրանց օրինակին, կամ թե մեծ քանակով [հայեր] կսկսեն գալ Ղարաբաղ»¹²⁴: Իր այդ քայլի մասին Գ. Պոտյոմկինը ծանուցել է Եկատերինա 2-րդին 1783 թ. մայիսի 19-ին. «Դեռևս չունենալով Ձեր Կայսերական Մեծության կարգադրությունը, ես գեներալ-պոր. Պոտյոմկինին Շուշիի Իբրահիմ խանի վերաբերյալ հրահանգ եմ տվել, որ կմոտեցնի նրան հնադանդություն: Այստեղ անհրաժեշտ է քննարկել, որպեսզի հարմար առիթով նրա մարզը, որ բաղկացած է հայ ժողովրդից, հանձնել ազդային կառավարմանը և զրանով վերականգնել Ասիայում քրիստոնեական պետություն, ըստ Կայսերական մեծության Ձեր խոստումների՝ տրված իմ միջոցով Հայոց մելիքներին»¹²⁵:

Տվյալ պարագայում, ինչպես ակնհայտ է, շրջանցված է Վրաստանը, որին և հարկատու էին Երևանի ու Գանձակի խաները, իսկ Արցախի հայ մելիքների հետ իր հարաբերությունները Հերակլի համար ևս միջոց էին՝ Իբրահիմի հետ հարաբերությունները կարգավորելու գործում: Նման իրավի-

¹²⁴ Армяно-русские отношения..., IV, с. 239:

¹²⁵ Армяно-русские отношения..., IV, с. 241:

ճակում դժվար է պատկերացնել Հերակլի մտահոգությունները ապագայի համար: Գ. Պոտյոմկինի այդ նամակները և հրահանգները գրվում և Այսրկովկաս էին ուղարկվում 1783 թ. դարնանը, երբ դուգաչեո ընթանում էին նաև բանակցությունները ռուս-վրացական պայմանագրի շուրջ, որի մի շարք ձևակերպումներին Վրաստանը համառոտն գիծադրում էր, և որը կնքվեց ի վերջո Գեորգիևսկում միայն 1783 թ. հուլիսի 24-ին: Դրանից հետո սպասելով Գեորգիևսկյան պայմանագրի վավերացման արարողությանը, Հերակլը արդեն պահանջում է Վրաստանին միացնել Գանձակի նահանգը, որի համար Գ. Պոտյոմկինը 1784 թ. ապրիլի 6-ի գեկուցադրում ծանուցում է Եկատերինա 2-րդին. «Վաղուց արդեն նրան պատկանող պարսկական Գանձակ նահանգը Վրաստանին միացնելու նրա ցանկությունն մասին, խնդրում եմ Ձերդ Կայսերական Մեծության բարձրագույն կարգադրությունը»¹²⁶:

1784 թ. կրկին աշխուժանում են գրադրությունները Հայոց ազատագրության մասին: Ռուսաց արքունիքի համար ակնհայտ էր, որ "Իբրահիմ խանը, վախենալով իր բռնապետությունից բաց թողնել այս (իմա՝ հայ – Պ. Չ.) ժողովրդին, փորձում է միանալ Ռուսաստանին»¹²⁷: 1786 թ. մայիսի 26-ին Ս. Բուռնաշևը արդեն ստացել էր Իբրահիմ խանի մայիսի 23-ին գրած նամակը, որը նա ուղարկել էր Պ. Ս. Պոտյոմկինին: Արցախը ոչինչ հուսադրող լուրեր չի ստանում: Արդյո՞ք Հայոց պետականության վերականգնումն է հնարավորության մասին լուրերը լրացուցիչ լծակներ չէին նաև Վրաց թագավորի և Ղարաբաղի խանի հնադանդեցումը արագացնելու ու Ռուսաստանի մուտքը Այսրկովկաս գյուրացնելու համար: Այդպիսի հարցադրումը դառնում է տրամաբանական և հավանական, որովհետև Հերակլը այդ լուրերից հետո ստորագրում է պայմանագիրը, համոզում է Արցախի Իբրահիմ խանին Ռուսաստանի հովանավորությունը հայցելու նամակ գրել Ռուսական արքունիք, իսկ Գեորգիևսկյան պայմանագրով էլ իրավունք է ստանում Ռուսաստանի օժանդակությամբ գրավված բոլոր տարածքները միացնելու Վրաստանին. "Артикул второй. Ея Имп. Величество... обещает и обнадеживает Императорским Своим словом за Себя и Преемников Своих, что милость и покровительство их от Светлейших Царей Карталинских и Кахетинских никогда отъемлемы не будут. В доказательство

¹²⁶ Армяно-русские отношения..., IV, с. 299:

¹²⁷ Նույն տեղում:

чего, Ея Величество дает Императорское Свое ручательство на сохранение целости настоящих владений Его Светлости Царя Ираклия Теймуразовича, предполагая распространить таковое ручательство и на такие владения, кои в течение времени по обстоятельствам приобретены и прочным образом за ним утверждены вудут¹²⁹ («Հողոված երկրորդ. Նորին Կայսերական Մեծությունը ... խոստանում և հուսադրում է Կայսերական Իր խոսքով՝ իր և իր հաջորդների անունից, որ նրանց ողորմածությունն ու հովանավորությունը Քարթլիի և Կախեթի թագավորներից երեքք անպակաս չեն լինի: Ի հաստատություն որի Նորին Մեծությունը Կայսերական Իր երաշխավորությունն է տալիս պահպանելու ամբողջության մեջ Նորին Պայծառապալալությունը Հերակլ Թեյմուրազի որդու ներկա տիրույթները, հուսալով նույնպես իր երաշխավորություն տարածել նաև այնպիսի տիրույթները վրա, որոնք ժամանակի ընթացքում ձեռք կրերվեն հանգամանքների բերումով և նրան կհանձնվեն հաստատուն կերպով»): Շուտով, սակայն, ծագում են նոր խնդիրներ:

Գեորգիևսկյան պայմանագիրը դեռևս նոր էր վավերացվել (1784 թ. հունվար), երբ Ա. Ա. Բեկբերդուկոյի հաղորդմամբ, Գ. Ա. Պոտյոմկինը 1784 թ. մայիսին նամակով ծանուցել էր իրեն Պարսկաստանի ներկա փոխարքա Ալի Մուրադ խանի կողմից առաքված դեսպանապալանի ժամանելու մասին, «պատրաստակամությունը անելու ամենը, ինչ մեզ համար անհրաժեշտ է, ցանկանալով ստանալ թագուհու բարեպակամությունը և իր շահական արժանավորության ճանաչումը» և այն մասին, թե Գ. Պոտյոմկինը «համարում է այս առավել հուսալի միջոց պարսկական մեր գործերն ավարտելու համար՝ նրա հետ պայմանագրի կնքումով»¹²⁹: Ի հեճուկս Գեորգիևսկյան պայմանագրի, արդեն ենթադրվում էր, որ Ալի Մուրադ խանի հետ կնքելիք պայմանագրով «կարգավորված կլինեն մեր ձեռքբերումները, Հերակլի թագավորության սահմանները, Հայկական անկախ մարզերի դրությունը և մյուսը՝ Կասպյան ծովափերից ձևավորելիքը»¹³⁰: Ենթադրվող երեք մարզե-

¹²⁹ լիժ, II, ՅՅ. 463-464.

¹²⁹ Армяно-русские отношения..., IV, с. 317. Հմմտ. А. Р. Иоаннисян. Россия и армянское освободительное движение в 80-х годах XVIII столетия, Ер., 1990, с. 131-132.

¹³⁰ Ի հեճուկս Գ. Ա. Պոտյոմկինի պատումների, Ալի Մուրադ խանը այդ առիթով դիվանագիտորեն պատասխանել էր Ռուսական արքունիքի հանձնարարությունը դեսպանությունը Սոլահան ժամանած Հակոբ Անտոնյանին, թե «Естли госуда-

րի գաղափարը թելադրում էր շարունակել Արցախի մելիքներին հուսադրումը, որի մասին լուրերի է հայտ գալը, սակայն, չէին կարող չանհանգստացնել ոչ միայն Իրրահիմին, այլև Հերակլին:

1786 թ. նոյեմբերի 2-ին Գ. Ա. Պոտյոմկինին դրած նամակում Հերակլ 2-րդը հիշեցնում է տեղի ունեցած իրադարձությունների «տրամաբանական» ընթացքը և Այսրեղովկասում իրադրությունների շեղացման, Վրաստանի կրած դժվարությունների ու թուրքական արքունիքի հետ Իբրահիմի մերձեցումի համար մեղադրում ռուսական կողմին. «Ձեզ հայտնի է, որ մեր և Իբրահիմ խանի միջև եղել է փոխադարձ երդում, և նա միշտ արտահայտվում էր դեպի մեզ այնպիսի բավականություններով, որ թե մենք ում հովանավորությունը դիմենք, ապա նա ևս դրան կհամաձայնի և երբ մենք մտանք Ռուսական դահի հովանու ներքո, այնժամ մենք խորհուրդ տվեցինք Իբրահիմ խանին, որպեսզի նա ևս բարեհաճի դեպի Ռուսական բարձրագույն արքունիքին, որպեսզի նա լիազորագրով Ձեր բարձրագուհուցությունը մոտ ուղարկի իր մարդուն, որը և ուղարկեց մոլլա Վալիին այն նույն մարդու հետ՝ բացատրելով իր նվիրվածությունը և ջանասիրությունը համառուսական արքունիքին: Բավական ընդարձակորեն ձեզ հաղորդել է, որից հետո մենք (ևս) համոզվել ենք մեր խորհուրդներով, որպեսզի նա ուղարկի իր հատուկ ներկայացուցիչին, որը և ուղարկել է Մուսա Սուլթանին Բարձրագույն արքունիք: Ձեզ այդ բոլորը հայտնի է, թե ի՞նչ գործերով է ուղարկվել և ինչ՞ով է վերադարձել ես:

Երբ այստեղ ժամանեց Բարձրագույն արքունիքից դոկտոր Ռայնգաբը, հենց նույն ժամանակ Ռուսաստանից եկավ խամսեցի մի հայ, նույն այդ հայը բերեց իմաստի մելիքներին նամակներ: Նրանց մասին մենք ոչինչ տեղյակ չէինք, թե ի՞նչ գործեր էր նա կատարում, որոշ ժամանակ անց մելիքներից իրենցից իսկ, նրանց ամբողջ զրազրությունը բացահայտվեց: Տեղեկանալով այդ մասին, Իբրահիմ խանը ծայր աստիճան վրդովվեց և բռնազրավեց մելիքությունը մելիք Աբովից, որից հետո սկսեց մեր հանդես ևս դժգոհել, և այդ պատճառով նաև ռուսական հովանավորությունից: Այդ ժամանակից սկսեց մեր նկատմամբ թշնամանալ, սկսեց զրազրություն Օսմանյան ար-

рыни угодно просить у меня области или города под протекцию, то я по благодати божней имею власть и силу разделить всю Персию пополам в ея владение, однакож, вудучи я довольно известен, что государыня имеет весьма достаточны города и места, я не думаю, что она просила области» (Армяно-русские отношения..., IV, с. 301).

բունիքի, էրզրումի Պատալ փաշայի և Ախալցխայի Սուլեյման փաշայի հետ, հրահրում էր նրանց, որ նրանք ևս մեր նկատմամբ թշնամանան¹³¹:

Ս. Բուռնաշևի հաղորդումներից Պ. Ս. Պոտյոմկինը տեղյակ էր իրադրութիան լրջութիան մասին¹³², գիտեր, որ Իբրահիմի հրահրումները վտանգ էին ստեղծել Երևանի խանութիան համար ևս: Ուստի Պ. Պոտյոմկինը հրահանգում է Ս. Բուռնաշևին, թե «եթե թագավորի հակառակորդները փորձեն ուժով խել Երևանը և թագավորը փորձի պաշտպանել նրան, ապա համաձայն Տրակտատի, մեր զորքերը պետք է մասնակցեն, իսկ եթե այնտեղ միջամտեն թուրքերը, ապա, Ձերդ վեհանձնություն, պարտավոր եք խուսափել նրանց հետ գործելուց, իսկ եթե նրանք ցանկանան հարձակվել ձեզ վրա, ապա պաշտպանվելը արգելված է»¹³³:

Ինչպես ակնհայտ է, Հերակլը Իբրահիմի քաղաքականությունը որակում է որպես չըջաղարձ և Վրաստանի հետ թշնամանալը ևս կապում-պայմանավորում է մելիքների և Ռուսաստանի միջև բանակցությունների փաստի հետ: Մինչ այդ, ըստ Հերակլի, Իբրահիմը իբր «պահպանել» է ռուսամետ ու վրացամետ զիրքորոշում: Հերակլը, այս դեպքում, անշուշտ, անկեղծ էր Իբրահիմի մտավարկությունների գնահատության խնդրում: Մինչ այդ էլ Հերակլը, տեղեկացվելով Տամարային Ալի-Մուրադ խանի մոտ բանակցությունների ուղարկելու Պ. Ս. Պոտյոմկինի մտադրության մասին, դեռևս 1784 թ. դեկտեմբերի 28-ի նամակում զրույցացրել էր նրան, թե չպիտի առիթ տալ Իբրահիմին կասկածելու իրենց (իմա՝ ռուս և վրաց կողմերի – Պ. Չ.) անկեղծությանը՝ ապագա ծրագրերի առումով: «Բազմիցս մենք զբղի ենք Ձ. Բ., որ Իբրահիմ խանը եթե տեսնի մեր մեջ ամենափոքր փոփոխություն և մտադրության տատանում, անմիջապես Գանձակի Մահմեդ խանին իր ամբողջ ընտանիքով կազատի և առանց այդ էլ թուրքերի, Աղբրջանական խաների և Դաղստանի կառավարիչների հետ հարաբերություններ ունենալով, և առավել կհակվի նա նրանց կողմը, կմիանա նրանց

և դործը ավելի կբժվարանա – կկորցնենք Գանձակը, և մեր դեմ հանգես կդա Ղարաբաղը»¹³⁴:

Շուտով Իբրահիմին հաջողվում է Գանձակի խանութիանը իրոք դուրս հանել Հերակլի տիրապետությունից և այնտեղ իշխանություն բերել Ջավադ խանին ու հաստատել իր ազդեցությունը¹³⁵: Իբրահիմը հայ-ուսական բանակցությունների մասին իրեղեն ապացույցներ է ստանում նամակատար-դեսպանագնաց Գաբրիել Կարախանովին Գանձակում ձերբակալելու, նրան Շուշի տեղափոխելու և այնտեղ հարցաքննելու միջոցով, որին հաջորդում են Աբով, Բախտամ ու Մեջլում մելիքների և Գանձասարի Հովհաննես Կաթողիկոսի բանտարկությունները 1787 թ.: Հովհաննես կաթողիկոսը և Մելիք Բախտամը սպանվում են, իսկ Աբով և Մեջլում մելիքներին հաջողվում է փախուստով միայն ազատվել: Հերակլին և Ռուսաստանի ներկայացուցիչ Ս. Բուռնաշևին ոչինչ էլ մնում անել, քան համառոտ արշավանք կազմակերպել դեպի Գանձակ՝ այնտեղ Հերակլի տիրապետությունը վերականգնելու համար: Բուռնաշևը, սակայն, հրաժարվում է արշավանքը դեպի Արցախ շարունակելու Հերակլ 2-րդի առաջարկից՝ պատճառաբանելով, թե այն Պարսկաստանին ենթակա տարածք է և ինքը հրաման չունի այնտեղ արշավելու¹³⁶: Դեպի Գանձակ ռուս-վրացական զորքի արշավանքը սկսվելով 1787 թ. օգոստոսի 12-ին Թիֆլիսից, զարթեցվում է այն մեկ ամիս անց՝ սեպտեմբերի 17-ին Գանձակի մոտ: Գանձակի խանը բանակցությունների ժամանակ Հերակլին հարկի վճարման պարտավորություն էր ստանձնել, սակայն այդ վճարական պահին Ս. Բուռնաշևը ստացավ արդեն ավելի քան մեկ ամիս առաջ՝ օգոստոսի կեսերին, ստորագրված հրամանը՝ ռուսական զուսմարտակներով Ռուսաստան վերադառնալու մասին¹³⁷: Ստանալով հրամանը, Ս. Բուռնաշևը, այլևս չի հասպտում այն կատարել, իսկ Հերակլը միայնակ ի վիճակի էր շարունակելու արշավանքը: Աբով և

¹³¹ Армяно-русские отношения..., IV, с. 345.

¹³² Ս. Բուռնաշևի 1787թ. հուլիսի 8-ի նամակը տես Օ. Ընդրեյչիկ, մասնաշրջանի ռուս-թուրքական շրջանակում օստրոտոսի (1782-1791 ՎՎ.)- "Նոսեցորո մոսմոյ", Թ. 23-24, տժ., 1970, ԶՅ. 116.

¹³³ ЦГВИА, ф. 52, оп. 1/194, л. 416, ч. I, л. 363об. (ընդգծ. մերն է- Պ. Չ.): Հմմտ. Ա. Ք. Խոսրոսյան, Россия..., с. 182-183: Օ. Ընդրեյչիկ, մասնաշրջանի ռուս-թուրքական շրջանակում օստրոտոսի (1782-1791 ՎՎ.), ԶՅ. 120-121.

¹³⁴ Межкавказские политические и торговые связи Восточной Грузии (конец 60-х – начало 90-х годов XVIII в.), с. 212-213.

¹³⁵ А. Р. Иоаннисян, Россия..., с. 181-182.

¹³⁶ Ձ. Նախուրյան, միջդրոտոսի նախնային շրջանակում օստրոտոսի (1782-1791 ՎՎ.)- "Նոսեցորո մոսմոյ", II, տժ., 1973, ԶՅ. 121.

¹³⁷ Ա. Ռ. Հովհաննիսյանը իրավաբանական այդ որակում է որպես «Գերդրական պայմանագրի կոպիտություն խախտում: Վրաստանը, փաստորեն, նեպակց բախտի բնահանույթին» (Ա. Ք. Խոսրոսյան, Россия..., с. 188):

Մեջլում մեկիքներին հաջողվում է միայն իրենց ուղեկիցներին փոքր խմբով Վրացական և Ռուսական զորքերի հետ հեռանալ Արցախից՝ «դառնալով արդեն անտուն վտարանդիներ»¹³⁸:

Այսրիովկայան ժողովուրդների ազգային ձգտումներին լավածանոթ Վ. Ա. Զուբովը Վրաց թագավորության վերացումից հետո էլ 1803 թ. ներկայացրած իր ծրագրում առաջարկում էր ընդարձակել Վրաստանի սահմանները՝ շեշտելով հենց Ռուսաստանի շահերը. «Վրաստանը մեզ համար ամենակարևորն է, ես կասեի, որ ամբողջ ստեղծելու համար, և իր քաղաքական գոյությունը: Ռուսաստանի էական շահերի համար անհրաժեշտ է նրա սահմանները տարածել մինչև Կուր և Արաքս և նրան միացնել Արաքսով ընկած ամրոցներ Շուշին, Նախիջևանը և Երևանը, իսկ դեպի Աև ծով Ռիոն դետով կամ Ֆադիսը, Իմերեթը...»¹³⁹:

Այսպիսով, վերոբերյալից ակնհայտ է, թե Հայաստանի ազատագրման նպատակով եթե հայազգի գործիչները ունեին որոշակի ակնկալիքներ Վրաստանի կողմից ռազմա-քաղաքական օժանդակություն գտնելու հարցում և մշտապես ձգտում էին նպաստել Վրաստանի առաջընթացին, ապա Վրաց իշխանությունները օգտագործելով հայոց ազգային ակնկալիքները, մտահոգված էին միայն Վրաստանի տնտեսական, ռազմա-քաղաքական ու մշակութային զարգացման խնդիրներով: Հայաստանի քաղաքական անկախություն վերականգնումի խնդիրները չէին կարող մասնել և չէին մտնում վրաց գործիչների նախազգուշանքի մեջ, Վրաստանը ընդամենը փորձում էր ընդարձակել իր սահմանները՝ ընդգրկելով Հայաստանի տարածքները, իր տիրապետությունը հաստատել Հայաստանում և հայոց նկատմամբ ազդեցությունը պահպանելու նպատակով ներկայանալ որպես Հայոց հովանավոր և ապաստան: Հայոց օժանդակությունը փնտրելու խնդրում հակադրվում էին վրաց-ռուսական շահերը, իսկ Հայաստանի մահմեդական իշխանությունները Հայոց ազատագրական ձգտումների մեջ, ընկալանաբար, տեսնում էին միայն իրենց տիրապետության վտանգներ:

¹³⁸ А. Р. Иоаннисян, Россия..., с. 189.

¹³⁹ Н. Г. Куханова, Освещение..., «Иран», М., 1973, с. 191.

2.3 ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ՀԱՐԱՐԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՒ ՀԱՅ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԻՏՏՔԸ

Հայոց քաղաքական միտքը ազատագրական ծրագրերում մշտապես կարևոր տեղ է հատկացրել Վրաստանին և հայ-վրացական հարաբերություններին: Հայաստանում և Վրաստանում տեղի ունեցող ռազմա-քաղաքական գործընթացները ևս հաճախ պայմանավորված են եղել ինչպես միմյանց տարածքներում, այնպես էլ իրենց շուրջ եղած քաղաքական միավորներում տիրող իրավիճակի հետ: Հայ-վրացական հարաբերությունները ժԸ դարում ձևավորվում էին ինչպես ըստ Վրաստանում ժողովուրդների բազմաբնույթ հարաբերությունների հենքի վրա, այնպես էլ ըստ Հայաստանում և տարածաշրջանում վրաց իշխանությունների ունեցած առնչությունների ոլորտում: Վրաստանի քաղաքական իրադրությունը հետևելու և այն ի նպաստ Հայաստանի ազատագրության օգտագործելու փորձերի մասին հայտնի են Իսրայել Օրու, Արցախի և Սյունիքի 1720-ական թվականների ազատագրական պատերազմներում համագործակցության և այլ փաստերից¹⁴⁰: Հայազգի գործիչները հաճախ ընդգրկվում էին նաև Վրաստանի արտաքին հարաբերությունների ձևավորման ոլորտ և իրականացնում Վրաց արքունիքի դիվանագիտական բանակցությունների վարումը այլևայլ պետությունների ու երկրների հետ¹⁴¹:

Պարսկաստանում Նադիր շահի սպանությունից անմիջապես հետո և ժԸ դարի երկրորդ կեսի ընթացքում առաջացած քաղաքական նոր իրադրություն պայմաններում, ի տարբերություն հայ իրականության, վրաց իշխանություններին հաջողվում է ձեռք բերել փաստացի անկախություն՝ պահպանելով իրանական պետության մեջ նախկինում ունեցած «Գուրջիստանի վալի» իրենց բարձր կարգավիճակն ու համարումը և ներկայանալ որպես իրանական պետության ճակատագրով «մտահոգ» գործիչներ:

¹⁴⁰ Армяно-русские отношения в первой трети XVIII века(сб. док.), т. II, ч. I-II, под ред. Ашота Иоаннисяна, Ер., 1964, 1967.

¹⁴¹ ԺԸ դարի երկրորդ կեսին նման գործիչներից էին Օթար Թումանյանը, Գուրգեն Ենիկոյոյանը, Սուլիան Թումանյանը և այլք: Վրաց արքունի դիվանագիտության թումանյանների (վրաց իրականության մեջ՝ Թումանիշվիլի) տոհմաձառը տե՛ս Cyrille Toumanoff. Les Dynasties de la Caucasic Chretienne. Roma, 1990, p. 338-345, 565-566.

այդպիսով, ամբողջը հորինելով...որ իբր Հերակլը ռազմադաշտում ունի մինչև ութսուն հազարանոց բանակ»¹⁵¹;

Օսմանյան իշխանությունները Հերակլի նման «համարձակություն» դրդապատճառ ու հովանավոր ենթադրում են Ռուսաստանին: Տարածվում են լուրեր, թե իբր ռուսները «Աստրախանից հետախուզական խմբեր են բերել այս վայրերը»¹⁵²: Ըստ Օրբենկովի առավել զգաստ դիտարկումների, Օսմանյան արքունիքը, լսելով այդպիսի մեծ ուժերի և գրեթե ամենորոյա առաջադիմություն մասին և «միամտմանակ չկարողանալով պատկերացնել, թե նրանք [իմա՝ վրացիները – Պ. Ջ.] ի վիճակի են այդքան զորք պահելու», կասկածում էին, թե հավատակից լինելով վրացիներին, գուցե Ռուսական արքունիքը եթե ոչ զորք, ապա հնարավոր է, որ դրամ է ուղարկել՝ որպեսզի ուժեղացնելով նրանց Բարձր Դուռն համար այն կողմից ստեղծի նոր հակառակորդ, անհրաժեշտության դեպքում թուրքերի համար նման վտանգավոր վայրից, ինչպիսին է Ան ծովը, «диверсию сделать»¹⁵³:

Հերակլ 2-րդը կարողացավ հմտորեն կանխել նման ոչ ցանկալի ու վտանգավոր զարգացումները և, Պեյտոնիկի վկայությամբ, «Հայտարարեց, որ ինքը սովյալ պարագայում գործում է որպես Dewlet-Scheriki կամ, այսպես ասած, որպես Կայսրության բարեկամ: Ենթադրեցին, որ հենց ինքը՝ Հերակլն էր համարձակվել իրեն տալ նման որակավորում, հիմնվելով մի պայմանագրի վրա, որը իբր ինքը կապել էր Շահ-Ռուխի հետ՝ տերությունը բաժանելու համար»¹⁵⁴:

Ստեղծված նոր պայմաններում ևս Հայ քաղաքական միտքը ձևավորող դործիչները շարունակում են Վրաստանի հզորացումը երաշխիք համարել Հայաստանի ազատագրության համար¹⁵⁵ և ոչ միայն համաձայնել, այլև անգամ Հայաստանը Վրաց թագավորության կազմի մեջ տեսնելը փրկություն համարել՝ այն պատկերացնելով որպես Հայ-վրացական միավորյալ պետություն՝ Հայոց էական դերակատարումով¹⁵⁶: Ընդ որում Հայ քաղա-

¹⁵¹ Նույն տեղում:
¹⁵² Մ. Կ. Ջուլյալան, Նշվ. աշխ., էջ 325:
¹⁵³ Յ. մոջլուջ, Նշվ. աշխ., էջ 74:
¹⁵⁴ Մ. Կ. Ջուլյալան, Նշվ. աշխ., էջ 325-26:
¹⁵⁵ Վ. Մարտիրոսյան, Հայ-վրացական առնչությունները XVIII դ. 50-60-ական թվականներին, «Լրագրեր հաս. գիտ.», 1980, թիվ 1, էջ 42:
¹⁵⁶ Ուշագրավ է նաև այն հանգամանքը, որ Հերակլ 2-րդին գրած նամակում Ռուսաստանի կանցլեր Վորոնցովը հորդորում է, թե «как е. св. Теймураз Николаевич сего человека весьма милостиво принять изволил с обещаниями, кои соответство-

քական միտքը ձևավորվում էր ոչ միայն բուն Հայաստանում, այլ նաև գաղթօջախներում:

Հնդկահայ գաղթօջախում սկիզբ առած Հայ ազատագրական շարժման գաղափարախոսությունը նշանավոր ներկայացուցիչ Հովսեփ Էմինը ինչպես գործնական քայլերով, այնպես էլ գրավոր-քարոզչական միջոցներով արձանագրել է իր և իր ժամանակակից որոշ գործիչների այն համոզումը, թե Հայ-վրացական համագործակցությունը ոչ միայն հնարավոր, այլև այն միջոց և երաշխիք կարող էր լինել Հայոց պետականության վերականգնման համար¹⁵⁷:

Հակասոսմանյան դաշինք ձևավորելու ծրագրերում դեռևս Ժե. դարից շրջանավորդ գաղափարը, թե հնարավոր է Օսմանյան տիրապետության ներքո գտնվող Հայ, վրացի, թուրքմեն, ասորի, եզդի և այլոց դաշնակցությունը, իր շարունակությունն է ունենում ԺԷ-ԺԸ. դդ. ևս¹⁵⁸:

Օսմանյան հպատակ ժողովուրդների դաշինքի ու համատեղ հանդես գալու հնարավորության վրա էին կառուցված Օսմանյան լծից ազատագրական պայքարի հաջողության հասնելու գործում Մշո ս. Կարապետ վանքի վանահայր Հովնան վարդապետի հաշվարկները: Ինչպես Հայտնի է, 1760-ական թթ. Թիֆլիսում էր գտնվում Հովսեփ Էմինը, որը մտադիր էր ստանալ Հերակլի աջակցությունը, անցնել Արևմտյան Հայաստան և այն ազատել թուրքական լծից: Բուրդ-եզդիներն ու ասորիները որպես Հայերի դաշնակից էին դիտվում Օսմանյան պետության դեմ Հայոց պայքարի ընթացքում, ինչպես այդ մասին փոստահարը Հովսեփ Էմինին գրում էր Հովնան վարդապետը Մուշից: Ըստ Հովնան վարդապետի Հերակլ 2-րդի կողմից Հովսեփ Էմինին տրամադրվելիք ռազմական ուժերը կարող էին լինել անգամ փոքր, նույնիսկ սիմվոլիկ (ընդամենը 50 հոգի), միայն տպավո-

вали его желанию, так прошу я и в. св. Равномерно его принять и великою вашею милостью не оставить...». Տե՛ս Արмяно-русские отношения, IV, с. 41.
¹⁵⁷ Հովսեփ Էմինի ինքնակենսագրության վերլուծության հիման վրա Ա. Ռ. Հովհաննիսյանը՝ նկատել է, թե «Ираклий не был способен увлечься политической программой Эмина. Все еще могущественной Османской империи Ираклий сам в это время опасался и вступать с ней в войну ради освобождения армянских земель отнюдь не думал». (А. Р. Иоаннисян. Иосиф Эмин. Ер., 1989, с.109). Միմեն Երևանցու նամակում Հովսեփ Էմինի մասին «մեր պարոն» արտահայտությունն անգամ հարուցել է Հերակլի դժգոհությունը: (Տե՛ս А. Р. Иоаннисян., Նշվ. աշխ., էջ 145-146):
¹⁵⁸ Հմմտ. Յ. Քիրլոսեան, Հետաքրքրական վաւերաթուղթ մը. «Բազմալէպ», 1963, էջ 122-125:

րուժյուն գործելու համար, թե չհերակլը ևս մասնակից է հակասմանյան պայքարին:

Թե որքան չափազանցված և իրատեսական չէին Հովնանի՝ Հովսեփ Էմինին գրած նամակում Օսմանյան թուրքիայի մասին ունեցած պատկերացումները, ցույց են տալիս հետևյալ տողերը: Արձանագրելով, որ իրոք «թուրքերը այն չեն, ինչպիսին եղել են հարյուր տարի առաջ», Հովնանը 1763 թ. պնդում էր, թե «Նրանք կզիջեն ամեն ինչ առանց պայքարի, և քանի որ նրանց քաղաքները ամրացված չեն, ապա կարող ես ենթադրել, որ նրա զրավումը շատ դյուրին գործ պետք է լինի: Նրանց մտքերում արմատացել է մարգարեությունը, որ իրենց տիրապետությունը մոտենում է ավարտին, և որ նրանց պայքարը քրիստոնյաների դեմ ոչ մի իմաստ չի կարող ունենալ: Նրանք նույնպես լսել են Ռուսական կայսրությունից քո մամուլնու մասին, որ Ռուսական կայսրությունը երաշխավորել է Վրաց արքայազնին, և թուրքերը չեն համարձակվի անգամ մեկ քրիստոնյայի արյուն թափել: ...Եթե չհերակլի հետ ոչինչ չստացվի, քեզ իմ հայրական խորհուրդը՝ երբեք մի թուլանա և առաջ ընթացիր, մի երկնչիր ոչ մի վտանգից և ապավինիր Աստծուն: Կհասնես քո նպատակին թե ոչ՝ քեզ ապահովված է փառքը»¹⁵⁹:

1750-60-ական թվականները Օսմանյան պետության պատմության մեջ իրոք հայտնի են որպես կենտրոնական իշխանության թուլացման, միջավատատիրական կռիվների և կառավարող փաշաների կենտրոնախուսյա ձգտումների դրսևորումներով հագեցած շրջան: Կան բազում նկարագրություններ անիշխանության և տեղական կառավարիչների կողմից միմյանց դեմ մղած արյունահեղ կռիվների մասին¹⁶⁰: Մահմեդական առանձին ավատատերեր իրենց սոցիալական ու ազգային դիրքերը ամրապնդելու համար

¹⁵⁹ Life and Adventures of Emin Josef Emin. Calcutta, 1918, p. 234-236. «Յոփսէփ Էմինի կեանքն ու արկածները», Պէյրութ, 1958, էջ 267-268: Հավատում էր Հովսեփ Էմինը, թե «թուրքերը չեն համարձակվի անգամ մեկ քրիստոնյայի արյուն թափել», այդ մասին վկայություն չունենք, սակայն այն, որ ժամանակի Ամենայն հայոց կաթողիկոս Սիմէոն Երեանցին ոչ միայն չէր հավատում, այլև Հովնանից ոչ պակաս իրազեկ լինելով Օսմանյան կայսրության իրավիճակին, լիովին այլ տեսակետ ուներ առանցքային այդ հարցում, ակնհայտ է: Սիմեոն Երեանցին չէր կարող համաձայնել ձեռնարկելու մի պայքար՝ առանց նրա ելքի հարցում վստահ համոզում ունենալու:

¹⁶⁰ Մ. Զոլյալյան, Արևմտյան Հայաստանը XVI-XVIII դդ., Երևան, 1980: M. C. Melner. Османская империя в XVIII веке. М., 1991.

ձգտում էին ներկայանալ անգամ որպես մահմեդականություն ընդունած բնիկ հայ թաղավորական տան ժառանգներ¹⁶¹:

Չնայած ծանր իրավիճակին և սեփական մեծաքանակ զորք կամ կազմակերպված զինական ուժեր ունենալու հնարավորությունից զրկված լինելուն, որոշ գավառներում հայերը պահպանում էին ինքնավարության մնացորդները¹⁶² և որտեղ թուրքական իշխանությունները հեշտությունը չէ, որ թափանցում էին, սակայն այդ բավարար չէր լայնածավալ ազատագրական պայքար ծավալելու համար: Թուրքական բռնատիրությունը ոչնչացումով ու ամայացումներով էր պատասխանում Օսմանյան տիրապետության դեմ ելույթները նաև Սիրիայում, Լիբանանում, Եգիպտոսում և այլուր: Իրազրույթյան լրջությունը հայ իրականության մեջ առաջացրել էր երկակի վերաբերմունք՝ երկու թե:

1. Մեկ կողմից անխուսափելի էր համարվում ազատագրական զինված պայքարին ձեռնամուխ լինելը, առանց որի անհնար էր ժողովրդի ազատագրումը և պետականության վերականգնումը: Այն պետք է վերկեր հայ ժողովրդին վերջնական ուժացումից:

2. Ենեկով տիրող ծանր իրավիճակից ու տեսնելով նաև համազգային խնդրի շուրջ համախմբվելու համար եղած ղեկավարությունները, երկրորդ թեք գտնում էր, որ դեռևս չկան անհրաժեշտ նախազրյույներ ազատագրական պայքարի հաջող ելքի համար, ուստի և վաղաժամ են համազգային զինական բախումի կոչերը:

Առաջին ուղղության կրողներ էին Հովսեփ Էմինը, Մովսես Բաղրամյանը, Ե. Շահամիրյանի խմբակի անդամները և այլք: «Նոր տեսարակը» այդ ուղղության հավատո հանդանակն էր: Երկրորդ ուղղության պարագլուխ հանդես էր գալիս կաթողիկոս Սիմեոն Երեանցին: 'Իրբորոշումների բախումը դրսևորվում է ինչպես Սիմեոնի կողմից Հովսեփ Էմինի դործունեության դեհատության մեջ, այնպես էլ «Նոր տեսարակը» առիթով Մովսես Բաղրամյանին բանադրելու և Ե. Շահամիրյանին կշտամբանքներով ու սպառնալիքներով նամակի առաքումով: Սիմեոն Երեանցին մեղադրվում է փոխադարձաբար Հովսեփ Էմինի կողմից՝ ազատագրական շարժմանը խո-

¹⁶¹ Տե՛ս Դիվան հայոց պատմ., Գ, էջ 730: Մ. Զոլյալյան, Արևմտյան Հայաստանը XVI-XVIII դդ., էջ 185: Մ. Օրմանյան, Ազգապատում, հ. Բ, էջմիածին, 2001, էջ 3466:

¹⁶² Պ. Չոբանյան, Հայաստանի պատմության նորահայտ ժամանակագրությունը, ՊՔՀ, 1997, թ. 1, էջ 243:

չընդոտելու համար: Դատելով, սակայն, Հերակլին դրած Սիմեոն Երեանցու նամակից, վերջինս ոչ թե դեմ էր Հովսեփի էմինի կողմից «իբ մարդիկը» ունենալու կամ հավաքագրելու գործողություններին, այլ նրանց անշրջահայաց քայլերին: Նա խորհուրդ է տալիս Հերակլին՝ հասկացնել Հովսեփի էմինին՝ իր մոտ հավաքել «իբ մարդկանց» և ձեռնպահ մնալ ծրագրեր կազմելու խնդրում: Այնհայտ է, որ ծրագրերի կազմումն ու ընդհանուր ղեկավարումը Սիմեոն Երեանցին վերապահում էր իրեն:

Նա ուղղակի նշում է իր մտահոգությունը նրանց գործունեությունից ձեռք մտնելու մասին: Հայոց կաթողիկոսը դեմ է ոչ թե Հովսեփի էմինի նպատակներին, այլ գործելու ձևին: Եթե Հերակլի և էմինի բանազնացները բարձրաձայն հոխորտում են մահմեդականների հասցեին, որի պատճառով ենթարկվում են ծաղրի, կալանքի կամ ձեռքի, ապա Հայոց կաթողիկոսը ստիպված է լինում կանխել հետագա զարգացումները, որը նրա իսկ խոսքերով, «մնաս ունի և ոչ օգուտ»: 1764 թ. մարտի 25-ին Սիմեոն Երեանցին գրում է Հերակլի 2-րդին. «Այդ մեր պարոնին մեկ-երկու մարդ ունի, որք միշտ զանազան կողմունս և համարձակ ծաղր առնին և ոմանք՝ սրին զլեզուս ի վերայ մեր: Յայս միջոցիս մէկ մահմեդի Գրիգոր մի ունի, եկն յԵրեան և աստ լըբարբար խօսելով կուռեալ է ընդ խանի մարդկանցն, և նոքա ևս զանեալ էին զնա և մերկացուցեալ և զոր ինչ գրեանս ուներ առեալ էին և տարեալ խանին և այլոց ցույց տուեալ: Բ (2) զիր էր ունեցեալ՝ մէկն ի դամանէ և մէկն՝ ի տէրութէնէդ առ Սուրբ Կարապետա առաջնորդ Յօնան վարդապետն գրեցեալ, զորս տեսին ամենեքեան և առ մեզ ևս բերին, և տեսաք, որ քո կնիքն էր և յոյժ զարմացաք: Բայց մեք ստեցաք՝ ասելով, թէ այդ կնիքդ հնարացեալ է և ոչ է վալուն կնիքն: Զայս ամենայն իմացան երկրացիքս և ի քաղաքէդ ևս շատ մարդիկք և մանաւանդ՝ տէր Գարրիէլն, որ ետես և լուաւ¹⁶³: Այժմ կամիմ ասել աղնուոյդ, թէ ես ոչ պատշաճ տեսանիմ օրհնեալ անուան քոյ զքո զիրդ և քո կնիքդ այսպիսի յիմարաց ձեռն անկանին, մանաւանդ վնաս ունի և ոչ օգուտ: Յառաւել սիրոյս զրեցի, խնայելով ի պատիւ և յանուն արքայականի տէրութեանդ: Յօնանն որքա՞ն մարդ է, որ դու նորան զիր զրիցես վասն այդպիսոյ բանի, և զբատարն ևս այդպէս յիմար, որ ամենեցուն ցոյց տայցէ պարծելով: Խնդրեմ, զի լուապէս

¹⁶³ Մշո Սուրբ Կարապետի միտքանությունից մեջ էր նաև Թիֆլիզցի Զաքարիա բեգի որդի մահմեդի Դավիթը, որ մի հիշատակագրություն մեջ իրեն անվանում է «ծառայող տեսան Յօնան աստուածաբան վարդապետին. եկա սուրբ Աստուածաձայն ուխտ թվին ՌՄԻԴ-ին (1775)»: ՄՄ, ձեռ. 1770. թ. 1բ:

մտածեալ որոճայցես և մանաւանդ զգա ևս զգաստացուցես, զի զգիրն և զմարդիկս իւր յինքն ժողովեսցէ և խոհեմութեամբ շարժիցէ, զի երկիրս այլազգեաց ձեռաց է, և մեք ի ձեռս սոցա կամք:

Գիտես զինչ ասեմ, ոչ միայն այս երկիր, այլ և յամենայն տեղիս, ուր գտանին ազգ մեր, քանզի մեծ ցաւ ձնանի վերջապէս ազգիս մերոյ, որպէս երևի...»¹⁶⁴:

Սիմեոն Երեանցու նամակում ակնարկ անգամ չկա Հովսեփի էմինին վրաստանից արտաքսելու մասին¹⁶⁵: Սիմեոն Երեանցու գիրքորոշումը մերժողական ներկայացնելով Հովսեփի էմինին, Հերակլի 2-րդը դրանով ընդամենը արդարացնում էր իր վերաբերմունքը Հովսեփի էմինի և նրա ծրագրերի նկատմամբ: Այդ ամենը այնքան համոզիչ են հնչել Հովսեփի էմինին, որ ինքը ևս կրկնում է Հերակլի հիմնավորումը: Հետագա ուսումնասիրողները ևս շարունակում են Սիմեոնի կաթողիկոս Երեանցուն ներկայացնել այնպես, իբր Հայաստանի ազատագրության Հովսեփի էմինի նախագծին «Հերակլի 2-րդը հակված էր հավանություն տալ... բայց ստիպված էր հրաժարվել դրանից, քանի որ բուն Հայաստանում ազդեցիկ հոգևորականությունը (մասնավորապես Սիմեոնի կաթողիկոսը) դեմ էր դրան» վախճանալով պարսիկների վրեժխնդրությունից¹⁶⁶:

Ի՞նչ նկատի ունի Սիմեոն Երեանցին «մեծ ցավ» արտահայտությունների: Անշուշտ, միայն ազատագրական պայքարի անհաջող ելքը, որը կործանարար պիտի լիներ պարսիկների համար: Զբոս բացատրում, որ Օսմանյան կառավարության կողմից աստամբուլությունը ճնշելու համար ուղարկվելիք բանակի դեմ մարտի ղեպքում ուժերի հարաբերակցությունը ոչ հայոց օգտին կարող էր լինել: Ո՞րն էր ելքը ըստ Սիմեոն Երեանցու և նրան հաջողած Ղուկաս կաթողիկոսի, որի հետ կարծես պիտք է համաձայնեին հնդկահայերը ևս: Հատկապես պատկերավոր է Ղուկաս կաթողիկոսի հարցազրույցը. «Գրեալ է իր մեզ վասն ազատութեան աշխարհիս մերոյ հոգ տանիլ և ցուցեալ է իր զոմանս կերպ կարգադրութեան... Այլ երանի էր, թէ դոնեա մասնաւորապէս արդիւնանային..., բայց լինէր թէ դու՝ օրհնեալդ, այժմ յայս կողմանքս դայիր և ակնատես վերահաստութեամբ իմանայիր զկացու թիւնս մերազնէից և զանօգնականութիւն և զըռուութիւն իշխօղացն և ինք-

¹⁶⁴ Армяно-русские отношения..., IV, с. 61–62.

¹⁶⁵ Նման պնդումներ արձանագրված են Հովսեփի էմինի «Կյանքում» (Life and Adventures of Emin Josef Emin. Calcutta, 1918, p. 232–234, 321):

¹⁶⁶ Գ. Ա. Գալոյան, Ռուսաստանը և Անդրկովկասի ժողովուրդները, Եր., 1978, էջ 111:

նին կնքելիք, թէ այս դիտմանցս յառաջանալ ոչ լինի: Ապա թէ հնարաւոր իցէր յառաջանալն, մի՞թէ յիմար իցեմք, որ ի տառապանաց զերծանիլ չկամիցիմք: Զկուսք որսացեալ ի ցանցս, և թռչունք ըմբռնեալք ի վարմս Զանան զերծանիլ, ապա որքա՞ն ևս առաւել բանականքս բաղձամք ազատութեան»¹⁶⁷:

Մաղբասի խմբակը չէր կարող չըջանցել Մայր Աթոռի առարկությունները, և Հնդկահայոց սթոսի դիրքորոշումը կարելի է բացատրել այդ հանգամանքով: Ուստի այնուհետև, ինչպես հայանի է, Հովսեփի էմինին տրամադրվելիք օժանդակությունը պայմանավորվում էր նրանով, որ ծրագրերին պետք է հավանություն տար և Միմեոն Երևանցին¹⁶⁸:

Այսպիսով, կանխելով Հովսեփի էմինի հախուռն գործունեությունը 1760-ական թվականներին Հայաստանում, Միմեոն Երևանցին ոչ թէ բացառում էր պայքարի անհրաժեշտությունը, այլ առաջադրում էր ազատագրական պայքարի նախապատրաստական ծրագիր, որի իրականացումից հետո միայն հնարավորություններ կստեղծվեին պայքարը հաջող ավարտի հասցնելու համար:

Միմեոնը ևս նվիրված էր ազգային զաղափարների տարածումով նպաստելու ժողովրդի առաջընթացը ապահովելու խնդրին¹⁶⁹: Մխիթարյան միաբանությունն ու Հնդկահայոց կենտրոնին զուգահեռ և որպես գերագահ, նա ձեռնամուխ էր եղել էջմիածնում ստեղծելու քարոզչություն այդ կենտրոնը՝ իր տպարանով, թղթի գործարանով և այլն, զուգորդելով դրանք գործնական քաղաքականությունը: Միմեոնը համոզված էր նաև, որ «ցեցն ի միջոյ է և ոչ՝ արտաքուստ»¹⁷⁰:

¹⁶⁷ Ս. Վ. Տեր-Ավետիսյան, Նյութեր Հնդկաստանի հայ զաղուծի պատմության համար, «Երևանի պետական համալսարանի Գիտական աշխատություններ», 1940, է. XIII, էջ 62:

¹⁶⁸ Ուշագրավ դիտարկում է արձանագրել հույն հոդուրական իրիսանֆը Հայաստանի հետ Ռուսաստանի վարելիք փոխհարաբերությունների հաջողության համար Պրատոն Զուբովին ներկայացրած իր գեկուցադրում. "пока не приобретем дружбу армянского Патриарха, никогда не должно полагать на верность армянина, какого бы звания он ни был". (Путешествия по Востоку в эпоху Екатерины II, М., 1995, с.288):

¹⁶⁹ Sebouh Aslanian. Dispersion History and the Polycentric Nation: The Role of Simeon Yerevantsi's Girk' or kochi partavcar in the 18th Century National Revival.- «Բազմալեզու», 2002, էջ 5-81:

¹⁷⁰ «Ջամբռ գիրք, որ կոչի Յիշատակարան արձանացուցիչ, հայելի և պարունակող բնախից որպիսութեանց Արքայ Աթոռոյս և իւրոյ չըջակայից վանորէիցն», համա-

Պատահական չէ, որ Միմեոն Երևանցին հատուկ կոնդակով վերացրեց բանադրանքը նաև Մովսես Բաղրամյանից¹⁷¹: Արգար Հովհաննիսյանը այդ բացատրում էր Մովսեսի հարստանալով¹⁷²: Իրականում, սակայն, Միմեոն Երևանցու զիջողականությունը արդյունք էր նաև Հնդկահայոց դիրքորոշման մեջ տեղի ունեցած էական փոփոխությունների: Պատահական չէ, որ «Նոր տետրակ»-ի ապագրությունից հետո, «Որոգայթ փառացի» ապագրությունը կանգ առավ և ավարտվեց միայն 15 տարի հետո: Այդ ձգձգումը պայմանավորված էր նաև Միմեոն Երևանցու պահանջին տեղի տալու հանգամանքով:

1775 թ. Միմեոն Երևանցուն ուղարկված «Նոր Տետրակի» օրինակներին հետ միասին Մաղբասի խմբակի անունից ընդարձակ նամակ էր գրվել կաթողիկոսին, որտեղ արտացոլված էին այն հիմնական գաղափարները, որ առկա են «Որոգայթ փառաց»-ում¹⁷³: Նամակում առաջադրվել էին նաև պահանջներ, որոնք և հարուցել էին կաթողիկոսի մոլեղին դայրույթը: Ըստ այդ նամակի վերաշարադրանքի, որ կատարվել է Միմեոն կաթողիկոսի կողմից 1776 թ. գրված պատասխան նամակի գրանցման առիթով, «Նոր տետրակի» բովանդակության քննադատությունից հետո ասվում է, թե «Եւ զսոյն դիւաշունչ գիրս սփռէին յազգս մեր, չմտածելով ընաւ բախելոցն յիմարութեամբ, թէ կորուստ բերէ այս ազգիս: Եւ առ մեկիքսն իմաստաւ ևս վասն սոյն անհիմն դիտման գրէին բազմիցս զթուղթս, և յղէին զընծայս, որք և այժմ նորապէս գրեալ առ նոսս զթուղթս՝ յայն գրքոյն ևս յղեալ էին, և անզուսպ յանդգնութեամբ գրէին զսոյն բանս՝ ուր և կամէին: Էր և Գրիգոր աղայն ինջալանեան՝ տուօղն ծախուց տպագրատան մերոյ և թղթատանն՝ կամակից նոցին: Այլ թէ կամաւ, թէ ի նոցին թախանձելոյ՝ չէր

ժողովեցեալ և շարադրեցեալ ի Միմեոնի ցուահար և վշտակոծ կաթողիկոսէ Երևանցույ, Վաղարշապատ, 1873, էջ 57:

¹⁷¹ ՄՄ, ձեռ. 3738, էջ 220: Հմմտ. նաև Դրևան հայոց պատմութեան, IV, էջ 559-562, Ղուկաս կաթողիկոսի նամակը Մ. Բաղրամյանին՝ 1791 թ. դեկտեմբեր: Ա. Գ. Արքախանյան, Մովսես Բաղրամյանի բանադրանքի վերացման մասին, ՊՔՀ, 1977, թիվ 4(79), էջ 126-128: Ա. Ք. Ոսանյան. Իոսիփ Էմին, с. 247-248:

¹⁷² Ա. Ք. Ոսանյան. Իոսիփ Էմին, Ереван, 1989, с. 248 (Вряд ли католикос написал бы подобное письмо, если Баграмян не был в то время одним из почтенных и вогатых индийских армян, считавшим себя даже в праве (как видно из того же послания) обижаться, когда приехавший в Индию эчмиадзинский "нвирак" вовремя не представился ему):

¹⁷³ Ա. Ք. Ոսանյան. Իոսիփ Էմին, с. 279-280: Մ. Մ. Թելուց, Հայ ազգային ազատագրական շարժումը XVIII դարի երկրորդ կեսին և իրավաքաղաքական միաբեր., 1995, էջ 127-128:

յայտ: Եւ ի յայս այնքան էին Հաստատնապէս եղեալ զմիտս իւրեանց, մինչ զի և առ սրբազան Վեհն Համարձակեալ զրեալ էին զայս, և Գրիգոր Ազայն ևս ձեռն էր եղեալ ի վերայ թղթոյն: Յորում նախ պաղատէին կամակիր լինել ինքեանց, ապա՝ զպէս պէս և զծիծաղելի առաջադրութիւնս զրէին սրբազան Վեհին, թէ այսոքիւք Հնար է՝ զի մտադրութիւնս մեր ի գլուխ ելցէ, այսինքն է՝

- միաբանեցուցանել նախ զՎրաց իշխանն ընդ Աղուանից իշխանացն:

- Եւ թուղթ զրել առ կայսերուհին Ռուսաց, և զօրինակ թղթոյն ևս զրեալ էին, թէ այսու օրինակաւ պարտիս զրել:

- Ուսուցանէին և զկերպ իմանալոյ զՀամար և զօրքանութիւն ազգիս, և Հարկադրելոյ ի ձեռն... նուիրակաց՝ առ ի ուսանել զպատեալով:

- Եւ վասն նոցին զթոշակս ժողովել տալոյ ի ձեռն Առաջնորդաց և նոստովանահարց ի ծածուկ, որպէսզի ամենայն անձն յամենայն կիրակէս զմի-մի փարայս տացեն:

- Եւ ըստ Եւրոպացւոցն զկանոն և զսահման դնել ազգիս՝ թարգմանեցուցանելով ի նոցունց, վասն աշխարհավարութեան և զինուորութեան արհեստի և կարգադրութեան դատաստանաց և այլոց, և նախարար մի կացուցանել բոլոր ազգիս, որ թարց խորհրդոյ Մերակուտին և աւելի կամ պակաս քան զսահմանն թէ արասցէ ինչ՝ կորուսցէ զգլուխ իւր: Եւ այն նախարարն ժամանակաւոր լիցի, և ի միւս ամին՝ ուրիշ նախարար կացուցի:

- Ուսուցանէին ի վերայ այսց և զկերպ ի Հաւան ամելոյ զբոլոր ազգս՝ ընտրել յամենայն գաւառաց զԲ-Բ արս խոհեմս, որք ի Ղարաբաղ առ մելիքսն երթեալք՝ տացեն նոցա զընդունելութիւնս իւրեանց, և ընդունելին նոցա՝ բոլոր գաւառացն լիցին ընդունելիք: Եւ բազում այսպիսի բանք, որ ոչ այլ ինչ էին, եթէ ոչ բանք խելացնորից, որք չմտածելով զօրպիսութիւնս ազգիս՝ թէ ու՞ր կան, ի ձեռս որո՞ց, և ո՞րպիսի կերպիւ, զայսոսիկ մտածէին և զրէին:

Զորս իրբև ետես Սրբազան Վեհն և վերահասու եղև զիտմանցն, մեծ ցաւ և տրտմութիւն եղև ինքեան, Հայելով ի յապագայ վնասն: Վասնորոյ առ ի խափանել զայս վնասաւոր զիտմունս նոցին և ազատել զազգս ի կորստենէ, զթուղթ զրեաց առ նոսա յոյժ մեծագոյն և երկար, սաստիկ յան-

զիմանութեամբ և մեծագոյն մեղադրութեամբք, վասն չմտածելոյ զվախճան վնասաւոր զիտմանց իւրեանց և առանց խոկացման՝ յայսպիսի վնասաւոր իրս ձեռնարկելոյ: Եւ մեծաւ նախատանօք ցուցանելով նոցա զանկարելութիւն առաջադրութեանցն, թէ այդք որպէ՞ս են կարելիք լինիլ այժմու ժամանակիս. ծանուցանելով և զվնասն, որ յառաջանալոց էր ի նոցանէ»¹⁷⁴:

Ելնելով Աղազար Լազարյանի անունից Մինաս և Հովակիմ Լազարյանների կողմից 1777 թ. նոյեմբերի 6-ին Ծ. Ծահաժիրյանին դրած նամակից, որ առաջին անգամ ամբողջութեամբ Հրատարակել և արժևորել է Վ. Դիլոյանը¹⁷⁵, միանգամայն թույլատրելի է ենթադրել նաև, որ միևնույն ժամանակ (այն է՝ 1775 թ.) Ծ. Ծահաժիրյանը Նոր Տետրակը և նման բովանդակութեամբ նամակ ուղարկել էր նաև Լազարյաններին, որի պատասխանը զբովել էր «անցեալ [իմա՝ 1776 թ.] թուոյ նոյեմբեր ամսոյ 24»¹⁷⁶: Ընդգծելի է և այն Հետևութեան իրավացիութունը, թե Լազարյանները տեղյակ լինելով Նոր Տետրակին ու Որոգայթ Փառացի գաղափարներին, միաժամանակ և «չէին բաժանում Ծահաժիր Ծահաժիրյանի այն խանդավառ տեսակետը, որ Արցախի "կորովի և քաջամարտ" մելիքները, ստանալով օժանդակություն, կարող կլինեն իրագործելու ազգային ազատագրութեան պատասխանատու և ցանկալի գործը»¹⁷⁷: Բնականաբար այդ տեսակետը, որ մասամբ Համահունչ էր նաև Սիմեոն Կաթողիկոսի արձագանքին, ոչ միայն վիրավորական Հանգամանք չգիտվեց Ծ. Ծահաժիրյանի կողմից, այլև Հետևելով Աղազար Լազարյանի նամակի ոգուն, 1779 թ. Հունվարի 15-ին Գանձասարի Հովհաննես կաթողիկոսի անունով նա ուղարկեց իր նշանավոր ծրագրային նոր նամակը՝ Արցախում իրթական-լուսավորական Հստակ պարտավորություններ զնելով Արցախահայոց առաջ¹⁷⁸:

¹⁷⁴ Դիւան Հայոց պատմութեան, զիրք Ը, Սիմեոն կաթողիկոսի Յիշատակարան, մասն երկրորդ (1767-1776 թթ.), Հրատ. Գիւտ Աղանեսանց, Թիֆլիս 1908, էջ 574-576:

¹⁷⁵ Վ. Ա. Դիլոյան, Լազարյանների Հասարակական-քաղաքական գործունեություն պատմությունից, եր., 1966, էջ 167-173:

¹⁷⁶ Վ. Ա. Դիլոյան, նշվ. աշխ., էջ 167: Այս փաստը վրիպել է ակադ. Ա. Ռ. Հովհաննիսյանի ուշադրութունից, ուստի նա Համոզված էր, թե «С Лазаревым Паамирян не поддерживал никаких контактов; он вел переписку лишь с Аргутинским» (А. Р. Иоаннидян. Россия..., Ер., 1990, с. 159).

¹⁷⁷ Վ. Ա. Դիլոյան, նշվ. աշխ., էջ 173:

¹⁷⁸ Նամակի ինքնագրի Հրատարակությունը տե՛ս Армяно-русские отношения..., IV, с. 135-137:

Որոգայթ փառացի սկսված տպագրության կասեցումը կամ հետաձգումը իրականում պատճառ դարձավ, և հնարավորություն տվեց շարունակելու աշխատանքը գրքի հետագա խմբագրման վրա¹⁷⁰, որը հրատարակելով միայն 1788 թ. Հերակլ Երկրորդի կողմից կատարված առաջարկին ընդառաջելու¹⁸⁰ և տպագրելու միջոցով: Այն, այսպիսով, թեև լույս տեսավ Սիմեոն Երեկանցու մահից տարիներ անց միայն¹⁸¹, սակայն այս անգամ Շ. Շահամիրյանը պատրաստակամ էր լսելու և լսելի առնելու "սրբազանից հայրապետաց Հայոց և Վրաց"¹⁸²: Այդ մասին ուղղակի վկայում է Շահամիր Շահամիրյանը, որ Հերակլի կողմից ստացել էր Վրաց իշխանի տիտղոս և այդ առիթով Ղուկաս կաթողիկոսին ևս 1787 թ. հոկտեմբերի 15-ին գրել էր իր նամակում, թէ «ի յայսմ ժամանակի աջողեաց ինձ Տէր, զի ես ստացայ նամակ շնորհաց ի Երկրորդ Հերակլ Բագրատունէ, շնորհօքն Աստուծոյ թաղաւոր Կախեթու, Քարթլու և այլն, որում հրամայեաց զիս շարել որոք կարգադրութիւնք վասն բարեպէս կառաւարութեանն աշխարհին իւրոյ: Թէպէտ այսպիսի արժանաւոր գործ ոչ կարէ լինիլ ի մի և կամ թէ տասն, հատկապէս հասարակ առնէ, եթէ ոչ ի դպրոցէ և ուսնալ օրինազիտացէ, այլ այն, որ ի մէջ մեր այժմուս գտանեցաւ գրքուկ մի անուանեալ «Որոգայթ փառաց»՝ նշաւակ վասն բարեպէս կառաւարութեանն Հայոց, ի նմանէ հանցաք միմիայն օրինակն հաստորաց կարգադրութեանց և ընծայեցաք նմա, որում ունի սահմանն ազատութեան հասարակաց և կառաւարութիւն ըստ օրինացն Հայոց հրամանաւ յապարանէ ձերակուտաց Հայոց և ի քարտիզի մերում ի նմա ազտ արարաք... զի, եթէ հաճիցէ կամաց ձերոց և բոլոր իշխանաց, գաւառապետաց ընդ հասարակ, յայնժամ ձերով հրամանաւ տպեցէ և կլանէ ի գործ, և եթէ ի խոտան ի բաց անկցէ»¹⁸³:

¹⁷⁰ А. Р. Ноаннисян. Иосиф Эмин, с. 274-289.
¹⁸⁰ Ռ. Ա. Արրախանյան, Շահամիր Շահամիրյանի նորահայտ նամակագրութիւնը, «Բանբեր Հայաստանի արխիվներ», 1969, թիվ 3, էջ 130:
¹⁸¹ Առավել հավանական է ենթադրել գրքի տպագրության ընդհատումը Սիմեոն կաթողիկոսի նամակից հետո: Պետք է նկատի ունենալ այս պարագայում, որ Սիմեոնը իր դիրքորոշումը փորձում էր պարտադրել ոչ միայն Շ. Շահամիրյանին, այլև Կ. Պոլսի հրատարակիչներին, Հերակլ Երկրորդին, ասորոց պատրիարքին և այլն: «Որոգայթ Փառաց»-ի տպագրության հանգամանքների մասին տե՛ս А. Р. Ноаннисян. Иосиф Эмин, с. 274-289. Մ. Մ. Թելունց, Հայ ազգային ազատագրական շարժումը XVIII դարի երկրորդ կեսին և իրավաբանական միտքը, էջ 125-128:

¹⁸² Армяно-русские отношения..., IV, с. 366.
¹⁸³ Армяно-русские отношения..., IV, с. 360. Ռ. Ա. Արրախանյան, Նշվ. աշխ., էջ 130:

Շ. Շահամիրյանը նույնը կրկնել է նաև Հերակլ 2-րդին գրած նամակում արձանագրելով, թե ի վիճակի չլինելով կատարել նրա խնդրանքը, այն է. «որ ի բարձրութենէ քումմէ հանցար ընդունիլ ի ծառայէ քումմէ մասունք կարգադրութեան սահմանաց և հրամայեցէր շարել և ընծայել ի սպաս բարձրութեան քոյ», ուստի «այն, որ գտաւ այժմոյս ի միջի մերում Տեսրակն անուանեալ "Որոգայթ փառաց", շարագրեալ վասն ազատութեան ազգին Հայոց, ցնծութեամբ ընծայեցի ի սպաս»¹⁸⁴:

Մագրատում լույս ընծայված ծրագրային-հրատարակախոսական գրքերը, այսպիսով, արժանացան նաև ոռուս և վրաց գործիչներին ուշադրությունը: 1786 թ. Պետերբուրգում ոռուսերեն թարգմանություններով լույս է տեսնում «Նոր տետրակը» երկու հազար տպաքանակով: Գրքի բաժանորդներին թվում էին ոռուս պետական-քաղաքական հայտնի շատ գործիչներ¹⁸⁵: Ռուսերեն թարգմանությունից այն 1789 թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսներին վրացերենի է թարգմանել Գայոս Ռեկտորը Կրեմննչուգում Հերակլի քրոջ որդու՝ Սուլխան Գորջասպի Թումանյանի, հանձնարարությամբ¹⁸⁶: Վերջինս, ամենայն հավանականությամբ, ձեռագիրը տարել է Վրաստան, որտեղից հետագայում Հովհան Արքայազնը փոխադրել է Պետերբուրգ¹⁸⁷: Ուշագրավ է Գայոս Ռեկտորի ընդգծումը, թե «եթե դուք կամ ընթերցողները հանդիպեք նույն պատմության հեղինակի [որևէ] ոչ հարկի մտքի, հանգստացրէք ձեր միտքը նրանով, որ այն ստեղծագործություն է ի սեր Հայրենիքի, ուստի ոչ ոք իրավասու չէ դժգոհ լինել...»¹⁸⁸:

¹⁸⁴ Армяно-русские отношения..., IV, с. 365-366. Այստեղ "մերում" բառի փոխարեն վրիպմամբ տպված է "մեր որում":
¹⁸⁵ Փաստարկված է և իրականությունը չի համապատասխանում այն պնդումը, թե «Գրքի թարգմանությունը և տպագրությանը նյութական օգնություն էր ցույց տվել Շ. Շահամիրյանի որդին՝ Եղիազար Շահամիրյանը, որը 1785 թ. մեկնել էր Պետերբուրգ» (Հայ ժողովրդի պատմություն, IV, Երևան, 1972, էջ 209-210, Հմմտ. Ս. Պ. Պողոսյան, Հայ ժողովրդի պատմություն, Հատոր II, Երևան, 1965, էջ 322: Չ. Տ. Գրիգորյան, Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին և նրա պատմական նշանակությունը, Եր., 1978, էջ 97):
¹⁸⁶ П. М. Мурадян, Армяно-грузинские литературные взаимоотношения в XVIII веке, Ер., 1966, с.159-164. Վրացերեն թարգմանության առաջաբան-ուղերձի հայերեն թարգմանությունը տե՛ս Պ. Մուրադյան, Գայոս Ռեկտորը և հայ մշակութային-Վրաց. ՍՍՀ ԳՄ Հայկական բաժնի «Այմանախ», Թբ., 1962, էջ 440-441:
¹⁸⁷ Պահպանվում է Պետերբուրգի Հանրային գրադարանի Ձեռագրերի բաժնում Վրաց. ձեռ., Հովհան Արքայազնի հավաքածու, թիվ 96 (տե՛ս Պ. Մուրադյան, Գայոս Ռեկտոր..., էջ 441):
¹⁸⁸ Նույն տեղում, էջ 441:

Հովսեփի էմինի և Մովսես Բաղրամյանի միջև փոխհարաբերությունները հասկանալի է այլ որակ էին ստացել Հնդկաստան վերադարձից հետո: Բոմբեյում Հ. էմինը, այցելելով Մ. Բաղրամյանին, հանդիպել է իր համար անսպասելի ոչ այնքան ջերմ ընդունելության: Ա. Ռ. Հովհաննիսյանը ձեռնպահ է մնացել նման փոխհարաբերությունը մեկնաբանելու փորձից¹⁸⁹: Այդ առումով ուշադրավ հետևությունների է հանգեցնում այն փրկիսոփայական երկը, որը տպագրվել էր 1796 թ. Կալիպթայում Աբրահամ Կրետացու «Պատմութեան» հետ որպես «Ներածութիւն»¹⁹⁰ և որի հեղինակը, ըստ դեռևս 1936 թ. Թ. Ավդալբեկյանի նկատմամբ, Մովսես Բաղրամյանն է¹⁹¹: Այդ անուարկիկ է «Յաղագս յառաջանալոյն սոյն այս մերս նորոգ տպարանին. եթէ գիտող հիմ և յորոց հեռակի զլիսովին» հատվածում արձանագրված փաստերից¹⁹²: Ավելին, շեշտվում է նաև, որ Բաղրամյանի Մաղրասում ունեցած գործունեությունը՝ «Շամիրեան արժանավայելն Յակոբայ գործակցելով յառկի իւրում սիրելոյ՝ աշխատասիրեալ ոչ սակաւ» ևս թելադրված է եղել «անձկալի ազգին աղագաւ», որպիսի մղումներով և հեղինակվել է ներկայացված աշխատությունը: Այս երկում Մովսես Բաղրամյանը հանդես է գալիս ազգային-պահպանողական գիրքերից ու պաշտպանում միապետություն, կրոնի ու եկեղեցու իշխանությունը: «Այն գաղափարախօսը, որ «Յորդորակում» կոչ էր անում երիտասարդութեանը՝ սովորել զէնք գործադրելու միջոցները և ոտքի ելնել դարևոր թշնամու զէմ, այստեղ սուր կերպով հանդէս է գալիս Ֆրանսիական մեծ յեղափոխութեան քննադատողի գերում ու զգուշացնում բոլոր ազգերին՝ հեռու մնալ նման շարժումներից... Ի հակադրութիւն «Յորդորակ» և «Որոգայթ փառաց» գրքերում արտայայտուած առաջաւոր ժողովրդական գաղափարները, ազգային-պահպանողական դիրքորոշման վրայ է կանգնած հեղինակը նաև իր սոցիոլոգիական-քաղաքական հայացքներով»¹⁹³: Միանգամայն այլ վերաբերմունք է դրսևորված այս աշխատության մեջ նրանց նկատմամբ, ովքեր

¹⁸⁹ А. Р. Ноаннисян, Иосиф Эмин, Ер., 1989, с. 248.
¹⁹⁰ Պատմութիւն անցից տեսնու Աբրահամու սրբազան կաթողիկոսին հայոց Թեքիր-դաղցու այս նազրչահ արքային Պարսից: Սրբագրեալ աստէն ի վաղմծի ձեռագրի օրինակէ ըստ յարմարագրութեան ևեթ ի ձեռն մերպցեայ բանասիրի ուրումն: Կալիպթա, 1796, էջ ա-ձձթ:
¹⁹¹ Թադ. Ավդալբեկյան, Հայագիտական հետազոտություններ, Եր., 1969, էջ 245:
¹⁹² Չ. Մ. Միրզաբեգևան, Ակնարկներ հնդկահայ գրականության և մշակութի պատմության (1770-1850), Եր., 2000, էջ 29:
¹⁹³ Չ. Մ. Միրզաբեգևան, Նշվ. աշխ., էջ 35:

կարծում են, թե «պարտ են ամենայն մարդիկ յաշխարհի վարել միայնա և եզրը համահասարակ իրեն գեղարար՝ ոչ գոյ մեծ և ոչ փոքր, ոչ տէր և ոչ ծառայ, ոչ իշխան և ոչ թաղաւոր»¹⁹⁴: Ոչ թե հասարակական հակամարտություն, այլ ազգային և հասարակական համաձայնություն քարոզչություն ծավալող Մ. Բաղրամյանը մեծարում է եկատերինս 2-րդին. «մանաւանդ միշտ խնամատար և յոքներախտ երախտաւորն անտերունչ ազգիս Հայոց, որ յաւէտ քան զբնաւ պահասաւորս համայն՝ ազգաց խանդաղատեալ խնամարկէ և, իբրև գմայր գորովադութ, զգուանօք և բազկատարած բերմամբ ընկալեալ զմեզ ապէնիազ շնորհօք, ողջագուրեալ զողջոյն և պատասպարեալ պահպանէ յար յոյժ երկայնմտութեամբ»¹⁹⁵:

Թեև ինքնապաշտպանական-ազատագրական պայքարի համար անհրաժեշտ կազմակերպվածություն, ծրագրերի մշակման և նրանց հետևողական ու ճշգրիտ իրականացման խնդիրների լուծման հնարավորությունները ժԸ. դարի երկրորդ կեսին հայ իրականության մեջ դեռևս իրենց ձևավորման ավարտին չէին հասել, սակայն վերոգրեյալ փաստերը վկայում են այն քայլերի շարունակական իրականացման մասին, որոնք նախանշված լինելով Սիմեոն Երեանցու կողմից, արձագանք էին գտնում նաև հնդկահայ գաղթօջախում: Հնդկահայ գաղթօջախում ևս միակերպ չէր ընդունվում Մաղրասի խմբակի գործունեությունը: 1792 թ. օգոստոսի 16-ին Շ. Շահամիրյանին գրած պատասխան նամակում Ղուկաս կաթողիկոսը նշում է, թե «Եւ նախ զայս ասացուք, զի նուիրակն համառօտիւ գրեալ էր մեզ զչփոթմանէ տեղոյդ մերազնեայցն, և զքոյդ վրդովմանէն, ընդ որ ոչ սակաւ տրտմութիւն եղև մեզ»¹⁹⁶: Պարզվում է, որ, ըստ նվիրակի հաղորդման, «ի կրկին գալն իւր առ ձեզ ի խաղաղութիւն է համողեալ, և խաղաղացեալ էք առ հասարակ, ընդ այն սրտադիւր եղաք: Հոգին սուրբ Աստուած, որ ի խաղաղասէրս հանգչի, անհետ արացցէ ի ձեռն զխոռովութիւն, և արմատացուցեալ զխաղաղութիւն ի ձեզ, այնու բարեկեցիկ պահեսցէ զձեզ և մեք բարի համբաւով ձեր գուարճասիրա լիցուք»¹⁹⁷: Ղուկաս կաթողիկոսի կողմից ակնարկված «չփոթմունքը» արդյո՞ք չի նույնանում այն «ժանտ ժողովի» և «մոլորչապետի» մասին հաղորդումների հետ, որի մասին ակնարկում է Մովսես Բաղրամյանը 1796 թ.: Ենթադրություն է եղել, թե Մովսես Բաղ-

¹⁹⁴ Պատմութիւն անցից տեսնու Աբրահամու սրբազան կաթողիկոսին..., էջ 1Է:
¹⁹⁵ Նույն տեղում, էջ 1Է:
¹⁹⁶ Ս. Վ. Տեր-Ավետիսյան, Նշվ. աշխ., էջ 68:
¹⁹⁷ Նույն տեղում:

րամյանը «արդյո՞ք նկատի ունի Մաղբասի խմբակը: Յամենյան դէպս մեզ ուրիշ խմբակ յայտնի չէ»¹⁹⁸: Եթե այդ նույնացումը, որ անհավանական չէ, լրացուցիչ այլ փաստերով ևս հաստատվի, ապա լիովին իր բացատրութիւնը կստանան նաև Մովսես Բաղրամյանի և Հովսեփ Էմինի միջև առաջացած սառնութիւն փաստը: Հակամարտութիւնը, այսպիսով, առնչվել է նաև Շահամիր Շահամիրյանի անվան հետ: Առավել ուշադրով է, սակայն, այն փաստը, որ 1792 թ. մայիսի 14-ին Մաղբասից Ղուկաս կաթողիկոսին գրած նամակի մեջ Շ. Շահամիրյանը ևս, կարծես ձայնակցելով Մովսես Բաղրամյանին, դատապարտում և զայրույթով է խոսում 1789 թ. Փրանսիական հեղափոխութիւնի մասին: Յավով է արձանագրում Շ. Շահամիրյանը, որ ժողովրդի համարձակութիւնը այնքան է մեծացել, որ «ոչ միայն հանեալ են ինքնակալ կարողութիւնն թագաւորին իւրեանց, այլև լրբարար յանդիմնալ են հրամանին հայրապետին իւրեանց, այսինքն Սրբազան Փափին Հոսմու, և բորբոքումն այս հրոյ տայ տեղի մտաւ անելոյ բազմաց, զի այրելոց է բազում թոռ և չոր»¹⁹⁹:

Մինչև «Որոգայթ փառաց»-ի հրատարակումը Հերակլի խնդրանքով նրան ուղարկելով իր առաջարկութիւնները ու նաև գրքի ձեռագիրը՝ որպես նշավակ, Շ. Շահամիրյանը Հերակլ 2-րդ թագաւորին 1787 թ. հոկտեմբերի 15-ին գրած նամակում ընդգծում էր, որ այդ դիրքը գրված է Հայոց համար, նույն ոգով խորհուրդ էր տալիս շարժվելու նաև Վրաց թագաւորին՝ երկրի բարգաւաճման գործում, սակայն, կարևոր դերակատարում վերապահելով թագաւորական իշխանութիւնի կողմից կատարելիք բարեփոխումներին²⁰⁰: Հայաստանի ազատագրութիւնը և բարգաւաճումը ժողովրդավարութիւնի հետ լծորդող և կառավարումը «ի խորհրդարանէ ձեռակուտաց» ակնկալող «Որոգայթ փառաց»-ի տպագրութիւնից (1788/9 թ.) հետո Շ. Շահամիրյանին ու Մովսես Բաղրամյանին 1790-ական թթ., արդեն ակնհայտորեն կանգնած ենք տեսնում ավատատիրական կարգերի պաշտպանի դիրքերում:

¹⁹⁸ Զ. Մ. Միրզաբեգևան, *Նշվ. աշխ.*, էջ 32:

¹⁹⁹ Ս. Վ. Տեր-Ավետիսյան, *Նշվ. աշխ.*, էջ 85:

²⁰⁰ Այդ առաջարկութիւնները գնահատվել են նաև որպես Շ. Շահամիրյանի ծանրակշիռ ներդրում «ժողովրդավարական հիմունքներով վրաստանի և Հայաստանի միավորման ծրագրում» (տե՛ս Փ. Ե. Մայիսյան, Շ. Շահամիրյանը և Հայաստանի ու Վրաստանի միավորման հարցը XVIII դարի վերջին քառորդին, - «Լրաբեր հաս. դիտ.», 2000, թիվ 1 (601), էջ 169):

Միմեոն Երևանցու «մեծ ցավի» մասին զգուշացումը, որը կիսում էր նաև Ղուկաս կաթողիկոսը, նշանակում էր օտար լծի տակ գտնվող Հայ ժողովրդի գոյութիւնը սպառնացող իրական վտանգ: Մովսես Բաղրամյանին բանադրելու մասին Միմեոն Երևանցու նամակի գրման իսկ տարում (1776 թ.) Կ.Պոլսից Ռուսական արքունիք էր հղվում դեսպան Ա. Ստախիևի հուլիսի 8-ին գրած հաղորդումը, թե «Ըստ այս օրերին Վանից ստացված տեղեկութիւններին, Քուրդիստանում գտնվող Հայոց պատրիարքը, անցնելով Պարսից հարստակութիւն ներքո, իր հավատակիցներին հրահրել է հարձակումներ գործել հարևան Վանի գյուղերի վրա: Դուռը, տեղեկանալով այդ մասին, ցուցում է տվել այնտեղ մոտակայքում գտնվող զորքերի զլխավոր հրամանատար Ժանկլի Աղա փաշային՝ միանալու Վանի նահանգապետի հետ հայերին կոտորելու համար»²⁰¹: Հայերի գոյութիւնը սպառնացող վտանգը թեև հասկացել, սակայն, հավանաբար, չէր կիսում Հովսեփ Էմինը, որն իր Ինքնակենսագրութիւնի մեջ վերաշարադրելով Հերակլ թագաւորին գրած Միմեոն Երևանցու նամակի բովանդակութիւնը, ընդգծում է կաթողիկոսի մտահոգութիւնը՝ այն ձևակերպելով որպես «սուլթանը կհրամայի Կոստանդնուպոլսում կոտորել բոլոր հայերին»²⁰²: Թե որքանով

²⁰¹ АВІР, ф. Сношения России с Турцией, 1776, д. 474, л. 15 об. "По полученным на сих днях из Вана известиям, находящейся в Курдистане Армянский патриарх, предавшись в подданство персианам, своих единоверцев подвигл сделать нападение на соседние ванские деревни. Порты, уведомясь о том, указала находящемуся в тамошних околичностях главнокомандующему войском Жаникли Аги паше соединиться с ванским губернатором для истребления армян".

²⁰² *Life and Adventures of Emin Joseph Emin*. p. 218-219, 233. Հմմտ. А. Р. Иосифьян. Иосиф Эмин, Ер., 1989, с. 139. 1768 թ. սկսված ռուս-թուրքական պատերազմը զայիս էր հավաստելու Միմեոն Երևանցու մտահոգութիւնը: 1769 թ. մայիսի 18-ին արդեն հաղորդումներ էին ուղարկվում ռուսական արքունիք, թե «полученными о том в Константинополе известиями...ведное христианство, под игом их стоиющее, прельщает от внутреннего бунта в несказанном страхе и опасности, что турецкое правительство повелело отобрать у всех христиан огнестрельные и другия оружия;... полученными же на сих днях из Багдада письмами все то подтверждается, с таким привавлением, что... ныне ко умножению [армии]... разослано по всем знатным городам и округам нарочными...чтоб оных начальники криком и обнародованием на минаре при мечетях, и по всем площадям и улицам видной их гибели побуждали всеми силами народ к многочисленному зворышу желающих по магометовым пророчествам обладать многими народами и получить за храбрость и за пролитые сколько можно больше в сей войне христианской крови, овещанное им райское увеселение...собранный в ближних к Персии городах Эрзеруме, Баззете и Карсе корпус в сорок тысяч человек к Константинополю уже отправился» (Армяно-русские отношения, IV, с. 85).

մտահոգիչ էին Միմեոն երեւանցու զգուշացումները, ակնհայտ էր նաև այլ գործիչերի համար: 1796 թվականին Այսրկովկաս կատարած արշավանքի զազարեցումից և ուսանական զորքի հեռանալու լուրը ստանալուց հետո, արշավանքի մասնակից Հովսեփ Արղուժյանը 1797 թվականի սկզբներին Գրիգորիուպոլի հայերին գրած իր նամակում նշում է. «մեք ունիմք մնալ աստ մինչև այց ելանիցէ Բարձրեայն և ի նորոգ ինքնակալէն նորոգ հրաման և հաստատութիւն ընկալցի բանակս և յառաջացեալ՝ զիւղնալի սուրբ Աթոռն և զագզգն համայն զերծուցուցի ի կորուստնստիք վտանգզէ, իսկ եթէ ոչ՝ բոլորն ի կորուստ մտոնեալ, ինչ որ տէր մի արասցէ: Զայս լսելով ձեր, նախ պարտիք դոճանալ զբարերարէն Աստուծոյ, որք ազատ կայք և չէք յայսպիսի նեղութիւնս մշտագունեալք, որպէս ընկերք ձեր համայն ազգք Հայկազունք...»²⁰³:

Նույն ժամանակ զրիմահայոց գրած նամակում Հովսեփ Արղուժյանը կրկնում է իր մտահոգությունը. «...Մեք եմք աստ ի Թիֆլիզ, մերկացեալ յամենայն գոյից և ի ստացուածոց, նեղեալ ի սուգ և ի յողբ ի վերայ խղճալի Սրբոյ Աթոռոյն, գահակալի նորին և համայն ազգին մերոյ, քանզի ամենեցուն թշնամեաց խաչին Քրիստոսի բացեալ զբերանս՝ կամին կլանել զամէնն: Եթէ աստուածապահ բանակին պատահեսցի յետս ընկրկումն (որովհետև թուլութիւն ինչ երեկ ի սմայ այժմ, զոր Տէր մի արասցէ), քանզի արեան հեղեղութիւն ունի ապականեալ ազգին մերոյ»²⁰⁴: Ղուկաս կաթողիկոսը ևս Շ. Շահամիրյանին գրած նամակում նշում է, թե «...առ տարաբախտութեան մերոյ՝ օրհասին մահու ժամանեալ յիշեցելոյ մեծի կայսերուհուհոյն, խափանեցաւ գործն օգտակարագոյն աշխարհի, ըստ որում հարազատն նորին նորապսակ յաջորդն դարձ առնել ետ զօրացն՝ զամենայն ընդ ձեռամբ արկեալսն թողով Հնոց տիրողացն աւերչաց»²⁰⁵: Ղուկասը կաթողիկոսին այլ բան չէր մտում, քան Դավիթ և Հովհաննես վարդապետներին ուղարկել շահի մոտ և հրովարտակ խնդրել նրանից: Շահը վարդապետներին «...հա-

²⁰³ ՄՄ, ձեռ. 2951, էջ 122ա: Նման մտահոգությունները գրանցում ենք տեսնում նաև Մինաս վարդապետին գրած նայի Հասան-Ջալալյանի գեղեկ 1718թ. սեպտեմբերի 24-ի նամակում, տե՛ս Армяно-русские отношения в первой трети XVIIIвека (Сборник документов). Том II, часть I, с. 372: Հմմտ. 1, էտ, Խոջապական կապիտալը և նրա քաղաքական-հասարակական դերը հայերի մեջ, եր., 1934, էջ 268:

²⁰⁴ ՄՄ, ձեռ. 2951, թ. 129ա: 1797թ. փետրվարի 20, Թիֆլիզ:

²⁰⁵ Դիւան, հ. Ա-Բ, էջ 30-31: Հմմտ. Վ. Գրիգորյան, Երևանի խանությունը XVIII դարի վերջին, էջ 177:

ճութեամբ ընկալեալ խիլայիւք և հրովարտակաւ միամտութեան դարձուցանէ անդրէն»²⁰⁶:

Ուշագրավ է, որ Ղուկասի քայլը հավանություն էր արժանացել ուսաների և վրացիների կողմից ևս, որի մասին հաղորդում է Հովսեփ Արղուժյանը. «Սրբաղնատուր վեհապետին երկուցեալ ի սպառնալեաց ներքինոյն և յարանեկաց նորայ, որք զնա ստիպեալ էին երթալ անցանկ ի դուռն չարին, առաքեալ է այժմ յաղերս յոտս նորա զԴավիթ վարդապետն Թիֆլիզեցի և զՅովհաննէս վարդապետն Պոլսեցի, զոր բարեւոք համարին վիրքն և ղեներալն, որ աստ առ մեզ: Տեսցուք ի դարնանն տրելո՞ց է նոցա ինչ միութարութիւն ի ձեռս մերոց զօրաց, թե հասեալ է բարկութիւնն Աստուծոյ մինչև իսպառ»²⁰⁷: Արշավանքի դադարեցման թողած տպավորությունը այնքան ծանր էր, որ Մկրտում Գալստյանը Աստրախանից 1797թ. նոյեմբերի 17-ին գրած նամակով պահանջում էր Հ. Արղուժյանից ասելու Ա. Ա. Բեգբորոզկոյին, թե անգլիացիները զրավեցին Հնդկաստանը, որ իրենց երկրից մեկ տարվա հեռավորության վրա էր գտնվում, իսկ դուք 3 օրվա ճանապարհի տարածություն չէ՞ք կարողանում գրավել²⁰⁸:

Այսպիսով, Միմեոն երեւանցու դիրքորոշումը իր որոշակի ազդեցություն է գործել Հնդկաստանի հասարակական մտքի ձևավորման վրա, ունեցել իր համակիրները նաև Հնդկահայ գաղթօջախում, ստիպել է ավելի իրատեսորեն գնահատել ժամանակի իրադրությունը և հետևողական աշխատանք ծավալել ազատագրական պայքարում որոնելու լուրջ դաշնակիցներ և միջոցներ՝ ազգային արժեքներն ու ժողովրդին իրական վտանգներից զերծ պահելու ուղղությամբ:

«Նոր տետրակը» Հայաստանի փրկություն գործում տեսնում է Վրաստանի և, մասնավորապես, Հերակլի հետ դաշինքի և վերջինիս կամեցողության պարագան²⁰⁹: Վրաստանում բազմազգ բնակչության առկայությունը

²⁰⁶ Դիւան, հ. Ա-Բ, էջ 31:

²⁰⁷ Նույն տեղում:

²⁰⁸ ՄՄ, Կաթ. դիվան, թղթ. 6, վավ. 109, բնագիր:

²⁰⁹ «Թեև այն ժամանակ Բագրատունյաց տոհմից մեր թագավորությունը դադարեց, բայց ոչ իսպառ, ինչպես կարծում են ուրիշները: Ձէ որ, ինչպես ոմանք հաստատում են, նույն տոհմից է և վրաց թագավորությունը, մասնավորապես որ իրենք էլ պնդում են այլ...բազմաթիվ ճակատամարտեր տալով, նա (Հերակլ 2-րդը - Պ. Ջ.) ավելի է ընդարձակել Վրաց սահմանները, քան իր նախնիների օրոք էր: Մշտապես ջանում է ամայի և անմարդարանկ վայրերը լցնել բնակիչներով, և տեղ-տեղ լցրել է... իր ազգից մեր հայ ազգը չի տարբերում ու գանազանում...» (Նոր տետրակ, որ կոչվում է Հորդորակ, էջ 94-95):

յան պայմաններում Հերակլի արտաքուստ տղերանտ ներքին քաղաքակա-
նություն վարելու հանդամանքը հետագա ուսումնասիրողներին ևս զրզել
է մտածելու, թե Հերակլը, անգամ իր կամքից անկախ, փաստորեն ստեղծել
էր «Կովկասյան ժողովուրդների փորձնական մի ֆեդերացիա»²¹⁰:

Վրաց թագավորները և, մասնավորապես Հերակլ Երկրորդը, Հայոց պե-
տականություն վերականգնման նպատակ իրենց առջև ոչ միայն չեն դրել,
այլև մշտապես ձգտել են ընդարձակելով Վրաստանի սահմանները, նրա
մեջ ներառել²¹¹ (կամ գեթ հարկատու դարձնել) շրջակա երկրները: Նրանք
ուժի և սիրաշահումների, ընդառաջումների և պարտադրումների միջոցով
փորձում էին ապահովել միայն իրենց իշխանությունը: Հայ իրականույթ-
յան մեջ եթե այդ ընկալվում էր, ինչպես Հովսեփ Էմինն է արձանագրել Հե-
րակլ Երկրորդի մասին, որպես թե, Աստված է նրան նշանակել «թագավոր
երկու ազգերի՝ հայերի ու վրացիների վրա»²¹², ապա Վրաց Հերակլ 2-րդ
թագավորը պատրաստ էր հայ մեղիքներին կրկին հանձնելու նրանց հակա-
ռակորդ Իբրահիմ խանին²¹³, եթե վերջինս Հերակլին վերադարձներ Վրաս-
տանից հեռացած²¹⁴ և Արցախում ապաստանած մահմեդական իր հարկա-
տու հպատակներին²¹⁵:

²¹⁰ A History of the Georgian People. From the Beginning down to the Russian Conquest in the Nineteenth Century. By W. E.D.Allen, London, 1932, p. 205.

²¹¹ Ա. Ռ. Հովհաննիսյանը գտնում էր, որ Հերակլ Երկրորդը, բավարարելով Երեւանի խանությունից ստացվող հարկերով, մտադիր չի եղել զրավելու և Վրաստանին միացնելու Վրաստանին սահմանակից Երեւանի խանության տարածքները անգամ այն դեպքում, երբ դրա իրական հնարավորությունները նա ունեցել է: Տե՛ս А. Р. Иоаннисян. Восиф Эмин. Ер., 1989, с.110. Այդ տեսակետը բաժանել է նաև Վ. Մաճարաձեն, սակայն և ձևակերպել հետևյալ կերպ. «Հերակլը չէր հավակնում օտարի հողերի նկատմամբ» բացատրելու համար Հերակլի ինչպես 1771–1772 թթ. ուուսական արբույհը ներկայացրած առաջարկությունները, այնպես էլ 1783 թ. կեբաբը Գեորգիեյան պայմանագրի այն կետերը, որտեղ պայմանավորվածություն էր արձանագրվում հետագա տարածքային ձեռքբերումների մասին: «ვეფხისტყაოსნის ტრადიციის». Ծածկած, 1983, թ. 36–37.

²¹² Յովսեփ Էմինի կեանքն ու արկածները, Պէյրուս, 1958, էջ 125:

²¹³ Թյուրքմաթյան է, երբ հայագրի ժառանգական իշխող տոհմերի և Արցախ մուսուլման գործած Փանահ խանի ու ապա նրա որդի Իբրահիմ խանի միջև եղած հակամարտությունը ներկայացվում է որպես հայագրի մեղիքների կողմից դրամական օժանդակությունը ցուցաբերելուց խուսափելու կամ հրաժարվելու հետևանք: Երևանի թանգարան. Գրքակառուցման և տպագրության մեթոդական ծառայության հրատարակած, 1998, թ. 327, թ. 155.

²¹⁴ Գալուստ Ծերմազանյան. Երևելի հայկազունք ի Պարսկաստան. Ռուստով (Դոնի վրա), 1890, էջ 58–60: Դուան հայոց պատմության, Ա, էջ 11: Բաֆֆի, Սամայի մեղիքությունները.– Բաֆֆի, Երկերի ժողովածու, հ. XI, Եր., 1964, էջ 237–238:

Հնդկահայ գաղթաբանի ներկայացուցչները, սակայն, ի մոտո ծանոթ
չլինելով իրական փոխհարաբերություններին, անտեսում էին Հերակլ 2-
րդի և Իբրահիմ խանի մտերմության ու դաշինքի փաստը, որ գոյություն
ուներ մինչև 1783 թ. Գեորգիեյան պայմանագրի ստորագրումը²¹⁶ և հակա-
դիր էր Իբրահիմի դեմ պայքարի ելած հայ մելիքների դիրքորոշմանը:

1780-ական թթ. Հայաստանում զարգանում էին նոր փոխհարաբերույթ-
յուններ, քաղաքական շահերի նոր դրսևորումներ: 1784 թ. հունիսի 7-ին
Դանիել Ավանեսովի կողմից Պ. Ա. Պոստոմկինին տված «Բացատրություն-
ներում» արդեն կանխատեսվում էր, թե կնքված ուս-թուրքական համա-
ձայնագիրը «ըստ լուրերի, երկար չի տևի»: Հայագրի բանադնաց-դիվանա-
գետը մեղիքներից հանձնարարություն ուներ ոուսական կողմին հաղորդե-
լու, թե իրենք պատրաստի ունեն 5000-անոց հեծյալ և հետևակ զորք, որը
կարող է ախտիվ պայքար սկսել Օսմանյան Թուրքիայի այսրիովկասյան
քաղաքականության հենակետի վերածվող Ղարաբաղի խանի դեմ, եթե
ուուսական օժանդակությունը մերժենալու լինի գեթ մինչև Գանձակի խա-
նություն սահմանները²¹⁷: Ռուսաստանի կովկասյան քաղաքականության
զարգացումներին ակնդեռ հետևող մեղիքները, ողևորված ոուսական կող-

Տեղեկանալով այդ մասին, հայ մելիքներին մնում էր շուտափույթ թողնել
Վրաստանի սահմանները և ապաստանել Հյուսիսային Արցախում Գանձակի
խանության սահմաններում: Բաֆֆու մոտ այդ փաստը թվագրված է 1787թ.,
որը չի կարող ճիշտ համարվել, քանզի մելիքները 1788 թ. մարտի 10-ին Գ. Ա.
Պոստոմկինին գրած իրենց նամակում նշում են, թե ստրագրված «գիտեալ եմք
առ սորին արքայական բարձրություն», որտեղից և իրենք. բառ երևույթին, գրել
էին իրենց նամակները (Армяно – русские отношения..., т. IV, с. 376):

²¹⁵ Այդ փաստը հիմք է հանդիսացել Ռ. Ծուրարբեյի համար պնդելու, թե Վրաս-
տանից հեռացած և Հերակլի դեմ վրեժխնդրությունը լցված հայ մելիքներ Աբովի
ու Մեջլումի կողմից հետագայում Աղա Մահմադ խանի հետ համագործակցելու
և Թիֆլիսի ավերմանը մասնակցելու պատճառը եղել է նշված հանգամանքը:
Հողվածագրի կարծիքով XVIII դ. վերջին տասնամյակներին իբր գոյություն
ուներ հայագրի գործիչների մի խմբավորում, որը տեղափոխվել էր դեպի Հերակլ
2-րդի դեմ: Այդ «խմբավորման» մեջ թեև հատուկ տեղ է հատկացվում Մեղիք
Մեջլումին, սակայն իրավացիորեն, և ի տարբերություն վրաց այլ հեղինակների,
չի ներառում Հովսեփ Աբովիանին ևս: (Ծ. Յրձձձձձ. Նշվ. աշխ., էջ 155–168):

²¹⁶ Գեորգիեյան պայմանագրի կնքման հանգամանքները փաստում են այն դրույ-
թի ճշմարտացիությունը, թե Ռուսաստանի մերձավորարևելյան ուղղությամբ
արտաքին քաղաքականությունը նվաճողական բնույթի կրելով հանդերձ, իր
օրյակիսի հետևանքներով ունեցել նաև հրատակ նշանակություն, քանզի արա-
դպրից է Օսմանյան կայսրության կապակի ժողովուրդների ազատագրման
գործընթացը: «Восточный вопрос во внешней политике России (конец XVIII-
начало XX вв.», М., 1978, с. 6):

²¹⁷ Армяно – русские отношения..., IV, с. 318–319.

գ. Հերակլ Երկրորդի տնտեսական քաղաքականությունը՝ հայ առևտրական դասին տրվող գերազատությունը:

դ. Բուն Քարթլ-Կախեթում գտնվող տեղական ուժերին հնչվելու փորձերը: Հիմնական պայմանավորող գաղտը, սակայն, միանման պատմական ճակատագիրն էր, Այսրկովկասի ժամանակի իրավիճակը և ընդհանուր շահերի դրսևորումը²²⁵:

Հերակլն իր առջև իրականում ոչ միայն Հայաստանի ազատագրման նպատակ էլ էր դրել, այլև առաջարկում էր քննարկել անգամ Հայոց և Վրաց եկեղեցիները²²⁶ տարանջատող «որոշ» գրույթներ վերանայելու հարցը, որը նշանակում էր եկեղեցիները միացնելու փորձ՝ «երկուստեք զիջումների միջոցով»²²⁷: Հովսեփ Էմինը դեմ էր այդ առաջարկին²²⁸: Այդ էր նաև հիմնական դրդապատճառներից մեկը, որը Միմեոն Երևանցուն ստիպում էր վերապահություն մտնելու Հերակլի վարած «սիրալիր» քաղաքականությանը²²⁹ և նրան ետ էր պահում Հովսեփ Էմինի լավատեսությունը անվերապահ

²²⁵ ԸՄ. Երեմյան, *Երևան*, էջ 103:
²²⁶ Life and Adventures of Emin Joseph Emin. p. 225-227. Հովհան տեր Օհանյանի արձանագրմամբ շարունակվում էին հայերին վրացադավան դարձնելու դեպքերը. «Նաեղձաեղձեղ մեքոտյ զոջոսն եօյլեօլոսն աննաջո ժոյտօնն. զաննն ժոյլեօլոսյոյ, ցն զնաջոլեման զանարտոյեղան եօմեօծոտօնն զոյլեօլոսն»²²⁶. Տն Մ. Լոմոնսոյ. ԳՅՈՒՆ ՄՅԱՆԱՅՄԱՅՆՆԵՐԻ ՆԱԽԳՐՈՅՎԵԼՈՍ ՈՍԵՂՈՐՈՅԵԼՈՍ. ՆԱԵԼԸ ԳՅՈՒՆՅՈՒՆԻ ԺՐՈՆԵՅՅԵԾՈՒՄ, ԵՄ, 1979, ԳՅ. 140. Ավելին, Հայոց պատմությանը գործնականում ենթարկվում էր գանազան սահմանափակումների (յև, VII, ԳՅ. 305-306):
²²⁷ Գ. Մայսուրաձեի բնորոշմամբ «Հայաստանի հետ Հարաբերություններում հայկական հողերը Քարթլ-Կախեթի թագավորությանը անմիջականորեն միացնելու և հարևան [իմն] հայ և վրաց] ժողովուրդներին եկեղեցական առումով ևս միավորելու Հերակլի քաղաքական ծրագիրը հանդիպում էր լուրջ արտաքին և միայն միջև գոյություն ունեցող (Հարաբերությունների) խոչընդոտներին, որոնց հողթագրություն կապված էր մեծագույն ղեկավարությունների հետ: Չնայած դրան, Հերակլ 2-րդը մինչև իր կյանքի վերջը ձեռք էր բերել այդ ծրագրից և հերոսաբար պայքարում էր դրա իրականացման համար» (Երեմյան Մանուկյան, խորհրդակցությունը ԵՄ, 1982, ԳՅ. 269-270):
²²⁸ Life and Adventures of Emin Joseph Emin. p. 227-228.
²²⁹ 1767 թ. մարտի 24-ին Միմեոն Երևանցին ստիպված էր նախատինքն նամակ հղել Հերակլին նաև կաթողիկոս Բարդուղիմեոսին Վրաստանում Հովանավորելու համար և պահանջել դադարեցնելու Հայոց եկեղեցին ու համայնքը պառակտող քաղաքականության ստապումը. «Ապա ոչ գիտեմ, թե որով դիտմամբ կապի զնոսա յայդը բերել և կամ զի՞նչ կարոտութիւն ունիս նոցա: Եթէ վասն բժշկութեան, վկայ է Աստուած, զի սուս է բժշկութիւն նոցա: Զի ոչ թէ բժշկ է նոքա մարմնոց, այլ վիրավորիչ հոգոց: Որք զայն գտեալ են իւրեանց զգիրագոյն հնար, զի զանունն բժշկութեան առեալ ի վերայ իւրեանց, խարեն այնու»

սատար կանգնելուց²³⁰: Միմեոն Երևանցին առավել չափով լավատեղյակ ու իրագրել էր Վրաստանում և, մասնավորապես, վրաց արքունիքում տիրող իրադրությունն ու վրաց թագավորի նպատակներին: Լ. Տուխաշվիլին Միմեոն Երևանցու դիրքորոշումը բացատրում է ավելի լայն ընդհանրացումներով: Նրա կարծիքով «Հայոց եկեղեցին հակադրվում էր վրաց կողմնորոշմանը, որովհետև ցանկանում էր զբաղեցնել Վրաստանի տեղը Մերձավոր Արևելքի ժողովուրդների քաղաքական ծրագրերում, այսինքն՝ նշայած այն բանին, որ Էլմիաժինը անհրաժեշտ պահերին ինքը ևս մահմեդական հարևանների դեմ ազավինում էր Քարթլ-Կախեթի ուժեղ հովանավորությանը, միաժամանակ և հանդես էր գալիս որպես հակառակորդ: Էլմիաժինը փորձում էր Վրաստանի հետ հարաբերությունները հաստատել իրավահավասարության հիմունքներով և էլ էր բավարարվում միայն ողջ հայության անունից հանդես գալով: Նա օգտվում էր Թուրքիայի ու Իրանի կառավարողների պաշտոնական օժանդակությունից, հայ վաճառականության նկատմամբ նրանց «հովանավորությունը» և հաճախ իր ազդեցությունը

զբաղում և ուր և կամին երթան և զորմն չար ի մէջ խղճալոյ ազգիս մերոյ սերմանն և քակտն զբաղումն ի հաւատոց:...միթն՞ կամիս, զի ի քում ժամանակի վերստին մուծցի խմոր չար աղանդոյն յօրհնեալ երկրիդ քոյ, որով ոչ միայն ազգն մեր, այլ և ձեր ազգը խմորին և քակտն ի հաւատոյ իւրեանց և լինի այնուհետև մեծ պակասութիւն օրհնեալ անուան քում և յիշատակ չար, քեզ ևս մեծ զղջումն և փոշիմանութիւնն: ...Զի խղճալի երկիրքս և երկրականքս մեր, զբաւս և զվիշտ կենամաչս, զորս ունին մշտապէս, բաւականացին այնու և այդ ևս մի յաւելցի ի վերայ ցաւոց նոցին հոգեմաշիկ իմն ցաւ» (B. M. Мартirosյան, П. А. Чобанян. Документы по истории армяно-грузинских взаимоотношений и общественной жизни Грузии (II пол. XVIIIв.), – «Кавказ и Византия», вып. 3, Ер., 1982, с. 235-236): Հայոց եկեղեցու նկատմամբ վրաց պետական քաղաքականության դրսևորման սկիզբ պետք է դիտել, ինչպես ստեղծ ենք, նաև Անտոն կաթողիկոսի կողմից կազմված հանրահայտ «մեծաթիւլեղծօ» աշխատության հրատարակ գալը դեռևս 1750-ական թթ. (Երեմյան, խորհրդակցությունը ԼՍ, 1982, ԳՅ. 378-379. П. М. Муралян. Армяно-грузинские литературные взаимоотношения в XVIII веке. Ер., 1966, с. 197):

²³⁰ Վ. Մարտիրոսյանը գտնում է, թե «XVIII դարի 50-60-ական թվականներին Քարթլ-Կախեթի թագավորության քաղաքական ամրապնդումը իր դրական նշանակություն ունեցավ նաև հայ ժողովրդի համար: Վրացի և հայ գործիչները նշված ժամանակահատվածում ձեռնամուխ էին եղել այն խնդիրների լուծմանը, որ իրենք, իրոք, ի վիճակի էին լուծել, մերժելով իրենց ուժերից վեր խնդիրները՝ որքան էլ դրանք առերևույթ հրապարակ լինեին» (Վ. Մարտիրոսյան, Հայ-վրացական աննջությունները XVIII դ. 50-60-ական թթ., – «Վրացի հաս. գիտ.», 1980, թ. 1, էջ 49-50):

տարածում էր նաև ոչ Հայազգի լուսավորչական²³¹ բնակչության վրա²³²:

²³¹ Վրաց պատմագիտության կողմից հետևողականորեն արմատավորվում է այն թեզը, թե իբր Վրաստանի վրացախոս, սակայն Հայոց եկեղեցու հոսի մեջ գտնվող բնակչությունը ոչ թե ազգությամբ հայեր էին, այլ «լուսավորչադավան» դարձած վրացիներ: Որպես հիմնավորում շահարկվում է նաև այն հանգամանքը, որ Հռոմիս Վրաստանի Հայազգի գործիչները այլևայլ երկրներում հիշատակվում են նաև «վրացի» անվանումով, ինչը իրականում նշանակում էր միայն «Վրաստանցի»: Երևույթի քննությունը տե՛ս Յ. Յաձաթցոցո, օտեջձ յարտջցցոս յոնսոձոնս ճա ձոլջոճջոձոնս յաձոտոնսոնսոցոնս,- օտջ Ձրոմձձո, Ծ. 116, 1965, թջ. 357. Յ. ձոնսյրոձոճ. յարտջցցո ճա ձոլջոնս Եձլջոնս Եձլջոնս յրտոյոթոձոնս օնձոթոթոձոնս XIII-XVIII ԵԵ., օձ., 1970, թջ. 177-184. Ս. Մ. Մյրաձյո. Новые материалы о Рафанле Данивегове,- «Բանբեր Երևանի Համալսարանի», 1973, թիվ 3, էջ 180: Պ. Չոքաձյաձ, Դիտոյություններ Սուլխան-Սարա Օրբելյանի Եվրոպա ճանապարհորդության մասին,- Վրաց. ԽՍՀ ԳԱ «Մացնե» (լեզվի և գրականության շար), 1976, թիվ 2, էջ 39-41 (վրացերեն): Նույնի, Վրաց ուղեգրությունները..., էջ 24-26:

²³² Ուշագրավ է, որ ասորական կողմը մինչ 1780-ական թթ. ևս շարունակում էր Հերակլի Հեռ բանակցություններ վարել նշված խղիղների շուրջ (տե՛ս А. Р. Ноаннисян. Носиф Эмин. Ер., 1989, с. 192-198, 233-235): 1784թ. ասորիների պատրիարքի նամակը Հերակլը ստիպված էր ուղարկել Ռուսաստան և սպանել ռուսական կողմի հրահանգներին. «Препровождаю в. п. объяснение Илии Ассириана, прозвие его уже около дватцати лет. Она еще была и в бытность здесь генерала Тотлевсена. Чрез него доносил я о Ассирианах высочайшему двору, когда изволите рассмотреть его ответы, прошу сообщить мне ваше мнение, дабы я сообразно оным приложил мое попечение, или сообщить мог вашему превосходительству свои мысли» ЦГАДА, ф. 23, 1784, л.13, ч. 8, л. 186. Նույն թվականին, ըստ Բուսանշևի հաղորդման, Թիֆլիս ժամանած ասորաց ներկայացուցիչը՝ Իլիան (сын бывшего их начальника), դիմել է նաև իրեն՝ «в надежде получить избавление от сильной руки великия Екатерины»: Ասվում է, թե Ուրմինյի խանությունում նրանք մոտ 100 դուլդ ևն, իսկ թուրքական սահմաններում՝ մինչև 20.000 տուն, դավանանքով նեստորական (Армяно-русские отн., IV, с. 309): Առավել ուշագրավ է այն փաստը, որ Օսմանյան կայսրությունում ևս ասորիները 1783 թվականից գտնվում էին Հայոց պատրիարքարանի ուղղակի ներկայությունից ներքև: Այդ մասին ունենք հետևյալ հիշատակությունը. «Ի ժամանակ Տիսան Ջաբարիայ Ազգասէր կարդացեալ պատրիարքի մեծի Պոստո, եղեն ազքն ասորաց անկեալք ի ներ մերս իշխանութենս, որ այսուհետև կաթուղիկոս նոցին մերս Պատրիարքի արդովն է նստելոց և եյանելոյ և ոչ այլոցն, քանզի կամանս իւրեանց եղև այս. և ոչ թէ ակամայ և կամ բաժնութեամբ և կամ թէ այլ իմն կերպիւ. և յորժամ այս եղև՝ էր թուականն մեր ի ՌՄԼԲ (1783) և ի յամեանն օգոստոսի վեցին, ի վերագարձմանն վերագրեալ Ազգասիրի: Ուստի Ազգասէր յորջորջեալ փոխեաց զնոսին կաթուղիկոսն, որ էր Հեստեալ և եղ ի սեղի Հեստելոյ ուղղափառ ոմն Մատթեոս անուամբ, արքարև է մեծ և կարի ուրախութիւն, եթէ իմանամք և լինիմք յար շնորհակալ ի սեաւունք մերձ Աստուծոյ, որ յառաջ սոցա ազգն կամ զամենայն ազգս էին մեծ և ունէին թագաւորութիւնս ճոխ և անուանի, ի վեր քան զամենայն թագաւորութիւնս... Եւ ազք ի սոցանէ Բ(2) քահանայք, որք էին եկեալք յաղագս փոխման Հեստեալ կաթուղիկոսին իւրեանց, և յորժամ էհան վերագրեալ Ազգասէր կարդացեալն ֆէր-

Հայոց կաթողիկոսը փորձում էր Մերձավոր Արևելքի բոլոր փոքր ժողովուրդներին քաղաքական դաշինքը վրացիների հետ իրականացնել իր (իմա՛ Հայոց կաթողիկոսի) միջոցով, ինչը կհանդեպներ էլձմիածնի դերի պահպանմանը և այս վերջինիս օգտին վրաց ազդեցությունից չհեռացածանը: Միմեռն երևանցին ուշադիր հետևում էր վրացիների հետ ասորիների և եզդիների բանակցություններին»:²³³

Նման եզրակացությունից համար հիմք կարող է ծառայել ոչ միայն 1770 թ. օգոստոսի 15-ին Հերակլին ուղղած Սալմաստի Հայոց Եսայի (Իսա-յի) եպիսկոպոսի նամակը²³⁴, այլև Միմեռն երևանցու նպատակալայց ազ-

ման վան փոխել Հեստեալ կաթողիկոսին, իսուլթան Համիթ արքայէ, և ես նոցա առ ի տանիլ և փոխել զայն Հեստեալն, ուստի յառաջ քան զգնալն իւրեանց՝ մատուցին զուրբ պատարագ ի մերս պատրիարքարանի եկեղեցուջն: Արդար և մեծ և յոյժ ուրախութիւն եղև ազգի մերում և նոցա: Որ և բարեբարակ Աստուած սէր և միաբանութիւն տայէ մեզ և նոցա: Ամէն» (Դիւան Հայոց պատմություն, գիրք Ժ, Մանր մատենագիրք, հրատ. Գիւտ Աղանեանց, Թիֆլիս, 1912, էջ 227-228):

²³³ Ը. Եյնսձցոցո. Նշվ. աշխ., թջ. 95.

²³⁴ Անհարկվում է Ուրմինյի ասորիների և Հերակլի միջև բանակցություններն իրականացնող Հայազգի Եսայի եպիսկոպոսի ձեռքակալությունը էլձմիածնու՛մ Հերակլի Հեռ ունեցած հանդիպումից հետո վերագրածի ճանապարհին: Այնտեղ ասված է. «когда я уехал от вашего счастливого дома, 21 апреля прибыл вечером в Эривань, расчитывая выехать из Эриваня тайком, чтобы не быть никем замечанным. Неожиданно Эчмиадзинский католикос наслал на нас своих людей, которые нас захватили и отвели нас Эчмиадзин, много неприятностей мы испытали, по вашей милости там нашли мы Гургина Чичноглы, этот нас защитил, я с горя захворал в дороге один день, потом сталомне лучше по вашей милости; отпавился я, видел и незидов и айсорскаго католикоса, которые охотно себя признали вашими рабами, государь мой. Я старался поступать везде по вашему приказанию...» (А. Чагарели, Грамоты..., т. II, вып. I, док. № 43. Հմմտ. А. Р. Ноаннисян. Носиф Эмин. Ер., 1989, с. 233): Պարսկահայերի քրիստոնյաների և վրաց արքեպիսկոսի միջև Հարաբերությունները շարունակվում էին նաև Գեորգի 12-ի գահակալության տարիներին: 1800 թ. Գեորգիի գրում էր Գ. Ծավճավաձին. «к нам прибыл человек с письмом из Адерсейжана от айсоров, живущих в Урмин, в Хойской провинции, которые единогласно просят переселить их в Грузинское царство. Всех их 15 тысяч семейств. Народ этот еще в царствование блаженной памяти родителя моего просил его принять к себе, но мы тогда не имели времени привести желание их в исполнение, посему ты должен довести теперь до сведения высоч. двора и похлопотать как только можешь, тем более, что настоящие обстоятельства нам благоприятствуют привести в исполнение это хорошее дело безирепствственно и не оыжая ососел. Присланный айсорами человек до сих пор остается здесь в ожидании высоч. соизволения по этому делу. За сим всем. пусть прикажут находящемуся здесь русскому войску, чтобы оно сопровождало бы нас. Если же всего войска нельзя послать с нами, то пусть прикажут, чтобы хотя половина всей пехоты пошла бы с нами принять упомянутыя семейства айсоров. Надеемся, что,

գային-եկեղեցական քաղաքականության իրագործման ձգտումների և իրագործումների ողջ համակարգի հաշվառումը²³⁵: Միմեոն Երևանցու նպատակալաց գործունեության վերլուծությունը հիմքեր է տալիս պնդելու, որ նա Հայոց քաղաքական իշխանության բացակայությունը և նրա շուտափուլ վերականգնման անհուսությունը պայմաններում փորձում էր ազդի ղոյատևումը ապահովելու նպատակով համախմբման կենտրոն դարձնել Ամենայն Հայոց կաթողիկոսության Մայր Աթոռը²³⁶: Միմեոն Երևանցու

судя по теснейшим обстоятельствам, переселение их к нам может совершиться в порядке и с пользой для нас, – народы эти суть греки, алсыры и армяне. Доложи моему всем, государю и покровителю, что это дело принесет небольшому моему царству некоторую пользу. Ты должен постоянно ходатайствовать о всепомогательном войске, чтобы оно получило повеление следовать за нами туда, где это требуется». (A. Царели, Грамоты..., т. II, вып. I, док. № 164).

²³⁵ Բավարար չափով փաստարկված չէ վրաց պատմագիտության մեջ արտահայտված այն գրույթը, թե Միմեոն Երևանցին և հայազգի առևտրա-արհեստավորական խավը կարող էր մասնակցություն ունենալ 1765 թվականին Հերակլի զեմ Պատաս արքայազնի դավադրությանը, որով և պայմանավորված պիտի լինեն իբր Հերակլի և Միմեոն Երևանցու միջև ստեղծված ստանությունը: (Ջ. ԸյեռաՅջջեռ. Երևանցու և Միմեոն Երևանցու միջև ստեղծված ստանությունը: (Ջ. ԸյեռաՅջջեռ. Երևանցու և Միմեոն Երևանցու միջև ստեղծված ստանությունը: ԹՄԻՍ, 33, 107-121): Միմեոն Երևանցու Ֆրչատակարանում այդ իրագործությունների մասին առկա գրառումները ոչ միայն հիմք չեն տալիս նման եզրակացության, այլև վկայում են կաթողիկոսի հստակ դիրքորոշումը՝ ի սրահայտություն Հերակլի իշխանության: (Տե՛ս Դիւան հայոց պատմության, գիրք Գ. Միմեոն Երևանցու Ֆրչատակարանը, էջ 364, 378-380: Տե՛ս նաև A. P. Новинский. Носице Эмми. Ер., 1989, с. 199-202): Միմեոն Երևանցու և Հերակլի 2-րդի միջև տարածայնություններ հարուցող հիմնական խնդիրներից էր վերջինիս կողմից Գանձակի Շահվերդի խանի ու Իսրայել կաթողիկոսի հորդորանքին տեղի տալը, որը ի վերջո չտակվեց Միմեոնի կողմից իր տեղապահին Թիֆլիս առաքելուց հետո: (Տե՛ս Դիւան հայոց պատմության, գիրք Գ. Միմեոն Երևանցու Ֆրչատակարանը, էջ 435-441, 451, 470-471 և այլն): Այդ ամենով հանդերձ ուշաքաղված է, որ Հերակլի զեմ դավադրությունները իր կեղծարքայ թագավորության ժամանակ կազմակերպվել են նրա կողմից Երևան արշավելու տարիներին՝ 1765 և 1779 թվականներին:

²³⁶ Այդ մասին ուղղակի վկայություն է թողել նաև Ղուկաս Կարնեցին: Պատասխանելով Նովակի Արզուիթյանի առաջարկին՝ Միմեոն Երևանցու «Պարտավճար»-ի անավարտ տպագրությունը Ռուսաստանում շարունակելու վերաբերյալ, նա գրում է. «Տպագրատուն ըստ մերում լեզուի գոյ և յայլ տեղիս. թէ յայնս տպեալ և թէ յայգր, զի՛նչ է զանագանութիւն: Սակայն որպէս էր ջանք լուսաճողոյն, նոյնպէս և մեր ամենեցուն այն է ջանք և դիտումն, զի ի սրբոյ Աթոռոյս ելցէ այսպիսի ինչ, առ ի գովեստ և ի բարձրութիւն սմից՝ և անուան լուսաճողոյն, որ զուպագրատունս գայս աստատեաց. գայսու որպէ՛ս զանց արարեալ յայլ տեղիս արկցոր: Նոյնպէս և վասն թղթատանն և թերակատար մնացեալ գործոց իմն, զի ամենպէս ինչ յառողեղոց է Աստուծոյ և յառաջանալոց, եթէ տացէ մեզ Աստուած գծամանակ և գիսաղաղ կեանս» (Դիւան հայոց պատմության, Գ, էջ 270):

նշված քաղաքականության ակնհայտ դրսևորում էր նաև Հայոց միջավայրում կաթողիկե քարոզիչների գործունեությունը կասեցնելու գործողությունները: Կաթողիկոսությունը առավել տարածում էր գտնում Ախալցխայում, Գորիում, Թիֆլիսում, Գանձակում և այլն²³⁷: Ախալցխայում բնավոր-

²³⁷ 1763 թ. մտրտ ամսին կազմված մի վիճակագրություն հետաքրքիր պարզաբանումներ է տալիս Վրաստանում քրիստոնեության այն ժամանակվա վիճակի մասին: Ըստ դրա, Ախալցխայում (բնագրում Ahavardi) և Թիլիսի (Կարեթ) կար երեք Բարսեղյան վանական, որոնք գաղտնի կաթողիկեներ էին, 29 աշխարհիկ կաթողիկե և մոտ 1000 "հույն" (ուղղափառներ) ու հայեր: Վրաստանում սփռված ապրում էր 680 կաթողիկե հայ, 39 կաթողիկե "հույն" (ուղղափառ վրացիներ) և որպես գաղտնի կաթողիկեներ՝ 2 հայ քահանա, ինչպես նաև երկու ձեռներին պատանդ 500 աշխարհական: Դրա հետ միասին կար 722 սուլթանական հայ (միտրեաններ): Թրիլիսի հայերի թվում հաշվվում էին 1 եպիսկոպոս, 4 վանական, 41 քահանա, մոտ 28000 հավատացյալ՝ 13 եկեղեցիներով: Ուղղափառ վրացիների թվում՝ 1 արքեպիսկոպոս՝ Անտիոքի նախկին պատրիարքական տեղապահ Վիկար (Vikar) հետնորդը, 10 վանական, 24 ծխական քահանա և մոտ 10 000 աշխարհական իրենց 2 եկեղեցիով: Գորիում կար 130 կաթողիկե հայ, 32 միանգամայն աղքատացած կաթողիկե վրացի և մի գաղտնի վրացի կաթողիկե քահանա: Երևանի գյուղական (Գորիի մոտ) ապրում էր մոտ 104 կաթողիկե հայ, իսկ ամբողջում՝ 5 կաթողիկե վրացի՝ քարոզիչ Թոմաս Վալեշվիլու հետ միասին: Գորիում և Գորիի մերձակայքում ապրում էին ազգությամբ հայ 1 ավագ քահանա, մեկ վանական (վարդապետ) և 4000 աշխարհական՝ երկու եկեղեցիով, ազգությամբ վրացի՝ 1 արքեպիսկոպոս, 2 վանական, 6 քահանա և 1200 հավատացյալ: Երկու ձեռների կաթողիկեների փոքրիկ խմբեր էին բնակվում Բուխարյայում, Բաթումում և Էսթրադոնում [՝]: Միանգամայն այլ էր Ախալցխայի պատկերը, որտեղ թուրքական փաշայի ենթակայության ներքո գործնականում հավատի ապստոսություն էր տիրում: Այստեղ կային ընդհանուր առմամբ 7754 կաթողիկե և 13 հայ քահանա, սակայն միայն 150 կաթողիկե վրացի՝ իրենց ձեռին պատկանող մեկ քահանայի հետ միասին: Հայերը ապրում էին 15 "համայնքներով", դրան գումարվում էին 1500 ոչ կաթողիկե հայ փախստական (վերաբնակիչներ)՝ 5 քահանայի հետ միասին և 180 օտար հույն-վրացի՝ 3 քահանայի հետ միասին: Վերջը Լեոնտզոզ զա Վիտերբոյի կողքին կանգնած էին 10 պատեր, տեղաբնակ Արամյան և մեկ ուրիշ քարոզիչ (հայ), որին միաժամանակ ներկայացնող 2 պրեֆիկս, 2 պատեր և 1 աշխարհիկ եղբայր: Գանձակի խանությունում դեռ ապրում էին 2 կապուցին հայր և 6 աշխարհական եղբայր միայն 10 կաթողիկեների հետ միասին: Ժամանակավորապես այնտեղ ապրող խաղերը [ասորիներ] այլ թիվը բարձրացնում էին 114-ի: Դրանից բացի Գանձակի մոտ գտնվող մի գյուղում ապրում էր մի հայ եպիսկոպոս, որը համարվում էր կաթողիկե: Բաժանված [՝] հայերը ունեին մեկ եպիսկոպոս, 20 քահանա և 800 հավատացյալ: Դրան գումարվում էին 20 նստաբնակներ:

Ընդհանուր գործնական լեզուն, չնայած հայկական տարրի զերակայությանը, վրացերեն էր, սակայն թուրքերենը հասկանալի էր ամենուրեք: (Ambrosius Eszer. Missionen im Halbrund der Länder zwischen Swarzen Meer, Kaspisee und Persischem Golf: Krim, Kaukasien, Georgien und Persien.– Sacrae Congregationis de Propaganda Fide Memoria rerum, Vol. II, 1700-1815, Herder, Rom-Freiburg-Wien, 1973, 439-440).

ված կաթնովիկ եմբողացի քարոզիչներին ուղղված նամակում Սիմեոն Երևանցին գրում էր. «... Զի՞նչ գոյր ձեզ ի յԱխալցխա, հայրենի քաղա՞ք է ձեր, եթէ ունէիք անզ գրնիկ ժառանգութիւնս և զժողովուրդս, զի այնքան երկար մնայիք անզ: Անիրաւ գողըզ մտնայ ի տուն մեր, նստէիք աներկիւղ իբրև զսեպուհ տեսարս և զժառանգութիւնս մեր յանդիման աչաց մերոց վա- յելէիք»²³⁸, գրուող քաղաք մի շրջակայիւքն իւրովք ի մէնջ արտամբոցու- ցանել... Ասեմք զձեզ թէ ելէք ի ժառանգութիւնէ մերմէ, դուք գրէք ի Պօլիս առ Քրիստոսասէր կլչին ֆոսանկիզաց զանգատ զմէնջ, թէ մեզ այսպէս և այնպէս արար:... Գրեմ և ես ահա սիրով, զի մի ևս նովին անիրաւութեամբ և զողութեամբ և խաբերայութեամբ շրջիցիք ի մէջ ազգիս մերոյ, ուր և հանդիպանջիք: Կամ այսպէս պարտիք վարիլ, կամ ելանել և գնալ ի բուն

Շինդխի գլուզի մասին ուշադրով տեղեկութիւն կա Ղուկաս Կարենցու նամակներից մեկում, որով հայաստանում է գլուզի էջմիածնապատկան լինելու փաստը . «Թուղթ օրհնութեան և շնորհակալութեան սրբազան վեհէն առ Շինդխի գլուզի մովթով պարոն Զաքարիայն գրեաց, որ ի ներկայումս ի ջանայն հախալցիցոց գնոյն գլուզն թեմ ինքեանց, այլ գոյով այն բնականապէս վիճակ Սրբոյ Աթոռոյս, առ ևս շատագումութիւնս էր արարեալ և օգնեալ մերայնոցն, որք կրկին հաստատեալ էին զայն գլուզն վիճակ Սրբոյ Աթոռոյս» (Դիվան հայոց պատմութեան, Նոր շարք, գիրք առաջին, էջ 277): Ուշադրով է նաև Ղուկաս կաթողիկոսի 1782թ. մայիսին Հերակի 2-րդին գրած նամակը, որտեղ «գրէ և զշնորհակալութիւն... առ ռոն արկանելոյ զաթխարմայ հերձուածողան և վասն տալոյ նորապէս զգատակնիք, զի ևս առաւել ընկճեսցին և զարճցին վերստին ի մերս ուղղափառ գաւառութիւն» (նույն տեղում, էջ 295):

²³⁸ Այդ առումով ուշադրով է հետևյալ ստացականը, որ վկայություն է նաև բնակչությունից հարկահավաքության շուրջ հակամարտությունների մասին. «Զօրութիւն գրոյս այս է, որ ես Գալուստ վարդապետս, որ էի փոխանորդ Կարմիր վանից սուրբ Աստուածածնին, սպասաւոր Յակոբ վարդապետին ի թվին ՌՄԼԶ (1787)-ին յաբքունական պէրաթիւ և ֆէրմանսիւ և // վարդապետի կնոջական եկաք ի բնական թէ՛նս մեր ի յօրհնեալ քաղաքն յԱխալցխայ վասն առաջնորդական արդեանց, և ի մեր գայն մեր բարեբաղտ իշխանքն ստին սիրով ընկալեալ զմեզ և զոր ինչ ի Յօհաննէս վարդապետէն, որ ի Ղօշալանքն մնացեալ հէսապ երեք ամեան ետուն մեզ, վասնորոյ և մեր, ի միամտութիւն սոցին, զայս Թուղթս կրքեալ առաք ի ձեռս նոցա, զի թէ ի սուրբ էջմիածնէ և թէ ի Ղօշալանից առաջնորդէն զայս երեք ամեան արդիւնքն թալապ առնեն՝ մեք լիցիմք պատասխանատու և սքքա՞ անպարտք, վասնորոյ և իմով կնքօվս հաստատեմ ի ներքոյ, զի տեսողաց հաճոյ լիցի բաւել: Գրեցաւ ի մայիսի յուն» (Վրաստանի ԳԱ Զեռագրերի ինստիտուտ, ձեռ. Չ-1459, էջ 301): Կարինի Կարմիր վանքի առաջնորդությունը Յակոբ վարդապետը ստացել էր ֆերմանով, և նրա կաթողիկոսական գործունեության մասին Թիֆլիսից Կարուկաս կաթողիկոսին ահազանգել էր նաև Թիֆլիսի առաջնորդ կարգված Կարապետ վարդապետը, որին զրգված նամակում կաթողիկոսը խոտանում էր, թե «մեք գրելոց ենք զբանս խրատականս առ Յակոբ պետն և պնա զգուշացուցանելոց ենք առ ի բաց կալ ի թիւր արարանցն» (Դիվան հայոց պատմություն, Նոր շարք, գիրք առաջին, էջ 257):

երկիրն ձեր, զի երկիրքս այսոքիկ ոչ են Ֆոսանկատուն, այլ հայոց երկիր՝ ընդ իշխանութեամբ տաճկաց: Դուք ասա ոչ ժողովուրդս ունիք, և ոչ թէ՛մ և ժառանգութիւն...»²³⁹:

Սիմեոն Երևանցու գլխավոր մտահոգությունը, սակայն, ներազգային դժվարությունները հաղթահարելն ու միաձույլ ազգային կառույց ստեղծելու գործն էր²⁴⁰: Տարբեր վարչա-քաղաքական միավորների մոտ նրա՝ որպես Հայոց կաթողիկոսի, ներկայացուցչի պարտականություններն իրականացնում էին նշանակված վեբրիները և գործակալները, որոնք, ի տարբերություն նվիրակների, պետք է գտնվեին իրենց նշանակման վայրերում և ունենային շատ ավելի լայն լիազորություններ, քան միայն գրամահավաքութիւն իրականացնելու նպատակով առաջվող նվիրակները կամ տնտեսական պարտականություններ կատարող գործակալները²⁴¹:

Թշնամական հարձակումներից էջմիածնի պաշտպանությունը կազմակերպելու համար Սիմեոն Երևանցին նախաձեռնել էր Մայր Աթոռի պարիսպների վերանորոգությունը և ամրացումը: Օտար հարձակումների դեպքում Երևանի խանը բավարարվում էր միայն ապավինելով Երևանի բերդի ամրությունը, իսկ խանություն այլ բնակավայրերը մնում էին անպաշտպան և կողոպտվում թշնամիների կողմից: 1765 թ. Ռեթևոս վարդապետը

²³⁹ “Кавказ и Византия”, вып. 3, Ер., 1982, с.240-241. Այս իրադարձությունների մասին հմտ. Ambrosius Eszer, S. 442-443.

²⁴⁰ Սիմեոն Երևանցի, Զմեռո, Վաղարշապատ, 1873, էջ 71:

²⁴¹ Դիւան հայոց պատմութեան. Գիրք Գ. էջ 244-251: Միայն Չամչյանց, Հայոց պատմություն, հ. Գ, եր., 1984, էջ 874-875: Առավել ակտիվ ընդդիմություն է արձանագրվել հատկապես Կ. Պոլսում Սիմեոն Երևանցու կողմից առաջադրված կաթողիկոսական ներկայացուցիչներ ունենալու շուրջ:

Այդ պատճառի կարևորությունն ու անհրաժեշտությունը գիտակցվել է նաև Հեռագրում Սիմեոն Երևանցու մահից հետո: Դեռևս Ղուկաս կաթողիկոսի կենդանության ժամկետի 1799 թ. գեկտեմբերի 1-ին, Պետերբուրգից Կ. Պոլսի նորոշորդ Դանիել պատրիարքին գրած նամակում Հովսեփ Արզուիթյանը ընդգծում էր. «Մեր կրանիլի սուրբ Հօրն կամքն էր ունելն և վէբրի ի քաղաքիդ, որոյ վասն և ուրախ էր ի վերայ Զաքարիայ յաջնորդմանս, բայց ըստ յուսոյն ոչ կեղտ գնմանէ զհամբախտ մտաց իւրոց, այլ այժմ ես աներկբայ եմ, որ հոգի եղբայրդ իմ թէ՛յէտ զոք ոչ ընտրեսցես յատկապէս ի վէբրութիւն, սակայն ըստ յուսոյն ծնողին մերոյ դու ինքդ ընդ պատրիարքական անուանդ և զնոյն կամքս նորա, այս է՝ զգործն նորին պատկանեալ քաղաքիդ ոչ իբրև պատրիարք միայն, այլ իբրև նուիրակ և կամ վէբրի, և որ առաւելն է՝ իբրև որդի հարազատ յանձին կրել զայն աշխատանս և լցուցանել ի յօրտու և ի պարճանս սրբոյ Աթոռոյն մերոյ և զՀօգի Հօրն մերոյ և Հայրապէտի, ուրախ առնել և զիս ընդ նմին պարտաւորել» (ՄՄ, ԿԴ, թղթ. 9, վավ. 165):

պետին նվիրակվածը ուղարկելով Սպահան, Սիմեոն Երևանցին «չափ պարսպի ևս Սրբոյ Աթոռոյ տուաւ սմա, զի ցուցցէ անդ ժողովրդոցն, թե-րևս զիմտատիայս ինչ տայցէ ոք»²⁴²:

Սիմեոն Երևանցին մեծացրել էր թուանկչիների (Հրացանավորների) խումբը²⁴³, որի նպատակը ոչ միայն վանքի պահպանությունն էր թշնամա-կան Հարձակումներից, այլև տարրեր Հանձնարարությունների և առա-քումների ուղեկցումներն ու նրանց անվտանգությունն ապահովումը: Ու-շագրավ է, որ անգամ Երևանի խաներն արշավանքներ կազմակերպելու դեպքում կամ նման պատրվակներով զինվորներ (թուանկչիներ) էին խնդրում կաթողիկոսից, իսկ կաթողիկոսը էլ բնավարանում նաև մերժելու նրանց խնդրանքը²⁴⁴: Հատկանշական է, որ 1766 թ. լեզգիների Հնարավոր արշավանքի վտանգի կանխման Համար «արբազան Վեհերն, վասն անկատա-րուն զոլոյ տակաւին սրբոյ Աթոռոյս պարսպին, զոր շինեցուցանէր, գնաց յԵրևան և զձերագոյնս և զմանկագոյնս և զանկարս միարանիցն ևս ետ տանել անդ և, վարձեալ զյոյով թուանկակիրս և ի խանէն ևս առեալ զբա-զում Հայ թուանկչիս, եզ ի սուրբ Աթոռոջս ի պահպանութիւնս»²⁴⁵:

²⁴² Դիւան Հայոց պատմութեան. Գիրք Գ. էջ 320:
²⁴³ Դիւան Հայոց պատմութեան, գիրք ԺԱ, Սիմեոն կաթողիկոսի Յիշատակարանը. Մասն Գ (1777-1779), էջ 6-7, 38, 51, 55, 361-363, 494: Թուանկչիները կարևոր դեր էին կատարում նաև Ղուկաս կաթողիկոսի գահակալության տարիներին, իսկ 1804 թվականին դեպի Վրաստան փոխադրման ժամանակ էջմիածնի բնակ-չութեանը ուղեկցում էին նաև էջմիածնի «թուանկչիները», ընդ որում, այդտեղ արձանագրված է ոչ միայն դահլիճի (տասնապետ), այլև յուզբաշի (Հարյու-րապետ): ՄՄ, ձեռ. 4501, էջ 1170-ում խոսվում է «գեանջիցի Մարգիս անուամբ այր սմն, եղբայր մեր գրազիր Յակոբ վարդապետին և երբեմն թֆանկնթոխն արբազնալ սատ...» (1788 թ.): Ղուկաս կաթողիկոսը 1791 թ. նոյեմբերի 27-ի նամա-կում պատասխանում է մելիք Արտվի երկու նամակներին, «որք խնդրելալ էր զինչս Յարութիւն և Բաղտասար թուանկչոց (որք գնալու էին, անդ վախ-ճանեալ էին), որոյ թէ ահա ըստ խնդրոյ ժողովեալ ետուք...»: ՄՄ, ձեռ. 4481, թ. 205բ (1787 թ.): Թուանկչիների մասին տե՛ս նաև նույն տեղում էլ 176բ, 177ա և այլն: էջմիածնի ելից մատչանում նշված է. «Ղահրամանի տղայ Պուտալ ըէկին ետուք ԵՒ (5000) զիան, եասաուլ Շահվիուս և Ղուլաու տաճկին ետու ԲՒ (2000), մինչ եկեալ էին Այ Դամուլի գրովն, թէ մեզ մարդ տուր գնամք Մաստարայ եղեալ ռահմթքն քոչացնեմք, որ ոչ ետուք. ի սեպու. Ե(5) 1785 թ.»: ՄՄ, ԿԴ, թղթ. 7. 4-րդ. 1, էջ 53ա:

²⁴⁴ «Նանն Բ(2) եասաուլ էր յղեալ և թուղթ էր գրեալ, թէ Քոյանեցոց վերայ պիտի զօռնու ուղարկեմ, զու ևս օգնութիւն արայ զօրք տուր: Թուղթ բերող եասաուլաց ետուք ԲՒ(2000) զիան [=3 զուուլ], ի յօղոստոս Տ. մարդ ոչ ետուք»: ՄՄ, ԿԴ, 7/1, թ. 60բ:

²⁴⁵ Դիւան Հայոց պատմութեան, Գ, էջ 494:

Ուշագրավ է 1786 թ. մարտին Ղուկաս կաթողիկոսի պատասխան նա-մակը Թիֆլիսի մելիք Ավետիքին, որտեղ առարկելով մելիք Ավետիքին նրա առաջարկությունն առիթով, թե լեզգիների արշավանքի դեպքում վանքը կարող է Հուսալ իր ինքնապաշտպանությունը, Ղուկասը գրում է. «Իսկ զոր գրեք, թէ զզինուորս պատրաստեալ կարգեցես ի պահպանութիւն սրբոյ Ա-թոռոյն, առ այդ իմա, սիրելիդ իմ, զի որպէս առեալ եմք զփորձն սեղակա-նացս ի սոցունց, թէ զհազարն ևս կացուցանիցեմք անդ, այնքան ահարկե-կն, որ զգուճդ ինչ ի թշնամեացն՝ իսկոյն զՍուրբ Աթոռն թողեալ, փախչե-լոց են ի բերդն: Վասն որոյ մի արասցէ Տէր, եթէ զիմիցն նոքա իմա լեզ-գիները – Պ. Ջ.] յայս կոյս, մեր օգնութիւնն յԱստուծոյ է և ի քրիստոսազօր Արքայէն»²⁴⁶:

Հարկ է ընդգծել, որ Սիմեոն կաթողիկոսի Հավաքագրած զինվորները եղել են միայն Հայազգի «թուանկչիներ»²⁴⁷:

²⁴⁶ ՄՄ, ձեռ. 4501, էջ 1051-1052: Դիւան Հայոց պատմության, Նոր շարք, Գիրք առաջին, Ղուկաս Կարնեցի, Հատոր Բ, 1786-1792, Աշխատասիրությունը վար-դան Գրիգորյանի, Երևան, 2003, էջ 135: Ղուկաս կաթողիկոսի այդ որակումը պատահական էլ էր: 1786 թ. փետրվարին Հնդկաստան ուղարկած նամակներից մեկում Ղուկասը գրում է, թե «այսօրմուռնս ի վրդովմանց ոչ գերեանին... Եւ յայս նախանցեալ տարւոջն եւս ի յօղոստոսի ամսեանն մինչ զգրեանսն Հոգա-ցաք Հնդկաց երկրի և զայլ պատրաստութիւն տեսաք, զի քնոր նուրիակ առա-քեցուք, յանկարծակի վրդովեցաւ երկիրս, քանզի ըսածութիւնք լեզկիաց զա-քանարտոյից յարուցեալք ի վերայ Վրացստանու, զբազում աւերս ևս զարինա-հեղութիւնս արարին անդ, և Համբաւ ել, թէ զայոց են զերկիրս մեր ևս զսուրբ Աթոռս եւս կողպաեալ: Վասնորոյ եւ մեք ըստ Հարկեցման արքային վրաց եւ երկրիս մերոյ իշխողին, Հանդերձ ծանուցեմամբք, միարանիք և ժողովրդովք գնացաք ի յԵրևան, թողլով ի Սուրբ Աթոռոջս գաւկառ միաբանս ևս զբանի հարիւր զհնոսրս ի պահպանութիւն» (Դիւան Հայոց պատմության, Նոր շարք, Գիրք ա-ռաջին, Հատոր Բ, էջ 124):

²⁴⁷ Ամենայն Հայոց կաթողիկոսությունը վանքի անվտանգության ապահովման Համար էին կարգված այն վրացի «թուֆանկչիները», որոնց «տօնուխ» վճարելու մա-սին տեղեկություն է պահպանվել Ալեքսանդր Բ Բյուզանդացի կաթողիկոսի (1753-1755) կողմից էջմիածնում իր օժումից քիչ անց՝ 1754 թ. մարտի վերջին, կազմված «ելից-մտից» մատչանում կատարած դրանցումների շարքում («մասն թուֆանկչոց, որք են վրացիք, ետու... ԺԲ Հազար»): Ըստ գրանցումների Հերթա-թուֆանկչոց, որք են վրացիք, ետու... ԺԲ Հազար»: Ըստ ՍՄՄ, ձեռ. 2931, թ. 8ա): Ուղղակի նոյեմբերի սկզբին և դեկտեմբերին (տե՛ս ՄՄ, ձեռ. 2931, թ. 8ա): Ուղղակի վկայություն չունենք, թե ե՞րբ են կարգված եղել այդ «թուանկչիները» և ինչ-քան ժամանակ են մնացել էջմիածնում, սակայն ելնելով այն Հանգամանքից, որ քան ժամանակ են մնացել էջմիածնում, սակայն ելնելով այն Հանգամանքից, որ ընտրվելով կաթողիկոս, Ալեքսանդր Բ-ը Կ. Պոլսից ճանապարհվել էր 1753 թ. հոկտեմբերի 14-ին և էջմիածին էր Հասել 1754 թ. մարտի 2-ն, իսկ արգեն քիչ անց մահտեի Հուլիանի միջոցով կատարել էր վճարում, ապա կարելի է ենթա-դրել, որ վրացի զինվորները եղել են էջմիածնում մինչև իր ժամանակը:

Միմեոն Երեանցին առավելապես հայտնի լինելով քաղաքական խնդիրների արժարձումների ժամանակ իր զգուշավորութամբ, բնավ հեռու չէր կանգնած իր ազգի առջև ծառայած խնդիրներից և չէր սահմանափակվում միայն եկեղեցական բարենորոգումների հարցերով²⁴⁸: 1770 թ. Եկատերինա 2-րդ կայսրուհուն գրած նամակում արձանագրելով, թե «մեք՝ ողորմելիքս, երկրաւորի արքայութեան ևս եմք այստեղ կարոտ», խնդրում է նրան «զղոյն սէրդ, խնամբդ և զողորմութիւնդ անջնջելի վճռեցես ի մէնջ, ի սրբոյ ամոռոյս, ի խղճալի յազգէս մերմէ, զի քոյ եմք և ոչ օտար, նոյնպէս և ի զայլ ցան և ցիր եղեալ յազգս մեր տարածեցես զհոգիանի տերութեանդ...»²⁴⁹: Որ Միմեոն Երեանցու վերոգրեյալ տողերը գուտ քաղաքավարական արտահայտութիւններ չէին, կարելի է համոզուել ետգրութիւնից, որտեղ նա շարունակում է ասելիքը և խնդրում ավելի մանրամասն տեղեկանալ Հովհաննես Լազարյանից՝ «ի Յովանէս ծառայէ ձերմէ կարէք զիտէլ, որում գրեալ եմք ի կարճոյ, զի երկարապէս և պարզօրէն գրելն մեր զայսպիսեաց կարի և շատ վտանկարեր է մեզ և ազգին մերոյ»²⁵⁰:

Այն, որ միայն Եկատերինա կայսրուհին էր լուի, որ «կամեցող է և կարող՝ ի գլուխ բերել» խնդիրը, Միմեոն Երեանցուն թելադրում էր բոլոր մյուս հարևանների հետ բարիդրացիութիւն պահպանելով հանդերձ, նրանց նկատմամբ ունենալ հատուկ զգուշավորութիւն և ձեռնպահ մնալ

²⁴⁸ Էջմիածնի Հետ հարաբերութիւններում առավել անկաշկանդ վերաբերմունք էր պահանջում Միմեոն Երեանցին նաև Թրիլիսի մելիք Ավետիքից և նախատում նրան՝ իր պատճառարանութիւնների համար. «Գու ևս եթէ զբնական կարգն պահեցես, արքայն քեզ զի՞նչ է ասելոց»: Միմեոն Երեանցին նույն նամակում պահանջում է այլևս «չառնել այնպէս և հարգատ լինիլ Սրբոյ Ամոռոյս»: Նամակում ուշագրավ է ոչ միայն Միմեոն Երեանցու կողմից մելիք Ավետիքին ուղղված նախատխնդր՝ Հայոց կաթողիկոսին ուղղած իր նամակը վրացերեն գրելու համար, այլև համառոտագրման մեջ եղած նշումը այն մասին, թե «Բանդի և օգուտ իսկ էր սմա գանդատելն մեր Արքային զինքենէ», այսինքն՝ մելիք Ավետիքից Հայոց կաթողիկոսի դժգոհութիւնը Վրաց արքայի մոտ կարող էր բարձրացնել մելիքի վարկանիշը: (ՄՄ, ձեռ. 4479, թ. 194-195): Այդ ամենը անշուշտ, վկայութիւն են Հայոց կաթողիկոսի և Վրաց արքայի միջև ոչ միանշանակ հարաբերութիւնների մասին:

²⁴⁹ Армяно-русские отношения (св. док.), IV, с. 105.

²⁵⁰ Армяно-русские отношения (св. док.), IV, с. 106. Հովհաննես Լազարյանին գրած նամակում Միմեոն Երեանցին կրկին նշում է. «Արդ զայստեղի երկուս խնդիրս, զորս գրեցիք ընդ միւս փուտալային, ում և կամիցիս ըստ պատշաճաւորութեան եթէ Հայտնիցես, չէ այնքան հոգ: Բայց զերբորդս զայս, որ գրեմ ահա, ոչ է յայտնելի և յայլոց բերան ձգելի, այլ միայն քում խոհեմութեանդ իբր խօստովանութիւն և ի պատշաճ ժամու յայտնիլ առանձին, որ կամեցող է և կարող ի գլուխ բերել» (Նույն տեղում, էջ 109):

ու նաև կատեցնել ազգի առջև ծառայած գերինդրի քննարկումները՝ ժամանակավրեակ ու արկածախնդիր գործողութիւններով հարվածի տակ չդնելու համար սեփական ժողովրդի այն հատվածին, որը կրելով օտարի լուծն ու անարգանքը, դեռևս շարունակում էր կռոււթած մնալ իր հողին:

Ա. Ռ. Հովհաննիսյանի ընդհանրացումով, «Հերակլը Էմինի նկատմամբ ցուցաբերում է մեծ բարեհոգութիւն, հաճույքով լսում է ազնվականութեանը սանձելու, կրթութիւնը բարեփոխելու և Վրաստանում եվրոպական գիտելիքները տարածման մասին նրա խորհուրդները, սակայն ամեն անգամ խուսափում է հայկական հողերի ազատագրման կոնկրետ ծրագրերի քննարկումից. նա լիակատար պատրաստակամութիւն է գրաւորում օգտվելու Հովսեփ Էմինի ծառայութիւններից, սակայն լուի իր կողմից գծված շրջանակներում, իսկ Էմինը անմիջապես ձգտում է առաջադրել իր քաղաքական ծրագրերի իրականացման հարցը»²⁵¹: Հ. Էմինը իր ծրագրերի մշակման ժամանակ նկատի չէր ունեցել, որ Հերակլը ձգտում էր կառուցել ոչ թե կովկասյան ժողովուրդների դաշնութիւն, այլ հենց վրացական պետութիւն²⁵²: Վրաց արքայի իրական, ընթացիկ շահերը հակադիր էին Հ. Էմինի քաղաքական երազանքներին²⁵³: Հերակլ արքայի «ընթացիկ շահերը» ակնհայտ էին անգամ Էնզելիում գտնվող ուստական հյուպատոսին, որը գրում էր արքունիք, թե «Վրաստանի տիրակալ Հերակլը, սկսելով Վրաստանի կառավարումը, շատ դեպքերում հանդես էր գալիս պարսկական կամայականութիւններից Երեանի քաղաքացիների և բնակչութեան պաշտպանութեամբ՝ որպէս հարևան ու քրիստոնյա ... իսկ Երեանի Հայերը հաճույքով դիմում են Հերակլին և երբեմն կատարվող գրամի նրա պահանջները չեն մերժում»²⁵⁴:

Ուշադրով է այն հանգամանքը, որ երբ Էմինը Հերակլի պահանջով²⁵⁵ ստիպված էր թողնել Վրաստանի սահմանները և հանդիպելով Մուշի Առա-

²⁵¹ А. Р. Иоаннисян. Иосиф Эмин, Ер., 1989, с. 111.

²⁵² Նույն տեղում, էջ 110:

²⁵³ Նույն տեղում, էջ 111:

²⁵⁴ Армяно-русские отношения (св. док.), IV, с. 101.

²⁵⁵ Հովսեփ Էմինը «Ինքնակենսագրութեան» մեջ հիշատակում է Հերակլին ուղղած Միմեոն Երեանցու նամակը, որտեղ պահանջվում էր հեռացնել Էմինին, սակայն Էմինը նշում է նաև, թե Միմեոնը Հերակլին անվանել է «Հայաստանի ու Վրաստանի թագավոր» (L. A. J. E., p. 221. A. P. Иоаннисян. Иосиф Эмин, с. 139): Իրականում Միմեոն Երեանցու նամակի մեջ (Տե՛ս Армяно-русские отношения..., св. док., IV, с. 60-62) նման արտահայտութիւն չկա:

քիչոց վանքի առաջնորդ Հովնան վարդապետի կողմից ուղարկված 13 անձանց, առաջարկում է նրանց հետ միասին ուղևորվել Մուշ, Հովնանի դեսպանազնացները ընդմեջնում են և հայտարարում, թե իրենք լիազորված չեն Հովնանի կողմից և չեն կարող գործել Հերակլի կամքին հակառակ²⁵⁶։ Հ. էմինին մնում էր բռնել ոչ թե Հայաստանի, այլ Հյուսիսային Կովկասի ճանապարհը։

«Նոր տեսարակի» հրատարակության տարում դեռևս ընթանում էր ուսու-թուրքական պատերազմը։ Պատերազմի երկրորդ տարում Հայաստանի ազատագրության հույսը Ռուսաստանի և Վրաստանի հետ էր կապել նաև Մովսես Սարաֆյանը՝ 1769 թ. հատուկ նամակում²⁵⁷ արտաքին գործերի կոլեգիայի համար շարադրելով իր ծրագիրը։ Պատերազմում Օսմանյան պետությունը թեև պարտություն կրեց և Ռուսաստանը Քուզուկ Կայնարջիի պայմանագրով ձեռքերի ազատություն ստացավ համեմատաբար ավելի անկաշկանդ գործելու Այսրկովկասում²⁵⁸, սակայն Վրաստանը, որ մի կողմից գնեց Մեղեմի միջոցով 1775 թ. Ռուսաստանից պահանջում էր պատերազմել Իրանի դեմ, մյուս կողմից պարտադրված էր 1776 թ. Այսրկովկասյան տարածաշրջանի իրազրությունը աչալըջուրեն հետևող Օսմանյան արքունիք ուղարկել դեսպանություն՝ հավաստիացումներ կատարելու Օսմանյան պետության նկատմամբ իր բարիդրացիական քաղաքականության անշրջելիության մասին և կնքելու գաղտնի պայմանագիր, որն էլ, սկզբում թուրք-իրանական պատերազմի պայմաններում, ըստ էության, ուղղված

²⁵⁶ А. Р. Ноаннисян. Иосиф Эмин, Ер., 1989, с. 154:

²⁵⁷ Армяно-русские отношения (св. док.), IV, с. 86-93. Ուշագրավ է, որ Մովսես Սարաֆյանի կարծիքով՝ «главные наши люди, как то мелкии и патриарх из армянскаго народа к лекарю склоннее и приветливее, нежели к российскому оказывать себя благодарными имеют» (նույն տեղում, էջ 87):

²⁵⁸ Գնահատելով ստեղծված իրազրությունը, Հերակլ երկրորդը 1775 մայիսի 30-ին նամակով դիմում է ուստական բանակի Կովկասյան զորամասի հրամանատար Ի. Յ. Մեղեմին, առաջարկելով արքունիքում քննարկել և ձեռնամուխ լինել արշավելու դեպի Այսրկովկաս։ Հերակլը հրավիրելով ուստական բանակին դեպի Այսրկովկաս, գտնում էր, որ ողջ Դաղստանը և նոր Շեմախին հեղաշրջմամբ գրավվուց հետո «и мы, находящиеся в этой стороне все христиане, готовы будем с таким намерением, как вам угодно... Сверх же сего, которые от Гиляни сюда персицкой и махометанской народ находится, кои друг от друга притеснены, по большей части все радостно вас встречать вудут, и что вы им изволите приказать с покорностию примут, а о христианских и говорить уже нечего. Все по благости божей, как вы прикажете, приедут...сей совет мой в вышеписанных пунктах изъясняю в. пр. для тех только мест, кои не имеют никакова хозяина, да и сами просят...»: Армяно-русские отношения, IV, с. 118-119:

լինելով Իրանում Քերիմ խանի դեմ²⁵⁹, իր հերթին հարուցեց նաև Ռուսաստանի դժգոհությունը²⁶⁰։ Դեսպանի պարտականությունները զբոսած էին Հերակլի քարտուղար հայազգի Գուրգեն Ենիկոյույանի²⁶¹ վրա, որին ուղեկցում էր նաև Չլզրի վալիի կնքապահը։ Միրզա Գուրգենը, անթերի կատարելով Հերակլի կողմից իրեն արված առաջադրանքը²⁶² ու արժանանալով

²⁵⁹ Ըստ Պ. Գ. Բուտկովի ներկայացման, Հերակլը պայմանագիրը կնքել էր թուրքիայի նախաձեռնությամբ ու ինդրանքով և Քերիմ խանի միջնորդական պարտադրանքով. «султан турецкий... просил векиля Персии Керим-хана обуздать Грузинов. Царь Ираклий, по повелению векиля, заключил с Турками мир и получил от султана в подарок шугу, лошадь с убором и саблю» (П. Г. Бутков, Материалы для Новой истории Кавказа с 1722 по 1803 года. Часть I, СПб, 1869, с. 289):

²⁶⁰ О. П. Маркова. Россия, Закавказье и международные отношения в XVIII веке. Москва, 1966, с. 155. Ըր. Շյեռթջոլո. Նշվ. աշխ., էջ 97: Հերակլի կողմից սուլթանին գրած նամակի և Միրզա Գուրգենի բանավոր հաղորդումների սղագրությունը մեջբերում է թուրք պատմաբան Ջևդեթ փաշան։ Հայերեն թարգմանությունը տես. «Պուրբական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին», հ. Ա, կազմեց Ա. Խ. Սաֆրաստյան, Եր., 1961, էջ 229 – 231:

²⁶¹ საქართველოს ისტორიის ნარკვევები, ტ. IV, გვ. 681. “1776г. Царь Ираклий пожаловал казенному дворянину Ениколопову должность мунши двора своего со всеми его доходами и лашкарноба по кочующим народам; кроме того, при вывозе жителей на войну, он должен был сделать росписание и составить список”. Д. Пурцеладзе. Грузинские дворянские гуджары..., с. 24. 1784 թ. Երևանի խանի մոտ Միրզա Գուրգենին ճանապարհելու մասին Հերակլի հուլիսի 6-ին Սո. Բուրնաշևիին գրած նամակում ասվում է. “Прежде сего Ереванской хан Куламали-хан и брат его, по причине их безумства и худова поступке, Буниятали султан и двоюродный брат его, именем Каландар-бег, как их увиди, и как Ереванский народ выбрал ханом Магмет хана и письмом утвердили и сие письмо к нам прислали, то сие соошдили вашему высокородию. После мы нашего вернаго человека Мирза Гургину отравили к Магмет хану и послали платие к нему и письмо; приехавши там Мирза Гургин пред ним сам Магмет хан и Ереванские знатные люди присягали на нашей верности”, ШГАДА, ф. 23, 1784 г., л. 13, ч. 9, л. 332.

²⁶² 1776 թ. դեկտեմբերի 14-ին Անդրեյ Ստախիրև Կ. Պոլսից գրում էր կայսրուհուն. “1-го числа сего декабря приехал сюда в Константинополь из Тифлиса грузинскаго владетеля Гераклия посланник ачкавашской уроженец из благородных христиан называемой Георгий, как предьявляю- с уверением о преданности онога владельца к Порте и что он с семью другими своими соседними ханами,- не токмо никакаой связи с Керим ханом не имеют, но и противны его подвигам противу Порты. Оной посланник прислан сюда с данным ему от Акалицкаго губернатора Сулейман паши провозгатым. Собственная его свита состоит в семи грузинских христианах, да притом восем человек турок при провозгате. 5-го числа он имел аудиенцию у визиря в зимних покоях, а не в тех, где принимаются других иностранных держав министры, и не был посажен. При окончании аудиенции надета на него карсачь шуга, а на двух из его свиты обыкновенныя кафтаны,

Համարում է որպես իր Հսկատակ, որ կամուխն Հանձնվել էր անցյալ տարի այստեղ ժամանած գեապանագնացի միջոցով»²⁹³:

Ալեքսանդրի Ռուսաստանից Իրան ժամանելու նպատակները իրագրելու արձանագրել է նաև Հ. Միքայել Չամչյանը Բասրայից 1772 թվականի օգոստոսի 20-ին Մելքոնյան Աբբասորը դբած իր նամակում. «Իսկէնտէր պէյն, որ է իսկական ժառանգ իշխանութեան վրացոց Թիֆլիզ քաղաքի, ի բազմաց հետէ եկեալ է ի Շիրազ առ Քէրիմ խանն՝ օգնութիւն առնուլ ի նմանէ՛ առ ի կորզել զԹիֆլիզ և դայլ տեղիս Հայրենի ժառանգութեան իւրոյ ի ձեռաց Հերակլի պատերազմաւ. և նա յապաղեցուցանէ: Սա բազում անգամ ասացեալ է, թէ ես ոչ գտի գոք քահանայ ինձ Հածոյ: Իսկ ոմանք անմտածօղք ասացեալ են, թէ կարես դայնպիսին դտանել ի Պասրայ՝ այս անուն: Եւ նորա դայս լուեալ՝ յորդորեալ է զբազումս, զի գոնէ թուղթ մի գրեցից առ նա. և իմ, լուեալ դայս, խորհրդով բարեկամաց դրեցի առ նա թուղթ մի՛ զի թէպէտ ընդ իշխանաւորաց խառնիլն ոչ թուի ինձ բարի, բայց ի հեռուսա ևս բարեկամ ունիլ դայնպիսին, ոչ նուազ բարի է»²⁹⁴: Կ. Պոլսից 1782 թ. ռուսական արքունիք ուղարկած գեապանագրում գեոեւս նշվում էր, թե «Կ. Պոլսի Վեզիրխանայում ապրող Ախալցխայից եկած վաճառականները պատմում են որ այնտեղի նահանգապետ Սուլեյման փաշան գորքերով արշավել է դեպի Վրաստան՝ Սողոմոն իշխանի դեմ և որ մի քանի տարի առաջ Ռուսաստանից Պարսկաստան գնացած Վրաց արքայազներ վերադարձել է այնտեղից իր Հայրենիք»²⁹⁵:

Օսմանյան արքունիքը ևս ԺԸ. դարի վերջին քառորդին անընդմեջ մեծացնում էր Այսրկովկասում իր ազդեցութիւնը, պարբերաբար տարբեր առիթներով նվերներ ուղարկում այսրկովկասյան բոլոր կառավարիչներին, նրանց հրահրում դիմակայել Ռուսաստանի առաջխաղացմանը կամ ձեռնպահ մնալ Վրաստանի հետ դաշնակցելուց, հաճախակի արշավանքներ ձեռնարկել Վրաստանի դեմ, լուրջ սպառնալիքներ ստեղծել նաև Վրաստանի անկախութեան համար: 1780 թ. Հերակլը փորձեց ավարտին հասցնել իր մտադրութիւնը և արշավել դեպի Երևան: Սակայն Երևանի խնդրի լուծման ճանապարհին կանգնած էր Ռուսաստանի հետ փոխհարաբերութիւնը:

²⁹³ Присоединение Крыма к России, т. III, СПб., 1887, с. 463.
²⁹⁴ Ղանոն Տալեաճ. Մայր դիւան Միխիթարեանց Վենետիկոյ ի ս. Ղազար (1707-1773). Վենետիկ, 1930, էջ 354.
²⁹⁵ АВІР, ф. СРТ, оп. 89/8, 1782, л. 601, л. 50, копия.

ների սրման վտանգը²⁹⁶: Խնդիրն այն էր, որ Վրաստանի համար անընդունելի էր ինչպես Երևանի վրա Իրանի տիրապետութեան վերականգնումը, այնպես էլ հայ գործիչների կողմից Հայոց անկախ պետականութեան վերականգնման նպատակով Ռուսաստանի հետ բանակցութիւնները վարումը²⁹⁷: Ըստ Հ. Արղուլեանի օրագրութեան, 1780 թ. հունվարի 1-ին անակնկալ ձեռով, իրեն է այցելել ռուսական արքունիքի բարձրաստիճան պաշտոնյաներից Ի. Պ. Գորիչը և, հայտնելով, թե ռուսները մտադիր են արշավել Մերձկասպյան տարածքներ՝ իրենից տեղեկութիւններ է խնդրել Այսրկովկասի և Պարսկաստանի իրադրութեան մասին: Հաջորդ օրը՝ հունվարի 2-ին, Հ. Արղուլեանին են այցելել նաև Ա. Սուվորովը և Հ. Լազարյանը: Ա. Սուվորովը, հուսադրելով հայ գործիչներին, թե ռուսները մտադիր են վերականգնելու Հայոց պետականութիւնը, տեղեկութիւններ է հարցրել էջլ-միածնի և ընդհանրապես Հայաստանում տիրող իրավիճակի մասին: Այնուհետև Ա. Սուվորովը ճանապարհվել է Գ. Ա. Պոտյոմկինի մոտ՝ զեկուցելու նրան տեղի ունեցած զրույցի մասին: Հունվարի 3-ին Գ. Ա. Պոտյոմկինը իր մոտ է հրավիրում Հ. Արղուլեանին ու Հ. Լազարյանին, որոնց հետ զրույցի ժամանակ հարցեր է ուղղում հայերի և վրաց թագավորի մասին: Գ. Պոտյոմկինը պահանջում է նամակ գրել և Ռուսաստան հրավիրել նաև Հովսեփ Էմինին: Հունվարի 13-ին Հ. Լազարյանին ու Հ. Արղուլեանին իր մոտ է հրավիրում Ա. Սուվորովը և մանրամասն տեղեկութիւններ խնդրում Արցախի մեղիքների և Վրաց թագավորութեան մասին: Ըստ 1780 թ. հունվարի 10-ով թվագրված և Հովհաննես Լազարյանին վերադրվող վավերագրի²⁹⁸, Հայաստանի ազատագրութեան ու հայ պետականութեան վերականգնման գործում հիմնական դերակատարումը պետք է ունենան հայ իշխաններն ու

²⁹⁶ Նախորոշված օնցորոտի ճանաչման, IV, թ. 683.
²⁹⁷ Նախորոշված օնցորոտի ճանաչման, IV, թ. 682. Ն. Բերձենիչիլու եզրակացութեամբ, Ռուսաստանին շփոթութեան էին մատնել Այսրկովկասում Հերակլի 2-րդի քայլերը և նա բոլոր միջոցներով փորձում էր ստիպել Հերակլին փոխելու իր քաղաքականութեան ուղղութիւնը ու կասեցնել Այսրկովկասում Վրաստանի դիրքերի ամրապնդումը: Այդ նպատակով էր, որ խանգարվեց Հերակլեական վերաբնակիչների տեղափոխումը Վրաստան, Ալեքսանդր Ամիրխան-Ներսիսյանի արձակումը, Բաբար արքայազնի որդու՝ Ալեքսանդրի, հայտնվելը Յաթ-Ալի խանի մոտ և վերջինիս թշնամական կեցվածքը Հերակլի 2-րդի նկատմամբ և այլն (Ն. Ներսիսյանի թղթերը. Նախորոշված օնցորոտի ճանաչման, IV, թ. 169).
²⁹⁸ Լեո. Երկիրի ժողովածու. հ. 3, մաս 2, եր., 1973, էջ 340-341: А. Р. Поганниян. Россия..., Ер., 1990, с. 19-20. Армяно-русские отношения..., (сб. док.), IV, с.151-152.

աստանի հետ 1783 թ. հուլիսի 24-ին կնքեց Գեորգիեյան հայտնի պայմանագիրը³⁰⁷: Պայմանագրի կնքումով Հերակլը մտադիր էր ամրապնդել իր ազդեցությունը Արևելյան Այսրկովկասում³⁰⁸, այդ մտադրությունը գաղտնիք չէր անգամ Կ. Պոլսում: Վրաստան ժամանած Ս. Տ. Բուրնաշևը արգեն օգոստոսի 3-ին տեղեկացնում էր Պ. Ս. Պոսյոմկինին, թե Հերակլը Ախալցխայի փաշայից նամակ է ստացել, որով փաշան բարեկամական տոնով տեղեկացնում է Հերակլին Ախալցխա ժամանող լեզգիների մասին: Հերակլին այդ հիշեցումը թվում է չարադուշակ զգուշացում, որովհետև մինչ Ռուսական զորքերի Վրաստան ժամանումի մասին որոշման լուրը Ախալցխայի փաշան չէր ընդունում լեզգիներին³⁰⁹: Ալեկին, ըստ վաճառականների բերած լուրերի, էրզրումի շրջակայքի գյուղերի բնակչությունը Ռուսական զորքերի սարսափից իր ունեցվածքներով արգեն փոխադրվում էր ամրացված վայրեր³¹⁰: Թիֆլիսում գտնվող Պոդոս Արաբյանը, որ մշտական կապի մեջ էր Վրաց արքունիքի հետ, 1783 թ. օգոստոսի 1-ին գրում էր Կ. Պոլիս՝ իր հորը, թե «տեղոյս համար ինչ-ինչ վատ խօսքեր, որ զրուցվեր է, ընդամենն սուտ է և է ներհակն և մինչ ի օրս Աստուած ընդ քրիստապօրին (իմա՝

Հերակլ 2-րդ – Պ. Ջ.) է և ինչ որ եղելութիւն կայ, այնր կողմանէ (իմա՝ Գեորգիեյակի պայմանագրի մասին – Պ. Ջ.) ոչ է պարտ գրել, քանզի է վտանգաւոր և ոչ կայ մեզ նեղութիւն, այսինքն՝ տեղոյք, այլ է նեղութիւնն Արևելեան երկրին (իմա՝ Պարսից – Պ. Ջ.) և կայ հաստատ նեղութիւն և ոչ այլ ինչ. ամենևին անհոգ լիբուք»³¹¹:

Ռուսական արքունիքը, նկատելով առկա իրարանցումը և, կուսակցով Օսմանյան կառավարության հնարավոր արձագանքը Գեորգիեյան պայմանագրի նկատմամբ, 1783 թ. հոկտեմբերի 27-ին հատուկ հրահանգով պահանջում է Ռուսաստանի արտակարգ դեսպանի և լիազոր մինիստրի պաշտոնով Կ. Պոլսում գտնվող Բուլգակովից «էթե այս Պայմանագրի առիթով հասարակության մեջ դուք նկատեք որևէ անհանգստություն, ջանացեք հերքել անհիմն մեկնաբանությունները, որ կարող են այնուհետև ի հայտ գալ, նմանապես և՛ Դոսանը, եթե որևէ առիթով նրա կողմից արձագանք լինի, ապա բացատրել, որ մի կողմից Հերակլ թագավորը, չլինելով որևէ մեկի ենթակա, կարող էր դառնալ մեր և մեր ժառանգորդների վասալը, և խնդրել է մեզ իրեն պատկանող Բարթլիի և Կախեթի թագավորությունների նկատմամբ մեր հովանավորությունը, այնպես էլ մենք, ըստ մեր Հավատապանության, կամեցանք թույլատրել նրան այդ, և որ ի միջի այլոց, այս Պայմանագիրը ոչինչ էական չի փոխում այն թագավորություններում, որոնք պետք է մնան նախկին պայմաններում: Եվ որ, ի վերջո, այնտեղ լինելիք մեր զրքերի փոքր քանակը չի կարող առիթ առնել հեռագնա եզրակացությունների ... »³¹²:

Օսմանյան արքունիքի արձագանքը չէր կարող անտեսել նաև Վրաստանը ու, թեև ստանձնել էր Ռուսաստանի հովանավորությունը և պարտավորվել արտաքին Հարաբերություններից ձեռնպահ մնալ, սակայն Պոլսից Ռուսական դեսպանատունը հայտնում էր արքունիք, թե «Ասում են, թե Վրաց Հերակլ թագավորի կողմից Բ. Դուռ ուղարկած դեսպանազնացները արգեն գտնվում են էրզրումից այս կողմ...»³¹³:

Օսմանյան պետությունը Վրաստանի³¹⁴ դեմ ուղղեց Հարավային Կով-

³⁰⁷ Ա. Ն. Սուրգուլաձե, Գեորգիեյակի պայմանագիրը և նրա առաջադիմական նշանակությունը, ՊՔԶ, 1983, թիվ 2-3, էջ 13-20: Պայմանագրի հետ մեծ հույսեր արթնացան նաև Հայազգի գործիչների մոտ: Պայմանագրի կնքման առիթով Հերակլ 2-րդը Ռուսական կողմին ներկայացնում է Այսրկովկասի քաղաքական ու ղեկավար իրավիճակի մասին նոր տեղեկանք, որտեղ խոսվում է նաև հայ գինիորակն ուժի մասին. «Шушинский хан Иврсим, кроме армян, имеет своих 3000, большая часть армян его не слушают. Есть еще у шушинского хана армян, называемых Сиснан, Капан и Зангезур до 3000 человек войска. Армян под владением пяти меликов будет до 6000 человек войска». ПГАДА, Госархив, ф. 23, д. 13, ч. 3/2, л.328.

³⁰⁸ Դեռևս մինչ Գեորգիեյան պայմանագրի ստորագրումը Ռուսական կողմը, տեղեկանալով Դերբենտի Ֆեթ-Ալի խանի կողմից դեպի Արցախ ձեռնարկված արշավանքի մասին, 1783 թ. փետրվարի 20-ին գրված Պ. Ս. Պոսյոմկինի նամակով նրան զգուշացնում էր, թե «дабы благоволили вы не касаться не токмо пределов царя Ираклия, яко зависимаго от покровительства всеавгустейшей российской императрицы, но и не касались вы ни одного армянина, яко христианской закон проповедующих» տե՛ս «Армяно-русские отношения» (св. лок.), IV, с.221. 1784 թ. մայիսի 18-ին Պ. Ս. Պոսյոմկինին գրած նամակում Ստ. Բուրնաշևը տեղեկացնում էր, թե «В последнее разорение в Караваге лезгинами, армяне ничего не потеряли. У одного только Мелника Мекиртума, отогнано 700 лошадей, во удовлетворение Ибраим хан подарил ему сто кобылицы и двух жеребцов и для пренемотру два двора мужиков во владение. О совете меликов между собою обнадеежил его высочество разведать стороною». ПГАДА, ф. 23, 1784г., д. 13, ч. 8, л. 85.

³⁰⁹ ПГАДА, Госархив, ф. 23, д. 13, часть 3/2, л. 339.

³¹⁰ Նույն տեղում:

³¹¹ Վեներիկ-Ս.Ղազար, ձեռ. 2690, թ. 36ա:

³¹² АВПР, ф. СРТ, оп. 89/8, 1783, л. 613, л. 79. Копия.

³¹³ АВПР, ф. СРТ, оп. 89/8, 1783, л. 620, л. 41.

³¹⁴ Պ. Ս. Պոսյոմկինին գրած նամակում Ստեփան Դավթյանը 1784 մարտի 21-ին հարցրել էր. «Ըստ դրեցիլոյ տեսոն իմոյ Յովսէփոյ պերճիմաստ արհիպիսկոպոսին, մէկ կարսեցի նախածանօթ և բանագէտ Գասպար անուն մարդ յղիցի մինչև ի Պոնտոս, մարտի ժէ: -ն եկն և պատմեաց այսպէս: Հաճալի փաշայն անդ

կասի ու Ատրպատականի, Դաղստանի ու Հյուսիսային Կովկասի գրեթե բոլոր իշխողներին³¹⁵: Վրաստանին հարկի վճարումը դադարեցրին Երևանի ու Գանձակի խաները³¹⁶: Հերակլին դադարեցրին ենթարկվել Ղազարի-Շամշադինի թափարները³¹⁷: 1785 թ. ավարների Օմար խանի արշավանքի ժամանակ ավերվեցին Ախթալայի հանքերը, և «Նման չփոխությունների մեջ Վրաստանում ապրող բոլոր թափարները և Ղազարի բնակիչները փոխադրվել են Շուշի, իսկ շամշադինցիները՝ Գանձակ»³¹⁸: Շուշուով պարզվեց, որ Հերակլ 2-րդը Արևելյան Այսրկովկասում ոչ միայն արդեն ի վիճակի էր վարելու ակտիվ քաղաքականություն, այլև պետք է մտահոգվեր իր ունեցած դիրքերը գեթ պահպանելու մասին³¹⁹:

է՛ ներսին Մեծագոյն Մեծն լիմա՛ սուլթանը – Գ. Ջ.] խնդրակ էր, ասէ, թէ եկ ունիմ ընդ քեզ հարկաւոր խորհուրդ, այլ նա ոչ զնայց ասելով, թէ բոլոր տերութիւնդ որ եթէ ինձ տալոյ լինիս, ոչ կարեմ գալ, զոր ինչ հրամանդ է՛ գրով ծառայելոց եմ: Եւ ի բոլոր երկիրս նոցին ոչ ուրէք գտն խումբ զորացի կ պատրաստի մինչև ի դուռն մեծին Գոյսոյ, միայն զամբողջս պնդէն յեղ եղեալ երկրեաց և զուճեկան ոչ թողուն անցանիլ առ սահմանակիցսն իւրեանց, այս է նոցին պատրաստութիւնն, թէ պէտ ինքեանք Ա–ն տասնով ասին»։ (ԱԳԱԸ, փ. 23, լ. 13, Կ. VII, լ. 370):

³¹⁵ Իրրահիմ խանը ուղարկեց Հազրաթ-կուլի բեկին Հերակլի մոտ, որպեսզի բացատրություններ պահանջի Ռուսաստանի ներկայացուցչից և Հերակլից Ռայնզաի կողմից Մեխլը Ադամին գրած նամակի կապակցությամբ, որտեղ, ըստ Իրրահիմ խանի մեկնաբանության, ակնարկ է եղել իրեն՝ Իրրահիմին, իշխանություններից զրկելու մասին: Իրրահիմը դեսպանի միջոցով հարցնում էր Հերակլին, որ եթե Ռուսաստանից ժամանած մեկ անձը նպատակադրվել է իրեն զրկել իշխանությունից, ապա ի՞նչ հույսեր կարող է ինքը փայտալի, եթե ժամանի մի ամբողջ բանակ: Իրրահիմը դիվանագիտորեն հայտարարել է, թե ինքը հետևելու է Հերակլի խորհուրդներին, իսկ Հերակլը պատասխանել է դեսպանին և Բուրնաշևին, թե ինքը տեղյակ է դոկտոր Ռայնզաի նամակից: Նման պայմաններում, ըստ Բուրնաշևի հաղորդման, Հերակլը պահանջել է արագացնել սուլթանի գումարտակների և թեթև զորքերի Վրաստան ժամանումը: ԱԳԱԸ, Գոսարխի, փ. 23, լ. 13, часть 3/2, լ. 339.

³¹⁶ Խոսեցիտոս Մոսթոյ, 23-24, տծ., 1970, թց. 50-51.

³¹⁷ Վ. Ռ. Գրիգորյան. Երևանի խանությունը XVIII դարի վերջում, էջ 114-136:

³¹⁸ Давид царевич Грузинский. Եջվ. աշխ., էջ 53. "Тогда произошел в Ганже бунт; народ выгнал из города грузинскаго и Шушинскаго правителей, и поставил над собою ханом Раима – меньшаго сына ганжинскаго хана Пнахверди. Царь Ираклий послал войско к Ганже, которым взят был оной город и ханом поставлен брат Раим хана – Джават хан" (Նույն տեղում): 1780-ական թթ. վերջերին վրացական բանակը Գանձակից վերադարձնում է շամշադինցիներին, իսկ Արցախից մահմեդականները կրկին վերադառնում են Վրաստան՝ Աղա Մահմադ խանի արշավանքից խույս տալու համար (Նույն տեղում, էջ 54,56):

³¹⁹ Գ. ՉՈՐԱՆՑԱՆ. Խճճճճճճ ըստ Նոյնի Կ. Պոլսում. «в городе занимаются разговорами,

Այդ իրավիճակը իր կնիքը թողեց հայ-վրացական հարաբերություններին վրա: Հայազգի զործիչները Հայոց պետականության վերականգնման հեռանկարն սկսեցին կապել ուղղակիորեն Ռուսաստանի հետ՝ ավելի քիչ տեղ թողնելով Վրաստանին³²⁰: Այդ ակնհայտորեն դրսևորվեց նաև հայ-ռուսական դաշնագրերի նախագծերում³²¹ և Ալի Մուրադ խանի հետ վարվող բանակցությունների ընթացքում: Գեորգիեյան պայմանագրից հետո տեղի տալով այն լուրերին³²², թե Ռուսաստանը պատրաստվում է բացի Վրաստան առաքվող սահմանափակ զորամասից Այսրկովկաս արշավել մեծաքանակ բանակով, իրազեկ լինելով նաև Ալի Մուրադ խանի հետ ընթացող բանակցությունների փաստին, Հերակլը 1784 թ. Ռուսաստան ուղարկած նամակում թվարկում էր իր ակնկալություններն ու պահանջները այդ ձևով արտահայտելու, բայց և ստիպված էր դիվանագիտորեն գրել Ռուսական արքունիք, թե շատ հեշտ է Հայոց պետականության վերականգնումը, եթե Ռուսաստանն այդ բարեհաճի և եթե հայերը նման ցանկություն հայտնեն³²³: Տվյալ դեպքում Հերակլը երկրորդն այդ քայլով փորձում էր իր ձեռքում պահել Ռուսաստանի օժանդակությամբ Հայ պետականության ստեղծման Հայոց հույսը, իր համար ճշգրտել Ռուսոց նպատակների լրջության աստիճանը և Հայոց մոտ պահպանել իր բարձր վարկանիշը, ազատարարի առաքելության

³²⁰ Գ. ՉՈՐԱՆՑԱՆ. Խճճճճճճ ըստ Նոյնի Կ. Պոլսում. «в городе занимаются разговорами,

³²¹ Հայ-ռուսական դաշնագրի նախագծերի մասին հանդամանորեն տե՛ս Թ. Ավդալբեկյան, Հայագիտական հետազոտություններ, Եր., 1969: Լեո, երկերի ժողովածու, հ. Գ, մասն Բ, Եր., 1973, էջ 333-337: Աս. ՄԱՍԳԱԿԱՆՅԱՆ, 18-րդ դարում գրված հայ-ռուսական դաշնագրային երկու նախագծերի գնահատման հարցի շուրջ՝ Բանբեր Մատենադարանի, Թիվ 4, Եր., 1958, էջ 139-160: Ա. Ք. ԿՈՍՏՅԱՆ, Россия и армянское осв. движение, с.158-161. Վ. Գրիգորյան, Լազարյանների..., էջ 175-176: Н. Д. Сирун, Le Role des Armeniens de l'Inde dans le Mouvement d'emansipation du peuple Armenien (En marge d'un document decouvert a Botosani).-"Studia et Acta Orientalia", V-VI, Bucarest, 1967, p.319-336. Армяно-русские отношения, IV, с. 275-278.

³²² Նման լուրեր պատվում էին նաև Կ. Պոլսում. «в городе занимаются разговорами, что с стороны царя Ираклия, при помощи Шагин-Гиреевых войск (под коим именем разумеются Российские) сняты сильные нападения на Тебризскую и Ериванскую провинции и что Порта для увезелечения с той стороны своих границ и для приласкания кочующих там курдов, послала ко многим из начальников по два бунчура» АВІР, փ. СРТ, оп. 89/8, 1783, л. 620, л. 26.

³²³ "Если высочайший двор совлуговолит, дабы армяне имели царя, и оные же будут требовать, то легко можно сделать..."(см. О. П. Маркова. Россия, Закавказье и международные отношения..., с.174).

իր համբավը³²⁴: Ընդգծելի է, որ հայ-ուսական դաշնագրի նախագծի մեջ Վրաստանի մասին որևէ ակնարկ իսկ չկա, և Հայաստանի ազատագրութ-
յան խնդիրը պայմանավորված է միայն Ռուսաստանի կողմից ցուցաբերե-
լիք օժանդակության հետ: Հ. Արղությանի կազմած տարբերակում Հայաս-
տանի մայրաքաղաք պետք է ընտրվեր Անին կամ Վաղարշապատը: Արղ-
յո՞ք Երևանի անվան շրջանցումը այս դեպքում կապված էր Վրաստանին
ներա հարկատու և կամ խանության կենտրոն լինելու հանգամանքի հետ-
թեև բացառված է, սակայն և դժվար է պնդել: Փաստ է միայն, որ Անիի
փառքը, որպես Հայոց անկախ պետականության և ազգային հպարտութ-
յան խորհրդանիշ, շարունակում էր անմար մնալ Հայոց մեջ և օգտագործ-
վել քաղաքական հեռանկարի ու հավակնությունների նպատակներով³²⁵:

Հայ գործիչները, այնուամենայնիվ, ինչպես Հնդկաստանում, այնպես
էլ Ռուսաստանում անտես չէին առնում Վրաստանի գործոնը: Այդ հասար-
կորեն զրոստրված ենք գտնում հատկապես Հովսեփ Արղությանի կողմից
1784 թվականին Գ. Ա. Պոտյոմկինին գրած նամակներում³²⁶:

Ի տարբերություն հայ գործիչների վրացամետ դիրքորոշման, Հերակլը,
նոր համաձայնության եկավ Իբրահիմ խանի հետ: Իբրահիմ խանի հետ
Գանձակին համատեղ տիրելու համար Հերակլը 1785 թ. գարնանը արշա-
վանք ձեռնարկեց Գանձակի խանության դեմ: Այդ ժամանակ, սակայն,
Դերբենդի Ֆաթ Ալի խանը, որ արշավանք էր նախապատրաստում Իբրա-
հիմ խանի դեմ, Հերակլին առաջարկեց համատեղ արշավել դեպի Շուշի և
գրավել Ղարաբաղի խանությունը, որից հետո Արցախի հայությունը
պետք է անցներ Հերակլի տիրապետության ներքո, իսկ մահաճակատները՝
խանի: Հերակլը ոչ միայն չհամաձայնեց այդ առաջարկին, այլև թողնելով
Գանձակի պաշարումը, իր գորքերը ուղարկեց Իբրահիմին պաշտպանելու
համար³²⁷:

Առավել ուշագրավ է 1786-87 թթ. ստեղծված իրադրություն մեջ Հով-
սեփ Արղությանի դիրքորոշման մեջ նկատվող շրջադարձը: Շ. Շահամիրյա-
նին 1786 թ. սեպտեմբերի 3-ին գրած նամակում Հ. Արղությանը համառոտ

³²⁴ Հետադրողներից ոմանք Հերակլի քաղաքականության նման շրջադարձը վե-
րագրում են 1787 թ. ուսական գործառնի վրաստանից ետ կանչվելու փաստից
հետո ընկած ժամանակաշրջանին (Յ. Ճոնսոն, Նշվ. աշխ., էջ 282-283):

³²⁵ P. Tchobanian. Ani et son mythe (XIII^e-XIX^e siècles).- Ani: capitale de l'Arménie en
l'an mil: Paris, 2001, p. 277-281

³²⁶ Армяно-русские отношения (св. док.), IV, с. 321.

³²⁷ А. Р. Ноаиниян. Россия..., с. 166-167.

ներկայացնելով 1783 թվականից հետո իրադարձությունների ու բանակ-
ցությունների ընթացքը, չի թաքցնում իր վրդովմունքը ընթացող բանակ-
ցություններից ու դիրքորոշումներից: Ռուսական կողմից իր դժգոհությու-
նը ներկայացնում է Հայոց դեսպան Ստեփան Դավթյանի նկատմամբ ունե-
ցած վերաբերմունքի համար. «Երկու ամ յուսադրեմ և պահեմ, զկատարածն
գործոյ նորա չգիտեմք»: Հ. Արղությանը դժգոհ է Ղուկաս կաթողիկոսից, ու-
րովհետև «մեր սրբազան կաթողիկոսն առ տիրուհին ոչ գրեաց զիր (թէպէտ
բազմիցս ստիպեցին սոքա), այլ զօրագլուխն՝ ծածկեալ բանիւք, որպէս թէ
հաճախ ցուցանելով յառաջագրութեանն սոցա՝ որպէս բժոռքն զկատարեալ
լուսոյ ցանկանալով և հրեանդքն՝ զօրէջ բժշկի: Եւ այս ի յերկիւղէ սարա-
կինոսացն, զի մի շշնջիւն ինչ լուեալ վնասեցեն զազգս մեր ըստ ամհհի
բարուց իւրեանց: Հայաստան աշխարհի մերում ի ժամանակս ինքնակա-
լացն մերոց Տիրբանայ, Արշակայ և Տրդատայ և այժմոյս ստորանկանելն
սորա և ապա հայցուածք՝ փրկել զինքեանս ի ծառայութենէ յանօրինաց և
զայլս առ այս պատկանեալս, զոր առեալ վերոյիշեալ պարոն Ստեփանն մա-
տոյց որոց պատկան էր և սպասէ պատասխանոյն»³²⁸: Արղությանը գրան
հակադրում է Շ. Շահամիրյանի մտահոգությունները և գրում, թե նման
խնդիրների մասին «չէր ոք խորհոյ և մտածոյ ազգի մերում... այլ միայն
հայցեն թէ՛ “գմեգ փրկեցէք”»: Երբ փրկեմ սրով, ըստ օրինի թագաւորաց, հարկա-
տրին ծառայ առնել իրեանց»³²⁹: Առավել ուշագրավը, սակայն, Հ. Արղությա-
նի խորհուրդներն են Շ. Շահամիրյանին: Խնդրելով նամակ ու նվերներ ա-
ռաքել կայսրուհուն, որպեսզի «առաւել զիտասցին, թէ՛ զոյ ի մեճ պնայիսի
իշխան ի ազգէն Հայոց, որ կարէ համապատասխանել իրեանց յօժարութեան», Հ.
Արղությանը, խորհուրդ է տալիս, որպեսզի Ռուսաստան գրելիք նամակում
նշվի նաև Վրաստանի միաբանության մասին. «Եւ վասն հայրենեացն մերոց,
որպէս հաճեսցիս, ոչ է հանդէպ գրել վասն վրաց միաբանութեանն, որպէս թէ ու-
րախ ես, է ապա թէ՛ որպես ըսդացեալ էք, այնպէս պարտիք յառաջ տանել,
որպէս շուրջ եղեալ թշնամիքն տեսանելով զայն շնորհ՝ նկուն եղիցին և մի
գուցէ զեղջիւրս իւրեանց բարձրացուցեն ի վերայ նորին բարձրութեան
արքային՝ թէ՛ ու՞ր են՝ որս յուսացեալ էիք: Խոհեմութեամբ քով կարես իմա-
նալ և դատել՝ զի՞նչ ասեմ»³³⁰: «Իրեանց յօժարութեան» ներքո ակնհայտո-

³²⁸ Армяно-русские отношения (св. док.), IV, с. 339.

³²⁹ Армяно-русские отношения (св. док.), IV, с. 339.

³³⁰ Армяно-русские отношения (св. док.), IV, с. 343.

րեն նկատի է առնված այն անձը, որը ստանձնած լինելով Հայոց համազգային խնդրի պատասխանատվությունը, ռուսական կողմի հետ կարող էր կնքել հայ-ռուսական դաշնագիրը՝ շրջանցելով Հայոց կաթողիկոսին³³¹:

Նշեցված հայոց համալրանքը վրաստանի նկատմամբ պահպանելու համար Հերակլը 1786 թ. Ե. Շահամիրյանին շնորհում է վրաց իշխանի տիտղոս: Հերակլ Երկրորդին ուղղած Շահամիր Շահամիրյանի 1787 թվականի հոկտեմբերի 15-ին գրած պատասխան նամակում, ինչպես արդեն վկայակոչել ենք, Հերակլին առաջարկվում էր տարազիր հայությանը հավաքելու վրաստանի կազմի մեջ գտնվող Լոռու գավառում:

1787 թ. սեպտեմբերին ռուս-վրացական զորքերը գտնվում էին դեպի Գանձակ արշավանքի ճանապարհին, որով ծրագրվել էր Գանձակում վերականգնել Հերակլի տիրապետությունը³³², հարված հասցնել Իբրահիմին և օժանդակել հայ մելիքներին իրենց ենթակա բնակչությանը փոխադրվելու վրացական պետության սահմանները, երբ ռուս-թուրքական պատերազմի բռնկման կապակցությամբ վրաստանում Ռուսաստանի ներկայացուցիչ Ա.Տ.Բուռնաշևի անունով ստացվեց վրաստանում գտնվող ռուսական երկու գումարտակների անհապաղ Ռուսաստան վերադառնալու հրամանը: Մեղիք Մեղլումը և Մեղիք Աղամը, որ ներկայանում էին որպես «թափափորական սերնդից ծագած իշխաններ, որ տիրում են Մեծ Հայքի մեկ տասնհինգերորդ մասին», 1788թ. հունվարի 29-ին նամակով զինում են Գ. Պոտյոմկինին՝ խնդրելով զինական օգնություն: Մեղիքները իրենց դիմումը կրկնել են նաև նույն թվականի մարտին: Ի պատասխան մեղիքների խնդրագրի, Գ. Ա. Պոտյոմկինը նրանց առաջարկել էր ընդամենը տեղա-

փոխվել Ռուսաստան, որտեղ նրանց կարող էին շնորհվել կալվածքներ³³³: Հովսեփ Արղունյանին մտում էր հուսադրել Արցախի մելիքներին՝ համախմբվելու վրաստանի շուրջ, գոնե ժամանակավորապես այլևս չհուսալ Ռուսական օժանդակություն ու սպասել սկսված ռուս-թուրքական պատերազմից հետո Ռուսաստանի արտաքին քաղաքականության հետագա շրջադարձին: 1788 թ. մայիսի 2-ի նամակում նա Մեղլում և Արով մելիքներին գրում է. «Ձգիրն ձեր ընդ գրոյ պայծառափայլ քննազին, Թէքէլինին և Գորիչին ընկալայ և թարգմանեալ զբոլոր զօրութիւն նոցա ընդ գրոյ իմոյ առաքեցի առ տեարսն...Ձեր գալն աստ ոչ է բարոք. պատճառն լսմրութիւն սոցա, ո՞ գիտէ, որքա՞ն են պահելոց և վախճան որպէ՞ս լինի, որպէս ունիք զպարոն Ստեփանն: Ուրեմն նայեցէք մինչև մեր բարեկամ Գորիչի գալն, յայնժամ գրեցուք ձեզ զարժանն... եթէ նովաւ չեղև այցելութիւն երկրիդ այդմիկ և ձեզ, բոլորն յունայն է, իսկ եթէ նմա յանձնեցաւ բանն, համարեցէք զկամս ձեր կատարեալ»³³⁴: Ամիսներ անց, 1788 թ. հուլիսի 30-ին, Հովսեփ Արղունյանը կրկին պատասխանելով մելիքների նամակին, գրում է. «...կողմանցս որպէսն, որպէս և լսէք, յամենայն կողմանց կռիւ է ընդդէմ Հագարացոց և Շուէթաց, չկարծեմ ի յայսմ միջոցի օգնութիւն ինչ լինի ձեզ աստի, եթէ կարէք այլ իմն դուռն գտաւնել և բախել, և կամ նորին արքայական մեծութեանն աղաչել՝ օգնել ձեզ, ըստ ժամանակին արարէք և զժամանակն մի անցուցանէք...»³³⁵:

Նշելի է, որ վրաստանից ռուսական զորքերի ետ կանչվելուց հետո³³⁶ Հերակլ 2-րդը ևս ստիպված էր վրաստանը ավերումներից զերծ պահելու նպատակով³³⁷ որդեգրել նոր քաղաքականություն: Հերակլը ստիպված նոր դեսպանություն ուղարկեց Կ. Պոլիս և «բարեկամության» պայմանագիր կնքեց Օսմանյան արքունիքի հետ³³⁸: Այդ շրջադարձը, բնականաբար, ողջունեց նաև Ալլալյալայի փաշան: 1788 թ. նոյեմբերի 15-ին Կ. Պոլիս գրած

³³¹ Նշելի է, որ դեռևս 1785-86 թթ. հայկական կողմը հույսեր էր փայփայում հայ-ռուսական դաշնագրի ստորագրման վերաբերյալ: 1785 թ. փետրվարի 17-ին Գ. Ա. Պոտյոմկինին ուղղած գրությամբ Ստեփան Դավթյանը խնդրում էր թույլ տալ իրեն Հովսեփ Արղունյանի հետ մեկնելու Էջմիածին, որից հետո Ռուսաստան կփամանի լիազոր նոր անձ «с сочиненным трактатом в пользу нашу и в угодность вашей светлости с согласия всех гайканцев и патриаршеским утверждением печати» (А. Р. Юаннисян. Россия..., с.170; Армяно-русские отношения..., IV, с. 330):

³³² 1787 թ. օգոստոսի 6-ին Գանձակից 2500 հայ բնույնից Հերակլին էր դիմել վրաստան փոխադրվելու ցանկությամբ (Յ. Նաթանյան, «Յոթնամյա ճակատագրի մասին», Երևան, 1973, թ. 123. Հղվում է ՍԳՅԱ, փ. 52, օր. 1/194, ձ. 416/2, ձ.100-102):

³³³ П. Бутков, Նշվ. աշխ., հ. II, էջ 195:
³³⁴ ՄՄ, ձեռ. 2699, թ. 158բ:
³³⁵ ՄՄ, ձեռ. 2699, թ. 172ա:
³³⁶ Հատ չ. Արղունյանի հաղորդման, Գ. Պոտյոմկինը, իբր «Ջօրաց Հանելն ինքն ևս է փոշիման» (ՄՄ, ձեռ. 2699, թ.154: Հմմտ. Լեռ, Երկերի ժողովածու, հ. Գ, զերբ Բ, եր., 1973, էջ 366):
³³⁷ Դեռևս 1786 թ. Հերակլը լուրեր էր ստանում օսմանյան զորքերի կուտակումների և վրաստան արշավելու նախապատրաստությունների մասին և անհանգստության նամակներով այդ մասին տեղեկացնում էր ռուսական արքունիքին (ՍԳՅԱ, փ. 52, օր. 1/194, ձ. 461, ս. I, ձ. 372-373):
³³⁸ Օ. Մ. Մարկովա. Նշվ. աշխ., էջ 266.

իր նամակում Ղուկաս Կարնեցին ևս տեղեկացնում է. «Վրաց պետն և Տա-
յոց մովպետն հաշտեցան: Վրացին զպատանդս յոհաց նմա և ևս զառ ի
Վրաց գնացեալսն առ ինքն մեծարեաց և և որքան Լազկի գոյր ի Տայս, որք
և եկեալ անցին ընդ սահմանս մերոյ: Եւ զի Ռւման խանն ոչ ևս յաւել ընդ
յայտիոյս անցեալսն, վասն որոյ և Պարոնն, որպէս թէ միամտեալ, զգօրս է
յղեալ ի Գեանջայ, և ինքն ևս, որպէս ասեն, զնալոց է անդ և ի յԱրցախ:
Աստուած բարի վախճան արասցէ»³³⁹: Նման պայմաններում խոսու են է այն
փաստը, որ Գ. Ա. Պոտյոմկինը, որ ռուսական զուսմարտակները զուրս էր
հանել Վրաստանից, Հերակլին ներկայացնում է մի արտառոց պահանջ,
այն է՝ որպեսզի վերջինս, համաձայնելով Սողոմոն I-ի հետ, հարձակվի
Վրաստանում եղած թուրքական ուժերի վրա³⁴⁰: Բնականաբար, Հերակլը
չէր կարող իր համար նման կործանարար քայլի գնալ:

1788 թ. հայ և վրաց իրականության մեջ ստեղծված իրավիճակի համա-
ռոտ բնութագրերը կազմել է Ղուկաս Կարնեցին ու շարադրել 1789 թ.
փետրվարին Հնդկաստան՝ Խաչիկ Առաքելյանին, ուղղած նամակում. «Եւ
զՀերակլայ պէտէն Վրաց այսպէս ծանիցես, որ յառաջագոյն շատ յաջողու-
թիւն ունէր, բայց մինչ ձեռն հարկ ի Ռուսաց տերութիւնն և անտի գ ԳՌ
(3000) այր զօրս բերեալ ևս առ ինքն, շրջակայ ամենայն այլազգիքն
թշնամի եղեն նմա և ի ձեռն լեզկիաց զբազում վնասս և աւէրս հասուցին
երկիրն: Ապա յանցեալ տարիսն զօրքն Ռուսաց վերադարձան ի յերկիրն իւ-
րեանց, և ինքն պարոնն ընդ Օսմանցուց հաշտութիւն արար, մնաց նմա մի
գլխաւոր թշնամի՝ Արցախ գաւառի իշխող Իրրահիմ խանն, որ զԳեանջայու
երկիրն յափշտակեալ էր յիշխանութենէ նորին և զքանի հազար տուն զա-
ղախ է վարեալ ի կալուածոյ նորայ և իբրու իւրացուցեալ: Վասն որոյ և
Հերակլ արքայն այժմ ընդ Գարբանդու և Շամախու իշխող Ֆաթալի խանին
միաբանեալ, ի միասին զօրք բազմօք գնացին և առին զԳեանջայ և զիմե-
ցին ի յԱրցախ գաւառն՝ ի վերայ Իրրահիմ խանին: Եւ նա ամրացեալ է ի
զղէկին իւրում՝ ի Շուշի, և չէ յայանի, թէ սկսեալն որպէս իցէ վերջանալոց:
Այլ վասն Խամսայու միլիթացն ծանիցես, որ քանիքն ի նոցանէ նուսճեալք
էին ընդ ձեռամբ տաճկաց և ունայնացեալք յամենայնէ, մնացեալ էին Մէ-
լիք Աղամի որդի Մէճուլումն և Մէլիք Յովսէփի որդի Ապովն, որք սակաւ մի
յիշխանութիւն էին, սակայն և նոքա յանցեալ տարին մինչ Վրաց պետն

³³⁹ Դիվան հայոց պատմության. Նոր շարք, զիրք առաջին. Ղուկաս Կարնեցի, հա-
տոր Բ (1786-1792): Աշխատ. Վ. Գրիգորյանի, Եր., 2003, էջ 412:

³⁴⁰ П. БУТКОВ, Եղվ. աշխ., հ. II, էջ 197:

դնաց ի Գեանջայ, յարեցան ի նա՝ ապստամբելով ի յԻրահիմ խանէն և, ի
դառնալ փութով Վրաց պետին վասն յառնելոյ Լեզկիաց ի սահմանս Վրաց-
տանու, նոքա ևս քանէօք ընտանեօք իւրեանց դատարկ փախեան ի Վրաց
երկիրն և զրկեցան յամենայն կայից իւրեանց և ի բնակութեանց: Եւ այժմ
ընդ վրաց պետին գնացեալ են, զի թերևս զժողովուրդսն իւրեանց առ ձեռն
բերիցեն, տեսցուք թէ որպէս լինիցի»³⁴¹:

1787-1791 թթ. ռուս-թուրքական պատերազմի ավարտից հետո Ռու-
սաստանը չէր շտապում Վրաստան վերադարձնել Գեորգիեյան պայմա-
նագրով նախատեսված զորաքանակը, թեև իրազրույթյան փոփոխություն և
իրանական կողմից սպասվող սպառնալիքների պայմաններում Հերակլը ա-
նընդմեջ նամակներ ու խնդրագրեր էր առաքում Ռուսաստան՝ խնդրելով
Վրաստան առաքել ռուսական զորքի նոր խմբաքանակ: Նման իրազրույթ-
յան մեջ Արցախի հայ մելիքների համար ևս հասկանալի էր, որ Հայոց թա-
գավորության վերականգնման մասին իրենց ցանկությունները չէին կա-
րող արժանանալ Հերակլի հավանությանը, ուստի Հերակլի գործուն աջակի-
ցությունը ստանալու նպատակով նրանք հակվում են առաջադրելու կոմպ-
րոմիսային տարբերակ:

Ռուսական արքունիք և Հովսեփ Արղուիթյանին ուղղված նամակներով
Արցախի հայ մելիքները, նկարագրելով իրենց անկանկրի վիճակը, օժան-
դակություն էին խնդրում և 1793թ. ներկայացնում իրենց համաձայնութե-
յունը՝ Ռուսաստանի օժանդակությամբ Իրրահիմի յժից ազատագրվելուց
հետո ընդունելու Ռուսաստանի դաշնակից Հերակլի թոռան՝ Դավիթ արքա-
յազնի իշխանությունը³⁴², կամ Դերբենտի և Կասպից ծովի ափերին տեղ
հատկացնելու պարագայում փոխադրվել այնտեղ՝ իրենց հպատակ բնակ-
չությունում, եթե Ռուսաստանն այլևս ի վիճակի չէ գեթ փոքրիկ զորախումբ
առաքել Այսրկովկաս՝ Իրրահիմ խանի տիրապետությունից իրենց ազա-
տագրումը դուրսացնելու նպատակով: Հ. Արղուիթյանը ստացված նամակ-

³⁴¹ ՄՄ, ձեռ. 4501, էջ 1395:

³⁴² Армяно-русские отношения (сб. док.), IV, с. 397: Մեզ հայտնի չէ Հերակլի որևէ
ուղղակի արձագանք մելիքների այդ առաջարկությանը: Վ. Մարտիրոսյանի
եզրակացությունը. «Հերակլ արքան 80-ական թվականներին ծավալված հայ ա-
զատագրական շարժման ջերմ համակիրն էր և Հայ պետականությունը վերա-
կանգնելու կողմնակիցը»: Տե՛ս Վ. Մ. Մարտիրոսյան. Հայ-վրացական համագոր-
ծակցությունը XVIII դարի 80-ական թվականների ազատագրական պայքարում,
«XVI-XVIII դարերի հայ ազատագրական շարժումները և հայ դավթավայրերը»
(Հոդվածների ժողովածու), Եր., 1989, էջ 227:

ներն ու առաջարկությունները թարգմանելով ուսուցիչներին՝ ներկայացնում է ուսուսական արժեքները Գրիգոր Պոսյոմկինի մահից հետո մեծ ազդեցություն ձեռք բերած կոմս Պլատոն Ջուրովին:

Մեյլիքների դիրքորոշման մեջ այդ փոփոխությունը արդեն չընդացում է Վրաստանից օգնություն ակնկալությունները:

Ռուսական կողմից պատասխանի հսկողման³⁴³ և Այսրկովկասում իրադարձությունների սրնթաց դարգացման պայմաններում հայ մեյլիքները ստիպված էին կատարել սեփական դիրքորոշման նոր հստակեցումներ: Ադա Մահմադ խանի արշավանքը Այսրկովկասում ստեղծում էր ուժերի նոր հարաբերակցություն: Վերջինիս կողմից Իրանի գերակայությունը ընդունելու պահանջը մերժել էին Հերակլ Զորը և Իբրահիմ խանը: Որպես Վրաստանին հարկատու՝ իր դիրքորոշումը հստակ էջեր դրսևորել երևանի խանը՝ սպասելով դեպքերի զարգացմանը: Նման պայմաններում Արցախի մեյլիքների դիրքորոշման մեջ հանդես է գալիս նոր շրջադարձ: Մեյլիք Մեջլումը հայ իշխանությունների դեմքում հակառակորդ Իբրահիմ խանի դեմ փորձում է օգտագործել Իրանի նոր բռնակալի հետ նրա հակամարտության հանդամանքը՝ այլևս չհուսալով ուսուս-վրացական օժանդակության ձգձգվող ու անորոշ սպասումին: Մեյլիք Մեջլումը իր զորաբանակով միանում է Արցախ ներխուժած Իրանական բանակին՝ հուսալով Իբրահիմ խանի տապալումից հետո ստանալ Արցախի իշխանությունը: Ադա Մահմադ խանի արշավանքը, սակայն, որքան սրնթաց, նույնքան և կարճատև լինելով, չի ապահովում Այսրկովկասում նրա կայուն իշխանություն հաստատումը, անառիկ է մնում Արցախի միջնաբերդը հանդիսացող Շուշին: Իբրահիմ խանը ևս Ադա Մահմադ խանի թշնամին լինելու խաղաքարտով հայտնվում է նրա դեմ թշնամանքով տրամադրված Ռուսաստանի դաշնակիցների բանակում: Ադա Մահմադ խանի Իրան մեկնելուց հետո Մեյլիք Մեջլումը, մնալով Հայաստանում, Գանձակի խանի հետ միասին փորձում է դիմակայել Վրացական բանակի պատժիչ արշավանքին, որտեղ և կնքում է իր մահկանացուն: Վրացական բանակի պատժիչ արշավանքը թեև նպատակ ուներ վերականգնելու Վրաստանի սասանված դիրքը Այսրկովկասում և Գանձակի ու Երևանի խաներին ստիպելու շարունակել իրենց հնազան-

³⁴³ Պ. Ջուրովը հետագայում դրում էր, թե Հերակլը իբր հուսալով իր որդիներին գինական օժանդակությանը, օգնություն էջեր պահանջել կովկասյան գժուս տեղաբաշխված ուսուսական բանակից: "Шесть писем о Грузии и Кавказе, писанные в 1833 году Платоном Зубовым", Москва, 1834, с. 61.

դությունը Վրաստանին, սակայն առանց ուսուսական օժանդակության այն այլևս էջեր կարող վճռական դեր խաղալ: Իրանի տիրապետության վերահաստատման վտանգի պայմաններում Այսրկովկասի իրադրությունը ստանում է նոր զարգացումներ: Ռուսական բանակի 1796 թվականի արշավանքը նպատակ ուներ կանխելու Ադա Մահմադ խանի իշխանության ամրապնդումը Այսրկովկասում: Նման պայմաններում շարունակվում են նաև հայ բնակչության համակրանքը շահելու Վրաց թագավորության փորձերը ինչպես Վրաստանում, այնպես էլ նրա սահմաններից դուրս: 1796 թ. մայիսի 10-ին Վրաց Գեորգի արքայազնը հատուկ նամակ է առաքում անգամ Հեղկաստան՝ Շ. Շահամիրյանին տեղեկացնելով Վրաստանում ստեղծված իրավիճակի մասին, հուսադրում, թե «մեծագուցնեղ Ռուսոսաց թագավորն ի վերայ մեր և ի վերայ երկրիս մերոց որ ողորմեցեալ է, յուսամբ բազմապատիկ քան զառաջինն մեծացի և ճոխացի երկիր մեր և թագաւորութիւն մեր» և առաջարկում է «զի և քոյդ եհաս ժամանակ, զի զորս ի վաղնջուց դիտունք և խորհուրդք ունիցիս ի ներ սրտի քո, զայն բողորջեցուցես և ի լոյս ածցիս և փութացցիս ի բնիկ Հայրենիս քո և զալ Հրամայեցես, զի թուի ինձ, թէ ոչ ունիցիս ինչ պատճառ գայթակղութեան և արգելման այդպիսի վայելուչ խորհրդոյ քոյ, այլ ողորմութիւն աստուծոյ յամբ յաջողեալ է և ի վերայ այսորիկ մի ինչ երկբայիք, զի դու երբ զխորհուրդ քո կատարես, ոչ երբէք պակասի քեզ ի մէնջ պատիւ և սէր, այլ աւել մեծամեծ»³⁴⁴:

Մտալուտ փրկություն սպասումներն ու ողևորությունը³⁴⁵ ընդհատվեց Ռուսաստանում դահ բարձրացած Պավել I-ի կողմից ուսուսական բանակի արշավանքը դադարեցնելու մասին հրամանով: Ռուսական բանակի վերադարձից հետո Ադա Մահմադ խանի նոր արշավանքի և Իբրահիմ խանի կողմից վրեժխնդրության դրսևորման վտանգը Արցախի մեյլիքներին ստիպում է կրկին կանգնել ընտրության անհրաժեշտության առջև: Ռուսաստան վերադարձող Հովսեփ Արղունիսի հետ 1797 թ. հատուկ դեսպանագնացությունը ճանապարհվում են նաև Ջիմշիդ և Փրիգոն մեյլիքները: Այդ դեսպանագնացությունը պետք է պատասխան տար Արցախի ապագա կարգավիճակի հարցին: 1797-1799 թթ. մեյլիքները, ի տարբերություն Պետերբուրգում գտնվող վրաց դեսպանության, որի հետ իրենք համագործակցում և մշտական կապի մեջ էին, միանշանակ չեն պնդում միայն ուսուսական

³⁴⁴ Տե՛ս Պ. Ջոբանյան, Վրացական ուղեգրությունները..., էջ 167:
³⁴⁵ Այդ ցայտուն շարադրված է Գեորգի արքայազնի վերահիշյալ նամակում (տե՛ս նույն տեղում, էջ 165-166):

զորքի առաքման պահանջը և ռուսական արքունիք են դիմում մի խնդրագրով, որի մեջ առաջին տեղում թողնելով այդ պահանջը, ներկայացվում են միաժամանակ նաև այլ առաջարկություններ.

1. Զինական օժանդակություն Ղարաբաղում Հայոց պետականության վերականգնման և մահմեդական տիրապետությունից ազատագրվելու համար:

2. Եթե այդ առժամանակ անհնար է, ապա խնդրել Վրաց թագավորին Վրաստանում ժամանակավոր ապաստան տալու մեղիքներին:

3. Եթե այդ ևս անհնար է, ապա թուլյատրել փոխադրվելու Ռուսաստան՝ իրենց հպատակ ողջ բնակչությանը հանդերձ³⁴⁶:

Իրազարժությունների բնթացքի թելադրանքով, որպես Այսրկովկասը Ռուսաստանին միացնելու առաջին փուլ, Ռուսական զորքի առաքման համար «օրինական» հիմք ստեղծելու նպատակով Գեորգի թագավորից պահանջվում էր ներկայացնել խնդրագրի և բանակցությունների համար Ռուսաստան առաքել Դավիթ զահաթառանգին: Խնդրագրի ստացումն արագացնելու ուղղությամբ օգտագործվում էին բոլոր հնարավոր միջոցները: Վրաց արքունիքի կողմից 1798 թ. դեկտեմբերի 16-ին Պավել 1-ին կայսրին ներկայացրած 11 կետանոց խնդրագրի երկրորդ կետը վերաբերում էր Հայ մելիքներին ենթակա ժողովրդին: Խնդրվում էր թուլյատրել նրանց բնակվելու Վրաստանում, սակայն Վրաց արքայի ենթականեր գառնալու պայմանով: 1799 թ. փետրվարի 11-ին ի պատասխան այդ խնդրանքի, Ռուսական արքունիքը համաձայնում է, որ Հայերը ենթարկվեն Վրաց արքային, սակայն և պահանջվում է նրանց նեղություն չպատճառել ու նաև որպեսզի Հայ բնակչությունն իրավունք ունենա վերաբնակվել կամ առևտրական գործունեություն ծավալել նաև Ռուսաստանում³⁴⁷:

Ուշագրավ է, որ Հովսեփ Արղունյանը 1798թ. մարտի 25-ին Պետերբուրգից Գեորգի թագավորին գրած նամակում շնորհավորելով նրա գահակալությունը, միաժամանակ խորհուրդ է տալիս «չաչելով զտոհակահան ձեզ ի հնազանդութիւն» և ապա պահանջ-հանձնարարություններ՝ «որպէս

³⁴⁶ Армяно-русские отношения..., IV, с. 473-474.

³⁴⁷ Խնդրագրի 5-րդ կետով առաջարկվում էր թուլյատրել Ուրմիայի Հայերին և ասորիներին բնակություն հաստատել Վրաստանում (Ն. Աթոյանցի «Յ. Աթոյանցի հայերի և ասորիների բնակությունը Վրաստանում» (Ն. Աթոյանցի «Յ. Աթոյանցի հայերի և ասորիների բնակությունը Վրաստանում» մեջ, թ. 154):

խսկական թագաւորի Հայոց, փուլով զորդին ուղևորել արժանաւոր պատասխանաւ ի Դուռն կայսերական»³⁴⁸: 1799 թվականին Պավել Առաջինը ավարտված է համարում նախապատրաստական փուլը և հրամայում զորք ուղարկել Վրաստան՝ այնտեղ Ռուսաստանի տիրապետությունը հաստատելու համար: Մելիքների կարգավիճակը որոշակիացվում է Վրաստանում նրանց ժամանակավոր կացություն տրամադրելու ձևով, սակայն, ի տարբերություն նախորդ դեպքերի, երբ Հայ մելիքները Վրաստանում ապաստանելու պարագայում հայտնվում էին փախստականի կարգավիճակով, այս դեպքում Պավել Առաջինի միջնորդությամբ Գեորգի 12-րդը վրաց պետության սահմաններում նրանց է տրամադրում իրենց իսկ պահանջած Ղազախ գավառի փոխարեն Լոռի գավառը, որը մինչ այդ արդեն շնորհվել էր Շ.Շահամիրյանին: Մելիքները պետք է տնօրինեին այն մինչ Շահամիրյանների Լոռի ժամանելը:

1799 թ. դեռ. Լազարևի հրամանատարությամբ ռուսական զորքի մուտքը Վրաստան արմատապես փոխում է իրավիճակը ողջ Այսրկովկասում: Նոր հեռանկարներ են բացվում նաև Հայ մելիքների համար: Վրաստանը, սակայն, չարունակում է պահպանել որպես ժամանակավոր ապաստան լինելու իր բազմավարական նշանակությունը՝ մինչև Հայաստանի տարածքի նվաճումը ռուսական զորքերի կողմից, թեև Պավել Առաջին կայսեր միջնորդությամբ Գեորգի 12-րդը հրովարտակը մեյլիքներին հնարավորություն է տալիս արդեն ոչ փախստականի կարգավիճակով մնալու Վրաստանում: Վրաստանը վերածվում է հենակետի, որտեղից և պետք է ձեռնարկվեր բուն Հայաստանի ազատագրման գործընթացը: Գեորգի 12-րդը իրեն իրավունք է վերապահում էջմիածնի միաբաններին հիշեցնելու, թե քանի որ Վրաց տերությունը «ոչ է օտար ի սրբոյ Աթոռոյդ, այլ ունիմք և մեք մասն»³⁴⁹, և բոլոր ազգքն Հայոց կոչնն զմեզ արքայ իւրեանց, նաև գիտեն զմեզ ազգական արքայիցն Հայոց, արդ, եթէ այդպէս է, ապա ուրեմն պարտիք և դուք լսող լինիլ սրբոյ Աթոռոյդ օգտակամ բանիցն մերոց և տալ հաւանութիւն իսկ»: Գեորգի 12-րդը զգուշացնում է էջմիածնականներին, թե «ներկայումս վիճակ Հայրապետութեան է Յովսէփ արքեպիսկոպոսին, և նա ունի արժանաւորութիւն իսկ և կարողութիւն բարևութապէս կառավարելոյ զտուրք Աթոռդ և զմիաբանութիւնն ձեր, իսկ եթէ ոք վաղ ուզեսցէ

³⁴⁸ ՄՄ, ձեռ. 2951, թ. 163բ:

³⁴⁹ Հավանաբար նկատի է առնվում վիրահայոց թեմը:

նախքան զգալ Յովսէփ արքեպիսկոպոսին, և դուք կացուցանէք այնպիսոյն Հայրապէտ և օծանէք, դիտասջիք այնպէս է լինելոց, որպէս ի ժամանակա Քուլթուրին, և անվերջանալի խոսովութիւն և երկպառակութիւն յառաջանելոց է և որքան ի յիս կարողութիւն գոյ, մինչև ի յեղումն արեանս ջանալոց եմ ի վերոյ օրինաւոր առաջադրութեանս...»³⁵⁰:

Հայ ժողովրդի դիրքորոշման խնդիրը առանձնակի կարևորութիւն էր ձեռք բերել հակամարտ բոլոր կողմերի համար: Այդ է պատճառը, որ, ըստ Կովալենսկու արձանագրման, «Երևանի Մահաբեդ խանը ... սիրված է իր հպատակների կողմից, և հատկապես՝ հայերի, որոնց նա իր ցեղակիցներից առավել սիրաշահում է և որոնք պարսիկների կողմից վերջին պաշարման ժամանակ կազմում էին նրա ամբողջի կայազորի մեծ մասը»³⁵¹:

ԺԹ. դարի սկզբին Վիրահայութիւնը ձեռք է բերում ռազմա-քաղաքական գործոնի կարգավիճակ, որը մինչ այդ, համեմատաբար քիչ տեսանելի էր: ԺԹ. դարի սկզբին վրաց ազնվականության դժգոհութեան աճի պայմաններում ռուսական կողմնորոշման բոլոր գործիչները Վրաց միջավայրում հայտարարվում են Վրաստանի դավաճաններ, այդ թվում ինչպես հայազգի, այնպես և վրաց ազգութեան ներկայացուցիչներ (Հովսեփ Արղւթյան, Հարութիւն Արարատյան, Գարսեան Ճավճաճև և այլք):

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԳ

ՀԱՅԵՐԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՆԵՐՔԻՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

3.1 Ռուսահայ գաղթօջախի բնակչութեան քանակական կազմը

Հայ-ռուսական փոխհարաբերութիւնների իրական պատկերի վերհանման համար կարևոր է հստակ պատկերացում ունենալ ինչպես ռուսահայ գաղթօջախի բացարձակ թվաքանակի, այնպես էլ նրա աճի ու փոփոխութիւնների միտումների մասին: Նման ուսումնասիրութեան կատարումը համեմատաբար դուրին է շնորհիվ ռուսահայոց առանձին գաղթավայրերի մասին եղած թվական տվյալների առկայութեան ու Հովսեփ Արղւթյանի կողմից տարբեր առիթներով իր թեմի մասին կազմած ցուցակների, որտեղ ներկայացված են զբնթե բոլոր Հայաբնակ վայրերը: Նույնը չի կարելի ասել այլ գաղթօջախների մասին՝ նմանատիպ տեղեկութիւնների համեմատական պակասի կամ չգոյութեան պատճառով¹: Կարևոր է պարզաբանել նաև Ռուսահայ գաղթօջախի համալրման ուղիներն ու ընդգրկած աշխարհագրութիւնը ողջ ժամանակահատվածի համար:

Ռուսահայ գաղթօջախի վաղադուրյն կենտրոն Աստրախանը, որով փաստորեն ներկայանում էր նշված գաղթօջախը 18-րդ դարի առաջին կեսին, նույն դարի երկրորդ կեսին ևս մեծ էր որպես հայ բնակչութեան հիմնական հավաքատեղիներից մեկը, որը նաև կապող օղակ էր մեկ կողմից Ռուսաստանի և մյուս կողմից Այսրկովկասի ու Պարսկաստանի միջև²: Ըստ Կոռնեյ լը Բրյուսինի, 1703 թ. Աստրախանում կար շուրջ քառասուն հայ ըն-

¹ П. С. Среджук, Расселение и численность армян в Галицком Прикарпатье в XVII-XIX вв., - ՊՐՀ, 1984, թիվ 1, էջ 134-142:

² В. А. Хачатурян. Население армянской колонии в Астрахани во второй половине XVIII века.- «ՀՍՄԻ ԳԱ Տեղեկագիր» (Հաս. գիտ.), 1965, թիվ 7, էջ 77-87: Ղզլարի և Մոզդուկի հայկական գաղթավայրերի մասին տե՛ս Լևոն Պողոսյան, Հյուսիսային Կովկասի հայկական գաղթավայրերի հիմնադրման մասին (XVIII դ.)- ՀՍԽՀ ԳԱ Լրաբեր (Հաս. գիտ.), Եր., 1985, թիվ 6, էջ 57-66:

³⁵⁰ ԿՄ, Կաթ. դիվան, թղթ. 9, վավ. 168:

³⁵¹ Армяно-русские отношения..., IV, с. 530.

տանիք, որոնք բնակվում էին Հայկական թաղամասում³: 1763 թ. Եկատե-
րինա 2-րդի հրովարտակներից մեկում, որով հիմնավորվում էր Հայերին ե-
կեղեցիների կառուցման արտոնումը, նշվում էր, որ 1706 թ. Աստրախա-
նում կար 30 տուն հայ⁴: Նույն վավերագրում 1763 թվականի համար հա-
յերի քանակը Աստրախանում նշված է մինչև 500 տուն⁵: Ըստ Ն. Բ. Գոլի-
կովայի հաշվարկի, 18րդ դարի առաջին քառորդի վերջին (1724–1725 թթ.)
Աստրախանի հայ համայնքը հաշվում էր 399 մշտական և 104 ժամանակա-
վոր, այն է՝ ընդամենը 500 արական սեռի բնակիչ, որից 115ը՝ տների սեփա-
կանատերեր⁶: Հայ համայնքի մեջ ընդգրկված էին նաև 29 հույն և վրացի
բնակիչ⁷:

1738 թվականի մարդահամարով Աստրախանում արևելյան ժողովուրդ-
ներից հաշվառվել են

«Հայեր և կաթոլիկներ	– 543,
Բուխարացիներ	– 273,
Գիլանցիներ	– 78,
Ազրբեջանցիներ	– 49...» ⁸ :

Նշելի է, որ Աստրախանում կաթոլիկները ևս Հայազգի էին, որով պայ-
մանավորված էր նաև նրանց միասին հիշատակումը⁹:

Ըստ Գմելինի բերած տվյալների, 1768 թ. Աստրախանում կար «1281 ա-
րական սեռի Հայազգի բնակիչ»¹⁰:

³ Տե՛ս Է. Թաքիրեան, Կոստյա և Բրիտինի «Ուղեգրությունը» որպէս հայ գաղթո-
ջանների պատմության ուսումնասիրման աղբյուր, – «Էջեր հայ գաղթավայրերի
պատմության», խմբագրություն Կ. Բարխուդարեանի և Զ. Եկավանի, Եր.,
1996, էջ 125:

⁴ ПСЗРІ, т. XVI, с. 287.

⁵ ПСЗРІ, т. XVI, с. 287. Р. Г. Хачатрян. Русская историческая мысль и Армения
(XVII–XIX вв.). Ереван, 1987, с. 187–188.

⁶ Н. Б. Голикова, Очерки по истории городов России конца XVII – начала XVIII в.,
М., 1982, с. 169.

⁷ Н. Б. Голикова, Նշված աշխ...:

⁸ Н. Б. Голикова, Նշվ. աշխ., էջ 170:

⁹ 1723 թ. սի վավերագրում Աստրախանի հայ կաթոլիկների քանակը ներկայացված
է 12 տուն կամ 65 հոգի, որից բացի մնացած հայոց թիվը նշված է ձ(100) տնից
այնի, որ «Ըձ[800]... այլ աւելի հոգի կու լինին»։ տե՛ս Է. Թաքիրեան, Աստրա-
խանի հայոց պատմությունից, – «Հայաստանի պատմության նրվեր Կենտրո-
նական Եւրոպայի դիւաններում», Եր., 2001, էջ 67–68:

¹⁰ С. Г. Гмелин. Путешествие по России для исследования трех царств естества. СПб,
1771, с. 107.

Մինչև 18-րդ դարի վերջին քառորդ Ռուսահայ գաղթախաղը իր քանա-
կական կազմով ներկայացված էր երեք հիմնական կենտրոններով՝ Աստրա-
խան¹¹, Ղզլար և Մոզզոկ քաղաքներում:

1775 թ. կազմված տեղեկանքի համաձայն Ղզլար քաղաքի բնակչու-
թյան ազգային կազմը ուներ հետևյալ պատկերը¹².

Ռուսներ	–
Վրացիներ	– 470 անձ
Հայեր	– 1222 „
Այլք	– 232 „

Մոզզոկ քաղաքի համար տվյալներ հայտնի են 1777 թվականի սեպ-
տեմբերի 12-ին կազմված ցուցակով՝ Հայազգի բուրք բնակիչների թվարկ-
մամբ¹³.

Ռուսներ	–
Վրացիներ	– 684 անձ
Հայեր	– 560 „
Օսեր	– 95 „
Հույներ	– 21 „
Կաթոլիկներ	– 43 „
Չերքեզ կարաղացիներ	– 217 „
Ընդամենը	– 1620 „

1778–1779 թթ. տեղի ունեցավ Ղրիմահայոց փոխադրումը Դոնի զետա-
բերանի մոտ գտնվող տարածք, որտեղ հիմնադրվեց Նոր Նախիջևան անու-
նով Հայկական բնակավայր՝ Հարակից հինգ Հայկական գյուղերով Հան-

¹¹ Հովսեփ Արղունթյանի Աստրախան ժամանելու (1774 թ.) տարիներին Աստրա-
խանը, «...լինելով ռուսահայ թեմի կենտրոնը, մեծաքանակ հայ բնակչություն
ուներ՝ շուրջ 600 տուն, գրեթե 6000 մարդ» (Վ. Գիլոյան, Լազարյանների հաս-
րակական-քաղաքական գործունեության պատմությունից (XVIII դարի երկրորդ
կես), Եր., 1966, էջ 112):

¹² Документы по взаимоотношениям Грузин с Северным Кавказом в XVIII в., До-
кументы подоврал, подготовил к печати и предпослал им исследование В. Н. Гам-
рекели, Тб., 1968, с. 51.

¹³ Документы по взаимоотношениям Грузин..., с. 52. Անվանացանկը տե՛ս նույն
տեղում, էջ 202–221: Ուշագրավ է, որ վրացիների թվարկման մեջ նկատելի են
Հայկական ազգանուններ, իսկ կաթոլիկների անունները անխտիր միայն Հայկա-
կան են: Ըստ այդմ, Հավաստի չեն Հրատարակչի կատարած տոկոսային Հարա-
բերություն հաշվարկները, ըստ որի, քաղաքի մեծամասնությունը իբր, կազմում
էին վրացիները:

դերձ¹⁴: Նշված վերաբերակեցման հետևանքով ոչ միայն կտրուկ մեծացավ ՌուսաՀայ գաղթօջախի քանակական կազմը, այլև այն ձեռք բերեց որակական նոր մակարդակ:

1780 թվականին է վերաբերում հայերի քանակի մասին համառուսաստանյան ընդգրկումով Հովսեփ Արղունթյանի կազմած առաջին տեղեկանքը, որի մեջ ներառված են նաև Ղրիմից տեղահանված հայերի քանակի մասին թվական տվյալները: Այդ ցուցակի համաձայն հայագրի անձնավորութունների քանակը ուսական պետություն սահմաններում ըստ բնակավայրերի ուներ հետևյալ պատկերը¹⁵.

«Ղախմու երկավ ժողովուրդքն են տունք ԳՌ (3000) և անձինք՝ ԺԲ Հազարք (12000):

Հաշտարխանցիք են տունք ԸձԿԵ (865) և անձինք՝ երեք Հազար Ե(5) Հարիւրք:

Ղզլարցիք են տունք ԳձԿ (360) և անձինք՝ երկու Հազար Բձ Հարիւրք (2200):

Պետրպոլք՝ տունք տասն և անձինք Զ(80):
Մօսկով՝ տունք քսան և երկու և անձինք ԱձԾ (150):
Մօզզօկ՝ տունք ԱձԼ (130) և անձինք Էձ (700):
Մարաֆան՝ տունք ԽԴ (44) և անձինք երկու Հարիւր յիսուսն:
Բօրաղան՝ տունք Լ (30) , անձինք՝ Գձ (300):

Որք միանգամ յերկրիս Ռուստաց են տունք ԴՌԴձԿԱ (4461)¹⁶ և անձինք ԺԹՌԱձՁ (19190), բաց ի լեռնարնակ չերքեղացն մերազնեից, որք ոչ են յայտնի մեզ¹⁷»:

¹⁴ Ղրիմահայոց տեղահանման ու Նոր Նախիջևանի հիմնադրման մասին հանդամանորեն տե՛ս Վ. Միքայելյան, Ղրիմի հայոց գաղութի պատմություն, Եր., 1964: Նույնի՝ Ղրիմահայոց պատմություն, Եր., 1989: Վ. Բարխուրյան, Նոր Նախիջևանի հայկական գաղութի պատմություն (1779-1861 թթ.), Երևան, 1967: В. М. Кобузан. Заселение Новороссии (Екатеринославской и Херсонской губерний) в XVIII-первой половине XIX века (1719—1858гг.), М., 1976.

¹⁵ Մատենադարան, Կաթ. դիվան, թղթ. 5, վավ. 26-13, թ. 7:

¹⁶ Ընդհանուր գումարը պատճենի մեջ նշված է. «տունք ԴՌԳձԽԱ», որ պարզապես զրջական վրիպման արդյունք է: Տե՛ս նույն տեղում:

¹⁷ Չերքեղահայոց թվաքանակի մասին վկայություններ պահպանվել են միայն 19-րդ դարի 30-40-ական թվականներից, երբ Ռուսաստանը վճռականորեն ձեռնամուխ եղավ երկրամասի զբաղմանը: 18-րդ դարի վերջին քառորդից Հայտնի է միայն, որ 1783 թ. Չերքեղահայոց հինգ ընտանիք փոխադրվել էր Նոր Նախիջևան, իսկ 1784 և 1791 թվականներին տեղի ունեցած նմանափոխ փորձերը

Բերված աղյուսակի թվական տվյալների հաստատումն ենք գտնում Հովսեփ Արղունթյանի 1782 թ. հունվարի 20-ին գրած նամակներից մեկի հետևյալ արտահայտության մեջ. «և քսան Հազար անձանց կեսնք կախի յինչն...»¹⁸, որ նշանակում էր, թե այդքան էր այդ պահին ուսահայ գաղթօջախի, այն է՝ Հ. Արղունթյանի թեմի քանակը:

1775 թ. տվյալների համեմատությամբ Ղզլարի բնակչության քանակը 1222-ից հասել էր 2200-ի, իսկ Մոզզոկի բնակչությունը 1777 թվականին եղած 560-ից դարձել էր 700:

Առավել ամբողջական են 1782 թվականին իրականացված ընդհանուր մարդահամարի ժամանակ (4-րդ ունիդիս) ստացված արդյունքները: Այդ մարդահամարի տվյալներով, որ օգտագործել է Հ. Արղունթյանը իր թեմի ծխաքանակի ճշտման համար, Աստրախանի հայագրի բնակչության քանակական կազմը ուներ հետևյալ պատկերը.

«Արանց թիւն է	693
Կանանց թիւն է	924
Տղայոց թիւն է	1162
Աղջկանց թիւն է	767
Արուաց թիւն է	1855
Իգաց թիւն է	1691
Արուաց և իգաց թիւն է	3546» ¹⁹ :

Ղզլարի բնակչության քանակական կազմը ուներ հետևյալ պատկերը.

«Ռուսներ	— 415
Վրացիներ	— 1551
Հայեր	— 3031
Այլք	— 3465
Ընդամենը	— 8462» ²⁰ :

Մոզզոկի բնակչության աճը կատարվում էր համեմատաբար դանդաղ.

«Ռուսներ	— 6
Վրացիներ	— 804

ավարտվել են անհաջողությամբ: Տե՛ս Գ. Ս. Արաքելյան. Черкесоган (Историко-этнографическое исследование), — “Кавказ и Византия”, вып. 4, Ер., 1984, с. 86.

¹⁸ ՄՄ, ձեռ. 4496, էջ 42:

¹⁹ ՄՄ, ձեռ. 2949, էջ 1ա:

²⁰ «Документы по взаимоотношениям Грузии с Северным Кавказом...», с. 51.

Հայեր	– 709
Այլք	– 368
Ընդամենը	– 1887 ²¹ ;

Հյուսիսային Կովկասում նոր դադթաշխի ստեղծման առաջարկույթյամբ Հանդես էին եկել, ինչպես այդ մասին տեղեկանում ենք Պ. Ս. Պոտյոմկինի Գ. Ա. Պոտյոմկինին գրած գաղտնի ցեկուցագրից, «Մեծ Կաբարդալում անդրկուրանցիների միջև և լեռնային տարբեր վայրերում բնակվող Հայերը», որոնք խնդրել էին բնակության համար հատկացնել որևէ վայր: Պ. Պոտյոմկինը 1784 թ. ապրիլի 26-ին ու մայիսի 31-ին գեկուցում է, թե ինքը չի հապաղի այդ կատարել և սպասում է միայն Գ. Պոտյոմկինի հրահանգին²²: Եռուսով ստացվում է նաև Գ. Ա. Պոտյոմկինի արձագանքը: 1784 թ. սեպտեմբերի 19-ին նա հրահանգում է Պ. Պոտյոմկինին. «Ձերդ Գերագանցության մայիսի 31-ի գեկուցագրի համաձայն, որտեղ Գուք փոխանցել էիք կուսիկյան, կարարդինյան և անդրկուրանյան Հայերի աղերսագիրը Կովկասյան նահանգում բնակություն հաստատելու ցանկության մասին, հանձնարարում եմ Ձերդ Գերագանցությանը բնակության վայր նշանակել, որը կարող է կոչվել Սուրբ Գրիգոր Լուսավորչի անունով: Այնտեղ ժողովրդի հուբից և այդ բնակավայրի ընդարձակումից կախված կլինի այնտեղ քաղաքի հիմնադրումը, իսկ մինչ այդ նրանց կարող են տրվել Ն. Կ. Մ. Հավատարիմ Հպատակների բոլոր արտոնությունները»²³:

²¹ Նույն տեղում, էջ 52: Հմմտ. Լ. Պողոսյան, նշվ. աշխ., էջ 65, այստեղ այդ թիվը նշված է 1785 թվականի համար:

²² Армяно-русские отношения..., IV, с. 302.

²³ Армяно-русские отношения..., IV, с. 323. Կարգադրությունը Պ. Ս. Պոտյոմկինը ստացել է նույն թվականի հոկտեմբերի 19-ին: Այդ կարգադրությունից միաժամանակ կարելի է կատարել այն հետևությունը, որ Գրիգոր Լուսավորչի անունով քաղաք հիմնադրելու գաղափարը կար արդեն իսկ 1784 թվականից: Ուշագրավ է, սակայն Հ. Ռայնեգի կողմից եկատերինա ներկրոդին ներկայացրած գեկուցագրում, որտեղ ներկայացվում է Վրաստանից Ռուսաստան կապի հնարավորությունը, հետևյալ պարբերության ակալությունը. «от Кавказа до Мозлоку защищается дорога тремя выгодными крепостями. Из них 1-я называется Владе-Кавказ, 2. – Григорополь, а 3. – Потемкин» (ոչլոծ ըստճեցե. մոչ Նախըրծա Նախարդեղեմո. Երմանջեղեղեմո. տարճեմն, Մեխեղեղեմո. ճա. 2002, թ. 277): Ըստ հրատարակիչի, գեկուցագրերը, որ մինչ այդ անտիպ էր և պահվում է Պետերբուրգի Սայակով-Շչեդրինի անվան դրաղարանի ձեռագրերի բաժնում, գրվել է 1784-1786 թթ. միջոցին (տես՝ նույն տեղում, էջ 27): Հարկ է նշել, որ Գրիգորիսով անվանումով ամբողջ Հյուսիսային Կովկասում արձանագրված է նաև ժ. Գ.

Ռուսահայ գաղթաշխիների քանակական կազմի մեջ էական փոփոխություններ տեղի ունեցան 1787-1791 թթ. ռուս-թուրքական պատերազմի ավարտին Հայ բնակչության մի մեծ մասի հավաքագրումով ու բնակեցումով նորաստեղծ Գրիգորիսով քաղաքում: Այդ հանգամանքի շնորհիվ Ռուսական կայսրության տարածք անցան շուրջ 4000 Հայեր²⁴, որի ընդգրկումով էլ Հայազգի բնակչության ընդհանուր քանակը կազմեց մոտ 30 հազար անձ: Այդ մասին ուղղակի ցուցում է Պ. Ջուբովին 1793 թ. սեպտեմբերի 12-ին Հովսեփ Արղուլյանի գրած նամակի այն սուղբը, որով հիշեցնում է, թե իր խնդրանքի կատարման գեպում «ըրանով դուք կպարտադրեք երկու սեռի 30 հազար հրախտագետ շնչի աղովել Աստծուն Ձեր համար»²⁵:

Ռուսահայ գաղթաշխի նոր համալրում ստացավ 1796 թ. Վ. Ջուբովի արշավանքի դադարեցումից հետո՝ Գերբենտի ու Մուսկոլերի Հայերի Ռուսական զորքերի հետ Ռուսաստան տեղափոխվելու շնորհիվ²⁶:

սկզբներին Յ. Կլապրոտի Ուղեգրության մեջ (Voyage au Mont Caucase et en Georgie, par M. Jules Klapproth, tome premier, Paris, 1823, p.425):

²⁴ Մանուկ Կյուսուդյանցին, որ քաղաքի հիմնադրումից մեկ տասնամյակ անց գտնվում էր Գրիգորիսովում, գրում է. «Բնակիչք Գրիգորիսովու ի Հինգ յեզր սահմանաց քաղաքացն յիսմայիլէ, ի Ղևդէրու, ի Քիլիու և յԱղբերմանու ժողովնայք գոլով, արանց՝ սակաւքն գիտեն գհայոց լեզուն, իսկ կանայք գրէթէ բոլորովին ոչ գիտեն իսոսկ զհայերէն, վասն որոյ երեսայք նոցին արուք և էջք, միշտ գթուրգաց լեզուն բարբառէին, որոց վասն և քահայերէն մէջ կեկեղեցեաց բացի ընթերցմանցն, գայլ դոր ինչ հարկաւորութիւն ասել զպրտց և այլոց՝ այլազգային բարբառու ծանուցանէին, որք յոժ անտանելիք էին նուստութեան իմոյ լսել անգամ գայնպիսի ողորմութիւն ազգին իմոյ և իմեակեալ ժողովրդոցս: Վասնորոյ մոռացեալ իմ գանձնական պիտոյից զպակասութիւնն պարենից ի սակաւութենէ արդեանց ըստ յառաջ գրեցելոյս, յայտարարութեամբ քանիցս ծանուցեալ իմեակաւոր արքայախնդովսի և վնահայնէն, զբով իրախոյս տային, իսկ արդեամբ սպասնի յուսով ճիտացուցանէին գիտա իմ: Իրեւ տեսի բացի բանից այլ օչնութիւն յոժ տարակաց է ի նոցանէ, պատրաստեցի ի գաւիթ առաջնորդարանի տան մի, զսպասաւորն իմ գտիբացու Գէորգն, որ այժմ ի Քիչնով վարդապետ է, եղի վարժիչ և ես անձամբ միշտ զեղբերի գմանկամբք, որք ժողովնայք էին առաւել քան զութիւնն, ամբնայն ջանքն իմ էր՝ ուսուցանել նոցա զբարբառ Հայոց և ապա գայլ կարևորան, որ ողորմութեամբն վերին, ի մէջ երկու տարւոյ մանկուքն վարժարանին պարզ Հայկաբանութեամբ իսոսկ ունակացուցանելով՝ ընտանիք և ծնողք իւրեանց առ Հասարակ ուսան զՀայկաբանութիւնն: Եւ վարժարանն այն կա մինչև ցայժմ Հաստատուն և յառաջարկէմ որ ըստ օրէ՛» (Դիւան Հայոց պատմութեան, գիրք ժԲ, էջ 53)

²⁵ Армяно-русские отношения..., IV, с. 399.

²⁶ С. И. Брук, В. М. Кабузан. Миграция населения в России в XVIII– начале XX века (численность, структура, география),– "История СССР", 1984, № 4, с. 43.

Առաջիկ մանրամասն ու հետաքրքիր է հետաքրքիր է Հովսեփ Արղությանի կազմած այն տեղեկագիրը, որ վերաբերում է 18րդ դարավերջին և պահպանվել է ինքնագիր ստորագրությամբ (հավանաբար կցվել է 1798 թ. խնդրագրին)։

«Ռուսաստանի տարբեր նահանգներում և քաղաքներում բնակվող հայ ժողովրդի քանակը․

Սանկտ Պետերբուրգ	10	ընտանիք	82	չունի
Մոսկվա	25	„	180	„
Աստրախանի նահանգ․				
Աստրախան	947	„	5685	„
Ղզլար	732	„	4256	„
Մոզդուկ	240	„	817 ²⁷	„
Մաջար	120	„	680	„
Դեբրեճնոտից և Մուսկուրից ելած	610	„	5212	„
Սարաֆանի մետաքսի գործարան	80	„	342	„
Նովորոսիայի նահանգ․				
Նոր Նախիջևան և Հինգ գյուղեր	2200	„	12478 ²⁸	„
Ղրիմի տարբեր քաղաքներում	252	„	1043	„
Գրեգորիոպոլ	522	„	4444	„
Պոդոլիե նահանգ․				

Վերաբնակներին հողահատկացումների մասին հրովարտակը տե՛ս ՍՄԳ, Կ. XXV, № 18611, Կ. 331.

²⁷ Մոզդուկի քաղաքային մադիստրատի տեղեկանքի Համաձայն բնակչության թիվը կազմում էր 4685, իսկ հայ բնակչության քանակը նշված է 1331 (ՍՄԳ ՔՓ, փ.1374, օր.2, Կ. 1064, Լ. 122)։ 1802 թ. օգոստոսի 1-ի դրությամբ Մոզդուկի բնակչության թվաքանակը նշված է 4434 չունի, իսկ հայազգի բնակչության քանակը՝ 1361 (Документы по взаимоотношениям Грузии..., Կ. 52)։ Հ. Արղությանի բերած թիվը ակնհայտորեն նվազեցված է։

²⁸ Նոր Նախիջևանի բնակչության քանակը 1793 թ. առանց գյուղական բնակչության հաշվառման կազմում էր 7564 չունի, իսկ գյուղերինը՝ 1511, որից Չալթի՝ 405, Թոփուր՝ 342, Մեծ Սալա՝ 282, Սուլթան Սալա՝ 248, Նեսվիտա՝ 254։ Տե՛ս Վ. Բ. Բարխուդարյան, Նշվ. աշխ., էջ 122։ 1799թ. հուլիսի 21-ին Եփրեմ արքեպիսկոպոսին ուղղած նամակում Հ. Արղությանը Նոր Նախիջևանի բնակչության թիվը նշում է «ԺԳ (13) հազար անձինք»։ տե՛ս ՄՄՄ, ձև. 2951, թ. 277ա։

Թաշկովո	25	„	116	„
Ընդամենը	5 763	ծուխ	35 341	չունի
Վանքերի և եկեղեցիների քանակը․				
Մոսկվա			2	եկեղեցի
Սանկտ Պետերբուրգ			2	„
Աստրախանի նահանգ			12	„
Նովորոսիայի նահանգ	3	վանք	23	„
Ընդամենը՝	3	վանք	39	եկեղեցի» ²⁹ ։

Վերոբերյալ աղյուսակում տարակուսանք է հարուցում թերևս միայն Ղզլարի հայազգի բնակչության մասին եղած թվականը (4256 չունի), որովհետև Պ. Գ. Բուտկովի մոտ եղած տվյալները Ղզլարի 1798 թ. դեմոգրաֆիկ կացութային մասին ներկայացնում են մեկ այլ իրավիճակ, որի ճշմարտանման լինելը հավաստող վկայություն է պահպանվել նաև հայկական սկզբնաղբյուրներից մեկում։ Ըստ Պ. Բուտկովի³⁰, 1798 թվականին Ղզլարի բնակչության ազգային կազմը ունեցել է հետևյալ պատկերը․

Հայեր	2779	չունի
Վրացիներ	805	„
Ռուսներ	108	„
Այլք	1772	„
Ընդամենը	5464	չունի

Ղզլարի բնակչության կազմի բերված թվաքանակի Համեմատությունը 1782 թվականի տվյալների հետ պարզում է, որ բնակչության քանակը ոչ միայն չի ավելացել, այլ տեղի է ունեցել լուրջ նվազում՝ թաթարների (1693), վրացիների (746), ռուսների (307) ու նաև հայերի (252) մոտ³¹։ Որ իրոք այս երևույթը զուտ վրիպակների կամ թյուրիմացություն արդյունք է, ցույց է տալիս 1798 թվականին Ղզլարից Հովսեփ Արղությանին գրած

²⁹ ՍՄԳ ՔՓ, փ. 1374, օր.1, Կ. 1815, Լ.89. Հմտ. ՄՄՄ, Կաթ. դիվ., թղթ. 72, վավ. 456։ Վ. Բ. Բարխուդարյան, Նշվ. աշխ., էջ 128։

³⁰ Бутков П. Г., Материалы..., Կ. I, Կ. 156. Հմտ. Документы по взаимоотношениям Грузии..., Կ. 51.

³¹ Պ. Բուտկովի մոտ 1792 թ. ներքո Ղզլարում արձանագրված են «Ռուսական վանք - 1, ռուսական եկեղեցի - 4, հայկական եկեղեցի - 2, մզկիթ - 6» (նույն անդում, էջ 156, Ժ.1)։

ոչ եղաք արդիւնաւոր, հազիւ թէ Ժ(10) թուաման նուիրակական արդիւնք է-հաս անտի ի ձեռս մեր»³⁸:

Համեմատութեան համար հարկ է ընդգծել, որ նույն ժամանակամիջոցին Հյուսիսային Կովկասում ենթադրւում է մոտ 2500ից մինչև 3000 վրացիների առկայութիւնը³⁹, որոնց մի զգալի մասը ևս վրաստանցի հայեր էին, հաճախ՝ հայկական անձնանուններով, որոնք ցուցակներում ընդգրկված են որպէս «վրացիներ» (վրաստանցիներ):

Ամփոփելով Հայ բնակչութեան քանակական կազմի աճի նկատմամբ Ռուսական պետութեան վարած քաղաքականութեան արդյունքները, որի հետևանքով Ռուսաստանի տարածքում ձևավորվեցին բազմամարդ ու հայազգի հոծ գանգված ունեցող բնակավայրեր: Ինչպէս Հազարյանները, այնպէս էլ Հովսեփ Արղութեանը գերազանց գիտակցում էին Ռուսական պետութեան համար Հայ բնակչութեան արժեքն ու նշանակութիւնը, հենվում էին այդ գանգվածի նշանակութեան վրա և այդ ամբապնդում էր նրանց դիրքերը:

Եթէ 1780-ական թվականների սկզբներին Ռուսաստանը Հայ գործիչներին ներկայանում էր որպէս ապագա դաշնակից պետութիւն, որի հետ Հայաստանը կարող էր ունենալ պայմանագրային հարաբերութիւններ, ապա 1790-ական թվականների վերջին Ռուսաստանը սկսում է ընկալվել որպէս երկրորդ Հայրենիք և Հայտարարվում, թե հայերը «անկեղծ ջանասիրութեամբ հոտում են և պատրաստ են ներհոսել դեպի իրենց նոր Հայրենիք»⁴⁰:

Ռուսաստանը Հայտարարելով Հայերի համար որպէս երկրորդ Հայրենիք և Հայ բնակչութեանը հավաքագրելով այնտեղ, Հայազգի գործիչները ակնկալում էին Ռուսաստանից նաև Հայաստանի գրավում, որտեղ ինչպէս Հայերի, այնպէս էլ Ռուսաստանի շահերը պետք է բաշխվին Համամասնութեամբ. Հայերի համար կենսականը նվաճվելիք ազատութիւնն էր պարսկաթուրքական լծից, իսկ Ռուսաստանի համար՝ տնտեսական ու քաղաքական շահը: Նման համաձայնութեան փորձ Հայ բնակչութեան համար հնարավոր չէր ակնկալել ոչ Հնդկաստանում և ոչ Հայաստանը նվաճած թուրք պարսկական պետութիւններից ու նաև որևէ այլ խոշոր երկրից: Հնդկաստանի Հայ դաղթօջախում ևս նման համաձայնութեան հնարավոր

կողմ դիտվում էին Ռուսաստանը և Վրաստանը: Թուրքիայում և Պարսկաստանում իրենց գոյութիւնը պահպանող Հայ վաճառականութիւնը իրեն Հայաստանից ոչ միայն մեկուսացած կամ դուրս չէր համարում, այլև բազում թեկնով կապված մնալով մայր երկրի հետ, փորձում էր ակտիվորեն մասնակցել նրա կյանքին՝ իր վերահսկողութեան տակ պահելով Հայոց հողերը հիմնական կենտրոնները, ամրապնդել իր տնտեսական ու հասարակական դիրքը: Պայքարը Հայաստանի համար, այդպիսով, ոչ միայն չէր դադարել, այլև թեևակոխել էր նոր փուլ և ընթանում էր ավելի նպատակասլաց ձևով, թեև արտաքուստ՝ խուլ և աննկատ⁴¹:

Հայ ազատագրական շարժման գործիչները 18-րդ դարի երկրորդ կեսին մտահոգացան մի համարձակ ծրագիր, այն է՝ Հայ ժողովրդի Հայրենադարձութեան գաղափարը⁴² և փորձեցին իրականացնել այն:

Մաղբատում Մովսես Բաղրամյանի աշխատութեամբ լույս ընծայված "Նոր Տեսրակ որ կոչի Յորդորակ" դրբում արձանագրված է Հայրենադարձութեան գաղափարը: Աստուծուն դիմելու աղոթքի ձևով է այնտեղ նշվում այդ մասին.

«... այժմ վստահացեալ մեծաւ յուսով աղերսելով պաղատիմք առ քեզ, Տէր,

Մի իսպառ զերսս քո դարձուցանելով ի մէնջ զմեզ թափառեալ ցիր և ցան առնէր:

⁴¹ Ազգային դիմազօծ պահպանման և Հայաստանի համար պայքարի ուղուց կամ թե ակամա հեռացող Հայ բուրժուազիան և վաճառականութիւնը արագորեն կամ ձուլվում և կամ կորցնում էին բնակչութեան մեջ իրենց հենարանը: Մտահոգիչ էր ազգային դիմազօծ պահպանման կարևոր նախապայման հալոց լեզվի իմացութիւնը և կարևոր համազօծ պահպանման կարևոր նախապայման հալոց լեզվի իմացութիւնը և հոգ վաճառական յազգէն Հայոց, թէ ի Կոստանդնուպոլսէ, թէ տէր ընչից և ճոհ վաճառական յազգէն Հայոց, թէ ի Կոստանդնուպոլսէ, թէ Իդմիրու, թէ Արզրուսայ և թէ Տիարբէջրու, ոչ շարժմամբ, և ոչ բարբառու ոչ մանեցաւ որոց Հայոց եթէ ոչ բոլորովին (աղաւաթի միոյ ի տաճկայ) և ողջունին (այսինքն զամանեղ խերօսուն): Վասն այսպիսի արանց, ուրեմն ձմերուկ և դրում մի առաւել արժէ, քան զամենայն պատմադիրք տառիւ և բառիւ Հայոց, նաև եթէ ոմանք ի նոցանէ ունելով չնորսս ընթեռնելոյ Հայոց տառիւ և բառիւ, այլ ոչ հասկանայ բառ մի ընթեռնմանէ իւրմէ, և մեք տեսեալ, զի նա զբէ Հայերէն՝ տաճկաց բառիւ և ընթեռնու տաճկորէն: Ուրեմն ոչ միայն հարկաւոր է Հառնել մեզ Պատմութիւնը նախնեաց մերոց, նաև առաւելապէս հարկաւոր է Հասարակ ազգին Հայոց ունիլ սէր ուսանելոյ, Հայոց բառ և Հայոց տառիւ ընթեռնու և հաստատուն կալ ի միտս իւրեանց... ճանաչելոյ արժանաւորութիւն յազգին իւրոյ և սերհական ժառանգութիւն յերկրին իւրոյ և ամենայն արարս նախնեաց իւրոց...» (Ն. Ա. Ոսկանյան, Բ. Ա. Կորկոտյան, Ա. Մ. Սալպալյան, Հայ դիրքը 1512-1800 թվականներին, Եր., 1988, էջ 527):

⁴² Հայ ժողովրդի պատմութիւն, IV, էջ 214:

³⁸ ՄՄ, ԿԳ, թղթ. 6, վավ. 101, բնագիր:
³⁹ Документы по взаимоотношениям Грузии с Северным Кавказом..., с. 55.
⁴⁰ ШГИА в С.-Петербурге, ф. 1374, оп. 2, д. 1815, л.18.

Այլ գբոյ Սուրբ Լուսաւորչի փետեկտեցեալ և ցրուեալ հօտն բամելով յիւր փարախն ժողովեալ,

Այսինքն՝ զթափառեալ ազգն Հայոց յիւրեանց Աշխարհն դարձուցանեալով, միաբանեալ»⁴³:

Հայրենիքի ազատագրման մորմոքով է գրված Հովսեփ Արղունթյանի ուղերձը Պավել Պետրովիչ թաղաժառանգին 1780 թ.

«...Լինելով իմաստնագույն եկատերինայի և գահի, և թե առաքինութունների ժառանգորդը, զթասարտութուն դրսեորելով հնում՝ փառավոր, իսկ այժմ՝ անկեալ երկրին Արարատեան, ողողում ես նրան քո շնորհներով, որպես անձրև՝ անասութուն պարգևող... տարածելով Ռուսական անհաղթ զենքը ծայրերն աշխարհի՝ կրացես դարպասները կատարելության և Հայաստանի փրկութան: Եւ անդադար ողբացող այս երկիրը կլսի քո շուրթերից. Հաւնիր, հաւնիր Հայաստան, թող ջլատված մկանները քո միավորվելով ամբանան, արիացիր: Եկատերինան բարեհաճում է իմ միջոցով հավաքել և վերակենդանացնել բաժանված մասերը քո և բարձրացնել քեզ քո հին փառքին»⁴⁴ ... Թող իրականացնի մեր այս հույսերը փառավորագույն տունը Պետրոսի...»⁴⁵:

Հայոց պետականության վերականգնման գործը 18-րդ դարի վերջին քառորդին դիմում է հայ ժողովրդի իրավունքն ու պարտականությունը և, ըստ այդմ, հակադրվում Հայաստանը նվաճած պետությունների վարած քաղաքականությունը և, բնականաբար, պայմանավորվում է Հայաստանում հայ ժողովրդի գերակշիռ գոյության անհրաժեշտությունը: Միակ երկիրը, որի շահերը կարող էին համընկնել հայ ազատագրական շարժման գործիչների ծրագրերին և առավել մոտ էր գտնվում Հայաստանին, համարվում էր Վրաստանը, թեև Վրաստանը ևս Հայաստանում վարում էր այնպիսի քաղաքականություն, որը բխում էր հիմնականում միայն իր շահերից: Ուստի զարմանալի է, որ Վրաստանում էին բեռնվում կամ խաչաձևվում ինչպես Հայաստան-Ռուսաստան ուղղությամբ իրականացվող բա-

նակցություններն ու քաղաքականությունը, այնպես էլ Հնդկահայ գաղթօջախի կողմից Հայաստանի ազատագրման համար ձեռնարկվող միջոցառումները:

"Նոր Տեսրակ որ կոչի Յորդորակ"–ի լույս տեսնելուց հետո⁴⁶ սկիզբ առավ հայոց ներգաղթին ձեռնամուխ լինելու գաղափարը: Հավանաբար Հովսեփ էմինի ու Մովսես Բաղրամյանի հետ որոշակի քննարկումների արդյունք էր այն, որ առաջինը նման ծրագիր մշակվեց Հնդկաստանում, որը և փորձեց իրականացնել Շահամիր Շահամիրյանը: Այդ փորձը, կարելի է ենթադրել, պայմանավորված էր այն գիտակցությամբ, որ արձանագրել է Շ. Շահամիրյանը Ղուկաս կաթողիկոսին գրած նամակում. «Եթէ կարէ խոստանալ ժամանակն աշխարհին մերոյ հովանաւորել մեզ, որ ոք ազատութեամբ բարիք լինի հանել մեզ ի յայս պանդխտութենէ, զոր ինչ որ կարող լինիցիմք ի պտղոյ աշխատանաց մերոց հանել աստի և մուծանել առ սեպհական աշխարհն մեր՝ նա միայն մնալոց է վասն մնացորդաց և սեպհական ազգին մերոյ, քանզի ի յայս տարրաշխարհի թէ շինութիւն տանց, թէ՛ արուեստաշահութեանց, կատարածն մնալոց է ի Հնդկիս՝ վասն սեպհական ազգին հեթանոսաց»⁴⁷: Այդ ձեռնարկումը պայմանավորված էր նաև Միմեն երեանցի կաթողիկոսի, ապա և Ղուկաս կաթողիկոսի կողմից այն առարկությունների իրավացիության գիտակցումով, որին արժանանում էր Հնդկահայոց առաջադրած Հայաստանի ազատագրության ծրագիրը: Շ. Շահամիրյանը չէր կարող չըջանցել այդ առարկությունները և, առավել ևս, անարժեք դիտել այն ծնող հանգամանքները: Այդ է պատճառը, որ Հայաստանի ազատագրության խնդրի իրականացումը որոշվում է սկսել հենց ներգաղթի հարցի լուծումից: Նոր Նախիջևանի հիմնումից հետո Ղլարը դիմում էր Հայոց հավաքագրման հաջորդ հանգրվանը⁴⁸: Մինչև Հայաստանի ազատագրումը «Նշավակը» Հնդկահայերին առաջարկում էր «տեղ բնակութեան ի յարեւի կոյս Հայաստանեաց ի գաւառն անուանեալ Ղլար՝ ի պահպանութիւնն պերճապայծառ Կայսրութեանն Ռուստաց՝ վաղնջոց

⁴³ «Նոր Տեսրակ, որ կոչի Յորդորակ». Ծարագրեցեալ սակս սթափելոյ երիտասարդացն և մանկանցն Հայկազանց ի վեհերոտեալ և ի հեղպացեալ թմբութենէ քնոյ ծուլութեան, Մազրաս, 1772, էջ 32: Աշխարհաբար թարգմ. տն՝ս «Նոր տեսրակ, որ կոչի Հորդորակ». Թարգմ. գրարար բնագրից և ծանոթ. Պ. Մ. Խաչատրյանի, Եր., 1991, էջ 33:

⁴⁴ Ընդգծումը՝ բնագրում:
⁴⁵ Մաշտոցի անվան Մատենադարան, Լազարյանների արխիվ, թղթ. 109, գործ 22, վավ. 17:

⁴⁶ Գրքի տպագրությունը սկսվելով 1772 թ., ավարտվել է 1773 թ.: Գրքի 218-220-րդ էջերում տպագրված «Բան առ համայն բարեպաշտօն ընթերցողսզ Հայոց» գլխի վերջում նշված է 1773 թ. (Եւ ի թուին Հայոց՝ 1222):
⁴⁷ Ռ. Ա. Արրախամյան, Շ. Շահամիրյանի նորահայտ նամակագրությունը, «Բանբեր Հայաստանի արխիվներ», 1969, թիվ 3, էջ 132-133:
⁴⁸ Տեսրակ, որ կոչի Նշավակ վասն կառավարելոյ ինչս որբոց և առանց կտակ ննջեցելոց, Մատրաս, Ի տպարանի Յակոբայ Շահմբեանց կոչեցելոյ, 1783, էջ 55-59:

բարերարի յազգին Հայոց»⁴⁹: Նախքան այնտեղ բնակություն հաստատելը, սակայն, անհրաժեշտ է դիտվում իրավական կարգավորում տալ Հայ-ռուսական փոխհարաբերություններին. «այլ յառաջ քան զչինչ տուն և բնակիլ ի նմայ, հաստատեցեք դաշինս ընդ Կայսերությունն Ռուստաց»⁵⁰:

Այդ հույսը ամրապնդվում է 1783 թ. Գեորգիեյան պայմանագրի կրճատմից հետո: 1786 թ. ստանալով Վրաց իշխանական տիրոջ, Շ. Շահամիրյանը փորձում է հայահավաքի համար արդեն դիմել նաև Հերակլին: Նա փորձ է կատարում համաձայնեցնել Հերակլ թագավորի հետ և նրա թույլտվությամբ ու կոչով, նրա անունից դիմել տարասփյուռ Հայ ժողովրդին՝ հավաքվելու Վրաստանին ենթակա հայկական տարածքներում: Առայդ Հերակլին ուղղած 1787 թ. Շահամիրյանի նամակից պարզվում է, որ տեսնելով Հերակլի՝ «բարեպաշտ ձգտումն» ստվարացնելու Վրաստանի բնակչությունը, խորհուրդ է տալիս աշխարհասփյուռ հայությունն ուղղել մի «նամակ շնորհաց և պահպանութեան»: Շ. Շահամիրյանն առաջարկում է խմբագրումից հետո այն հաստատել և վերադարձնել իրեն՝ տպագրելու «հարելբառը և հազարաբար, և ցրուցից ի յերեսս երկրի, զի սովաւ փառավորեցեն ամենայն պանդխտացեալք»: Հերակլ Երկրորդն, իրոք, որոշ խմբագրումից հետո ստորագրել ու հաստատել է այն (1790 թ. դեկտեմբերի 4) և ուղարկել Մադրաս: Ուղերձը տպագրվել է 1792 թ. Հարություն Շամվոնյանի տպարանում, 1000 օրինակ տպաքանակով: Պահպանվել է այդ ուղերձի հայերեն տպագիր օրինակից վրացերեն թարգմանության 1819 թ. արտագրությունը⁵¹: Ստորև բերվում է հայերենով պահպանված հայրենադարձության կոչող առաջին շրջաբերականի նախնական բնագիրը (նախագիծը), որի հեղինակը Շահամիր Շահամիրյանն է և կրում է «Օրինակ նամակի պահպանութեան» վերնագիրը.

«Յետևայ, Դակթեայ, Սաղոմօնէ, Բակրատայ սերնդէ օծեալ Թամրազէ ծնեալ Երկրորդ Հերակլ, շնորհօքն Աստուծոյ թագաւոր Կախէթու, Քարթլու, Բօրչալու, Լաղախու և իշխող յԵրևանու, Գանջու և այլն, և այլն, և այլն:

⁴⁹ Տետրակ, որ կոչի նշաւակ վասն կառավարելոյ ինչս Որոց և առանց կտակ ննջեցելոց, էջ 56:

⁵⁰ Նույն տեղում:

⁵¹ Պ. Ա. Չորանյան, Վրացական ուղեգրությունները..., էջ 158: Նույնի՝ Հնդկահայ գաղթականի պատմությունից (նորահայտ վավերագրեր)։- ՊԲՀ, 1988, թիվ 1, էջ 191:

Շնորհ և պահպանութիւն մեր ի վերայ ազգին Հայոց առհասարակ, որ ի տարրաշխարհ բնակեալ, զի շնորհօք և ողորմութեամբն Աստուծոյ բազուկ բարձրութեան մերոյ, որ ի նշանաւ սրբոյ խաչի պահպանէ զժողովուրդս մեր քաղցրութեամբ առհասարակ: Եւ որպէս ոչ մոռացեալ մեզ ձերոց սեպհական խաչնութիւն հօտին մերոյ, այսպէս ի քաղցրութենէ օրինաց մերոց շնորհեցաւ ձեզ պահպանութիւն մեր՝ եթէ ազատութիւն անձանց և եթէ տէր և ժառանգութիւն ի վերայ ստացուածոց ձերոց, զի հաւաքելով ձեր ի սեպհական աշխարհ ձեր՝ և ի հօտն հովանաւորութեան բարձրութեան մերոյ, անխտրանօք ըստանալոց էք շնորհ և պահպանութիւն և յատկապէս ողորմութիւն ի բարձրութենէ մերմէ, միմիայն յատուցանելով յարեւնիս մեր հարկ, մաքս, հաս և բաժին ըստ օրինօք մերոյ և ընդունիլ պատիւ և պատիժ ըստ արժանաւորութեան իւրաքանչիւր գործոց ձեռաց իւրոց համահաւասարապէս, որպէս բնիկ ժողովուրդք արքայութեան մերոյ և սեպհական ազգին Վրաց:

Նաև, որպէս բարեպաշտ դիտեմ, զի ի միջոց երկայն ժամանակաւ յատկապէս ի ժամանակի թագաւորութեան նաղը շահի մինչև ցայսօր բնակիչքն ընդ հովանաւորութեան Պարսից զրկեցան, կողպտեցան, զրպարտեցան, որ ընդդէմ կամաց իւրանց գրաւեցին ըստացուածքս իւրեանց և անպարտ գոլով՝ պարտաւորեցան դանազան կերպիւ՝ գրովք ի յանուն գանազան արանց, որում հարկեցան ելանիլ առ տարր աշխարհ: Վասն որոյ [յ]ողորմութիւնէ մերմէ շնորհեցաւ այսպիսի զրպարտեցելոց ազատութիւն առհասարակ, որ յառաջօքն զթիւն փրկչին մերոյ Քրիստոսի 1770 թուէն առհասարակ, որ ինիցի, որոք կերպում գրեանք, որում անուամբ որ իցէ գրեցեալ ի յերեսս երկրի Իրանու, Պարսու, Արաղու և Հաղբէջանու, յորոք քաղաք և գեօղօրեում թէ պարտուց, թէ խոտմանց և թէ դաշնադրութեանց և այլն բոլորովին անարժան արարաք, զի երբէք մի մտցէ ի յապարանս դատաստանի մերոյ և մի ունիցի արժանաւորութիւն ոչինչ հայցուածոց, յոչ ոք յառնէ:

Առ ի հաստատութիւն բանին ձեռնադրեցաք մերովք մատամբ և արքայական կնքով կնքեցաք այսօր ի պատան մեր, որ ի մայրաքաղաքն Թիֆլիզ, ի ժամանակի թագաւորութեան մերոյ... ամաց և ի յամսեանն մարտի... և ի յամի տեառն փրկչին մերոյ 1787 և ի թուին Վրաց...¹⁵²

⁵² Պ. Ա. Չորանյան, Վրացական ուղեգրությունները..., էջ 176-177:

նություններին ու իրավունքներին խնդիրներին: Ի տարբերություն Շահամիրյանի կողմից ներկայացված նախագծի, հաստատված օրինակում թվարկվում են չորսի փոխարեն երկու հարկատեսակ, որը պարտավոր են վճարել ներգաղթողները:

Ուշագրավ է, որ Հերակլ Երկրորդի մահվանից (1798 թ. հունվար) հետո Վրաստանի հաջորդ գահակալ Գեորգի 12-րդը 1799 թ. հոկտեմբերի 23-ին Հովհաննես Շահամիրյանին գրած նամակով հայտնում է Շահամիր Շահամիրյանի առաջադրած քաղաքականությունը շարունակելու իր պատրաստակամությունը, որպեսզի տարագիր հայությունը, այդ թվում և Շահամիրյանի ժառանգները, վերադառնալով "ընդ եղբարս իւրեանց՝ բնակեցնին ի սեպուհ աշխարհս իւրեանց՝ ի վայելել զսէր և զգթութիւն"⁵⁶:

Դեռևս 1798 թ. փետրվարին Գեորգիին էր դիմել Հ. Արղունյանը և հիշեցնելով Գեորգիի 1790 թ. համաձայնությունը Լուուս գավառը Շահամիր Շահամիրյանին ժառանգարար տնօրինելու մասին հրովարտակ շնորհելը, առաջարկում է "հաստատ պահեստիք զայն ուխտ, որով ոչ թէ ի հովանավորութիւն ձեր հրավիրէք միայն զհնդկարնակ Հայս, այլև Կարան և Ախլցիսայն դատարկեալ բնակչօք նոցա՝ լնանկոց են Փանբակն և Բորչալուն"⁵⁷: Հ. Արղունյանը հասկանում էր, որ իշխանությունների բարյացկամ վերաբերմունքից է մեծապես կախված գործի հաջողությունը: Նամակի շարունակություն մեջ նա գրում է. "Որովհետև ի Ձեզ պարծեն միշտ Հայք և ուրախ են, թէ՛ ունիմք մեր զթագաւոր ի սերնդոց թագաւորացն մերոց, պարտ է Ձեզ ևս բանիւ և գրով զհայրական իմն խնամ ցուցանել նոցա, զի տեսանելով զայդ, որպէս եղեալքն ընդ հովանեաւ ձերով Հայք՝ ջերմեռանդութեամբ ծառայեսցեն ձեզ, նոյնպես և արտաքինքն զիմեսցեն ի հովանավորութիւն Ձեր":

Հայրենադարձությունը և հայահավաքումը, որ անկախ պետականություն վերականգնման հիմնական զբաղականներից մեկն էր դիտվում, որոշակի մտահոգություն առարկա է մնում Ռուսաստանի հետ հարաբերությունները ուղրտում ևս: Գաղտնիք չէր, որ Ռուսաստանը ևս ինչպես տեսանք, մտահոգ էր իր հպատակների բազմացմամբ և մշտապես օժանդակում էր այլ ժողովուրդներին, այդ թվում նաև հայ բնակչության, ներհոսքին զեպի Ռուսաստանի տարածքներ: Փորձելով համատեղել Ռուսաստանի

⁵⁶ Պ. Չորանյան, Հնդկահայ գաղթօջախի պատմությունից..., էջ 188:

⁵⁷ Պ. Չորանյան, Հայ քաղաքական կողմնորոշման պատմությունից, - ՊԲՀ, 1995, թիվ 2, էջ 155:

այդ ձգտումները և Հայաստանի ազատագրությանը նրա օժանդակելու շահագրգռությունը, Արցախի մելիքները օգնության խնդրանքով դիմելով Ռուսական իշխանություններին, միաժամանակ հրաժարվում են տեղափոխվել Ռուսաստանի բուն տարածք, պատճառաբանելով, որ այն բավական հեռու է, ինչը ձեռնտու չէ Հայ մելիքներին, քանզի, ինչպես այդ արձանագրված է վավերագրում. "Վրաստան տեղափոխվելու դեպքում Քուրդիստանում և Բայազետում ապրող հայերի համար ավելի դյուրին կլինի ժամանակ առ ժամանակ տեղափոխվել իրենց մոտ և ավելացնել ու զորացնել իրենց քանակն ու ուժը, քան այն դեպքում, եթե իրենք տեղափոխվեն Ռուսաստան, որի հեռավորության պատճառով քուրդիստանցի ու բայազետցի հայերը կզրկվեն (այդ հնարավորությունից), որը և այս վերջիններիս համար, որոնց քանակը կազմում է մոտ 60 հազար ընտանիք, ցավալի կլինի, քանզի նրանք ևս տառապելով հազարացիների լծի տակ, կցանկանային միանալ մելիքներին՝ կառավարման ու դատաստանի նպատակահարմարությամբ, որովհետև նույն ազգի ու կրոնի ներկայացուցիչներ են"⁵⁸:

Կարևոր է ընդգծել, որ իրենց զբաղություններում ներգաղթը նկատի ունենալու դեպքում, Վրաստան ասելով, Հայոց մելիքները բնավ նպատակ չունեին տիրանալու Վրաց հողերին, այլ ընտրելու այն տարածքը, որը Վրաստանի իշխանության ներքո գտնվող և Հայաստանի հնագույն հայաբնակ վայրերից մեկը հանդիսացող նորոյրյա Ղազախ կոչվող գավառն էր, և որն այդ ժամանակ գտնվում էր ավերված ու մարդաթափ եղած վիճակում⁵⁹: Այս բանակցությունների ավարտին արդեն տեղի ունեցան միջազգային հարաբերությունների մեջ կտրուկ տեղաշարժեր. 1801 թ. Ռուսաստանին հաջողվեց իր լիակատար վերահսկողությունը սահմանել Արևելյան Վրաստանում, իսկ 19-րդ դարի առաջին քառորդին Պարսկաստանի ու Թուրքիայի դեմ մղած երկուական պատերազմների արդյունքում Ռուսաստանը տեղ դարձավ ամբողջ Այսրիկովասին: Ահա այս ժամանակահատվածում ինչպես հայ-ռուսական, այնպես էլ վրաց-ռուսական հարաբերությունները ձեռք բերեցին նոր որակներ ու նոր երանգներ, հանդես եկան հնարավորությունների ու հուսադրությունների նոր ուղղություններ,

⁵⁸ Армяно-русские отношения..., IV, с. 489:

⁵⁹ Армяно-русские отношения..., IV, с. 474: Այդ տարածքը Գարսևան ձավճավաճի տոհմի կառավարման ներքո էր: Տե՛ս Կ. Շիշմազյան, Գարսևանի թագավորության և նրա ընդհատման պատմությունը, Երևան, 1995, էջ 47:

որոնք զգալի դեր խաղացին և կարևոր նշանակություն ունեցան Հայ և վրաց ժողովուրդների հետագա ճակատագրում:

3.2 ՀԱՅՈՑ ԻՐԱՎԱԿԱՆ ՈՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

Ռուսաստանում Հայ բնակչության իրավա-տնտեսական կարգավիճակն ու զրույթունը, նմանություններով հանդերձ, միաժամանակ զգալիորեն տարբերվել է նույն ժամանակաշրջանի այլ երկրների տարածքներում առկա վիճակից և պայմանավորված է եղել Ռուսական արքունիքի վարած ինչպես արտաքին քաղաքականությունը, այնպես էլ նրա տնտեսական զարգացման առանձնահատկություններով: Թեև Հայ բնակչության կարգավիճակը Ռուսաստանում անընդհատ սրբազրույթունների ենթարկվելով, տարբեր ժամանակներում ունեցել է տարբեր մակարդակ⁶⁰, սակայն և ձեռք է բերել որոշակի ուղղվածություն ու որակ: Հետևելով կարգավիճակի փոփոխություններին՝ կարող ենք հասկանալ նաև արքունիքի վարած քաղաքականության տրամաբանությունը Հայ բնակչության նկատմամբ ու ըստ այդմ մակաբերել նաև Այսրկովկասի նկատմամբ ունեցած նրա միտումները: Միաժամանակ Հայ վերաբնակիչները ևս հետևողական գործունեություն են ծավալել բարելավելու իրենց իրավատնտեսական կարգավիճակը Ռուսաստանում՝ առ այդ օգտագործելով Ռուսաստանի քաղաքական ու տնտեսական շահագրգռությունները, և փորձել են այն ծառայեցնել նաև իրենց ազգային շահերին, մասնավորապես՝ Հայաստանը թուրքապարսկական լծից ազատագրելու ակնկալությունների իրականացմանը:

Հայ բնակչությունը պետական հովանավորչություն էր արժանանում Ռուսական կայսրության կողմից ոչ միայն Ռուսաստանի տարածքում, այլև նրա սահմաններից դուրս: Հեռու Կազիբուտում (Իսպանիա), օրինակ, ազգային իրավունքներից կարող էին օգտվել միայն այն օտարերկրացիները, որոնց անունները յուրաքանչյուր տարի հունվարի 1-ի զրույթյամբ օտա-

րերկրյա հյուպատոսարանների կողմից ներկայացվում էին տեղական նահանգապետարան: Օտարերկրացիները, որոնք քաղաքում կես տարուց ավելի մնում էին առանց իրենց պետություն հյուպատոսարանի կողմից արձանագրվելու, կարող էին արտաքսվել քաղաքից որևէ չնչին առիթով անգամ, իսկ հյուպատոսարանները այլևս չէին կարող հովանավորել այդպիսիներին⁶¹: 1767 թ. Կազիբուտ ժամանած Ռուսաստանի հյուպատոս Բրանդենբուրգին են ներկայանում առևտրական զրադուենքի Հայեր և հույներ⁶², խնդրելով ընդունել իրենց իր հովանավորություն ներքո և պաշտպանել իրենց իրավունքները, քանզի իրենք որևէ այլ հովանավոր չունեն: Հյուպատոս Բրանդենբուրգը դիմում է Ռուսաստանի արտաքին գործերի կոլեգիա հարցումով, կարո՞ղ է ինքը նրանց վերցնել իր հովանու ներքո, որպեսզի նրանք օգտվեն այն բոլոր իրավունքներից ու արտոնություններից, ինչ ունեն ռուսահպատակները: Ստացած դրական պատասխանի հիման վրա Կազիբուտում Ռուսաստանի հովանավորություն են ստանում.

1767 թ. – 18 մարտ, 1768 թ. – 20, 1769 թ. – 19, 1771 թ. – 12, 1772 թ. – 25, 1774 թ. – 23, 1783 թ. – 21 մարտ⁶³:

Եթե Հայաստանը նվաճած Թուրքիայում ու Պարսկաստանում միայն անհատ անձնավորությունների կարողանում էին Պարսից կամ Թուրք արքունիքների հետ մերձենալով ապահովել իրենց անձնական բարեկեցությունը, ապա Ռուսական պետության վարած հովանավորչական քաղաքականությունը տարածվում էր բնակչության առավել լայն խավերի վրա, որը խթանում էր դեպի Ռուսաստան բնակչության հոսքին: Այդ առաջին հերթին վերաբերում էր Ռուսաստանի Հարավային դարպասը հանդիսացող Աստրախանին, որը Արևելքից Ռուսաստան ժամանող Հայ, բուխարացի, գիլանցի և Հնդկի վաճառականների կարևոր հավաքատեղին էր: Արտաքին առևտրի դերը պետություն համար նմանեցնելով մարդու օրգանիզմում սրտի գործունեության հետ, օտարագրված վաճառականությանը հովանավորելու և

⁶⁰ А. Юхт. Правовое положение астраханских армян в первой половине XVIII века. – ՀՀ ԳԱԱ «Տեղեկագիր (Հաս. գիտ.)», 1960, թիվ 12: В. А. Хачатурян. Административно-правовое положение астраханских армян во второй половине XVIII века. – ՀՀ ԳԱԱ «Տեղեկագիր (Հաս. գիտ.)», 1963, թիվ 12: «Դատաստանագիրք Աստրախանի հայոց», աշխատասիրություններ Կ. Գ. Պողոսյանի, Եր., 1967:

⁶¹ В. А. Уляникий. Русские консульства за границей в XVIII веке, часть 1, Москва, 1899, с. 327.

⁶² Մեր կարծիքով այդպես պետք է ընկալել հյուպատոսի "ces grecs sont pour la plus grande partie des arméniens" (այս հույները մեծ մասամբ հայեր են) արտահայտությունը, որի մոտ հարցական է դրել հրատարակիչը:

⁶³ В. А. Уляникий. Русские консульства за границей в XVIII веке, с. 328.

առևտուրը կարգավորելու բնագավառում առանձնապես մեծ էր Աստրախանի նահանգապետ Վ. Տ. Տատիշչևի (1741-1745 թթ.) դերը⁶⁴:

Ն. Գուլիտովսկի գիտարկմամբ, Աստրախանի Հայկական դաղթօջախը, որ Հնագույնն էր Ռուսաստանում, 18րդ դարի առաջին քառորդին բաղկացած էր ընդամենը երկու ծխական Համայնքից: 1705 թ. ապստամբության ժամանակ Հայերի կողմից կազմված փաստաթղթերը ստորագրել էին Միրզայի որդի Հովհաննեսը և Իսիանի որդի Պետրոսը, երկուսն էլ խոշոր վաճառականներ, որոնք և ամենայն Հայաստանում ընդամենը եղել են Հայ Համայնքների ղեկավարները⁶⁵: Հայտնի է նաև, որ Հայերը նշված ժամանակաշրջանում Աստրախանում արդեն ունեին ծխական երկու եկեղեցի:

Աստրախանում Հայ բնակչության կողմից վարչա-իրավական որոշակի կարգավիճակ ունենալու ձգտումը ուղեկցվել է իշխանությունների կողմից այս կամ այն չափով այդ Հայկանությունների բավարարում տալու ձևով: Հայոց իրավական կարգավիճակի խնդիրը ունեցել է, ըստ այդմ, դարգացման իր փուլերը և որպես այդպիսին, առաջին փուլ ընդունված է Համարել 1747-1765 թթ. ժամանակամիջոցը: Այն սկզբնավորվել է Վ. Տատիշչևի 1744 թ. ներկայացրած ընդարձակ ղեկուցագրի և այլ միջնորդությունների Հիման վրա Սենատի 1746 թ. սեպտեմբերի 17-ի որոշմամբ, որով բավարարվում էին Աստրախանի օտարազգի վաճառականության Հիմնական պահանջները՝ այդ թվում և «նրանց բոլորի Համար Հիմնել մեկ ռատհաուզ և նրանում դատավոր ընտրել...իրենց Հայեցողությունը»⁶⁶: Դրան Հետևում է նույն թվականի վերջերին Հայոց կողմից սեփական դատարանի ստեղծումը, որը Հաստատվում է 1747 թ. մարտի 31-ն նահանգային գրասենյակի կողմից: Հայկական ռատհաուզը տեղական և կենտրոնական մարմինների առաջ պատասխանատու էր պետության Հանդեպ Հայերի ունեցած ամեն տեսակ պարտավորությունների Համար⁶⁷:

Հայկական դաղթօջախի բնակչությունը բաժանվում է երեք «կուսակցությունների» կամ «Հոգվածների», որոնցից երկուսը միավորում էին վաճառականությունը, իսկ երրորդը՝ քաղաքի Հայ արհեստավորությանը,

⁶⁴ С. Блан. Татищев и практика меркантилизма, – "Франко-русские экономические связи", Москва-Париж, 1970, с.156.
⁶⁵ Н. Б. Голкова. Очерки по истории городов России конца XVII века-нач. XVIII века, М., 1982, с.179.
⁶⁶ "Գատաստանագիրք Աստրախանի Հայոց". Աշխատասիրությունը Ֆ. Գ. Պոզուսյանի, Եր., 1967, էջ ԺԸ:
⁶⁷ Նույն տեղում, էջ Ի:

մանր առևտրականներին ու վարձու աշխատողներին: Կառավարումը իրականացնում էին ընտրովի անձինք, որոնք որոշում էին Համայնքի ներքին բոլոր գործերը: Այդ սխեման գործել է 1747 թ. Հայկական ռատհաուզի ստեղծման ժամանակ, երբ յուրաքանչյուր «Հոգվածից» ընտրվել էր մեկ դատավոր⁶⁸: Դատավարությունը իրականացնելու Համար դեռևս 1747-1748 թթ. սկսվում են Աստրախանի Հայոց Դատաստանագրքի ստեղծման աշխատանքները, որոնք իրենց ավարտին են Հասնում 1765 թ.⁶⁹:

1760-ական թվականներին Աստրախանի ռուս վաճառականությունը կրկին պահանջներ է ներկայացնում իշխանություններին՝ ռուս վաճառականության Հետ Համահավասար օտարերկրացիներին Հարկման ենթարկելու մասին: Թեև այդ պահանջը, որը Հակասում էր կենտրոնական իշխանությունների վարած տնտեսական քաղաքականությանը, Հական չըջադարձ Հարձանագրեց Հայոց կարգավիճակի Հարցում, սակայն եղան որոշակի կառուցվածքային փոփոխություններ: Հայկական ռատհաուզի և թաթարական գրասենյակի փոխարեն ստեղծվեց Աստրախանահայոց ընդհանուր դատարան՝ երկու բաժանմունքներով⁷⁰: Այսպիսով, Աստրախանահայոց իրավական ու Հարկային արտոնյալ կարգավիճակը գոյություն ունեցավ մինչև 1785 թ.⁷¹:

Աստրախանահայոց ինքնավարության խնդրի Հաջորդ փուլը կապված էր 1785 թ. ընդունված քաղաքային բարեփոխումների իրականացման Հետ: Ըստ նոր կանոնադրության, Հայազգի բնակչությունը ևս այսուհետև պարտավոր էր գրանցվելու քաղաքային դասերի մեջ (վաճառական, քաղքենի և այլն): Այդ պահանջը, փաստորեն, ի չիք էր դարձնում Հայոց ունեցած Հարկային, դատական և այլ արտոնությունները: Նախկին կարգավիճակի պահպանման Համար Հայոց մեծ մասի պահանջը և Հրաժարումը ընդգրկվելու քաղաքային դասերի մեջ ավարտվեց փոխդիտումներով: 1788 թ. հուն-

⁶⁸ А. И. Юхт. Армянская колония Астрахани в первой половине XVIII века.–Автореферат канд. диссертации, Ереван, 1959, с. 19. Н. Б. Голкова. Очерки по истории городов России конца XVII века-начала XVIII века, с.179. "Գատաստանագիրք Աստրախանի Հայոց", էջ ԺԸ-ԺԹ:
⁶⁹ Դատաստանագիրք Աստրախանի Հայոց, էջ ԺԻԲ:
⁷⁰ В. А. Хачатурян. Судебно-административные органы Астраханских армян XVIII-XIX вв. и их архивные фонды,– Բանբեր Հայաստանի արխիվների, 1971, թիվ 3 (30), էջ137:
⁷¹ Դատաստանագիրք Աստրախանի Հայոց, էջ Ի, ծան. 40: В. А. Хачатурян. Судебно-административные органы..., с. 137-138.

վարի 26-ի հրամանագրով հայազգի բնակչուկները ըստ էության բաժանվեց երկու մասի. գիլգիանների մեջ ընդգրկված հարուստ վերնախավը այսուհետ պետք է ենթարկվեր քաղաքային մագիստրատի իրավասություններ, իսկ մնացածներին թույլատրվում էր պահպանել նախկին կարգավիճակը⁷²: Հայ բնակչության իրավական նման երկփեղկումը շարունակեց դժգոհություններ հարուցումը և այն փոխելու համար պայքարը: 1797 թ, փետրվարի 28-ին ստորագրված Պավել I-ի հրովարտակով հրահանգվում էր Աստրախանահայերին վերադարձնել իրենց նախկին արտոնություններն ու կարգավիճակը⁷³: Վերականգնվեց «Ասիական ընդհանուր դատարանը», իսկ Սենատի 1800 թ. նոյեմբերի 19-ի որոշմամբ ստեղծվեց «Հայկական դատարան»-ը⁷⁴:

1779 թվականին Նոր Նախիջևանի հիմնադրումից հետո ստացած արտոնությունները այդ դադարախախտի դրեցին իրավական ու տնտեսական միանգամայն այլ կարգավիճակի մեջ, քան էին Ռուսաստանի այլ քաղաքներում բնակվող ոչ միայն հայերը, այլև մնացած շատ ժողովուրդներ⁷⁵: Կարճ ժամանակում Նոր Նախիջևանի հայ բնակչուկները ևս հաղթահարելով բազում դժվարություններ և օգտվելով իշխանությունների ընձեռած հնարավորություններից, կարողացավ ստեղծել բարգավաճող տնտեսություն ու Նոր Նախիջևանը վերածել նաև մշակութային կենտրոնի, որն օրինակելի դարձավ ոչ միայն Ռուսաստանում, այլև արժանացավ ողջ Հայ դադարախախտի ուղղորդված և հոգատարությունը: Այդ դադարախախտի կազմավորումով, որը, ինչպես ասվեց, պայմանավորված էր Ռուսաստանի տնտեսական ու քաղաքական շահերով, Ռուսաստանը, զգալիորեն մեծացրեց նաև իր վարկն ու հեղինակությունը Հայ բնակչության շրջանում⁷⁶: Այն թերևս 18-րդ դարում միակ խոշոր քաղաքն էր, որը բնակեցված էր

⁷² В. А. Хачатурян. Судебно-административные органы..., с. 138.
⁷³ Армяно-русские отношения..., IV, с. 447-448.
⁷⁴ Այն գոյություն ունեցավ մինչև 1840 թ. տե՛ս Նույն տեղում, էջ 139:
⁷⁵ Վ. Բ. Բարխուդարյան, Նոր Նախիջևանի հայկական դադարի պատմություն, էջ 26-27:
⁷⁶ Բնորոշելով Եկատերինա երկրորդի վարած քաղաքականությունը հայերի նկատմամբ, 1827 թվականին կազմված տեղեկագրերից մեկում այն ձևակերպված է հետևյալ կերպ. "Великая Екатерина, дабы упредить Азиатскому торговлю и для сего наиболее привлечь в малолюдная южная свои области армяны, обладающих в Персии торговлю, пожаловала в 14 день ноября 1779 года Грамоту единоплеменникам их, вышедшим из Крыма" (АВПР, ф. СПб., Главн. арх., II-3, 1826-1829, д. 4, л. 13).

զուտ հայազգի բնակչուկներ, կառավարվում էր հայազգի անձերից կազմված քաղաքային վարչության կողմից, իսկ «Հայկական դատաստանագիրք» այնտեղ սկսել է գործածվել հիմնադրման առաջին իսկ տարիներին, երբ Հ. Արղուկյանը Աստրախանից այն բերել է Նոր Նախիջևան (1782 թ.)⁷⁷:

1787-1791 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ ռուսական զորքերի կողմից դրաված տարածքներից հավաքագրված Հայ բնակչուկների համար Նոր Նախիջևանի օրինակով որոշվեց ստեղծել Հայկական մի նոր քաղաք ևս: Նման որոշման ընդունման նախաձեռնությունը թեև այս անգամ պատկանում էր Հայ գործիչներին⁷⁸, սակայն Ռուսական արքունիքը հավանություն տալով նախաձեռնությունը, ամենայն հետևողականությամբ հետամուտ եղավ իրականություն դարձնելու այն⁷⁹: Այդ մասին է հուշում Հովսեփ Արղուկյանի 1789 թվականի հունվարի 6-ին Աստրախանից գրած նամակի հետևյալ տողերը. «Չգիտեմ Քրիստ և Իսմայէլի ևս տիրեցին, թէ՛ ոչ: Եթէ տիրեալ իցեն, մեզ վայել է փութով գալ և նոցա յօգնութիւն հասանի»: Նույն օրը գրած մեկ այլ նամակում, որն ուղղված էր Հովհաննես Խոջամալյանին, Հովսեփ Արղուկյանը նշում է. «Օղուի առնուլն և թէ զըջակայսն նոցին տիրեալ են, թէ՛ ոչ: Եւ թէ՛ դիմամ խնամակալին գիտել, զի՞նչ դիտումն ունի վասն նոցա, մեր գալն և կամ մարդ զրկելն անդ հարկավո՞ր է, թէ՛ ոչ: Ծանուցես մեզ փութով»⁸⁰: Եզրահանգման մեջ ավելի ենք համոզվում Հ. Արղուկյանի 1789 թվականի հունվարի 16-ին Հովհաննես Լազարյանին գրած նամակից. «պայժառապայլ քնեազին խոնարհութիւնս հայտնես՝ Աչաքով որ առին, եթէ տիրեալ իցեն Քրիստն և

⁷⁷ Վ. Բ. Բարխուդարյան, Նշվ. աշխ., էջ 110:
⁷⁸ Դեռևս 1785 թվականին Եկատերինա Չրդի Պ. Ս. Պոսոմկինին ուղղած մի գրությունից պարզվում է, որ Ռուսական իշխանությունները պատրաստ էին Հյուսիսային Կովկասում հավաքագրված Հայ բնակչուկներից կազմավորել հայաբնակ մեկ բնակավայր ևս (Ջ. Ա. ԱՆԱՅԱ. Армянская Колония Григориополь. Ереван, 1969, с. 28). 1823 թ. Փարիզում հրատարակած իր ուղեգրության մեջ կապրտոր գրում է. "Wladikawkas est à vingt-trois werstes de Grigoripol.." (Voyage au Mont Caucase et en Géorgie. Par M. Jules Klapproth, Tome premier, Paris, 1823, p.425).
⁷⁹ М. Г. Персиян. Армянские волонтеры в русско-турецкой войне 1787-1791 годов,- ՊՔՀ, 1979, 3, էջ 108-110: Հմմտ. М. Г. Персиян. А. В. Суворов и русско-армянские отношения в 1770-1780-ых годах, Ер., 1981, с. 37-41; Ж. А. АНАЯН, указ. соч.
⁸⁰ ՄՄ, ձև. 2949, թ. 105բ:

Իսմայէլին, հարկ է մեզ այց ելանել նոցա: Այսմ պատասխանն ինձ գրել ինդրեմ»⁸¹:

Հովսեփ Արղությանը և Ռուսահայ գաղթօջախի մյուս նշանավոր ներկայացուցիչները փորձում էին օգտվել իշխանութունների շահագրգռվածութունից և նպատավոր պայմաններ ստեղծել հայազգի բնակչութայն համար, սնտեսական ու իրավական արտոնութուններ ստանալ արքունիքից: 1789 թ. հունվարի 23-ին Հովհաննես Լազարյանին գրած նամակում Հ. Արղությանը Աստրախանից հաղորդում էր. «Թուսաց վաճառականքն տեղոյ շատ լրբացեալք են ընդդէմ մեր ազգին: Մեծամեծքն ի կողմն նոցա են, ուր դէշն»⁸² է՝ անդ և արծուիքն: Ապա մերքն՝ պարոն Միղտոմն, առավել՝ պարոն Արրահամն, պակաս տեղ չթողին ասել նոցա՝ միաբանութեամբ Հայոց և Թաթարաց՝ վասն զլավայ ընտրմանն Պօպովի: Վից գուբեռնաթին ևս, որ սոցա սասց, թէ դուք ոչ էք վէչնի պողան և այլ բանք...»: Վկայակոչված նամակում առաջին անգամ արձանագրվում է Հովսեփ Արղությանի մտադրութունը «որ եթէ Հաշտարխանցոցն և մանաւանդ թէ բոլոր Հայոց ազգին միապէս ողորմութեան պրովէկտով օրէնք և կացութիւն տացէ համեմատ նախիջևանցւոց, սիրահարութեամբ գալոց են բազումք յամենայն կողմանց, և մեք տարածանելոց եմք զայնս»⁸³: Նույն օրը իր այդ դիտարկութունը Հովսեփ Արղությանը գրում է նաև Մինաս Դիլանչյանին. «Նախիջևանցւոց պրովէկէն ի Հնդիկա Շամիրամ աղայն տպեալ և ի ներքոյ նորին վասն Ռուստաց շնորհակալութիւն գրեալ՝ հրախտագէտ լինելով, ահա զնոյն առաքեցի, որ եթէ պայծառափայլ քնեազն յայդր իցէ, ի դիմաց իմոց կարող էք մատուցանել, զի զիտացէ զմերս Հայոց, որ եթէ սոցա (իմա՝ աստրախանցիներին Պ. Չ.) ևս և ամենայն ազգին Հայոց այնպիսի պրովէկէլ շնորհեսցեն, յամենայն կողմանց գալոց են աստ»⁸⁴:

Իր «Օրագրութայն» մեջ Հ. Արղությանը ավելի է պարզաբանում ռազմաճակատ մեկնելու իր քայլը. «Ի մայիսիս 20 [1789թ.] մեծափառ հանդիսիւ մտաք ի նախիջևան. ամենաքեան խնդրեցին ի մէջը գնալ ի մեծ բանակն՝ առ պայծառափայլ քնեազն՝ ինչամակալն ազգին մերոյ, որ յայնժամ կայր ընդդէմ Օսմանցւոցն ու առեալ զՂաւշան, զԱղբիւրման և զայլս, շրջապատեալ էր զմեծ ամրոցն Պէնդէրու: Յանձն առեալ մեր զխնդիր հա-

⁸¹ Նույն տեղում:
⁸² Բնագրում այդպես է, իմա՝ լէշն:
⁸³ ՄՄ, ձեռ. 2949, թ. 108ա-108բ:
⁸⁴ Նույն տեղում, թ. 109ա:

սարակութեանն նախիջևանու, օգոստոսի 21 ելեալ ի նախիջևանու ընդ երկրց դէֆուդաթաց, ...դիմեցաք առ պայծառափայլ քնեազն՝ ի Քիչնով հոկտեմբեր ամսոյ ի 10»⁸⁵:

Արղեն 1789 թվականի նոյեմբերի 7-ի իշխան Գ. Ա. Պոսոյովինի կարգադրութայնը նորանվաճ տարածքների հայազգի բնակչության հովվութունը մտցվում է Հ. Արղությանի թեմի մեջ և հրամայվում «այստեղ գտնվող մզկիթներից մեկը վերածել հայկական դավանութայն եկեղեցու»⁸⁶, իսկ 1790 թ. հունիսի 17-ին մայր Ռեմարին տրված հրամանով հանձնարարվում է նախապատրաստական աշխատանքներ տանել Հայերին Դուբոսարում հավաքագրելու և բնակեցնելու ուղղութայնը⁸⁷: Հ. Արղությանը ձեռնամուխ է լինում պատերազմական գործողութուններից տուժած հայ բնակչութայնը օգնութուն կազմակերպելու գործին: Նա շրջաբերականներով կոչ է անում օժանդակութուն ցուցաբերել մերձակա վայրերի (Բոստոն, Ռոման, Սըրչով և այլն) հայ բնակչութայնը՝ նկարագրելով այն վիճակը, որի մեջ հայտնվել էին նրանք պատերազմական գործողութունների ժամանակ⁸⁸:

⁸⁵ Տե՛ս ՄՄ, ձեռ. 9647, թ. 4բ: «Կոռնիկ Հայոց աշխարհի», 1863, թիվ 6, էջ 428: Մ. Գ. Нерсисян, Армяно-русские отношения..., кн. 1, с. 73: Միայն 1789 թ. նոյեմբերի 3ին գեներալ մայր Վ. Ա. Պոպովի գրութայնը Հ. Արղությանը, որ արղեն գտնվում էր Քիչնովում, ծանուցվում է Գ. Ա. Պոսոյովինի ցանկութայն մասին՝ հրավիրելու նրան գործող բանակ, որի գորակայանը այդ ժամանակ գտնվում էր Բենդերում:
⁸⁶ «Собрание актов, относящихся к обозрению истории армянского народа», т. I, М., 1833, с. 44. «Армяно-русские отношения, IV, с. 380-381.
⁸⁷ Ж. Анаян. Указ. соч., с. 36-37.

⁸⁸ «...դիտութիւն լիցի հողեւոր որդւոցդ մերոց, զի ըստ աստուածային անքննելի դատաստանացն, ի բարձմանէ թաղաւորութեան մերոյ մինչև ցայժմ տարաբառ դատաստանացն, ի բարձմանէ թաղաւորութեան մերոյ մինչև ցայժմ տարաբառ գրեկեալ նաւ, աստ և անդ տարուբերի և վարի գանազան մըրկաւ խոսովութեան ծովու, այսինքն՝ ի պէսպէս բռնութեան իշխանութեան, վասն որոյ երբեմն ...Արդ, մինչ զՔիչին առին և մեք գնացեալ գժողովուրդսն Հանաք, տեսանելով զպղբատո նոցա, մարմոքէաք և ցաւեցաք, ապա այժմ մոռացաք զնոսա, զսղբ ժամ սրոյ ճարակ հտուն այնքան բազմութիւնն Թուրքաց, մինչ ի հինգ ժամ սրոյ ճարակ հտուն այնքան բազմութիւնն Թուրքաց, մինչ ցերեսուն հազար, իսկ գերեցին ի նոցանէ ութն հազար, ինչքն նոցա աւար առին, և իսկ ի յազգէ մերմէ անգիտութեամբ սպանեալք էին մինչ քառասուն անձինս և ի (30) աղայք և աշկիունք գերեալք, սոյնպէս և ի Մալգաւանացն: Յետ առման քաղաքին զբոլոր քրիստոնեայն հանեալ էին ի քաղաքէն և չորս օր պահեալ ի բանակի զօրացն և ի մէջ չորից աւուրցն զբոլոր տունս մեր թալանեալ և զծածկեալս հանեալ, զամենայն հարստութիւն նոցա և զուրբ եկեղեցիներ

1791 թ. հունվարին Գ. Ա. Պոսյոմկինին ուղղված գրությամբ Հ. Արզումանյանը ներկայացնելով Հայ բնակչության վիճակը ոչ միայն լրացուցիչ և անվերադարձ օգնություն է խնդրում, այլև առաջարկում է նրանց համար ստեղծվելիք քաղաքը անվանել Գրիգորիոսով՝ Հայոց Սուրբ Գրիգոր Լուսավորչի անունով⁸⁹: 1791 թ. սեպտեմբերին գրված զեկուցադրերից մեկում արձանագրված է, որ Մ. Ի. Կուտուզովը հրամայել էր Իզմայիլից Դու-

րոսար փոխադրված հայերին «սեղավորել Բենդերում՝ ընդունելով նրանց հատուկ հովանավորությունը»⁹⁰:

1791 թվականին արբուսիքից արտոնությունների ակնկալությամբ խնդրադրեր ու նախագծեր էին պատրաստվել նաև Աստրախանի Հայ համայնքի կարիքների համար: Նույն թվականի հուլիսին Պետերբուրգից աստրախանահայերին գրած նամակում Հ. Արզումանյանը ծանուցում էր, թէ «...դրուր խնդիրքն մեր քանիցս ի ձեռն գերազնիւ սիրելոյն իմոյ Հոգոյ և ձեր հասարակացը բարերարի աղայ Յովհաննէսին մատուցի ընտրանօք, որոյ ոչ դոյր պատճառ ինչ արգելման, այլ այս միայն եղև այժմ պատճառ յամենալոյ, որ յանկարծ հաշտութիւն խօսեցան ամենայն թագաւորք ընդ թուրքաց, հարկադրեալ եղև պայծառափայլ քննադն շուտով գնալ ի յենազ և զհաշտութեան զաշինն դնել ընդ վէզիրին, ուստի մեր բանն մնաց: Մեզ հրամայեաց անդէն դառնալ ի յենազ և խոստացաւ միամտիլ, որ իբր յես հաշտութեանն դամենայն խնդիր ազգի մերոյ կատարելոց է: Ուստի գրեմ ձեզ առ այս՝ միամիտ լինիլ և փոքր ինչ ևս համբերել»⁹¹:

1791 թվականի նոյեմբերի 20-ին Յաչից Հովհաննես Լազարյանին գրած Հովսեփ Արղությանի նամակից պարզվում է, որ Գ.Ա. Պոսյոմկինի անակնկալ մահից (1791 թ. հոկտեմբեր) հետո⁹² ռազմաճակատ ժամանած Ա. Ա. Բեզբրոդկոն սիրով է ընդունել Արղությանին «և յուսադրեաց, հրամայեց մեզ գամենայն խնդիր մեր պատրաստել յանուն թագուհոյն, որպէս թէ ինքն յանձն է առեալ կատարել դամենայն խնդիրս մեր: Մեք աստ եղևալ տառապելոց զհարկաւոր խնդիրսն նախ պատրաստել հտուք, իսկ ինքն հրամայեաց նախնիքանու և Հաշտարխանու խնդիրն ևս տալ, որ ի միասին առ թագուհին ուղևորեսցէ: Ահա պատրաստ եմ մատուցանել և յետ այնորիկ դամենայնից կօպիէքն առ քեզ առաքեսցից»⁹³ Շարունակություն մեջ նշվում է, թե «Աստ եղևալ ժողովուրդսն ըստ մեծի մասին տարաք ի Դուսասար, մնացեալն ևս այսօր-վազն անցուցանելոց են, որք են տուևք

մերկացուցեալ ի բոլոր զարդուցն... Յետ չորից աւուրցն մերկացուցեալ զբոլոր ժողովուրդսն մեր, ինչդրանօք և աշխատութեամբ մերաղենայ պոլովնիկ Եկիմ Վասիլիչ Սաստատովն, անդէն դարձուցեալ են ի Յիսմայիլ, ժողովուրդքն եկեալ գտեալ են գտուն իրեանց դատարկ և եկեղեցին մերի: Լեւելով մեր գնացաք անդ... ի սոցանէ Լ (30) որր տղայս առեալ բերի աստ ի Յեաշ, ես կերակրիմ և զգեցուցանեմ առաքել զնոսա ուրեմն զպրօցին մերոյ ի նախնիքան սուրբ Խաչ վանքն լինիլ հիմն զպրօցի մերոյ: Երրորդ՝ գերեաց Գճ (400) դուռուշի հին շոր առեալ, մերկ անձանցն բաժանեցաք: Չորրորդ՝ երեք հազար հոխայ ալիքս առեալ, բաժանեցի և բաւական խարջի ևս հտու, և մեր Կարապետ վարդապետն թողի՝ ըստ մեր կարեացն՝ ամենայնից տալ: Ապա այսու ոչ լինի նոցա բաւական օգնութիւն...» (ՄՄ, ձեռ. 2949, թ. 211ր-213ա, 1791 թ. փետրվարի 10, Ցաշ):

⁸⁹ «План городу благоволите пожаловать теперь во слану имяни ангела Вашего и просветителя нашего Григория Великия Армении». — «Армяно-русские отношения...», IV, с. 386-387. Ж. Апанян, Указ. соч., с. 39. Ուսումնասիրողները Հակասություն են տեսնում քաղաքի անվանման հարցում եղած վկայությունների մեջ, որ պայմանավորված է Գ. Ա. Պոսյոմկինի և Գրիգոր Լուսավորչի անունների նույնությունը և Գրիգոր Լուսավորչին որպես Գ. Պոսյոմկինի հովանավոր հեղինակ ներկայացնելու հետևանքով: Հմմտ. նույն տեղում, էջ 42-43: 1792 թ. ապրիլի 16ին Հովսեփ Արղությանը միանշանակ գրում է. «Առացաք ուբազ ի նորին կայսերական մեծութենէն, որ ի ձեռն գուբեռնաթին գրեալ էր վասն ժողովրդեանն մերոյ և հրամայեալ տասն վերստ ցած ի քաղաքէս (իմա՝ Դուպասարից — Գ. Չ.) դէպ ի կողմն Բէնդէրու ի վերայ նէտորայ գետոյն յանուն սրբոյն Գրիգորի քաղաք շինել մերով օգնակամութեամբ և անուամբ զայն Գրիգորուսով և աղքատացն մերոց տալ զբաւականութիւն...» (ՄՄ, ԿԳ, թղ. թ. 6, վավ. 28, բնագիր, 1792 թ. ապրիլի 16): 1792 թ. նոյեմբերի 17ին Աստրախանահայերին ուղղված շքեքերականում Հ. Արղությանը նկարագրում է Գրիգորուսովի հիմնադրման արարողությունը. «և օծաք սրբալոյս մեռնիւ զվեց քարինս. մինն՝ յանուն թագուհոյն, որում կնքաւոր էր մեր գուբեռնաթի վասիլի Վասիլիչ Կախովսկին, զոր եղաք ի տեղի աւազ եկեղեցոյն: Երկրորդն յանուն Լուսաւորչին, որպէս պահապանի քաղաքին, որոյ անունն կրէ նոյն քաղաքն, որում կնքաւոր էր ենարալ պոտուշիկ Տօյստովն, զոր եղաք ի միջակէտ քաղաքին, իսկ մնացեալ չորս քարերն յանուն չորից աւետարանչացն...» (ՄՄ, ձեռ. 2951, թ. 1ա-2բ): Տարակուսանք է հարուցում, ուստի ժ. Անանյանի այն պնդումը, թե «Ըստ երևույթին, քաղաքը Գրիգորիուսովիս կոչվել է ի պատիվ ուսւ գրապար Գ. Ա. Պոսյոմկինի» (Հայկական սովետական հանրագիտարան, հ. 3, էջ 224-225): Նման պնդում հանդիպում է նաև ուսւ պատմագիտական աշխատություններում, առանց որևէ հղումների (Մ. Լ. Кессельбергнер, նշվ. աշխ., էջ 268):

⁹⁰ М. Г. Нерсисян, Армянские волонтеры..., с. 110.
⁹¹ ՄՄ, ձեռ. 2949, թ. 239բ:
⁹² Գ. Ա. Պոսյոմկինի անակնկալ մահը մեծ կորուստ էր նաև Հ. Արղությանի համար, որի միջոցով վերջինս կարողանում էր Հայաստանում ձեռնարկումներ իրականացնել ինչպես արբուսիքում, այնպես էլ ուսսահայ գաղթօջախներում: Այդ է պատճառը, որ 1793 թ. մայիսի 17-ին գրած նամակում Հ. Արղությանը դատարարներին գրում է. «Կի՛նչ արաբից, ու՛մ խնդրեսցից, մի՛թէ այժմ քննազ կայ» (ՄՄ, ԿԳ, թղթ. 6, վավ. 36, բնագիր):
⁹³ Նույն տեղում, թ. 249բ:

է՛ձժժԴ (714) և անձինք՝ չորս հազար»։ Այդ նամակից մեկ շաբաթ անց՝ նոյեմբերի 27-ին նա նամակներ է հղում Աստրախանի, Ղզլարի, Մոզդոկի և Սարաֆանի հայ համայնքներին և առաջարկում տեղերից ևս խնդրագրեր կազմել այն պահանջներով ու բովանդակությամբ, որ ինքը՝ Հ. Արղուժյանը, արդեն ներկայացրել է բանակ ժամանած Բեզբորոզկոյին։

1. «Վասն նախիջևանցւոցն, որք պարտական են թագաւորին 24000 թուման՝ շնորհել զայն, և դետինն, որ փոքր է նոցա, ի մերձակայ տեղիցն ևս տալ նոցա բաւականութիւն՝ ի նախիջևանու մինչ ի թագանոոգ։

2. Հաշտարխանցւոցդ և ղզլարցւոց, մոզդոկեցւոց և այլոց ամենայնից Հայոց միատեսակ պրովիեք տալ, որք ամենեքեան լինիցին միօրինակ՝ հանգոյն նախիջևանու՝ անխառն յամենայն ազգաց։

3. Վասն այս նոր ժողովրդեանն՝ Իսմայելու, Քիլու, Աղքիրմանու, Բենդերու և այլոց, զորս բերի և ի Դուպասար բնակեցուցիւ..., որ են յոթ հարիւր տուն և չորս հազար հոգիք, վասն սոցա քաղաքատեղ՝ յանուն Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ, դետին և այլ ամենայն բնակութիւն՝ հանգոյն նախիջևանու։ Որոց ամենայնից յաղազաւ քննազն զմեզ միամտեցուցեալ էր կատարել, այժմ պայծառ գրաֆն մեծաւ յօժարութեամբ յանձն էառ գործուն կատարել»։

1792 թ. փետրվարի 23-ին հետևում է Եկատերինա 2-րդի հրահանգը Եկատերինոսլավի նահանգապետ Վ. Վ. Կախովսկուն, ինչպես Հայերի նկատմամբ վարելիք քաղաքականության ուղղվածության, այնպես էլ Գրիգորիոսով քաղաքի հիմնադրման մասին⁹⁴։ Ակնարկելով այս հրահանգը, Հ. Արղուժյանը Գրիգոր վարդապետին 1792 թ. ապրիլի 16-ին գրած նամակում նշում է. «Տեղոյս (իմա՝ Գրիգորուպոլի – Պ. Չ.) ժողովուրդքն առ Հասարակ ցնծութեամբ կան, զի վասն աղքատաց տուն շինեն, ձի և որպէս յառաջագոյն խնդրեալ եմք՝ իւրաքանչիւր անձին 10 ուսպլի փող տան, որ ձի և արապայ առնուն և կառաւարեն զտունս իւրեանց, այրի կանանց ծնած կով տան, պահել զինքեանս նովաւ։ Եկեղեցիք, առաջնորդարան, խանութք,

⁹⁴ Ուշագրավ այդ վավերագիրը հրատարակվել է նաև հայերեն, Տե՛ս «Տետրակ համառոտ անուանեալ Դուռն ողորմութեան», Նոր նախիջևան, 1792, էջ 34: Վավերագրի այլ թարգմանություն է գտնվում Մաշտոցի անվան Մատենադարանում գտնվող Հ. Արղուժյանի ձեռագրերից մեկում, որտեղ կա նաև երկտող ուղղված թագուհու վարդապետին թարգմանությունը սրբագրելու և Արղուժյանին տպագրության համար ներկայացնելու մասին (Տե՛ս ՄՄ, ձեռ. 3802, թ. 65ա)։ Ռուսերեն ընդգրկում տե՛ս «Армяно-русские отношения...», IV, с. 395.

քարվասարայ, դայֆախանայ, հիւանդանոց, դպրատուն և փուռն. բոլորն թագաւորական արդեամբ շինեն և մեր քաղաքին շնորհեն։ ...Սուլխան դիւանն և Գորիչն գնացին ի Կրմէնչուկ առողջութեամբ... Յուսամ, որ մեր բանն այսուհետև յաջողի, թագուհին մեծ շնորհ ունի ի վերայ մեր։ Յետոյ գրեցից»⁹⁵։

Հ. Արղուժյանը, իրոք, անմիջապես դիմում է գրաֆ Բեզբորոզկոյին՝ խոստացված միջնորդությունը ի կատար ածելու խնդրանքով⁹⁶, իսկ Նովոռոսիայի գեներալ-նահանգապետ Պ. Ա. Զուբովին ուղղած նամակով առաջարկում ձեռնամուկ լինել «ժողովրդական կառավարման համար անհրաժեշտ Նորին Կայսերական Մեծութեան» մի շաբթ օրենքների հայերեն թարգմանությունը, խորհուրդ տալիս թարգմանության գործը հանձնարարել Հովհաննես Լազարյանին, Հովակիմ Լազարյանին և Զաքար Միրզախանովին՝ ստանձնելով թարգմանությունից հետո դրանց տպագրությունը ռուսերեն և հայերեն լեզուներով Նոր նախիջևանի իր տպարանում⁹⁷։

Նույն թվականի նոյեմբերին Հովսեփ Արղուժյանը փորձում է օգտագործել պարզեցատրման առիթով իր Պետերբուրգ ժամանելու բարեպատեն առիթը և կազմակերպել Ռուսահայ գաղթօջախների պատվիրակություններին համատեղ դիմում արքունիքին՝ բավարարում տալու միասնական և համանաման արտոնություններ ստանալու պահանջներին⁹⁸։ 1792 թ. նոյեմբերի

⁹⁵ ՄՄ, ԿԴ, թղթ. 6, վավ. 28, քնագիր։ Ուշագրավ է, որ նամակի վերջում որպես գրման վայր նշված է «ի Գրիգորիուպոլ նոր քաղաք Հայոց»։

⁹⁶ «Вашему сиятельству известно, астраханские, кизлярские и моzdокские армяне испрашивают особых привилегий, а нахичеванские просят о не взискиванні с них данных им казны на первоначальное обзаведение 243162 руб. 58 коп. и обмене им земли лежащей по ту сторону Дона, на лежащую на нахичеванской стороне. Все о обмене коей покойный исхолодотайствовать армяном, о чем известны... В. С. Попов и... С. Л. Лашкарев. Я подношу я сего на благосклонное В. С. разсмоотрение прошение армян имсующих поселенными быть в Дуьосарах, состоящее в тринадцати пунктах на Высочайшее имя, осмеливаюсь просить В. С. – как прикажете о вышеписанных прошениях астраханских, кизлярских, моzdокских и нахичеванских армян вместе ли с сим или особо оныя представить (АВГР, ф. СРА, оп. 100/III, 1774–1800, д. 462, л. 67, подлинник).

⁹⁷ Армяно-русские отношения..., IV, с. 396.

⁹⁸ «Գրեցաք ի Ղզլար առ ազնիւ պարոն Յարութիւնն մաշտոցի Գրիգորեան, առ ազնիւ պարոն Նուրիճանն, առ ազնիւ պարոն Գուրգէն Էստատովն, առ դէֆուրթաթ պարոն Մարկոսն և առ գլավայ պարոն Անտոնն, զի եթէ կամեսցին և հաճեսցին, զպարոն Նուրիճանն առաքեսցեն ի Պետրապօլ, վասն Հասարակութեան ինքեանց, որովհետև այս իմ յետն դնալս է...ահա այս է ժամն կատարման ամենայն խնդրանաց, որպէս և յայս միտ ի նախիջևանայ երկու դեֆութաթ

17ին նախիջևանից Աստրախան՝ Մկրտում Գալստյանին ուղղած նամակում Հ. Արղությանը գրում է. «Նախիջևանցիքն ևս աղաչեն փութով գնալ և զերծանիլ բանն այս: Երկու դէֆուլթաթ ևս ընտրեալ են ընդ իս տանիլ. մինն պարոն Յովհաննեսն է: Սոցա բանն լինելոց է, որպէս և աղայ Յովհաննէսն գրէ, դժուարն ձեր բանն է... Պատօն Ալեքսանդրիչ Զուպովն յոյս տայ, որ ի գնալն իմ անդ, նա յանձն է առնելոց և կատարելոց զամենայն խնդիրս իմ: Ի դեկտեմբերի 15 պարտիք այտի փօշտով ուղևորել»: Մեկ այլ նամակ ևս Արղությանը գրում է Աստրախանի նահանգապետին և ուղարկում Մկրտում Գալստյանին, որ նա «քանի մի երևելի արամք» խոսի նահանգապետի հետ՝ ճշտելու նրա դիրքորոշումը: Դուրսացնելու համար նահանգապետի հետ բանակցութիւնները, Հ. Արղությանը ուղարկում է նաև Նախիջևանին տրված հրովարտակի պատճեն, Գրիգորիոսյանի տրվելիք «Պրովելեկի» խնդրագիրը, որ Կախովսկու համաձայնութեամբ ուղարկվել էր թագուհուն, ու նաև Աստրախանահայերի համար Հ. Արղությանի նախորդ խնդրագիրը Գ. Ա. Պոտոմիլինին, որ խոստացել էր կատարել, իսկ այնուհետև գրաֆ Բեզբրոդկուին, որ այն տարել էր թագուհուն: Այն «յայտնի է թագուհոյն և իմոյ գնալն մնայ», գրում է Հ. Արղությանը նույն նամակում: Հ. Արղությանը կարծում էր, թե եթե Աստրախանի նահանգապետը ևս կամենա միավորել իր կամքը և զրել Զուբովին, գրաֆին և կամ Պոպովին, ապա «յոյժ հեշտութեամբ լինի բանի կատարումն»: Աստրախանի նահանգապետին գրած նամակի բովանդակութիւնը այսպես է համառոտում նամակի հեղինակ Հ. Արղությանը. «Հասարակութիւնն մեր զխնդիրս իւրեանց, զոր ի ձեռն մեր լուսահոգի քնեալին էին մատուցեալ և նա յանձն էր առնալ կատարելն և այժմ ի ձեռս գրաֆին է, առաքելի այդք, վասն վերահասութեան ձերոյ, խնդրեմ զհաճութիւն ձեր գրել, ուր պատկանի, որ ժողովուրդքն միաւորեալ ընդ միմեանս՝ միով օրինօք ծառայեցեն կայսերութեանս»: Այնուհետև Հ. Արղությանը իր լավատեսութիւնը ավարտում է հետևյալ ձևով. «Այս իմ յետին գնալս է անդ (իմա՝ ՄՊք), մեծամեծքն ամենեքեան՝ բարեկամ և աղայ Յովհաննէսն այժմ ի սրտէ հետևել, ոչ ունիմ երկրայութիւն չկատարելոյ, այլ եթէ այժմ չկատարի, յաւիտեան յոյս ոչ գոյ:... Աշխատանքն իմ թագուհին գիտէ յատկապէս, որ ոչ եթէ միայն

տանկոց եմ ընդ իս: Ի Հաշտարխան ևս զրեցի, որ հաւանութեամբ ինքեանց և մերս կամեցողութեան պարոն Մկրտումն հանդերձ մի ընկերաւ առաքեսցէն» (ՄՄ, ձեռ. 2951, թ. 8ա):

վասն իմ ազգի երջանկութեանն, այլ և իւր Կայսերական մեծութեան թագաւորութեանն է շահաւէտութիւն»⁹⁹:

1793 թ. հունվարի 9-ին Հ. Արղությանը Պետերբուրգում ընդունվում է կայսրուհու, հունվարի 16-ին՝ Պավել Պետրովիչ թագաժառանգի, իսկ հունվարի 18-ին, այն է՝ դրառումը կատարելու օրը, գնում է «առ ծայրագոյն իշխանսն»¹⁰⁰: Մեկ ամիս անց, 1793 թ. փետրվարի 17-ին ու 21-ին, Պետերբուրգից Հ. Արղությանը Աստրախան և Ղալաբ գրած նամակներով արդեն հուսադրում էր, թե «...ողորմած թագուհին Գրիգորուսյանց խնդիրն ընկալեալ հրամայեալ է պրովելեկի դրել նման Նախիջևանցոց: Յետ այտրիկ Հաշտարխանու և կողմանցի խնդիրքն եմ տալոց. յուսամ լինիլ ուրախութիւն մեծ վերջն»¹⁰¹:

Ռուսական արքունիքը, սակայն, այս անգամ ևս չբավարարեց ոչ միայն Աստրախանցիներին, այլև Նորնախիջևանցիներին խնդրագրերը և թողնեց անպատասխան: Նոր Նախիջևանի պատվիրակները, որոնք Հ. Արղությանի առաջարկով ժամանել էին Պետերբուրգ, շարունակում էին մնալ և գտնվում էին այնտեղ դեռևս 1793 թ. աշնանը ևս: Հ. Արղությանը, որ արդեն գնացել էր Գրիգորիոսյանի¹⁰², ստիպված է լինում այնտեղից նույն թվականի սեպտեմբերի 12-ին կրկին դիմել Պ. Ա. Զուբովի միջնորդութեամբ, հիշեցնելով Նորնախիջևանցիներին կրած կորուստներն ու վնասները Ղրիմից տեղափոխվելու ժամանակ և նրանց վրա գոյացած պետական պարտքերը զիջելու անհրաժեշտութիւնը, որոնք գոյացել են «Հայի, սերմացուի և անասունների համար, որոնցից շատ քիչ են օգտվել՝ 178 հազար ուրբլի»,

⁹⁹ Նույն տեղում, թ. 6ա-6բ:

¹⁰⁰ Նույն տեղում, թ. 9բ:

¹⁰¹ Նույն տեղում, թ. 13ա:

¹⁰² Գրիգորիոսյանցիների ստացած կարգավիճակի մասին է վկայում ուշագրավ մի վավերագիր, որ Հայաստանից է Ժ. Անանյանը: Պարզվում է, որ Հովսեփ Արղությանի Գրիգորիոսյանցի դիմումը գտնվելու ընթացքում կնքվել է մի պայմանագիր Գրիգորիոսյանի համայնքի ղեկավար Պողոս Թումանյանի և Հայ համայնքի ստացած տարածքում եղած կազակների ներկայացուցիչ Պետրո Սողոմյովի միջև (1793 թ. հոկտեմբերի 13, Դուբոսար), որով կազակները խնդրում են թույլատրել իրենց մնալու իրենց նախկին բնակավայր Չերնիում՝ պայմանով, որ 1. հողային տիրույթներից օգտվելու համար նրանք կվճարեն որոշակի գումար Գրիգորիոսյանի համայնքին, 2. կենթարկվեն Գրիգորիոսյանի գատարանի իրավասութեանն ու որոշումներին և 3. կկատարեն որոշակի պարհակների համայնքի համար: (տե՛ս Ж. А. Ананян. К вопросу о русско-украинском населении "Очаковской" области и договор украинцев с армянами в 1793 г.- "Исторические связи и дружба украинского и армянского народов", выпуск III, Ер., 1971, с. 276-281).

խնդրում է գեկուցել կայսրուհուն, չեղյալ հայտարարելու այդ պարտքը և կրկին ընդգծում, թե «զրանով կպարտադրեք երկու սեռի 30 հազար երախտագետ շնչի աղօթիկ Աստուծու Ձեր համար...»¹⁰³:

Նոր-նախիջանցիների պահանջներին համանման պահանջներ արքունիքին առաջադրել էին նաև Ղրիմից դուրս բերված հույն ազգաբնակիչները և Ռուսաստանում բնակություն հաստատած մի շարք այլ ժողովուրդներ: Հարցի քննարկումը, այնուամենայնիվ, կայացավ, և սենատին ուղղված կայսրուհու հրամանագրի տեսքով հրապարակվեց 1794 թ. օգոստոսի 28-ին¹⁰⁴: Հրամանագրով չեղյալ էր համարվում ինչպես Նոր Նախիջևանի բնակչության 178 094 ուսուցում, այլև հույների ու վրացիների 412 362 ու պարտքը: Նույն հրամանագրով կարգադրվում էր նոր հողահատվածներ հատկացնել Նոր Նախիջևանի բնակչությանը որպես փոխհատուցում Դոնի գործառնականացած նրանց հողամասերի դիմաց և առաջնորդվել 1793 թ. մայիսի 27-ի իր հրամանագրով: Հրամանագրի առանձին կետով խոստում էր տրվում առանձին անդրադառնալ Գրիգորիոպոլի բնակչությանը արտոնություններ շնորհելու խնդրին: Եվ իրոք, 1794 թ. հոկտեմբերի 12ին հրապարակվում է Եկատերինա 2-րդի հրամանագրերը ուղղված Պ. Ա. Զուբովին, որտեղ թվարկվում են այն առանձնաշնորհումները, որոնք ըստ Զուբովի գեկուցագրի տրվում են Գրիգորիոպոլի հայ բնակչությանը¹⁰⁵:

Այս առանձնաշնորհումները, սակայն, կրում էին մասնավոր բնույթ, տրվում էին առանձին գաղթօջախների, որոնք սակայն չէին լուծում Ռուսաստանի հայազգի բնակչությանը միասնակ կարգավիճակի բերելու հայ գործիչների մտադրությունը: Այդ է պատճառը, որ Պ. Ա. Զուբովին ուղղած իր նամակում Հ. Արղունյանը 1794 թ. նոյեմբերի 28-ին¹⁰⁶ էլք վարանում գրելու, թե «Համարձակվում եմ Ձեր հովանավորությունը հանձնել նաև աստրախանցի հայերին և Տավրիայում բնակվողներին, որոնց խնդրանք»

¹⁰³ Երեսուն հազար շուճըր առաջին հայացքից տրամաբանական էր ենթադրել որպես միայն Նոր Նախիջևանի բնակչության քանակ, սակայն քանի որ այդ թիվը իրականում նշանակում է Ռուսաստանի հայ բնակչության ընդհանուր քանակը (Армяно-русские отношения..., IV, с. 399), ուստի այդ իր հերթին մասնացուցում է, որ մեկ անգամ ևս Հ. Արղունյանի կողմից չեղարկվում է Ռուսաստանի բոլոր հայ գաղթավայրերի բնակչության շահերի միասնությունը և այն ներկայացվում որպես մեկ ամբողջություն:

¹⁰⁴ ПСЗРН, т. XXIII, с. 552-553. Армяно-русские отношения..., IV, с. 404-405.

¹⁰⁵ Собрание актов..., I, с. 190-192. Армяно-русские отношения..., IV, с. 405-406.

¹⁰⁶ Այդ ժամանակ նա գտնվում էր Աստրախանում:

ները մնացել են չվճարված»¹⁰⁷: Այնուհետև ծանուցում է, թե ինքը արդեն խոստացել է աստրախանահայերին, առաջիկայում ներկայացնել նրանց առաջարկները, ուստի և այդ խնդրագրերը այժմ պատրաստվում են¹⁰⁸:

Հաջորդ երկու տարիներին ևս չի թուլանում առանձնաշնորհումների ստացման համար բանակցությունների վարումը¹⁰⁹, չնայած այն հանգամանքին, որ 1795-1796 թթ. հայ գործիչների ուշադրությունը սևեղված էր հիմնականում Այսրկովկասում տեղի ունեցող ռազմաքաղաքական իրադարձություններին¹¹⁰ մեկ կողմից և մյուս կողմից այն անհույսության, որը գալիս էր արքունիքի ոչ բարեհաճ վերաբերմունքից Աստրախանի հայ վաճառականության նկատմամբ: Վերջինս պայմանավորված էր Աստրախանում տեղի հայ և ուրու վաճառականության միջև ընթացող սուր մրցակցությունը¹¹¹:

1796 թ. նոյեմբերի 6ին Եկատերինա 2-րդի մահից հետո գահ բարձրացած Պավել Առաջինը չհասպաղեց դրսևորել իր անհամաձայնությունը և երկրի ներքին ու արտաքին նախորդ քաղաքականության մի շարք հարցերում վերանայել զիրքորոշումը, այդ թվում նաև Պարսկաստանի դեմ Այսրկովկասում ընթացող պատերազմական գործողությունների նկատմամբ: Նրա դահակալումը նոր հույսեր արթնացրեց նաև Աստրախանահայերի

¹⁰⁷ Армяно-русские отношения..., IV, с. 408.

¹⁰⁸ Նույն տեղում:

¹⁰⁹ Հայտնի է միայն, որ 1796 թ. մայիսի 8-ին արդեն պատրաստի խնդրագիրը ներկայացվել էր արքունիք՝ Պ. Ա. Զուբովին, սակայն այն ընթացք էլք ստացել:

¹¹⁰ «Новае ասացեալ ի Յովսէփ պակազգեաց սրբազան արքեպիսկոպոսէ Հիւսիսային կողմունս եղեալ ամենայն ազգիս Հայոց ի 1796 թուոյ ասլրիլի 5 ի Ղզլար, ի վերափորման ամենասուրբ Աստուածածնայ յեկեղեցւոջն Հայոց, ի ներկայութեան բարձր գերագահացութեան ենարալ անչէֆի և զանազան նշանակիլ կաւալեր Իվան Վասիլիչ Գուզովիչին և այլ զօրապետաց, ի ժամանակի չուելոյն զօրացն Իւրուհոյ կայսերական Մեծութեան ի Ղզլարու ի Պարս ընդ կաւալարութեամբ պայծառափայլ զբաֆ Վալէրիան Ալէքսանդրովիչ Զուբովին: Տպեալ ի 1796 թուոյ ի մայիսի 5, ի տպ. Նորին բարձր սրբազնութեանն ի յԱթգարխան» (Հմմտ. Հայ հնատիպ գրքի մատենագիտական ցուցակ, 1512-1800, Երևան, 1963, էջ 219-220: Ն. Ա. Ուկալյան, Ք. Ա. Կորկոտյան, Ա. Մ. Սավալյան, Հայ գիրքը 1512-1800 թվականներին, Եր., 1988, էջ 727):

¹¹¹ 1796 թ. հունիսի 20ին Աստրախանից թագուհուն ուղղած նամակում Հովսեփ Արղունյանը շնորհակալ լինելով 1794 թ. հոկտեմբերի 12ին Գրիգորիոպոլի մասին օրենքի ստորագրման համար, միաժամանակ հայտնում է, որ հայ բնակչությունը խնդրում է Նոր Նախիջևանին տրված արտոնությունները շնորհել նաև Գրիգորիոպոլին՝ առ այդ բացի հղված երկու պատվիրակներից Պետրուրդ ուղարկելով նաև փոխգնդապետ, Արարատյան դեսպան Ստեփան Դավթյանին: ՀԱԱ, ֆ. 52, ցուցակ 1, գործ 12, թ. 4-5:

մոտ՝ լուծում տալու առանձնաշնորհումների խնդրին: 1797 թ. հունվար ամսին արդեն Աստրախանի հայ հասարակութային ներկայացուցիչները Մաթեոս Խայաֆոյի և Գասպար Մուրադովի ստորագրությամբ Ա. Բ. Կուրակինին ներկայացվում է գրավոր նոր դիմում, որտեղ բացատրվում է այն վիճակի անհեթեթությունը, որի մեջ ակամա հայտնվել է Աստրախանի հայ վաճառականության մեկ մասը¹¹²: Եվ իրոք, վերջին այս դիմումի պատասխանը իրեն երկար սպասեցնել էր չէր: Նույն թվականի փետրվարի 28-ին (մարտի 1-ին) հետևեց Պավել Առաջինի հրովարտակը, որով բավարարում են ստանում այն հինգ հիմնական պահանջները, որոնք բարձրացվել էին աստրախանահայերի հունվարյան նամակում¹¹³:

Շուտով, 1798 թ. օգոստոսի 4-ին հրապարակվում է Պավել Առաջինի մեկ հրահանգը ևս՝ ուղղված Աննատին, որտեղ կարգադրվում է հողեր հատկացնել 1797 թ. ռուսական զորքերի հետ Դերբենտից ժամանած հայ բնակչությանը¹¹⁴:

1798 թ. սեպտեմբերի 13-ին Հովսեփ Արղունիայի հայերեն ստորագրությամբ արքունիք է ներկայացնում ավելի համապարփակ մի ծրագիր «Записка о нуждах всех армянских обществ, высехавших и имеющих впредь выезжать в Россию» («Գրություն Հայկական բոլոր համայնքների կարիքների մասին, որոնք կան կամ առաջիկայում կգան Ռուսաստան») վերնագրով¹¹⁵: Այս գրության հետ միասին ներկայացվել է նաև տեղեկանք, թե ինչպես են իրականացվել Եկատերինա 2-րդի 1794 թ. հոկտեմբերի 12-ի

¹¹² Армяно-русские отношения..., IV, с. 445-447: Հասցեատերը ճշտված է վերապահությամբ: Տե՛ս նույն տեղում, էջ 551, ծան. 129: Աստրախանում գտնվող Թադևոս վարդապետին ուղղած նամակում Հ. Արղունիանը 1798 թ. հունիսի 27-ին գրում էր, թե «Յայտ ամի եթե ևս ոչ հանդիպէի ասա (իմա՝ ՄՊր - Պ. Չ.), կեցութիւն ժողովրդեանն իմոյ ի յետին թէչէ կախեալ կայր, որպէս յիմար Նախիջևանցուցն ոմանց խելագարաց, զի զնոսա զամենեանսն ահա առնեն որպէս գանդակաւ հայրենեաց զբնակիչսն (իմա՝ ռուսներին - Պ. Չ.) և զգիւղորայս նոցա բաժանեալ ի քաղաքէն առնեն զմտիկս՝ լինիլ ենթարկեալ ամենայն ծառայութեանց, զորս թագաւորական մուծիկին պատկանի: Այժմ առ հասարակ աղետիւր իւրեանց դիմալ են առ մեզ աղաչական գրով... ահա այց առնեն աղատել զնոսա ի նոր ծանրութեանց՝ ժառանգել անդէն զբարութիւնսն, զորս ունէին պրվէլէկաւն նոցա տուեցելովքն և գոյ յոյս տերամք, որ ողորմած կայսրն մեր շնորհեցէ նոցա վանդրելին, միջնորդութեամբ բարերարին մերոյ քնեալ Կուրակինին» (ՄՄ, ձեռ. 2951, թ. 185ա-բ):

¹¹³ Армяно-русские отношения..., IV, с. 447-448.

¹¹⁴ ПСЗРН, XXV, с. 331. Армяно-русские отношения..., IV, с. 478.

¹¹⁵ ЦГИА, ф. 1374, оп. 2, л. 1815.

հրովարտակի պահանջները Գրիգորիոսովում¹¹⁶ և ցույց է տրվում, որ անցած չորս տարիների ընթացքում կատարվել է նախատեսված ծրագրի միայն փոքր մասը, ուստի այդ բացասաբար է անդրադարձել հայ բնակչության տնտեսական վիճակի վրա և առաջացրել բնակչության արդարացի դժգոհությունը: Չանցած մեկ ամիս նախորդ գրությունից, Հ. Արղունիանը 1798 թ. հոկտեմբերի 11-ին կրկին գրությամբ դիմում է Պ. Վ. Լուպուխինին՝ պահանջելով անհապաղ իրականացնել իր նախորդ գրության գեթ նախիջևանցիներին¹¹⁷ ու գրիգորիոսյաններին վերաբերող մասերը, եթե իր նախորդ պահանջների ամբողջական իրականացումը իշխանություններին առժամանակ անհնար է թվում¹¹⁸: Հարցն այն էր, որ ի տարբերություն Նոր Նախիջևանի ու Գրիգորիոսյանի գաղթօջախների, Աստրախանի հայ վաճառականությունը գործում էր ռուս և այլազգի վաճառականության անմիջական հարեանությունը և, ինչպես նշվեց, նրանց շահերը հաճախ հակադրվում էին ծավալվող մրցակցության պայմաններում: Կենտրոնական իշխանությունը մտնում էր ճկուն վերաբերմունքի գրաւորումով մեկ կողմից մեղմել Աստրախանի ռուս վաճառականության գայրույթը, և մյուս կողմից շարունակել հայ վաճառականությանը հովանավորելու իր քաղաքականությունը՝ նրանց ռուս պարսկական ու ռուսարևելյան առևտրի ոլորտում պահելու նպատակով, որ թելադրված էր պետության ընդհանուր տնտեսական շահերով և, մասնավորապես, որ, ռուս վաճառականությունը չէր կարող փոխարինել նրանց նշված բնագավառում: Հ. Արղունիանը դժգոհում էր արքունիքից, որ հակառակ բարձրագույն կարգադրությունների, որով աստիճանաբար էին սահմանվում աստրախանահայերի օգտին «չնայած այդ կարգադրությանը, այս համայնքը շահագործվում է տեղի ղեկավար

¹¹⁶ Армяно-русские отношения..., IV, с. 478-481.

¹¹⁷ Հովսեփ Արղունիանը Նախիջևան հղած իր նամակներից մեկում այսպես է ներկայացնում իրադրությունը գեոռև 1798 թ. մարտի 18-ին. «Թագաւորի և քնեալ Կուրակինի զիրն մատուցաք քնեալին, ընկալաւ բաւականութեամբ և յոյս ետ տալ կատարումն: Քնեալն ինձ և այլա թովհանեսին հրամայեաց ինչ շայք կան ի Ռուս և որպիսի կացութեան տալ իւրն, զոր ետուք և տանի քնեալն նորոգ էքսպեկտիցիին և կամին ամենեքեան մի օրինի լինիցի, զի այժմ Ղզլպարցիք և դարբանդցիք ևս պրվէլէկ խնդրին: Մեր վասն նախիջևանցուց այսբան միայն գրեցաք, թէ Հաստատեալ զպրվէլէկն և զգետինն, որ յառաջ և յետոյ տուեալ ենք զքաղաքին, այսպէս ծանուցիք զլավային և դատաւորացն, որ այժմ ամի կատարումն լինելոց է աստուծով: Ղրիմ մինչև երեսուն տարի գաղտ արարին յամենայն հարկաց, մաքսն լինելոց է յօրն ներսն տանողն և դուրս բերողն տայ, ներսն ոչ ինչ» (ՄՄ, ձեռ. 2951, թ. 163բ-165ա):

¹¹⁸ Армяно-русские отношения..., IV, с. 481.

րուծյան կողմից ինչպես նրանց տներում զինվորական հանգրվանումներով (պոստոյ), թեև նրանք պատրաստ են այդ նպատակի համար առանձին բնակարաններ վարձելու, այնպես էլ ներքին մաքսերի դանձումով»¹¹⁹։ Նմանատիպ դժգոհություն է արտահայտվում նաև Ղզլարի հայազգի բնակչության նկատմամբ վերաբերմունքի համար, որոնք օժանդակություն գտնելու փոխարեն ժամանակ առ ժամանակ ծանրաբեռնվում են ներքին տարբեր հարկերով, իսկ սահմանամերձ լինելու պատճառով, անընդհատ դժբախտությունների են ենթարկվում դրսից։

Առավել ուշագրավ են զրիմահայոց պահանջները, որոնք խմբավորելով ներկայացնում է Հ. Արղությանը։ Ըստ 1798 թ. սեպտեմբերի 13-ին Հ. Արղությանի ներկայացրած խնդրագրի, Տավրիայում բնակվող հայերը միանշանակ պահանջում են նախիջևանցիների ու զրիգորլեոպոլցիների օրինակով արտոնությունների շնորհում և բացի այդ. 1. Թեոդոսիա կամ Կաֆա քաղաքում, որ 1665 տարի առաջ, դեռևս ջննովացիների ժամանակից բնակեցված էր հայերով, համարվում էր հայկական քաղաք, որի վկայությունն են (մինչև վերջերս տեղի ունեցած քաղաքի կործանումն ու ավերումը) կանգուն 24 եկեղեցիներն ու երկու հայկական վանքերը, որոնցից երկուսը դեռևս կան ու այնտեղ ժամերգություն է կատարվում, առանձնացնել հայերի համար թաղամաս, որտեղ նրանք բնակվում էին նախկինում և կարող են անարգել բնակվել ապագայում։ Ընդգծվում է հատուկ, որ քաղաքի արտաքին պարիսպը ևս կառուցված է հայերի կողմից՝ թաթարների հարձակումներից պաշտպանվելու համար, որի մասին են վկայում պարսպի մեջ եղած հայերեն արձանագրությունները, որոնց մի մասը բերվել են Յարսկոյե սելո։¹²⁰ Ավելին, քաղաքի վերջին ավերման ժամանակ բնակիչներին մեկ մասը 1778 թ. տեղափոխվել է Ռուսաստան և հիմնադրել Նոր Նախիջևանը, իսկ մյուս մասը՝ անցել Կարասուբաղար։ 2. Հին Ղրիմ փոքրիկ քաղաքը ևս, որ առանձին հայկական քաղաք էր, և որի վկայություններն են այնտեղ եղած հայկական 7 կանգուն եկեղեցիները, հանձնվել հայերին՝ բնակություն համար։ 3. Հին Ղրիմ քաղաքի մոտ եղած Ս. Գևորգ վանքին հատկացվեն նախկինում ունեցած հողային տիրույթների զեթ մի մասը և հանձնվել հայոց թեմին՝ ղենելով այն Հովսեփ Արղությանի իրավասության ներքո։¹²¹

¹¹⁹ ШГИА, ф. 1374, л. 1815, л. 19-22.

¹²⁰ Այդ մասին հանգամանորեն տե՛ս Վ. Ա. Միրպայլամ, Ղրիմահայոց պատմություն, Եր., 1989, էջ 191-192, 195-196:

¹²¹ Հմմտ.Վ. Միրպայլամ, նշվ. աշխ., էջ 280-281:

1798 թ. դեկտեմբերի 10-ին Պ. Վ. Լուպուխինին ուղղած պատասխան գրուծյան մեջ Աստրախանի նահանգապետ Ի. Զախարովը հաղորդում է, թե ստացած լինելով կայսեր հաճությամբ Պետական տնտեսության, արտասահմանյան և գյուղական տնտեսության հովանավորչական հանձնաժողովի հանձնարարությունը՝ ինքը ուսումնասիրել ու ըստ տրված հարցերի կազմել է Աստրախանում է այ բնակչության վիճակի մասին տեղեկանք, որը և ներկայացվում է արքունիք՝ Սենատի պետական տնտեսության հանձնաժողովին։ Այս փաստաթուղթը կազմված է առավել իրազեկ անձնավորությունների ու պաշտոնյաների կողմից, և նրանում ցայտուն դրսևորումն է ստացել ուսական իշխանությունների ու վաճառականության չափավոր թեկ տեսակետը, ուստի այն արժանի է համեմատաբար ավելի մանրամասն ներկայացման։ Ուշագրավ է, որ Ի. Զախարովը ևս, ինչպես բոլոր նախորդ ու հաջորդ ուս ուսումնասիրողները, հայերի մասին տեղեկանքը սկսում է Ալեքսեյ Միխայլովիչ ցարի ժամանակ հայերին տրված առանձնաշնորհումների թվարկմամբ և ավելացնում, թե հայերը, սակայն, չպահպանեցին պայմանագրի միակ պահանջը՝ մետաքսի առևտուր չկատարել Ռուսաստանի հարևան պետությունների տարածքով, որի պատճառով էլ Ռուսաստանում զրկվեցին իրենց տրված առանձնաշնորհումներից 1719 թվականին¹²²։ Արդեն 1723 թ. Աստրախանի բնակիչները բողոքում էին, որ հայերը, ունենալով շատ ազատություններ և արտոնություններ և չվճարելով հարկեր և ոչ էլ մասնակցելով նրանց քաղաքացիական պարտավորությունների կատարմանը, ուսահպատակներին մեծապես վնասում են, ուստի և խնդրում էին կամ արգելել նրանց գործունեությունը և կամ նրանց ևս պարտադրել քաղաքացիական պարտավորությունների կատարումը։ Թեև քաղաքային մագիստրատը պաշտպանում էր աստրախանցիների պահանջները, սակայն Կառավարող սենատի 1723 թ. սեպտեմբերի 23-ի հրամանով թույլատրվեց հայերին մնալ նախկին կարգավիճակում։ 1725 և 1727 թթ. Կոմսերց կոլեգիայի և ապա Բարձրագույն Գաղտնի խորհրդի կողմից թեև սահմանվել են սահմանափակումներ, սակայն դրանք ևս էական դեր չեն ունեցել, քանզի Աստրախանի ուս վաճառականությունը կրկին բողոքում էր և կրկնում նախկին պահանջները։ 1737 թ. Կառավարող սենատի որոշմամբ Աստրա-

¹²² Հետաքրքիր է, որ ուս ուսումնասիրող Օ. Պ. Մարկովան ևս նույն կերպ է բացատրում առանձնաշնորհումների վերացման հարցը. տե՛ս Օ. Ս. Маркова. Россия, Закавказье и международные отношения в XVIII веке, М., 1965.

խանի Հայ բնակչությունը պարտավոր էր ընդունել ռուսաձևացրած թուրքերի և զբաղվել ռուս վաճառականության մեջ: Չգրանցվածներին արգելվում էր զբաղվել մանրածախ առևտրով, իսկ նրանց խանութներն ու գործատեները պետք է վաճառվեին երեք ամսվա ընթացքում, ժամկետին չվաճառվածները պետք է բռնագրավվեին և տրվեին գրանցված Հայերին: Չգրանցված վաճառականները կարող էին վաճառել միայն իրենց ներկրած ապրանքները՝ մեծածախ կերպով: Այս կանոնակարգումը տեւեց, սակայն, մինչև 1744 թվականը, երբ Կառավարող սենատը փետրվարի 29-ի դադարի Հրահանգով թույլատրում էր Հայերին ժամանակավոր Հպատակությունը բնակվելու Աստրախանում, Հարկերի փոխարեն նրանցից գանձել ըստ մազիստրատի Հայեցողության (ի՞նչ և ինչքա՞ն՝ չի ասվում – Գ. Չ.), Ռուսաստանում բնակվել չչցանկացողներին թույլատրել զնալու, դատավարությունը կատարել ըստ իրենց օրենքների և սովորությունների, ունենալ դավանանքի ազատություն, նրանց ազատել բոլոր սեռակի ծառայություններից ու պոստոյից (օթևանի պարտավորությունից – Գ. Չ.) և զրանց փոխարեն նրանցից գանձել զբամով, և, ի վերջո, նրանց տրամադրել տարածքներ բնակարանների համար և թույլատրել կառուցելու ֆարրիկաներ և մանուֆակտուրաներ:

1746 թ. սեպտեմբերի 17-ին Կառավարող սենատը կրկնեց իր Հրահանգը Հետևյալ արտահայտություններով. «Աստրախանում բնակվող Հայերին ու նաև որոնք ապագայում կժամանեն և անգամ նրանց, ովքեր արդեն երգվել են մշտական Հպատակության, առանց նրանց կամքի չզրանցել վաճառականության մեջ, ազատել մազիստրատի ենթակայությունից, վաճառական կանոններով չարկելու և ծառայություններից, թույլատրել ապրելու առանձին Համայնքներով (սլոբոդա), գրանցել որպես Աստրախանի մեջչաններ (քաղքենիներ), թույլատրել լինելու նահանգային զբաղման կիրառական ստեղծման ներքո, առևտրով պարապել ըստ նախկինի, քաղաքային ծառայությունների և Հարկերի փոխարեն նրանցից գանձել որոշակի գումար՝ առևտրի և զբաղմունքների համար՝ Հանձնարարելով Աստրախանի նահանգապետին Սենատին ղեկուցելու այդ մասին իր կարծիքը: Առևտրով ու արհեստներով չզբաղվող, այլևայլ աշխատանքով ու ձեռագործությամբ սնվողներին և չունեող մարդկանց չհարկել, մանրածախ վաճառք, խանութներ ու գործարաններ թույլատրել ունենալ ըստ նախկինի, դատավարություն և դատաստանը միմյանց միջև թողնել ըստ նախկինի և հիմնել

նախաձեռք, ազատել քաղաքացիական ծառայություններից, Ռուսաստանից Հեռանալ ցանկացողներին թույլատրել՝ վերցնելով նրանցից կապիտալի տասներորդ մասը, Հավաստվում է նրանց Հավատի ազատ դավանելը ու բանի չմղտելը, օթևանի պարտավորությունից նրանց տների ազատելը, որտեղ նրանք իրենք ապրում են, այլ օթևանի համար գանձել զբամով, որով և վարձակալի բնակարաններ օթևանի համար, իսկ բնակարանների պակասի դեպքում կառուցել նոր զորանոցներ, բնակեցնել նրանց ռուսներին անջատ թաղերով, արհեստավորներին ազատել ծառայություններից ու քաղաքացիական հարկերից՝ փոխարենը Հարկել զբամով՝ ըստ արհեստի տեսակների ու նաև նրանց ապրանքները՝ մանրածախ վաճառքի դեպքում»¹²³:

Թվարկելով այս արտոնությունները, նահանգապետ Ի. Զախարովը փորձում է վեր Հանել այն Հիմքերը, որոնք անհավասար իրավիճակի մեջ էին դնում ռուս վաճառականությանը և բացատրել նրանց վրդովմունքի արդարացի լինելը: Միաժամանակ երևան է գալիս, ըստ Ի. Զախարովի, այն «անարգար» Հովանավորությունը, որ Հայերը ձեռք բերելով 1740ական թվականներից, շարունակում են պահանջել նաև դարավերջին: Շարունակելով ներկայացնել Աստրախանում Հայերի իրավականտնտեսական կարգավիճակի փոփոխությունները, ղեկուցազրի Հեղինակը կանգ է առնում Կառավարող սենատի վերոհիշյալ Հրահանգի կատարման ուղղությամբ Աստրախանի նահանգային զբաղման կիր 1748 թվականի մայիսի 11-ի որոշմանը. Աստրախանում ռուսաձևացրած Հայերի մեջ գտնվող Հայերին (որոնք այն ժամանակ 646 մարդ և 209 տուն էին) Հարկ նշանակել տարեկան 1000 ռուբլի, որից 739 ռուբլին պետք է Հատկացվեր Հոգուտ և ի օժանդակություն ռուս վաճառականության, իսկ մնացածը՝ պետք է ծախսվեր քաղաքում կամուրջների շինարարության համար: Ըստ քաղաքում Հայերի տներին Համամասնության թույլատրվում էր կառուցել զորանոցներ և նրանց պահպանման համար որոշվում էր տարեկան 600 ռուբլի: Այսպիսով, ռուսաձևացրած Հայերը ընդունածների համար գործում էր 1746 թվականի Հրահանգը, իսկ օտարաձևացրածներին, որոնք ապրում են կամ Հետադաշտում կզան Աստրախան,

Ա. արգելվում էր ապրանքները վաճառել մանրածախ ձևով,

Բ. բերված ապրանքները թույլատրվում էր վաճառել միայն մեծածախ իջևանատներում, ըստ մաքսային կանոնադրության,

¹²³ Армяно-русские отношения..., IV, с. 487.

Գ. արգելվում էր ունենալ իրենց տները, խանութները, գործարանները, ապրել իջևանատներից դուրս կամ ամուսնանալ տեղում:

Թվարկելով վերոբերյալ սահմանափակումները, Աստրախանի նահանգապետը, սակայն, ավելացնում է, որ թեև սկզբնական շրջանում այս խստութունների շնորհիվ Հայերի մի մասը ընդունում էին ռուսահպատակություն, բայց հետո սկսեցին շրջանցել օրենքները և չպահպանել սահմանված կարգը: Համարվելով քաղքենիական դաս և Աստրախանի բնակիչներ, նրանք զբաղվում էին առևտրով և միանգամ ազատված լինելով Պարսից լծից, չէին ցանկանում վերադառնալ Պարսկաստան ու կարելի է համոզված ասել, թե երբեք էլ չեն վերադառնա: Ուստի, ըստ Ի. Զախարովի, զարմանալի չէ, որ Հայերի քանակը գնալով ավելանում էր, ստեղծում էին Աստրախանում խոշոր թաղամասեր, իսկ Ղզլարում դարձան քաղաքի դրեթե միակ բնակիչները, որովհետև օգտվելով ամեն ինչից և չվճարելով դրեթե ոչինչ, կազմեցին այսպես ասած *status in statu*։

Շարունակելով իր գեկուցագիրը, հաջորդ կետով ներկայացնում է Կառավարող սենատի 1773 թ. հոկտեմբերի 13-ի հրահանգը, որով կարգադրվում էր, թե ելնելով այն հանգամանքից, որ 1746 թվականից հետո ընկած ժամանակահատվածում Աստրախանում Հայերի քանակը բազմապատկվել է, ուստի որպեսզի նրանց բնակարանները ազատվեն օթևանի պարտավորությունից, ապա անհրաժեշտ է, որ նրանք կառուցեն լրացուցիչ զորանոցներ՝ իրենց քանակին համապատասխան և վճարեն սահմանված վարձը: Այս հրահանգը ևս, սակայն, ըստ Ի. Զախարովի, չգործադրվեց, որովհետև շուտով պաշտոնակն եղավ Աստրախանի նահանգապետ Կրեչտնիկովը, իսկ Հայերը շարունակեցին վճարել 1746 թվականին սահմանված 600 ռուբլի գումարը, իսկ նոր զորանոցներ ոչ միայն չկառուցվեցին, այլև նախկինում կառուցված և անտիրություն մատնված 24 զորանոցները հնացան և ավերվեցին: Հայերը համաձայնեցին իրենց բնակարաններում տեղավորել զինվորներին, որովհետև այդ նրանց համար մեծ անհարմարություն էր, քանզի տեղի կայազորի անձնակազմի մեծ մասը ուներ իր սեփական բնակարանները Աստրախանում և 1791 թվականի Կովկասի տեղապահական վարչությունից որոշումով ազատվեցին նաև վճարելիք հարկից: Ռուս վաճառականության օժանդակության համար գանձվող 739 ռուբլի գումարը, ըստ Ասիական դատարանի վստահեցման, թեև իբր հավաքվել է 1797 թվականին ևս, երբ նրանք կայսերական հրամանագրով ազատվել են բոլոր

Հարկերի ու ծառայությունների կատարումից, մնում է որոշ չափով չմոռված: Այս ամենից պարզվում է, որ այն ամբողջ ծանրությունը, որից նրանք աղբյուրում են ազատել իրենց, իրականում սահմանված էր միայն 646 մարդու համար 1748 թվականին, իսկ այժմ նրանց քանակը հասնում է 1930 մարդու: Ինչպես ասվեց, Ի. Զախարովի գեկուցագիրը կազմվել էր նախապես տրված հարցերին պատասխանների ձևով: Հերթական 7րդ պատասխանը վերաբերում է Աստրախանում Հայերին ծովային նավեր ունենալու իրավունքի թուլյությունից հարցին: Ինչպես պարզվում է Ի. Զախարովի պատասխանից, այդ հարցի շուրջ երկարատև գրազբուխություններ են տեղի ունեցել արքունիքի և նախկին նահանգապետ Բեկետովի միջև: Վերջինս այն պատճառաբանությամբ, թե իբր Հայերը իրենց նավերով երթևեկելով Պարսկաստան՝ Ռուսաստանից լուրեր էին տանում այնտեղ, արգելել էր այդ, իսկ օտարերկրացիների հովանավորության գրասենյակը պնդում էր թուլյատրել: Եվ երբ հարցի լուծումը տեղափոխվել էր Կառավարող սենատ և թողնվել նրա որոշմանը, ապա վերջինս 1769 թ. նոյեմբերի 29-ի հրամանագրով կարգադրել էր. «Բանի որ 1762 թ. հուլիսի 31-ի կայսերական հրամանով թուլյատրված է Աստրախանի նավահանգստում նավեր ունենալ բոլորին՝ առանց սահմանափակման, իսկ 1763 թվականի հուլիսի 5-ի հրամանով կարգադրված էր, որ այդ նավահանգստին կից վաղուց հետև նավեր կառուցելու իրավունք ունեն միայն տեղի բնակիչներն ու քաղքենիները, բացառելով բոլոր մնացածներին, ապա Հայերը ևս՝ և բնակիչները և թե տեղի քաղքենիությունը, գտնվում են Նորին Կայսերական մեծությունից հպատակության ներքո, ուստի այդ պատճառով Աստրախանում բնակվող և առևտրով զբաղվող ռուսահպատակ բոլոր Հայերին թուլյատրվում է կառուցել Կասպից ծովի վրա երթևեկելու ծովային նավեր՝ իրենց ապրանքները տեղափոխելու համար, այնպես ինչպես և ռուս վաճառականները ունեն ծովային նավեր»:

Ներկայացնելով այս ամենը, Աստրախանի նահանգապետ Ի. Զախարովը անցնում է ստեղծված իրազրույթյան մասին իր մեկնաբանությունը: Այս հրամանագրից նրա կարծիքով, բխում էր,

- անսահմանափակ թուլյություն բոլոր Հայագրիներին, ով որ միայն ի վիճակի էր ունենալ ծովային նավեր, ընդ որում այլևս առանց որևէ խնդրաբեր, օգտագործել ռուս մարդկանց որպես աշխատող

տողներ՝ այդ թիվում նաև Պարսից այիերում, այս բնագավառում մեկուսացնելով ուսու վաճառականներին,

- բերել իրենց նավերով տարբեր ապրանքներ և արգելված դրամ,

- վարձու տալ նավերը պարսիկներին, որոնք այս միջոցով իրենց ձեռքը վերցրին անմիջական առևտուրը,

- տեղափոխել Պարսկաստանում նավահանգիստից նավահանգիստ նրանց ապրանքները, մրցակցել ուսու վաճառականներին հետ տեղափոխման վարձի խնդրում և կատարել անցանկալի այլ շեղումներ:

Թեև հրամանագրում, ըստ Ի. Զախարովի, հայոց մասին ասված էր՝ «որոնք գտնվում են մշտական հպատակության ներքո», սակայն հազիվ թե այս պահանջներում էր, որովհետև հայերից ո՞վ էր մշտական և ո՞վ՝ ժամանակավոր հպատակության մեջ՝ հավաստի տեղեկություններ չկան: Ըստ Աստրախանի նավահանգիստային վարչության տեղեկանքի, այժմ հայերին պատկանում է ծովային 7 նավ:

Զեկուցազրի Ցրդ կետով Ի. Զախարովը արտահայտում է իր վերաբերմունքն ու դիրքորոշումը 1797 թ. մարտի 1-ի հրամանագրի նկատմամբ՝ դատախրավական կարգավիճակի հարցում: Հայկական դատարանը¹²⁴, ըստ նահանգապետի, իր սկզբնավորումը ստացել է 1744 թվականից և որոշ ժամանակ կոչվում էր ռատհաուզ: 1765 թվականի հունվարի 13-ի կայսերական հրամանագրով թեև կարգադրվում էր Աստրախանի բոլոր ասիական համայնքների համար դատարան՝ դատավորների ընտրության, նրանց նիստերի, գործավարության, նահանգային գրասենյակին բողոքարկման և նրանց նկատմամբ տեսուչի սահմանումով, սակայն այն չիրագործվեց, քանզի առևտրով զբաղված թաթարները, մտնելով վաճառականության և քաղքենիության դասի մեջ, զբիցցին մազիստրատի ենթակալության ներքո, հնդիկները չցանկացան մասնակցել նրան, իսկ այստեղ ապրող ուսուհայատակ պարսիկները և մնացած ասիացիները, այնքան քիչ էին, որ անգամ ցանկություն չէին ունենում իր ոչ մեկից ընտրել հնարավոր չէր: Այդպիսով, այն ժամանակից մինչև այսօր թեև դոյություն ունի այն ընդհանուր դատարան անունով կոչվող բոլոր աստրախանաբնակ ասիացիների համար, սակայն ըստ էության այս դատարանը միայն հայկական է և այլ ասիացիներից ոչ ոք, անգամ ամենափոքր վեճի դեպքում, նրան ենթարկվել չի ցանկանում

¹²⁴ Աստրախանի հայկական դատարանի և դատաստանազրբի մասին հանգամանորեն տե՛ս «Դատաստանազրբ Աստրախանի հայոց», աշխատ. Ֆ. Գ. Պոդոյանի, եր., 1967:

մնալով մինչև այժմ առանց դատարանի, որովհետև ըստ իրենց սովորույթի և իրենց դատավորներից բաղկացած դատարան չուներ, իսկ ըստ հիմնարկությունների ստեղծված դատարաններ՝ լեզվի, դատական կարգի և ուսուհայական օրենքների չիմացության պատճառով հրաժարվում են դնալ: 1786 թվականին փոխարքայության հիմնումով, եթե հայերը զբիցցին գիլդիաների և քաղքենիության մեջ՝ ըստ քաղքեային կանոնադրության, ապա սրանք անցան մազիստրատի իրավասության ներքո, և որի մեջ աստեղականներ մի մասը ընտրվեց այս ժողովրդից: Ռուսահպատակություն չընդունածները, որոնց բարձրագույն հրամանով արգելվում էր պարտադրել դրան, ըստ 1788 թ. հունվարի 26-ի հրամանագրի, մնացին նախկինի պես հայկական դատարանի իրավասության ներքո: Ուշագրավ է, որ Ի. Զախարովը հայկական դատարանի գործավարության մասին իր տպավորությունը արտահայտում է որպես քաղքենիային ու անբավարար:

Զեկուցազրի 9րդ կետով նահանգապետը ներկայացնում և գնահատում է 1797 թ. մարտի 1-ի հրամանագրի էությունը և 1798 թվականի վերջերին առկա իրավիճակը Աստրախանում: Հրամանագրով հայերին վերադարձվեցին այն իրավունքները, որ կայսեր նախնիները, ինչպես և Կառավարող սենատը 1744 և 1746 թվականներին շնորհել էին այս համայնքին: Կայսերական այս հրամանագրով թույլատրվում է

1. զբաղվել առևտրով, վճարելով մաքսատուրքերը ըստ Առևտրական կանոնադրության, ինչպես սահմանված է մյուս օտարերկրացիների համար:

Այս որոշման առիթով ասվում է, թե ըստ Աստրախանի նավահանգիստային մաքսատան տեղեկանքի, վերջին մեկուկես տարում հայերից չի դանձվել 10 տոկոս կազմող անցումային հարկը, սակայն համաձայն 1798 թ. սեպտեմբերի 22-ի Կոմմերցիոլեգիայի հրամանի այսուհետև այն պետք է դանձվի: Այս տեղեկանքի հիման վրա Ի. Զախարովը գտնում է, որ հայերը մեկ տարի և յոթ ամիս շահել են, ընդ որում՝ երկու ամառ, չեն մուծել նշված մաքսը, որը աննշան եկամուտ էր լինի դանձարանի համար, իսկ գուցև և այդ կատիպեր նրանց ընդունվելու վաճառականության մեջ:

2. Ընդունել նրանց ժամանակավոր հպատակության և ոչ՝ մշտական:

Այս դեպքում ևս, ինչպես նախկինում, նրանք չեն հանգուրժել ճշգրիտ կիրառում, քանզի 1748 թվականից հետո եկած և բնակություն հաստատածները նկատմամբ այս ձևը չի պարտադրվել նրանց:

3. Ձատիպել նրանց դրանցվելու ուսական վաճառականության մեջ, ազատելով Հարկերից ու ծառայություններից:

Ըստ Ի. Ջախարովի, այս դերը այլ թույլտվությունից հայերը օգտվեցին այն աստիճան, որ դադարեցին վճարել անգամ այն Հարկադրույքը, որը նշանակվել էր 1746 թ. Հրամանագրով քաղաքային ծառայությունների ու Հարկերի փոխարեն, որոնցից նրանք ինչպես նախկինում, այնպես էլ հետո ազատված էին և որը ըստ 1748 թ. նահանգային գրասենյակի որոշման դրված էր ուսահավատակ Հայերի վրա՝ ուսական վաճառականության օգտին գանձվող 739 ուրլու փոխանցումով:

Այնուհետև նահանգապետ Ի. Ջախարովը ներկայացնում և ծավալուն կերպով քննարկում է Հրամանագրի այն կետը, որով կարգադրվում էր. «Ազատել նրանց օթևանի պարտավորությունից, որպեսզի նրանք բնակարանային հարցում դժվարություններ չունենան՝ դրա փոխարեն հավաքելով նրանցից դրամ և վարձակալելով այդ նպատակով շենքեր»: Նշելով այս որոշումը, նահանգապետը ոչ առանց դատություն, գրում է. «Եվ այս առատաշնորհումը լիառատ վայելում են, որովհետև ըստ Աստրախանի քաղաքապետից ստացած տեղեկության հայտնի է, որ Աստրախանում բնակարաններում տեղաբաշխված բոլոր գինձառայողները հաշվվում են 3101, իսկ հայերի մոտ՝ նրանց կողմից վարձակալված բնակարաններում, օթևանում են միայն 217 մարդ, որից և կարելի է հետևյալ, որ հայերը քաղաքում ունենալով մեծ քանակով տներ, չափազանց քիչ օթևանի պարտավորություն են կրում: Իսկ քանի որ Աստրախանում ուսաների տների քանակը 2415 է, իսկ հայերինը՝ 620, ուստի և ակնհայտ է, թե հայերը պետք է օթևան տրամադրեին Համապատասխանաբար 620-ից փոքր ինչ ավելի մարդու: Իսկ եթե հաշվարկը կատարենք ըստ սենյակների քանակի, ապա կպարզվի, որ նրանք պետք է օթևան տային ծայրահեղ դեպքում գոնե կեսին:

Այդպիսի իրավիճակը, անգամ առանց մաթեմատիկական հաշվարկների կհիմնավորվի նաև արգարությունը, քանզի Հարկերի չվճարումով, քաղաքացիական ծառայություններից ազատ լինելով և օգտվելով վաճառականական ու քաղքենիական բոլոր արտոնություններից, այս պարտավորությունը, որը լուր միակն է, անտանելի ծանրություն չպիտի լինի: Ավելին... ուղղման ծախսերի համար այստեղ հավաքված գումարից ուսաները մուծել են 49106 ուրլի 2 կոպ., իսկ հայերը՝... 12320 ուրլի և 11 կոպ.»:

Աստրախանի նահանգապետ Ի. Ջախարովը իր զեկուցագրի վերջում պատասխանում է առաջադրված ևս հինգ հարցի, որոնք ըստ էության կրկնում են նրա նախորդ կետերի շարադրանքը այլ երանգավորումով ու փաստական նոր նյութ այլևս չեն ավելացնում: Բացառություն և, թերևս, միայն այն նշումը, թե Աստրախանի Հայ բնակչության մի մասը ուներ ուսուսուսողներ, որոնց տիրում էր առքուվաճառքի մասին գրավոր հաստատագրերի համաձայն և որով նրանք օգտվում էին ազնվականության առավելություններից¹²⁵:

Ի հիշուհու Ի. Ջախարովի զեկուցագրի, որ գրվել էր 1798 թ. դեկտեմբերի 10-ին, 1799 թ. Հունվարի 4-ին Հրապարակվեց Պավել Առաջինի հրահանգը Սենատին, որով կարգադրվում էր վերահաստատել Եկատերինա 2-րդի 1779 թ. նոյեմբերի 14-ին Նոր Նախիջևանի Հայ Համայնքին տրված առանձնաշնորհումների հրովարտակը “на вечные времена”¹²⁶, իսկ նույն թվականի ապրիլի 15ին՝ ավելի ընդհանրական բնույթ ունեցող շնորհագրի հրահանգ սենատին՝ որով, ընդառաջելով Հայ բնակչության խնդրանքին, թույլատրում է.

1. Վերջին պարսկական պատերազմի ժամանակ Դերբենտից ելած հայերին 5000 (դեսյատին) անհարմար հողի փոխարեն, որ հաշվարկված էր ընդհանուր 15000 դեսյատինի մեջ, տրամադրել նույն քանակի հող մերձակա պետական հողերից:

2. Մատակարարել նրանց անհրաժեշտ քանակի փայտանյութով:

3. Նրանց, ովքեր արհեստների ու առևտրի նկատմամբ հակումներ ունենալով ցանկություն կհայտնեն բնակվել քաղաքում, թույլատրել հիմնադրել այն Ստարբե Մոմարը վայրում և անվանել այն Սուբբե Խաջ (Ավ. Կրեստ):

4. Ժամերգություն, դատարանի և դատաստանի, Հարկերի, արտոնյալ տարիների, առևտրի, ռեկրուտային գանձումների և օթևանահարկի առումով առաջնորդվել մեր հրահանգով և նրանց դասել ըստ այն իրավունքների, որոնք տրվել են Նոր Նախիջևանի Հայ Համայնքին մեր սուլն թվականի Հունվարի 4-ի Հրամանագրով:

¹²⁵ Армяно-русские отношения..., IV, с. 488.

¹²⁶ ПСЗРН, XXV, с. 523. Армяно-русские отношения..., IV, с. 499.

5. Տավրիայում բնակվող հայերի՝ նախկինում Թեոդոսիայում ունեցած եկեղեցիների ծխերը սահմանել ըստ մարդկանց այնպիսի քանակի, ինչպիսիք նշանակված են ուստական ծխականների համար:

6. Հին Ղրիմ քաղաքում բնակվել ցանկացողներին թույլատրում ենք այդ բնակեցումը:

7. Այս քաղաքի մոտ գտնվող հայկական վանքի համար առանձնացված հողամասը հատկացնել նրան և տալ հատակագիծ:

8. Գրիգորիոսյուում բնակվող հայերին խանութները, առևտրի վերականգնման և երկրագործական գործիքներով ու տնտեսութամբ օժտելու համար վերագործման պայմանով հատկացված դրամը չզանձել:

9. Գրիգորիոսյուում մատակարարված շինարարական նյութերը և նրանից մնացած 8041ռ. 9կոպ. դրամը թույլատրել մագիստրատի տնօրինությունում և նահանգային ղեկավարություն գիտություն օգտագործել աղքատների և բնչագուրկների համար բնակարաններ կառուցելու համար: Բարաչեն վանքի ու զլխավոր եկեղեցու կառուցման համար տրամադրված գումարները օգտագործել շինարարությունը անհատապես ավարտելու համար և այլևս նոր գումարներ չպահանջել:

10. 1794 թ. հոկտեմբերի 12-ի ղեկուցագրին կից հաստատված Գրիգորիոսյու քաղաքի զինանշանը պատրաստելով ներկայացնել մեր հաստատմանը:

11. Զեկուցագրում առաջարկված 10-ամյա արտոնյալ ժամանակաշրջանի հաշվարկումը սկսել մեր ներկա հրամանագրի հրապարակման պահից:

12. Ղլաբի հայերին քաղաքի շրջակայքում հող և հանդամասեր թույլատրվում է վերցնել կապալով ըստ օրինակի այլ պետական հողավածները, ներառելով նաև Թերեք գետից ձկնորսությունը:

13. Այն անձանց տները, ովքեր անհեցում են թթենիներ ու զբաղվում շերամապահությունում, ազատել օթևանի պարտավորությունից, նրանցից գանձել դրամով այնքան ժամանակ, քանի դեռ նրանք կցրազվեն տնտեսության այդ ճյուղով:

14. Մոզդուկի և Մոժարի հայերի համար հաստատում ենք այն իրավունքները, որոնցից օգտվում են Ասարախանի և Ղլաբի հայերը, ինչպես այս, այնպես էլ 1797 թ. մարտի 1-ի մեր հրամանագրով:

15. Հայկական համայնքներին շնորհված իրավունքներն ու օգուտները համապատասխանեցնել մեր այս հրամանագրի հետ, հավասար շնորհազրեքով, որոնք պատրաստելով Սենատը պետք է ներկայացնի մեզ՝ ստորագրելու»¹²⁷:

Հայ բնակչությունն անհամբեր սպասում էր խոստացված արտոնություններին: Հովսեփ Արղունթյանը 1799 թ. օգոստոսի 11-ին աստրախանահայերին Պետերբուրգից ուղղած նամակում շտապում է հաղորդել բառացիորեն «այսօր» ստացված «զհաստատությունն պրովեկտի», որը ինքը տվել է «թարգմանել հայերէն, որ ընդ ուստերենի ի միասին ղրեցեալ լինիցի ի պրովեկտին, ենթ որդ և նորին մեծությունն ձեռք դնելոց է և հաստատելոց»¹²⁸: Հ. Արղունթյանը նամակի հաջորդ տողերով ներկայացնում է կայսերական շնորհազրե բովանդակությունը. «Արղարև, երանի ձեզ և զաւակաց ձերոց, որ ի մէջ այսքան ազգաց և ազանց՝ դուք միայն վայելելոց էք զայն յատկագոյն ողորմութիւնն, զորս նորին մեծութիւնն ողորմածաբար ձեզ շնորհէ, մի միայն ժողովուրդ առնելով զձեզ՝ յատկացեալ ի մէջ թաղաւորութեանն իւրոյ զովասանութեամբ յաղապս բազմաշխատ վաճառականութեանն ձերոյ, արհեստից, տնաշինութեանց և այլոց՝ տալով ձեզ արձակութիւն վաճառականութեան ի ներս և ի դուրս թաղաւորութեանս, ազատ առնելով զայլառանս ելեալս ի Ֆապրիկէ ձերմէ յամենայն մաքսից հաստատելով զյառաջին տուեցեալ ուքաղն, ազատութիւն տալով յամենայն հարկաց և ծառայութեանց, որպիսի և իցէ, այս դործ աստուծոյ են և ինքն թագաւորն՝ զօրէն աստուծոյ առատապէս հեղու ի վերայ ձեր...»¹²⁹:

Հ. Արղունթյանի հետագա նամակներից պարզվում է, որ, այնուամենայնիվ, դեռևս վաղ էր նրա ցնծությունը և դեռևս խոչնդոտներ կային հաղթահարելու: Նոր Նախիջևան առաքած նամակում սեպտեմբերի 22-ին Հ. Արղունթյանը գրում էր իր կրած նեղությունների մասին, որ է ԼԻ (30000) չափի դումար ծախսելը՝ «մեր կամաց առնելոյն»: Կայսերական հրամանագրի հայերեն թարգմանությունը պատրաստելուց հետո էլ, պարզվում է, դեռևս հակառակորդները կարող էին շրջել նրա ընթացքը: Հրամանագրի

¹²⁷ ПСЗРП, XXV, с. 619-620. Армяно-русские отношения..., IV, с. 501-502.

¹²⁸ ՄՄ, ձեռ. 2951, թ. 284ր:

¹²⁹ ՄՄ, ձեռ. 2951, թ. 284ր-285ր:

Հակառակորդների դերում նշված են սենատը և «օբր պրոգուբորն», որոնք պատրաստել էին հրամանագրի մեկ այլ տեքստ, որն Արղությանը անվանում է «սղալ ուքազ»: Հ. Արղությանը, տեղեկանալով այդ մասին, գրաֆ Զվատովցիու օգնությամբ և զենքերով պրոկուրորի միջոցով նոր խնդրագիր է մատուցում թագավորին և կարողանում է «զչաբսն ի բաց հերքել»: Այդ փուլում արդեն Հ. Արղությանը տեղեկանում է նաև, որ «Յուսնաց բանն ևս, որպէս մերն է, նոյնպէս և լինելոց է»¹³⁰:

1799 թվականի հոկտեմբերի 28-ին ի վերջո հրապարակվեցին Պավել Առաջինի ստորագրած հրովարտականները, որոնք ընդգրկում էին Ռուսաստանի գրեթե բոլոր հայկական խոշոր գաղթավայրերը: Այդ հրովարտականների հրատարակումը համընկավ դեպի Այսրկովկաս ուսուսական բանակի առաջմանը:

Պավել Առաջինի չորս հրովարտականներ կազմված են 1799 թ. ապրիլի 15-ին Սենատին տրված հրահանգի համաձայն և խմբավորված են ըստ Հովսեփ Արղությանի 1798 թ. սեպտեմբերի 13-ին ներկայացրած "Հայկական բոլոր համայնքների կարիքների մասին" զեկուցագրի խնդրագրի: Նոր Նախիջևանի համայնքի վերաբերյալ, որը բացակայում է Պավել Առաջինի հրովարտականների մեջ, ուժի մեջ էր մնում նրա 1799 թ. հունվարի 4-ի հրովարտակը, ինչպես այդ առաջարկված էր Հ. Արղությանի խնդրագրի մեջ: Այդ պայմանավորված էր այն հանգամանքով, որ Նոր Նախիջևանին 1779 թ. նոյեմբերի 14-ի տրված շնորհագիրը՝ Հաստատված Պավել Առաջինի կողմից, համարվել է այն առավելագույնը, որը հսկված էր պահանջելու հայ բնակչությանը, և կարող էին արամադրել ուսուսական իշխանությունները: Համեմատությունից պարզվում է, որ հայ համայնքները Ռուսաստանում իրենց ներքին խնդիրներով բաժանվում էին հինգ խմբի, և նրանցից յուրաքանչյուրը բացի տեղական առանձնահատկություններով թեկադրված արտոնություններից, ստացել էր նաև հետևյալ միասնական հոգևոր, դատական ու տնտեսական արտոնությունները, որոնք ընդհանուր էին Ռուսաստանում բնակվող բոլոր հայերի համար.

1. Դավանանքի ազատություն, հայաբնակ գյուղերում եկեղեցիների ու դանդակատների կառուցման արտոնություն, որոնք պետք է լինեին Ռուսահայոց առաջնորդի միջոցով էջմիածնի Աթոռի ենթակայության ներքո:

¹³⁰ ՄՄ, ձեռ. 2951, թ. 306բ:

2. Աստրախանում հիմնվելիք հոգևոր կոնսիստորիայի իրավասությունների պետք է գտնվեին Ռուսահայոց բոլոր եկեղեցիներն ու հոգևոր և շախարհիկ հայերը:

3. Հայկական բոլոր խոշոր գաղթավայրերում հիմնվում էին հայկական դատարաններ՝ մագիստրատներ, որտեղ պետք է քննվեին և լուծուժ գտնեին հայ համայնքի մեջ եղած վիճելի հարցերը՝ հայերեն լեզվով ու հայկական ավանդական ու սովորութային իրավունքի հիման վրա: Վճարելի ու դանդատարկիչ մարմին նշանակվում էր այն նահանգային վարչությունը, որի տարածքում գտնվում էին այդ համայնքները:

4. Ռուսահայատակություն ընդունած հայ բնակչությունը 10-ամյա ժամանակաշրջանով ազատվում էր հարկերի մուծումից, իսկ այնուհետև պետք է մուծեին. Ա. Վաճառականությունը տարեկան եկամտի մեկ տոկոսը: Բ. Քաղքենիությունը և համքարությունների մեջ ընդգրկվածները յուրաքանչյուր ծխից երկու ուրբլի: Գ. Երկրագործները (որոնք ունեին 30 գեյսաթին հողամաս) յուրաքանչյուր գեյսաթինից տարեկան 5 կոպ:

5. Ռուսաստանի հայ բնակչությունը ազատվում է օթևանի պարտավորությունից ընդմիջտ, բացի այն դեպքերից, երբ դորքը կարող էր անցնել հայաբնակ գյուղերի մոտով:

6. Հայ համայնքները ընդմիջտ ազատվում են սեկրուտի և պահեստավորման համար դրամի դանձումներից:

7. Հայ բնակչությանը տրվում է ազատ առևտրի իրավունք ողջ Ռուսական կայսրության սահմաններում, ինչպես ցամաքի, այնպես էլ ծովի վրա՝ առանց մուծելու որևէ ներքին մաքս:

8. Հայ բնակչությունը կարող է կառուցել և ունենալ ծովային նավեր, գործարաններ, ֆաբրիկաներ, տնկել պտղատու այգիներ և այլն:

9. Թույլատրվում է բոլոր տեսակի զինիների պատրաստումը, գյուղերում փոքր քանակի ֆրանսիական օդու ստացումը, իսկ տակառներով Ռուսաստանի ներքին շուկայում իրացումը թույլատրվում է առանց որևէ արգելքի:

10. Հրամայվում է ուսուսական կայսրության բոլոր պետական հիմնարկներին առաջնորդվել կայսերական հրամանագրերով և ամեն

կերպ օժանդակել ու պաշտպանել հայ բնակչությանը իրենց բազմաբնույթ և օրենքով չարգելված դործունեության տեսակներին մեջ:

Բացի վերոբերյալ համընդհանուր կարգի արտոնություններից, ինչպես նշվեց, յուրաքանչյուր համայնք ստացել էր նաև մասնավոր բնույթի արտոնություններ ու իրավունքներ, որոնցից առավել էականը այն քաղաքացիական կացության մասին հրամանն էր, որը վերաբերում էր միայն Աստախանի, Ղզլարի ու Մոզդոկի հայ բնակչությանը: Ըստ այդ հրամանի, թույլատրվում էր Աստախանում, Ղզլարում և Մոզդոկում բնակվող հայերին ընդունել որպես կայսրության ժամանակավոր հպատակներ և ոչ՝ մշտական: Նշված քաղաքների հայ վաճառականներին չպարտադրել գրանցվելու ուստի վաճառականության մեջ, և ըստ այդմ, ազատել նրանց վաճառականության մուծելիք հարկերից ու կատարելիք ծառայություններից:

Վերջին այս մասնավոր արտոնությունների շնորհումը պայմանավորված էր, ի տարբերություն նախորդ թվարկվածների, ոչ միայն և ոչ այնքան քաղաքական նկատառումներով, որքան սոցիալ-տնտեսական և հատկապես առևտրական նկատառումներով: Հարցն այն է, որ չնայած ուստի պաշտոնեության կողմից վարդապետյն նկարագրություններին, հայ ժողովրդի ստորին խավերը դանդում էին ազդատության մեջ:

Հովսեփ Արղունյանը Ռուսական բանակի հետ Հին Շամախու մոտ էր, երբ ստացավ Գրիգորիոսյոլի հասարակության կողմից 1796 թ. հունիսի 23-ին գրված նամակը՝ քաղաքային ավագանու ստորագրություններով, որտեղ նկարագրվում էր քաղաքում ստեղծված ծանր իրադրությունը: Նամակագիրները ծանուցում էին Հ. Արղունյանին, թե իրենց այցելության էր եկել նորանշանակ նահանգապետը, որի մասին իրենց նախապես հաղորդել էր հենց Հ. Արղունյանը և «որպէս որ սրբազնութիւնդ գրեալ էիր, իրաւի որ առաւել եղև և անցոյց զամենեքեամբք»: Սակայն իրավիճակը, ըստ նամակագիրների, շեղացավ. քանզի «քանի մի չարածճիկ և խառնակիչ անձինք մերս աղատ քաղաքիս յաղագաւ դանդատանաց գիր մատուցին մեր բարերար կուպեռնաթին, բայց նա իւրով իմաստութեամբն բարկութիւն ոչ արար, այլ սիրով ընկալաւ և խրատական բանիւ զմեզ պատուիրեաց զազգատան սիրով և խաղաղութեամբ պահել և հրաման արար, որ տասն հազար չէրթվէրս ցորեան, առանց խարճի դիմացն, տաճկի հողը տամք, շահն աղ-

քատաց լինի»¹³¹: Հայազգի առաջնորդները զարմացած ու դալբացած արձանագրում են, թե «այս որքան ողորմութիւն է, որ արար, փոխան բարկութեանն ողորմութիւն եցոյց. այլ մեր նոյն չարեաց աղաղակքն օրըստօրէ առաւելանայ և քաղաքս խառնակել և կռիւ շարժել կամին և զչարիս իւրեանց կրկնել կամին և վշտացուցանել զբարերարդ մեր»: Նման բացասական տրամադրվածություն ստեղծելու միջոցով նամակագիրներն այնուհետև ներկայացնում են իրենց կրած նեղությունները. «մինչև ցմէկ ժամ ոչ թողին բարերար կուպեռնաթին, որ քաղաքիս մէջն համարձակ չըջի, այլ ուր որ ընթանայր, դինի խուռն գանկատաւորք չըջէին և զմեզ անհանգիստ առնէին»: Նահանգապետը ստիպված է լինում դեռ քաղաքային մագիստրատը պարզելու դժոհությունների արդարացիությունը: Ըստ նամակագիրների, «զամենայն բանն մեր ստուգիւ քննութիւն արար, թէ վասն դատաստանի, թէ վասն յիսուն հազար ըսուպուն, որ արատութիւն ինչ ոչ գտաւ, որպէս և հրամայեալ էիր մեզ. թէ տասն և հինգ անձն իսմայիլու և տասն և հինգ անձն Ղաւշանու և տասն Քիլիլու և Աղբիբմանու, նոյն քառասուն անձինքն միմիանց երաշխութեամբն քառասուն հազար ըսուպին ընկալան և մինչ ի իննսուն և հինգ անձն ինքեանս մասնակից արարին, որոց որ արժան էր, բայց այս ևս ոչ օգտեցաւ, չորս չարաբարոյ վրդովող անձինք, մինչ ի ցայս վայր ոչ հանդուրժեն, որոց երեսացն ելանեն կռիւ և խռովութիւն, որոց պատիժն ի տեսունէ լիցի, որ դեռևս կամին որ երթան ի կուպեռնայն և կրկին խառնակութիւն անեն»: Գրիգորիոսյոլ քաղաքի հայազգի զլխավորները ափսոսանք հայտնելով, որ Հ. Արղունյանը նշված ընդվզումների ժամանակ բացակա է եղել քաղաքից և այդ ամբողջ տառապանքը միայն իրենց է բաժին հասել, այնուամենայնիվ գրում են, թե «անդաբար աղօթող եմք վասն տեսունդ վասն ազատութեան մերային ազգին», որի համար և Հ. Արղունյանը գտնվում էր ուստական բանակի կազմում, բայց և խնդրում են, որ նա «սաստեսցէ պիտաց մերկաց ծովոյս, զի հանդարտեցին ի չար ծիւանաց իւրեանց, որ ամենայն կողմանց վարանեալ կամք, ուստեքէ ճար և օգնութիւն ոչ ունիմք, բաց ի բարերար հօրէդ մերմէ, թէ շինութիւն եկեղեցեաց, թէ տանց, թէ խանութից, թէ այլ հարկաւորութիւն քաղաքիս մինչ ի ցայս կէտ կայ առեալ կայ, թէպէտ քանի մի տուն սկսեցին, սակայն այն ևս մէկին աւարտումն չի տուին, ի գործ ծանր կու մատչին, ոչ զիտեմք պատճառն ինչ է, որ յայտ իսկ է սրբազնութեանդ,

¹³¹ ՄՄ, ԿԴ, թղթ. 6, վավ. 87, էջ 1-2:

որ բազում աղքատ դոն քաղաքիս, որ անտուն և անտեղ են. քաղաքս ամենայն հարկաւորութեանց զուրկ է»¹³²: Ի վերջո, որպէս ելք առաջարկվում է Գրիգորիսոյ ուղարկել իրենց հովիւին «որ մեր նախ քաղաքիս գործն, դէֆուլթաթաց զնայն և այլ հարկաւորութեանց կարգն սահմանի և ապա թէ խաղաղութիւն և սէր քարոզեսցէ մեզ, զի նովա ցնծասցուք»¹³³:

Ռուսական բանակի կապիտան Հակոբ Աբրահամյանի նկարագրութեամբ, որ նա կատարել էր 1798 թ. մայիսի 6-ին Հովսեփ Արղությանին զրած նամակի մեջ՝ ակնկալելով նրա միջնորդութիւնը իշխանութիւնների մոտ Ղզլարի հայ համայնքի տնտեսական վիճակի բարելավման ուղղութեամբ, «չատ նեղութեան մեջի են ժողովուրդքն քո, բայց միմիայն շունչերն այ մնացել ողորմելի մարդկանց, մին կողմից հիւանդութիւնն, մին կողմից փոստովն, մին կողմից բեկարն այսպէս տանջանաց միջի են: Կամք տեսաւդ է, լինի թէ սրբութիւնդ մին օգնական լինես յատուկ այս քաղաքիս ժողովրդոցդ:... Մեծամեծքն աղքատաց առև ռոտի տակ. Տէր փրկի, ոչիմչ խնամք ոչ գոյ աղցա արտի մեջն: Լինի թէ տեղիցդ մին ողորմութեան անբաւ, էլ թորք, վրացի ոչ գոյ անվամբ՝ ապա ողջ Հայ ու վայ...»¹³⁴: Դեռևս մինչև 1799 թ. հոկտեմբերի 28-ի հրովարտական հրապարակումը՝ հոկտեմբերի 20-ին, Աստրախանից Հովսեփ Արղությանին ուղղած նամակում Թաղաթում վարդապետը ցավով ու տագնապով է նկարագրում Աստրախանում ստեղծված վիճակը. «զվերջին լրումն պրիվիլեյիս տէր յաջողեսցէ ի բարին. քաղաքս ի մէջ անտանելի նեղութեան կայ, քանզի ամենայն արհեստաւորացն Հայոց զթիւքանսն փակեալ լցին զինքեանս ի քրդամաթ, ասելով, թէ մինչև ոչ զրեցեալ լինիցիք ըստ Ռուսաց և ոչ զամենայն զսակ հարկին հատուցանիցէք

յարքունիսն, չունի ոք զհրաման գործել զարհեստ ինչ: Այսպէս այժմ այրին և խորովին ազդ մեր աստանոր»:

ԺԸ. դարի վերջին տարիների համար բնութագրական էր ռուս-պարսկական առևտրի սրնթաց անկում, որի պատճառների թվում երկրորդական էջը նաև հայ վաճառականների նկատմամբ լիարժեք հովանավորչութեան թուլացումը և կամ դադարեցումը: Վերջինս դումարվելով քաղաքական անկայուն ու վաճառականության համար վտանգավոր իրադրությունը, մեծապես նվազեցրել էր հայ վաճառականության մասնակցությունը ռուս-պարսկական առևտրին ու նրանց գործունեության ուղղությունը դարձրել զեպի համեմատաբար անվտանգ ռուս-հնդկական ու ռուս-միջինասիական առևտուրը¹³⁵:

Հովանավորչության վերականգնումն ու մեծացումը պայմանավորված էր նաև այն հանգամանքով, որ հայ առևտրական կապիտալը հարավային Ռուսաստանում 18-րդ դարի վերջին քառորդին արագորեն վերածում էր արդյունաբերական կապիտալի, մի գործոն, որն արձանագրվել է շատ ուսումնասիրողների կողմից¹³⁶:

Ամփոփելով հայ բնակչության նկատմամբ Ռուսական իշխանությանների վարած հովանավորչական քաղաքականության ներկայացումը, չի կարելի չըջանցել հողատարածքների այն սահմանափակ չափերը, որոնք տրվում էին հայ զաղթօջախներին: Բավական է այդ առումով համեմատության բերել որևէ զաղթօջախի տրված հողային տարածքների չափերը կալվածատիրական հողաչափերի հետ, որպեսզի հստակ լինի նրանց միջև եղած տարբերությունը: 18-րդ դարի վերջերին (1784 թ.) Լազարյանների հողային կալվածքների չափերը կազմում էին մինչև 861-850 դեսյատին, այն զեպում, երբ Դերբենտից ու Մուսկուրից Ռուսաստան փոխադրված 4000 շնչի համար հատկացվել էր ընդամենը 15.000 դեսյատին հողատարածք:

Հետաքրքրությունից զերծ չեն նաև այն սոցիալական փոխհարաբերությունները, որ գոյություն ունեին հայ համայնքի մեջ ռուսումնասիրվող ժամանակաշրջանում: Հայ հասարակությունը բնավ էլ միասեռ և միա-

¹³⁵ П. А. Чобанян. Роль закавказских купцов в русско-индийской торговле (XVIII-нач. XIX в.), «Кавказ и Византия», вып. 3, Ер., 1982, с. 73-88.

¹³⁶ Ж. А. Ананян, В. А. Хачатурян. Роль кредита в деятельности армянского купечества в России (XVII-XVIII вв.), «Պատմա-բանասիրական հանդես», 1986, թիվ 2, էջ 166:

¹³² ՄՄ, ԿԴ, թղթ. 6, վավ. 87, էջ 2:

¹³³ Նամակը ստորագրել են. «...Մաղխատրաթի գոլովայ և դատաւոր՝ Գոլովայ Նարին Գրիգորեան, պուրջումիտր Սարգիս Պունիաթով, պրդումիտր Աստուածայտուր Որբոյվ /', աթման Գալուստ Արզումանով, աթման Մախլաս Ավատուրով, աթման Մանուկ Սիմոնով, աթման Մրգայ Աբրահամով, Ղոթոտովի ստառոսայ Պինդաթ Ագովեան»: Ուշագրավ է, որ Նոր Նախիջևանում բնակություն էին հաստատել նաև Աղբերմանցի ընտանիքներ, որոնց մասին նամակում որպէս հետգրութեան նշվում է. «Ի Նախիջևանու Աղբերմանցի քանի մի անձինք եկին ինդրում են, որ ի հզատակութեամբն կայսրուհւոյն ամենեքեանս երդամարդովն ի Գրիգորեանուց քաղաքս, եթէ հաճոյ իցէ սրբազնութեանդ, հրաման գրես ի Նախիջևան, որ ազատվեն, շատ աղաղակ են անում: Կամք տեսաւդ է: Ամենախոնարհ ծառայ տէր Յոհաննէս Յենկիրարեան»: ՏՆՍ ՄՄ, ԿԴ, թղթ. 6, վավ. 87, էջ 3:

¹³⁴ Армяно-русские отношения..., IV, с. 477.

տարր Համայնք է՛ նեղել, Համայնքի մեջ նեղել է խոր ունեցվածքային շերտաւորում, ունեցել է իր ներքին պայքարը ոչ միայն տարբեր դասերի միջև, այլև իշխող և ունեւոր դասի տարբեր թեւերի սուր բախումներ: Ուշագրավ է, որ չքավորների և ունեւորների միջև բախումների, չքավորների մեջ հուզումների վերացման ուղղութեամբ ևս ձեռնարկվել են տարբեր միջոցառումներ, ընդհուպ մինչև նրանց դրամական օժանդակութեան հատկացումը և այդ նպատակով դրամահավաքութեանը: Վերջին այս երևույթը մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում հատուկ լինելով եվրոպական երկրների համար, որտեղ այն կիրառվում էր սոցիալական հակասութունները մեղմելու նպատակով¹³⁷, իր կիրառումը ունեցավ միայն Հնդկահայ և Ռուսահայ գաղթօջախներում: Ինչպես հայկական այլ գաղթօջախներում, այնպես էլ բուն Հայաստանում այդ նպատակի համար հատուկ դասնական ստեղծման մասին մենք առայժմ որևէ վկայութիւն չունենք (գտնեմ մինչև 18-րդ դարի վերջ ընկած ժամանակաշրջանի համար)՝ եթե բացառենք այն կոնդակները, որոնցով կաթողիկոսը առանձին դեպքերում թուլլատարում էր շրջագայութեամբ միջոցներ ժողովել ծայրահեղ իրավիճակի մեջ Հայտնված որևէ անհատի: Արեւմտյան Հայաստանում թերևս միայն Էրզրումի մասին ունենք ուղղակի վկայութիւն, որ վերաբերում է 1807 թ., թե հացի սղութեան պատճառով բաշխումը իրականացվում էր իշխանութիւնների վերահսկողութեամբ, սակայն այն ևս ոչ առանց կռվի ու դժգոհութեան¹³⁸:

Սոցիալական բողոքի և այն հարթելու մասին ձեռնարկումների մասին վկայութիւններ մեզ են հասել Ռուսահայ այլևայլ գաղթավայրերից: Վերաբերյալ վավերագրում Գրիգորիոսով քաղաքի գլխավորները, որքան էլ չարութեամբ էին լցված բողոքող աղքատ բնակչութեան նկատմամբ, այնուամենայնիվ փորձում են ելք գտնել և որպես այդպիսին առաջարկում են արագացնել խոստացված բնակարանների կառուցումը, քանզի «բազում աղքատ գոն քաղաքիս, որ անտուն և անտեղ են. քաղաքս այժմ ամենայն հարկաւորութեանց զուրկ է», ուստի խնդրում են նաև իրենց մոտ ուղարկել իրենց հողերը հովվին, որպեսզի «խաղաղութիւն և սէր քարոզեսցէ մեզ, դի նովա ցնծացուք և ուրախ լիցուք»¹³⁹:

¹³⁷ Джорж Рюде. Народные низы в истории. 1730-1848, перевод с английского Е. И. Бухаровой и А. О. Зелениной, предисловие и редакция М. А. Барга. М., 1984, с. 60-61.
¹³⁸ Տե՛ս ՊՔԸ, 1997, թիվ 2, էջ 273:
¹³⁹ ՄՄ, ԿԴ, թիվ 6, վավ. 87, բնագիր:

Անշուշտ նաև նման նպատակ էր հետապնդում Ղրիմից քրիստոնյաների տեղափոխման համար Ռուսաստան կողմից ինչպես հույներին, այնպես էլ Հայերին որոշակի պայմանների¹⁴⁰ առաջադրման հնարավորութեան ընձեռումը (կոնդիցիաները): Անշուշտ, Հայերի պահանջները սահմանափակելու կամ չափավորելու համար է, որ շիկացվել է նաև Ղրիմում թաթարների ու քրիստոնյաների միջև անվստահութեան մթնոլորտը: Տեղափոխվելու մասին Հայերի համաձայնութեան փոխհատուցում կարելի է դիտել Նոր Նախիջևանին տրված արտոնութիւնները: Այդ այն վճարն էր, փաստորեն, որ արքունիքը հատուցում էր գաղթականներին: Շուտով, սակայն, պարզվեց, որ այն բավարար չէր: Հ. Արղությանը փորձում է ոչ միայն հասնել երկաբացնելու արտոնութիւնների ժամկետները, այլև գրանք տարածել ողջ Ռուսահայոց վրա: 18րդ դարի վերջին այդ քաղաքականութեանը ավարտվում է Հաջողութեամբ:

3.3 ՀԱՅՈՑ ԴԵՐԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԱՌԵԻՏՐԱ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Հայ-ռուսական տնտեսական կապերի պատմութիւնը ներկայանում է մեկ կողմից բուն Ռուսաստանում հայկական գաղթօջախների տնտեսական ու առևտրական գործունեութեամբ, որը հանդամանորեն ուսումնասիրված է այդ գաղթօջախների պատմութեանը նվիրված մենագրական աշխատութիւններում, և մյուս կողմից՝ Ռուսաստանի արտաքին առևտրական հարաբերութիւններում Հայ վաճառականութեան ակտիվ մասնակցութեամբ, որը համեմատաբար քիչ է Հայտնի և մնում է պակաս ուսումնասիրված¹⁴¹:

Այսպես, Ղրիմի և Նոր Նախիջևանի Հայոց գաղթօջախների տնտեսական գործունեութեան ուսումնասիրութեանը հատուկ գլուխներ են հատ-

¹⁴⁰ Տե՛ս Վ. Դիլյան, Հազարյանների հասարակական-քաղաքական գործունեութեան պատմութիւնից (XVIII դարի երկրորդ կես), Եր., 1966, էջ 144-148: Վ. Բ. Բարխուդարյան, Նշվ. աշխ., էջ 72-73:
¹⁴¹ Առկա ուսումնասիրութիւններում քննարկված են հիմնականում ռուս-իրանական առևտրում Հայերի մասնակցութեան հարցերը: Տե՛ս Կ. Կուչանովա. Очерки по истории русско-иранских торговых отношений в XVII- первой половине XIX века. Саранск, 1977. А. Н. Юхт. Торговля России со странами Востока во второй половине XVIII в. и армянское купечество, ՊՔԸ, 1981, թիվ 2, էջ 85-106:

կացված Վ. Միքայելյանի և Վ. Բարխուդարյանի աշխատություններում¹⁴²: Հանգամանորեն ուսումնասիրված են նաև Աստրախանի, Գրիգորիուպոլի և Հյուսիսային Կովկասի հայ գաղթավայրերի տնտեսական գործունեությունն մեջ Հայոց բերած նպաստն ու նրանց ունեցած դերը¹⁴³: Լազարյանների տնտեսական գործունեության ամբողջական համապատկերը Հետագոտված ու ներկայացված է Վ. Դիլոյանի աշխատության մեջ¹⁴⁴: Այս բնագավառում հայերը սկսեցին որոշակի դեր ունենալ Ռուսաստանում հայկական գաղթօջախների կազմավորումից հետո: Հայ-ռուսական տնտեսական կապերը, սակայն, սկսվել էին շատ ավելի վաղ, որին մշտապես կարևոր նշանակություն է հատկացվել Ռուսական պետության կողմից ու արժանացել նրա հովանավորությանը:

Հայ-ռուսական տնտեսական կապերը¹⁴⁵ զգալի են եղել Ռուսաստանի արտաքին առևտրի բնագավառում արդեն 15-16-րդ դարերից, իսկ 17-րդ դարում՝ 1667 թ. կնքվել էր հատուկ առևտրական պայմանագիր Նոր Զուղայի հայ վաճառականության ու ռուսական պետության միջև¹⁴⁶: Հայ վաճառականությունը խոշոր գերակատարում է ունեցել ռուս-պարսկական¹⁴⁷,

¹⁴² Վ. Միքայելյան. Ղրիմի հայկական գաղթօջախի պատմություն. Եր., 1964: Վ. Բարխուդարյան. Նոր Նախիջևանի հայկական գաղթի պատմություն. Եր., 1967:

¹⁴³ Ананян Ж. А. Армянская колония Григориополь. Ер., 1969. Ж.Ананян, В. Хачатурян. Армянские общины России. Ер., 1993. Ж.А.Ананян. «Записки» Гмелина как источник по изучению русско-армянских торгово-экономических отношений во второй половине XVIIIв., - «Из истории вековой дружбы», Ер., 1983, с.95-108.

¹⁴⁴ Վ. Ա. Դիլոյան, էջեր Ռուսաստանի հայ վաճառականության կապիտալի պատմությունից, - ՊՐՀ, 1962, թիվ 4, էջ 69-82: Վ. Ա. Դիլոյան. Լազարյանների հասարակական-քաղաքական գործունեության պատմությունից, էջ 17-129:

¹⁴⁵ Լ. Ա. Խաչիկյան, Հայերը հին Մոսկվայում և Մոսկվա տանող ճանապարհների վրա, - «Քանրեր Մատենադարանի», թիվ 13, Եր., 1980, էջ 7-107: Տե՛ս նաև Լևոն Խաչիկյան, Աշխատություններ, հ. Բ, Եր., «Գանձասար», 1999, էջ 150-240:

¹⁴⁶ Армяно-русские отношения в XVII веке. Сборник документов. Подготовили к печати В. А. Парсамян, В. К. Восканян, С. А. Тер-Авакимова. Под ред. проф. В. А. Парсамяна, Ереван, Изд. АН Арм. ССР, 1953, с.44-67. В. К. Восканян. Новоторговый устав и договор с Армянской компанией в 1667 г., - «Известия АН Арм. ССР», 1947, № 6. Ծ. Լ. Խաչիկյան, 1667 թ. հայ-ռուսական առևտրական պայմանագիրը և Նոր Զուղայի ինքնավար մարմինները, - «Հայկական հայագիտական հանդէս», հ. 8, Պեյրուսի, 1980, էջ 259-288: Ծ. Լ. Խաչիկյան, Նոր Զուղայի հայ վաճառականությունը և նրա առևտրատնտեսական կապերը Ռուսաստանի հետ XVII-XVIII դդ., Եր., 1988: Վ. Ա. Բալայրոյան, Համաշխարհային առևտուրը և Իրանահայությունը 17-րդ դարում, Թեհրան, 1996, էջ 139-193:

¹⁴⁷ Н. Г. Куханова. Очерки по истории русско-иранских торговых отношений в XVII-первой половине XIX века. Саранск, 1977.

ռուս-վրացական¹⁴⁸, Ռուսաստանի և Միջինասիական ու Կենտրոնական Ասիայի երկրների միջև առևտրի բնագավառում, ռուս-հնդկական առևտրական հարաբերություններում¹⁴⁹ և այլն: 18-րդ դարի վերջին քառորդին հայ վաճառականությունը իր դիրքերը շարունակում էր որոշ չափով պահպանել նաև Օսմանյան պետության ու Ռուսաստանի միջև կատարվող առևտրի բնագավառում¹⁵⁰: Նշված ժամանակաշրջանում հատուկ ուշադրություն էր դարձվում նորանվաճ երկրամասերի բնակեցմանը, առևտրի ու արդյունարերության զարգացմանը: Ռուսաստանը միջազգային շուկայի հետ կապող ծովային դարպասներ դարձան Պետերբուրգը, Ազովը, Աստրախանը: Ցամաքային առևտուրը Այսրկովկասի ու Պարսկաստանի հետ կատարվում էր Ղզլարի, իսկ Միջին Ասիայի և Կենտրոնական Ասիայի երկրների հետ՝ Օրենբուրգի միջոցով: Ռուսաստանում պարբերաբար տեղի ունեցող տոնավաճառների մշտական և հիմնական մասնակիցներից էր միջազգային առևտրի մեծ ավանդույթներ ունեցող հայ վաճառականությունը: Մակարեյան տոնավաճառի մասնակից հայ առևտրականների մեջ տեսնում ենք բացի առևտրական ուղիների վրա գտնվող այլևայլ քաղաքների ներկայացուցիչներից¹⁵¹ նաև Հայաստանի բնակիչներ¹⁵²: Ռուսական իշխանությունների լայն աջակցությունը ստացած հայ վաճառականները 18-րդ դարի երկրորդ կեսին, հենակետ ունենալով Ռուսաստանի հայկական գաղթօջախները, թափանցում էին նաև ռուսական ներքին շուկա¹⁵³ և կազմակերպում անգամ փանցում էին նաև ռուսական ներքին շուկան: Ռուսաստանի ներքին ու արտաքին առևտրից աստիճանաբար դուրս էր մղվում հնդկ վաճառականությունը, որը 17-18-րդ դարի առաջին կեսին մեծ դեր ուներ Ռուսաստանում:

¹⁴⁸ Վ. Մարտիրոսյան, Հայերը Վրաստանի առևտրատնտեսական կյանքում (18-րդ դարի երկրորդ կես), - «էջեր հայ գաղթավայրերի պատմության», խմբագրություն արոճ. Վ. Բ. Բարխուդարյանի և դոկտ. Զավեն Եկավայանի, Եր., 1996, էջ 147-159:

¹⁴⁹ П. А. Чобанян. Роль Закавказских купцов в русско-индийской торговле (XVIII -нач. XIX в.), с. 73-88.

¹⁵⁰ Վ. Բ. Բարխուդարյան. Նոր Նախիջևանի հայկական գաղթը, էջ 280:

¹⁵¹ Թիֆլիս, Ալի, Աստրախան, Դարբանդ, Ղազվին, Համատան, Մազանդարան և այլն:

¹⁵² Հ. Արղունյանի նվիրակության մատյանների գրանցումներում նշված են հետևյալ վայրերը: Աղուլիս, Փառակա, Ցղնա, Գեօրիս, Զուղա, Ղափան, Աստապատ, Քանաբեռ, Գանձակ, Նուխի, Ղազախ, և այլն (տե՛ս ՄՄ, ԿԳ, 4/120, 1029 էջ):

¹⁵³ А. И. Юхт. Участие армянского купечества во внутренней торговле России (20-40-е годы XVIII в.), - ՊՐՀ, 1979, թիվ 3, էջ 112-128:

նի արևելյան առևտրում¹⁵⁴: Հնդիկները հետզհետե իրենց գործունեությունը փոխադրել էին վաճառական բնագավառ, որը, բնականաբար, պետություն կողմից այլևս չէր խրախուսվում¹⁵⁵: Փոխարենը հայ վաճառականությունը մշտապես մեծացնում էր իր ներկայությունը Մակարեյան տնավաճառում: Գ. Ռեմանի նկարագրության համաձայն «...արեմտա - եւրոպացիները... այստեղ գրեթե երկրորդական դեր են խաղում, ռուս և արևելյան վաճառականները զբաղվում են առաջին տեղը և խոսակցությունները կեսը լսվում է բուխարերեն, հայերեն և թաթարերեն լեզուներով»¹⁵⁶: Անդրադաճնալով հայերի և վրացիների առևտրական գործունեությանը, նա գրում է. «Հայերը բերում են մեծ քանակությամբ Քաշմիրի շալեր, պարսկական տարբեր ապրանքներ... դերազանց գորգեր, չոր մրգեր... Վրացիները վաճառում են չոր մրգեր, պարսկական որոշ ապրանքներ, ընկույզ, արևելյան սուրճ և, ի միջի այլոց, նույն ապրանքները, ինչ որ հայերը»¹⁵⁷: Հայ վաճառականների գործունեության տեսակարար կշիռը առավել ակնառու է դառնում այն հանգամանքի հաշվառման դեպքում, երբ նկատի ենք ունենում, որ ինչպես Ռուսաստանում, այնպես էլ Պարսկաստանում և Միջին Ասիայում քանակական առումով լինելով բնակչության անշահ տոկոսը, առևտրական գործունեության բնագավառում զբաղվում էին առաջնակարգ տեղ, և նշված երկրների բնակչության կողմից կատարվող առևտրի գրեթե

կեսը իրականացվում էր հայերի միջոցով: Հայ վաճառականների առևտրական գործունեության հաջող իրականացումը պայմանավորված էր ինչպես Ռուսաստանի հարակից պետություններում հայկական հոծ զանգվածները ու զաղթյալների առկայությամբ, այնպես էլ տարբեր սոցիալ-տնտեսական, քաղաքական ու մշակութային միջավայրերում գործելու հայ վաճառականների կողմից հմտությունների զբոսաբան փաստով: Ռուս-իրանական առևտրին մասնակցում էին նաև Ասորիսանի կաթողիկոս դավանանքի հայազգի վաճառականները (մասնավորապես՝ Յրանց Յակովլև, Միքայել Թաթուսով¹⁵⁸ և այլք), որոնք հայազգի այլ վաճառականների հետ միասին որոշակի նպաստ էին բերում Ռուսաստանի տնտեսական բարգավաճմանը, Ռուսաստանի և Արևելքի երկրների միջև առևտրա-տնտեսական ու քաղաքական հարաբերությունների բարելավմանը, ու նաև հայ-ռուսական կապերի ամրապնդման գործին¹⁵⁹: Հայկական հոծ զանգվածներ կային ոչ միայն Այսրիովկասի առևտրական ճանապարհները վրա դնելով բոլոր քաղաքներում (Բաքու, Շամախի, Դերբենտ և այլն), այլև Պարսկաստանում, Հնդկաստանում, Աֆղանստանում, Միջին Ասիայում, Օսմանյան կայսրությունում և այլն: Ավելացնենք, որ Հնդկաստան, Աֆղանստան, Տիբեթ, Չինաստան և Միջին Ասիա ռուս առևտրականները գրեթե մուտք չունեին, և Ռուսաստանի հետ առևտրի գերակշիռ մասը կատարվում էր հայ և մասամբ միջինասիական մահմեդական վաճառականության միջոցով:

Դ. Թեյլորը կազմել է Դաքքայից 1753 թ. մետաքսի կտորեղենի արտահանման աղյուսակ, ըստ որի միայն Բասրայի, Ջիզդայի և Մոքի շուկաների համար հայ վաճառականները արտահանել են ընդհանուր գումարով 500.000 ռուբլի կամ 62.5 հազար ֆ. ստեռլինգի ապրանք: Անգլիացիները արտահանել են 350.000 ռուբլի (43.75 հազ. ֆ. ստեռլինգ) ապրանք դեպի Եւրոպա և 200.000 դեպի Ասիական երկրներ, իսկ ֆրանսիացիները՝ ընդամենը 300.000 ռուբլի ապրանք: Հուլանդական ընկերությունների արտահանումը կազմել է 100.000 ռուբլի, պարսկական վաճառականության արտահանումը՝ 100.000 ռուբլի չափով¹⁶⁰: Այսպիսով, միայն այս օրինակով

¹⁵⁴ «Русско-индийские отношения в XVII веке» (сборник документов), М., 1958.
¹⁵⁵ Н. Б. Байкова. Роль Средней Азии в русско-индийских торговых связях (первая половина XVI—вторая пол. XVIII в.), Ташкент, 1964, с. 173—174. XVIII դարի վերջերին առևտրի զարգացման համար շահազրկու և իրազեկ անձնավորություններից մեկը՝ Մ. Ակիրինսկին, գրում էր, որ թեև Ասորիսանում գեղես կան շատ հնդիկներ, բայց «их можно называть купцами, торгующими не товарами, а деньгами, которые отдают в проценты. Коль же скоро из них кто обогатится, то с сокровищем своим возвращается восвояси: следовательно, они более для России вредны, нежели полезны для торговли...» (Е. Я. Локстерник, Русско-индийские экономические, научные и культурные связи в XIX в., М., 1966, с. 51—52. Հմտ. Н. Գ. Կուկանովա, Освещение русско-иранских экономических связей конца XVIII—XIX в. в в малозвестных архивных документах. — «Иран» (Сб. статей), М., 1973, с. 181—194):
¹⁵⁶ «Северный архив», 1822, 8, էջ 146:
¹⁵⁷ Նույն տեղում, էջ 150—151: Մենք ընդգրկում ենք նաև վրացիների մասին եղած հազարավորները, քանզի վերահայերը ներկայանում էին որպես Վրաստանի քաղաքացիներ և ըստ այդմ «վրացիներ» և այդ ընդհուպ մինչև իսկ ժժ. դարում: Բնակիչը նորա (իմա՝ Թիֆլիսի - Գ. Ջ.) Հայր և Վիրք՝ առ այլազգի միահաղոյն Գոռչիսի անուանեալ, հոչակաւոր են...» (Տե՛ս Մտարով Թաղիսիացի, Ուղեգրություններ, հոգվածներ, նամակներ, վավերագրեր: Աշխատասիրություններ Ռ. Նանումյանի, Եր., 1975, էջ 169):

¹⁵⁸ ПГАДА, ф.23, л. 13, л. 158.
¹⁵⁹ А. И. Юхт. Торговля России со странами Востока во второй половине XVIII в. и армянское купечество, էջ 93:
¹⁶⁰ D. A. Taylor. A Descriptive and Historical Account of the Cotton Manufactures of Dacca in Bengal, London, 1851, p. 130—131. Օգտագործված է ըստ А. И. Чичерова.

անգամ ակնհայտ է հայ վաճառականության ունեցած կշիռը միջազգային առևտրական ապրանքաշրջանառության մեջ:

Նշելի է, որ հայ վաճառականությունը կենտրոնացած էր ոչ միայն Դաբաթում, այլև Մադրասում, Դելիում, Կալկաթում և Հնդկաստանի այլևայլ քաղաքներում (Ազրա, Բոմբեյ և այլն)¹⁶¹: Հայկական համայնքներ էին ձևավորվել նաև Աֆղանստանում¹⁶²: Դեռևս 1766 թվականի հոկտեմբերին Միմենոն Երևանցի կաթողիկոսը, տեղեկանալով Աֆղանստանում հայ համայնքի առաջնորդ չոնեննալու մասին¹⁶³, գրում է «Ուչքլիխեի» առաջնորդ Ջաբարիա վարդապետին, որպեսզի այնտեղ գտնվող Մարկոս վարդապետին համոզի Աֆղանստան ճանապարհով համար ներկայանալ կաթողիկոսին: Միմենոն գրում էր. «Ի ներկայումս ի կողմանցն Դանդահարու և Քեարուլու մարդ եկն առ մեզ և պատմեաց զորպիսությունս ժողովրդեան տեղւոյն, որք յազգէս Հայոց կան անդ, որք և գրեալ էին առ մեզ զթուղթ մեծաւ աղերսանօք և խնդրեալ էին առաքել առ ինքեանս զեպիսկոպոս մի: Զի բազմությունք ժողովրդոց ժողովեցեալ կան անդ և ոչ ունին զկարգաւոր և ոչ զընթերցող ոք և մնան առանց մկրտութեան և քահանայիւ թաղման և ուսումն գրոյ խափանեալ է ի նոցանէ: Արդ, այսր աղագաւ մեծագոյն հոգս ունիմք յղել ընդ նոցին աղերսանաց զեպիսկոպոս մի, զի մեծագոյն

Экономическое развитие Индии перед английским завоеванием, М., 1965, с. 146-147.

¹⁶¹ Հնդկահայ գաղթօջախների և վաճառականության մասին տե՛ս Mesrobs Seth. Armenians in India from the Earliest Times to the Present Day. Calcutta, 1938. *Վերահրատարակությունը՝ Կալկաթա, 1983: Bazil Anne. Armenian settlements in India. From the Earliest Times to the Present Day. West Bengal. The Armenian College. 1969. P. A. Абрамян. Армянские источники XVIII в. об Индии. Ереван. 1968. П. А. Чобанян. Роль Закавказских купцов в русско-индийской торговле, с. 73-88.*

¹⁶² Րաֆֆի, Հայերը Քարուլի մեջ, «Երկերի ժողովածու», հ. XI, Եր., 1991, էջ 317-325: Ռ. Ա. Արրահամյան, Հայերն Աֆղանստանում, «Արևելագիտության հարցեր» (գիտական աշխատությունների միջբուհական ժողովածու), պրակ 3-4, Եր., 1987, էջ 149-166:

¹⁶³ Հայ հոգևորականները պարբերաբար ուղարկվում էին Աֆղանստան՝ հովվելու տեղի հայազգի բնակչությանը: Ուշագրավ վկայություն է նաև 1710 թ. ինքնադիր հիշատակարանը, որտեղ Տեր Հովսեփը իր հոտի մարդկանց մի մեծ ցուցակ ներկայացնելուց հետո, վերջում նշում է.«Այսչափ ժողովուրդս թողի իմ որդի Տէր Աբրահամի ձեռն: Ի Հայրապետութեան Տեսուն Աղէքսանդր կաթողիկոսին և ի թագաւորութեան Վախդանգ խանին, ես՝ Տէր Յովսէփ, որ զնացի Դանդահար, էր թիվն ՌՃՄԹ (1710) ի մարտի Ժր (12) զրեցաւ» (Մաշտոցի անվ. Մատենադարան, Դրսի լուսանկար, թիվ 271, Բրիտանական թանգարանի Օդ. 5074 ձեռագիր, էջ 10, բնագիր):

մեղք է թէ ոչ լըղիցեմք և թերևս ի յոչ յղիլն մեր, պատրիշք երթիցեն առ նոսա և կորուսանիցեն դայնքան բազմութիւնն»¹⁶⁴: Շտապեցնելով Ջաբարիա վարդապետին, կաթողիկոսը գրում է, թե «Ի ներկայումս թիֆլիզեցի վաճառականք զոն անդ գնացող, ընդ նոսա առաքելոց եմք»¹⁶⁵: 1784 թ. հոկտեմբերին Աստրախանից Հովսեփ Արղունթյանի Քարուլում գտնվող տեր Հովհաննեսին գրած նամակից տեղեկանում ենք, որ իրոք Հ. Արղունթյանի կողմից Աստրախանից Քարուլ են առաքվել հայ հոգևորականներ¹⁶⁶: Բերված նամակը կարևոր է այն առումով, որ վկայում է ոչ միայն Հայոց եկեղեցու առաջնորդների մտահոգ վերաբերմունքը հայ բնակչության ճակատագրի հանդեպ, այլև այն աշխույժ կապի մասին, որ գոյություն ուներ հայ գաղթօջախների ու հայոց եկեղեցու հոգևոր կենտրոնների միջև¹⁶⁷: 1788 թ. դեկտեմբերի 31-ին Հովսեփ Արղունթյանին ուղղված Դուռկաս կաթողիկոսի նամակից տեղեկանում ենք, որ Հ. Արղունթյանը կաթողիկոսից օրհնություն թուղթ էր խնդրել բուխարացի ոմն Հակոբի հանգուցյալ եղբոր համար¹⁶⁸: Ռուսաստանից Միջին Ասիա և Աֆղանստան հայ վաճառականության աշխույժ երթևեկի մասին են վկայում նաև այլ վավերագրեր: 1797 թ. հունիսի 23-ին Նոր Նախիջևանի բնակիչ վաճառական Հովակիմ դի Գալուստովը Օրենբուրգից Սերգեյ Լազարևիչին (Լաշկարև) գրած դիմումի մեջ հայտնում է, որ «անցյալ՝ 1786 թվականին Օրենբուրգի սահմանների հարևանությունը սարող զրոգական Փոքր Համայնքի կողմից նրանց տափաստանով Բուխարա անցնելու ժամանակ ինձնից կողպատվել է ավելի քան հինգ հազար /ոուբլու/ ապրանք»: Հովակիմ Գալուստովը այդ գումարի ապրանքից տարբեր միջոցներով կարողացել է ետ ստանալ միայն 3.000 ոուբլու ապրանք, սակայն «մնացած մասը դեռևս չեմ ստացել և ստանալու հույս չունենալով, համարձակվում եմ ավարտելու համար հեռավոր իմ այս

¹⁶⁴ ՄՄ, ձեռ. 2912, թ. 165բ:
¹⁶⁵ Նույն տեղում:
¹⁶⁶ «Ես ձեզ այն պայմանովն առաքեցի, որ դուք երեք տարի ի Քեապուլ նստիք և քահանայութիւն ստնէք և ողաց որդիքն կարգացնէք, որ իւրեանց միջիցն լինի քահանայ վասն իւրեանց և եթէ կարգացող տիրացու կայր, առաքէիք ինձ, որ ես տեղս ձեռնադրեալ և քահանայ արարեալ յեսս դարձուցանէի...ընտանիքն ձեր ևս առողջ են և տեսս ձերում կարօտին և ամենեքեան զձեզ ողջունեն» (ՄՄ, ձեռ. 4496, թ. 220-221):
¹⁶⁷ Հովսեփ Արղունթյանը գրում է. «Եթէ դիր գրէք... ի վերայ թղթոյն Հայերէն և տաճկերէն հասի Սաֆարի անունն զրէք ի Բուխարայ զարկէք, անտի մեզ կու հասուցանեն, տեղն հայեր ևս կան...» (ՄՄ, ձեռ. 4496, թ. 220-221):
¹⁶⁸ ՄՄ, ձեռ. 4501, էջ 1195: «Դիւան Հայոց պատմութեան», հ. Թ, էջ 89-90:

քաղաքակնները և Օրենքուրդ քաղաքում մեծ ծախսերով երկարատև իմ բնակությունը, որոշեցի մանրամասն նկարագրությամբ այս փոստով իմ խնդրազիրը առաքել Ն. Կ. Մեծությանը՝ Հայանի պատճառներով ինձ փոխհատուցելու մասին»¹⁶⁹։ Հովակիմ Գալուստովը այնուհետև խնդրում է իրեն տեղյակ պահել Պավել Առաջին կայսեր վճռի մասին¹⁷⁰։

Ռուսաստանի Հայ գաղթօջախների և Միջին Ասիայի առևտրաշահ քաղաքների միջև Հայ վաճառականների կապի մասին է վկայում նաև Թիֆլիսի բնակիչ Ավթանդիլ Դավթյանի Հովսեփ Արղուժյանին գրած 1798 թ. նամակը, որտեղ նկարագրված են իրենց առևտրական գործառնություններն ու վաճառքի համար տարած ապրանքները, իրենց կրած նեղություններն ու երթուղին¹⁷¹։ Հովսեփ Արղուժյանը Ավթանդիլ Դավթյանին գրած և Բու-

¹⁶⁹ АВВР, ф. СРА, оп. 100/3, 1764-1800, л. 462, л.10.
¹⁷⁰ 1797թ. հունիսի 22-ով թվագրված Պավել I կայսրին գրած նրա խնդրազիրը տե՛ս նույն տեղում, թ.11-12:
¹⁷¹ ՄՄ, ԿԳ, թղթ. 8, վավ. 3: Ավթանդիլ Դավթյանը վկայում է, որ Սամարղանդում եղել են Հայերեն ձեռագրեր. «Վասն Սամարղանդ Հայոց գրանքի ջահտան. մեր Հարս ածի քեռայ որդին որ լինի Հայի Հատեփանի որդին, որ թավրիզ թորքացի է, անունըն Նոնիայ, սայ Աղա Մահ/մա/դ խանի Հետ գալիս այ Մայաթի, Մայաթից Փոքր Մայթան Հետ դուրս այ գալիս որ դնայ Թավրիզ, թուրք/քմանի զօրք այ պատահում, բանում ին բերում ին տիղս Վէլինաման փէշքաշ անում, հիմիկ Վէլինաման լիվ խաթրն ոգում այ, Վէլինամանի գնաց Սամարղանդ, յիշեալիս էլ խտորն տարավ, նորայ գաղաչիցի, որ բալբամ լին/ի/ փողով կամ գողութեանմ/բալբամ ճանպգէ: Միոյ տեղիս միծավորն այնքան տարիճ անիծած է, որ յիթէ իմանայ կրակումն կէրի: Հետոյ գրանքն որ կայ, մին մէջիթումն դարսած և դուռն շարած, մին կողմի պատն քանգվում այ և բազում գրանք դուրս ին բերում հասարաներս (") ծախում, ահտարներն պատում ին և մանդրում, փաթաթում, յետս էս մեծավորն իմանում այ, բարգանում, էլ հաւաքիլ այ տալիս տիղն գնում, պատն էլ/ շինիլ այ տալիս: Հրամանը չգրած բանդայ շատ էղուր հօբումն էի, տեղի տէնոց մարթօցն միշտ հարցնում էի, ասում ին, թէ գերն մաքաղաթ այ և գրած տիղարէնքն ճիճուն կէրիլ այ...» (ՄՄ, ԿԳ, թղթ. 8, վավ. 3): Հովսեփ Արղուժյանը 1798 թ. օգոստոսի 20-ի պատասխան նամակում շարադրելով Վրաստանի և ուսումնասիրող իրադրությունները, գրում է. «Յաղագս ի Սամարղանդ եղեալ գրեանցն, որ ինչ գրեալ էիր, յոյժ ուրախ եղաք, որ կայ անդ գրեանքն մեր: Կարծեմ, որ եթէ մօլլին նորա տան-քսան թուաման տուող լինի, թողու որքան և անուռ, գոյն Ստեփանի որդի Նոնիան բարով առնես, նորա մի նղաբայն ի Ղզլար գուրքան ունի և Բայինդուրն մեղ մօտ էր, ես իմ խարճով բերի ի Ղզլար:...Ասես, որ Հեսեի, լինի թէ քանի մի սաղ և կամ կտոր գրեանք հանէ: Այլ ես խոստանամ քեզ, պարոն Ավթանդիլ, Հեսեիս վասն այսմ և փող խարճես, որքան և խարճել, մէկն երկու, իմ պարտքն է, վասն որոյ եթէ փողի բան լինի, երբէք չխնայէս, ասես և գրեանքն առնուս, եթէ դու յուշանալոյ լինիս, ով որ եկող լինի, ընդ նմա առաքեսցես: Մէկ լինի, կտոր լինի, մէկ թուրթ լինի, հարկիւ գրկիս և ոչ թողուս ի ձեռաց» (ՄՄ, ձեռ. 2951, թ. 208թ-209ա): Համոզված լինելով, որ այդ ձեռագրերը Հայաստանից Սամարղանդ են տարվել Լենկ Թեմուրի մամանակ, Հ. Արղուժյանը շարունակում է.«այժմ ես բոլորովին միամիտ եմ, որ

խարա առաքած իր 1799 թ. օգոստոսի 18-ի նամակով նրան հորդորում է «գամենայն հոգեղ քոյ թողեալ եկեալ իցես ի Թիֆլիզ՝ ի յօղնութիւն իղջալի ընտանեացդ: Արքայն ևս գրէ, որ դաս... Քարուլու ժողովրդի աղալաւ և ես ցաւիմ: Ի սեպտեմբեր ամսոջն դնալոց եմ ի Հաշտարիան և անտի առաքելոց եմ գրահանայ»:

ԺԸ. դարի երկրորդ կեսից Միջին Ասիայի նկատմամբ փոխվում է նաև Ռուսաստանի վերաբերմունքը: Ուղեբեկական խանությունները հետզհետե սկսում են դիմավել ոչ որպես Հնդկաստան տանող ճանապարհին գանձվող լուկ տարանցիկ երկրներ, այլ առևտրա-տնտեսական ու քաղաքական համագործակցության ինքնուրույն կազմավորումներ: Եթե 1763 թ. Ռուսական կառավարությունը Միջին Ասիան դեռևս պատկերում էր որպես մի չըջան, որտեղ ապրում են "многo хнщных народов", որոնք խոչընդոտում են ուսահնդկական առևտրին, ապա 1780թ. արդեն Բուխարա առաքված Բեկչուրիներին ցուցում էր տրվում ուսումնասիրելու Ռուսաստանի և Բուխարայի միջև առևտրական հարաբերություններ հաստատելու հնարավորության, Բուխարայում Ռուսական առևտրական կետերի ստեղծման և այլ հարցեր¹⁷²: Միջերում առևտրական գործառնությունները իրականացվում էին Հիմնականում բնիկներին միջոցով և հազվադեպ միայն՝ ուսումնասիրողներին: Ավելին, դեպի Չինաստան, Տիբեթ և Աֆղանստան ճանապարհվում էին Հիմնականում միջինասիական և Հայ վաճառականները՝ ինչպես ասվեց, ուսուցիչներ մուտքը նշված երկրներ արգելված լինելու պատճառով: Այդ մասին ուղղակի վկայում են նաև Միբիրի գեներալ նահանգապետները արքունիք ներկայացրած իրենց հաշվետվությունների մեջ. «Միբիրյան սահմաններում գտնվող Ռուսական առևտրականները գործ են ունենում միայն ասիական մերձակա ժողովուրդների հետ, ինչպիսիք են Բուխարացիները,

դու իմ վաղուց հետէ կամքն և փափակն լցուցանելուց ես, փողն ինձանէ, իսկ աշխատանքն՝ քեզանէ: Բաց ի սիրոյս, վարձդ յԱստուծոյ բարձրոյն, վասն ազատելոյ գգբիման չորս հարիւր տարւոյ: ...Սպասեմ այսմ պատասխանւոյ շուտով ընկալնուլ ընդ փափակելի գրեանցն կապելուց...» (նույն տեղում):

¹⁷² ՄՄ, ձեռ. 2951, թ. 289 բ: Այս նամակը վկայում է, թե Քարուլի Հայ Համայնքը կրկին մնացել էր առանց քահանայի, որը դարձել էր ընդհանուր մտահոգության առարկա: Աֆղանստանի Հայ գաղթօջախի պատմության մասին տե՛ս նաև Ե. Բ. Буняков, К истории сношений России с среднеазиатскими ханствами в XIX в., – „Советское востоковедение“, М.– Л., 1941, т. 2, с. 6: Հմմտ. С. Ե. Жуковский. К истории сношений России с Бухарою и Хивою конца XVIII в.–“Восточный сборник”, кн. II, Петроград, 1916; Герман. Исторический взгляд на сношения России с Хивинской областью, – “Вестник Европы”, 1822, 21.

Տաշկինցիները և Կոկանդցիները, իսկ Տիրեթ և Քաշմիր Աստիպուլատինսկից գնում էին շալեր գնելու համար միայն որոշ Բաշկիրցիներ, Տաշկինցիներ և հայեր և կամ Վրացական տիրապետության նախկին Հոլատսկները: Սակայն, բոլոր նշված քաղաքների հետ (Լհասա, Տիրեթ, Քաշմիր և այլն-Պ. Ջ.) բացահայտ հարաբերություններ հաստատել հնարավոր չէ, որովհետև այդ վայրեր կարելի է անցնել միայն Չինական տիրապետություններով, որտեղ ուսանելի երևալը արգելված է, և մյուս կողմից, որ այժի, մանվածքի ու չմանված բրդի վաճառքը այնտեղ ազատ չէ, և հատկապես Ռուսների համար, ուստի և մեր վաճառականները այնտեղ գնալ չեն կարող ոչ իրենց անունից և ոչ եվրոպացու կերպարանքով, այլ պետք է զգեստավորվեն (կերպարանափոխվեն) ասիացիների նման և իմանան Տաշկինցիների լեզուն»:¹⁷³

Եթե ժԸ. դարի առաջին կեսին ուս-հնդկական առևտուրը կատարվում էր հիմնականում Աստրախանից Կասպից ծովի վրայով և Այսրեղվկասի ցամաքային ծովափով ու հստակորեն չէր տարանջատվում ուս-իրանական առևտրաշրջանառությունից, ապա ժԸ. դարի երկրորդ կեսին ակնհայտորեն աճեց Միջին Ասիայի և Հնդկաստան տանող նրա քաղաքականային ուղիների դերը: 1735 թ. հիմնադրված Օրենբուրգ էր փոխադրվում Աստրախանի ուսական պետական հիմնարկների մեծ մասը, որոնք կոչված էին կառավարելու նաև Միջին Ասիայի հետ Ռուսաստանի տնտեսական ու դիվանագիտական հարաբերությունները: Վաճառականներին դեպի Օրենբուրգ գալթակղելու նպատակով 1739 թ. օգոստոսի 20-ին կայսերական հրամանով կարգադրվում էր. «Նրանցից վերցնել ... մեկ ուսուցիչ երեք կոպեկ» (այսինքն՝ երեք տոկոս - Պ. Ջ.) ավելի պակաս, քան Աստրախանում գտնվող օտարերկրացիներից: Արտոնությունները սահմանվում էին 10 տարի ժամկետով¹⁷⁴: Հրովարտվում կոչ էր արվում «Ասիական երկրներից բոլոր եկամտներին՝ տարբեր դավանանքներ և կոչումներ ունեցող հույների, հայերին, հնդիկներին, պարսիկներին, Բուխարացիներին, Խվիվցիներին,

կալմիկներին և ուրիշներին, թույլատրել զալ և ապրել, զբաղվել առևտրով և ցանկացած արհեստով»¹⁷⁵:

Հետզհետե Արևելք էր տեղափոխվում նաև հայ վաճառականների մի մասը: Ռուսական կառավարությունը միջոցներ էր ձեռնարկում ավելի սերտ հարաբերություններ հաստատելու Միջին Ասիայի հետ՝ շահագրգռված լինելով զարգացնելու առևտրական հարաբերությունները ինչպես Միջին Ասիայի, այնպես էլ Աֆղանստանի և Հնդկաստանի հետ: Նման հանձնարարություններով այնտեղ էին ուղարկվում ինչպես այլազգի (Մեհհաթի Ռաֆաիլով), այնպես էլ հայ վաճառականներ ու դիվանագետներ Բոգդան Ասլանովը, Սիմեոն Մազաթովը, Իվան Մուրատովը և այլք: Ռուսաստանի հետ սերտ առևտրական հարաբերություններ հաստատելու մեջ շահագրգռված էին նաև միջինասիական իշխողներն ու վաճառականները, որոնց ներկայացուցիչները ևս հաճախակի հայտնվում էին Ռուսաստանում իրենց սեփական նախաձեռնությամբ, առաջարկություններով ու ծրագրերով¹⁷⁶: ԺԸ. դ. վերջերին կազմված Ռուսաստանի և Արևելքի երկրների միջև առևտրական հարաբերությունների զարգացման տարբեր ծրագրերում հաճախ են հիշատակվում հայ խոշոր վաճառականների անուններ, որոնց հետ էին կապվում այս կամ այն ծրագրի իրականացման հույսերը: Այդպիսին էր, մասնավորապես, Աստրախանի հայազգի բնակիչ Մկրտում Գալստյանը (Նիկիտա Կալուստով): Աստրախանի փոխնահանգապետ Պետր Ալարյատինը 1792 թ. Ա. Ա. Բեզբրոդկոյին ներկայացրած իր ծրագրում, որ վերնադրված էր «Հնդկաստանի հետ առևտրական ընկերության ստեղծման նախագիծ», գրում է. «առավել զյուրին է Հնդկաստանի հետ առևտուրը վերականգնել այն հիմքի վրա, ինչպես արվում էր նախկինում. և այստեղի հայերից Նիկիտա Կալուստովը [իմա՝ Մկրտում Գալստյան-Պ. Ջ.], որը կարծում եմ Ձերդ Գերբազանցությունը ծանոթ է հանդուցյալ պայծառափայլ իշխանի հետ նախկինում ունեցած գրադրություններից, Զուղայում ունենալով հարազատ եղբայր, հաճուքով ստանձնում է այդ: Եվ այս դեպքում ավելի հուսալի է հենվել նրա վրա, քան այստեղ ապրող հնդիկների համայնքի, որովհետև նրանք (իմա՝ հնդիկները-Պ. Ջ.) Հնդկաստանի հետ

¹⁷³ ГИП им. М. Е. Салтыкова-Щедрина, отдел Рукописей, Ф. IV, 66, с. 1-4.

¹⁷⁴ Н. Б. Байкова. Роль Средней Азии в русско-индийских торговых связях (первая пол. XVI — вторая пол. XVIII в.), Ташкент, 1964, с. 177-178. Միանգամայն բնորոշելի են Ա. Յուխտի դիտարկումները ուս-իրանական առևտրի անկման պատճառների վերաբերյալ, որ բացատրում է Իրանում նազիր շահի սպանությունից հետո սկսված քաղաքական անկայունությամբ ու հայ վաճառականության դեմ Իրանում անգլիական Արևելյան-հնդկական ընկերության մրցակցություն հանդաժանություն: Տե՛ս А. Н. Юхт. Торговля России со странами Востока..., էջ 88-89:

¹⁷⁵ Նույն տեղում, էջ 180:

¹⁷⁶ А. А. Семенов. К истории дипломатических сношений между Россией и Бухарой в нач. XIX в., - "Известия АН Уз. ССР", Ташкент, 1951, I, с. 85-95.

առևտրական հարաբերությունները չունենն և իրենք էլ մեծ չարջիներ են»¹⁷⁷:

Առևտրական ճանապարհների ընտրություն հարցում ևս բերվում է հայ վաճառականների ընտրած երթուղիների օրինակը: Այսպես, Կասպից ծովից Հնդկաստան ապրանքափոխադրության ուղիների քննարկման ժամանակ ներկայացվում են ոչ միայն Իրանի տարածքով անցնող, այլև Խիվայով ու Բուխարայով դեպի Հնդկաստան ձգվող երթուղիների տարբերակները: Նույն նախագծում, անդրադառնալով այդ հարցին, Պ. Սկարյատինը գրում է. «Պետք է սասն նաև, որ Կասպից ծովի ձախ կողմում Խիվայի և Բուխարայի վրայով կարող է լինել և այժմ էլ կա ճանապարհ դեպի Հնդկաստան, և Հնդկաստանից տարվա ընթացքում ոչ մեծ քանակի ապարնքներ են բերվում: Այս ճանապարհով այստեղի հայերից մի քանի անգամ անցել է Սողոմոն Սերգեևը, որը այն վայրերում հազվագյուտ ոսկերչության արվեստը իմանալով, հովանավորվել էր Քարուլի Թեմիր խանի կողմից, ունի նրանից ստացած հրովարտակ (ֆերման), որով հրամայվում է իր տիրույթներում նրանից մաքսեր չգանձել և ոչ ոք իրավունք չունենա նրան նեղություն և վիշտ պատճառել»¹⁷⁸: Միջինասիական ներկայացուցիչները իրենք էին առաջարկել Մկրտում Գալստյանին Կասպից ծովի արևելյան ափին հիմնադրել առևտրական հենակետ: Այդ մասին վկայում է ոչ միայն Պ. Սկարյատինը¹⁷⁹, այլև Աստրախանի մաքսատան անօրեն հայազգի Իվանովը. «... այս մահամեղական առաջնորդը (ախուն) մի քանի տարի առաջ գրել էր Աստրախանի նախկին քաղաքների Նիխիտա Կալուստովին՝ հրավիրելով նրան բացելու նշված վայրում տոնավաճառ: Սակայն վերջինս, այդ մեկ մասնավոր անձի ուժերից վեր ձեռնարկում համարելով, անուշադրության մատնեց այն»¹⁸⁰:

¹⁷⁷ “Русско-индийские отношения в XVIII в.”, Св. док., М., 1965, с. 380.

¹⁷⁸ “Русско-индийские отношения в XVIII в.”, с. 381-382.

¹⁷⁹ “Русско-индийские отношения в XVIII в.”, с. 382-383.

¹⁸⁰ ЦГИАР, ф. 13, оп. 2, л. 1083, л. 5. Մաքսատան անօրեն Իվանովը մեկը Զիմ-չիլիի վկայությամբ, ազգությամբ հայ էր և իր ազգականը: Պավել Առաջինին գրած նամակում նա հայտնում է. “к совершенному моему обрадованию нашел я здесь (իմն՝ Աստրախանում՝ Պ, Զ.) ближайших моих родственников, произходящих равно как и я, от древняго рода царя арменскаго Аршака Великого — двух покойнаго дяди моего мелника Иогана князя Аршакунянскаго внуков Семена и Авета, прозванных по выезде в Россию по имени того дяди моего, а их деда- Ивановыми... И из них Семен по немаловажному службю В. И. В. продолжении девять лет уже как произведен капитаном, а прошлаго 1798 года

1800 թ. վավերագրերից մեկում, որ վերնագրված է «Անվանացուցակ Օրենքուրդից դեպի Բուխարա և Խիվա առևտրով զբաղվող վաճառականներին՝ ողջ ապրանքաշրջանառության գումարների նշումով», Մկրտում Գալստյանի անվան դիմաց նշված է 100.000 ռուբլու ապրանքաշրջանառության գումար¹⁸¹: Նրա վարած առևտրական գործունեությունը հասի մասին վկայում են նաև էնդիլիում Ռուսական Հյուպատոս Սկիլիչիի 1787 թ. Կոմերց-Կոլեգիային ուղղած առաջարկություններում եղած հաղորդումները: Վերջինս գրում է, թե մրցակցության ու եղած անբարենպաստ մի շարք հանգամանքների պատճառով ռուս խոշոր վաճառականները ետ են քաշվել Իրանի հետ կատարվող առևտրից և ասպարեղում մնացել են համեմատաբար փոքր զրամաղուլս ունեցող վաճառականները: Հյուպատոսի կարծիքով ռուս-իրանական առևտրի անկման պատճառներից է նաև այն, որ «Ռուսական նախկին կապիտալիստներից ոչ ոք այստեղ՝ Պարսկաստանում, այժմ առևտուր չունի, բացի Իվան Սիտնեից և Նիխիտա Կալուստովից, իսկ Հայկական վաճառականներից /նրանք/, ովքեր այստեղ ունեն իրենց գործակալները»¹⁸²: Այս վկայությամբ ևս հավաստվում է, որ Մ. Գալստյանը իր որոշակի տեղն ուներ 1770-1790-ական թթ. ռուս-իրանական առևտրական հարաբերություններում:

Հայազգի վաճառականները Ռուսաստան էին ներմուծում ոչ միայն մետաքս, որի պահանջարկը գնալով ավելանում էր և շարունակվում արտահանվել, թեև համեմատաբար փոքր չափերով, դեպի եվրոպական երկրներ, այլև բրինձ, չոր մրգեր և այլն: Միջինասիական խանություններից ներմուծվում էին բամբակ և բամբակյա արտադրանք, ուղտի կաշի, մորթիներ, չամիչ և այլն¹⁸³: Ռուսաստանից Արևելք արտահանվող Աստրախանի մաքսատանը գրանցված ապրանքների մեծ մասը եվրոպական երկրների արտադրանք էր¹⁸⁴:

переименован титулярным советником и по высочайшему В. И. В. повелению определен вторично в Астраханскую портовую таможенную директором...желаю, чтобы означенныя мои родственники восприяли на себя все знаки приличныя их породе и получа свое достоинство, не именовались более Ивановыми, но князьями Аршакунянскими” (“Армяно-русские отношения...”, IV, с. 511”).

¹⁸¹ ЦГИА СССР, ф. 1374, оп. 3, л. 2490, л.11.

¹⁸² ПГАДА, ф. 276, л. 648, л. 23об. Г. Авадьян, Азербайджан в XVIII веке и взаимоотношения его с Россией, с. 471-472.

¹⁸³ А. И. Юхт. Торговля России со странами Востока..., էջ 93-94:

¹⁸⁴ Նույն տեղում, էջ 97-99:

ԺԸ. դարի վերջին քառորդին Արևելքի հետ առևտրական հարաբերություններում հայերի տեսակարար կշիռը թեև որոշակի անկում է ապրում նույն դարի առաջին կեսի համեմատությամբ՝ այդ առևտրին արևելյան տարրեր ժողովուրդների ներկայացուցիչների հետզհետե ավելի լայնորեն մասնակցություն բերելու հետևանքով, սակայն եղած թվերն իսկ վկայում են հայ վաճառականության այն խոշոր դերը, որ նրանք ունեին նշված ժամանակահատվածում: Եթե 1753-1756 թթ. հայերի իրականացրած առևտրի տեսակարար կշիռը ռուս-արևելյան առևտրի տարեկան շրջանառության մեջ կազմում էր համապատասխանաբար 68.3, 61.0, 51.6 և 58.7 տոկոսը, ապա 1777-1781 թթ. դրանք ունեին հետևյալ տեսքը. 41.8, 31.1, 38.9, 43.8 և 34.4 տոկոս, միջինացված՝ 37.8 %¹⁸⁵: Համեմատության համար կարելի է բերել իրանցի վաճառականների մասնակցության չափի մասին տվյալները: 1753-1756 թթ. ընդհանուր ապրանքաշրջանառության մեջ այն կազմում էր 0.5 տոկոս, 1777-1781 թթ.՝ 24.3 տոկոս¹⁸⁶: Իրանցի¹⁸⁷ վաճառականության ռուս - իրանական առևտրում տոկոսային աճի , իսկ հայ վաճառականության տեսակարար կշիռի նվազման պայմաններում անզամ, չի կարելի արձանագրել, թե «ԺԸ. դարի 70-ական թթ. սկսած հայ վաճառականությունը կորցնում է ռուս-արևելյան առևտրում իր ունեցած առաջատար դերը»:¹⁸⁸

Հայ վաճառականությունը մի զգալի մասով թեև չընկնում էր դեպի Օրենբուրգ և Միջին Ասիա, սակայն Աստրախանում մնացած հայազգի վաճառականությունը շարունակում էր իր մասնակցությունը ունենալ ռուս-իրանական առևտրին, իսկ Կասպից ծովի վրա ունեցած նրանց առևտրական

¹⁸⁵ Նույն տեղում, էջ 100-101: Ն. Գ. Կուկանովան 1753-1756 թվականների համար ներկայացնում է հետևյալ թվերը. 60, 50, 30 և 50:

¹⁸⁶ Նույն տեղում, էջ 102:

¹⁸⁷ Իրանցի տերմինի տակ Օ. Մարկովան, Ն. Կուկանովան, Ա. Յուխտը նկատի ունեն իրանահայատակ այն բոլոր վաճառականներին, որոնց անվան դիմաց չի նշված նրանց ազգային ճշգրիտ պատկանելության մասին: Քանի որ բոլոր մնացած դեպքերում նշվում է միայն վաճառականների կամ դավանանքը և կամ այն վայրերը, որտեղից նրանք ժամանել են, ապա «Իրանցի»-ների մեջ ներառվում են պայմանականորեն նաև «աղբբեջանցի» վաճառականներին, որոնց մեծ մասը ևս հայեր էին: Շահարկելով այդ դիրքորոշումը, աղբբեջանական պատմագիտությունը իրանահայատակներին ներկայացնում է որպես «աղբբեջանցի» և առանձին ամիսների շուրջ եղած թերի տեղեկությունները ընդհանրացնելով տասնամյակների կտրվածքով, խոսում է ռուս-իրանական առևտրում «աղբբեջանցի» վաճառականության գերակշռ. դիրքի մասին: Տե՛ս Գ. Աբալազև, Նշվ. աշխ., էջ 418-420.

¹⁸⁸ А. И. Юхт. Торговля России со странами Востока..., էջ 101,106:

նավերը երթևեկում էին Աստրախանից մինչև Գիլան, Մազանդարան ու Բաբուն՝ փոխադրելով ինչպես նավատերերին պատկանող ապրանքներ, այնպես էլ վճարովի ծառայություններ մատուցելով այլևայլ վաճառականներին: Աստրախանաբնակ քաղաքացիներին Կասպից ծովում նավեր ունենալու իրավունքը կայսերական հրամանագրով թույլատրվել էր 1762 թ.: Այդ թույլատրության հիմքի վրա 1763 թ. արդեն Մոլդսես Սարաֆյանը իրավունք էր ստացել կառուցելու սեփական առևտրական նավեր: Աստրախանի նահանգապետը, սակայն, շուտով կառավարությունից պահանջում է արգելել հայազգի բնակչությանը Կասպից ծովում նավեր ունենալու իրավունքը՝ այդ ներկայացնելով որպես ռուս վաճառականության օրինական բողոքի հետևանք: Կառավարությունը 1769 թ. նահանգապետից պահանջում է ոչ միայն խոչընդոտներ չհարուցել, այլև օժանդակել Մոլդսես Սարաֆյանին՝ ստեղծելու իր սեփական առևտրական նավերը: Այդ վերջին որոշման հիման վրա հայազգի հայտնի գործիչներից Կամպանովը ղեկավարում է սենատին թույլատրելու և իրեն, և թե ցանկություն հայտնած բոլոր հայերին, Կասպից ծովում ունենալու իրենց նավերը: Սենատի 1769 թ. նոյեմբերի 17-ի կարգադրությամբ հերքվում են Աստրախանի նահանգապետի բերած «հիմնավորումները»՝ հայերին արգելելու նավեր ունենալ Կասպից ծովում, և հրահանգվում է «Աստրախանում բնակվող և առևտրով զբաղվող բոլոր հայերին, ովքեր գտնվում են Ն. Կ. Մ. մշտական հպատակության մեջ, թույլատրել կառուցելու ծովային նավեր Կասպից ծովում բեռնափոխարումների համար՝ նույն այն բոլոր հիմքերով, որով բոլոր ռուս վաճառականները ունեն ծովային նավեր: Եվ այն պատճառների մասին, որոնցով նահանգապետը չի կատարել Ն.Կ.Մ. անվանական 1762 և 1763 թթ. կարգադրությունները և այս մասնակցությունից նրանց զրկում է, այդ կարգադրությունները և այս մասնակցությունից նրանց զրկում է, այդ մասին բացատրություններ ներկայացնել Սենատին»¹⁸⁹:

Մեզ են հասել Աստրախանի մադիստրատում կազմված ցուցակներ, որոնցում թվարկված ենք գտնում Կասպից ծովի վրա երթևեկող նավերի ու նրանց տերերի անուններ, այլև առանձին ցուցակով հայտնի է նաև միայն հայազգի վաճառականներին պատկանող նավերի քանակը, նավերի անունները, նավատերերը և նրանց առևտրափոխադրումների տեսականին¹⁹⁰:

¹⁸⁹ Армяно-русские отн., IV, с. 99.
¹⁹⁰ ԺԸ. դարի վերջին քառորդին ևս հայ վաճառականությունը ծովային նավեր ունենալու հնարավորություն էր ստանալու: Այդ մասին վկայություններ են պահպանվել Ղուկաս կաթողիկոսի նամակներում, որոնցից մեկում (գրված՝ 1792 թ. հուլիսի 31-ին)

ղարկվել էր Գ. Ա. Պոսյոմկինին. «մարտի 25-ին այստեղ նավեր երևացին. առաջինը Բաքվից էր, հայազգի Կարապետ Հարուսթյունով վաճառականին պատկանող, որ կոչվում է "Ս. Հովհան", միտաքսով բարձված Գիլա-նում...»¹⁹⁴:

1783թ. է վերաբերում¹⁹⁵ Լազարյանների արխիվում պահպանված հե-տևյալ հաղորդումը. «Բաքվից [չուրս դալով] մարտի 17-ին, այս ապրիլի 1-ին այստեղ ժամանեց Աստրախանի քաղաքացի Կարապետ Հարուսթյունովի "Ս. Հովհան" գալիտոր: Նրանով ժամանողներից տեղեկություն ստացանք, որ Դերբենտի Ֆետ Ալիխանը Կուր գետը զորքով անցնելու ժամանակ Մուղանի տափաստանի զիմաց ջախջախվել է Ղարաբաղի Իբրահիմ խանի կողմից և միայն քսան հեծյալներով փախել այնտեղից Աղսու կոչվող Նոր Շամախի: Ասում են, այս տեղի է ունեցել Տարկի շամխալի դավաճանու-թյան պատճառով, որի հետ նրանք համաձայնել էին Իբրահիմ խանի դեմ: Լինելով ճակատամարտի մեջ, շամխալը իր զորքը ուղարկել է դեպի Իբ-րահիմ խանը և ինքը փոքրիկ խմբով փախել Դաղստան: Այս տեղեկությունը հենց որ ստացվել է Բաքվում, ապա վաճառականները, խույս տալու համար զորքի անակնկալ հարձակումից, անմիջապես նավով մեկնել են Աստրախան, սակայն մեկ նավ դեռևս մնացել է, բայց առանց բռնի...»¹⁹⁶:

Կասպից ծովում հայ վաճառականների ունեցած նավերի հաշվառումը ինքնանպատակ չէր, նրանց միջոցով ռուս-իրանական առևտրին հայերի մասնակցությունը ուրույն բնագավառ էր, որ իր ժամանակին նկատվել էր նաև գաղտնի խորհրդական, Կոմերց-կոլեգիայի սենատոր Պ. Սոյմոնովի կողմից 1798 թ. Հուլիսի 17-ին Ս. Լ. Լաշբարովին ուղղած իր ղեկուցագ-

¹⁹⁴ А. В. Суворов. Документы. Т. II, М., 1951, с. 226. Ուշագրավ է, որ Սև ծովում ռուսական պետության նավատորմի կազմում կար «Գրիգոր Հայոց Մեծաց» ("Григорий Великої Армении") անվանումով ռազմանավ, որ նավարկել է Հիմնականում Սև ծովում և որի հրամանատարը 1791-1798 թթ. եղել է Անտոն Պավելի Ալեքսիանոս: Ss'a "Архив графов Мордвиновых", т. I, СПб., 1901, с. 205, прим. 1.

¹⁹⁵ Վավերագիրը անթվական է, մենք թվագրում ենք ելնելով նրա բովանդակու-թյունից: Դերբենտի Ֆաթալի խանի արշավանքը դեպի Արցախ տեղի է ունեցել 1783 թ. ձմռանը, որի առիթով էլ գեներ. Պ. Ս. Պոսյոմկինը հատուկ նամակով նրա-նից պահանջել էր "не касаться не токмо пределов царя Ираклия..., но и не каса-лись бы ни одного Армянина, яко христианской закон проповедующих"(Армяно-русские отношения..., IV, с. 221).

¹⁹⁶ ԿՄ, Լազարյանների արխիվ, թղթ. 109, դործ 22 (24), վավ. 36:

րում¹⁹⁷, որ նվիրված էր ռուս-իրանական առևտրական հարաբերություննե-րի վիճակի բննութայնը: Արձանագրելով ղեկուցադրի ներկայացման պահի վիճակը, Պ. Սոյմոնովը մի շարք պատճառները թվարկումով նշում է ռուս-պարսկական առևտրում պարսից կողմի գերակշռությունը և հաստատում, թե «այժմ հայերի շատ քիչ մասը, իսկ ռուսները վաճախ պակաս չափով, առևտրը են կատարում Պարսկաստանում»¹⁹⁸:

Պ. Սոյմոնովի այդ դիտարկումը հաստատում է նաև էնդելիում ռուսա-կան հյուսվածատու Մ. Դ. Սիլբրինսկին 1798 թ. հոկտեմբերի 29-ի ղեկուցագ-րում. «...համաճարակ կար և դեռևս կա Գանձակում, Թավրիզում և Արդեբիլում և նրանց կողմից [իմա՝ Բաքվի և Շամախու խաների- Պ. Ջ.] ուղեկալներ են դրվել, որպեսզի վարակված շրջաններից ոչ ոքի ներս չթողնվի իրենց տիրույթներ: Ուստի և թարգմանիչը Շամախում և Բաքվում չի տեսել ոչ մի վաճառական կամ այլ որևէ ճանապարհորդ թավրիզից կամ թե Գանձակից...»¹⁹⁹:

Միայն մեկ հանգամանք մխիթարական է թվում Պ. Սոյմոնովին, այդ ծովային առևտրական նավերի առկայությունն էր, որը դեռևս եկամտու-ներ էր բերում ռուսական կողմին. «Աստրախան և այնտեղից ետ՝ դեպի ծովափնյա քաղաքներ պարսկական վաճառականներին իրենց ապրանքնե-րով փոխադրող մեր ծովային նավերը այս երթերի համար ստանում են իրենց համար զգալի եկամուտ»: Պարսկական և թուրքմենական կողմի ծո-վային նավեր չունենալու հանգամանքը դեռևս ռուս և հայ վաճառական-ներին հնարավորություն էր ընձեռում գոյատևելու՝ իրենց նավերով մաս-նակից դառնալով պարսկական կողմի վաճառականների համար կատարվող ապրանքափոխադրումներին: Սակայն այդ բնագավառը ևս հաստատուն և հուսալի չէր հայ և ռուս վաճառականության համար, և այդ հենց ռուսա-կան կողմի պատճառով. առևտրական նավերի համար լուրջ և վտանգավոր մրցակից էին դարձել ռազմական նավերը, որոնք, ըստ Պ. Սոյմոնովի, «իրենց համար սովորություն են դարձրել ընդունելու ոչ միայն առևտրա-կանների, այլև նրանց ապրանքների փոխադրումը, որ թույլատրելի չէ: Այդ պատճառով տեղի է ունենում հետևյալը. ... ռազմանավերը հաճախ խույս են տալիս օրինական ստուգումներից և իրենց համար հնարավոր

¹⁹⁷ АВВР, ф. СРП, оп. 77/6, 1782-1798гг., л. 484, л. 454-458.

¹⁹⁸ Նույն տեղում, էջ 456.

¹⁹⁹ АВВР, СРП, оп. 77/6, л. 490, л. 176.

բոլոր միջոցներով նպաստում են առանց մաքսի ապրանքների արտահանումը և զբաղվել իսկ զբղում են գանձարանը եկամտատեսերից: Պարսիկների մոտ մեծ պահանջարկ ունեցող ոսկյա և արծաթյա դրամների Ռուսաստանից արտահանման արգելքը խախտվում է, որը տեղի է ունենում ուղևորների և նրանց ապրանքների ռազմանավերում ընդունելու հետևանքով»²⁰⁰: Հեղինակը գրությունից ելքը տեսնում է ռազմանավերի կողմից առևտրականներին ու նրանց ապրանքների փոխադրումը արգելելու մեջ:

Այսպիսով, ժԸ. դարի վերջին քառորդի սկզբներին (1770-ական թթ.) Կթն Հայ վաճառականությունը Ռուսաստանի արևելյան առևտրում ունեղ գերակշռող դիրք, այս 1790-ական թթ. նա արգեն զգալիորեն զիջելով իր զբաղեցրած դիրքը, սակայն շարունակում էր գեոեա կարևոր տեղ ունենալ ուս-արևելյան առևտրահարաբերություններում: Ռուսաստանը օգտագործում էր Հայ վաճառականների փորձառությունը Արևելքի երկրներին հետ առևտրական հարաբերությունների հաստատելու գործում: Այդ առումով խոստեն է 1800 թ. դեկտեմբերին գերմաներեն լեզվով կազմված և ռուսերեն թարգմանությունը հանդերձ Սենատի Գեներալ-պրոկուրորի գրասենյակ հանձնված ռուս-հնդկական առևտրական հարաբերությունների զարգացման և ռուսական արևելա-հնդկական առևտրական ընկերության կազմակերպման մասին մի նախագիծ ևս, որտեղ ավարտելով տնտեսական բոլոր հիմնավորումները, նախագծի իրականացման խնդրում հեղինակը ստիպված է եղել կրկին անդրադառնալու Հայ վաճառականությանը դիմելու հարցին. «Ո՞ր ժողովրդից պետք է այս ընկերությունը կազմակերպվի: Կարող է գարմանալի թվալ, որ ես այստեղ ներկայացնում եմ երկու օտար ժողովուրդների, այն է՝ հոլանդացիներին և հայերին... Հայերը շատ հմուտ են այս առևտրում և Ասիայի ցամաքային ճանապարհներով այն իրականացնելուն, ուստի և հանդիսանում են այս ընկերության համար անհրաժեշտ անդամներ: Ընդ որում, Ասիայի ներքին առևտրական կապերը մինչև օրս անխափան իրականանում են նրանց միջոցով...»²⁰¹:

Ռուս-իրանական առևտրի զարգացման մեջ շահագրգռված էին մասնակից բոլոր կողմերը, այդ թվում նաև Հայ վաճառականությունը, թեև դրան խոչնդոտող քաղաքական փոխհարաբերությունները զնալով ավելի սուր բնույթ էին ստանում: Հակասությունները ռազմական միջոցներով

²⁰⁰ Նույն տեղում, էջ 456-457.

²⁰¹ Русско-индийские отношения в XVIII в. (Сборник документов), М., 1965, с. 411-412.

լուծելու համար Իրանը դեռևս հնարավորություններ չէր տեսնում, իսկ ռուսական կողմը ձգտում էր դիվանագիտական զիջումների գնով մեղմել հակասությունների սրումը:

3.4 ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՓՈՒՍՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԺԸ. դարի երկրորդ կեսի հայոց ազատագրական ձգտումներին համար միավորման առանցք կարող էր ծառայել եկեղեցին, որի հնարավորությունները լիակատար օգտագործելու գործին ձեռնամուխ եղավ 1763 թ. գահ բարձրացած Սիմեոն Երևանցի Հայոց կաթողիկոսը: Նրա բոլոր ջանքերը ուղղված էին առաջին հերթին էջմիածնի հեղինակության բարձրացմանը, ժողովրդի կենսունակ ուժերի համախմբման ու պետականության վերականգնման երաշխավոր դարձնելու գործին: Այդ ուղղությամբ Սիմեոն Երևանցու ջանքերը ծրագրված են ու հետևողական: Էջմիածնի վերահսկողությունը պետք է տարածվեր հասարակության բոլոր շերտերի ողջ դործունեության նկատմամբ և ամենուրեք: Սիմեոն Երևանցին վերստին սահմանում է հայոց ազգային պատկանելության չափանիշը²⁰², որը պետք է առաջնորդող դառնար կենտրոնացված ուժեղ հավաքականություն ստեղծելու ճանապարհին:

Էջմիածնի Հայոց կաթողիկոսության և Ռուսաստանի փոխհարաբերությունները մինչև 1765 թ. կրում էին գերազանցապես դիվանագիտական բնույթ, թեև հայտնի է նաև, որ 1760 թ. Վրաց թեյմուրազ թագավորի Ռուսաստան ճանապարհովելու առիթով Հակոբ Շամսիեցի կաթողիկոսը հատուկ միջնորդական-հանձնարարական նամակով Ռուսաց արքունիքին առաջարկում էր ընդառաջել թեյմուրազ Երկրորդի առաքելությանը՝ նրա խնդրանքները ներկայացնելով նաև որպես Հայոց համար ևս օրախնդիր

²⁰² «Որպես Քրիստոս, ըստ ամենատեսակ բարերարությունների, իշխանություն ունի ի վերայ հասարակ մարդկայինս բնութեան, նոյնպէս և երկրորդապէս և յետ Քրիստոսի՝ Սուրբն Գրիգոր, ըստ բազմատեսակ բարերարութեանն, իշխանութիւն ունի ի վերայ յատուկ ազգիս Հայոց, զորմէ բացասօցն պարտի նախապէս զՀայկազնէութեանէն և զՔրիստոսական հաւատոյն իւրմէ բացասել: Բանդի որ Հայկազնի է և հաւատացեալ Քրիստոսի, սովաւ և ի ձեռն սորա ունի զհաւատն զայն...» (Սիմէոն Երևանցի, Ջամբռ, Վարդաշապատ, 1873, էջ 51):

Հարցեր²⁰³: 1763թ. Հաջորդելով Հակոբ Շամախեցուն, Միմեոն Երևանցին կանգնեց մի շարք հրատապ խնդիրների լուծման առաջ: Մահմեդականութ-
յան տիրապետության պայմաններում էջմիածինը բազում դժվարություն-
ների էր հանդիպում ոչ միայն մահմեդական իշխանությունների հետ հա-
րաբերություններում, այլև հայ իրականության մեջ առկա բազում տարա-
ձայնությունների ու անհոգությունների պատճառով:

Գեռես Հակոբ Շամախեցի կաթողիկոսը իր դահակալության ժամանակ Պարսկաստանում կենտրոնական իշխանության վերացումից և տեղական խաների ինքնիշխան դառնալուց հետո էջմիածնի Աթոռի պահանջները (14 կետով) ներկայացրել էր Երևանի խանին (1173=1759 թ.) և հաստատել սովել այն: Իններորդ կետի պահանջն էր. «Տաճիկը բռնութեամբ զՀայս մի՛ տաճկացուցեն»: Նույն փաստաթուղթը Միմեոն Երևանցի կաթողիկոսը հաստատել է տալիս նաև Երևանի Հյուսիս-արև խանին (1176= 1763թ.)²⁰⁴: Նույն թվականին այդ իրավունքները հաստատվում են Իրանի կառավարիչ Քերիմ խանի կողմից:

Կաթողիկոսական Աթոռի և Հայոց եկեղեցու իրավունքները Հայրենի երկրում ամրապնդելն ու պաշտպանելը Միմեոն Երևանցու համար դառ-
նում են առաջնահերթ խնդիրներ: Նա կազմում է Ջամբու կոչված ժողովա-
ծուն, որ իրավական վավերագրերի հավաքածու և Հայոց եկեղեցու համա-
ռոտ պատմությունն է: Միմեոն Երևանցին գրում է, թե «յուսամբ, զի [Աս-
տուած]... այց արասցէ և վերանորոգեսցէ զՀնութիւն խղճաւոյ ազգիս մե-
րոյ և վանօրէիցս: Եւ յայնժամ եթէ զչէնս ոչ, զոնէ զաւեր տեղիսն մլբից և զվիճակս իւրեանց ճանաչեսցեն իւրաքանչիւրքն»²⁰⁵:

Որոշակի նպատակադրումով Միմեոն Երևանցին 1766 թ. Պետերբուրգ է ուղարկում մի ղեկավարություն՝ Դավիթ վարդապետի գլխավորությամբ²⁰⁶: Լուծելիք հարցերից գլխավորն էր Ռուսահայոց թեմը Գանձասարի կաթո-
ղիկոսության իրավասությունից էջմիածնի իրավասությանը փոխանցելը և Ռուսաստանի Հայ համայնքի կողմից միայն էջմիածնի գերագահության ընդունման ապահովումը: Պատվիրակությունը պատվով կատարեց իր ա-

²⁰³ Նամակը գրված է 1760թ., իսկ թեյնուրագ 2-րդը ճանապարհվել էր արդեն 1759 թ.:
²⁰⁴ Ջամբու, էջ 234:
²⁰⁵ Ջամբու, էջ 271:
²⁰⁶ Դիւան Հայոց պատմութեան, գիրք Գ, էջ ձիԱ-ձիբ: Դ. Эзов. Начало сношений эчмядинского патриаршего престола с русским правительством, Тифлис, 1901.

ուաքելությունը²⁰⁷ և 1768 թ. վերադարձավ էջմիածին՝ իր հետ բերելով Եկա-
տերինա Երկրորդ կայսրուհու հրամանագրերը այն մասին, որ Հայոց եկեղե-
ցու ոչ մի հոգևորականի չի թույլատրվի այլևս մուսուլմաններին Ռուսաստա-
նի տարածք առանց էջմիածնի հրաշխավորության²⁰⁸: Այդ առիթով Միմեոն Երևանցին դրեց Ռուսական կայսրուհուն ձեռնված մի ազդեց, որը պետք է ձշտապես կատարվեր պատարագի ժամանակ:

1773 թ. Միմեոն Երևանցին, բնականաբար ոչ առանց նպատակադիր հստակ ցուցումների, Ռուսահայոց թեմի առաջնորդ նշանակեց երիտասարդ եպիսկոպոս Հովսեփ Արղությանին: 1774 թ. Իրանի Ռեշտ նավահանգստից նավով Հովսեփ Արղությանը ժամանեց Աստրախան: Նույն թվականին ավարվում էր ռուս-թուրքական պատերազմը՝ Քյուչուկ Կայնարջիում կնքված պայմանագրով (1774 թ. հուլիսի 10), որի հաստատումն ու հրապարակումը տեղի ունեցավ մոտ մեկ տարի անց: Հովսեփ Արղությանը, ձեռք ձգելով հաշտության պայմանագրի տեքստը, այն թարգմանում է հայերենի և առաջում էջմիածին: Պայմանագրի 7-րդ կետով Կ. Պոլսում Ռուսաստանի ղեկավարին իրավունք էր վերապահվում հանդես գալու Օսմանյան տերությունից մեջ քրիստոնյաների շահերի պաշտպանությունը²⁰⁹: Ստորև ներկայացվող նամակը Հայերեն բնագրով և ռուսերեն երկու թարգմանությամբ պահպանվել է Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող Լազարյանների արխիվում: Այն անստորագիր է և անթվական: Ելնելով դեպքերի զարգացման ընթացքից, նամակի որոշ առանձնահատկություններից և համադրելով այլ վավերագրերի հետ, համոզվում ենք, որ նամակի հեղինակը Միմեոն Երևանցին է: Պատասխան այդ նամակը պետք է թվագրել 1778-1779 թթ.:

Հենվելով պայմանագրի վերոհիշյալ կետի վրա, Միմեոն Երևանցին Հ. Արղությանին և Լազարյաններին առաջարկում է միջնորդել և հարց հարուցել Ռուսական կառավարության առաջ, որպեսզի Կ. Պոլսի Ռուսական ղեկավարին ցուցում տրվի օժանդակելու և հովանավորելու նաև Հայոց եկեղեցու ներկայացուցիչներին: Ստորև բերում ենք այդ շատ արժեքավոր նա-

²⁰⁷ Պատվիրակության հաջորդությամբ իր օժանդակությամբ նպաստել էր նաև Հովհաննես Լազարյանը և այդ առիթով նամակ գրել Միմեոն Երևանցուն (տե՛ս Վ. Դիլոյան, Լազարյանների հասարակական-քաղաքական գործունեության պատմությունից, էջ 140-141):
²⁰⁸ Армяно-русские отношения в XVIII в., IV, с.76-77.
²⁰⁹ Տեքստը տե՛ս Է. Ի. Дружинина. Кючук Каинарджийский мир. М., 1955, с. 352.

մակի լրիվ տեքստը, որը մինչև այժմ գուրս է մնացել Հետազոտողների ուշադրությունից:

«Ձայս ևս գիտացիր, Հայտույթեան դաշնագիրն տեսաք և շատ հաւանեցաք: Աստուած միշտ յազիթոյ և բարձրագլուխ պահեսցէ ի պարծանս ամենայն քրիստոնէից: Բայց թէպէտ այլ քրիստոնէից անուն գոյ ի մէջ նորին, Հայոց անունն բնաւ չկայ: Մանաւանդ մեծ բարեբարութիւն Ռուսումբլու երկրի քրիստոնէիցն է եղևալ: Իսկ Անատոլու երկրի քրիստոնեայքն և մանաւանդ՝ Հայքն, խեղճ մնան. թէպէտ գրեալ է, թէ քրիստոնեայքն զինչ ցաւս ունիցին, մեր էլչուն արդ արասցեն, սակայն Անատոլու Հայքն, ի նոցանէ երկնչելով, ոչ կարեն արդ աւնել: Վասն որոյ ընդ օրհնեալ իշխանին մերոյ աստուծով զօրացեալ Աղայ Յովհաննիսին խորհրդակցիցես, եթէ կարելի իցէ, գրել տան մէջ հրաման ի վերայ Պոլիս նստող էլչուն, թէ՛ Պատրիարքն Հայոց ի յԷջմիածնէ, եթէ մէկ խնդիր ինչ արասցէ քեզ վասն հաւատոյ, օրինաց և եկեղեցեաց՝ լսող և կատարող լինիցի: Այս է մեծ օգնութիւն և բարեբարութիւն խղճալի ազգիս Հայոց և Աթոռոյս և յատկական յիշատակ իւրեան օրհնեալ յանուանն: Եթէ պատշաճ տեսցէ, ես արդայ գրեցից օրհնեալ մօրն ողորմութեան և կամ մեծ իշխանին: Ձայսմանէ խօսեալ մեզ ծանուցես: Բաւ է»²¹⁰:

Ուշագրաւ է այն փաստը, որ ինչպիսի նամակում է պահանջ գրվում, իրոք նույն բովանդակությամբ մեկ հրամանագիր ռուսական արքունիքը 1781 թ. հունվարի 11-ին²¹¹ ուղարկել է Կ.Պոլսում Ռուսաստանի դեսպան Ստախինին, երբ արդեն մոտ կես տարի առաջ վախճանվել էր Սիմեոն Երևանցին: Հրովարտակի մեջ Ստախինը տեղեկացվում է Էջմիածնի կաթողիկոսության և Ռուսական արքունիքի միջև ծավալված փոխհարաբերությունների մասին սկսած 1768 թ.: Ապա հրամանագրում նշվում է, թե Հովսեփ Արղուսթյանը կաթողիկոսի անունից նոր պահանջներ է առաջադրել մասնավորապես. «чтов препоручено было вам, как нашему при Порте Оттоманской министру, оказывая со стороны вашей помощь и защищение

присылаемым в столицу Турецкую от патриарха Армянскаго начальникам духовенства при встречающихся для них надобностях»²¹²:

Առայժմ մենք չունենք որևէ փաստ այդ թվականներին Հայաստանում որևէ խնդրի շուրջ Ռուսական դեսպանության օժանդակությունը ստանալու մասին, սակայն այդ հնարավորության հիմքերը արդեն իսկ ստեղծվել էին Սիմեոն Երևանցու և Հովսեփ Արղուսթյանի ջանքերով²¹³: Շուտով այդ հնարավորությունը օգտագործվեց, սակայն, նախ Հովսեփ Արղուսթյանի կաթողիկոսական թեկնածության առաջադրման, ապա և Դավիթ-Դանիելյան հայտնի հակամարտության բորբոքման նպատակով:

Քերիմ խանի մահը Իրանը նորից կանգնեցրեց քաղաքական փլուզման և իշխանատենչ ուժերի երկարատև բախումների փաստի առաջ: 1779 թվականը ծանր տարի էր բուն Հայաստանի և հատկապես Արարատյան դաշտի բնակչության ու Էջմիածնի կաթողիկոսական Աթոռի համար: Հերակլ Երկրորդի արշավանքը մեծ վնասներ էր բերել ոչ միայն տնտեսությանը, ցանքատարածություններին, այլև բնակչության բռնազաղթից հետո սրել հարաբերությունները մահմեդական իշխողների ու Հայ բնակչության և, մասնավորապես, Էջմիածնի Աթոռի հետ²¹⁴:

1780 թվականի հունվարի մեկին անակնկալ Հովհաննես Լազարյանին ու Հովսեփ Արղուսթյանին այցելում է Ի. Պ. Գորիչը և հայտնում «զգնալն իւրեանց ի վերայ Պարսից առ ի տիրել զԿողմեքերայ տեղիսն»²¹⁵: Հովսեփ Արղուսթյանը իր օրագրում պատմում է 1780 թ. հունվարի առաջին երկու շաբաթների անընդմեջ Հանդիպումները Ա. Վ. Սուլթորովի և Գ. Ա. Պոտյոմկինի հետ²¹⁶, որը նոր փուլ էր նախանշում Հայ-ռուսական հարաբերություններիում: Հայոց քաղաքական դիրքորոշման կարևորությունը Ռուսաստ

²¹⁰ ՄՄ, Լազարյանների արխիվ, թղթ. 109, գործ 22, վավ. 24. Հայերեն բնագիր:
²¹¹ Армяно-русские отношения в XVIII в., IV, с.170-171. Հրովարտակի հայերեն թարգմանությունը տե՛ս «Դիւան հայոց պատմութեան», IX, Թիֆլիս, 1911, էջ 49-52: Նման բովանդակությամբ հրահանգ առաքվել է Արտաքերի գործերի կղևգրայից նաև Գ. Ա. Պոտյոմկինին նույն օրը: Տե՛ս АВПР, ф. СРА, 100/3, 1764-1800, л. 462, л. 167. копия:

²¹² Армяно-русские отношения в XVIII в., IV, с.170-171.
²¹³ Հայտնի է միայն, որ 1798 թ. Պավել Առաջինը ևս նման հրահանգ ուղարկել էր Կ.Պոլսում ռուսական դեսպան Վ. Տամարային կարգադրելով հնարավոր օգնություն ցույց տալ և պաշտպանել Ղուկաս կաթողիկոսի կողմից ուղարկված Հայ հոգևորականներին: ՄՄ, ԿԳ, թղթ. 8, վավ. 15 (պատճե): Տե՛ս նաև Վ. Ռ. Գրիգորյան. Երևանի խանությունը 18-րդ դարի վերջում, էջ 197:
²¹⁴ Армяно-русские отношения в XVIII в., IV, с.156. Այս վավերագրում խոսվում է Հերակլի կողմից Արարատյան դաշտի 15 հազար հայերի Թիֆլիս փոխադրման, Երևանի խանի կողմից Էջմիածնի վանքի վեց միաբանների սպանության մասին:
²¹⁵ Армяно-русские отношения в XVIII в., IV, с.152.
²¹⁶ «Յունիվարի 2. Ենարալ պոռոճիկ Ալէքսանդր Վասիլիչ Սուլթորովն եկն առ մեզ ի տեսութիւն. և մեր ազնիւ աղայ Յովհաննէան ընդ նմա ի վերայ նոյն նիւթոյն. և ի վերայ երկրացն մերոց բազում հարցմունս արար մինչև ցերկու ժամս»: Տե՛ս Армяно-русские отношения в XVIII в., IV, с.152-153:

տանի համար իր կնիքն է թողնում նաև եկեղեցական-գավառական հարցերի լուծման վրա: Հայ դործիչները ավելի հաստատակամորեն են պնդում գավառական պատկանելությունն անխաթար պահելու իրենց վճռակա-նությունը և միաժամանակ Ռուսական եկեղեցու հետ հարաբերություններում ստանում հենց ռուսական քաղաքական շրջանների աջակցությունը²¹⁷:

1780-1790-ական թվականներին անընդմեջ սովարացող ռուսահայ գաղթօջախում ձևավորվող գավառական փոխհարաբերությունները ևս ձեռք են բերում քաղաքական ուղղվածություն: 1779 թ. փետրվար-մարտ ամիսներին Հ. Արղունյանը այցելություններ է կատարում Մոսկվայի արքեպիսկոպոս Պլատոնին, որը «բազում խօսակցություններ արար վասն հաւատոյ մերոյ և աւանդութեանց եկեղեցւոյ, և յազապս զրպարտութեանցն Յունաց առ մեզ, և վասն պէտպէս ընդհանրաց Յունաց յազապս պահոցն սրբոյն Սարգսի, զորս ամենայն լուծար. և զտուեալ պատճառսն մեր ողջամիտ վարդապետութեամբ ընկալաւ»²¹⁸: Նույն թվականի մարտի 31-ին «սրբազան Պլատոնն հրաւիրեաց զմեզ զնալ ի սօքոսն և անդ տեսանել զտուրը պատարազն և զհանդէսն մեծ... զնայացք ընդ ազնուացն մերոց Ազայ Յովհաննէսին և Ազայ Մինասին. տարան զմեզ ի սեղանն սուրբ և անտի տեսաք զբոլոր հանդէսն. յոյժս յարգեցին զմեզ ի սեղանոջն ամենայն դասքն հոգևորաց, և բազմաց խայթէր լեալ անիմաստ և զոեհիկ ժողովրդեանն մուտն մեր անդ. և զբազում թուևալի նետս էին արձակեալ առ սրբազան Պլատոն արքեպիսկոպոսն վասն տանելոյն զմեզ ի սեղանն, որպէս ինքն և այլք պատմեցին մեզ, զի միտք նոցա զհետ էր ընթացեալ առասպել և անխիղճ գրեցելոց, զրպարտութեանցն Յունաց որ առ մեզ. անարժան վարկանէին զտանել մեզ ի սեղանի անդ: Բայց վառեալն աստուածային հոգովն սրբազան արքեպիսկոպոսն քամահեալ զսնոտի բաջազմուռն անիմաստից լայր ի վերայ կուրուցեան նոցա, բայց զկնի այսր մինչ յաճախեցին բազմութիւնք ի յեկեղեցիս մեր ի ժամ պատարազելոյն մերոյ նախարարք և իշխանք, վաճառականք և հասարակ ժողովուրդք, թուլացաւ աղաւաղել նոցա և մանաւանդ թէ՛ յառաջինն էր այս տեսութիւն նոցա Հայոց եպիսկոպոս իւրով ձեւով գտանիլ ի յեկեղեցիս իւրեանց»²¹⁹:

²¹⁷ Դիւան Հայոց պատմութեան, IX, էջ 45-46:

²¹⁸ Դիւան Հայոց պատմութեան, IX, էջ 16:

²¹⁹ Դիւան Հայոց պատմութեան, IX, էջ 19-20:

Արդեն իսկ 1780 թ. փետրվարի 18-ին, ինչպես հիշվեց, մեծ հանդիսավորությամբ կատարվում է Պետերբուրգի սուրբ Կատարինե եկեղեցու օծումը, որը շրջադարձային դեր պիտի ունենար Հայոց գավառությունների նկատմամբ հանդուրժողական վերաբերմունքի ձևավորման գործում: Օծման հանդիսություններին, ըստ Հովսեփ Արղունյանի Հիշատակարանի, ներկա են եղել «ամենայն նախարարքն և յոյժ աւանեցան ամենայն արարողութեանցն մերս սուրբ եկեղեցւոյ և բազում գայթակղութիւնք բարձան»²²⁰:

Հայոց Համակրանքը շահելու ձեռնարկումներից էր նաև նույն թվականի մայիսի 9-ին Հովսեփ Արղունյանին ու Հովհաննես Լազարյանին կայսրուհու, իսկ հունիսի 4-ին՝ թագաժառանգ Պավել Պետրովիչի կողմից ընդունելություն արժանացնելու փաստը: Մեկ տարի անց, 1781 թ. մայիսի 9-ն, Հովսեփ Արղունյանի արձանագրմամբ, «հաստատեցաք ի նախիջևան քաղաքոջս զհոգևոր դատարանս և եղաք ի նմա զբազում կանոնս ի շաւղաց նախնի հարցն մերոց ի կառավարութիւն նմին և... կարգեցաք ի նմա հոգևոր դատաւորս, զմի վարդապետ և զերկու քահանայս»²²¹: Նոր նախիջևանի հոգևոր դատարանի կանոնադրությունը, որ տպագրվել էր 1795 թ. Նոր նախիջևանի Ս. Խաչ վանքի տպարանում, բաղկացած էր վեց մասից և պարունակում էր 126 հոդված, որով առաջնորդվում էին Ռուսաստանի բոլոր հայկական եկեղեցիները մինչև 1836 թվականի կանոնադրության ընդունումը²²²:

Ռուսաստանում ճանապարհորդության ժամանակ Հովսեփ Արղունյանը առիթ է ունեցել հանդիպելու բարձրաստիճան ռուս հոգևորականության ներկայացուցիչներին և արժանանալու հատուկ ընդունելության: Իր Հիշատակարանում նա գրում է, թե 1781 թ. հունիսի 12-ին «հանդիպեցաք ի Բոլթա քաղաքն առ արքեպիսկոպոսն Նիկիփոս, որ էր առաջնորդ Բերսուս և Նոր Ռուսաց. իջաք ի վրանն, պահեաց զմեզ երկու օր և եցոյց զբազմադիմի մարդասիրութիւնս: Եւ անտի գնացաք առ գուաֆ Պետր Ա-

²²⁰ Ընթերցված քարոզը նախապես թարգմանվել էր ռուսերեն և 500 օրինակ տպագրվել ձեռով բաժանվել իշխաններին, իսկ զեղեցիկ կազմված մեկ օրինակը Գ. Ա. Պոտյոմկինի միջոցով մատուցվել կայսրուհուն: Օրինակներ էին ուղարկվել գահաժառանգ Պավելին և Մարիա Ֆեոդորովնային, որ Հովհաննես Լազարյանի միջոցով փոխանցվել էին Նիկիտա Պանինին՝ հանձնելու ըստ պատկանելության: Տե՛ս Դիւան Հայոց պատմութեան, IX, էջ 4, 26-27:

²²¹ Դիւան Հայոց պատմութեան, IX, էջ 6:

²²² Յովն. Տեր-Արրաճամեան. Յովսէփ Զորրորդ երկայնաբազուկ-Արղունեանց, ընդհանրական առաջնորդ ռուսիսթնակ Հայոց (1773-1800), իշխան կայսերութեան Ռուսաց և կաթողիկոս ամենայն Հայոց. ՍՊԵ, 1881, էջ 6-7:

լէքսանդր Ռուսնեցոյ ֆրիթմա(ր)շալն ի գիւղն իւր Վիշինկայ, որում եղև յուրախութիւն յոյժ, ի ինչոց զմեզ ի վրանի գեղեցկագունի, զոր ի յՕսմանեցւոցն էր գերեալ. պահեաց զմեզ չորս օր և յամենայն աւուր՝ առաւուտ և երեկոյի, առ մեզ դայր և զմեզ առեալ տանէր առ ինքն ի ճաշել:... Եւ յետ բազում մարդասիրական պատուոյն կամեցաւ առաքել զմեզ ի Քրիով քաղաքն, յորում են բազում վանօրայք և տեղիք սրբոց... Գրեաց զիր յանձնարարական առ սրբազան Գարրիէլ մետրոպոլիտն ծերունի, առ արքիմանդրիան Զօսիմէ, և առ կոմենդանտն Իվան Ստեփանիչ Կուկիսովն՝ ընկալնուլ զմեզ և պատիւ ցուցանել»: Պեչերսկի վանքում արժանանալով պատվավոր ընդունելութեան Զօսիմէ արքիմանդրիտի կողմից, Հ. Արղությանը հրավիրւով է Գարրիէլ մետրոպոլիտի մոտ, որը ևս «բազմազինի պատիւս և սէրս եցոյց և մանաւանդ առ սուրբ հաւատս մեր, որ զԳանձ արամեանն ունելով ի ձեռին, գովէր ի մէջ հրապարակին, յորում էին հոգևորականքն և երևելի աշխարհականք՝ թէ՛ ճշմարիտ և ուղղափառ հաւատ է Հայոց հաւատն, և այլ այսպիսի բանս համարձակորէն և սա ընկալեալ զմեզ ի սեղանն սուրբ, և յետ արձակման սրբոյ պատարագին, զնշխարս տային մեզ և զգինի: Եւ յեւանելն մեր ի յեկեղեցոյն խառն ի ճաղանձ ամբօխն՝ անցեալ ի վերայ մեր, ամենեքին աջ առևալ՝ զօրհնութիւն խնորէին»²²³:

Միմեռն Երևանցուն հաջորդած Ղուկաս Կարնեցու դահակալութեան տարիներին, օրինակ, կազմված Հայ-ռուսական դաշնագրի նախագծի առաջին իսկ կետը պահանջում էր դավանական խնդիրներում երկուստեք հանդուրժողական վերաբերմունք: Երկրորդ կետով պահանջվում էր «Ջհեստեալս յիւրաքանչիւր ազգացս չընկալնուլ ի հաղորդութիւն իր զպղտորիչս և խռովարարս սիրոյ և խաղաղութեան», իսկ երրորդ կետով պահանջվում էր չարգելել մահմեդականների և հեթանոսների կողմից Հայոց դավանանքի ընդունումը: Սրանք հարցեր էին, որոնք իրավական կարգավորում էին պահանջում, հրատապ խնդիրներ էին կենդանի իրականութեան մեջ, քանզի Հայոց եկեղեցին ստիպված էր մեծ նեղութիւնների գնով դիմադրավիլ ռուս հոգևորականութեան ճնշմանը: Այդ մասին վկայում է 1782 թ. Հովսեփ Արղությանի արձանագրած այն փաստը ևս, թե Մոզդոկի Հայոց եկեղեցին, որ «չարածճիկ Գորգի ոմն կամեցեալ էր ռուսանալ և գեկեղեցին զայն ևս դարձուցանել, որոյ աղազաւ եպիսկոպոսն Ռուստաց և գուբուռնաթն վճիռ էին հաստատեալ՝ հրամանաւ Սինօթին ընկալնուլ, իսկ Մոզդո-

²²³ Դիւան հայոց պատմութեան, IX, էջ 8-9, 42-44:

կու ժողովուրդքն ոչ էին տուեալ առանց մեզ, այլ և զգիրս իւրեանց գրեալ էին մեզ: Մեք զրեցաք Հաշտարխանու գուբուռնաթին, մինչ ոչ ինչ օգտեցաք ի նմանէ, բողոք մեր արկաք առ սրբազնասուրբ Սինօթի դահակալ Պետրպօլքու արքեպիսկոպոս Գարրիէլն, նա յուսադրեալ մեզ, խօսեալ ընդ դահակցացն իւրոց. և ընդ պայծառափայլ քնեագին, միտիմարեալ յուսադրեալ մեզ, և առաքեալ առ քնեագն: Քնեագն, որպէս հարկն էր, զրեաց սաստ և յանդիմանութիւն Հաշտարխանու գուբուռնաթին և եպիսկոպոսին՝ ի բաց թողուլ գեկեղեցին մեր և մի նեղել զմեզ, որ ընդդէմ է կայսերական մեծութեան զթութեանն...Յետ այսորիկ զրգոխի Գօրկին և ընկերքն զղջացեալ ի յանկատար արարմանց իւրեանց, զիր մեղայական գրեցին մեզ և մեք ընկալաք զնոսա ի հաղորդութիւն եկեղեցոյ»²²⁴:

Հայոց եկեղեցու համար դավանական հանդուրժողականութեան միտաբանութեամբ ձևավորելու գործում մեծ կարևորութիւն ունեւր Պավել Առաջին կայսեր կրոնի ուսուցիչ Պատոն մետրոպոլիտի դիրքորոշումը: Ըստ Հ. Արղությանի վկայութեան, Պատոնը բազմիցս սանձել է ռուս և հույն հոգևորականութեան հարձակումները Հայոց եկեղեցու և եկեղեցականների դեմ: Որոշակի նպատակադրումով և, ամենայն հավանականութեամբ Հ. Արղությանի նախաձեռնութեամբ, Պետերբուրգում հայերենի են թարգմանվում Պատոն մետրոպոլիտի «Քրիստոնեական աստվածաբանութիւնը», «Քարոզներ» և «Ուղղափառ կրթութիւն» գրքերը (թարգմանիչ Ստեփանոս Աւլանյան)²²⁵: Ռուսերենի է թարգմանվում և Պետերբուրգում 1799թ. տպագրվում «Հայոց եկեղեցու դավանանքը»²²⁶ գիրքը, որն այնուհետև Պետերբուրգում վրաց դեսպանութեան քարտուղար Գեորգի Ավախիշվիլին ռուսերենից թարգմանում է նաև վրացերենի²²⁷:

1793 թ. մայիսի 17-ին Աստրախանից Հ. Արղությանին գրած նամակում հայտնվում է, թե տեղի ռուս հոգևոր առաջնորդը ոչ միայն մեծ օժանդակութիւն է ցուցաբերում հայ հոգևորականութեանը, այլև պատժում է անգամ այն հայերին, որոնք դավանափոխութեան նպատակով դիմում են իւրեն. «Մովինարն մէկ տղայով և իւր որդովն գնացեալ էր Ռուս դառնալ,

²²⁴ Դիւան հայոց պատմութեան, IX, էջ 46:
²²⁵ Ուշագրաւ է, որ Պատոն արքեպիսկոպոսի քարոզների ռուսերենից հայերենի թարգմանութեամբ զբաղվել է նաև Հովակիմ Աղազարի Ազգարյանը: Տես Վ. Դիլիյան, նշվ. աշխ., էջ 190:
²²⁶ "Вероисповедание Армянской перкви", СПб, 1799.
²²⁷ «Լոս յօյնձոյ. ցօրոցօ ձցալոմցօլոս ցեօցրցօ ձցալոմցօլոս ցեօցրցօ ձցալոմցօլոս. տձ, 1993, թց. 121.

գանելով վարեալ էր և մեզ կոչեալ առ ինքն, թէ դու ևս բերել տացես առ քեզ և դանեցես և հարցցէս, թէ վասն ո՞ր թողուն զհաւատս իւրեանց և այսպէս անարգեալ եղին Ռուստի հաւատ կամեցողքն, և բողբոքն դիտացին, որ արքերէն²²⁸ դանիւք վարեալ է, վասն այսմ այսուհետև ո՞վ Համարձակի զնալն»²²⁹: Այդ իրավիճակը, սակայն, ամենուր էլ, որ ընթանում էր առանց հակամարտութեան ու ընդհարումների: Որքան Ռուսական եկեղեցու բարձր աստիճանավորները հանդուրժողական և զուսպ վերաբերմունք էին գրսեւորում հայոց նկատմամբ, նույնքան տեղերում ռուս հոգևորականութիւնը գործում էր առաջիկ անկաշկանդ և թելադրական գործելաոճով: Այդ առանձնապես ակնհայտ դարձավ 1790-ական թվականների կեսերին, երբ աշխարհիկ իշխանութիւնները ևս ակնհայտորեն սպասողական քաղաքականութիւն էին որդեգրել Այսրկովկասի նկատմամբ: Հովսեփ Արղուէթյանը արձանագրել է ստեղծված իրավիճակը 1795 թ. մայիսի 20-ին Աստրախանից գրած իր նամակներից մեկում²³⁰: Հ. Արղուէթյանը ևս հայ-ռուսական հոգևոր-գավառական փոխհարաբերութիւնները լծորդված ու պայմանավորված է դիտարկում ու ներկայացնում աշխարհիկ իշխանութիւններին քաղաքականութեան հետ: «Իմ տառապանքն ինձ ոչ է բաւական, տեսէք այժմ զի՞նչ լսէք. ևս զկեանս իմ տուեալ եմ ի զո՞հ վասն ծառայութեան թագուհւոյն՝ յաղագս դիւրութեան ազգին իմոյ, որպէս և նորին մայրական խնամօքն յուսադրեալ եմք ամենայն ազգաւ, և զնոյնն յամենայն ուրեք հոչակեմք զրոյվ. և ամենայն ոք փափագի վալ յերկիրս այս և առանց նեղութեան բնակիլ. հայրն լինել հայր որդւոց՝ առանց երկիւղի բռնաւորաց, և տեսաք՝ տեսաք ծառայից»²³¹: Հ. Արղուէթյանը բողբոքում է Աստրախանում ստեղծված իրավիճակի գեմ. «Որդիք անհնազանդ ծնողաց՝ թերակատարք, ի բարկանայն հարց, գնան և մկրտին, և եպիսկոպոսն տեղւոյս՝ իսկոյն ընկալնու, որպէս ընկալաւ 11 տարեկան մէկ անձար աղքատի որդի, որոյ հօր արտասուելի գիրն ահա ուղևորեմ ձեզ, թէպէտ առաքեցի առ եպիսկոպոսն, բայց ոչ կամեցաւ լսել: Մեր թորոս Այվազովի 14 տարեկան եղբայրն, բարկացեալ ի վերայ մօրն, գնաց ռուսացաւ և նա ընկալաւ,

²²⁸ Իմա՝ архiereй.

²²⁹ ՄՄ, ԿԳ, թղթ. 6, վավ. 42. բնագիր:

²³⁰ Հ. Արղուէթյանը, վճռելով դիմագրավել ռուս հոգևորականութեան կամայականութիւններին, Մոսկովայի ու Պետերբուրգի հայ գործիչներին նախապես նամակով տեղեկացնում և պահանջում էր նրանց միջամտութիւնը՝ արքունիքում և սինոդում Հինարան գտնելու համար:

²³¹ Դիւան հայոց պատմութեան, IX, էջ 178:

մայրն մնաց լալով՝ զրկեալ ի յորդւոյն, որդին այլոց ծառայէ, իսկ ծնօղն, որ սնուցեալ է, ի ծերութեան հասակին զրկեալ է յորդիական ծառայութեանէն: Պարտատեարք և փախստականք գնան և նոքա ընկալնուն»²³²:

Հայերի գավառափոխութիւնը եթէ ոչ լիովին կանխելու, ապա զեթ սահմանափակելու նպատակով ռուս հոգևորականութեան հետ հայոց փոխհարաբերութիւնները Հովսեփ Արղուէթյանը փորձում է կարգավորել դիմելով ոչ միայն բարոյական ու քաղաքական միջոցներին, այլև իրավական լծակներին գործադրմանը: Նա գրում է, որ իր ինզիրն այն է ռուսական հոգևորականութիւնից և, մասնավորապես, Աստրախանի հոգևոր առաջնորդ եպիսկոպոսից, թե «կատարեալ հասակի անձինք յորժամ գան առ քեզ, նախ սարավիկ արա յամենայն դատաստանս, որպէս օրենքն է, և ապա ընկալ, իսկ անկատարքն յետ դարձո, զի նոքա հաւատ ոչ ճանաչեն: Մի զրկեր զծնօղս նոցա ի վայելմանէ որդւոց»: Այդ պահանջին Աստրախանի Ռուսաց հոգևոր առաջնորդը «ոչ եթէ կամեցաւ մեզ բաւականութիւն տալ, այլ բարկացաւ ևս, թէ՛ որպէ՞ս համարձակի Հայոց արքեպիսկոպոսն նու՛մրայիւ ինձ գիր զրել, և հանդերձեալ մեծ հալածանս յարուցանել, թէ՛ զիար՞ջ համարձակիք գանդակ այնքան յարկանել և կամ համարձակ կատարել զօրէնս ձեր»²³³: Հ. Արղուէթյանը հիշեցնում է քաղաքական իշխանութեան վերաբերումը հայոց նկատմամբ, որ հակադիր էր հոգևոր իշխանութեան այդ քայլերին. «Ես ոչ գիտեմ, ու՞մ հնազանդիմ. կայսերական ողորմութեան ազատութեանն, եթէ բռնութեան սորին»: Ավելին, Հ. Արղուէթյանը փորձում է զուգահեռներ նշելով մահմեդական տիրապետութեան և Աստրախանի առաջնորդի գործողութիւններին միջև, զգաստութեան կոչել արքունի դործիչներին. «Միթէ՞ թուրքի երկրումն մեր գաւակն խնն և առանց պատճառի ի հաւատոյն հանեն, ո՞չ ապաքէն վասն այն գան և ժողովին ազգ մեր յերկիրս այս, որ յայսպիսի բռնութեանց փրկին»²³⁴: Հայ իրականութեան մեջ ռուսադավանութեան անցնելու առանձին փաստերը ևս կանխելու համար Հ. Արղուէթյանը փորձում է ստանալ ռուս հոգևորականութեան պաշտպանութիւնը: Նման օրինակներից էր Հնդկաստանում գտնվող տէր Ստեփանի «բէզովաթ եղբայրն», որ «ռուսացեալ է, թէ յեղբորէս փող է եկեալ, ինձ չեն տալիս, նորա կիւնն և փոքրիկ որդին զօղեալ կան յանկեան, որ

²³² Դիւան հայոց պատմութեան, IX, էջ 178-179:

²³³ Նույն տեղում:

²³⁴ Նույն տեղում:

բռնութեամբ չուսացնեն»²³⁵: Անհրաժեշտ էր հզոր կուսակցութիւններով կասեցնել հայոց նկատմամբ զործադրվող դավանական խտրութիւնները: Հ. Արղությանը հարցադրումը կրկին փոխադրում է հայերի Ռուսաստան փոխադրվելը հարցականի տակ դնելու սպառնալիքի մակարդակ. «Ահա յուսադրութեան պատուհն երկրիս, ո՞ր երեսօք գրեմ ումեք, թէ՛ եկէք և զհանգստութիւն վայելեցէք. ես ճանապարհորդ եմ և ծառայող թաղաւորութեան հրամանին, և սոքա յայսպիսի բռնութիւն կան, ոչ ուքաղի լսեն և ոչ հրովարտակի, ոչ արդարութեան ունկն դնեն և ոչ ճշմարտութեան»: Միակ միջոցը հայ հասարակութեան անունից հանդես գալու և հիմնավորված պահանջի առաջադրումն էր բարձրագույն հոգևոր ատյանի առաջ: Իր փաստարկումները ներկայացնելով հայագրի գործիչներին, Հ Արղությանը շեշտելով, թե «ուրբ ևս ազգ էք Հայոց, օգնեցեք մեր ազգին», պահանջում է նրանցից, զբաղորդ կերպով դիմել սինոդի գեներալ-պրոկուրոր Ա. Ի. Մուսին-Պուշկինին, որ «բարեկամ է, ապա է նա այր բանական և խելօք»: Պարզվում է, որ Հ. Արղությանը տեղյակ էր նաև, թե Աստրախանի հոգևոր առաջնորդը դիմել էր Ա. Ի. Մուսին-Պուշկինին՝ Հայոց եկեղեցու գանգերը հնչեցնելու դեմ լինելու պահանջով, սակայն և պատասխան ստացել, թե «լուեա, քոյ բանն չէ»: Ռուսական եկեղեցու առանձին ներկայացուցիչների նկրտումներին դիմադրավելու գործում հայոց համար կարևոր լծակ էր ուսուսական աշխարհիկ իշխանութիւնների կողմից ցուցաբերված օժանդակութիւնը ստանալու հանգամանքը, մանավանդ որ հետզհետե ավելի էր կարևորվում հայոց դիրքորոշումը Ռուսաստանի արտաքին քաղաքականութեան իրականացման գործընթացում: Այդ ակնհայտորեն զբոսորդից 1795 թվականի ընթացքում, երբ Աղա Մահմադ խանի կողմից Թիֆլիսի ավերումից հետո սկսեց քննարկվել ու ծրագրվել Ռուսական բանակը Այսրկովկաս ուղարկելու հարցը: Ինչպես հայտնի է, այդ արշավանքին իր մասնակցութիւնը բերելուն հրավիրվեց անգամ անձամբ Հովսեփ Արղությանը:

Այլ էլ իրավիճակը Ռուսաստանում կաթոլիկ դավանանքի հոգևորականութեան ներկայացուցիչների հետ հայ հոգևորականութեան ունեցած փոխհարաբերութիւնների պարագայում: Ռուսաստանի կաթոլիկ համայնքում մեծ թիվ էին կազմում հայագրի կաթոլիկները, որոնց առաջնորդն էր

Օնոֆրիուս Օհանջանովը²³⁶: Տեղի տալով Հ. Արղությանի համառ ջանքերին, Ռուսական կառավարութեան հանձնարարութեամբ 1794 թ. հունիսի 18-ին Մոզիլի կոնսիստորիան հրամայում է հայ կաթոլիկներին առաջնորդ Օ. Օհանջանովին, թե օրենքով արգելվում է բունի կաթոլիկ դավանանքի դարձնել որեէ մեկին (սովյալ դեպքում խոսքը առաջին հերթին հայադավան անձնավորութեան մասին է), իսկ հունադավան սուսներին՝ արգելվում է կրոնափոխ անել ընդհանրապես: Հ. Արղությանը փորձում է ստանալ ավելին. նա, օգտագործելով պահի կարևորութիւնը, կառավարութեանից պահանջում է թուլատրել կաթոլիկ հայերի վերադարձը հայադավանութեան և միաժամանակ արգելել նաև հայերի անցումը ուսուսականութեան: Ռուսահայոց համայնքը ԺԸ. դարի վերջին ուսուսական իշխանութիւնների կողմից ստանում է կարևոր հավաստիացում իր կարգավիճակի ամրապնդման համար:

Պավել Առաջինի 1799թ. հոկտեմբերի 28-ի հրամանագրերում ընդգծված շեշտվում է, որ թուլատրվում է ազատորեն դավանել Հայոց դավանանքը, կառուցել եկեղեցիներ և կրոնական հարցերում ենթարկվել միայն էջմիածնի կաթոլիկոսին ու Ռուսահայոց առաջնորդ Հովսեփ Արղությանին: Ավելին, Ղուկաս կաթոլիկոսի մահից հետո, Ռուսական արքունիքը պաշտպանում է Հ. Արղությանի թեկնածութեան առաջադրումը Հայոց կաթոլիկոսական գահի համար և Ռուսական բանակի Վրաստանում լինելու հանգամանքով թեկադրված՝ Հովսեփ Արղությանի միջոցով է 1801 թ. փետրվարին հրապարակում Վրաստանը Ռուսաստանին միացնելու Պավել Առաջինի հրովարտակը: Այսպիսով, վերորերյայից ակնհայտ է, որ հայ-ուսական եկեղեցական հարաբերութիւնների ուղղվածութիւնը պայմանավորվում էր քաղաքական հարաբերութիւնների պահանջով ու մակարդակով:

²³⁶ Օ. Օհանջանովի մասին տե՛ս ձ. տաճարն Մյոջո. օնցլորոս յատուցյոյծօսն, յգ. 488-490, 823, 833, 835. Ambrosius Eszer. Missionen im Halbrund der Länder zwischen Schwarzen Meer, Kaspisee und Persischem Golf, - Sacrae Congregationis de Propaganda Fide Memoria rerum, Vol. II, 1700-1815, Herder, Rom-Freiburg-Wien, 1973, S. 448. Ա. էսցերը, հետևելով Մ. Թամարազվիլուն, թյուրիմացաբար նրան համարում է վրացի:

²³⁵ Նույն տեղում:

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ՀԱՅԵՐՆ ՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԸ

ՈՒՌԱՍԱՍԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

4.1 Զուրովի արշավանքը և Հայերը

1790-ական թվականներին Աղա-Մահմադ խանի Հզորացմամբ Իրանի պատմություն մեջ սկսվում էր նոր շրջան, որն ավարտվեց Ղաջարական դինաստիայի Հաստատմամբ: Այդ ընթացքում, ինչպես Հայտնի է, Աղա-Մահմադ խանն ավերիչ արշավանք ձեռնարկեց դեպի Այսրկովկաս¹, զբաղվեց և ավերեց Թիֆլիսը²: Չնայած Թիֆլիսում նա մնաց ընդամենը մեկ շաբաթ, սակայն, ինչպես ցույց են տալիս վավերագրերը, Աղա-Մահմադ խանը Թիֆլիսն ավերելուց հետո դեռևս մտադիր չէր արագորեն թողնելու Այսրկովկասի սահմանները և Հրամայել էր բանակի Համար Մուղանի դաշտում կուտակել պարեն ու զինամթերք: Այդ Հրամանը կատարվում էր մեծ ջանասիրությամբ³: Առավել հետաքրքիր է այն գործիակերպը, որ պետք է որդեգրեր այդ իրավիճակում Իրրահիմ խանը: Նա փորձեց բանակցություններ սկսել Աղա-Մահմադ խանի հետ և, դիմելով Ռեմա խանի միջնորդությունը, աշխատեց Հաշտվել Աղա-Մահմադ խանի հետ՝ պայմանով, որ դեպի Արցախ նոր արշավանք չձեռնարկվի, փոխարենը խոստանալով նրա տրա-

¹ Գիտական գրականության մեջ Հաճախ նշվում է, թե իբր Երևանն առանց պայքարի ու դիմադրության Հանձնվել է Աղա-Մահմադ խանին: Տե՛ս Օ. Ս. Маркова. Россия, Закавказье и международные отношения в XVIII веке, с. 288. Хаджи Мурад Ибрагимбегли. Россия и Азербайджан в первой трети XIX века, с. 53. Իրականում Երևանը Հանձնվել է 35-օրյա պաշարումից հետո: Տե՛ս Վ. Գրիգորյան. Երևանի խանությունը 18-րդ դարի վերջում, էջ 161: Թիֆլիսի պաշարումը առեց ընդամենը մեկ օր, իսկ Շուշին մնաց անառիկ իր դիրքի և պաշտպանների հերոսական դիմադրության շնորհիվ:

² Տե՛ս «Հայկական աղբյուրները Աղա Մուհամմադ խանի Անդրկովկասյան արշավանքների մասին (1795-1797 թթ.)»։ Աշխատ. Ի. Տ. Տիտանյանի, Երևան, 1981:

³ ЦГВИА, ф. ВУА, л. 63-64. Подлинник. «Во время бытности Селим Агасыя в Могане примечано им было, что со всех сторон в великом множестве свозился туда провнант для армии Ага Мугамед хана, достаточные не только для пропитания, но и для наполнения оным магазейнов».

մադրության տակ դնել 5000-անոց իր բանակը⁴: Իբրահիմ խանը միաժամանակ բանագնաց ուղարկեց Հերակլ Թագապորի մոտ՝ առաջարկելով Թիֆլիսի ավերմանն ի պատասխան, ձեռնարկել համատեղ արշավանք Գանձակի խանի դեմ՝ նրան պատժելու համար: Իբրահիմ խանի նման գործակալները լիովին հասկանալի և բացատրելի էր. քանզի Հերակլի պարտությունից հետո Այսրկովկասում Աղա-Մահմադ խանի դեմ ինքը միայնակ էր մնացել, և սպասելի էր, որ Աղա-Մահմադ խանը կարող էր կրկին արշավել Արցախ և հաղթանակից հետո Ղարսբաղի խանի պաշտոնը կտրվեր Գանձակի խանին, ինչպես եղել էր մինչև Նադիր շահի կողմից կատարված անջատումը և Ղարսբաղը առանձին վարչական միավոր հռչակելը, և կամ Ղարսբաղի խանի պաշտոնում կհաստատվեր Մելիք Մեջլումը, որ հավատարմորեն ուղեկցել էր նրան՝ Այսրկովկասյան պատերազմների ժամանակ՝ ակնկալելով Աղա-Մահմադ խանի միջոցով ետ ստանալ հայրենի կալվածքները⁵:

Հովսեփ Արղությանը Թիֆլիսի վերահաս ավերումը կանխելու համար գեոևս ամիսներ առաջ Հերակլ 2-րդի խնդրանքով դեմել էր Ի. Գուգուրիչին՝ Հերակլին օգնական զորք ուղարկելու առաջարկով, ուստի 1795 թ. դեկտեմբերի 15-ին, այսինքն՝ արշավանքից երեք ամիս անց, Գրիգորիտպոլից Ստեփան Դավթյանին ուղղած նամակում գժգոհում էր. թե՛ «Մեղավորն Կուտովիչն է⁶, ողորմելի անբախտ արքային ի մարտի առաքեալ էր առ նա և գրեալ՝ օգնել կամ հրաժարիլ, թէ՛պէս ևս շատ խոսեցայ ընդ նմա՝ վասն այսմ, որ երկիրն առանց ձեռ օգնութեանն փչանալոց է, այլ հաստ գլուխ նորա ոչ ընկալաւ»⁷: Վավերագրերից պարզվում է, սակայն, որ Ի. Գուգու-

⁴ ШГВИА, ф. ВУА, л. 299, л. 63-64. "Пушинской Ибрагим хан прислал в стан его посланца, ища посредством лезгинского Умма-хана с ним примириться на условиях, состоящих в том, чтоб Ага Мугамед хан на Карабагскую провинцию нападений не чинил. Во взаимство чего он, пушинской хан, обязуется прислать к нему в помощь 5000 человек войска своего".

⁵ Որքան էլ Մելիք Մեջլումը Աղա-Մահմադ խանի հետ գործակցելու համար, հատկապես Թիֆլիսի ավերումից հետո, արժանացել էր ժողովրդական պարսավանքի, այնուամենայնիվ նրա գործակալները թելադրված էր Իբրահիմ խանի կողմից Հայկական իշխանությունները (մելիքությունները) վերացնելու քաղաքականությունը դիմագրավելու գործում զաջնակից ունենալու հրամայականով (Ս. Ա. Себрянян, Карабах и Россия. Страницы истории, с. 89):

⁶ Իրականում Ի. Գուգուրիչը ևս 1795 թ. մայիսի 7-ի զեկուցագրով հաղորդել էր արքունիք, թե սպասելի է Աղա Մահմադ խանի հարձակումը Արցախի և Թիֆլիսի ուղղությամբ, սակայն գեոևս հայտնի չէ արքունիքի կողմից արված պատասխանը կամ հանձնարարականը Ի. Գուգուրիչին: Ամենայն հավանականությամբ, այն եղել է սպառնալից (տե՛ս Армяно-русские отношения..., IV, с. 410-412):

⁷ Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. 2951, թ. 86բ:

վիչը ոչ միայն հասկանում էր, այլև ինքն իր հերթին զեկուցագրեր էր ներկայացնում արքունիք՝ Հուսալով կարգադրություններ ստանալ գործելու համար, թեև Կովկասյան գծում ևս գեոևս անհանդիստ իրավիճակ էր՝ կապված կազակային բնակչության ու զորամասերի անհնազանդության և նրանց Կովկասյան դիժ վերաբնակեցնելու խնդրերնեով⁸: Նման մի զեկուցագիր էլ Ի. Գուգուրիչը գրել էր 1795 թվականի սեպտեմբերի 13-ին՝ գեոևս չիմանալով, որ Աղա-Մահմադ խանը գտնվում էր արդեն Թիֆլիսում: Այդ զեկուցագրում Պրատոն Զուրովին ներկայացնելով Այսրկովկասում տիրող իրավիճակը, Ի. Գուգուրիչը գրում է. «Այժմ երկրորդելով, Ձերդ պայծառափայլությունը պատիվ ունեմ ներկայացնելու իմ կարծիքը, որ այն ձեռնարկումներով, որպիսիք կատարում է Հերակլ Թագապորը, հատկապես ներքին անհամաձայնությունների պայմաններում, չի կարող դիմագրավել Աղա-Մահմադ խանին, սպա և այնպիսի վեհերտություն պայմաններում, ինչպես նկատվում է Վրաստանում, Աղա-Մահմադ խանը կարող է զավթել այն»⁹: Այս նամակից մեկ ամիս անց՝ հոկտեմբերի 15-ին, զրաֆ Ռուսյանցև-Զադուենայսկուն գրած զեկուցագրում Ի. Գուգուրիչը պատմելով 1795 թ. ընթացքում տեղի ունեցած բանակցությունների ընթացքի մասին, հայտնում է, որ ինքը միայն հոկտեմբերի 1-ին է ստացել կայսրուհու հրամանը՝ զորք ուղարկելու Թիֆլիսը պաշտպանելու համար, սակայն այդ արդեն ուշացած է: Ժամանակին զորք չարամադրելու փաստը խիստ ստանեց Ռուսաստանի վարիչը, և Վրաստանում ծավալում ստացան հակառուսական տրամադրությունները: Ռուսական քաղաքականության վարիչը փրկելու և առաջիկայում Այսրկովկաս արշավանքի ձեռնարկումը արդարացնելու նպատակով ուսսական հրամանատարությունը, և մասնավորապես Ի. Գուգուրիչը, Թիֆլիսի զրավումը սկսեցին վերադրել ոչ թե ուժերի անհավասարությունը, այլ ներքին դավաճանությունը: Այդ ակնհայտ է մասնավորապես Հովսեփ Արղությանի գրած մի նամակից: 1796 թ. մարտի 13-ին Աստրախանից Ստեփան Դավթյանին ուղղած նամակում նա գայրացած գրում է. «Պղոսն Սարգսի (իմա՝ Պավել Սերգևևիչ Պոսոյովիչին - Պ. Չ.) վաղ ուրեմն

⁸ Ф. А. Шергина. История Кубанского казачьего войска, т. I, Краснодар, 1990, с. 681-696.

⁹ "Теперь вторгительно Вашему Снятельству честь имею донести мое мнение, что при распоряжениях, какие берет царь Ираклий, произходящих особливо от внутренних несогласий, не устоит против Аги-Мамет-хана, то при таковой робости, какая замечается в Грузии, может Ага-Мамет-хан завладеть оною" (АВПР. ф. 110/3, 1793-1799, л. 455, л. 189, подлинник).

պարտ էր զնալ տործին, զի ամենայն անցից պատճառն նա էր. այն որ ի տեղի նորա կայ (իմա՝ Ի. Գուգուլիէ – Պ. Ջ.), այնպէս էր հակեալ ի բանս խռովարարաց. նախ ոչ հաւատարմ գրեցեալ աղետիցն արքայի և ասէր՝ կուտանն ոչ է գալոյ, սուտ գրէ, զկնի ասէ. Հաւուշտրի եղբայր Յակօբն է բերեալ զնա: Ո՛չ ամաչի, թէ՛ ո՞վ է Հաւուշտրի եղբայր Յակօբն, որոյ կինն և որդիքն ևս են գերեցեալք: Գրեցի նմա գալ, որ զգովս զրկեմ առ յինքն և կշտամբեմ. կուտածի բերօղն յիւր ժամանակին յայտնի լինելոց է. ի Ջաւատ խանէն և ի Մէլիք Մէջլումէն (թէպէտ ինքն ոչ զիտէ գայն)»¹⁰: Թիֆլիսի զբաւուրը դավաճանութեան վերագրելը, ինչպէս ակնհայտ է Հ. Արղուժյանի նամակից, սկիզբ է առել Ռուսաստանում, ռուս հրամանատարութեան տարածած լուրերից:

Այդ ասպնդուցում է նաև վերջերս միայն հրատարակված մի վավերագիր, որի հեղինակը՝ հուշն հոգևորական իրիտանֆ Նեպոպտրոսցին, Պ. Ջուրովին ուղղված նամակում Այսրկովկասում վարելիք քաղաքականության մասին իր ներկայացրած առաջարկությունների մեջ, խորհուրդ տալով այս խիստ հարմար պահելն ձեռնամուխ լինելու Այսրկովկասի նվաճմանը, հիշատակում է Մոզդոկի բնակիչ Սաեփան Հավուշտրի եղբոր դավաճանության մասին մի հորինվածք¹¹ ինքը վրաստանում և ընդհանրապես Այսրկովկա-

¹⁰ Տե՛ս ՄՄ, ձեռ. 2951, թ. 95ր:

¹¹ "Армянин тот, о котором угодно было Вашей Светлости потребовать от меня подробное описание, находился довольно время прежде в службе Грузинского царя Ираклия и был в великой у него милости. Он имеет и брата, имянуемого Степаном Аустриевым, в службе Ее И. В. в Моздоке, при тамошнем коменданте Дмитрие Васильеве. Собственного же имени брата его, изменника, теперь не помню; но если благоволено будет разведать, то легко можно об этом узнать. Сего Аустриева царь Ираклий по некоторым его изменам, лишив имения, выгнал с бесчестьем из своего владения; почему он и бродил долгое время около Кавказских гор и по другим местам до нещастного того времени, в котором Ага-Мегмет-хан завладел Эриваном и Генжою. Тогда помянутый Аустриев, присоединясь к нему, обнаружил уже явным его путеводителем, ибо до того имели они сношение между собою по переписке. Евнух Ага-Мегмет-хан, днем отправляя к царю Ираклию обманчивые письма, ночью же, руководимый сим изменником, продвигался вперед, пока уведомился, что царь Ираклий распустил свое войско по квартирам; а тогда уже без опасности прямо прибыл к Тифлису, и никто не нашелся, кто бы запер даже ворота сего города. Царь Ираклий и Имеретинский владетель Соломон, находившиеся тогда в цитадели Тифлиской, не оказали ни малейшего сопротивления, и, напротив того, войско Имеретинское кинулось на грабеж и, похищая каждый что мог, бежало; после чего и царь Ираклий решился уйти со своею фамилиею. И таким образом Соломон со своим войском удалился в Имеретию, а Ираклий со своею фамилиею к Кавказским горам. Вышереченный армянин Аустриев написал после

սում եղած չլինելով¹²: Նա Պ. Ջուրովի քաղաքական գործակալն էր և որոշակի ատկուլություն ուներ հայոց նկատմամբ¹³, ակնհայտորեն այդ մասին տեղեկացվել է Ռուսաստանում, քանզի Այսրկովկասում ստեղծված որևէ գրավոր հուշարձանում այդ տարբերակը երբևէ չի արձանագրվել: Այսրկովկասում հայազգի գործիչներից դատապարտման է արժանացել միայն Մելիք Մեջլումի վարքագիծը՝ Աղա Մահմադ խանի բանակին միանալու համար¹⁴: Ելնելով իրիտանֆի նկարագրության մեջ բերված «դավաճանի» կողմից Հերակլին զբաժնաձևի փաստից և նրա հայկական մելիքներից սերված լինելու հաղորդումից, կարելի էր ենթադրել, որ այդ ամենի ներքո նկատի է առնված Մելիք Մեջլումի վարքագիծը ուռնացումներով ու վրիպումներով: Սակայն խնդիրն այն է, որ այդ ամենը վերագրվում է Մոզդոկում իրքը բնակվող իրական անձնավորության և նրա եղբորը, որոնք ազգակցական կապեր հունևին հայ մելիքների հետ և որոնց անձամբ գիտեր նաև Հովսեփ Արղուժյանը, ուստի և ընդվզում էր նման հերյուրանքի դեմ¹⁵:

того письмо к царю Ираклию следующего содержания: "Се, я причиною твоего злочючения, но это еще не довольно: куда не пойдешь, я последую за тобою. Не палеёса от меня избави́ться". Такие и сим подобные угрозы в письме том изъвлял он ему. Уверяю, что фамилия сего предателя происходит от мелников Армянских." (Путешествия по Востоку в эпоху Екатерины II, Москва, "Восточная литература" РАН, 1995, с.286–287).

¹² Путешествия по Востоку в эпоху Екатерины II, с.284, 286–287.

¹³ Իմանալով հանդերձ, որ "Хрисанф стал политическим агентом Зувова незадолго до всех этих событий", հրատարակիչները այնուամենայնիվ ենթադրել են, թե նա կարող էր այդ տեղեկությունը ստացած լինել հայ վաճառականներից "... Греческий митрополит, хотя и испытывал определенную неприязнь к армянам, мог в подовных случаях пользоваться информацией, полученной от армянских купцов, с которыми он часто сталкивался за время своих странствий" (Путешествия по Востоку в эпоху Екатерины II, с. 263).

¹⁴ Հայկական աղբյուրները Աղա Մահմադ խանի Անդրկովկասյան արշավանքների մասին (1795–1797 թթ.), էջ 61:

¹⁵ Թիֆլիսի գրավումը Աղա Մահմադ խանի կողմից հայազգի մեկ անձի դավաճանությանը վերագրելու հերյուրանքը շարունակվում է դոյտառել առ այսօր ինչպես վրաստանի պատմության ակադեմիական, այնպես էլ բուհական ու դպրոցական դատարբերում, մենագրություններում և զիտա-մասայական հրատարակումներում ու հոդվածներում ընդգրկելով հայկական նոր անուններ, կամ միայն արձանագրումներով առանց որոշակի անունների հիշատակության: Այս հորինվածքը հետագայում վրաց պատմագիտության մեջ վերագրվել է հիմնականում Հարություն Արարատյանին, որի ընդունելությունը և հերքումը տե՛ս Պ. Չորանյան, վրացական ուղեգրությունները և նրանց տեղեկությունները հայրի մասին, էջ 143–147: Հ. Արարատյանի մասին հորինվածքի այդ հերքումը այնուհետև, առանց ստարկության հանդիպելու, արձանագրվել է նաև վրաց պատմա-

յան Սերբերովը, Նիկիտա Գաջանովը²⁵, մայրը Ալվերզովը²⁶, Հարություն Արարատյանը, աստրախանցի Սերգեյ Բոգդանովը²⁷, որ Վ. Զուբովի կողմից ուղարկվել էր Շուշի, և շատ ուրիշներ: Հ. Արղությանի հետ Ղզլարից դեպի Դիբրենո՝ ուսական բանակ են ճանապարհվել նաև Աստրախանացի Դիբրենոցի ու Շամախեցի շատ կամավորներ, որոնց ընտանիքները գտնվում էին Հ. Արղությանի հոգատարության ներքո²⁸: Ուշագրավ է, որ Հովհաննես Լազարյանին 1796 թ. ապրիլի 1-ին Ղզլարից ուղղած նամակում Հ. Արղությանը, հայտնելով, որ «Աւետ Գրիգորիչն (Սերբերով) եկն աստ, պարոն Մանուչար Կաջկաջովն ևս կարգեալ է գրաֆին թարգմանիչ՝ հրամանաւ կայսերուհւոյն, Աստուած տայ, որ սոքա լաւ և խաղաղ լինին, օգուտ է ազգին», դժուարում է, թե «ես ցանկայի ի սրտէ լինիլ այսմ հանդիսի աղայ Մինաս եղբայրն քոյ, որ առաւել օգնական լինիլ ազգին ի յամենայն խորհուրդս գրաֆին, կարծեմ գրաֆն ևս կամեցեալ է բերելն զնա, այլ նա զանազան պատճառ է եղեալ չգալոյն»²⁹: Նույն օրը Մինաս Լազարյանին ևս նամակ է գրում Հովսեփ Արղությանը և ուղղակի կոչ անում մասնակցել արշավանքին. «ես ի սմանէ (իմա՝ Վ. Զուբովից) ոչ ինչ խնդիրք չունիմ, միամիտ լինիս, իմ խնդիրքն իմ ազգի ազատութիւնն է :... Երանի լինիլ ինձ և ազգին իմոյ, որ եթէ դու լինէիր ի մէջ կարգադրութեան այսմիկ և ի խորհուրդս գրաֆին... եթէ անօրինեացէ Աստուած զալ քեզ ի յայս հանդէս, հոգի քնեազ Դաւիթն ընդ քեզ բերցես՝ ընդ քեզ ծառայիլ գրաֆին»³⁰:

²⁵ Дж. С. Фаньян, Подполковник русской военной службы Н. И. Галжанов (Агаджанян), - *Տե՛ս ՊՔՀ, 1980, թիվ 2, էջ 285-489*:

²⁶ Հրաճո Ավետիսյան, Ռուսական բանակի հայ զորավարները և սպայությունը (18-րդ դարի երկրորդ կես - 1914 թվական), - «Հայ-ուսական հարաբերությունների պատմության հարցեր» (նյութերի ժողովածու), Երևան, 1998, էջ 89-90:

²⁷ АВІР, ф. СРІ, оп. 77/7, 1796г., л. 158, л. 160-161.

²⁸ ՄՄ, ձեռ. 2951, թ. 111բ:

²⁹ ՄՄ, ձեռ. 2951, թ. 89:

³⁰ ՄՄ, ձեռ. 2951, թ. 90ա: 1796 թ. հուլիսի 3-ին Ղզլարից կրկին Հ. Արղությանը նամակով դիմում է Մինաս Լազարյանին «յորդորակ վասն դալատեան նորին ի գօրսն» (ՄՄ, ձեռ. 2951, թ. 111բ): Երրորդ անգամ Հ. Արղությանը Մինաս Լազարյանին է դիմում 1796 թ. սեպտեմբերի 12-ին Հին Շամախու մոտ գտնվող ուսական բանակատեղից. «փութով օր մի յառաջ լինիլ, գրեանազ Դաւիթն յինքն բերիլ» (ՄՄ, ձեռ. 2951, թ. 115ա):

Մանուչար Կահկաճյանցի անունը հայագիտության մեջ քիչ է ծանոթ³¹: Ռուսական բանակում մեզ հայտնի է Մ. Կահկաճյանցին (ուսական աղբյուրներում՝ Մաքսիմ Կաչկաչև) վստահված դիվանագիտական երկու առաքելություն: Առաջինը՝ Վալերիան Զուբովի ղեմ կազմակերպված դավադրության³² բացահայտումից և Շամախու Մուստաֆա խանի փախուստից հետո նրան կրկին ուսական հպատակության բերելու նպատակով կատարված առաքելությունն էր Մուստաֆա խանի մոտ, որի ժամանակ ձեռք բերվեց պայմանավորվածություն՝ Շամախու մոտ գտնվող հայկական վանքում հանդիպելու Հովսեփ Արղությանի հետ³³ որպես ուսական կողմի ներկայացուցիչ: Այնուհետև, ինչպես հետագայում պատմում է Մէլիք Ջիմշիդը 1798 թ. դեկտեմբերի 23-ին Պավել Առաջինին գրած նամակում, «յորժամ ի ծածուկ զիս՝ զՄէլիք Ջիմշիտըս, ընդ անդ եղելոցն պարաւանդել զիս երզմամբ ի յին (՞) առ ամենայն Ռուսաց աթոռն կապակցութիւն և զայնմանէ տեղեկացուցանել նմա: Ուստի ես, ըստ որում ի վաղուց ցանկայի այնմ ուրախութեամբ ընդ առադրեալն նոյն մայրիւն, առաջի սրբոյ Աւետարանին ևս կենարար խաչին ի բերանուց ամենիցն որպէս նախագահ ի նմա արարի երզումն և ուխտեցի ընդ զալ գրաֆ Զուբովին յազթագեաց զօրօքն Ռուսաց ի յեզը Կուր դետոյն ժողովալ զգօրս իմ և ցուցանել ի կողմանէ իմմէ զամենայն զհարկաւոր նպաստս ըստ կարողութեան իմոյ, թէ նպարօք և թէ այլօվք, զոր ինչ պիտոյն է: Բայց ի նոյնում իսկ ժամանակի, երբ մեք առ այն պատրաստեալ կայաք, զօրացն Ռուսաց տրեալ հրաման վերադառնալ ի Ռուսաստան»³⁴:

³¹ Վաղուց ուշադրության անկելով Մ. Կահկաճյանցի գործունեությունը և անծանոթ լինելով նրա մասին հայ մատենագրության մեջ պահպանված վկայություններին, ուսումնասիրողները մոտ նա ընկալվել և ներկայացվել է որպես ազգությունը վրացի գործիչ. տե՛ս *В. Г. Мачарадзе, Грузинские документы из истории русско-грузинско-египетско-эфиопских отношений 80-х годов XVIII века, Тбилиси, 1967: ձեռ. ցըրձիթիցը. լարտցըլո թիւրձի ձեռնար յաճիթիցը յաճիթիցը. - «լարտցըլո անձըմձեթիթ». Վըլոճիթիցըլո. Ե. 4, տձ., 1997, թթ. 208-212.*

³² Жизнь Артемия Араратского, с. 136-137. *Н. Дубровин, Поход графа В. А. Зубова в Персию в 1796 г., - «Восный сворник», 1874, № 5, с. 18-19.*

³³ *Н. Дубровин, նշվ. աշխ., էջ 20.*

³⁴ АКАК, I, с. 634-635. Г. А. Эзов, Сношения Петра Великого с армянским народом. с. СХІІ. Армяно-русские отношения, IV, с. 493-494. Մանուչար Կահկաճյանցիի Շուշի կատարած առաքելությունը արձանագրել է Մ. Ա. Մուրադյանը: *Տե՛ս Մուրադյան Մ. Ա. Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին 19-րդ դարի ուսական պատմագիտական և հասարակական մտքի զնահատմամբ, Երևան, 1985, էջ 37:*

Շամախու մոտ գտնվող բանակից Ստեփան Գավթյանին զբաժնավորելով և նախաձեռնելով նրան հարգելու է, որ այդ առաքելությունը տեղի է ունեցել 1796 թ. սեպտեմբերին (նամակը գրված է սեպտեմբերի 22-ին): Ուշագրավ է, որ սեպտեմբերի 13-ին Արցախից Իրրահիմ խանի կողմից Հ. Արդությանին ուղղված նամակով³⁵ և Վ. Զուբովի մոտ պատասխան ղեկավարող Սամակուլ-բեկի հետ վերադարձել էր նաև մայր Ավետիք (Ավերյան) Սերբերովը:

Մանուչար Պապէի Կաճկաճյանցի անունը վավերագրերում առաջին անգամ հանդիպում է 1783 թ. Հ. Արդությանի նամակներում: Մինչև Լազարյանին Նոր Նախիջևանից մարտի 3-ին զբաժնավորվելու հաղորդվում է, թե «այս Մանուչար Պապովիչն գայր առ պայծառափայլ քննազն ի յերկրէ մերմէ և ի օբստուրէն»³⁶, հարկաւորեցայ և զայսքանս զրել և զքաղցր որպիսութիւնդ հարցանել և սոյն զրարերս յանձնել ի շնորհս քոյ վեհանձնութեան, մեր երկրի որպիսութիւնն լրիւ ի դմանէ իմանաս»³⁷: Կ. Պոլսի ուսուցիչ ղեկավարներից արքունիք ուղարկված ղեկուցագրերից մեկում 1785 թ. նոյեմբերի ներքո արձանագրվել է, թե «Ժամանեց... Վրաստանից Տազանոգի վրայով Հերակլ թագավորի հրետանու պորուտչիկ Մաքսիմ Կաչկաչևը, որ գնում է Կահիրե իր հարազատներին այցելության»³⁸: Վրաց հրետանու պորուտչիկ Մաքսիմ Կաչկաչևը 1787 թ. մայիսի 10-ին Գ. Ա. Պոտյոմկինին զբաժնավորելու ղեկուցագրում³⁹ նշում է, որ ինքը խնդրել է Հերակլին թույլատրել ճանապարհով լուծելու Եգիպտոս՝ ազգականներին այցելելու նպատակով: Ժամանակակից արդությանից առաջ նա Հերակլից ստացել է նամակներ ուղղված Կ. Պոլսի ուսուցիչ ղեկավար Յա. Ի. Բուլգակովին և Եգիպտոսի մամլուի ղեկավար Մ. Կաճկաճյանին ընդունել են սիրալիր և իմանալով Վրաստանի՝ Ռուսաստանի հովանավորության ներքո անցնելու մասին, որոշել են կապեր հաստատել Ռուսաստանի հետ Ալեքսանդրիայի ուսուցիչ ղեկավար Տոնուսի միջոցով: 1787 թ. հունվարին Մ. Կաճկաճյանը

³⁵ АВПР, СРА, оп. 100/3, 1764-1800, л. 462, л. 48 об.
³⁶ Այդ մականունով հայտնի էր Հակոբ Ռայնգար:
³⁷ ՄՄ, ձեռ. 4496, էջ 137:
³⁸ «Прибыл... из Грузии чрез Таганрок царя Ираклия артилерии поруччик Максим Качкачев, едуший в Каир для свидания с своими родственниками» (АВПР, Сношения России с Турцией, 1785, л. 659, л. 38 об.).
³⁹ В. Г. Мачаралзе, Грузинские документы из истории русско-грузинско-египетско-эфиопских отношений 80-х годов XVIII века, с. 27-35.

վերադարձել էր Կ. Պոլսի և գտնվում էր Բուլգակովի մոտ: Վերադառնալով Ռուսաստան, նա ղեկուցագրեր է ներկայացրել Գ. Պոտյոմկինին՝ նկարագրելով Եգիպտոսում տիրող իրավիճակը: Մ. Կաճկաճյանը կազմել է Եգիպտոսի ղեկավարի ցանկը՝ նշելով նրանց ազգային ծագումը և հատկապես կանգ առել Թուրքիայի ղեմ նրանց մղած պայքարի զբաղվածներին վրա: Նա իր հետ բերել է նաև Իրրահիմ բեյի և Մուլայման աղայի Հերակլին հասցեագրված նամակները: Գ. Պոտյոմկինին ուղղած ղեկուցագրում Մանուչար Կաճկաճյանցի առաջարկում է, որպեսզի Ռուսաստանն օժանդակի Եգիպտոսի Իրրահիմ և Մուրադ բեյերին, որի շնորհիվ Եգիպտոսը կազատագրվի Օսմանյան կայսրության լծից և, այդպիսով՝

- Ա. Օսմանյան կայսրությունը կտրոհվի և կթուլանա,
- Բ. Անատոլիայում և Սիրիայում կուժեկանա քրիստոնյաների դիրքը և նրանք կմիավորվեն Թուրքիայի ղեմ,
- Գ. Հնդկաստանի և Արևմուտքի միջև առևտուրը դուրս կգա Թուրքիայի վերահսկողությունից,

Գ. Եգիպտոսի հաջողությունը կտարածվի Միջագետքում, և Թուրքիայից կանջատվեն նաև Բաղդադը, Երուսաղեմը և ուրիշներ:
Մանուչար Կաճկաճյանցը հատուկ առանձնացնում է Եթովպիայի հետ հարաբերություններ հաստատելու հարցը և պատրաստակամություն հայտնում իր առաջարկի ընդունման ղեկավար ճանապարհորդելու Եթովպիա: Ուշագրավ է, որ կայսրուհուն ներկայացված ղեկուցագրում Գ. Ա. Պոտյոմկինը ներկայացնելով Մանուչար Կաճկաճյանցին ու նրա զբաղվող առաջարկները, խնդրում է կայսրուհու բարեհաճությունը նրա նկատմամբ⁴⁰:

Մանուչար Կաճկաճյանցին այնուհետև հանդիպում ենք 1790 թ. հոկտեմբերի 15-ին Բենդերից Ներսես ազա Խասատայանին զբաժնավորելու հարցով: Ուշագրավ է, որ նա Ներսեսի նամակն ստացել է Բենդեր ժամանած Կաճկաճովի միջոցով⁴¹:

Պահպանվել են մի շարք այլ վկայություններ ևս, որոնցից պարզվում է, որ նա մասնակցել է 1796 թ. Գերբենտի զբաղմանը⁴², որտեղից գրել է Մինաս Լազարյանին և խնդրել «լինիլ ընդ գրաֆին»: 1797 թ. Ռուսական

⁴⁰ ЗООИД, т. 8, Одесса, 1872, с. 218-219.
⁴¹ ՄՄ, ձեռ. 2949, թ. 199բ:
⁴² ՄՄ, ձեռ. 2951, թ. 98բ. «Առ գերազնի պարոն Մանուչարն Կաճկաճովի Դերբենդ՝ 1796 թ. մայիսի 20»:

գործերի ետ քաշվելու պատճառով Հովսեփ Արղությանի հետ անցել է Թիֆլիս, որտեղից մայիս-հուլիս ամիսներին գրադրութուն է ունեցել Թելավում գտնվող վրաց Դարեջան (Դարիա) թագուհու հետ⁴³: 1798 թ. հունվարի 14-ին Հովսեփ Արղությանին ուղղված նամակում Ղզլարից Մինաս քահանան հաղորդում է «վասն պարոն Մանուչար Կանկանովի համար...վճարեաց աշխարհն զկեանս իւր, աստի փոխեցաւ առ Աստուած»⁴⁴: Ատանալով այդ լուրը, Հ. Արղությանը մխիթարական նամակ է հղում Ղզլար՝ Մանուչարի հորը՝ «առ պարոն Պապայն»⁴⁵:

Այսպիսով, հայազգի գործիչները այս արշավանքի ժամանակ ևս հնարավոր միջոցներով ձգտել են իրենց օժանդակութունը բերել ուսական քաղաքականության հաջողութանը՝ որպես գերխնդիր ունենալով Հայաստանի ազատագրումը թուրք-պարսկական լծից:

⁴³ Գ. ՋՈՐՈՒՅԱՆ, ԵՃՈՒՐՈՒՅՅԵԼՈՒ ԵՎ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ, Ե. III, ԺԸ., 1910, ԶՈՅ. 276, 350, 351. Մանուչար Կանկանյանցին ուղղված Դարեջան թագուհու պատասխան նամակը (վաղ. 276) գրվել է 1797 թ. մայիսի 14-ին: Նույն օրը թագուհին շնորհակալական նամակ է հղել նաև Հովսեփ Արղությանին՝ կայսերական ինչ-որ ողորմածության մասին լուրը նրանից իմանալու և Արղությանի կողմից հոգատար վերադարձումների արժանանալու համար (նույն տեղում, վաղ. 277):

⁴⁴ ՄՄ, Կաթողիկոսական զիվան, թղթ. 5, վաղ. 5, բնագիր:

⁴⁵ ՄՄ, ձեռ. 2951, թ. 150ա: Կանկանյան տոհմի ներկայացուցիչներին հանդիպում ենք Վրաստանում, Հյուսիսային Կովկասում, Դերբենտում, Բաքվում և այլուր: Պահպանվել է 1817 թ. Ղզլարից Հակոբ Գալստյանի նամակը՝ գրված Հայոց կաթողիկոսին, որտեղ հայտնվում է, թե վեց ամիս առաջ ուղարկել է իր քեռորդի Կանկանյանների ազգաբանությունն ի հաստատություն, իսկ այժմ էլ ուղարկում է Գևորգ Խուրովի միջոցով (ՄՄ, Կաթ. զիվան, թղթ. 31, վաղ. 46, 3 էջ, բնագիր, 1817 թ. մայիսի 9): Հաջորդ տարում 1818 թ. հունիսի 20-ին Եփրեմ կաթողիկոսը և եկեղեցական խորհուրդը հաստատում են Ալեքսանդր, Հարություն և Պողոս Կանկանյանցների (Կաղաքյանց) Սահառուինների տոհմին պատկանելը (ՄՄ, Կաթ. զիվան, թղթ. 25, վաղ. 96): Այս վերջին և այլ փաստերը լիովին անհիմն են դարձնում որոշ գիտնականների փորձերը Մանուչար Կանկանյանցին ներկայացնելու որպես ազգութանը վրացի զիվանագետի՝ ելնելով միայն այն փաստից, թե Գ. Ա. Պոսոյանիներն զբաղվում են նրա նամակները գրված են վրացերեն [եզվով]: Այստեղ մենք դործ ունենք Վրաստանում տարածում գտած մի փաստ-երևույթի հետ, որի մասին գրել է զեռես Միմեոն Երևանցի կաթողիկոսը 1778 թ. մայիսին վերադարձալ իր նամակում զիմելով Թիֆլիսի մելիք Ավետիքին. «Իսկ զի վրացիներն էր գրեալ սա առ սրբազան Վեհըն, վասն որոյ մեղաբեաց, թէ ես Հայոց կաթողիկոսն և զու՝ թէյ իշխան, այս վրացերէն գիրս ի՞նչ է, որ մեզ գրեալ ես: Գրագիր՝ չգոյր, թէյ զու հայերէն չգիրաէիր: Մեզ աստ ո՞ր է վրացերէն կարգացող կամ գրագիր, որ զու զքո հայրենին թողեալ օտար լեզուաւ բնդ մեզ խօսիս և կամ ի՞նչ դիտմամբ է այս: Ամօթ մեծ է» (ՄՄ, ձեռ. 4479, թ. 195ա):

4.2 ՌՈՒՍ-ՊԱՐՍԱԿԱԿԱՆ ՓՈՆԶԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՒ ՀԱՅ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ

Ի տարբերություն օտար լծի դեմ ազատագրական պայքարի ընթացքում հայ քաղաքական գործիչների նախորդ փորձերի, երբ որպես հիմնական դաշնակիցներ ընկալվում և ընտրվում էին ընդհանուր թշնամու դեմ այն պետություններն ու ժողովուրդները, որոնց շահերը այս կամ այն կերպ հակադրվում էին Պարսկաստանի և Օսմանյան պետության վարած քաղաքականությունը, և որոնց նպատակները կարելի էր համաձայնեցնել հայ ժողովրդի ձգտումների հետ, 18-րդ դարի վերջին քառորդին փորձ է արվում օգտվելու բուն իսկ Պարսից պետության ներքին հակասություններից և գործարքի գնալու հակամարտող ուժերից այն թևի հետ, որը կարող էր ընդառաջել հայոց բաղձանքին և որի համար կարող էր բարենպաստ լինել ինչպես Ռուսաստանի, այնպես էլ հայ գործիչների օժանդակությունը: Այդ առումով ջանքեր են գործադրվում կապեր հաստատելու Իրանի գահի համար պայքարում Ռուսաստանի օժանդակության կարիքն զգացող Ալեք Մուրադ խանի⁴⁶ ու այնուհետև Աղա-Մահմադ խանի եղբայր Մուրթուզա Կուլի խանի հետ⁴⁷: Վերջինին հետ ավելի քան մեկ տասնամյակ հայ գործիչների մտերմությունը թելադրված էր ինչպես Իրանի գահի համար նրա թեկնածուները Ռուսաստանի կողմից պաշտպանվելու խնդրով, այնպես էլ Ռուսական արքունիքում բարենպաստ կարծիք ստեղծելու մեջ հայ գործիչների միջնորդությունը դիմելու նրա մտահոգությունները: Հասկանալու համար այդ ընտրությունը հնարավորության և հիմնավորվածության աստիճանը, փորձենք հանդամանորեն ներկայացնել 18-րդ դարի վերջերին Իրա-

⁴⁶ А. Р. Иоаннисян, Россия и армянское освободительное движение в 80-х годах 18-го столетия, Ереван, 1990, с.130-144.

⁴⁷ Հայ գործիչների հետ Մուրթուզա Կուլի խանի կապը նկատելի և Հովհ. Լազարյանին զբաղ նրա մի նամակը իր մենագրության մեջ Հրատարակել է պրոֆ. Վ. Դիլոյանը (տե՛ս Վ. Դիլոյան, «Լազարյանների հասարակական քաղաքական գործունեության պատմությունից (18-րդ դարի երկրորդ կես)», Երևան, 1966, էջ 178-179: Միաժամանակ հենվելով 1789 թ. Հ. Արղությանին գրած այդ նամակի վրա, Վ. Դիլոյանը գրում է. «Այս նամակը, նրա մտերմական տոնը և նրանում հայտնված համոզվածությունը, որ Արղությանը կարող է օգնել, վկայում են, որ Մուրթուզա Կուլի խանի հետ ունեցած հարաբերությունները թերևս հետևանք զնայցող նպատակներ են հետապնդել Հայաստանի հարցում, ինչ առումով և Լազարյանն ու Արղությանը ամեն կերպ օժանդակել են առաջինին (տե՛ս Վ. Դիլոյան, նշվ. աշխ., էջ 179):

նի քաղաքական կացությունն ու ներքաղաքական պայքարի կարևորագույն դրվագները:

Դեռևս 1760-ական թվականներին սկզբներին Քերիմ խանի իշխանությունն սկզբնական գերազանցությունն ստանալու նպատակով ներառնալու հակամարտություններ սկսվեցին Մազանդարանում գտնվող դաջարական Դավալու և Կոյունլու տոհմերի միջև: Պայքարը թուլացնելու նպատակով Քերիմ խանը տեղահանեց Կոյունլու տոհմը և բնակեցրեց Դամղանի մոտ, իսկ առաջնորդներին որպես պատանդ պահեց իր արքունիքում: Տեղահանությունը հանձնարարվել էր Աղա-Մահմադ խանին, որն իր հետ վերցրեց եղբայրներից նրանց, որոնք մայրական գծով չէին պատկանում Դավալու տոհմին: Մազանդարանում մնացին նրա եղբայրներ Մուրթուզա Կուլի խանը և Մուստաֆա Կուլի խանը: 1779 թվականի մարտի 2-ին Շիրազում մահանում է Քերիմ խանը: Նույն օրն իսկ Աղա-Մահմադ խանը, որը ևս որպես պատանդ պահվում էր Շիրազում, Քերիմ խանի պալատականների աջակցությամբ փախչում է Շիրազից: Մեկ շաբաթ անց նա արդեն բավական կողմնակիցներ ու ուսուցիչներ ունենալով Աղա-Մահմադ խանը, 1780 թ. գրավելով Մազանդարանը և Աստարաբադը, իսկ 1781 թ. գարնանը՝ Գիլանը, Հեղաթի խանի փոխարեն Գիլանի կառավարիչ է նշանակում Մուրթուզա Կուլի խանին: Վերջինս դեմ, սակայն, չուստով ապստամբություն է ծագում, և սա ստիպված է լինում փախչելով փրկվել նախ Լահիճում և ապա՝ Մազանդարանում: Աղա-Մահմադ խանը զբաղված լինելով Ալի-Մուրադ խանի զորքերի հետ պատերազմելով, չէր կարող օգնել Մուրթուզա Կուլի խանին:

Դեռևս Գիլանում եղած ժամանակ Մուրթուզա Կուլի խանը նամակագրություն էր սկսել Ռուսաստանի հետ: Ռուսաստանի նկատմամբ բարեկրթացիական հարաբերություններ պահպանելու կողմնակից էր նաև Աղա Մահմադ խանը, որը թուլյատրել էր անգամ Վոյնովիչի արշավախմբին Աստարաբադի մոտ 1781 թ. կառուցելու առևտրական ֆակտորիա: Այն կառուցվեց այնքան անառիկ և ընդարձակ (այնտեղ կարող էր տեղավորվել մոտ 1000 մարդ), որ կասկածներ հարուցեց Աղա-Մահմադ խանի մոտ: Վերջինիս հրամանով Վոյնովիչը ձերբակալվում է ու 1782 թ. ետ ուղարկվում Ռուսաստան, իսկ կառուցված ֆակտորիան ավերվում է: Աղա-Մահմադ խանի և Ռուսաստանի հարաբերությունները դառնում են թշնամական:

Օգտվելով Իրանում կենտրոնական իշխանություններից, ինչպես ասվեց, Ռուսաստանը Վրաստանի հետ կնքելով Գեորգիևյան պայմանագիրը, իրավական հիմք ստացավ Վրաստանում հաստատելու իր ազդեցությունը և անգամ զորք մտցնելու այնտեղ: Գ. Ա. Պոտյոմկինը Գեորգիևյան պայմանագրի կնքումից հետո մտահոգանում է Այսրկովկասում ռուսական ազդեցությունը ընդարձակելու նոր տարբերակ: Այդ նպատակով փորձ է արվում օգտագործել Ալի Մուրադ խանին Ռուսաստանի հովանավորության և նրան Իրանի նոր շահ ճանաչելու խոստովանված գալթակցումը: Ալի Մուրադ խանի հետ նման պայմանագրի կնքումով, ըստ այդ նախագծի, միասնական ճակատ կստեղծվեր ինչպես Օսմանյան պետության, այնպես և Աղա Մահմադ խանի դեմ: Այդ է պատճառը, որ Գ. Ա. Պոտյոմկինի հանձնարարություններով Պ. Ս. Պոտյոմկինի կողմից 1783 թ. հոկտեմբերին դեսպանագրություններով Ալի Մուրադ խանի մոտ՝ Սպահան է ուղարկվում հայազգի Հակոբ Թոխաթյանը, կամ, ինչպես ինքն էր ստորագրում՝ Հակոբ Անտոնովը (Անտոնյան): Վերադարձից հետո 1784 թ. ապրիլի 18-ին Պ. Ս. Պոտյոմկինին գրած զեկուցագրում նա նկարագրում է իր ճանապարհորդությունը⁴⁸: Հակոբ Անտոնյանը Իսպահան էր ճանապարհվել Վրաստանով, 13 օր մնացել Թիֆլիսում, Հերակլից վերցրել նամակներ նաև Ղուկաս կաթողիկոսին հանձնելու համար և ապա Երևան-Սոյ-թավրիզ-Քաջան ուղիով հասել է Իսպահան 1784 թ. հունվարի 20-ին: Հաջորդ օրն իսկ ընդունելություն համար կազմակերպված զորաշարքերի սողանցումով նա այցելում է պալատ: Ալի-Մուրադ խանը պարտաստականություն է հայտնում Ռուսաստանի հետ փոխանակել պաշտոնական ներկայացուցիչներ, ազատել մաքսատուրքերից ռուսական վաճառականներին և միաժամանակ զգուշացնում, թե «եթե կայսրուհուն հաճո է խնդրել ինձնից մարզեր կամ քաղաքներ իր հովանավորության ներքո ունենալու համար, ապա ես, Աստածո բարեացակամությամբ, իշխանություն և զորություն ունեմ կիսելու ողջ Պարսկաստանը նրա հետ երկու մասի, սակայն վստահաբար տեղակ լինելով, որ Կայսրուհին ունի բավական շատ քաղաքներ և վայրեր, ես չեմ կարծում, որ նա մարզեր խնդրի»⁴⁹: Հակոբ Անտոնյանի զեկուցագրից պակ-

⁴⁸ Армяно-русские отношения..., IV, с. 300-301.
⁴⁹ Армяно-русские отношения..., IV, с. 301. Հակոբ Անտոնյանի զեկուցագիրը առաջին անգամ հայտնաբերել և հրատարակել է Վ. Մարտիրոսյանը: Հրատարակմանը կցած առաջաբանում նա ընդգծել է, թե Ալի-Մուրադ խանը «стремясь получить военно-политическую поддержку России в начале 80-х гг. предлагал в об-

Հայտ է, որ կազմակերպելով պատշաճ ընդունելություն, Ալի Մուրադ խանը չի ձգձգել նրա վերադարձը Իսպահանից և պատասխան նամակով ու իր ղեկավարներին՝ Մահմեդ բեկին, ուղեկցությունը նրան ճանապարհել է ետ: Զեկուցադրից ակնհայտ է նաև, որ Հակոբ Անտոնյանը Հանձնարարություն է ունեցել Հաղորդելու Ռուսաստանի կողմից տարածքային պահանջներին մասին, որին և ի պատասխան Հնչյու է Ալի Մուրադ խանի վերոբերյալ առարկությունը: Այդ Հանգամանքը ընդգծելի է, որովհետև պատմագիրություն մեջ Համբարձումյանը տարածում է ստացել այն դրույթը, թե իբր տարածքային զիջումների նախաձեռնությունը պատկանում էր Ալի Մուրադ խանին: Այդ տեսակետը, թերևս հետևանք է այն վավերագրերի, որը, որպես պարսից ղեկավարի «Հայտարարություն», ի սկզբանե չըջանառություն մեջ է դրվել խեղաթյուրված վիճակում⁵⁰: Այդ վավերագրերը, որը մեջ է բերված նաև Ա. Ռ. Հովհաննիսյանի աշխատության մեջ, և որի հիման վրա կատարվում են բոլոր ենթադրություններն ու եզրակացությունները, ոչ միայն հակասության մեջ է Հակոբ Անտոնյանի միանգամայն վստահելի հաղորդումների հետ, այլև պարունակում է տարրինակ պնդում, թե իբր Ալի Մուրադ խանը «Առևտրի կարգավորման մեջ նա Ռուսաստանի օգտի համար միջոցառումներ չի նախատեսել, սակայն քաղաքական առումով [Հօգուտ Ռուսաստանի] հրաժարվել է բոլոր նահանգներից, որոնք նախկինում գտնվել են Ռուսական տիրապետության ներքո և բացի այդ նաև Ղարաղաղից, Ղարաբաղից, Նախիջևանի և Երևանի նահանգներից»⁵¹: Նման պնդում ոչ միայն չի արձանագրված Ալի Մուրադ խանի նամակում, որ Հանձնվել էր Պ. Ս. Պոտյոմկինին, այլև հույս է հայտնվում, «Թող

мен на военно-политическую помощь уступить России Восточное Закавказье и Прикаспийские области» տե՛ս В. М. Мартыросян. Армяне в русско-иранских экономических и политических связях.–ՊՐՀ, 1979, թ.3, էջ 241: Իրականում այդ տարածքների ձեռքբերումը Գ. Պոտյոմկինի ակնկալությունն էր, որը դիվանագիտորեն մերժվում էր խանի կողմից՝ փոխարենը առաջարկելով «касательно до купеческих коммерциев, как и прежняя времена не собираемо было от них всеусердием и с желательным сердлем отправить бы своего мог ко Двору»: ⁵⁰ Արբուխիբում իրավիճակը Ա. Բեգրորդկոյին և Եկատերինա 2-րդին աջակցելու կարող էր ներկայացնել միայն Գ. Ս. Պոտյոմկինը, որի վերահսկողությամբ և բնթանում էին բանակցությունները: ⁵¹ А. Р. Иоаннисян. Россия..., с. 131.

Ռուսաստանի և Պարսկաստանի միջև Հաստատվի ամուրը, Հաստատուն և Հավերժական բարեկամություն՝ ի բարօրություն և ի շահ երկու ժողովուրդների, և Հանուն առևտրի բարգավաճման»⁵²:

Հակոբ Անտոնյանի հաղորդմամբ (ինչը արձանագրված է նաև Ալի Մուրադ խանի վերոհիշյալ նամակում) բոլոր երկրներից ղեկավարություններ են այցելում Իսպահան, իսկ ինքը անձամբ տեսել էր պարսկական բոլոր խաների ղեկավարներին, բացի Երևանի խանի և Հերակլի ղեկավարներից:

Ընդգեղում Ռուսական հյուպատոս Ի. Վ. Թուսմանովսկին ևս 1783 թ. դեկտեմբերի 1-ին Ալի Մուրադ խանի մոտ է ուղարկում Հայազգի Մեկքոմ Պոպովին, որը վերադարձից հետո դրավոր զեկուցազրով նկարագրում է իր առաջելություն Հանգամանքները⁵³: Պարզվում է, ճանապարհվելով Ռեշտից, նա գնացել է Ղազվին ու Քաշան քաղաքներով և Իսպահան է հասել 1784 թ. հունվարի 1-ին: Ալի Մուրադ խանին ներկայացվել է հունվարի 6-ին և անձամբ Հանձնել նրան ուղղված ծրարը: Ուշագրավ է, որ նույն վայրում և նույն խանի մոտ են Հանգրվանի տեղ հատկացրել նաև Հակոբ Անտոնյանին: Վերջինս, ըստ Մեկքոմ Պոպովի հաղորդման, Իսպահան է ժամանել հունվարի 12-ին և Հաջորդ օրն իսկ ներկայացվել Ալի Մուրադ խանին: Բնակվելով նույն վայրում, նրանք գտնվել են մեկուսացման մեջ և թույլ չի տրվել ոչ միայն նրանց Հանդիպումը միմյանց, այլև այնտեղ գտնվող վրաց իշխանների հետ: Ալի Մուրադ խանի կողմից նվերներ ստանալով փետրվարի 7-ին, նույն օրն իսկ նա իրավունք է ստացել ճանապարհվելու ետ՝ ուղեկից ունենալով կոստրով (Սոսորով) բեկին, որին և Հանձնարարվել է պատասխան նամակը Ի. Թուսմանովսկուն տանելու պարտականությունը: Մեկքոմ Պոպովի հաղորդմամբ, Ալի Մուրադ խանը իբր վերադարձնելու պայմանով նոր Զուլայի Հայոց վանքից վերցրել է «տասներկու բաթման արծաթի խաչեր և այլ իրեր, եկեղեցական ոսկյա

⁵² Армяно-русские отношения..., IV, с. 289.. ⁵³ Ալի Մուրադ խանի հետ Ռուսաստանի վարած բանակցությունների ողջ ընթացքի Հանգամանորեն վերլուծությունը, որբանով աննշվում է Այսրկովկասի հետագա ճակատագրի քննարկմանը, ներկայացված է Հայ պատմագիրություն մեջ (А. Р. Иоаннисян, Россия..., с. 129–144, վ. Ռ. Գրիգորյան, Երևանի խանությունը ԺԸ. դարի վերջում, էջ 84–86), ուստի այժմ դեպքում մեր խնդրին է միայն ներկայացնել Հայ գործիչների մասնակցության ձևն ու չափը նշված բանակցություններում, և, ըստ այդմ, Հայ-պարսկական փոխհարաբերություններում քաղաքական բանակցությունների նոր գործընթացի սկզբնավորումը:

անոթներ՝ երկու բաժման, ու նաև կարված, հնագույն ոսկյա և արծաթյա թանկարժեք շուրջառ և սպասք»⁵⁴:

Ալլի Մուրադ խանը դիտեր Ադա-Մահմադ խանի նկատմամբ Ռուսաստանի վերաբերմունքի մասին և աշխատում էր օգտվել այդ հանգամանքից՝ Պարսկաստանի գահին հաստատվելու համար: 1784 թ. փետրվարին նա, ինչպես ասվեց, պատասխան նամակով Կովկասյան գրեժ է առաքում իր ներկայացուցիչ Մուհամեդ խանին⁵⁵: Նամակում նա Պ.Ս.Պոտյոմկինին հավաստիացնում է, որ ուսու վաճառականությունը Պարսկաստանում կունենա ընդ որ տեսակի դյուրությունները՝ առևտրական հարաբերություններ ծավալելու համար, պատրաստակամություն է հայտնում Ռուսաստանի հետ հաստատելու բարեկամություն և դաշինք ու միաժամանակ շեշտում, որ նրա նամակը ստանալու պահին իր մոտ էին Պարսից ըլոր խաների դեսպանները՝ դրանով իսկ ընդգծելով Պարսկաստանում ունեցած իր կենտրոնական դիրքը: Նա ավարտում է նամակը նշելով, թե ինքը անհամբեր սպասում է իր դեսպանի՝ Մուհամեդ բեկի, շուտ վերադարձին, որին ինքը լիովին վստահում է իմանալու համար Պ. Ս. Պոտյոմկինի մտադրությունների մասին⁵⁶:

Ելնելով Հակոբ Անտոնյանի նամակի թվագրումից (1784 թ. ապրիլի 18) կարելի է ենթադրել, թե Ալլի Մուրադ խանի դեսպանը ևս Պ. Ս. Պոտյոմկինի մոտ է հասել նույն ժամանակ: 1784 թ. մայիսի 28-ին կոնսուլ Ի. Թուսանովսկին էնզելիլից Աստրախանի նահանգապետ Մ. Մ. Ժուկովին գրում է, թե հայ վաճառական Կալուստովը ապրիլի 8-ին Իսպահանից գրած նամակով հաղորդել է, որ Իսպահան՝ Ալլի Մուրադ խանի մոտ է ժամանել Յրանսիական արքունիքի բանագնացը, սակայն նա դեռևս չի ներկայացվել խանին, ուստի հայտնի չէ նրա գալու նպատակը: Կալուստովը խոստանում է, որ այն հայտնի դառնալուց հետո ինքը կհաղորդի այդ մասին Ռուսական

Հյուպատոսությունը⁵⁷: Նույն թվականի մայիսի 31-ով թվագրված Ա. Ա. Բեգերորդկոյի Պ. Վ. Բակունինին ուղղված նամակից տեղեկանում ենք, որ նա ստացել է Գ. Ա. Պոտյոմկինի նամակը, որով վերջինս տեղեկացնում է Ալլի Մուրադ խանի կողմից ուղարկված դեսպանի Ռուսաստան գալու մասին ու նաև Ալլի Մուրադ խանի խոստումը, թե ինքը այն ամենը, ինչ անհրաժեշտ է Ռուսաստանին, կարող է կատարել, եթե միայն արժանանա կայսրուհու բարեհաճությունը՝ իրեն ճանաչելու Պարսկաստանի շահ: Ըստ Ա. Ա. Բեգերորդկոյի նամակի, Գ. Ա. Պոտյոմկինը «այս համարում է ամենից հուսալի միջոցը պարսկական մեր գործերը ավարտելու համար՝ կնքելով նրա հետ պայմանագիր, որի մեջ կարգավորված կլինեն մեր ձեռքբերումները, Հերակլի թագավորության սահմանները, Հայկական անկախ մարզերի դրությունը և մյուսը՝ Կասպից ծովափերից կազմակերպվողը, բացի այդ կնշվեն Պարսից կայսրության սահմաններն ու որոշված կլինեն առևտրական և այլ օգուտներ»⁵⁸: Այնուհետև Ա. Ա. Բեգերորդկոյն նշում է, թե դեսպանը Գ. Ա. Պոտյոմկինի կողմից ետ կուղարկվի խոստումներով ու խորհուրդներով, իսկ վերջնական որոշումը կընդունվի դեսպանի վերադարձից հետո:

Այս նամակից պարզվում է, որ ինչպես Պ. Պոտյոմկինի գիտնումը Ալլի Մուրադ խանին, այնպես էլ բանակցությունների համար Հակոբ Անտոնյան

⁵⁴ Армяно-русские отношения..., IV, с. 291. Նոր Ջուղայի վանքի կողպուտի մասին վկայում են նաև այլ սկզբնաղբյուրներ. տե՛ս «Պատմություն Նոր Ջուղայու, որ յԱսպահան, աշխատասիրեալ ի պ. Յարութիւնէ Թ. Տէր Յովհաննանց Նոր Ջուղայեցւոյ Ասենազարէ սրբոյ վանաց, հատոր առաջին, Նոր Ջուղա, 1880, էջ 329-331: Արամ Երևմեան, Նոր Ջուղա, Նոր Ջուղա, 1919, էջ 27: Ըստ Միլերոս Պոպովի, Նոր Ջուղայում, որն առաջ ունեւր մոտ 12 հազար տուն, այժմ մնացել է հազարի 300 տուն. տե՛ս Армяно-русские отношения..., IV, с. 292:

⁵⁵ Н. Дубовин. История войн и владычества русских на Кавказе, т. II, с. 165-169.

⁵⁶ Армяно-русские отношения..., IV, с. 289-290.

⁵⁷ Армяно-русские отношения..., IV, с. 310. Կալուստովի հիշատակած Ֆրանսիացին նույն ինքը՝ Ֆրանսիական գործակալ կոմս Ֆերրիեր Սովրեֆն էր, որ Իսպահան ժամանել մարտի 20-ին և նպատակ ուներ Ալլի-Մուրադ խանին առաջարկելու Ֆրանս-թուրք-պարսկական դաշինք՝ ուղղված Ռուսաստանի դեմ (տե՛ս А. Р. Но-аннисян, Россия..., с. 139-142). Ուշադրով է, որ Ֆերրիեր Սովրեֆը ճիշտ էր կապել ուսու-պարսկական բանակցությունների էությունը՝ հաղորդելով, թե Ալլի Մուրադ խանը «Պետերբուրգ ուղարկեց երկու խաների, որպես պատասխան կայսրուհու նախաձեռնության, սակայն զաղտնի հրահանգներով նա հրաժարվեց անխոհեմաբար տված իր խոստումներից... քիչ մտահոգվելով այն հովանավորությունից, որ վերջերս ձեռք էր բերել Հերակլ իշխանը, նա դիմեց սովորական միջոցներին՝ նրանից դանձելու երեք տարվա տուրքը, որ նա չէր վերցրել երեք տարի ի վեր, նրան ուղարկելով խալաթ» (Մ. Կ. Չուլպյան, Հայ ժողովրդի XIII-XVIII դարերի Պատմության հարցերը ըստ Եվրոպացի հեղինակների, էջ 241): Ավելին, Ալլի-Մուրադ խանը «գտնելով, որ նպատակահարմար չէ դաշնակցել ուսաների հետ՝ ի վնաս թուրքերի, աղստ արձակեց իրեն Մեծ Տիրակալի նակցի ուսաների հետ՝ ի վնաս թուրքերի, աղստ արձակեց իրեն Մեծ Տիրակալի նամակը բերած պատվիրակին: Հարուստ նվիրներով ևս նրան ճամփու դրեց, մոտացնել տալու համար իր կրած տՀաճությունը և Նորին Մեծնության իր նոր ծրագրերի մասին պատասխանեց աներկմտորեն» (նույն տեղում):

⁵⁸ Армяно-русские отношения..., IV, с. 317. Архив кн. Воронцова, XIII, М, 1879, с. 53-54. А. Р. Ноаннисян, Россия..., с. 132.

նի⁵⁹ ու Մելքոմ Պոպովի թեկնածուությունները պատահական ընտրությունների արդյունք էջին⁶⁰: Դեռևս 1782 թ. Ալի Մուրադ խանը իր զորքերի ռազմականությունը բարձրացնելու նպատակով պատրաստակամություն էր հայտնել ծառայության ընդունելու Հովսեփ Էմինին և նրան վստահելու գործի մի մասը⁶¹: Ավելին, Ալի Մուրադ խանի հետ վարվող բանակցությունների հետևանքով հաստատված հայտնի էր և Հ. Արզումանյանի, և թե Ստեփան Դավթյանին: Ստեփան Դավթյանին ուղղած նամակում Հ. Արզումանյանը հանձնարարում է. «տեղւոյդ ամենայն որպէսն ձեր և յայլուստ եկողացն, որք ի Շուշու և ի յԱլի Մուրատ խանէն, գրեսցես: Նաև ինչ պատասխանն և զիտմունքն մեծին և խնամակալին՝ յուրաքանչիւր փոշտի գրեսցես»⁶²:

Բանակցությունների ընթացքի լուսարանումը հազիվ թե իրավունք է տալիս համաձայնելու այն տեսակետին, թե Ռուսաստանի կողմից 1780-ական թվականների առաջին կեսին Այսրկովկաս արշավանքի չիրականացումը պայմանավորված էր հիմնականում Ալի Մուրադ խանի հետ սկսված բանակցությունների փաստի հետ:

Թեև Ռուսաստանի համար զայնակղիչ էր այն, որ Ալի Մուրադ խանի՝ Ռուսաստանի օժանդակությունը ստանալու դիմաց կարելի էր պահանջել Ղարաբաղը, Ղարաբաղը, Նախիջևանի ու Երևանի խանությունները և Այսրկովկասի մերձկասպյան տարածքները⁶³, սակայն այդ ծրագրի խախտումը կապված էր ոչ միայն Ալի Մուրադ խանի անակնկալ մահվան հետ: Դեռ մինչև մահը նա դրսևորել էր ռուսական ծրագրերի դեմ իր զիրքորոշումը և պատահական էջ, որ Դերբենտի Ֆաթալի խանը ևս «Ալի Մուրադ

⁵⁹ Հակոբ Անտոնյան թոխաթեցին 1785 թ. մայիսին Պ. Ս. Պոպովիին կողմից սրված «ինտերուկցիայով» կրկին ուղարկվում է Պարսկաստան՝ քաղաքական իրավիճակը ստույգ տեղեկություններով ուսումնասիրելու համար: Տե՛ս Օ. Ս. Маркова, Россия, Закавказье и международные отношения, с. 215.
⁶⁰ Հյուպատոս թուամնովսկին, չնայած դեսպանագնացության հաջողությանը, ինքնազուլու գործողությունների համար ստացել էր խիստ նկատողություն: Տե՛ս Օ. Ս. Маркова, Россия, Закавказье и международные отношения, с. 187.
⁶¹ А. Р. Иоаннисян, Носиф Эмин, Ереван, 1990, с. 247.
⁶² Армяно-русские отношения..., IV, с. 323.
⁶³ П. Бутков. Материалы для новой истории Кавказа, ч. II, СПб, 1869, с. 148. Ա. Ռ. Հովհաննիսյանը Ռուսաստանի ցանկությունը վերագրում է Ալի Մուրատ խանին, թե իբր նա «соглашался официально отказаться в пользу России как от прикаспийских провинций, так и от ханств Карадагского, Каравагского, Нахичеванского и Ереванского» տե՛ս А. Р. Иоаннисян. Присоединение Закавказья к России и Международные отношения в начале XIX столетия. Ереван, 1958, с. XIX.

խանից հրաման ստացավ խզել ռուսների հետ ամեն տեսակի կապերը»⁶⁴: Ավելին, այդ զիրքորոշումը հազիվ թե հայտնի էլիններ ռուսական կողմին արդեն իսկ գնդապետ Տամարայի դեսպանագնացության ժամանակ: Ուստի միանգամայն իրավացի է այն հետևությունը, թե Ալի Մուրադ խանի կողմից Ռուսաստանին խոստումների քաղաքականությունը դուռ դիվանագիտական խայծ էր, որպիսին շարունակել էր կիրառել նաև Աղա Մահմադ խանը Ալի Մուրադ խանի մահից հետո՝ սակայն այս դեպքում Օսմանյան պետության հետ վարվող բանակցություններով իր տիրապետությունը ընդունելի դարձնելու նպատակով, իսկ Ռուսաստանի կողմից այդ կատարվում էր Այսրկովկաս իր մուտքը «օրինականացնելու» և հասարակական կարծիք ձևավորելու համար ժամանակ չահելու միտումով: Այս հանդամանքը ուշադրության էլի արժանացել նախորդ հետազոտողների մոտ: Իրանում Ռուսաստանի հյուպատոս Մատվեկի 1792 թ. հունվարի 30-ի հաղորդմամբ «Աղա-Մահմեդ խանի կողմից ոչ քիչ նվերներով թուրքական սուլթանի մոտ են ուղարկվել չինովնիկներ՝ խնդրելու նրա հովանավորությունը և օժանդակությունը՝ գրավելու ողջ Պարսկաստանը և ճանաչելու իրեն շահ, որի դիմաց և խոստացել է սուլթանական օգնությամբ գրավելով Շիրազը, տալ այդ քաղաքից այնկողմ գտնվող բոլոր նահանգները թուրքական իշխանությանը՝ բոլոր շահույթներով հանդերձ, որի համար և սուլթանի կողմից շատ դեսպաններ են ուղարկվել Աղա Մահմադ խանի մոտ: Հարցը, սակայն, թե ինչպե՞ս կլուծվի, այդ մասին տեղեկանալով ևս կհաղորդեմ Ձերդ Գերագանցությունը»⁶⁵: Նշելի է միաժամանակ, որ Աղա Մահմադ խանի կողմից նման քայլերի ձեռնարկումը անսպասելի էջը, որովհետև մինչ այդ (1781 թ.) նման նախաձեռնությամբ նա դիմել էր նաև Ռուսաստանին և, տեսնելով, թե ինչպե՞ս Ռուսաստանը փորձում է ամբարաղիչվել կասպից ծովի ափին կառուցվող ամրոցում, հարձակվել ու ավերել էր իր իսկ թուլլույթությամբ վրոյնովիչի կողմից կառուցված այդ ամրոցը:

Միաժամանակ համառ պայքար էր ընթանում Ալի Մուրադ խանի ու Աղա Մահմադ խանի միջև հենց Իրանական պետության հյուսիսային մասերում, որը 1784 թ. արդեն դառնում էին Ալի Մուրադ խանի զորքերի վերահսկողության ներքո: Աղա-Մահմադ խանը պատասպարվել էր Աստարա-

⁶⁴ Մ. Կ. Զուլպյան, Հայ ժողովրդի XIII-XVIII դարերի պատմության հարցերը, էջ 242:
⁶⁵ АВІР, ф. СРІ, оп. 77/6, л. 483, л. 258-259, копия.

բաղում, որը գրավելու նպատակով զենդերը մեծ ուժեր էին կենտրոնացրել: Նրանց դեմ Աղա-Մահմադ խանը զորք է ուղարկում Մուրթուզա Կուլի խանի զլխավորությամբ: Վերջինս, սակայն, դերադասում է դաշինքի զնալ զենդերի հետ՝ ստանալու համար մերձկասպյան ծովափի տիրապետությունը: Աղա-Մահմադ խանին, այնուամենայնիվ հաջողվում է Ջախախիչ հարված հասցնել Աստարաբադը գրավելու համար զենդերի ուղարկած զորքերին, որից հետո նա մեծ եռանդով շարունակում է զարգացնել իր հաջողությունները: 1785 թ. սկզբներին (փետրվարի 7) մահանում է Ալի-Մուրադ խանը⁶⁶ և զենդերի բանակում հակասություններն ավելի են սրվում:

Ձենդերի կողմն անցած Մուրթուզա Կուլի խանը անցնում է թալիշների մոտ և Ռուսաստանից օգնություն ստանալու համար փորձում հավաստիացնել, թե իր և Աղա Մահմադ խանի միջև թշնամանքը հետևանք է այն բանի, որ ինքը հովանավորել է Վոյնովիչի արշավախմբին և այլն:

1786 թ. Աղա-Մահմադ խանը, որ փաստորեն արդեն տիրում էր Մերձկասպյան շրջաններին, փորձում է հարաբերությունները հարթել նաև Ռուսաստանի հետ: Ռուսաստանը ևս դեմ էչք, քանզի Ալի Մուրադ խանի մահից հետո հստակ էր արդեն, որ իշխանության համար պայքարում հաղթանակը կարող էր մնալ Ղաջարներին: 1786 թ. դեկտեմբերի 25ին իշխան Գ.Պոտյոմկինը պատասխան նամակ է ուղարկում Աղա-Մահմադ խանին՝ Լամբերտ Կաչոնի միջոցով, ուր գոհունակություն էր հայտնվում բարիդրացիական հարաբերություններ հաստատելու նրա ցանկության առթիվ և ընդգծվում առևտրական հարաբերությունների բարելավման խնդիրը: Լամբերտ Կաչոնի 1787 թ. հունիսին Աղա-Մահմադ խանի պատասխան նամակով վերադառնում է Ռուսաստան: Աղա-Մահմադ խանը Ռուսաստան է ուղարկում Միրզա Մոհամեդ Ալուն և վստահեցնում, որ իր կողմից կհարգվեն ռուս-իրանական կնքված բոլոր նախորդ պայմանագրերը, և ին-

⁶⁶ 1785 թ. փետրվարի 23-ին Քիֆլիսից Հակոբ Ռայնգոսին գրած նամակում Սուլխան Բեգլարբեգովը (Բեգլարբեգյան) հայտնում է, թե «այստեղ տարածվել է Ալի Մուրադ խանի մահվան մասին լուրը, սակայն այնտեղից դեռևս ծանուցումով ոչ ոք չի ժամանել: Գնդապետ Տամարան, այնուամենայնիվ, (դեսպանազնացությունը) չեղյալ չհայտարարեց՝ այս ամսվա տասներկուսին դեռևս երևան է նորին մեծությունը (իսմ՝ Հերակլ 2-րդը – Պ. Չ.) կարգադրեց, որ այնտեղ՝ Երևանում, մի քանի օր սպասի և եթե Ալի Մուրադ խանի մահը իրոք հաստատվի, ապա այլևս չմեկնի, որովհետև ճանապարհներին խառնակություններ կլինեն և ինքը հանկարծ վտանգի չենթարկվի» (Օսյոմ Թաօնցցես. Մուց՝ Խաչուրի Նախարարության Գրասենյակի փոխարկում, Մոսկվա, 1903, թ. 283):

քը ամեն կերպ կաջակցի ռուս-իրանական առևտրի զարգացմանը: Այսպիսով, թվում է, երկու կողմերն էլ շահագրգռված էին բարիդրացիական հարաբերություններ պահպանմամբ: Իրանում, սակայն, դեռևս չէր ավարտվել գահի համար Ձենդերի ու Ղաջարների միջև պայքարը: Դրությունը սրում էր նաև Մուրթուզա Կուլի խանը, որը, ինչպես ասվեց, ապավինել էր թալիշներին: Նրան օժանդակում էին Թալիշի Մուստաֆա խանը, Դերբեն-թալիշներին: Նրան օժանդակում էին Թալիշի Մուստաֆա խանը, որոնց օգնությամբ և Ղուբայի Շաթ-Ալի խանը և Բաբալի Շեյխ-Ալի խանը, որոնց օգնությամբ Մուրթուզա Կուլի խանը հավաքադրում է 7 հազարանոց բանակ, 1787 թ. սեպտեմբերին ճանապարհվում Գիլան և գրավում այն: Մուրթուզա Կուլի խանին օժանդակում էր նաև Կասպից ծովի ռուսական նավատորմի հրամանատար Պ. Շիրկինը: Ի դեմս Մուրթուզա Կուլի խանի Ռուսաստանը տեսնում էր մի ուժ, որը անհրաժեշտ պահին կարելի էր հակադրել Աղա-Մահմադ խանին:

Մուրթուզա Կուլի խանը երկիցս պարտություն էր մատնում իր դեմ ուղարկված Աղա Մահմադ խանի զորքերին: Այդ ժամանակ Մուրթուզա Կուլի խանին թողնում և Թալիշ է վերադառնում Թալիշի Մուստաֆա խանը: Աղա-Մահմադ խանը երրորդ անգամ զորք է ուղարկում Գիլան և գրավում այն: Մուրթուզան տեղափոխվում է Էնզելի և ապա Շամախի՝ այնտեղից հակահարձակման անցնելու համար զորքեր հավաքադրելու նպատակով: Մուրթուզա Կուլի խանին այլևս չի հաջողվում բավականաչափ ուժեր կենտրոնացնել պայքարը շարունակելու համար, ուստի հակվում է Ռուսաստանի օժանդակությանը դիմելու մտքին: Այդ ժամանակ (1788 թ.) Ռուսաստանում էր գտնվում նաև Աղա-Մահմադ խանի ղեկավար Միրզա Մոհամեդ Ալին, որը մնաց մինչև 1792 թ.: Ռուսաստանը ձգտում էր քանի դեռ ընթացում էր ռուս-թուրքական պատերազմը, զրական հարաբերություններ պահպանել Աղա-Մահմադ խանի հետ: Փոխարենը Մուրթուզա Կուլի խանը, որ իրեն հորջորջում էր Գիլանի, Մազանդարանի ու Աստարաբադի օրինական տեր, բազմաթիվ նամակներ էր հղում Ռուսաստան՝ խնդրելով մտնել Ռուսաստանի հովանավորության տակ՝ «իր» նահանգներով: Նա պարտավորվում էր տարեկան վճարել 10000 ռուբլի՝ Էնզելիի ռուսական պաշտպանության համար, իսկ ռուսական վաճառականության հակադրի պահպանման համար, իսկ ռուսական վաճառականության համար խոստանում էր մաքսերի լրիվ վերացում: Փոխարենը Մուրթուզա Կուլի խանը իր ղեկավարի միջոցով խնդրում էր երկու Ֆրեդատ և 300 զինվոր,

որոնք կաջակցեին իրեն իշխանութիան համար պայքարում⁶⁷: Ռուսական արքունիքը թեև խուսաճանալում էր և որոշակի չէր պատասխանում ոչ Աղա-Մահմադ խանին և ոչ Մուրթուզա Կուլի խանին, սակայն հայտնի է, որ ավելի հակված էր աջակցելու վերջինիս, քանզի դեռևս 1789 թ. օգոստոսի 19-ին արգեն Գ. Ա. Պոտյոմկինը հրահանգել էր Պ. Ս. Պոտյոմկինին՝ աջակցելու Մուրթուզա Կուլի խանին, քանզի նա ավելի է հակված դեպի Ռուսաստանը և առաջարկում էր Դերբենտ ուղարկել երկու Ֆրեդգատ՝ անհրաժեշտությունների հետևանքով Մուրթուզա Կուլի խանին:

1790 թ. Մուրթուզա Կուլի խանը կրկին գրավեց Գիլանը: Կասպյան նավատորմին հրամայված էր օժանդակել նրան, սակայն բացահայտորեն չխառնվել այլ խաների հետ նրա պատերազմներին: Մուրթուզա Կուլի խանը պարտության մատնեց ու գերի վերցրեց Աղա-Մահմադ խանի կողմից իր դեմ ուղարկված Աբաս և Ռիզա խաներին (որոնք Աղա-Մահմադ խանի առավել սիրված զործիչներից էին)՝ ի հակակշիռ Աղա-Մահմադ խանի կողմից գերված ու պատանդ պահվող իր ընտանիքի⁶⁸: Աղա-Մահմադ խանը ստիպված երկրորդ բանակը ուղարկեց Գիլան Մուստաֆա խան Դավալուի գլխավորությամբ, որը 1791 թ. մարտին գրավեց Գիլանը: Մուրթուզա Կուլի խանը կրկին տեղափոխվեց Թալիշ: Այդ միջոցին լուր է ստացվում, որ զենգերը նորից շարժվում են դեպի Իրանի կենտրոնական շրջաններ⁶⁹: Աղա-Մահմադ խանը թողնում է Իրանի հյուսիսային մասերը և շտապում Լուսթ-Ալի խան Զենգի դեմ: Աղա-Մահմադ խանի ուղարկած զորքի հետ առաջին ճակատամարտը շահում են զենգերը և փորձում շարունակել հար-

⁶⁷ АВІР, ф.100, л. 486, л. 68-69, 70-74 և հետո: "Архив Государственного совета", т. первый: Совет в царствование императрицы Екатерины II (1768-1796 гг.). СПб, 1869, с. 789-795. Մուրթուզա Կուլի խանը իր դեսպան Մոհամեդ բեկին Աստրախան էր ուղարկել դեռևս 1785 թ., որը, սակայն անպատասխան վերադարձավ Մուրթուզայի մոտ: Երկրորդ անգամ նա Մուրթուզայի մի քանի նամակներով Աստրախան եկավ 1788 թ. և կրկին մնաց անպատասխան: Վերջապես՝ երրորդ անգամ Մոհամեդ բեկը Աստրախան եկավ 1791 թ.:

⁶⁸ Н. Дугровин, Поход графа В.А.Зукова в Персию в 1796 году.- «Военный сводник». 1874, " 2, с. 188.

⁶⁹ Մուրթուզա Կուլի խանը հույս ուներ կրկին վերադառնալու Գիլան և այդ մասին նամակով Հովսեփ Արղուլթյանի միջոցով հայտնել էր Գ. Ա. Պոտյոմկինին: Հ. Արղուլթյանի հետ հանդիպման ժամանակ Գ. Պոտյոմկինը «էհարց Մուրթուզայի խանի որպես, նորա վերև առ մեզ պարսերեն. ուսուցրին թարգմանել իւրն հետո, սասց. կարգաջից և կատարումն արարից: ...Մուրթուզայի զուլի խանի վերայ ևս ուրախ եղէ, որ գնալոց է ի Գիլան և Աղայ Մահմատ խանի զօրութեան պահասկել սորա խնդութիւնն է» (ՄՄ, ձեռ. 2949, թ. 232բ):

ձակումը: Այդ ժամանակ զենգերի բանակից Աղա-Մահմադ խանի կողմն է անցնում Արղուլ Ռահիմ խանը, որը Լուսթ-Ալի խանի առավել նշանավոր զորահրամանատարներից էր: Ղաջարների զորքը մտնում է Շիրազ, որի անկումով ավարտվում է զենգերի տիրապետությունը Իրանում: 1794 թ. աշնանը Իրանը արգեն գրեթե միավորված էր Աղա-Մահմադ խանի սրի ներքո:

Իրանում տեղի ունեցող իրադարձություններին հետևում էին ինչպես հայ քաղաքական-հասարակական գործիչները և փորձում կապեր հաստատել Իրանի հակամարտ ուժերի առաջնորդների հետ, այլև այդ ուժերի պարզուրույնները ևս փորձում էին ուսուցարկական հարաբերությունները բարելավելու համար օգտագործել հայ և վրաց գործիչների միջնորդությունները⁷⁰:

Մուրթուզա Կուլի խանին ու նրա դեսպանին հասցեագրված Հովսեփ Արղուլթյանի մեզ հայտնի առաջին նամակները գրվել են 1791 թ. փետրվարի 12-ին Յաչից: Մուրթուզա Կուլի խանին ուղղված նամակը ունի Հ. Արղուլթյանի ձեռքով կատարված հետևյալ մակագրությունը՝ «Ի Յաչ, ընդ Մահմատին և Յաչոբին առաքեցաք ի Հաչատրխան»: Նամակից պարզվում է, որ 1790 թ. հոկտեմբերի 12-ին Գիլանը գրավելուց հետո, Մուրթուզա Կուլի խանը իր դեսպան Մոհամեդ բեկին ուղարկել էր Ռուսաստան, որին սակայն Ռուսական իշխանությունները պահել էին Աստրախանում, իսկ դեսպանության անձնակազմից ոմն Մահմատի թույլատրել գնալու Յաչ՝ Գ. Ա. Պոտյոմկինին ներկայացնելու դեսպանի հանձնարարությունները: 1791 թ. սկզբներին գտնվելով Յաչում, Մահմատը Հ. Արղուլթյանին էր հանձնել դեսպանի նրան ուղղված նամակը և Արղուլթյանի միջոցով ներկայացվել Գ. Պոտյոմկինին⁷¹: Հ. Արղուլթյանը ծանուցում է պարսից խանին,

⁷⁰ 1786 թ. Աղա-Մահմադ խանը Իսպահանի մոտ գտնվող Սանզարանում լավ ընդունելություն է կազմակերպում վրաց իշխան Զաքարիա Ցիցիանովին և պատվով ևս ուղարկում: Նա առաքված էր Հերակի երկրորդի կողմից, որն արդեն կնքել էր 1783 թ. ուսուցարկական Գեորգիևյան պայմանագիրը և որին խնդրում էր միջնորդել ուսուցարկական հարաբերությունները բարելավելու համար, խոստանալով նրան հանձնել նաև հարեան մյուս խանությունների կառավարումը, ինչպիսի հիմունքներով նա տիրում էր Երևանին:

⁷¹ Պատասխան նամակում Հ. Արղուլթյանը հետևյալ ձևով է ներկայացնում իր ջանքերն ու նպատակները՝ օժանդակելու Մուրթուզա Կուլի խանի ձեռնարկումներին. «Բարեկամութիւնն իմ ի սրտէ առ պայծառութիւն քոյ յայտնի է Աստուծոյ և աշխարհի ամենայնի, նաև ողորմած թագուհոյն և պայծառափայլ քննադին և քեզ իսկ, որ ես յամենայն սրտի կամիմ բոլորովին յարդութիւն քոյ և յառաջագիտութիւնն»: Գ. Պոտյոմկինը, ըստ Հ. Արղուլթյանի, որ «ենն էլչոց հետ

թե ինքը ուուսական արքունիքի մի շարք գործիչներին «ձեզ բարեկամ եմ արարեալ» և որ «ամենայն բանն ի ձեռն սոցա է», ընդ որում թվարկում է անուններով՝ Վասիլ Ստեփանիչ Պոպովն, Սէրգէ Լազրիչ Լաշկարովն, Անդրէի Մաքսիմիչ Եանչիկովն, Վասիլ Վասիլիչ Թէթէրլինն: Հ. Արղությանը հանձնարարում է, շուտ գրել պատասխանը և, եթե կամենա, ապա ետ ուղարկի նույն «Մահճաղ էլչին»: Յաշից նույն օրը (1791 թ. փետրվարի 12) Աստրախանում գտնվող դեսպանին ուղղած նամակում Հ. Արղությանը կրկնում է, թե «քնեազն մեծ շնորհ ունի առ խանն և այժմ ուրախ է ի վերայ յաջողութեան նորա և որպէս խանի կամքն է, լինելոց է բոլորովին»⁷²: Ուշադրով է Հ. Արղությանի այն նշումը, թե ուուսական կողմի հանձնարարությունների ընթացքը. «Այժմ Մահճատն ընդ պօսպօսչիկ Յակօբին ուղևորեցի առ քեզ: Կամենաս գիրն և Յակօբն առեալ գնասցես առ խանն, կամենաս Մահճատն և Յակօբն զրկես: Պայժառափայլ քնեազն այս քոյ և իմ կամացն է տուեալ»: Հ. Արղությանը Մուրթուզա Կուլի խանի դեսպանին հավաստեցնում է, թե «ես տեղս պատրաստ եմ ի սրտէ ծառայել իմ անգին բարեկամ Մուրթուզայի խանին, առ այս միամիտ լերուք և ի Մահճատէն իմացէք... ես վասն ձեր եմ եկեալ աստ (իմա՝ ՄՊր - Պ. Չ.), եթէ դու եկեցես, Աստուծով ամենայն բանն լինելոց է և եթէ գրերն զրկես՝ Մահճատի ձեռքն լինի»⁷³:

րնաւ խօսիլ չէր, այլ վասն սիրոյն, որ ունի առ քեզ, միշտ հետ նմա խօսակցութիւն առնէր ուրախ սրտիւ: Իսկ այժմ ընկալաք մեք զիր ի մեր Թաղայ Դաւիթ ծառայէն բուժմէ և ի յէլչի աղայ Մահճատէն և ի պարոն Մկրտում Գալստեանէն, որ դուք աստուծոյ յաջողութեամբն հոգանմբերի 12 առեալ գ Գիլան, մտեալ էք ի Ռաշտ, մեք յոյժ ինդացաք և ուրախ եղաք և ապա առնալն անցքն որպէս և զրեւի էին, զրեցի զամենայնն և մատուցի պայժառափայլ քնեազին, զոր գիտացեալ նորա, յոյժ ուրախ եղև, որպէս ճշմարիտ բարեկամ և զրեան յողորմած թագուհոյն ունիլ ի վերայ քոյ յատուկ շնորհ մայրական և ահա զՄահճատ ծառայն ձեր ընդ մեր պօսպօսչիկ Յակօբ Արքահանովին առաքեաց ի Հաշտարխան իւր յատուկ գրովն առ քեզ, յորմէ գիտելոց ես զսէր և զբարեկամութիւն նորա առ քեզ և ըստ ամենայնի միամիտ լինելոց, որ մեծ թագուհոյ յատուկ շնորհն լինելոց է առ քեզ, որպէս և կամիս և ես այժմ ընդ պայժառափայլին գնացի ի Պետրպօլք առ Թագուհին և Մահճատն առաքեցի առ քեզ...: ՄՄ, ձեռ. 2949, թ. 221բ:

⁷² ՄՄ, ձեռ. 2949, թ. 213ա-բ:
⁷³ ՄՄ, ձեռ. 2949, թ. 213ա-բ: Նույն թվականի մարտի 22-ին Մուրթուզա Կուլի խանի Աստրախանում գտնվող դեսպան Մահճաղը նամակով ծանուցում է Հ. Արղությանին խանի նոր հաջողությունների ու նաև ուուսաց չուլպատոս Շիշկինի ոչ նպաստավոր զիրբորոշման մասին: Ապրիլի 25-ին պատասխանելով նրան, Հ. Արղությանը հայտնում է, որ ինքը այդ մասին տեղեկացրել է Գ. Պոտյոմկինին և

Նույն թվականի ապրիլի 28-ին Հ. Արղությանի պատասխան նամակից պարզվում է, որ ինքը նոր նամակ էր ստացել դեսպանից և տեղեկացել, թե Մուրթուզա Կուլի խանի մոտ ուղարկված Հակոբ Արքահանյանն ու Մահճատը դեռևս չեն վերադարձել Աստրախան: Պարզվում է նաև, որ մինչև նրանց վերադարձնելը, խանը նոր նամակներ էր հղել ինչպես իր դեսպանին, այնպես էլ Հ. Արղությանին ու ուուսական արքունիք՝ խնդրելով փոխել Ռուսաստանի Հյուլպատոս Շիշկինին, որը ոչ միայն չէր օժանդակում, այլև որոշակի սպառնալիք էր ստեղծել իր համար: Հ. Արղությանը վստահեցնում է, թե ինքը ծանուցել է և «պայժառափայլն կատարելոց է դամենայնն ըստ կամաց խանին և Շիշկինին փոխելոց»⁷⁴: Հ. Արղությանը նամակ է գրում նաև Մուրթուզա Կուլի խանին 1791 թ. ապրիլի 29ին, որով է տեղեկացնում, թե ինքը ուստերին թարգմանել տալով՝ Գ. Պոտյոմկինին է հանձնել նրան ու իրեն գրած նամակները: Իշխանը, այսպիսով, տեղեկացված է Շիշկինի բոլոր արարքների մասին և հրամայել է նրան փոխել: Այնուհետև ծանուցում է, թե թագուհին է իշխանը մեծ «շնորհ ունեն» նրա նկատմամբ, սակայն զգուշացնում է, թե «խնդրքը շուտով ոչ կատարի, վասն այն մի ինչ մտածեր, զի այս մեծ պատերազմն որ կայ, բազում բանից արգելումն առնէ»⁷⁵: Հ. Արղությանը հիշեցնում է, որ Գ. Պոտյոմկինը սպասում է իր նամակի պատասխանին, ուստի «եթէ գրեցես, Հրամայեցես էլչուն քոյ ...Կուտովիչի գիտութեամբն առնուլ գիրն քոյ և գալ առ քնեազն»: Հ. Արղությանը կրկին հավաստում է, թե «ես ի բոլոր սրտէ այնքան հոգացող եմ բանից քոց և ցանկացող յառաջագիմութեան քոյ, որպես իմ սեպհական անձին», քանզի, ինչպես գրում է նա, ինքը մեծ հույս ունի, որ հաջողելու է նրա երևելի լինելը այն երկրում (իմա՝ Իրանում), ուստի խորհուրդ է տալիս, որպեսզի ժողովրդին, որը լինելու է նրա հպատակութեան ներքո, «յայսմհետէ լինիցիս որպէս զթած, սփոփող, մխիթարիչ և ամենայն հանգստութեանց տուիչ, որ այնու լինիցես...սիրելի ժողովրդեանն քում, որով առավել բարձրանալ կարես, զի քաղցրութիւնն քոյ կարէ զսիրտ ամենայնիցն առ քեզ քարչել, որ առանց պատերազմի և արեան հեղման կամաւորապէս ծառայեցես քեզ»⁷⁶: Ի վերջոյ, կրկին պահանջում է

նրան է ուղարկում նաև Գ. Պոտյոմկինի Մուրթուզա Կուլի խանին գրած նամակի պատճեն՝ «կարգալ և...միամիտ լինիլ վասն ամենայնի»(ՄՄ, ձեռ. 2949, թ. 220բ):
⁷⁴ ՄՄ, ձեռ. 2949, թ. 222բ:
⁷⁵ ՄՄ, ձեռ. 2949, թ. 221ա:
⁷⁶ Նույն տեղում:

«մեր պոսոչիկ Յակօբն, որ ընդ Մահմադ ծառային ձերոյ եկեալ է առ ձեզ, ...շուտով արձակել և զիր գրել քննազին և զորպիսութիւնդ ծանուցանել նմա և մեզ»⁷⁷:

Երկու շարաթ անց, 1791 թ. մայիսի 13-ին, խանը և նրա ղեկավարը նամակներ են գրում Հ. Արղությանին, որոնցում խնդրվում էր իրենց նամակներում շարազրված իրողութունների մասին ծանուցել Գ. Ա. Պոտյոմկինին և խնդրել, որպեսզի «չարունակի ցուցաբերել ինձ իր օժանդակութունները, տրամադրի երեք ֆրեզատ կապիտան-լեյտենանտ Յ. Մ. Սկիլիչիի հետ, երեք հարյուր զինվորից բաղկացած զորախումբ՝ զենքով ու հանդերձանքով, որպեսզի կարողանամ պաշտպանվել ինձ սպառնացող հակառակորդից»⁷⁸:

Մուրթուզա Կուլիի հաղորդում էր, որ անցնող ձմռան ընթացքում ինքը երկու ճակատամարտ է տվել և գրավել Գիլանը, գերի է վերցրել նահանգի գլխավորներին իրենց ընտանիքներով, որոնք այժմ գտնվում են հսկողության ներքո: Ինքը երկուս և կես ամիս հանգիստ կառավարել է Գիլանի նահանգում, սակայն «Գիլանի նավահանգստում գտնվող պետական նավախմբի հրամանատար պարոն Շիշկինը թշնամանալով իմ դեմ Աստրախանի վաճառականների միջոցով նամակ է գրել Աղա Մահմադ խանին հավատարիմ և նվիրված Գիլանի Աղա-Թաղին, խոստանալով օգնել նրան ռազմական զանազան միջոցներով, որպեսզի Աղա Թաղին, զորք հավաքելով և համաձայնեցնելով Շիշկինի հետ, հարձակվի ինձ վրա և ինձ ևս վնասելով՝ Աղինտ խանի վիճակի մեջ դրի»⁷⁹: Նման իրավիճակի թեղադրանքով է բացատրում նամակի հեղինակը Գիլանից իրեն հավատարիմ պաշտոնեություն ու զորքերի հետ իր հեռանալը դեպի Թալիշ⁸⁰:

⁷⁷ ՄՄ, ձեռ. 2949, թ. 221բ:

⁷⁸ ЦГАДА, Гос. архив, ф. 15, л. 192, л. 68.

⁷⁹ ЦГАДА, Гос. архив, ф. 15, л. 192, л. 68-68об.

⁸⁰ Այն, որ Մուրթուզա Կուլի խանի գրածները Շիշկինի մասին կարող էին ճիշտ լինել, վկայում է նաև այն փաստը, որ Շիշկինի դեմ էին արամազրված նաև ռուս-իրանական առևտրում զբաղված հայ վաճառականները և հատկապես՝ Աստրախանի հայերը: Այդ մասին վկայում են Հովսեփ Արղությանի Մկրտում Գալստյանին ուղղված 1791 թ. հունիսի 20-ի նամակի հետևյալ տողերը. «Մայիսի 25-ին գիրք ընկալեալ ... գիտացի և չորս նաևի քոյ արգելմունքն և փրքա-լիտի զրկելն ի Հաշտարխան և այլն: Այսօր... ես զիր գրեցի քննազին (իմա Գ. Պոտյոմկինին - Գ. Չ.) վասն քոյ ամենայն զրկանացն և ես ինքեմն գնացի և մատուցի և ըրանով պատմեցի. ծիծաղեցաւ և ասաց. «կակոյի չօրթ Շիշկին, սկորայ նէ բուզէթ օն տամ»: Ինչևէիցէ, խօստացաւ զնա հանել և կողմանցը բանիցն կատարումն տայ»: ՄՄ, ձեռ. 2949, թ. 232բ:

Հավանաբար ոչ միայն Մուրթուզա Կուլի խանի, այլև Ռուսական իշխանութունների և Աղա-Մահմադ խանի հիվանդության ու Լուսթ-Ալի խանի հաջողութունների մասին Իրանից ստացված հափազանցված լուրերն էին հիմք տվել Հ. Արղությանին կարծելու, թե մոտ է Աղա-Մահմադ խանի փոխարեն հայերի նկատմամբ բարեկամաբար տրամադրված Մուրթուզա Կուլի խանի տիրապետության հաստատումը: Այդ մասին, որ նա հաղորդել էր Հնդկահայոց, ովերի էր նաև Հովսեփ Էմինին: Վերջինս Հ. Արղությանին 1792 թ. հունիսի 4-ին գրած նամակում նշում է. «Այլև միթարութիւն իմն տաս մեզ... յաղապս ծանօթ լինելոյն ձեր ընդ իշխանին Կիլանայ՝ ասելով, եթէ նա պաշտպանեցէ ի տեղի եղբոր իւրում Աղա-Մահմադ խան Ղաջար բնաւորին ի Ապահան, այցելութիւն ինչ առնելոց է անդ բնակեալ հայոց ազգին»⁸¹:

Մուրթուզա Կուլի խանի ղեկավարը, որ ժամանել էր Աստրախան, այդ պահանջը հայտնել էր նաև Հովսեփ Արղությանին, որի 1791 թ. հունիսի 20-ի նամակից⁸² պարզվում է, թե ինքը կրկին նամակ էր ստացել նաև Մուրթուզա Կուլի խանից⁸³: Թարգմանելով ստացված այդ նամակները, Հ. Արղությանը իր բացատրագրի հետ միասին հանձնում է Գ. Ա. Պոտյոմկինին, որը և կրկին խոստանում է կատարել Մուրթուզա Կուլի խանի համար նրա բոլոր միջնորդութունները⁸⁴ ու նաև նոր հյուպատոս ուղարկել Գիլան: Ուշագրավ է, որ արդեն իսկ մեկ ամիս անց՝ 1791 թ. հուլիսի 18-ին Մկրտում Գալստյանին գրած նամակում Հ. Արղությանը հայտնում է, որ «Շիշկինն փոխեցաւ չարաչար և ի տեղի նորին կարգաւորեցաւ պոլկովնիկ և կավալէր պարոն Ահմատովն, այր բարի...: Այսօր եկեալ առ մեզ՝ շնորհակալ լինէր յինէն, որովհետև պատճառն մեք եղաք արտաբերելոյ զՇիշկինն ի

⁸¹ Վ. Ռ. Գրիգորյան. Հովսեփ Էմինի և Հովսեփ Արղությանի անտիպ նամակները (1791-1792 թթ.), - ՊՅՀ, 1990, թիվ 4, էջ 194:

⁸² ՄՄ, ձեռ. 2949, թ. 233բ:

⁸³ Նամակի բնագիրն ու ռուսերեն թարգմանությունը տե՛ս АВПР, ф.100, л. 464, л. 163, 173.

⁸⁴ Հովսեփ Արղությանի և աստրախանյանցի Մկրտում Գալստյանի նամակա-գրութունից պարզվում է, որ ինչպես Մուրթուզա Կուլի խանի, այնպես էլ նրա ղեկավարի գրազրույթունները Ռուսական արքունիքի հետ կատարվում էին հայ գեթապանի գրազրույթունները Ռուսական արքունիքի հետ կատարվում էին հայ յոթմիջների միջոցով: Արդեն 1791 թ. մարտի 28-ին Հ. Արղությանը Գ. Ա. Պոտյոմկինին հայտնում է՝ «զորպէսն Մուրթուզայի խանի զպալիսով և նորա ուրախ լինելն» (ՄՄ, ձեռ. 2949, թ. 216ա): Նույն թվականի մայիսի 8-ի նամակում Հ. Արղությանը հայտնում է. «Ապրիլի 15-էն գրած զրոյ ընկալնուպն, քննազին ծանուցանելն անրախտութիւնն Մուրթուզաղալի խանի, Շիշկինին փոխելն...» (նույն տեղում, էջ 226բ):

գործոյն, քանզի Վասիլ Ստեփանիչն և բոլոր կանցալարի մարդիկքն ասացեալ էին իւրն, թէ վարդապետն է պատճառն, ի նմանէ շնորհակալ լէք»⁸⁵:

1792 թ. դեկտեմբերի վերջերին Մուրթուզա Կուլի խանը, վերջնականապես զգալով իր վիճակի անհուսալիութիւնը Գիլանում, ռուսական նալով, իր հետ վերցնելով նաև Աբաս և Ռիզա խաներին, ճանապարհովում է Ռուսաստան: Ռուսական արքունիքը նրան պահում է Աստրախանում և 1793 թ. ապրիլի 30-ից նշանակում ամսական 1000 ռուբլի թոշակ⁸⁶: Ադա-Մահմադ խանը միջոցներ և ուղիներ էր որոնում Ռուսաստանում գտնվող եղբորը կրկին Իրան վերադարձնելու և իրանում իր տիրապետութեան համար այդ սպառնալիքը չեզոքացնելու նպատակով⁸⁷: Նա տարբեր միջնորդութեւններով փորձում է ապահովել զեթ Աբաս խանի վերադարձը: Այդ նպատակով 1795 թ. հունիսին երկու բանազնաց է առաքում Ի.Վ. Գուդովիչի մոտ, առաջարկելով վերադարձնել Աբաս խանին և նրա հետ Մուրթուզա Կուլի խանի կողմից գերված մյուս պատանդներին, խոստանալով Մուրթուզա Կուլի խանի ընտանիքին ապահովութիւն, աշակցութիւն ռուսական վաճառականութեանը ռուս-իրանական սոևտրում: Որոշակի պատասխան չստանալով ռուսական իշխանութիւններից, Ադա-Մահմադ խանը վերջնականապես հրամայում է զորքերին սկսելու ռուսական զործողութիւնները դեպի Այսրկովկաս: Մինչ այդ իր մտադրութիւնների մասին հատուկ պատվիրակութեամբ տեղյակ էր պահել թուրքիային և սուլթանից հավաստեցում ստացել նրա չեզոքութեան մասին: 1795 թ. սկզբներին Մուրթուզային տեղափոխում են Պետերբուրգ և շքեղ ընդունելութիւն կազմակերպում Ռուսական արքունիքում: Ադա Մահմադ խանը 1795 թ. օգոստոսնակտեմբեր ամիսներին զբաղւում է Այսրկովկասի զգալի մասը, ավերում Թիֆլիսը և հապճեպ վերադառնում Խորասան⁸⁸:

Այդ արշավանքը ավելի է նպաստում ռուսական իշխանութիւններին օժանդակութեան ստանալու այսրկովկասյան ժողովուրդների ակնկալումին: Ադա Մահմադ խանը ևս շարունակում է այլ միջնորդութիւններ

փնտրել Աբաս խանին վերադարձնելու համար: Պահպանվել է Ղուկաս կաթողիկոսի 1795 թ. նոյեմբերի 24-ով թվագրված Մկրտում Գալստյանին ուղղված նամակի սևագրութիւնը, որտեղ կաթողիկոսը հավաստում է, թե Ադա Մահմադ խանը «որ և գայս երկիր ընդ բոամբ էած, հարկէր զբեալ մեզ՝ հոգ տանիլ վասն դարձուցանելոյ զայրն այն (իմա՝ Աբաս խանն - Պ. Չ.): Եւ մեք թէպէտ և զիտելով, թէ օտար է ի մէնջ այսպիսի գործ, սակայն ստիպեալ ի հարկէն զթուղթ մի զբեցաք առ սիրելին մեր՝ առաջնորդ Յովսեփի գերզգոն վարդապետն, զի թէ հնար իցէ, արձակել տացէ զայրն և թէ կարելի չիցէ, զպատասխանի իմն զբեցէ առ մեզ»⁸⁹: Այնուհետև խնդրում է ռուսափոյթ պատասխանել իրեն, «որ ի վնասուց անկասկած մնայցեմք»⁹⁰: Դժվար չէ կուսհել, թե ինչ պատասխան պիտի ուղարկեր Հ. Արղությանը Ղուկաս կաթողիկոսին, եթե նկատի ունենանք, որ ռուսական իշխանութիւններն արդեն որոշել էին Ադա Մահմադ խանին պատժելու պատրվակով արշավանք կազմակերպել Այսրկովկաս: Այդ արշավանքի կազմակերպման լուրը, բնականաբար, մեծ հուսեր է արթնացնում Հ. Արղությանի մոտ: Նա գրավոր խորհուրդներով փորձում է համոզել ռուսական իշխանութիւններին, որ արշավանքը պետք է կազմակերպել ոչ միայն վրաստանը պաշտպանելու նպատակով և զօրք մտցնել Թիֆլիս, այլ Այսրկովկաս պիտի մտնել Դերբենտի և Բաքվի ուղղութեամբ ու գրավել նաև Շաքին, Շիրվանն ու Գանձակը, որը հնարավորութիւն կտա «օգնել Հայոց Երևանայ և այլոց ևս գերելոցն, որք ի Պարսն են»⁹¹: Հ. Արղությանի համար Երևանայ և այլոց ևս գերելոցն, որք ի Պարսն են»⁹¹: Հ. Արղությանի համար հստակ էր, որ ժամն է օգտագործելու Մուրթուզա Կուլի խանի թեկնածութեւնը և Ստեփան Դավթյանին ուղղված նույն նամակում խնդրում է, որ պետք Մուրթուզա Կուլի խանին հայտնի, թե «վասն քոյ որքան կարելի էր աշխատեցայ և զքեզ հասուցի քոյ փափականացն, որ էր տեսութիւն թագուհւոյ, այժմ քոյ զէրաթն՝ ինչ առնել, զի մեր հայրենիքն վասն քոյ աւերեցան»⁹²: Հ. Արղությանը կարծում էր, որ «եթէ զգա (իմա՝ Մուրթուզա Կուլի խանին - Պ. Չ.) դնեն ընդ Սուվորովին, իսկոյն կոտածի եղբայրն և ամենայն զօրքն յետ դառնալոց են և վերջացուցանելոց»⁹³: Եվ իրոք, 1796 թ. փետրվարի 19-ին Վ. Ա. Զուրովին տրված կայսերական հրահանգներում

⁸⁵ ՄՄ, ձեռ. 2949, թ. 238ա:

⁸⁶ П. Бутков. Եզվ. աշխ., էջ 326: Н. Дубровин. Եզվ. աշխ., էջ 188-189:

⁸⁷ Ըստ Թալիշի Մուստաֆա խանի ռուսական կողմին տված տեղեկութեան, Ադա-Մահմադ խանը Աբաս խանի հետ փոխանակելու նպատակով ռուսական որևէ նավի կամ բարձր պաշտոնյայի պատանդ վերցնելու պահանջին չենթարկվելու համար տանջանքների է ենթարկել Գիլանի որոշ պաշտոնյաների (Армяно-русские отношения..., IV, с. 411):

⁸⁸ Ադա-Մահմադ խանը Իրանի նոր շահ է օձվում 1796 թ. մարտի 21-ին:

⁸⁹ ՄՄ, Կաթ. դիվան, թղթ. 6, վավ. 40, էջ ճ2-ճ2Ա:

⁹⁰ Նույն տեղում, էջ ճ2Ա:

⁹¹ Армяно-русские отношения..., IV, с.414.

⁹² Նույն տեղում, էջ 415:

⁹³ Նույն տեղում:

նշվում էր, որ արշավանքի ընթացքում պետք է անցնել Կուր և Արաքս գետերը և հիմնական նպատակ դարձնել «ոչնչացնել Աղա Մահմադ խանի ուժերն ու իշխանությունը և վերականգնել Մուրթուզա Կուլի խանին Գիլանում...»: Այնուհետև «Մուրթուզա Կուլի խանը, հաստատվելով Գիլանում, կկարողանա շարժվել դեպի Մահմադարանի նահանգ»⁹⁴:

Արշավանքի ժամանակ ուստական զորքերը, ըստ նշված ցուցումների, պետք է գործեն Արևելյան Այսրկովկասում ու Վրաստանում և ապա միայն միասնաբար արշավեն դեպի Պարսկաստան, իսկ Երևանի խանությունը հարցի լուծումը թողնվում է Հերակլ Երկրորդին, «ինչպես սեփական ուժերը չթուլացնելու և իրենց գլխավոր նպատակից չչեղելու, այնպես էլ Օսմանյան Դուռն սահմաններին մոտենալով վաղաժամ նրանց մոտ խիստ անհանգստություն չհարուցելու համար»⁹⁵: Ռուսական զորքերի հետ, ինչպես արգեն սակ ենք, Այսրկովկաս է գալիս նաև Հովսեփ Արղությանը: Նա արշավանքի իրականացման իր պլանները շարադրում է զորքերի հրամանատար Վ. Չուբովին 1796 թ. սեպտեմբերի 2-ին գրած նամակում: Արղությանը ընդգծում է, որ ինչպես Երևանի խանը, Հայոց կաթողիկոսն ու Մելիք Աբրահամը «հասարակության հետ անհամբեր սպասում են ձերդ պայծառափայլությանը» և, հիշեցնելով, թե «Մուրթուզա-Կուլի խանի Աստարաբաղ ժամանումով խուճապ կստեղծվի ինչպես Աղա-Մահմադ խանի զորքերի, այդպես էլ ժողովրդի մեջ նրա դեմ»⁹⁶, փորձում է մի կողմից արագացնել Մուրթուզա Կուլի խանի ժամանումը գործող բանակ, և մյուս կողմից՝ արշավանքի ուղղությունը շուտափույթ փոխել դեպի արևմուտք՝ դեպի Երևան:

1796 թ. սեպտեմբերի 24-ին Մուրթուզան դեռևս Աստրախանից գործող բանակ չէր ժամանել, և միայն սպասվում էր նրա գալուստը: Այդ մասին Հ. Արղությանը նշում էր բանակից Հերակլին գրած իր նամակում. «Մուրթուզա Կուլի խանը շուտով կժամանի մեր մոտ Աստրախանից, իսկ այստեղից ծովով կուղևորվի Աստարաբաղ»⁹⁷: Ռուսական իշխանությունները Մուրթուզա Կուլի խանին ուղարկում են Սարի կղզի և նրան ուղեկցող նշանա-

⁹⁴ Նույն տեղում, էջ 422:
⁹⁵ Նույն տեղում, էջ 421:
⁹⁶ Նույն տեղում, էջ 437-438:
⁹⁷ Նույն տեղում, էջ 440: Հարություն Արարատյանը արձանագրել է Մուրթուզա Կուլի խանի ժամանումը գործող բանակ: Տե՛ս «Жизнь Артемия Арабатского»..., с. 139.

կում Պետր Կովալենսկուն, որտեղից նրանք բանակցություններ էին վարում մահմեդական ցեղերի առաջնորդներին հետ՝ նրանց Աղա-Մահմադ խանի դեմ ոտքի հանելու համար: 1796 թ. նոյեմբերին մահանում է Եկատերինա Երկրորդը, և Պավել Առաջինի հրամանով դադարեցվում է ուստական արշավանքը Այսրկովկասում, իսկ զորքերը 1797 թ. ետ են քաշվում դեպի Ռուսաստան:

Ռուսական քաղաքականության այդ անակնկալ շրջադարձը շտկումներ է մտցնում ինչպես Հայ գործիչների ծրագրերում, այնպես էլ Մուրթուզա Կուլի խանի ճակատագրում: 1797 թ. Աղա-Մահմադ խանի սպանությունից հետո Պարսկաստանում սկսված դահակալական կռիվներում հաղթում է Բաբա խանը, և այնուհետև օժիվում որպես Իրանի նոր շահ՝ Ֆաթալի շահ անունով (1797-1834): 1798 թ. հունիսին Պետերբուրգ է ժամանում վերջինիս դեսպան Միրզա Սադըղ Հասանը, բերելով Ֆաթալի շահի շնորհագրանքները Պավել Առաջինին՝ նրա դահակալիկ առիթով և միաժամանակ պատրաստակամություն էր հայտնվում բարելավելու երկու երկրների միջև խանգարված առևտրական հարաբերությունները ու խնդրվում թույլատրել Աստրախանից Պարսկաստան տեղափոխելու համար կատարել 5000 փութ երկաթի և հազար փութ պողպատի գնում»⁹⁸:

Մուրթուզա Կուլի խանի թեկնածությունը հնարավորություններ էր բանի գահի համար այսպիսով այլևս վերանում է, իսկ նրա մոտ որպես գերի պահվող Աբաս խանը և ուղեկիցների մի մասը հնարավորություն են ստանում վերադառնալ Պարսկաստան⁹⁹:

1798 թ. Մուրթուզա Կուլի խանը դեռևս գտնվում էր Աստրախանում և շարունակում սերտ կապեր ունենալ Հայ գործիչների հետ ու ակնկալել նրանց օժանդակությունը¹⁰⁰: Այդ մասին է վկայում նրա նույն թվականի

⁹⁸ Г. П. Кессельбреннер. Хроника одной дипломатической карьеры. М., 1987, 219-220. Բանակցությունները Պետերբուրգում ձգձգվում են, ստացվում է երկաթի ու պողպատի գնման թույլտվությունը, սակայն Պարսից դեսպանը մահանում է Պետերբուրգում 1799 թ. փետրվարի 26-ին: Բաբախանին ուղղված Պավել Առաջինի նույն թվականի մարտի 23-ով թվագրված նամակը ուղարկվում է Իրանի դեսպանության քարտուղար Միրզա Մոհամեդի հետ:
⁹⁹ Մուրթուզա-Կուլի խանը մահանում է Աստրախանում 1800 թ. հոկտեմբերին՝ Իրան վերադառնալու թույլտվություն ստանալուց մի քանի ամիս անց:
¹⁰⁰ Մուրթուզա Կուլի խանը Աստրախանից 1797 թ. հունիսի 9-ին նամակով դիմում է Հ. Լազարյանին և ծանուցում իր Աստրախան ժամանելու փաստը, որին և հաջորդել է հուլիսի 30-ին գրած Հ. Լազարյանի պատասխան նամակը, որով վերջինս հավաստում է իր բարեկամական զգացումը նրա նկատմամբ: Թարգմանաբար բերելով Մուրթուզա Կուլի խանի նամակի տեքստը, Վ. Դիրյանը ճիշտ բնու-

մայիսի 12-ին Աստրախանից Հովսեփ Արղությանին գրած հայերեն նամակը¹⁰¹:

Հովսեփ Արղությանը, որ մինչ այդ հարաբերություններ էր սկսել նաև Աբաս խանի հետ, ոչ միայն փորձում է առիթն օգտագործել նրան ևս գրականորեն տրամագրելու հայ ազատագրական շարժման որոշ գործիչների նկատմամբ, այլև կարուկ շրջադարձ կատարելով ու փառաբանելով Աղա-Մահմադ խանին ու նրա տոհմը, աշխատում է շահել նրա համակրանքը: Պահպանվել է Հ. Արղությանի նամակը, որից տեղեկանում ենք, որ Աբաս խանը նամակ էր առաքել Ա. Ա. Բեգլորոզկոյին Ռուսաստան դեսպանագնացության մեկնած հայ մելիքների միջոցով՝ հավանաբար նրանց Աստրախանում գտնվելու ժամանակ: Այդ նամակը Հ. Արղությանը ներկայացնում է Ա. Ա. Լաչկարովին և Ա. Ա. Բեգլորոզկոյին խնդրում է Պավել Առաջինին ծանուցել ինչպես Աբաս խանի խնդրանքի, այնպես էլ Ղուկաս կաթողիկոսի և իր միջնորդությունների մասին: Ըստ Աբաս խանին գրած Հ. Արղությանի նամակի, կայսրը կարգադրել էր «հրաման գրել առ տեղւոյդ պարոն գուբեռնաթ նիկոյայ եագույիչ Արշինովսկուն, որ քեզ իմա՝ Աբաս

թագրելով նամակի՝ քաղաքական որոշակի ակնկալությունների արդյունք լինելը, գրում է. «գժրախտարար, առայժմ մեզ չհաջողվեց այլ նյութեր հայտնաբերել, որոնք կարող էին ավելի որոշակիություն մտցնել առաջադրված հարցի մեջ (իմա՝ Հ. Լազարյանի և Հ. Արղությանի կապի հարցը Մուրթուզա Կուլի խանի հետ – Գ. Չ.): Բայց մի բան պարզ է, որ և Հ. Արղությանը, և Հ. Լազարյանը օգտագործում էին ամեն մի առիթ Հայաստանի ազատագրման հարցին ցանկալի լուծում տալու համար»: Տե՛ս՝ Վ. Ա. Դիլոյան. Լազարյանների հասարակական-քաղաքական գործունեության պատմությունից, էջ 179-180:

¹⁰¹ ՄՄ, Կաթ. զիվան, թղթ. 8, վավ. 42, բնագիր, կնիք՝ արքատառ: «Պատկազգեաց սրբազան արքեպիսկոպոս, իմ ամէնողորմ տէր. Յարգումք մեծաւ ընկալայ զշնորհանիչ զիր ձերոյ սրբազնութեան ի յանցեալ փոշտան և յայտնի եղև այնու առաւելութիւն սիրոյ ձեր առ իս՝ զօրէն ճշմարիտ բարեկամի, ուստի և իմ խնարհեալ ի շնորհակալութիւնս, ցանկամ վերստին տեսնել զբարերարդ իմ և ընծայել սրտի իմոյ միխթարութիւն մեծ: Առաքեցի ասա յայդր սուրհանդակի զհւատարիմն մեր Իրաւհիմ բէզն, որպէսն մեր լիովին ի զմանէ յայտնի: Խնդրեմ մեծապէս, որ ինչ ի կողմանէ մերմէ բանք իցէն զմա խօսելիք, անց ամենայնից օգնական և նպաստ լինել մեծաւ հետևողութեամբ, զի ամենայն մեղապատկան բանք բերանոյ դորին գիտասցէ սրբազնութիւն ձեր, որ թարց կարծեաց խօսք իմ են և խորհուրդք սրախ: Նաև խնդրեմ զգիր բարեկամական սիրոյն ձեր անպակաս առնել յինէն՝ հանգերձ տեղւոյդ որպիսութեամբն, զորս մեծ շնորհ համարիմ ի յիս: Մնամ ձերոյ բարձր սրբազնութեանն ամէնախախնարձ ծոռայ (կնիք):՝ Մուրթուզա Կուլիի անունը վերջին անգամ հիշատակված ենք գտնում Արղությանի 1799թ. հոկտեմբերի 27-ի Պետերբուրգից Մկրտում Գալստյանին գրած նամակում «Զընկալնումն թղթոյն իւրոյ սակս Մուրթուզադուլի խանին՝ ասացից պարոն Լաչկարովին» ձևով: (ՄՄ. ձ.2951, թ. 226բ.):

խանին – Գ. Չ.) արձակեցէ՛ գնալ առ կարօտեալ ընտանիսն...տալ քեզ... հարիւր թուճան ճանապարհի խարջի և մնացեալ օրական ոսճիկն քոյ: ... Ի գալ շաբաթին ողորմութեամբն Աստուծոյ ուրազն բարձրագոյն ուղևորեալ լինելոց է առ ձեզ և ես նորին կօպիլէն առաքելցից առ քեզ»¹⁰²: Հովսեփ Արղությանը Աբաս խանի Պարսկաստան վերադարձի առիթն օգտագործում է և նրա միջոցով մաղթանքներ ու խնդրանքներ է հղում Բաբա խանին: 1798 թ. մարտի 12-ին Պետերբուրգից Աբաս խանին գրած ընդարձակ նամակում Հ. Արղությանը շնորհավորում է Բաբա խանին. «Զի թաղաւորեսցէ ի վերա Պարսից աթոռոյն վասն խաղաղութեան, վասն աշխարհաշինութեան և վասն դթութեան և ողորմութեան ի վերա հպատակաց իւրոց ... և զգոյթ խնամոց և ողորմութեան իւրոյ տարածեսցէ ի վերա հպատակաց իւրոց մահմետականաց և քրիստոնէից»: Այնուհետև խնդրում է, «որպէս նախնի թագաւորքն Պարսից ևս Աղայ Մահմատ խան թագաւորն հայրն և հօրեղբայրն իւր ողորմութեամբն իւրեանց միշտ պահպանել զսուրբ Աթոռն մեր Էջմիածին՝ Ուչքիլիսայ կոչեցեալ, և մեծ խալիֆ նորին... առաւել ցուցանել առ նա զգոյթ և զողորմութիւն իւր և հրամայել Երևանայ խանին, որ չզրկեն զՈւչքիլիսէն և կամ յափշտակէն զմուլք նորա, զի նախնի թագաւորքն մաղաֆ են արարեալ զգիւղօրայս Ուչքիլիսէի...»: Հաջորդ կետով խնդրում է «զգոյթ ողորմութեան իւրոյ տարածանել առ ողորմելի ազգս մեր, որք են ենթ խնամոց և հովանաւորութեան իւրոյ մեծութեանն, որ նոքա վայելելով զայն՝ փախուցեալքն ի րոնուրեմէ խիստ տեսրցն լետս դարձցին ի Բալքեմի աշխարհն իրեանց»: Հինգերորդ խնդրանքը վերաբերում է Արցախի խնդրին. Հ. Արղությանը պահանջում է Ղարաբաղի Իբրահիմ խանին «բառնալ ի Շուշու բերթէն և կործանել զնա», քանզի նա էր Աղա-Մահմադ շահի սպանման պատճառը և «կործանիչ իմոյ ազգին և ջնջիչ յերկրէ անտի»: Այնուհետև Հ. Արղությանն իր ծառայություններն էր խոստանում պարսկա-ռուսական բանակցություններում և փոխարենը պահանջում թիֆլիսից տարված գերբնբրին ազատություն շնորհել և «զարձուցանել զնոսա յերկիրն իւրեանց»: Վերջին՝ ութերորդ, կետով Հ. Արղությանը խնդրում է Աբաս խանից, որ «զոր ինչ պարոն Մելիք Զիմշիտին ասացեալ էիր և կամ գրով նշանեալ, այն կատարումն ես»:

1798 թ. մարտի 22-ին Մկրտում Գալստյանին Հ. Արղությանի գրած նամակից տեղեկանում ենք նաև, որ այդ նամակը Աբաս խանին պիտի

¹⁰² ՄՄ, ձեռ. 2951, թ. 161բ-162ա:

Հանձնվեր Աստախանում Մկրտում Գալստյանի միջոցով, որից և խնդրվում էր Աբաս խանին «լաւ հասկացնել Սերգէ Լազրիչին (Լաշկարով) խոստացեալ Հարիւր թուամանն, ընդ շնորհակալութեան թղթոցն ասացես փութով առաքել ձեռամբ քով, որ դու աստ գրեսցես ումք հասուցանել նմա, իւր ճանապարհորդական խարջի Հարիւր թուամանն շնորհեալ նորին մեծութիւնն, Հետևողութեամբ մերով, որ իւր քսակէն ոչ ինչ չեղանէ»¹⁰³: Նույն թվականի մայիսի 13-ին Հ. Արղուժյանի՝ Աբաս խանին դրած պատասխան նամակի համառոտագրությունից պարզվում է, որ Աբաս խանի նամակը ստացվել է Պետերբուրգում, ուղարկվել է կայսեր «ուքագն, որ առ նոր գուբեռնաթն Հաշտարխանու, սակս զնալոյն իւրոյ ի Հայրենիս մեծաւ պատուով, որոց և զօրինակն ընդ գրոյս առաքելն մեր առ ինքն»¹⁰⁴: Այս նամակում Հ. Արղուժյանը կրկին խնդրում է «եթէ Մէլիք Ջիմշիտին բան ինչ անկանիցի նմա, ոչ անտես առնել զնա, որպէս փոխանակ սիրոյ նոցա զոր սիրեն զնա: Նոյնպէս յանձնարարութիւն վասն ազգին և սրբոյ Աթոռոյն, որպէս զրեալ եմք քանիցս իւրն»¹⁰⁵:

Աբաս խանը շուտով վերադառնում է Իրան: Հայրենիք վերադառնալու թույլատրւթյուն է ստացվում նաև Մելիք Ջիմշիդի և Մելիք Ֆրիդոնի համար, որոնց Հետ Այսրկովկաս է ուղարկվում նաև Պ. Կովալենսկին: Վերջինիս 1799 թ. օգոստոսի 17-ին Պավել Առաջինին դրած զեկուցագրից պարզվում է, որ արդեն Պարսկաստանում գտնվող Աբաս խանի և Պարսից շահ Բաբա խանի կողմից այդ օրերին Հրավեր էր ստացվել Մելիք Ջիմշիդի և Մելիք Ֆրիդոնի անունով¹⁰⁶, որով առաջարկվում էր նրանց վերադառնալ Պարսկաստան՝ խոստանալով իրենց հովանավորությունը: Մելիք Ջիմշիդին ու Մելիք Ֆրիդոնին առաքված Իրանի նոր շահի այդ Հրավերը պատահական էր: Բաբա խանը հստակ իրազեկված լինելով ուսու-վրացական ու ուսու-հայկական Հարաբերությունների դրական զարգացման մասին, փորձում էր ավելի սաստկացնել իր դիրքորոշումը և բոլոր միջոցներով այսրկովկասյան ժողովուրդներին (և հատկապես Հայ և վրաց) առաջնորդներին համոզել՝ խզելու կապերը Ռուսաստանից և կրկին ընդունել Իրանի հպատակությունը, իսկ Ռուսաստանին զգուշացնել՝ չմիջամտելու իր երկրի ներքին գործերին: Ապրիլի 27-ին Պարսից առաջին վեզիր Հաջի Մոհամմադի

անունից նամակ է ուղարկվում նաև Պ. Կովալենսկուն՝ որպես Ռուսաստանի պաշտոնական ներկայացուցչի, որտեղ ասվում է, թե Վրաստանը երբեք չի եղել Ռուսաստանի տիրույթ, «Վրաստանը, Կախեթն ու Թբիլիսին» հնագույն շրջանից պատկանում են Պարսկաստանին: Միայն Հերակլ թագավորը Հեռացրեց այն Իրանից և Հայաստան է, թե նա ինչպես պատժվեց զրա համար, ինչ դժբախտություն եկավ Վրաստանին Աղա Մահմադ խանի բարկության հետևանքով՝ վրացիները մի մասը կոտորվեց, մի մասը՝ գերեվարվեց, իսկ մի մասն էլ կողոպտվեց: Հերակլի կողմից Ռուսաստանի հետ կնքած համաձայնությունը ոչ մի ուժ չունի: Եթե Ռուսաստանի կազմի մեջ եղած որևէ ժողովուրդ իր կամքով Իրանի Հետ կնքի նման պայմանագիր, մի՞թե կունենա այն որևէ զօրություն: Այն երբեք չի վերածվի Իրանական տարածքի: Եթե Հերակլի ժամանակ Իրանում չկար բարձրագույն տիրակալ, և Թիֆլիսը Հեռացավ կենտրոնական Իշխանությունից, ապա միայն այդ պատճառով պետք է Վրաստանը դիտենք Ռուսաստանի՞ տիրապետություն: Այդ արդար չէ: Այժմ Իրանը ունի տիրակալ, որը մտադիր չէ իր տիրապետության ներքո գտնվող երկրները Հանձնելու ուրիշներին¹⁰⁷: Ավելին, եթե Ռուսական կողմը Թեհրան ուղարկած իր դեսպանագնացի միջոցով փորձում էր զգուշացնել Բաբա խանին, թե Վրաստանը 1783 թ. պայմանագրով գտնվում է Ռուսաստանի հովանավորության ներքո, ապա Ռուսական դեսպանագնացի Պարսկաստանում գտնվելու միջոցին Պարսից արքունիքը Թիֆլիս՝ Գեորգի թագավորի մոտ ուղարկեց Ռուսաստանից վերագործած նույն Աբաս խանին՝ համոզելու համար ետ կանգնելու ուսական կողմնորոշումից: Գեորգի 12-րդը ցուցադրաբար պարսից դեսպանին ընդունեց Կովալենսկու բնակարանում՝ ուսու և վրացի բարձրաստիճան պաշտոնյաների ներկայությամբ և մերժեց ընդունել շահի առաջարկությունները: Դրանով նա հավաստում էր իր հավատարմությունը ուսական կողմին¹⁰⁸:

Հայ գործիչները թեև դիվանագիտական մեծ ջանքեր էին թափում Պարսից արքունիքում և իշխող դասի մոտ հայոց նկատմամբ բարեհաճ վերաբերմունք ձևավորելու համար, սակայն և մտադիր էլ էին ետ կանգնելու իրենց հայրենիքը Ռուսաստանի օժանդակությամբ Պարսից լծից ազատագ-

¹⁰³ ՄՄ, ձեռ. 2951, թ. 163բ:

¹⁰⁴ Նույն տեղում, թ. 177ա:

¹⁰⁵ Նույն տեղում:

¹⁰⁶ Армяно-русские отношения..., IV, с. 510.

¹⁰⁷ Գ. Մոհամմադով, Նախարարական խորհուրդի XVIII հարյուրամյակի օրհանի Նախարարական քառասունամյակի «Մեծագույն օրհանագրության լիցենզիան» հատուկ և շահեղ ռեցիտիվ, տ. 1983, թ. 119-120.

¹⁰⁸ Գ. Մոհամմադով, Նախարարական խորհուրդի, թ. 121.

բելու խնդրից: Վերոբերյալ շարադրանքից ակնհայտ է նաև, թե ինչպիսի բարձր արժանապատվություններ էին վարվում բանակցություններն ու գրադրությունները Հայ գործիչների կողմից Պարսից իշխող դասի հետ, որը արդյունք էր իրենց թիկունքում անհամեմատ ավելի հզոր դաշնակից ունենալու հայ գործիչների համոզվածությունը:

4.3 ՌՈՒՄ – ՎՐԱՑԱԿԱՆ ՓՈԽՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՒ ՀԱՅՈՑ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ

ԺԸ. դարի երկրորդ կեսին Ռուսաստանի արտաքին քաղաքականությունն աշխուժացման և դեպի Կովկասյան տարածաշրջան առաջխաղացման հետևանքով ավելի ուժեղացավ ինչպես Հայ, այնպես էլ վրաց ժողովրդի ձգտումը արևելյան բունապետությունների լծից ազատագրվելու համար օգտագործելու Ռուսաստանի օժանդակությունը:

Հայ գործիչների համար հստակ էր, որ հայ-ռուսական հարաբերությունները մեկուսի՛ առանց Վրաստանի մասնակցություն, չեն կարող ձևավորվել Այսրկովկասում, Վրաստանը էական դեր պետք խաղար ինչպես իր աշխարհագրական դիրքի, էթնիկ կազմի, այնպես էլ ռազմա-քաղաքական ու տնտեսական շահերի առումով: Ավելին, հայ-ռուսական հարաբերությունների սերտացման համար անհրաժեշտ էր ոչ միայն օժանդակել վրաց-ռուսական, այլև հայ-վրացական փոխհարաբերությունների բարելավմանն ու խորացմանը: Այդ է պատճառը, որ հասարակական – քաղաքական գործիչները Հայ ազատագրական ծրագրերում էական տեղ էին հատկացնում Վրաստանին, հուսալով նրա դիրքորոշման նպաստավորությունը, եւ փորձում օժանդակել նրա հզորացմանը: Այդ առումով խոսուեն է Շահամիր Շահամիրյանի օրինակը եւ Վրաց արքունիքի հետ նրա կապերի պատմության փաստը:

ԺԸ. դարի երկրորդ կեսին ռուս-վրացական հարաբերությունները ձևավորվում էին նորովի՝ արմատական վերափոխումների ենթարկելով դարի առաջին կեսին ստեղծված չափանիշերն ու լծակները: Եթե 1723 թվականից հետո Ռուսաստան փոխադրված վրաց Վախթանգ Երզը և Ռուսաստանում նրա մահից հետո նրա ժառանգները սպասում էին Ռուսաստանի առաջխաղացմանը դեպի Վրաստան, որով իրենք կվերականգնվեին իրենց տիրապե-

տությունը Քարթլիում, ապա 1744 թվականին Քարթլիի գահին Բագրատունյաց տան Կախեթի ճյուղավորման ներկայացուցիչ Թեյմուրազ 2-րդի գահակալությունը սկսվեց նոր փուլ ռուս-վրացական հարաբերություններում: Եթե Վախթանգի ժառանգ Բաքարը¹⁰⁹, նրա որդին՝ Ալեքսանդրը, ինչպես նաև Վախթանգի արտամուսնական ժառանգ Պաստան փորձում են հենարան փնտրել Վրաստանում՝ իշխանությունը վերադարձնելու համար՝ այլևս չհուսալով Ռուսաստանի օժանդակությանը, ապա Թեյմուրազ և Հեքուակ թագավորները ձգտում են Ռուսաստանի հետ մերձեցումով չեզոքացնել Վախթանգի ժառանգների հավակնությունները վրաց գահի նկատմամբ, իրավական ճանաչում ստանալ Ռուսաստանի կողմից՝ Վրաց գահի վրա իրենց օրինականությունը ամրապնդելու համար, ու նաև զինակալ կամ ֆինանսական օժանդակություն հայցել իրենց անվտանգությունը ապահովելու ու իշխանությունը Վրաստանում և նրա հարակից տարածքներում ամրապնդելու նպատակով: Մինչ վրաց թագավորները Ռուսաստանից ակնկալում էին որոշակի օժանդակություն, Ռուսական կողմը ձգտում էր նադիր շահի մահից հետո ստեղծված իրավիճակում գերազույնս ձեռնպահ մնալ Իրանի պետության սահմանների՝ նկատմամբ որևէ միջամտության բացահայտ դրսևորումից՝ առիթ չընձեռնելու համար Օսմանյան պետությանը այդ պատրվակով Իրանական տարածքների նվաճման նպատակով քայ-

¹⁰⁹ Բաքար Արքայազնը (1699-1750) շարունակում էր սերտ կապեր ունենալ Ռուսաստանի և, մասնավորապես, Աստրախանի Հայոց հետ: Բաքարի օժանդակությամբ կամ Ռուսաստանում նրա միջնորդություններին դիմելու փորձեր արվում էին նաև Էջմիածնից: Այսպես, պահպանվել է Բաքարին ուղղված նորահայտ մի նամակի անթվակիր սևագրությունը («Օրինակ թղթոյն օրհնութեան, որ ի վերայ Բաքարայ Արքային, որւոյն Վախթանգի», ՄՄ, ձեռ. 6241, թ. 61բ-62ա), որտեղ ցավակցություն է հայտնվում հոր՝ Վախթանգի, մահվան առիթով (1675-1637), և շնորհակալություն, որ «կարի օգնական և ձեռնտու եղեալ էք բանիւք և աղբիւմք ի շինելն նորագունի սրտոյ եկեղեցւոյդ Հայոց, որ ի Հաշտարխան քաղաք, և ոչ զայս միայն, այլև յուայ ևս զսէր և զարեւարութիւն յոյժս առնես ունիս առ սուրբ Աթոռս և առ ազգս մեր, որոց և զբարեբարութիւն յոյժս առնես այդր, եթէ տընւորաց և եթէ վաճառականաց», խնդրվում է օժանդակել Մայր Աթոռի կողմից նոր նշանակված «Ներսես եպիսկոպոսդ և Աստուածաբան վարպետդ նուիրակ և առաջնորդ կարգեալ ի Հաշտարխան և յայլ այդ կողմունսդ բնակեալ մերոց Հայկականաց ազգաց»: Վերոբերյալ տվյալների համադրմամբ կարելի է համոզվել, որ նամակը գրվել է Հակոբ Շամախեցու կողմից, ուղարկվել է կաթողիկոս Լազար Ջահկեցու անունից, որով և պայմանավորված էր Հավանաբար Աստրախանի Հայոց առաջնորդ Ստեփանոս արքեպիսկոպոսի Մոսկվա փոխարկվելու հանդամանքը՝ 1738-39 թթ.: Ուշադրավ է, որ Բաքարը վկայություն էր տվել նաև Ստեփանոս արքեպիսկոպոսի մասին 1738 թ. մարտի 16-ին. տե՛ս Армяно-русские отношения..., III, с. 113-114:

1763 թ. ապրիլ-հունիս ամիսներին Քերիմ խանը, որ ամրապնդել էր իր զինքերը բուն Իրանում, փորձ կատարեց ավելի առարկայական դարձնել իր ազդեցությունը նաև Այսրկովկասում՝ մեծ զորաբանակով մոտենալով նրա սահմաններին: Հերակլը, որպես «Գորջեստանի վալի», իր պատրաստակամությունը Հայտնեց նրա հետ համագործակցելու՝ ճանաչելով նրա գերակայությունը որպես Իրանի "վեբիլ" և նրան ուղարկեց իր մոտ գտնվող Ազատ խանին: Քերիմ խանը ստիպված էր բավարարվել նման իրավիճակով և փոխադարձաբար ճանաչել Հերակլի իրավունքները Արաքսից հյուսիս ընկած տարածքների՝ այն է Հյուսիս-արևելյան Հայաստանի, նկատմամբ: Այսպիսով, Իրանի և Ռուսաստանի կողմից Հերակլ 2-րդի գահակալման օրինականություն ճանաչումը մեծապես ամրապնդեց նրա զինքերը ինչպես Վրաց ներքաղաքական, այնպես էլ միջպետական հարաբերություններում: Այդ հանգամանքը ավելի էր բորբոքում Վախթանգ Ե-րդի ժառանգների հուսահատությունը և նրանց մղում հուսահատական քայլերի: Հերակլի բարձր վարկանիշը հնարավորություն տվեց Ռուսաստանից հեռացած և Թիֆլիս ժամանած Պատաա Արքայազնի կողմից 1765 թ. Թիֆլիսում կազմակերպվող դավադրություն բացահայտումից հետո նրա մասնակիցներին նկատմամբ իրականացնել դաժան հաշիվհարդար:

1768-74 թթ. ռուս-թուրքական պատերազմը կարծես նոր հորիզոններ ու հնարավորություններ էր ստեղծում ռուս-վրացական համագործակցությանը ինչպես Հերակլի, այնպես էլ Հերակլի օժանդակությունը ակնկալող Հովսեփ Էմինի ծրագրերի իրականացման համար: 1768 թ., սակայն, Հովսեփ Էմինը վերջնականապես թողեց Վրաստանի հետ համագործակցելու 1763-1768 թթ. իր փորձերը և հեռացավ Հնդկաստան¹²⁹: Հերակլ 2-րդ և Սողոմոն I թագավորները 1768-69 թթ. դիմել էին Ռուսաստանին զինական օժանդակություն ստանալու խնդրանքով՝ Օսմանյան պետության դեմ պայքար ծավալելու նպատակով: 1769 թ. Ռուսաստանի Արաաքին գործերի կոլեգիային

¹²⁹ Այդ առիթով Ա. Ռ. Հովհաննիսյանը գրում է, թե իր իսկ խոսքերով, Հովսեփ Էմինը «привыив в Гори, он встретил там тбилисского епископа Захария, сообщившего ему, что Ираклий им очень доволен и хочет дать ему важное поручение; на это он еудто бы ответил, что едет в Индию к отцу, после чего Захарий не проронил больше ни слова. Однако весь этот звивичный рассказ более чем подозрителен... если он так обрадовался слухам о влагосклонном отношении к нему Ираклия, то почему, приехав туда, он гордо отклонил протянутую ему руку? Как бы то ни было, Эмин с очень большой поспешностью покинул пределы Грузии» (А. Р. Ноантсия, Иосиф Эмин, с. 212-213).

էր դիմել նաև Մովսես Սարաֆյանը Հայաստանի ազատագրման համար Վրաստան Ռուսական զորք ուղարկելու առաջարկությամբ: Պետերբուրգում հաղորդագրություն էր տպագրվել անգամ, թե «Հաստատվում է Պարսկաստանում տեղի ունեցող խոշոր ազգական նախապատրաստություններին մասին լուրը: Հայերը տարանջատվել են թուրքերից և նրանց պատրիարքը, որը մեծ իշխանություն ունի, ծանուցել է Կ.Պոլսում մեծ քանակ կազմող իր հավատակիցներին, որպեսզի նրանք հույների հետ մնալով համաձայնության մեջ, անհրաժեշտ պահին գործեն համատեղ ուժերով¹³⁰»: 1769 թ. ամռան վերջին ռուսական մի զորամաս զեն. Տոտլերենի հրամանատարությունում ի վերջո ժամանեց Վրաստան: Հերակլ 2-րդը, որ ռուսական զորամասի օգնություն կարիք ունեւ իր ազգային-քաղաքական նպատակները կենսագործելու նպատակով, ընկանաբար, չէր կարող հանդուրժել զեն. Տոտլերենի կողմից ակնհայտորեն Վրաց թագավորին իր կամքը թելադրելու և այդպիսով Վրաստանը Ռուսաստանի գերիշխանությունը ենթարկելու ծրագիրը: Հակասությունները նրանց միջև շուտով սաստկացան և դարձան թշնամական: Գեն. Տոտլերենը 1770 թ. ապրիլին Ախալցխայի ամրոցի պաշարման ժամանակ վրաց բանակին թշնամու դիմաց թողնելով միայնակ Օսմանյան զորքի դեմ ցուցադրաբար լքում էր ուղիղ դաշտը և: վերադառնում Քարթլի, շարժվում դեպի Անանուր և սպասում Ռուսաստանից լրացուցիչ զորամասի: Հերակլ 2-րդը կարողացավ դիմագրավել հարձակման անցած օսմանյան զորքին, որը կրկին փակվեց ամրոցում, որից հետո վրաց բանակը փորձում էր ետ ընկրկել դեպի Ջավախք: Ոգևորված այդ ընկրկումից, թուրքերը որոշում են անակնկալ հարձակումով շրջապատել և ոչնչացնել վրացական բանակը Ասպինձայի մոտ: 1770 թ. ապրիլի 20-ին տեղի ունեցած ճակատամարտը ավարտվում է վրաց զորքի փայլուն հաղթանակով: Սպանվում է թշնամու 4000 զինվորից մոտ երեք հազարը, մնացածները կուլ են գնում Կուրի ջրերին կամ գերի ընկնում: Վրաց բանակի գոհերը անհամամաս քիչ էին, սակայն Հերակլը չէր կարող շարունակել պատերազմը, օգտվել հաղթանակի պտուղներից և վերադարձավ Թիֆլիս: Գեն. Տոտլերենը, օգտագործելով Հերակլից դժգոհ վրաց իշխանների օժանդակությունը, զենքի ուժով փորձում էր գրավել Արևելյան Վրաստանը:

¹³⁰ Санкт-Петербургские ведомости, № 11, пятница 5 фев. 1769 г., տե՛ս Ս. Գ. Бутков, Материалы..., I, с. 464.

տանը և կայազորներ էր տեղադրում Վրաստանի քաղաքներում¹³¹: Հերակ-
լը ակտիվ գործունեություն սկսեց Տոտլերենի ձեռնարկած քայլերի չեղո-
քացման ուղղությամբ: Շուտով Վրաստան ժամանեց ռուսական Տոմսկի
գուևզը, ռուսական զորամասի կազմը դարձավ մոտ 4000 զինվոր և Տոտլե-
րենը 1770 թ. հունիսին անցավ Արևմտյան Վրաստան: Տոտլերենը պաշա-
րեց Փոթին, սակայն չկարողացավ դրավել: Սրվեցին հարաբերությունները
նաև Սողոմոն I-ի և Տոտլերենի միջև: Տոտլերենը կապեր էր ստեղծում Ա-
րևմտյան Վրաստանում Սողոմոնի հակառակորդ իշխաններին հետ: Ռուսա-
կան արքունիքը ստիպված էր ետ կանչել Տոտլերենին և նրա փոխարեն
Վրաստանում ռուսական զորքի հրամանատար նշանակելով դեն. Սուխո-
տինին՝ փրկել ռուս-վրացական հարաբերությունները խզումից: Սուխոտի-
նին տրված հրահանգում բացատրված էր, թե քանի որ վրաց թագավորնե-
րը չեն առաջնորդվել Տոտլերենի կարգադրություններով, որից և առաջա-
ցել է նրանց միջև հարաբերությունների լարվածությունը, ուստի նա ևս
պետք է շարունակի վրաց զորքի միջոցով "դիվերսիաներ" կազմակերպելու
մարտավարությունը թուրքերի դեմ: Նրան ևս հրահանգվում էր, սակայն,
թե պետք է ձեռնպահ մնալ ռազմական կանոնավոր գործողություններից,
քանզի Վրաստանին միացնելու նպատակով տարածքները զբաղվելու ռուսա-
կան ծրագրերի մեջ չէր մտնում¹³²: Սուխոտինը Վրաստան եկավ 1771 թ.
մայիսին, որին Հերակլը դիմավորեց մեծ շուքով: Շուտով սակայն, Սուխո-
տինը ևս առաջնորդվելով ստացած հրահանգներով, ի հավաստացումն
նրա հավատարմության Հերակլից պահանջեց պատանդներ: Սրվեցին հա-
րաբերությունները նաև Սուխոտինի և Սողոմոն I-ի միջև: 1771 թ. դեկտեմ-
բերին, երբ ռուսական զորքերը հասել էին մինչև Սև ծովի ափ և կրկին ան-
հաջողության մատնվել Փոթիի պաշարման ժամանակ, Եկատերինա 2-րդը
Սուխոտինին և ռուսական բանակը ետ կանչեց Վրաստանից: Մեզ հայտնի
չէ նաև Եկատերինա կայսրուհու արձագանքը Սիմեոն Երևանցու 1770 թ.
Եկատերինա 2-րդ կայսրուհուն գրած նամակում արտահայտված այն
խնդրանքին, ինչպես արդեն նշել ենք, ընդգծում էր, թե «մեք՝ ողորմելիքս,
երկարորի արքայութեան ևս հմք այստեղ կարոտ» և խնդրում «զղոյն
սէրդ, խնամքդ և զողորմութիւնդ անջնջելի վճռեսցես ի մէնջ, ի սրբոյ ա-
թոռոյս, ի խղճալի յագգէս մերմէ, զի քոյ հմք և ոչ օտար, նոյնպէս և ի

¹³¹ Նախորոցցեան օկոյորոս Երկրորդի, IV, ՅՅ. 654.
¹³² Նույն տեղում, էջ 656:

զայլ ցան և ցիր եղեալ յագգս մեր տարածեսցես զհոլանի տերու-
թեանդ...»¹³³: Փաստ է միայն, որ ռուսական զորամասը, որ հեռանում էր
Վրաստանից, 1772 թ. մայիսին արդեն գտնվում էր Յիսինվալիում, որտեղից
և շարժվեց Հյուսիս: Այսպիսով, ռուսական զորամասը, որի օգնությամբ,
ըստ հայ և վրաց գործիչների, պետք է իրականանար Վրաստանի և Հայաս-
տանի ազատագրումը օտար լծից և վերականգնվեր նաև հայոց ազգային
պետականությունը, հեռանում էր առանց էական նպատակ բերելու առա-
ջադրված խնդիրներին ու ծրագրերին լուծմանը: Ռուսական բանակի առկա-
յությունը Վրաստանում սրեց Հերակլի հարաբերությունները Քերիմ խանի
հետ, վերականգնեց լեզգիների ավարառուական արշավանքները Վրաստան:
Հայտնվելով ծանր խնդիրների առջև և ձախողումները վերագրելով ռուսա-
կան զորամասի հրամանատարությանը, Հերակլ 2-րդը որոշեց շարունակել
Ռուսաստանի հետ հարաբերությունների սերտացումը՝ դեսպանություն ա-
ռաքելով ռուսական արքունիք և պատրաստակամություն հայտնելով որո-
շակի նախապայմաններով ընդունելու Ռուսաստանի գերիշխանությու-
նը¹³⁴: Ուշագրավ է, որ Հերակլի կողմից ուղարկված ռուս-վրացական պայ-
մանագրի նախագիծը կազմվել է 1771 թ. դեկտեմբերի 29-30-ին, նույն ամ-
սին, երբ Եկատերինան Պետերբուրգում արդեն հրահանգել էր ռուսական
զորքի Վրաստանից ետ կանչելու մասին: Վրաց դեսպանությունը, որ դե-
կավարում էին Անտոն կաթողիկոսը և 16-ամյա Լևան Արքայազնը, երկար
ձգձգումներով, գրեթե ողջ 1772 թ. Աստրախանում մնալուց հետո, ի վերջո
ժամանում է Պետերբուրգ: 1773 թ. դեկտեմբերի 31-ին վրաց դեսպանութ-
յանն է հանձնվում ռուսական արքունիքի պաշտոնական պատասխանը Հե-
րակլի ներկայացրած խնդրագրին, որտեղ չընդունելով նրա առաջարկները,
հայտնվում էր, թե Վրաստանի համար կարևորը խաղաղությունն է, իսկ
Ռուսաստանը այդ նկատի կունենա առաջիկայում ռուս-թուրքական հաշ-
տության բանակցությունների ժամանակ¹³⁵: Ռուս-թուրքական պատերազ-
մի ավարտից հետո կնքված Քյուչուկ Կայնարջի պայմանագրի 23-րդ
հոդվածով Արևմտյան Վրաստանի նկատմամբ ընդունվում էր Օսմանյան
տերությունից իրավասությունը պայմանով, որ նա ազատվում էր հարկ վճա-
րելու պարտականությունից: Պայմանագրի մեջ չէր կարող արտացոլում ու-

¹³³ Армяно-русские отношения, IV, с.105.
¹³⁴ Ձ. Զյւլցցոյմցոլլո, նշվ. աշխ., էջ 71-97:
¹³⁵ Նույն տեղում, էջ 92:

նենալ Արևելյան Վրաստանի Հարցը, սակայն Հերակլը փորձելով օգտվել պատերազմում Թեւրքիայի կրած պարտության հանգամանքից և Ախալցխայի նկատմամբ քայլեր ձեռնարկել, որոշում է կրկին գիմել Ռուսաստանի օժանդակությունը խնդրելով գեներալ Մեդեմի գործով մոտենալու Վրաստանի սահմաններին: Ստանալով գեներալ Մեդեմի դեկուցագրերը այդ մասին, Եկատերինան 1775 թ. հուլիսի 28-ին պատասխանում է գեներալին, թե Հերակլը շարունակում է միջոցներ փնտրել այստեղի օժանդակությունը իր սեփական "вlastолювию услужить, как то отчасти открывалось в бытность наших войск в Грузини": Կայսրուհին հրահանգում է իր գեներալին, թե Հերակլը արժանի է նաև ուշադրության և կարգադրում է "остаться в молчании", մինչև Հերակլի կողմից կրկին նոր գիմելի ստացվելը, իսկ այնուհետև ծանուցել նրան, թե նրա խնդրանքի բավարարելը անհնար է և թող նվաճումներն ու ձեռքբերումները կատարի իր սեփական ուժերով¹³⁶: Ահա նման իրադրության պայմաններում էր, որ Հերակլը, ինչպես արդեն նշել ենք, 1776 թ. կատարեց դիվանագիտական նոր շրջադարձ և Կ. Պոլիս ուղարկեց իր դեսպանին:

* * *

ԺԸ. դարի վերջին քառորդին Հայ-ուս-վրացական հարաբերություններում, ինչպես արդեն ցույց ենք տվել, եռանդուն գործունեություն էր ծավալել Հովսեփ Արղունյանը: Նա, ըստ իր իսկ վկայություն¹³⁷, մեծ դեր էր ունեցել նաև 1783 թ. ուս-վրացական Գեորգիևսկի դաշնագրի կնքման գործում¹³⁸: Դաշնագրի որոշ կետեր Հայ ժողովրդի ազատագրական շարժ-

մանը նպաստավոր դարձնելու համար միջոցներ էին փնտրում նաև հնդկահայ գործիչները: Ե. Շահամիրյանը մասնավորապես շեշտում էր դաշնագրի Ե-րդ կետը և կոչ անում հենվելով այդ կետի վրա Հայաստանի նկատմամբ Վրաստանի լիազորության տարածման իրավունքի ընդարձակումով հասնել Հայ-վրացական պետության ձեռավորման հարցի լուծմանը: Այդ իր հերթին ապացուցում է, թե դոյություն ունեւր ոչ միայն պայմանագրի հայերեն թարգմանությունը, այլև այն ուղարկվել էր նաև Հնդկաստան, որից և կարող էր օգտվել Ե. Շահամիրյանը:

Առավել կարևոր է, սակայն այն հանգամանքը, որ այդ պայմանագրով երկու պետությունները (Վրաստանը և Ռուսաստանը) պայմանավորվում էին փոխանակել դեսպանություններ: Վրացական դեսպանությունը Գարսեան ձավճավաձի գլխավորությամբ 1784 թ. ճանապարհվում է Պետերբուրգ, իսկ Վրաստանում ռուսական լիազոր ներկայացուցիչ է նշանակվում Ստեփան Բուրնաշևը: 1784 թ. Պետերբուրգ է ժամանում նաև Հայ ժողովրդի լիազոր ներկայացուցիչ Ստեփան Դավթյանը: Ղուկաս կաթողիկոսի խնդրանքով Հերակլ 2-րդը 1784 թ. օգոստոսի 18-ին հանձնարարական նամակ է գրում Ստեփան Դավթյանի համար Պ. Ա. Պոտյոմկինին, ինչպես «բարեհաճ լինել նրա նկատմամբ և օժանդակել նրան»¹³⁹: Հայ և վրաց ժողովուրդների քաղաքական համագործակցության համար Պետերբուրգում ևևս ստեղծվում է կապող օղակ: Այդ կապերի առավել եռանդուն կազմակերպիչ կրկին հանդես է գալիս Հ. Արղունյանը: Վրաց դեսպանության և Ստեփան Դավթյանի Պետերբուրգ ժամանելու իսկ պահից Հ. Արղունյանը փորձում է համաձայնեցնել նրանց գործունեությունը՝ այդ նպատակով ցուցումներ տալով ինչպես Ս. Դավթյանին, այնպես էլ Գարսեան ձավճավաձեին: Այսպես, 1784 թ. հոկտեմբերին Ստեփան Դավթյանին (նույն ինքը՝ Ստեփան Տեր-Սահակեան) նա գրում է. «Ահա դու գիտես, թե զինչ ես առնելոց յայդը (իմա՝ Պետերբուրգում- Պ. Չ.): Բավական մխիթարութիւն է լինելոց քեզ ընդ պնդել աղա Յովհաննեսին և պարոն Մանչարեանց... արքայազուրկ ևևս, քննազ Գարսեան էլչկաղաքաշին, որք եկեալք են, նոքա

¹³⁶ П. Бутков, Материалы..., II, с. 25-26.

¹³⁷ 1783 թ. սեպտեմբերին Հովհաննես Լազարյանին ուղղած նամակում նա գրում է. «Մեք յօքոստոսի մուտն գրեցաք առ քեզ գորպէսն մեր և գայն, որ Պաւ Սարգէիչ Պոտէմկինն յաղապս Վրաց բանիցն կրկին խնդրեալ էր դմեզ ի գալ դեսպանաց նոցա, ուստի և մեր գնացեալ առ նա՝ հոգացեալ եղև բանն Վրաց և դաշնեցն ձեռք եղեալ երկուց կողմանց, առեալ գնացին և եղեն յաւիտեան բախտաւոր:... Թագաւորական շահաւէտ բանս իմ հոգացեալ՝ համարեա թէ՛ գտիրտն Վրաց արքայի մերով գրուածովն շրջեցաւ առ ուսաց, գիտէ գայս (կրկնված է բնագրում- Պ. Չ.) ամենայն Պաւ Սարգէիչն, որպէս և մերով միշտ շնորհակալի, բայց զի՞նչ օգուտ, որ չուենիմ տէր ի յունկս Մեծին հասուցանել, քանի ստոր անձինք ի մէջ բանից վարձատրեցան՝ մինչ իմացեալ եղև գործ նոցա, իսկ մերն՝ մնաց, բայց միայն Պաւ Սարգէիչի թուղթքն կան առ մեզ»: ՄՄ, ձեռ. 4496, էջ 173-174: Նամակի հեղինակի և թվականի ճշտումը կատարված է մեր կողմից բառ բովանդակության:

¹³⁸ Վ. Մարտիրոսյան, 1783 թ. Գեորգիևսկի դաշնագրերը և Հայերը.- ՀՍՄՀ ԳԱ «Լրարբեր հասարակական գիտություններ», 1978, թիվ 9, էջ 92-100: Նույնի՝

Նոր վավերագրեր Գեորգիևսկի 1783 թ. դաշնագրի մասին.- ՊՔՀ, 1978, թիվ 3: Ա. Ն. Սուրգուլաձե, Գեորգիևսկի պայմանագրերը և նրա առաջադիմական նշանակությունը (Պայմանագրի 200-ամյակի առթիվ), - ՊՔՀ, 1983, թիվ 2-3 (101-102), էջ 13-20:

¹³⁹ В. Н. Гамрекли. Межкавказские политические и торговые связи. Тбилиси, 1986, с.204.

եւս են քեզ մխլթարութիւն, ունիցիս առ նոսա երթեւեկութիւն, որպէս իւրեանց սեպհական այր, որ ի ժամ յետ դարձմանդ դրեսցէն Արքային զհաստարմութենէ քումմէ»¹⁴⁰:

1783 թ. գարնանը ռուս-վրացական դաշնագրի նախապատրաստական աշխատանքների ժամանակ¹⁴¹ Հովսեփ Արղուժյանը կազմել էր (անշուշտ Ռուսական իշխանությունների գիտություններ) նաև Հայ-ռուսական դաշնագրի մի նախագիծ: Ստեփան Դավթյանին ուղղված վերոհիշյալ նամակում նա գրում է. «Յանցեալ ամին, մինչդեռ սոքա յոթ ջերմ էին ի վերկութիւն մերազնէիցն եւ երկրին, մեք դաշնադրութեան տեսակ եւ կամ նիւթ ինչ պատրաստեալ էաք, որոյ սաւատն այժմ ուղեւորեմ առ քեզ՝ ցուցանել ում պատշաճ տեսանես մերազնեիցն եւ կամ էչկաղասաբաշուն»¹⁴²:

Հայ-ռուս-վրացական հարաբերությունները նոր երանգ են ստանում ռուս-թուրքական 1787-1791 թթ. պատերազմի ժամանակ: Պատերազմական գործողությունները թեևս ընթանում էին Այսրկովկասի սահմաններից հե-

¹⁴⁰ Армяно-русские отношения в XVIII веке (св. док.).1760-1800. т. IV. Ереван, 1990, с. 323.

¹⁴¹ Հավանաբար այդ ժամանակ է Հերակլ Երկրորդը ռուսական արքունիք ներկայացրել նաև Այսրկովկասի վարչա-քաղաքական միավորների զինանշանների մասին իր կազմած տեղեկանքը, որի արխիվային ուսերեսն թարգմանությունը անթվական է.

- Герб Грузинский – гора с двумя стрелами.
- Герб Кахетинский – великомученик Георгий на коне сидящи.
- Герб Ереванский – Араратская гора с ковчегом.
- Гянджинской герб – пламен три цтроиши
- Атавашской герб – озеро с монастырем
- Герб Казашкой – рука с козлем держит
- Герб Борчалу – савля поперог.
- Герб у Шамшадилла – ружие.
- Герб у Ширвана – волк.
- Герб Шаконой – лиса.

На подлинном подписано тако: ИРАКЛИ (ШГАДА. Гос.Архив, ф.15, л. 185, л. 239 об.). Թեև Արցախի մելիքների զինանշանների մասին Հերակլի կազմած ցուցակում հիշատակություն չկա, սակայն անհավանական չէ, որ նրանք եւս պետք է ունենային իրենց զինանշանները: Որպես այդպիսին է ներկայացված մասնավորապես մի պատկերում, որը ըստ հրատարակչի կարող է եղած լինել Վարանդալի մելիքներից Շահ-Նազարի զինանշանը: Նրա վրա կան «Վ Մ Ծ-ն» տառերը, իսկ արծվազլիի վերևում նկարված է եկեղեցու գմբեթ և խաչ: Տե՛ս «Պայքար» (Բոստոն), 1960, էջ 332-334.): Այսրկովկասի մի շարք այլ խանությունների և Վրաց իշխանների զինանշանների մասին խոսվում է նաև Վախուշտի մոտ:

¹⁴² Армяно-русские отношения..., т. IV, с. 323. А. Р. Ноанисян. Россия и армянское освободительное движение, Ер., 1990, с. 45-48.

ռու, սակայն հայ եւ վրաց ժողովուրդների ներկայացուցիչները որոշակի հույսեր էին կապում Ռուսաստանի կողմից պատերազմի հաղթական ավարտից հետո կնքվիլիք պայմանագրի հետ, գտնվում էին Յաշում, որտեղ եւ պետք է ստորագրվեր հաշտության պայմանագիրը: Յաշում էին հավաքվել ինչպես Ռուսական բանակի գլխավոր հրամանատարությունն ու պալատական ներկայացուցիչները, այնպես էլ խնդրին առնչվող ժողովուրդների ներկայացուցիչները, այդ թվում՝ Հովսեփ Արղուժյանը, Ստեփան Դավթյանը, Արեւմտյան Վրաստանից՝ Բեսարիոն Գաբաշվիլին եւ Սիմեոնը, Արեւելյան Վրաստանից՝ Գայոս վարդապետն ու հայազգի Սուլխան Թումանյանը եւ այլք: Յաշում էր գտնվում նաև Ի. Գեղեւանիշվիլին¹⁴³, որի տեղեկությունները մի շարք հանդիպումներ է ունեցել Հովսեփ Արղուժյանի հետ, եւ նրանք միասին են հրավիրվել մասնակցելու հաշտության պայմանագրի ստորագրումից հետո տրված ճաշկերույթին, որտեղ ներկա էին նաև օտարերկրյա ներկայացուցիչներ եւ թուրքական պատվիրակությունը:

Պայմանագրում ուղղակիորեն չարտացոլվեցին անմիջապես Հայաստանին եւ Վրաստանին առնչվող հարցեր: Պատվիրակությունները վերադարձան առանց որոշակի հաջողությունների: Էականը, սակայն, այն էր, որ թուրքիան պայմանագրի հինգերորդ կետով ձեռնպահ էր մնում Քարթլիի նկատմամբ թշնամական քայլերից¹⁴⁴:

Գեռեւս 1787 թ. հոկտեմբերի 15-ին Հերակլ Երկրորդին գրած իր նամակում Շահամիր Շահամիրյանը իր երախտագիտությունը հայտնելով 1786 թ. մարտի 22-ին հրովարտակով իրեն իշխանական տիտղոս շնորհելու համար, միաժամանակ հորդորում էր Վրաստանում էրազործել մի շարք բարեփոխումներ, որոնք, ըստ Ծ. Շահամիրյանի, հնարավոր կդարձնեին Վրաստանի հետագա արագ հզորացումը եւ Վրաստանի օգնությունը ու Ռուսաստանի օժանդակությամբ կիրականանար հայ ժողովրդի ազատագրման գործը: 1795 թ. Աղա-Մահմադ խանի կողմից Թիֆլիսի ավերումից հետո Հովսեփ Արղուժյանը Գրիգորիսպոլից նամակով դիմում է Հերակլ Երկրորդին, եւ, հայտնելով իր դառն ապրումները այդ դեպքերի առթիվ, գրում է. «...յոյս Հայաստանեայց աշխարհի եւ թագավորութիւն ձեր էր, որըբացեն

¹⁴³ Հովհան (Իոնա) Գեղեւանիշվիլու ուղեգրության մեջ հայերի մասին եղած տեղեկությունների ըննությունը տե՛ս Պ. Ա. Չորապյան, Վրացական ուղեգրություններ..., էջ 66-78:

¹⁴⁴ Գ. Գ. Լաթալազե. Историческое значение Георгиевского трактата.– “Из истории вековой дружбы”, Ереван, 1983, с.85.

րից օգնություն խնդրելու եւ կամ գեթ հստակ պատկերացում կազմելու Ռուսաստանի հետագա ծրագրերի ու իրենց ճակատագրի մասին:

Վրաստանի անտեսական ու հասարակական-քաղաքական ծանր վիճակի պայմաններում Հ. Արղուժյանի ներկայությունը Վրաստանում իրիտ անհրաժեշտ է նկատվում և, պարզվում է, նրա ներկայությունը կամ միջոցով ակնկալվում էր մեղմել տեղում առաջացած սոցիալական լարվածությունը: Բանն այն է, որ մեծացել էր Վրաց արքունիքի քաղաքականության նկատմամբ դժգոհությունը, եւ աճել էր, ինչպես ընդունված է վրացագիտությունում մեջ¹⁶², պարսկական կողմնորոշում ունեցող ավատատերերի թիվը: Դժգոհությունը մեծ էր հատկապես առևտրական կապիտալի ներկայացուցիչների՝ հիմնականում հայազգի բնակչության մոտ¹⁶³: Այն ավարտվեց 1797 թ. թագավորի դեմ կազմակերպված դավադրությունը¹⁶⁴: Հովսեփ Արղուժյանին հրավիրելով Վրաստան, Գ. Նելիգովը 1797 թ. ապրիլի 10-ին գրում էր. «Վրաստանում գործերի ներկա հանգամանքների բերումով Ձեր ներկայությունը թիֆլիսում ինձ համար ավելի քան անհրաժեշտ է, որովհետև մի ողջ ազգի վստահությունը Ձեր նկատմամբ պահպանվում է, եւ ես դրանից սպասում եմ, որ եթե կրկին որևէ անհանգստություն տեղի ունենա թիֆլիսում եղածի նման, Ձերդ բարձր սրբազնություն, կարող եք կանխել Ձեր խորհուրդներով, որում ինձ համոզում է և անցյալ դեպքը, որի մասին ես չեմ գլանա հաղորդել բարձր հրամանատարությունը»¹⁶⁵: Ուշագրավ է, որ իր ծառայությունների թվարկման մեջ Հ. Արղուժյանը հետագայում մտցրել է նաև այդ դրվագը:

Փաստ է միայն, որ Վրաստանում և, մասնավորապես, թիֆլիսում տեղի ունեցած խռովությունները ճնշելու համար բազմաքանակ զորքի ու զինքի գործադրման մասին սկզբնաղբյուրներում վկայություններ չունենք, որը հավանական է դարձնում այն ենթադրությունը, թե խռովությունները վերացնելու համար այդպիսիք էին գործադրվել: Ինչպե՞ս և ինչե՞ով էր նվա-

¹⁶² საქართველოს ისტორიის ნარკვევები, IV, გვ. 774.

¹⁶³ Հավանաբար այս առիթով էլ հարբունիս էր բռնադրավիվ Մանուկար. Թումանյանի գույքը:

¹⁶⁴ Г. Наталзе. Крестьяне “Сахасо” в Восточной Грузии в конце XVIII в., — “Материалы по истории Грузии и Кавказа”, 1937, ч. V, с. 364-365. Дор. Учанейшвили. К вопросу об экономическом развитии Восточной Грузии во второй половине XVIII века. — “Материалы по истории Грузии и Кавказа”, 1937, ч. V, с. 424-426.

¹⁶⁵ АВПР, ф. Сношения России с Арменией (СРА), оп. 100/3, 1764-1800 гг., л. 462, л. 56-57(44-46).

ճել, հետևաբար, Հովսեփ Արղուժյանը ժողովրդի վստահությունը Վրաստանում, ինչու՞ նրան հաջողվեց այն, ինչը ի վիճակի էջին անելու ոչ Վրաց արքունիքը, ոչ Ռուսական հրամանատարությունը և ոչ տեղի հայ հոգևորականությունը, որ շատ ավելի լծակներ ունի արգելու իրադարձությունների ընթացքի վրա: Հարցի պատասխանը պետք է փնտրել, մեր կարծիքով, Հ. Արղուժյանի նախորդ գործունեությամբ, որը, փաստորեն թեև ընթացել էր միայն Ռուսաստանում և որը, սակայն, մշտապես գտնվել է ժողովրդի տեսադաշտում նաև Վրաստանում: Այդ տրամաբանությունը է ժողովրդի տեսադաշտում և որը, սակայն, մշտապես գտնվել է ժողովրդի տեսադաշտում նաև Վրաստանում: Այդ տրամաբանությունը զգալի չափով կասկածի տակ է առնում «խռովություն» կամ «ապստամբություն» որակումներով վրացագիտության մեջ խորհրդային տարիներին տրված դնահատականը: Իրականում այդ դժգոհությունն էր Ռուսաստանի վարած քաղաքականությունից, որը դադարեցնելով արշավանքը, փաստորեն Վրաստանին կրկին թողնում էր Պարսկաստանի վտանգի դեմ միայնակ, ուստի և Պարսկաստանի անվան հոլովումը ոչ թե կողմնորոշում, այլ հակակշիռ էր, որով պետք է ապահովագրելին Վրաստանը Աղա-Մահմադ խանի հնարավոր նոր արշավանքից: Ավելին, Ղուկաս կաթողիկոսի վկայությամբ, Աղա Մահմադ խանի երկրորդ արշավանքի մասին լուրերից հետո «մնացորդ բնակիչքն Տփլիսու, որք լուեալ զգալուստ ներքինուոյն ի Շուշի, զարհուրեալք կամէին ցրուիլ, և յորդորմամբ Յովսէփ արքեպիսկոպոսին փոքր մի դադարեցան, նոքա ևս գերծան ի կատարութենէ անօրինին ի բառնիլ կենաց նորա»¹⁶⁶: Գայոս Ռեկտորի 1797 թ. ապրիլի 15-ին Մոզդուկից Վրաց Անտոն 2-րդ կաթողիկոսին գրած նամակից ակնհայտ է, որ այդ անհանգստությունը բռնկել էր ոչ միայն հայազգի բնակչությանը, այլև վրաց կաթողիկոսին, ուստի միանգամայն անհիմն է վրաց պատմագիտության մեջ վերորբերյալ անհանգստությունը ազգային երանգ վերագրելը՝ ելնելով միայն թիֆլիսի բնակչության մեծամասնության հայազգի լինելու հանգամանքից. «Գրել էիք Պարսին (իմա՝ Հերակլ 2-րդի - Գ. Ջ.) և ժողովրդի դժգոհության ու խառնաշփոթության մասին Ռուսական զորքի վերադարձի հետ կապված: Ընձարիտ է, այժմ դրանց նման փոքր արարքը վրդովեցնում է ձեզ, սակայն, եթե ուղիղ դատեք՝ ոչ Ռուսաստանը ձեռք կբաշի Վրաստանից և ոչ Աղա-Մահմադ խանը կրկին կզա նրա դեմ»¹⁶⁷:

¹⁶⁶ «Հայկական աղբյուրները Աղա-Մահմադ խանի անդրկովկասյան արշավանքների մասին», էջ 97:

¹⁶⁷ საქართველოს სიძველეები, III, ტფ., 1910, გვ. 311.

եթէ պատերազմ եւս ոչ ունիցէք՝ ի պակասիւն Հացին տրեսցի ժողովրդեանն ի փոխ, որով թարց իրէք վնասու ունիք օժանդակ լինիլ նոցա, բայց ասեմ, զի մի յաճախիցէք զհրամանագիրս ի վերա շտեմարանապահացն բաժանել զհացս արեղայից եւ երգեցողացն, այլ իւրաքանչիւր ոք բավականացի իւրով ապրուստին»:

Անդրադառնալով Վրաստանի անվտանգութեան եւ արտաքին հարաբերութիւններն ինդրին, Հովսեփ Արղութեանը խորհուրդ է տալիս Գեորգի թագաւորին ունենալ պատրաստի զորք, որքան հնարավոր է շատ, որովհետեւ «թարց զօրաց սուտ են ամենայն ջանք, որոց եւ տացի ուճիկ ի հանքացն»: Մշտական բանակի ծախսերը հոգալու համար անհրաժեշտ է աշխատանքային վիճակում պահել հանքերը, այլեւ «ի շեն պահել շրջակայ գիւղորայս նոցին, առանց որոց ոչ գոյ ինչ հաստատութիւն հանքացն»:

Ավարտելով այն միջոցառումների թվարկումը, որոնք իր կարծիքով կարող էին նպաստել Վրաստանի քաղաքական ու տնտեսական կայունութեան ամրապնդմանը, Հ. Արղութեանը անցնում է Հայ-վրացական հարաբերութիւններն բարելավման անհրաժեշտութեան հիմնավորմանը: Ակնարկելով Գեորգիի 1790 թ. համաձայնութիւնը Լոռու գավառը Շահամիր Շահամիրյանին ժառանգաբար տնօրինելու մասին հրովարտակ շնորհելու հանգամանքը, Հ. Արղութեանը պահանջում է. «ԶԼոռին, զոր հաստատ գրով շնորհեալ էք աղայ Շահամիրին եւ նա եւս յանձնեալ է ի Մէլիք Ապովն, հաստատ պահանջիք զայն ուխտ, որով ոչ թէ ի հովանավորութիւն ձեր հրավիրէք միայն զհնդկարեւակ Հայս, այլեւ Կարսն եւ Ախլցխայն դատարկեալ բնակչօք նոցա՝ լնանելոց են Փանքակն եւ Բօրչալուն»:

Հ. Արղութեանը Հայ-վրացական հարաբերութիւններն կարգավորման կարեւոր հանգամանք է համարում նաեւ հավատարմութեան ու պարտավորվածութեան փոխադարձութեան պայմանը երկու ժողովուրդների միջև: Նա Գեորգիից պահանջում է. «Որովհետեւ ի ձեզ պարծեն միշտ Հայք եւ ուրախ են, թէ՛ ունիմք մեր թագաւոր ի սերնդոց թագաւորացն մերոց, պարտ է Ձեզ եւս բանիւ եւ գրով զհայրական իմն խնամ ցուցանել նոցա, զի տեսանելով զայդ, որպէս եղեալքն ընդ Հովանեաւ ձերով Հայք՝ ջերմեռանդաբար ծառայեսցին Ձեզ, նոյնպէս եւ արտաքինքն զիմեսցին ի հովանավորութիւն Ձեր»:

Հովսեփ Արղութեանը Գեորգիից հատուկ վերաբերմունք է պահանջում էջմիածնի կաթողիկոսական Աթոռի նկատմամբ. «Զպատրիարքական Ա-

թոռն սուրբ էջմիածին եւ զսրբազան Պատրիարք հոգեւոր տեսուն ամենայն Հայոց միշտ ունիցիք ի պատուի եւ մի հատչիք ի նմանէ դնպատս եւ զմխիթարութիւն, խնամելով զնա որպէս իսկական թագաւոր Հայոց»:

Ավարտելով իր գրավոր առաջարկութիւնները, Հ. Արղութեանը տեղեկացնում է, թե ունի նաեւ բանավոր հաղորդելիքներ, որոնք «ի լուսավորագուցնեզ որդւոյն Ձերմէ գիտալիք զիմս վասն Ձեր գիտրհուրդ եւ զգիտաւորութիւն»:

Հովսեփ Արղութեանը 1798 թ. մարտի 25-ին Պետերբուրգից Գեորգիին գրած իր հաղորդ նամակում ցավակցութիւն է հայտնում նրան հոր մահվան կապակցութեամբ, շնորհավորում նրա զահակալութիւնը եւ խորհուրդ է տալիս Վրաստանում գահակալական պայքարը թուլացնելու համար «չահելով զստահական ածել ի հնազանդութիւն» եւ ի վերջո «գլանձնարարութիւն բոլոր ազգին, որպէս իսկական թագաւորի Հայոց, փութով զորդին ուղեւորել արժանաւոր պատասխանաւ ի դուռն կայսերական»¹⁷⁷:

Պարսկաստանում գահ բարձրացած Բաբախանը Գեորգի 12-րդից պահանջում է խզել կապերը Ռուսաստանի հետ եւ որդուն պատանդ ուղարկել Պարսից արքունիք, խոստանալով նրան հանձնել Երեւանի, Գանձակի, Շաքիի ու Շիրվանի կառավարումը, իսկ հակառակ դեպքում՝ սպառնում էր արշավել Վրաստան: Այդ պահանջը Գեորգի թագաւորը ստանում է 1798 թ. հուլիսի 3-ին: Դավիթ Արքայազնի իսկ վկայութեամբ «քանի որ ես գահի ժառանգորդն եմ և գտնվում եմ ռուսական ծառայութեան մեջ, ապա Բաբախանի հորդորումները մնում են ավելի համառ»: Բաբախանի վերջնազերը առավել մեծ խուճապ է առաջացնում Վրաստանում: Պետերբուրգից Վրաստան վերադարձած Դավիթ Արքայազնը Բաբախանի պահանջի մասին 1798 թ. հունիսի 28-ի նամակով տեղեկացնում է Հովսեփ Արղութեանին, թե «Թագաւորը հրամայել է, որպեսզի դու հայտնես իշխան Բեզրորդկոյին և Կուրակինին, որ մեր գրութիւնը չափազանց ծանր է ... Աշխատիր, խնդրում եմ, եթե գնահատում եք Վրաստանը և ակնկալում եք նրա օժանդակութիւնը, ապա գտեք այդ գործի համար որևէ դեղամիջոց»¹⁷⁸:

¹⁷⁷ Մատենադարան, ձեռ. 2951, թ. 163բ: Հ. Արղութեանի այս նամակը մեզ է հասել միայն համառոտագրումով եւ ավարտվում է հետեւյալ գրառումով. «Զայլսն ի յորդուոյն եւ ի քնեազ Գեօրգուն գիտիլ», ասել է, թե հանգամանորեն բերանացի նրան կհաղորդեն Պետերբուրգից Վրաստան վերադարձող Դավիթ Արքայազնը եւ վրաց դեսպանութեան քարտուղար, իշխան Գեորգի Ավալիշվիլին:

¹⁷⁸ Армяно-русские отношения..., IV, с. 478.

Ստեղծված քաղաքական ծանր իրադրություններից շուտափույթ իրական օգնություն ստանալու երաշխիքներ չունենալով, Գեորգի 12-րդը ժամանակ չահելու նպատակով հակվում է մի կողմից Պարսից արքունիքի հետ բանակցությունները շարունակելու եւ, մյուս կողմից, ինչպես հաղորդում է Դավիթ Արքայագնը, Թուրքական սուլթանի հովանավորությունը խնդրելու մտքին. «Եվ նման վտանգավոր դեպքում Գեորգի թագավորը, վախենալով Պարսից Բարա խանի զայրույթից, ցանկանում էր խնդրել Մեծ սուլթանին, որպեսզի Վրաստանին ընդունի Թուրքական կայսրության հովանավորության ներքո: Սակայն այդ քայլի անհաճո հետևանքների կանխատեսումները նրան ետ պահեցին այդպիսի ցանկությունների իրականացումից»¹⁷⁹:

Տեղեկանալով այդ ամենի մասին եւ դիտակցելով ինչպես Վրաստանի, այնպես էլ Այսրկովկասի վրա կախված վտանգի իրական ու լուրջ լինելը, Հ. Արղուսյանը շտապում է Ռուսական իշխանություններին իր կողմից եւս հորդորել՝ միջամտելու Այսրկովկասյան գործերին եւ անընդհատ շտապեցնում է Գեորգի 12-րդին՝ դեսպանություն ուղարկել Ռուսաստան: Հ. Արղուսյանը նամակագրությամբ բանակցություններ էր վարում նաև Վրաց արքունիքի ազգեցիկ անձնավորությունների ու նաև Թիֆլիսի հայ համայնքի՝ արքունիքին մոտ կանգնած գործիչների հետ: Այդ առումով ուշադրավ են 1798 թ. սեպտեմբերի 9-ին նրա գրած նամակները Դավիթ Արքայագնին եւ իր եղբորորդի Սողոմոն Արղուսյանին: Սեպտեմբերի սկզբներին ստանալով Դավիթ Արքայագնի նամակը, որտեղ հայտնվում էր Բարախանի մոտ Վրաստանից դեսպանություն ուղարկելու մասին, Արղուսյանը իր պատասխան նամակում գայրույթով գրում է. «Յուլիսի 21-էն զիրդ յամսոյս ընկալաք ընդ պարոն Լաչկարովին եւ քննադ Գարսեվանին եւ զարմացաք, որ զուք աճապարէք Յիցի որդի թաւադ Գեօրգիին զրկել առ Բարախանն, իսկ աստ ոչ եթէ զոք առաքէք, այլ մեր զրկած Աւալի որդին եւս պահէք եւ մէկ օրինաւոր թուղթ չգրէք ոչ առ ամենաողորմած կայսրն, ոչ առ լուսաւորազունն զքնագնն եւ ոչ առ ձեր դեսպանն.»¹⁸⁰:

Սողոմոնին ուղղված նամակում եւս կրկնելով իր զարմանքը, Հ. Արղուսյանը ավելի մանրամասն տեղեկություններ է տալիս ստեղծված իրադրության մասին. «Ձարմանամ ես յոյժ ի յիմաստութիւնէ արքային մերոյ,

¹⁷⁹ Давид Царевич Грузинский, Краткая история Грузии, с. 59.
¹⁸⁰ Մատենադարան, ձեռ. 2951, էջ 215բ–216ա:

որ պատրաստեալ է զաներն իւր առաքել ի Պարսիկս»¹⁸¹ եւ աստ մինչեւ ցայսօր ոչ եթէ զաներն, այլ մեկ ծառայ եւս ոչ առաքեաց եւ որպէս օրէնն էր, ոչ ծանոյց մեծի կայսերն զվախճան հօրն իւրոյ եւ իւր յաջորդելն զաթոռ նորա, ոչ այս միայն, մէկ օրինաւոր եւ ըստ կարգի գիր ոչ զրեաց մինչեւ ցայսօր, ոչ առ թագաւորն, ոչ առ լուսավալլ քննագնն եւ ոչ այլ առ դեսպանն իւր»¹⁸²: Չգիտեմ որպիսի անբախտութիւն է այդ երկրի տիրեալ. ոչ իմ այնքան աշխատանքն եւ գրածն ազգեաց իւրեանց եւ ոչ այդքան տառապանքն, ահն եւ երկիրն, զորս կրէք, եւ ոչ պարոնի որդի Դաւիթի ասա դալն եւ մեծամեծ խօսիլն եւ այդր լուին. ուր է իւր խոստումնքն, որ ասէր շուտով գալ: Իսկ ողորմած կայսրն մեր սպասէ դոցա մարդոյն եւ կամ դարձին Աւալի որդի Գեօրգիւն, որ եթէ կամին մտանել ենթ հովանաւորութեան իւրոյ, յայնժամ ցուցցէ զիւր ողորմութիւնն մեծ, որ ահա ունի պատրաստեալ, աւելի քան, զոր ինքեանք կամէին. թագ, ծիրանի, թուր, կաւալէր, աստղ եւ այլն ամենայն՝ իւրն եւ ժառանգին, եւս եղբարցն, զօրքն եւս պատրաստ է: Վասն ձեր՝ վերստին եւ այնց տեղեացն կամի տիրալ, ուր մեք շրջեցաք: Կոտածի ժառանգին ծանոյց, որ զնոսա մերն գիտասցէ եւ լուսցի: Աւելի ի՞նչ առնէ, չգիտեմ, մինչեւ խոնարհեցաւ եւ ինքն զրեաց առ արքայն, առ ժառանգն եւ առ ձեզ, ողորմութիւն տեսուն ընդ ձեզ է, մի երկնչէք»¹⁸³:

Հասկանալով հանդերձ Ռուսական արքունիքի նման պատրաստակամություն իրական պատճառները, Հ. Արղուսյանը այնուամենայնիվ այդ

¹⁸¹ Վրաստանում լուրեր էին տարածվում, թե իրք պարսկական բանակն արդեն ժամանել է Ասորպատական եւ մտադիր է արշավելու Վրաստան: Այդ է պատճառը, որ Գեորգի 12-րդ իր աներոջը՝ Գեորգի Յիցիշվիլու, մոտ մեկ հազար ուսուլու արժեքի չափով նվերներով ուղարկում է Պարսից արքունիք: Սրանով նա ցանկանում էր ժամանակ չահել՝ մինչ օտանդակություն կատարար Ռուսաստանից: Պարսկաստան մեկնելու ճանապարհին Գեորգի Յիցիշվիլին տեղեկանում է, որ Բարա խանը այդ ժամանակ գրադված էր Խորասանի, բախտարների եւ Բենդեր Արասի շրջանում ծագած ապստամբությունների ճնշման խնդրներով, ուստի այլևս չի շարունակում ճանապարհը եւ շուտափույթ վերադառնում է ետ (П. БУТКОВ, նշվ. աշխ., II, էջ 445):
¹⁸² Գեորգի 12-րդի 1798 թ. հոկտեմբերի 11-ով թվագրված հավատարմագրերը Գ. Ծավաճավաճիին են հասել միայն նույն թվականի դեկտեմբերին՝ Գեորգի Ավալիշվիլու միջոցով (տե՛ս ն. Ըշխոյնջոջո. Յարեցան Յարեցանոս Եսեյանցի-Օսոյանցի մեղջոյնջո, ՅՅ. 148.
¹⁸³ Դիւան հայոց պատմութեան, գիրք թ. էջ 192-194: Մատենադարան, ձեռ. 2951, էջ 214ա: Հ. Արղուսյանի նամակում նշված է հրուսթյան թվականը, այլ նամակի վերջում գրված է միայն ամսաթիվը՝ «սեպտեմբերի 7»: «Դիւան»-ում այս նամակը հրատարակված է 1795 թվականի ներքո: Իրականում այն գրվել է 1798 թ.

բացատրում էր իր թափած ջանքերով. «այս ամենայն ծանուցեցաւ արքային եւ արքայորդուոյն, ես իմ պարտուցս զերծայ, այժմ ինքեանք զիտասցեն»¹⁸⁴ եւ ղեռեւս հույս ունեւր ռուսական զորքի մտնելուց հետո Այսրիովկասում տեսնել Ռուսաստանի հովանու տակ գոյատեւող Հայ-վրացական միացյալ թագավորութիւն: Բացատրելով իր ջանադրութեան զրգապատճառներն ու նպատակները, նա հիշեցնում է. «Իմ կամքն է ծաղկեցուցանել զդոսս եւ կոչել ոչ միայն թագավոր Վրաց, այլեւ Հայոց»¹⁸⁵: Անդրադառնալով Պետերբուրգում գտնվող հայ մելիքների ճակատագրին, Հ. Արղությանը գտնում է, որ նրանց «բանն կախեալ կայ ի դոցանէ (իմա՝ Վրաստանի ճակատագրից – Պ. Ջ.) եւ Աստուծով լալ եւ լինելոց, ասա նոցին ընտանեացն՝ լինիլ միամիտ»¹⁸⁶:

Բերված այս նամակը ցույց է տալիս, որ եթե 1780-ական թվականներին Հ. Արղությանը ղեռեւս հնարավոր էր համարում Հայկական թագավորութեան վերականգնումը, ապա 1790-ական թվականներին վերջերին այլեւս միակ հնարավորը համարում էր Հայ-վրացական միացյալ թագավորութեան ստեղծման հեռանկարը: Կասկածից վեր է, որ նա միայնակ էլ էր իր այդ տեսակետի մեջ, նրան հետեւում կամ համախոհ էին նաեւ հայազգի հասարակական այլ գործիչներ եւ:

1798 թ. կրկնորդ կեսին ինչպես Ռուսական արքունիքը, այնպես էլ Հ. Արղությանն ու Արցախի մելիքները սպասման մեջ էին: Ստեփան Դավթյանին ուղղած նամակներում Հ. Արղությանը շեշտում էր սպասողական այդ վիճակը. «Ի Վրացտանու սպասելն մարդոյ՝ առաքեցելոյ ի նոցանէ եւ սոցա՝ ըստ ամենայնի ձեռնտու պատրաստ լինիլն նոցա, վասն պահպանութեան իւրեանց»¹⁸⁷, գրում էր նա իր 1798 թ. սեպտեմբերի 30-ին ուղարկած նամակում, իսկ նույն թվականի դեկտեմբերի 2-ին «քնեազ Սոլոմոնին ու պարոն Եսայուն» գրած նամակում հիշեցնում էր Պետերբուրգում սպասողական վիճակը «զալստեան քնեազ Ավալովին»¹⁸⁸:

1798 թ. դեկտեմբերին Պետերբուրգում ի վերջո ստացվում է Գեորգի 12-րդի կողմից Ռուսական արքունիքին ուղղված դիմումը, որտեղ առա-

¹⁸⁴ Մատենադարան, ձեռ. 2951, էջ 214ա:

¹⁸⁵ Նույն տեղում:

¹⁸⁶ Նույն տեղում:

¹⁸⁷ Նույն տեղում, էջ 218ա:

¹⁸⁸ Նույն տեղում, էջ 234ա:

ջարկվում էին այն պայմանները, որոնց ընդունելու դեպքում հնարավոր էր համարվում ապավինել Ռուսաստանի հովանավորութեանը:

1798 թ. դեկտեմբերի 15-ին Գրիգոր վարդապետին ուղղած նամակում Հ. Արղությանը ծանուցում է. «Վրաց Գորկի արքայի բուր թագավորութիւնն իւր մատուցանելն»¹⁸⁹ ի խնամակալութիւն կայսերն մերոյ եւ սոցա պատրաստիլն առաքել ամենայն շուք թագավորական հաստատուն դաշամբ Վրաց արքայի զբոլոր բանն իւր՝ մեզ յանձնելն ընդ քնեազ Գարսեվանին»¹⁹⁰: Ի՞նչ է նշանակում «մեզ յանձնելն»: Պետերբուրգում Գեորգի 12-րդի նամակի ստացվելուց անմիջապես հետո՝ դեկտեմբերի 16-ին, Վրաստանի ղեսպան Գարսեւան Ճավճավաձեւն Ռուսական արքունիք է ներկայացնում Գեորգի 12-րդի 11 կետից բաղկացած պահանջները: Առաջարկվում էր Վրաստան առաքել 3000-անոց մշտական զորք՝ Վրաստանի պահպանութեան համար, թուլլատրել Արցախի մելիքներին հպատակ ժողովրդի հետ միասին եւ Վրաստան ներգաղթելու ցանկութիւն հայտնած Ուրմիայի շրջակայքում ապրող քրիստոնյաներին (հայեր եւ ասորիներ) ընդունման եւ տեղափոխման արտոնում, վրաց-պարսկական հարաբերութիւնների բարելավում եւ այլն: 1799 թ. հունվարի 1-ին Պետերբուրգից Գրիգոր վարդապետին գրած նամակում Հ. Արղությանը գոհունակութեամբ նշում է. «Վրաց բանն ընկալնուլն թագաւորին եւ պատրաստելն զամենայն ըստ խնդրոյ նորին. նոյնպէս եւ մէլիքացն բան՝ լինիլն բարեոք»¹⁹¹: Հայ հասարակական գործիչները հասկանում էին, որ Այսրիովկասում հայ ժողովրդի ազատագրման հարցի լուծումը շարկապվում է Ռուսաստանի քաղաքականութեան հետ, իսկ այն կառուցվում էր միջազգային հարաբերութիւնների բոլոր հանգամանքների հաշվառումով եւ պայմանավորվում էր առաջին հերթին Ռուսաստանի հեռամետ նպատակները իրականացմամբ: Ըստ այդմ էլ հայ գործիչները ստիպված են լինում որոշակիացնել իրենց պահանջները, դրանք իրական հողի վրա ղեկել, միահյուսել այն Ռուսաստանի քաղա-

¹⁸⁹ Հ. Արղությանի մեկ այլ նամակից, որ նա գրել էր Գեորգի թագավորին 1798 թ. դեկտեմբերի 16-ին, պարզվում է, որ ստացվել էին նաեւ գաղտնի նամակներ, որոնց բովանդակութեան մասին Արղությանը լուռ է: Իր նամակներում նա գրանցել է միայն, որ ինքը պատասխան է ուղարկել թիֆլիս «առ Գեորգի արքայն, յարքայորդուոյն եւ մեր Սոլոմոնին՝ ընդ գաղտնի թղթոցն իւրեանց» (Մատենադարան, ձեռ. 2951, թ. 238ա):

¹⁹⁰ Մատենադարան, ձեռ. 2951, էջ 237ա-բ:

¹⁹¹ Նույն տեղում, էջ 141բ:

քականության հետ և որոշակի փուլեր սահմանել վերջնական նպատակին հասնելու համար:

Ռուսաստանի համար Այսրկովկաս մուտք գործելու համեմատաբար անադմուկ միջոցը Վրաստանի հովանավորի դերում հանդես գալով այնտեղ Ռուսական զորք մտցնելու ուղին էր: Մեխիքների ու Արցախի հարցը լծորդվում էր առաջին փուլում ռուս-վրացական հարաբերությունների զարգացման ընթացքի հետ, և հայ գործիչները անհամբեր սպասում էին այդ հարաբերությունների զրական՝ երկուստեք ընդունելի տարբերակով, զարգացմանը: Ռուսաստանի նպատակների իրականացումը, ըստ հայ գործիչների, պետք է տեղի ունենար ոչ թե ի հաշիվ Վրաստանի ու վրաց ժողովրդի շահերի ու իրավունքների սահմանափակման, որի հետ սերտորեն պայմանավորվում էին նաև հայ ժողովրդի շահերը, այլ հանուն այդ շահերի ընդլայնման ու արմատական պաշտպանության: Նշված հարցերի պարզաբանման էր նվիրված Ս. Լ. Լաչկարովի և հայ մեխիքների միջև 1798 թ. դեկտեմբերի 21-ին կայացած զրույցը, որի մասին հաշվետվության կամ ավելի ճիշտ՝ սղագրության մեջ նշվում էր, թե մեխիքները այն հարցին, թե «Ու՞ր կնախընտրեն տեղափոխվել. Վրաստան, թե՞ Ռուսաստան», պատասխանեցին, որ «իրենց համար միևնույն է՝ Ռուսաստանում ապրել թե՛ Վրաստանում, որովհետև և սա նույնպես Ռուսաստանի ենթակայության ներքո է, ինչպես և իրենք ռուսներն են, սակայն թողնելով այդ Բարձրագույն վճռին և տեղափոխված լինելով արդեն Վրաստան, Քրդստանում և Բայազետում ապրող մյուս հայերին ավելի հարմար կլինի ժամանակ առ ժամանակ տեղափոխվել և բազմապատկել իրենց քանակն ու զորությունը, քան այն դեպքում, եթե իրենք տեղափոխվեն Ռուսաստան, որպիսի հարմարությունից քրդստանի և բայազետցի հայերը Ռուսաստանի սահմանների հեռավորության պատճառով կզրկվեն, որն այս վերջիններիս համար, որոնց թիվը հասնում է մինչև 60 հազար ընտանիքի, ցավալի կլինի, քանզի և նրանք, տառապելով հազարացիների լծից, որի ներքո գտնվում են, խիստ կցանկանային միավորված լինել իրենց՝ մեխիքների, հետ՝ կառավարման ու գատավարության համար և որպեսզի լինելով միևնույն ազգի և դավանանքի՝ մնային իրենց հետ, և որ այս բոլորը նրանք՝ մեխիքները, հանձնում են Նորին Բարձրագույն Մեծության կամքին՝ իրենց փրկությունը սպասելով միայն նրանից»¹⁹²:

¹⁹² Армяно-русские отношения..., IV, с. 489.

1799 թ. փետրվարի 11-ին Ռուսաստանի Արտաքին գործերի կոլեգիան պատասխան նոտա է հանձնում Գարսևան Ճավճավաձեին՝ 1798 թ. դեկտեմբերի 16-ին նրա ներկայացրած պահանջների քննարկման արդյունքների մասին: Գ. Ճավճավաձեին պատասխանում են, որ 3000-անոց զորքի պահանջը կատարվում է, հայ մեխիքները իրենց հպատակ ժողովրդով կզրկվեն Վրաստանի ենթակայության ներքո, սակայն պետք է իրավունք ունենան անհրաժեշտության դեպքում անկաշկանդ փոխադրվելու Ռուսաստան:

Վրաց-ռուսական հարաբերությունների նման զարգացումը շուտով հայանի է դառնում ինչպես Այսրկովկասում, այնպես էլ Պարսկաստանում: 1799 թ. մայիսի 15-ին էնզելիում ռուսական հյուպատոս Մ. Սկիրինսկին գրում է Արտաքին գործերի կոլեգիա. «Բաբա-խանը Շուշիի Իբրահիմ խանից տեղեկություն է ստացել, որ Ռուսական զորքերը գալիս են Վրաստան, որպեսզի գրավեն նաև Երևանը ու Ղարաբաղի հայերին տեղափոխեն Վրաստան ու Մոզդուլ: Ուստի Բաբա-խանը հրամայել է Սուլեյման խանին զորքերի մի մասը առաքել Երևան՝ կայազորի փոխարեն և բերդում ունենալ Ղաջար երևելիներից մեկը, որի հրամանատարության ներքո լինի նաև կայազորը, իսկ Իբրահիմ խանին գրել է, որպեսզի ետ պահի հայերին փաղաքանքով»¹⁹³:

Ռուսական արքունիքը Մ. Սկիրինսկու միջոցով Բաբա-խանից պահանջել էր չմիջամտել Վրաստանի գործերին, որովհետև Վրաստանը գտնվում է Ռուսաստանի հովանավորության ներքո¹⁹⁴: Այսրկովկասում գործողությունների ծավալման համար կարծես ամեն ինչ արդեն արվել և պատրաստ էր, սակայն ժամանակն անցնում էր, իսկ զորքերը չէին շարժվում: Հ. Արզումբյանի կարծիքով այդ դանդաղումը պայմանավորված էր Ավստրո-ռուսական հարաբերություններով. «Իմփերատորի եղբոր գալուստն աստ (իմա՝ Պետերբուրգ - Պ. Չ.) և նշանվիլն ընդ Աղէքսանդրիա Պավլովին: Վասն այսմ ևս փոքր ինչ յամիլն գ՛վրաց բանն»¹⁹⁵:

1799 թ. փետրվարին Պետերբուրգում և Վրաստանում արդեն տեղեկակ էին Պավի Առաջինի կարգադրությունների մասին. «Արքայի ամենայն պարզեւքն, որպէս յառաջ գրեալ եմք, պատրաստի գդն, զորացն և թփիցն հրաման լինիլն գնալ առ յինքեանս... Կալավիլնցիկը՝ սկիզբն գնալն ի

¹⁹³ АВПР, ф. СРП, оп. 77/6, д.490, л.16-17.

¹⁹⁴ Կ. Եթովթոջոջ, նշվ. աշխ., էջ 154:

¹⁹⁵ Մատենադարան, ձեռ. 2951, էջ 252ա (Հ. Արզումբյանի նամակը «առ քնեպն Սոյոմօն և Զաքարիայն ի Թիֆլիզ» 1799 թ. փետրվարի 25):

բաղձանքով՝ իրեն տեսնելու անկախություն մեջ և լինելու սեփական տիրո-
ղի կառավարման ներքո: Ղարաբաղի մարզում, որպես Հին Հայաստանի
միակ մնացորդի, որ պահպանել է իր անկախությունը սեփական տիրողնե-
րի իշխանությունների ներքո, այս ազգը Աստծո օգնությունը և նրանից անբա-
ժան Համառուսաստանյան կայսրության հզոր հովանավորությունը ցան-
կանում է միայն այդ հույսը: Ներկայիս այդ մարզի կեղծքումը մահմեդա-
կանների լծի տակ ոչ միայն Հայոց ազգի համար է այդ հեռանկարը սահ-
մանափակում, այլև այնտեղի ամրակուռ վայրերին տրեկով՝ Ղարաբաղում
պարսիկների հաստատումով, իրենց բնական դիրքով՝ Կովկասի կիրճերում
գրեթե անառիկ, Համառուսաստանյան բարձրագույն կայսերական արքուն-
ների (հովանու տակ գտնվող) Վրաստանը ես վտանգվում է՝ նրանց հաճա-
խակի ու անակնկալ, անհանդուստություն և ավերածություն թողնող հար-
ձակումների հետևանքով նրա այդ մասի սահմանների մերկացմամբ: Հենց
միայն Վրաց թագավորության բարօրության և ամբողջականության ապա-
հովման մեջ Համառուսաստանյան կայսրության մասնակցությունն առու-
մով այս (խնդրանքի) հարգումը արդեն այնքան համոզիչ է, որ պետք է
սպասել մելիքների այս խնդրանքի բարեհաճ լուծում»²⁰²: Մելիքների
խնդրանքին ընդառաջելը Ռուսաստանի համար նախընտրելի էր նաև այլ
առումով: Գրություն հեղինակը համոզված է, որ Ռուսաստանի հովանու
ներքո ստեղծվելիք Հայկական պետությունը արագորեն կամբարակալի,
կզառնա ամուր հենարան և կարևոր նշանակություն կունենա նաև Ռու-
սաստանի հետագա քաղաքականության համար²⁰³: Ելնելով այս հեռահար
նպատակները իրականացման անհրաժեշտությունից, զրուցյան հեղինակը
գտնում է, որ որպես առաջին՝ քայլ պետք է ընդառաջել մելիքների
խնդրանքին և նրանց ընկալության վայր հատկացնել Վրաց թագավորու-
թյան սահմանների մեջ մտած և մարդաթափ եղած Հայաստանի Ղազախ
գավառում²⁰⁴: Հայկական այդ գավառի վերականգնումը հավասարա-
պես ձեռնտու պետք է լինի և Հայ եւ թե Վրաց թագավորությանը: Ար-

²⁰² Այդ հանգամանքը հասկանում էր նաև Իրրահիմ խանը: 1796 թ. Վալերիան
Ջուրովին հղած նամակում նա գրում էր. "Երբ այս քաղաքը (իմա՝ Շուշին - Պ.
Չ.) պահպանվի ձեր կողմից, ապա կարող եք տիրել և տեղերը" (АВНР, ф.
СРА, оп.100/3, 1764-1800 гг., л. 462, л.48-49)

²⁰³ Նույն տեղում, էջ 506:

²⁰⁴ 18-րդ դարի վերջերին Ղազախ գավառը տարածվում էր մինչև Գիլիջան բնա-
կավայր, որտեղ և գտնվում էր գավառի թեմական կենտրոն Հաղարծնի վանքը
(տե՛ս Մատենադարան, կա թ. գիվան, թղ թ. 4, վավ. 9):

ցախի հայ մելիքներին ոգևորելու նպատակով առաջարկվում էր. Ա. Նվեր-
ներ ու շքանշաններ հանձնել մելիքներին: Բ. Վրաց թագավորին համոզել
նշված տարածքը զիջելու հայ մելիքներին: Գ. Հայ եւ վրաց կողմերի միջեւ
պայմանավորվածությունը ձեւակերպում տալ հանդիսավոր պայմաննե-
րում: Դ. Թուլյատրել մելիքներին ունենալու մշտական զորք եւ դրա հա-
մար նրանց վարկ տրամադրել:

Բացի վերոնշյալից, առաջարկվում է նաև «...ի նշան և ի հիշատակ
Հայ ազգի նկատմամբ հովանավորության, այս գաղութին տրամադրել մի
քանի հրետանային սարքեր... և այդ սարքերի օգտագործման մեջ հմտա-
նալու համար թուլյատրել այդ ազգից մի քանի մարդու ընդգրկել Վրաս-
տանում գտնվող Ռուսական զորքերում»²⁰⁵:

1799 թ. հունիսի 2-ին հրապարակվում է Պավել Առաջին կայսեր հրո-
վարտակը, որտեղ Արցախի մելիքներին հայտնվում է, թե ընդառաջելով ի-
րեն ներկայացված զեկուցագրերին, թուլյատրում է նրանց հպատակ ժո-
ղովրդի հետ միասին բնակություն հաստատել Կայսրության սահմաննե-
րում և կամ Ռուսաստանի հովանավորության տակ գտնվող Գեորգիի թա-
գավորության մեջ և ըստ մելիքների խնդրագրի նրանց վիճակը բարձրե-
լու նպատակով նշանակվում են թոշակներ և տրվում են շքանշաններ²⁰⁶:
Այդ հրովարտակին հաջորդում է Պավել Առաջինի նամակը Վրաց Գեորգի
12-րդին (1799 թ. հունիսի 3), որտեղ ծանուցում է նրան մելիքներին հպա-
տակ ժողովրդի հետ Վրաստանում բնակվելու թուլյատրություն տալու իր ո-
րոշման մասին, որտեղ նրանց պետք է տրվեն նաև որոշակի արտոնութ-
յուններ²⁰⁷: Այս նամակը հանձնվում է մելիքներին, որոնք պետք է այն
ներկայացնեն Գեորգի 12-րդին իրենց վերադարձի ժամանակ:

Այսպիսով, մելիքները Պետերբուրգում այլևս անելիքներ չունեին և
Վրաստանում լիազոր-մինիստր նշանակված և այնտեղ ճանապարհվելու
կարգադրություն ստացած Պ. Կովալենսկու հետ բռնում են տունդարձի
ճանապարհը: Հայտնի է, որ 1799 թ. օգոստոսին նրանք արդեն գտնվում
էին Աստրախանում, որտեղ և Մելիք Ջիմիչիկի անունով ստացվել էր Բա-
բախանի զեռուս 1799 թ. հունվարին գրված նամակը՝ նրան Պարսկաստան
վերադառնալու հրավերով և պարսկահպատակ մնալու առաջարկով ու

²⁰⁵ Նույն տեղում:

²⁰⁶ Նույն տեղում, էջ 507:

²⁰⁷ Նույն տեղում, էջ 507-508:

Պավել Առաջինի մանիֆեստի թիֆլիսում հրատարակման հանդեսին (1801 թ. փետրվարի 16-17):

1801 թ. մարտի 6-ին Պետերբուրգում մշակվեցին Քարթլ-Կախեթի նոր կառավարչության կանոնները, իսկ մարտի 11-ին Ռուսաստանի Անատոլիական գեներալ նահանգապետ նշանակեց Կնոբինգին: Պավել Առաջինի մահից հետո գահ բարձրացած Ալեքսանդր Առաջինի հրովարտակով (1801 թ. սեպտեմբերի 12) հայտարարվեց Վրաստանի միացումը Ռուսաստանին:

Ռուսաստանի կազմում վրաց պետականության վերացումից հետո բնականաբար հայ ժողովուրդը չէր կարող Հայոց անկախ պետականության վերականգնման կամ ստեղծման պատրանքներ ունենալ, սակայն Ռուսաստանի հետագա առաջխաղացման մեջ տեսնում էր երաշխեքներ իր ֆիզիկական, տնտեսական ու մշակութային գոյության պահպանման համար: Ուստի ողջունելով Ռուսաստանի մուտքը Այսրկովկաս, հայազգի գործիչները ըստ ամենայնի շարունակում էին աջակցել ռուսական արտաքին քաղաքականության իրականացմանը նաև հետագայում:

4.4 ՌՈՒՍ-ԹՈՒՐԿԱԿԱՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՒ ՀԱՅ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ռուսաստանին Այսրկովկասի միացմանը անմիջականորեն նախորդած շրջանում հայ գործիչների կողմից միջազգային հարաբերություններին հետևելու և այն իրենց ծրագրերում հաշվառելու պատմությունը ուսումնասիրությունները ևս հայազգիության ուշադրավ խնդիրներից է: Այսրկովկասի նվաճման առաջիկ լուրջ նախապատրաստմանը ձեռնամուխ լինելով արդեն իսկ 1760-1770-ական թվականներից, Ռուսաստանը ձգտում էր ոչ միայն քայլ առ քայլ այստեղ ամրապնդել իր ներկայությունը, այլև փորձում էր հետզհետե թուլացնել և ապա չեզոքացնել թուրքիայի և իրանի ազդեցությունը նշված տարածաշրջանում:

Հայտնի է, որ Ռուսաստանի մուտքը Այսրկովկաս մտահոգում էր նաև եվրոպական երկրներին, մասնավորապես՝ Անգլիային և Ֆրանսիային, որոնք հրահրում էին թուրքիային և իրանին՝ պահանջելով ավելի համառ ջանքեր գործադրել Ռուսաստանին դիմադրավելու գործում՝ խոստանալով իրենց դիվանագիտական ու ֆինանսական աջակցությունը²¹⁵:

²¹⁵ А. Р. Иоаннисян. Присоединение Закавказья к России и международные отношения в начале XIX столетия, с. 31-33. О. П. Маркова. Россия, Закавказье и между-

Հայ հասարակական-քաղաքական գործիչները, որ ուշի ուշով հետևում էին միջազգային հարաբերությունների զարգացմանը և փորձում նպաստել հայ ժողովրդի ազատագրմանն ու անկախության վերականգնմանը, հիմնականում միանշանակ կողմնորոշվել էին դեպի Ռուսաստան, ձգտելով օժանդակել նաև ռուսական դիվանագիտությանը՝ հաղթահարելու մրցակից պետությունների դիմադրությունը և նպաստավոր պայմաններ ստեղծել ռուսական ռազմական օժանդակությունը Այսրկովկաս հասցնելու համար: Այդ նպատակով ԺԸ. դարի 90-ական թվականներին որոշակի ջանքեր էին գործադրում Ռուսահայ գաղթօջախի ներկայացուցիչները և հատկապես Ռուսահայ թեմի առաջնորդ Հովսեփ արքեպիսկոպոս Արղունյանը: Հայ հասարակական-քաղաքական ու եկեղեցական գործիչների զբաղվածություններում ժամանակի միջազգային հարաբերություններում տեղի ունեցող իրադարձությունները գնահատվում էին հայ ժողովրդի ազատագրման համար նպաստավորության տեսանկյունից ու չափանիշով:

Լրջագույն ձևով նախապատրաստվելով Այսրկովկասում իր տիրապետությունը հաստատելու համար, Ռուսաստանը 1796 թ. Աղա-Մահմադ խանին պատժելու պատրվակով գեներալ Վ. Զուբովի գլխավորությամբ Ռուսական բանակը ի վերջո շարժեց դեպի Այսրկովկաս: Ռուսական զորքերի արշավանքը կարծես գալիս էր ոչ միայն վերջակետ դնելու նախորդ տասնամյակների դիվանագիտական նախապատրաստական աշխատանքներին, այլև հիմնավորապես օգտագործելու ստեղծված առավել նպաստավոր նկատված առիթը՝ Այսրկովկասում վերջնականապես հաստատվելու համար: Նույն թվականին, սակայն, ռուսական զորքերի արշավանքի դադարեցումը ևս, անուշտ, չպետք է միանշանակ վերագրել գահ բարձրացած Պավել Առաջինի քմահաճույքին: Արդեն իսկ նշվել է, որ Պավել Առաջինի կովկասյան քաղաքականությունը ուներ իր տրամաբանությունն ու հետևողականությունը: Այդ ապացուցվում է նաև հայկական վավերագրերում պահպանված վկայությունների քննությամբ:

1796 թվականի վերջերից առավել բարդ իրավիճակ էր ստեղծվել եվրոպական մայրցամաքում, ուստի Պավել Առաջինը Այսրկովկասի, ապա և թուրքիայի ու իրանի նկատմամբ որդեգրում է որոշ սպասողական քաղաքականություն: Նա իր կառավարության դերքորոշումը շարադրում է 1797

народные отношения в XVIII веке, с. 298. Н. С. Княппина, М. М. Блиев, В. В. Дегоев. Кавказ и Средняя Азия во внешней политике России. М., 1984, с. 3-4.

թ. հունվարի 5-ին Աստրախանի նահանգապետ դեմեդա ի. Վ. Գուգուլիչին ուղղված կարգադրության մեջ: Նա թվարկում է յոթ հիմնական դրույթ, որով պետք է առաջնորդվեր իր վարչակազմը Կովկասի նկատմամբ իրականացվող քաղաքականության ժամանակ: Որպես առաջնահերթ նպատակ Պավել Առաջինը կարգադրում էր սպահովիկ Ռուսական տերությունից առկա սահմանների անվտանգությունը: Կովկասի և Այսրկովկասի ժողովուրդների նկատմամբ Պավել Առաջինը հրահանգում էր վարել բարի դրացիության քաղաքականություն, թույլ չտալ որևէ ճնշում հնարավորին չափ նրանց պահելով ռուսական ազդեցության ոլորտում: Որպես ժամանակավոր միջոցառում Պավել Առաջինը հրամայում էր Այսրկովկասում Ռուսաստանի հսկողության ներքո ստեղծել տեղական իշխողների դաշնակցային միություն²¹⁶, որն ի վիճակի կլիներ դիմադրավել օտար պետությունների ոտնձգությունները: Պավել կայսրը միաժամանակ հրահանգում էր ի. Գուգուլիչին հասկացնել Աղա-Մահմադ շահին, թե հակադրվելով Ռուսաստանին՝ ինչպիսի վտանգի է ենթարկում իրեն: Նա հրահանգավորում էր բարի դրացիական հարաբերություններ պահպանել թուրքիայի հետ:

1797 թ. Ռուսական զորքերի Այսրկովկասից հեռանալուն հայ ժողովուրդը հետևում էր մեծ տագնապով ու անհանգստություն: Վ. Զուբովի վերադարձի մասին Ղուկաս Կարենցին գրում էր Ե. Շահամիրյանին. «...առ տարաբախտություն մերոյ օրհասին մահու ժամանակ յիշեցիոյ մեծի Կայսերու-հւոյն, խափանեցավ զործն օգտակարագոյն աշխարհի, ըստ որում հարագատն նորին նորապսակ յաջորդն դարձ առնել ետ զօրացն՝ դամենայն ընդ ձեռամբ արկեսլան թողլով հնոց տիրողացն աւերչաց»²¹⁷:

1796-1797 թթ. Ֆրանսիան հեղափոխության նվաճումների պաշտպանությունից անցավ բացահայտ նվաճողական քաղաքականության՝ ընդգրկելով նաև Արևելքի երկրները: Գազ բարձրանալու իսկ առիթով հրապարակած իր շրջաբերականում Պավել 1-ինը հայտարարում էր. «Թե պետք է բոլոր հնարավոր միջոցներով գիմադրավել Ֆրանսիական հանրապետությանը, որ սպառնում է Եվրոպային «օրենքի, իրավունքի, ունեցվածքի ու բարոյականության լիակատար ոչնչացմամբ»: Բռնապարտի հաջողություններ ինչպես կենտրոնական Եվրոպայում, այնպես էլ թուրքիայում, լրջորեն սպառնում էին Ռուսաստանի շահերին: Փորձելով կանխել Ֆրանսիայի

²¹⁶ Н. С. Кинятина, М. М. Блиев, В. В. Дегоев, *նշվ. աշխ.*, էջ 92-93.
²¹⁷ Դիւան հայոց պատմութեան, հ. Ա-Բ, էջ 30-31:

առաջխաղացումը, Պավել 1-ինը արդեն իսկ Նապոլեոնի Իտալական ու եգիպտական արշավանքների նախօրյակին որոշեց օգտագործել թուրքիայի դժգոհությունը և նրան առաջարկեց իր նավատորմը՝ պաշտպանության համար: 1798 թ. ռուս-թուրքական նախնական համաձայնագրով Ռուսական նավատորմը ազմիրալ Ուշակովի հրամանատարությամբ մտավ Միջերկրական ծով²¹⁸: 1798 թ. օգոստոսի 23-ին (սեպտ. 2) թուրքիան պատերազմ հայտարարեց Ֆրանսիային²¹⁹: Ռուս-ֆրանսիական մրցակցության մեջ ակնհայտորեն մեծուում էր նաև Այսրկովկասի հարցը. և այդ ոչ միայն դուրս էր մնացել հայ գործիչների տեսողաշրջից, այլև այդ է պատճառը, որ իրենց զբաղություններում նրանք միանշանակ բացասաբար են արտահայտվում Ֆրանսիայի արտաքին քաղաքականության մասին: Այլ խոսքով, հայ գործիչները հետևում էին եվրոպական իրադարձություններին՝ որքանով այդ վերաբերում էր և կարող էր անդրադառնալ Այսրկովկասի ճակատագրին: Դեռևս 1792 թ. ապրիլի 17-ին Ղուկաս կաթողիկոսը Հովսեփ Արղությանին ուղղած նամակում, չլիսելով նրա անհանգստությունը, գրում էր. «Ֆրանսիոյ թագաւորութեան շփոթումն ու փախիկ իշխանութեան նշահիլն ևս յայտնի եղև մեզ: Իսկ նոքա թէ առժամանակ մի խոսքովին, յետոյ խաղաղանալ կարէն, բայց Հայաստան աշխարհին և ազգի մերում յԱստուծով խաղաղութիւն ծագեցից»²²⁰: Հովսեփ Արղությանը, որ գտնվելով Ռուսաստանում ու սերտ հարաբերությունների մեջ լինելով Ռուսական արքունիքի բարձրաստիճան գործիչների հետ, իրազեկ էր արքունիքում Այսրկովկասին ու ռուսահայոց խնդիրներին վերաբերող քննարկումներին, 1793 թ. փետրվարի 4-ին Պետերբուրգից գրում էր Աստրախան. «Ֆրանսիոյ թագաւորի սպանիլն տրամութիւն եղև ամենեցուն եւ բանից արգելումն...»²²¹: Վերջին արտահայտությամբ Հ. Արղությանը նկատի ուներ այն արտոնությունները, որին սպասում էր հատկապես Աստրախանի հայությունը, այն է՝ Ռուսահայությունը տնտեսական ու հասարակական միանման արտոնություններ չնորհելու խնդրագրի բավարարումը արքունիքի կողմից: Նապոլեոնի նվաճողական քաղաքականության հետա-

²¹⁸ А. П. Нарочницкий. Россия и наполеоновские войны за господство над Европой (сопротивление и приспособление).-“Проблемы методологии и источниковедения истории внешней политики России”, М., 1986, с. 93-94.
²¹⁹ А. Д. Новичев. Вторжение французов в Египет и франко-турецкая война 1798-1802 гг.- “Вопросы истории стран Азии”, Ленинград, 1965, с. 95-122.
²²⁰ Դիւան հայոց պատմութեան, գիրք Թ, Թիֆլիս, 1911, էջ 135:
²²¹ Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. 2951, թ. 12ա:

գա ծավալումը, մեծ անհանգստություն առաջացրեց և Ռուսաստանում և թե չայստանում:

1797 թ. Հուլիսի 31-ին Ղուկաս Կարնեցին տեղեկացնում է Հ. Արզուլ-յանին, թե «ոչ միայն ի Թիֆլիզու, այլև ի Պոլսոյ լսեմք զկատաղիլն տիրասպանինց ի վերայ Հոսովական տէրութեանն և ունիլ զգիտումն ի սահմանս կողմանդ, ուստի և յոյժ ցաւիմք: Տէր ցրուեսցէ զխորհուրդս նոցա և փրկեսցէ զերկիրդ յապականարար թուռնից նոցին»²²²:

Նապոլեոնի եզիպտական արշավանքի հետևանքների դրսևորումն է արձանագրում Երուսաղեմի Հայոց Պետրոս պատրիարքը, որը Ղուկաս Կարնեցուն 1798 թ. նոյեմբերի 11-ին գրած նամակում հաղորդում է. «յԱստուծագիտութենէ յանաստուածութիւն սահելով ապօրէն ազգն Գաղղիացւոց մեծահանդէս նաւուք բազմութեան յանկարծուստ իմն զԱղէքսանդր ծովեզր քաղաք պաշարեալ, յորմէլ գոսս իւր յեզիպտոս խաղացուցեալ զմարզիս սրոյ ճարակ տալով խուռն ամբոխիւք իբր անհամար թուով ի փոքր միջոցի զայն ինքեան իսկապես գրաւելոյ զկնի, շուրջ զնովաւ եղեալ զաւստսն սարսեալ դողացոյց ահ երկիրդի անողորմութեան նորին: Ահա այս ծայն հնչման նորին ոտից շարժման, մինչ յամի 1247 (1798) յամեանն յունիսի յաւուրս 28 եկել հասանէր յունկս ազարացի բնակչացն սրբոյն Երուսաղէմի, իսկոյն սոքա համայնաժողով գումարմամբ... զվանորայս առապուռ հարկանել զատամունս կրճտէին և զամինայն քրիստոնեայս ի սուր սուսերի մաշել: Զյետինն ոչ թոյլ ես Աստուած, բայց զառաջինն իրաւամբ կատարեցին...»²²³:

Հայերեն ծառընտրի մեջ կատարած իր գրառումներում Երուսաղեմի սրբոց Հակոբյանց վանքի միաբաններից մեկը հաղորդում է. «Այսօր սեպտեմբերի սկիզբն է, լուաք, թէ Սպանեօլ, Յրանկսրդ, Նեմսէ միաբանեալք են նորահաւատ իմն կրօնի սպասաւորութեան, նաև փափէն ԻԶ (26) Հազար քսակ առեալ են, զի մի քայքայեալ կործանեսցէն զՀոսով քաղաքն և այսոքիկ միաբանեալ ապստամբքն խոստացեալ են Տաճկաց թագաւորին ի միա-

²²² Армяно-русские отношения. IV, с. 458. Ուշագրավ է, որ Հնդկահայոց վերաբերմունքը Յրանսիայում տեղի ունեցող իրադարձություններին լիովին հակադիր էր և անգամ ֆրանսամետ՝ հակաֆրանսիական կողմիցիայի ստեղծումից ի վեր: Տե՛ս Մ. Մ. Ասլանյան, Յրանսիական մեծ հեղափոխության արձագանքները «Ազդարարում», - ՀՀ ԳԱ «Լրաբեր հաս. գիտ.», 1990, № 10, էջ 23-26:

²²³ Մաշտոցի անվան Մատենադարան, Կաթ. դիվան, թղթ. 258, վավ. 37, թ. 1, քնագիր: Հմմտ. Մաղաբիս. արքեպ. Օրմանեան, Ազգապատում, հատոր Բ, Ս. էջ-միածին, 2001, էջ 3676-3679:

սին Մօսկօֆ թագուհւոյն, որ զորեղութեամբն 30 տարի է պատերազմիլ ընդ մահմետականաց և սրբոյ խաչին զօրեղութեամբն յաղթօղ անուանեալ, երթան և ոչնչացուցանելով տիրելոց են երկիրն Ռուսաց...»²²⁴:

Հայ հասարակական և եկեղեցական գործիչների վերաբերմունքը Ֆրանսիական հեղափոխության նկատմամբ պայմանավորված էր նաև գեվանազիտական այն գործունեությամբ, որ վարում էր Նապոլեոնը իր արվանազիտական այն գործունեությամբ, որ վարում էր Նապոլեոնը իր արտաքին հարաբերությունները կարգավորելու նպատակով: Այսպես, գրավելով Եգիպտոսը, Նապոլեոնը հատուկ շրջաբերականով գիմում է Եգիպտոսի ժողովրդին և իր արշավանքը բացատրում և արդարացնում մամլուկների լծից նրանց ազատագրելու և մահմեդականությունը սատար կանգնելու իր մտահոգությամբ և վճռականությամբ: Երջաբերականը, բնականաբար, անհանգստացրել է հայազգի գործիչներին և այն թարգմանվել է հայերեն²²⁵: Ուշագրավ այդ շրջաբերականը, որ հայտնի է և հաճախ է օգտագործվում Նապոլեոնի Եգիպտական արշավանքի ուսումնասիրողների կողմից²²⁶, հետևյալն է.

²²⁴ Բարկեց Կիլիսեղեան, Յուցակ ձեռագրաց Անկիւրիոյ Կարմիր վանուց և շրջակայից, Անթիլիաս, 1957, էջ 17: Մէկ այլ լուսանցարութեան մէջ գրիչը հաղորդում է, թե «նաև այսմ աւուր լուաք նոր օրենք և հերձուած եղեալ ազգըն Յրանկսրդ Հոսովայ բնութեամբ և պատերազմա տիրեալք են, ոմանք ևս ստուգեցին, թէ ԻԶ (26) Հազար քէսէ տուգանք առեալ է փափէն, տէր այց արացէլ» (նույն տեղում): Նշված իրադարձությունները առավել ցավալի են ընկալվում Երուսաղեմում, քանզի նույն գրչի իսկ հավաստմամբ «Յրանսի ազգն առ մեզ գան ի սուր Գլխորի սեղանոյն, որովհետև Սպանեօլն է մարմին սրբոյն Յարազ ի վերայ Գլխորի սեղանոյն, որովհետև Սպանեօլն է մարման քալոյ, երեկոյն կորայ, առ ի պատիւ և մենք սիրոյ աղաղաւ տամք հրաման քալոյ, երեկոյն կորայ և առաւօտուն երթան» (նույն տեղում, էջ 15): Պաղեստինից Նապոլեոնի գործերի ետ քաշվելուց հետո ստեղծված իրադրությունն մասին արձանագրել է Մկրտիչ Ազգայնունին. «1800-ին, Պետրոս պատրիարքի օրով Մեծն Նարայեան իր գիտութեամբով Պաղեստինէն կը քաշուէր, լեռնական ֆէլլահները Ռէմլէի դատարկութենէն օգտուելով քաղաք մտած ու ամէն ինչ կողոպտելէ ու Հայոց Ս. տարկութենէն օգտուելով քաղաք մտած ու ամէն ինչ կողոպտելէ ու Հայոց Ս. Գէորդ եկեղեցին ևս թալիւնէլ յետոյ կը մեկնին ու կու գան հաստատուիլ Երուսաղէմ, Սիոնի թաղին մէջ: Աւարտունները գրչորը Ս. Փրկչի վանքը կը մտնեն, ստաճիկ կը յափշտակեն, կը խորտակեն պատերները, եկեղեցւոյն խաչկալը և պարտեզ մտնելով 33 ձիթենիներ արմատէն կը կտրեն ու կը մեկնին Ռէմլէ: Նոյն միջոցներուն Յուպլէի Ռեմլէի ու Երուսաղէմի վանքերը կինթարկուին մեծ նեղուցներուն» (Մկրտիչ Եպիսկոպոս Աղաւանդի. Հին վանքեր և եկեղեցիներ Սուրբ Երկրին մէջ. ուսումնասիրութիւններ, Երուսաղէմ, Տպարան Սրբոց Յակոբանց, 1931, էջ 92):

²²⁵ Մաշտոցի անվան Մատենադարան, Կաթ. դիվան, թղթ. 8, վավ. 98: Մեկ այլ օրինակ տես Վիեննայի Մխիթարյան Մատենադարան, ձեռ. 2217 (Յուցակ հայերէն ձեռագրաց Մխիթարեան Մատենադարանին ի Վիեննա, Գ, էջ 816-817 «Գրեցաւ ի բանակին զաղղիացւոց յԱղէքսանդրիա ժԳ յաւուր ամեանն Մեսիթօսի յամին վեցերորդի հասարակապետութեան: Ըստ մերս 1798 իբր յօգոստոս»):

²²⁶ Аел ар Рахам ар-Джабарти. Египет в период экспедиции Бонапарта (1798-1801), Перевод, предисловие и примечания Н. М. Фальштинского, Москва, 1962, с. 54-

տերազմեսցուք եւ յազմեմք թշնամեացն...»²⁴¹: Ռուսական զորքերը 1799 թ. աշնան վերջերին մտան Վրաստան: Ռուսական զորքերի հետ Այսրկովկաս վերազարձան նաև Արցախի մելիքները: 1801 թ. ամռանը Ֆրանսիական զորքերը ստիպված էին թողնել Եգիպտոսը²⁴²: Սակայն դեռևս մինչ Ֆրանսիայի եւ Օսմանյան պետության միջև հաշտության պայմանագրի կնքումը (1802 թ. հունիսի 26. Փարիզ) Գարսեան ձավճավաձեի Երևանից ստացած նամակում հաղորդվում էր, որ Բաբախանի մոտ Թեհրան էր ժամանել Ֆրանսիական կայսեր ներկայացուցիչը և խնդրել շահից նրա երկրով ազատ անցնելու իրավունք²⁴³: Այսրկովկասը հետզհետե ավելի մեծ չափով էր վերածվում անգլո-ֆրանս-ռուսական հակամարտության գոտու, որով և պայմանավորված էր Նապոլեոնի ուշադրության մեծացումը հայ և վրաց գործիչների հետ հարաբերություններ հաստատելու փորձերի մեջ²⁴⁴: Նրա ջանքերն ուղղված էին արդեն Ռուս-թուրքական պայմանագրից հետո Ռուսաստանի ձեռք բերած հաջողությունները ի չիք դարձնելուն, ռուս-թուրքական և ռուս-պարսկական հարաբերությունները սրելուն և Մերձավոր Արևելքում Ֆրանսիայի դիրքերը ամրապնդելու համար: Արդեն 1802 թ. Նապոլեոնը հանձնարարում է Մերձավոր Արևելքի իր գործակալներին՝ իրենց հովանավորության տակ վերցնելու Ասորիքի և Հայաստանի բոլոր քրիստոնյաներին²⁴⁵: 1801 թ. կնքված պայմանագրի համաձայն Անգլիայից ստանալիք ռազմական օգնության ձգձգումից պայրացած, Ֆաթ Ալի շահը չեղյալ է հայտարարում Անգլիայի հետ կնքած պայմանագրերը և էջմիածնի Դավիթ կաթողիկոսի խորհրդով նամակ է գրում Նապոլեոնին, որով օգնություն էր խնդրում նրանից: Նամակը Նապոլեոնին է հասնում 1805 թ. հունվարի վերջերին: Նապոլեոնը Իրան է ուղարկում արևելյան լեզուների գիտակ, 25-ամյա Ամադե ժորբերին²⁴⁶:

²⁴¹ Նույն տեղում:
²⁴² Այդ առթիվ Օսմանյան կայսրության մեջ տեղի էին ունենում տոնահանդեսներ և թնդանոթաձուլություններ, որի մասին հիշատակություն ունի Տեր Հովհան Խոջա-Օհանյանը:
²⁴³ А. А. Чагарели, *Նշվ. աշխ., վավ. 202*:
²⁴⁴ Н. Табагуа, Из истории франко-грузинских связей конца XVIII и начала XIX века, Тб., 1974, с. 13-34.
²⁴⁵ А. Р. Иоаннисян, Присоединение..., с. 107.
²⁴⁶ А. Р. Иоаннисян, Присоединение..., с. 86-89, 104-107. *՝ Ունեցվածք*. Նարեկյանները և պարսկացի-օսմանյան լեզուաբանությունը: Մոսկվայի համալսարանի հրատարակչություն, 2002, ԳԳ. 23. *՝ Ունեցվածք*. Նարեկյան-օսմանյան լեզուաբանությունը: Մոսկվայի համալսարանի հրատարակչություն, 1804-1810 Վեյբի (պրանցիական)

էջմիածին ժամանած գեներալ Գարգանի միջոցով Դանիել կաթողիկոսի մահից հետո էջմիածնի 7 եպիսկոպոսների ստորագրությամբ Նապոլեոնին գրած նամակում (1809 թ. ապրիլի 25) ասվում էր, թե «Առիթ ցնծութեան եղև բազմավիշտ հոգևորականացս և Արարատեան Աթոռոյն էջմիածնի մինչ յամն 1804 լուր եհաս յականջս մեր. թէ գիր ողորմութեան Ձերոյ կայսերական բարերարութեան ունիմք ստանայ, այլ և այն մնացաք կարօտեալք, քանզի բղջխն Պայազիտոյ սպան զՅովսէփ անուն զբարերն յազդէ մերմէ և ի կորուստ գնացին ամենայն գրութիւնք, որք ընդ նմա»²⁴⁷:

1805 թ. մարտի 19-ին Տալիբյանին ուղղած նամակում Նապոլեոնը խորհուրդ է տալիս հետախուզական նպատակով Իրան ուղարկել Հայերից որևէ մեկին²⁴⁸, իսկ 1810 թ. նրա նախաձեռնությամբ Փարիզի Արևելյան լեզուների դպրոցում բացվում է նաև Հայոց լեզվի դասընթաց²⁴⁹:

Վյարոյեծոս և Նարեկոյ մասնակցութեամբ (մեծագոյն), օնտորոյն յեզրոյեղծութեամբ լոյս տեսնող Նարեկոյ յարմարեալ խորհրդով Նամակ է գրում Նապոլեոնին, որով օգնություն էր խնդրում նրանից: Նամակը Նապոլեոնին է հասնում 1805 թ. հունվարի վերջերին: Նապոլեոնը Իրան է ուղարկում արևելյան լեզուների գիտակ, 25-ամյա Ամադե ժորբերին²⁴⁶:
Վյարոյեծոս և Նարեկոյ մասնակցութեամբ (մեծագոյն), օնտորոյն յեզրոյեղծութեամբ լոյս տեսնող Նարեկոյ յարմարեալ խորհրդով Նամակ է գրում Նապոլեոնին, որով օգնություն էր խնդրում նրանից: Նամակը Նապոլեոնին է հասնում 1805 թ. հունվարի վերջերին: Նապոլեոնը Իրան է ուղարկում արևելյան լեզուների գիտակ, 25-ամյա Ամադե ժորբերին²⁴⁶:
²⁴⁷ «Լուսմայ», 1897, թիվ Ա, էջ 303-304: Դանիել կաթողիկոսի նամակները տե՛ս նույն տեղում, էջ 292-303: Հմտ. А. Р. Иоаннисян, Присоединение..., с. 107-108:
²⁴⁸ О. П. Маркова. Восстание в Кахетии 1812 г., М., 1951, *հղվում է* Correspondance, t. X, p. 130-131.
²⁴⁹ Ժան-Պիեռ Մաքս, Նապոլեոնը և Հայերը, էջ 95-97:

տանը օտարի բռնակալութիւնէն ազատագրելու ծրագրերու: Մեր կողմէն հայտնաբերված ու հրապարակված ժամանակագրութեան քննութեամբ ներկայացվում են էրզրումի փաշայութեան դեմ հայոց անհնազանդութեան ու ապստամբութեան դրվագներ:

Առանձնակի տեղ ունենի հայ բնակչության փոխհարաբերությունները Վրաստանի հետ:

Խանութիւններին անկախութիւն տտանալուց անմիջապէս հետո հայ իշխող դասի կարուկ վատթարացող քաղաքական կարգավիճակը պատճառ է դառնում աստիճանաբար հայ-վրացական միացյալ թագաւորութիւն ստեղծելու գաղափարի վերակենդանացման համար: Այն տարբեր ձևով են ընկալել նաև հայ ու վրաց գործիչները ԺԸ դարում:

Վրաստանի հետ Հայաստանը ունեցել է ամենատեսակով բազմապիսի փոխհարաբերություններ, իսկ հայ բնակչությունը Վրաստանում՝ բազմադարյա ու անընդմեջ առկայություն: Այդ պայմանավորված էր ինչպես Հայաստանի քաղաքական կացությամբ, այնպես և ուշ միջնադարում հայկական մի շարք գավառների Վրաստանի կազմում գտնվելու փաստով:

Վրաստանում հայ բնակչության կարգավիճակը պայմանավորվում և ձևավորվում էր սոցիալական հարաբերությունների մի ոլորտում, որը մեծապէս տարբերվում էր Հայաստանում ու հարակից այլ երկրներում տիրող իրավիճակից: Ընդհանուր առմամբ հարաբերությունների բացարձակ գերակայությունը թելադրում-պարտադրում էր հայ բնակչությանը ընդգրկվելու հարաբերությունների այդ ոլորտ և ներկայանալու որպէս վրաց թագավորի, վրաց եկեղեցու, հայոց եկեղեցու և կամ առանձին ավատատերերի հպատակ-ճորտեր՝ իրականացնելով վրաց ավատատիրական իրավունքի պարտադրանքով իրենց ստանձնած բոլոր պարտականությունների կատարումը: Ընդհանուր առմամբ կապանքներից ազատ էր մոքալաքներ կոչվող քաղաքային բնակչության այն փոքր հատվածը, որը արքունիքին մատուցած խոշոր ծառայության դիմաց ձեռք բերած անձնական ազատությամբ Թիֆլիսի քաղաքային բնակչության մէջ առանձնանում էր իր սոցիալական ու տնտեսական դրությամբ՝ ունենալով հատուկ արտոնյալ կարգավիճակ:

ԺԸ դարի երկրորդ կեսին հայերը, կազմելով Թիֆլիսի քաղաքային բնակչության երեք քառորդը, քաղաքային տնտեսության զարգացումը դիտում էին իրենց առաջնահերթ խնդիրներից մեկը և մեծապէս շահագրգռված էին նրա զարգացման, քաղաքի կառուցապատման ու բարեկեցության ապահովման հարցերով: Ուշագրավ հանգամանք է, որ հայերը Թիֆլիսում շինարարական խոշոր աշխատանքներ

ծավալելու համար գումարներ էին հանգանակում անգամ հնդկահայ գաղթօջախում: Հայոց իրավական կարգավիճակը Վրաստանում պայմանավորվում էր ըստ Վրաստանի օրենսդրության ինչպես ընդհանուր, այնպես էլ ազգությունների մասին եղած հոդվածների: Կաշկանդի վերապահումներ էին արվում թերևս միայն հայերի համար:

Հայագոյի բնակչությունը զգալի թիվ էր կազմում ոչ միայն գյուղական բնակչության մէջ (առանձնապէս հայկական գավառներում), այլև մեծ չափով ներկայացված էր նաև վրաց ազնվականության և իշխանական դասի մէջ: Հայ բնակչությունը կազմում էր Վրաստանի առևտրա-արհեստավորական դասի գերակշիռ մասը: Հայագոյի բնակչությունը վրաց ազնվականության կողմից պարտադրող ճորտական կախումից խուսափելու համար հաճախ նախընտրում էր Էջմիածնի հպատակ ու ճորտ ներկայանալու ուղին:

Թագավորական իշխանությունը երկրում առավել ուժեղն ու զսպիչն էր տեղական ֆեոդալական կամայականությունները հաղթահարելու և հասարակական համաձայնություն ստեղծելու գործում: Ունենալու համար թագավորական գերդաստանի հովանավորությունը, հայ բնակչությունը իր հիմնական մասով, այնուամենայնիվ, նախընտրում էր արքունի ճորտության կարգավիճակը՝ դրանով իսկ վերածվելով նաև թագավորական իշխանության հեմարանի ու պաշտպանի: Աստիճանաբար սերտանելով վրաց ավատատիրական հասարակության մէջ, հայ բնակչությունը իր ազգային դիմագիծը պահպանելու համար դիմում էր առավելապէս դավանական համախմբման միջոցին՝ կազմելով Հաղբատի հոգևոր թեմը: Վրաստանում հայ բնակչությունը ենթարկվում էր կամ ուղղակի Էջմիածնի Մայր Աթոռին և ներկայանում Հաղբատից առանձին համայնք, և կամ ընդգրկված էր Հաղբատի թեմի մէջ՝ որպէս Վրաստանի «լիիրավ» բնակիչ:

Վրաստանի գրեթէ ամբողջ ներքին և արտաքին առևտրի մէջ ունենալով գերակշիռ վիճակ ու իրենց տնտեսական գործունեության մէջ վայելելով թագավորի հովանավորությունը, հայ բնակչությունը իր ամբողջության մէջ, սակայն, չունէր որոշակի իրավական արտոնություններ, որպիսիք գոյություն ունենին, օրինակ, Ռուսաստանում: Վրաց արքունիքում ծառայության անցած հայագոյի գործիչները ստիպված էին Էջմիածնի նկատմամբ որդեգրել այնպիսի քաղաքականություն ու վերաբերմունք, որը թելադրվում էր Վրաց արքունիքի կողմից:

Այսպիսով, վերոբերյալից ակնհայտ է, որ հայագոյի բնակչությունը մեծ ավանդ ունենալով Վրաստանի տնտեսական ու մշակութային զարգացման մէջ և կազմե-

լով բնակչության զգալի տոկոսը, սեփական ազգային զարգացման խնդրում ունեցել է լուրջ դժվարություններ և իրավական առումով՝ ոչ համարժեք կարգավիճակ:

Հայ-վրացական միացյալ թագավորության գոյության հնարավորության գահափարը կարող էր սկիզբ առնել դեռևս Թ. դարում, ձևավորվել Ժ-ԺԱ. դդ. հայ Բագրատունիների գերակայության, իսկ այնուհետև ԺԲ-ԺԳ. դդ. վրաց Բագրատունիների քաղաքականության արդյունքում: Հետագա դարերում՝ ընդհուպ մինչև ԺԸ. դարի վերջ, այն շարունակել է իր գոյությունը բազմապիսի դրսևորումներով ու ընկալումներով: Եւ սակայն միասնական կարծիք ու հստակություն չկա նման պետության ընկալման և սահմանումի մեջ: Նիկողայոս Ադոնցի բնորոշմամբ. «Բագրատունեաց գործունեության դաշտն էր Հայաստանն արարական լայնարձակ մտքով (իմա՝ Արմինան – Պ. 2.), այսինքն՝ ամբողջ կովկասը, որի աշխարհագրական և քաղաքական կենտրոնն էր իրապէս Ծիրակը, իշխանական նոր ուսումը: Այստեղից բղխած կամ ներքնայնաբար ջանքերը տանում էին դէպի մի հոյակապ կառուցում, որ է՝ հաւաքել-խմբել կովկասեան բոլոր ցեղերը մի և հանուր քաղաքական յարկի տակ, ներդաշնակել նրանց կեանքն ու գործունեութիւնը համագործակցութեան և համերաշխութեան գետնի վրայ, Բագրատունի ծառի հովանու ներքեւ...»:

Աշոտ Հովհաննիսյանը իրավացիորեն շեշտում է, որ «XI–XIII դարերում վրաց Բագրատունիները Հանդես էին գալիս Հայաստանում ոչ որպես նվաճողներ, այլ որպես գահաժառանգորդներ, որոնց դեմքի հաղթանակին, որչափ այն ուղղված էր օտարակալության դեմ, հայ ժողովուրդը ակտիվորեն ընդունաբերում և աջակցում էր: Վերամիավորելով Հայաստանն ու Վրաստանը, վրաց Բագրատունիները չէին դիտում Հայաստանը որպես իրենց անձնատուր եղած մի երկիր, այլ որպես իրենց տոհմին պատկանած մի տիրույթ, որի ֆեոդալական ազատությունները վերականգնվել էին հայ և վրաց ուժերի համատեղ ջանքերով»:

Հայոց և վրաց ընդհանուր մտահոգությունն ու ձեռնարկումի արդյունք էր 1238–1240 թթ. Նոր Գետիկից ու Խաչենից հայազգի պատվիրակության ժամանումը Հռոմ՝ Վանական վարդապետի, Վարդան Արեւելցու և այլոց մասնակցությամբ՝ Մոնղոլական արշավանքների դեմ օժանդակություն գտնելու հույսով:

Դավիթ Արքայազնի կողմից իր հոր՝ Դեմետրիի, թագավորությունը (Ավանում գտնվող վանքի նվիրատվական արձանագրության մեջ) բնորոշվել է որպես «Վրաց և Հայոց»:

ԺԴ. դարում Երևանն անգամ երբեմն ընկալվում էր Վրաստանի մեջ:

Հայազգի Հեղինակները միշտ չէ, սակայն, որ միանշանակ պաշտպանել են վրաց իշխանությունների վարած արտաքին կամ ներքին քաղաքականությունը, հաճախ արձանագրել են նաև հայ և վրաց ժողովուրդներին ծանր տառապանքներ պատճառած իրադարձությունները, և քննադատել Վրաց թագավորների անհեռատես գործողությունները: Եթե թողմա Մեծփեցին ԺԵ. դարում (1441 թ.) նախատական դիրքորոշում է դրսևորում Վրաց Բագրատունի իշխանությունների վարած անկայուն ու ոչ համարձակ քաղաքականության նկատմամբ, ապա այդ ևս թիվադրված էր Հայոց այն ակնկալություններով, հուսախաբությամբ, կրած տառապանքներով և առաջարկությունների չիրականացմամբ, որ կապվում ու պայմանավորվում էին Վրաց իշխանությունների դիրքորոշման հետ: Խոսուեն է թողմա Մեծփեցու եղբորահույժը. «Մեք, հանապազ յոյս ի վրացիքն ունելով, պարծէաք ի մէջ անօրինաց, յայնմանէ յուսահատեալ՝ առաջի անօրինաց ափիբերան եղաք»:

Վրաց թագավորները ևս անգամ նույն ԺԵ. դարում (Գիրոզի, Ալեքսանդր, Բագրատ, Կոնստանտին և այլք) իրենց տիրոջ աջարում պահպանում էին Հայոց թագավոր ներկայացալու հավակնությունը, որպես Հիմնավորում ունենալով հիմնականում Հայաստանի հյուսիսային հատվածի (վրաց. աղբյուրներում անվանված Սոմխիթ=Հայք, Հայաստան) Վրաստանի կազմի մեջ լինելու պարագան, այնպես էլ նաև վերհուշ-ձգտումը Վրաստանի ափելի ընդարձակ սահմանների մասին:

ԺԷ. դարի վերջին քառորդին ևս Սոմխիթը շարունակում էր մնալ Վրաստանի կազմում և արձանագրվել որպես առանձին վարչական միավոր:

Վրաց իրականության մեջ ավանդույթը խախտելու վճռական քայլ կատարվեց ԺԸ. դարի երկրորդ կեսին, ինչը արձանագրվել է Հերակլ 2-րդի կողմից 1770 թ. ապրիլի 5-ով թվագրված և Ռուսական արքունիք ուղարկված Վրաստանի մարդահամարի ցուցակի մեջ, երբ Վրաստանի կազմում դրսևորվեց Սոմխիթը անվանվում էր արդեն Ստորին Քարթլի (Ստորին Վերք): Նման ընկալումը շարունակվում է մինչև այսօր՝ վրաց հետազոտողների կողմից նտադարձ ժխտելով նաև նախորդ դարերի մտայնությունն ու իրականությունը՝ վերածելով այդ բանավիճալին խնդրի: ԺԸ. դ. երկրորդ կեսին Վրաց թագավորները իրենց ստորագրություններում և տիրոջ աջարում

այլևս դադարում են Սոմխիթ = Հայաստանի արձանագրումը, սակայն այդ բնավ չի նշանակում, թե նրանք դադարում են հավակնություններ ունենալ Հայաստանի նկատմամբ: Առավել ուշագրավ է, որ նման հավակնությունները դրսևորում տեսնում ենք անգամ Արևմտյան Վրաստանի, այն է՝ Իմերեթի, թագավոր Սողոմոն I-ի կողմից: Նա, հավակնելով՝ "Ողջ Վրաստանի" թագավոր հորջորջվելու գայթակղությունը, իր տիտղոսաշարի թվարկման մեջ էր ընդգրկել ընդարձակ տարածքները և այն ձևակերպել որպես "թագավոր Ողջ Վրաստանի, Հայոց, Կախից, Ռանից, Ափխազաց թագավոր, Շահնշահ և Շիրվանշահ":

Հերակլ 2-րդի տիտղոսի մեջ որպես հիմնական տիրույթ նշվում են միայն Քարթլին և Կախեթը ու հաջորդում էր երբեմն "իշխող Երևանու, Գանձակու և այլն" ձևը, իսկ ավելի հաճախ՝ միայն "և այլոց" արտահայտությունը, կամ մասնավորեցվում Բորչալու-Ղազախ հավելումով: Իրավիճակը, սակայն, մասամբ փոխվեց, երբ ընդառաջելով Ծ. Ծախամիրյանի ծրագրերին, Հերակլը նախ վրաց իշխանի տիտղոս, իսկ ապա և Լոռիի նվիրեց Ծ. Ծախամիրյանին՝ որպես Վրաստանի ենթակայությանը ներքո գտնվող Հայաստանի մի հատված: Եթե վրաց իրականության մեջ ժԸ. դ. երկրորդ կեսին սկսել էր նվազել ու մթազնել Սոմխիթի դերը՝ սակավամարդ լինելու հետևանքով, ապա հայ իրականության մեջ հայ-վրացական միացյալ պետության ստեղծման համար տեսական հիմնավորումների, ծրագրերի ու առաջարկների արժարժումները կրկին վերակենդանացնում են "Սոմխիթ = Հայաստան"՝ ի գաղափարը:

1787 թ. հոկտեմբերի 15-ին Ղուկաս Կարնեցուն գրած նամակում Ծ. Ծախամիրյանը պնդում է, թե «և յոյժ բարեգոյն լինի հովվութիւն ի վերայ մեր Բագրատունեաց՝ հաստարմաց մերոց, քան թէ Օսմանչկաց և Սեֆիֆաց և այլն»: Ավելին, Ծ. Ծախամիրյանը Ղուկաս Կարնեցուց պահանջում է «հանել մի ի որոց Բագրատունեաց ի նոցանէ (իսն՝ ի Վրաց-Պ. 2.) և ամուսնացուցանել ընդ ունեմն ազատի և կամ ազնուազարմի Հայոց և նշանատրել նմա ժառանգորդ ի վերայ Տանն Հայոց ըստ օրինացն Հայաստանեայց»: Ծ. Ծախամիրյանը համոզված է, թե իրեն վրաց իշխանի տիտղոս շնորհելու փաստը և Հերակլի առաջարկը՝ «որում հրամայեաց զիս շարել որոք կարգադրութիւնք վասն բարեպէս կտավարութեանն աշխարհին իւրոյ», հետևանք են նրա, որ «ի վաղցուց ժամանակէ ի նոցանէ բուրէ ի քիմս իմ ցանկութիւն սրտից նոցա, զի ցանկան միաբանութիւն երկուց ազգաց, այսինքն՝ Հայոց և Վրաց»:

Ծ. Ծախամիրյանը Լոռիի դիտարկում էր որպես Հայաստանի ապագա Հանրապետության համար միջուկ: Ավելին, Ծ. Ծախամիրյանը 1786 թ. ողջունելով Գեորգիական պայմանագիրը, հատկապես կարևորում էր նրա 6-րդ կետը, ըստ որի Վրաստանն իրավունք էր ստանում Այսրկովկասում ընդարձակելու իր սահմանները ռուսական օժանդակության շնորհիվ՝ նկատի ունենալով հարակից հայկական տարածքները:

Ինչպես նախորդ դարերում, ժԸ. դարում ևս, հանուն Հայաստանի հայ դործիչները ընդառաջում էին վրաց հավակնություններին: Հ. Արզուլթյանը գրում էր «Եթէ հայեցիցն դոքա յիմ սէրն առ հայրենին իմ և աշխատանքն վասն հաստատութեան թագաւորութեան իւրեանց և պայծառութեան... այլ իմ անձն և իմ Հայոց ազգն մատուցանելոց եմ դոցա.. իբրև զզոհ և տեսանելոց եմ յայնժամ իմ շնորհակալութիւնն արդեսմբ եւ բանի, որպէս խօսեցեալ եմ ընդ արքայորդի Դաւիթին, եթէ ոչ է մոռացեալ զայնս, զի իմ կամքն է կակղեցուցանել զոսա և կոչել ոչ միայն թագաւոր Վրաց, այլև Հայոց»: 1783 թ. Գեորգիական պայմանագրի կնքումը ևս վրացական կողմի համար դիտարկվել ու բնութագրվել է որպես Վրաստանի զոհաբերում Ռուսաստանին:

Ի տարբերություն հայոց զիրքորոշման, վրաց վերաբերմունքը հայոց նկատմամբ գնալով առավել կոշտանում էր, որով և պայմանավորված էր այն «կակղեցուցանելու» ձգտումը: Ակնհայտ է, որ «կակղեցուցանել»-ի ներքո Հ. Արզուլթյանը ակնկալում է որոշակի վերաբերմունք՝ վրաց արքունիքից զիջումների ու շնորհների կորցում իր և իր սոհմակիցների համար: Հ. Արզուլթյանի հավակնությունները, ինչպես ակնհայտ է, նոր չէին: Դեռևս Հերակլի կողմից 1783 թ. օգոստոսի 28-ին ստացած հրովարտակով Արզուլթյանները հայտարարել էին, որ իրենց սոհմը ուղղակի շարունակությունն է Երկայնաբազուկ-Ձաքարյանների՝ դրանով իսկ փորձելով հիմնավորել Վրաստանում իրենց հավակնությունները, պահանջներն ու իրավունքները:

ԺԸ. դարի երկրորդ կեսին, երբ «Սոմխիթ=Հայքը» և հարակից տարածքները վրաց իրականության մեջ մասամբ արդեն սկսել էին ընկալվել ու անվանվել որպես Սոտրին Քարթլի, վրաց իշխանությունները, այնուամենայնիվ, հանուն Վրաստանի անտեսական վերականգնումի և գայթակղված Ծ. Շահամիրյանի առաջարկներից, ստիպված են լինում կոչ անելու հայրենի՝ գալ և ապաստանել «ընդ եղբայրս իրեանց, բնակեցնի ի սեպուր աշխարհս իրեանց»:

Առաջին խոսուհուն է Գեորգի 12-րդի 1800 թ. հունվարի սկզբներին գրած նամակը էջմիածնի միարանությանը, որ փորձում է "Հայոց թագավոր" ներկայանալու հիմնավորումով միջամտել Հայոց կաթողիկոսի ընտրութուններին խնդրին և ոչ միայն առաջադրել Հովսեփ Արղությանի թեկնածությունը, այլև սպառնալ, թե . «Յայտ իսկ է ձերուձդ սրբութեան, որ տեղութիւնն մեր ոչ է օտար ի Սրբոյ Աթոռոյդ, այլ ունիմք և մեք մասն և բոլոր ազգքն Հայոց կոչեն զմեզ արքայ ինքեանց: Նաև գիտեն զմեզ ազգական արքայիցն Հայոց: Արդ, եթէ այդպէս է, ապա ուրեմն պարտիք և դուք լսօղ լինիլ Սրբոյ Աթոռոյդ օգտակամ բանիցն մերոց և տալ հաւանութիւն իսկ... և որքան ի յիս կարողութիւն գոյ, մինչև ի ճեղումն արեանս ջանալոց եմ ի վերայ օրինատր առաջադրութեանս...»: Հայոց և Վրաց թագավոր ներկայանալու փաստը, որ միանգամայն համահունչ էր Վրաց իշխանութուններին շահերին ու հավակնութուններին, նպաստավոր ձևով օգտագործվում էր Վրաց պետութեան կողմից իր ներքին ու արտաքին քաղաքականութեան ձևավորման ժամանակ: Նկատառելի է այն հանգամանքը, որ Գեորգի 12-րդը իր թեկնածուները պարտադրելու և Հայոց թագավոր ևս ներկայանալու ժամանակ Երևանի ու Գանձակի խանութունները այլևս չէին գտնվում Վրաստանից կախման մեջ: Նրանք 1795 թ. Աղա-Մահմադ խանի արշավանքից հետո փաստորեն ընդունել էին Պարսից գերիշխանությունը և, օգտվելով Պարսից իշխանութեան վերահսկողութեան թուլացումից, փորձում էին ընդամենը վարել արտաքին խուսանալի ման գաղաքականություն՝ մնալով պարսից դերակալութեան ոլորտում: Հերակլին գրած իր նամակում "Վրաստանի և Հայաստանի թագավոր" է անվանում նրան Հովսեփ Էմինը՝ երազելով նրա միջոցով ազատագրել ողջ Հայ ժողովրդին: Ուշագրավ է նաև Հակոբ Ծամախեցի կաթողիկոսի 1760 թ. գրած նամակը Ելիզավետա թագուհուն՝ Թեյմուրազ Երկրորդի խնդիրներին ընդառաջելու միջնորդությամբ: Հայոց կաթողիկոսը իր միջնորդությունը հիմնավորում է նրանով, որ Թեյմուրազն ու նրա որդի Հերակլ 2-րդը «զցայգ և զցերեկ ընդդիմացան և ընդդիմանան ևս Լեզկեաց և յաղթեցին ևս բազում անգամ և... մնացեալ քրիստոնեայք՝ թէ Հայք և թէ Վիրք և թէ այլազոք ևս, զի զնոս ևս գերեն, նախ Աստուծոյ և ապա դոցա պահպանութեամբն կան այժմ»:

Ռուսաստանը, ինչպես ԺԸ. դարի առաջին քառորդին, այնպես էլ դարի վերջին քառորդին հատորեն օգտագործում էր մահմեդական լծի դեմ հայ-վրացական համագործակցության հնարավորության հույսը և անկախութեան

յուն ձեռք բերելու երազանքը: ԺԸ. դարի երկրորդ կեսի առանձնահատկությունն էր Ռուսաստանի կողմից Վրաստանի նկրտումներին Հայաստանի տարածքի նկատմամբ բավարարում տալու միջոցով՝ շահելու վրացի և հայ գործիչների օժանդակությունը՝ Այսրկովկասում իր տիրապետությունը հաստատելու համար: Այդ առումով հասկանալի և բացատրելի է դառնում նաև այն փաստը, որ 1796 թ. Վ. Զուբովի հրամանատարությունամբ Ռուսական բանակի այսրկովկասյան արշավանքի ժամանակ ևս Երևանի գրավումը վերապահվում էր Հերակլ 2-րդին՝ բավարարում տալու ինչպես վրաց հավակնություններին, այնպես էլ դիվանագիտական հիմնավորում ստեղծելու՝ Օսմանյան Թուրքիայի հետ անմիջական ընդհարումից խուսափելու համար:

Այսրկովկասյան ժողովուրդների ազգային ձգտումներին լավածանոթ Վ. Ա. Զուբովը Վրաց թագավորության վերացումից հետո էլ 1803 թ. ներկայացրած իր ծրագրում առաջարկում էր ընդարձակել Վրաստանի սահմանները՝ շեղելով հենց Ռուսաստանի շահերը:

Այսպիսով, վերոբերյալից ակնհայտ է, թե Հայաստանի ազատագրման նպատակով եթե հայազգի գործիչները ունեին որոշակի ակնկալիքներ Վրաստանի կողմից ռազմա-քաղաքական օժանդակություն գտնելու հարցում և մշտապես ձգտում էին նպաստել Վրաստանի առաջընթացին, ապա Վրաց իշխանութունները օգտագործելով Հայոց ազգային ակնկալիքները, մտահոգված էին միայն Վրաստանի տնտեսական, ռազմա-քաղաքական ու մշակութային զարգացման խնդիրներով: Հայաստանի քաղաքական անկախությունը զարգացման խնդիրներով: Հայաստանի քաղաքական անկախությունը չէին կարող մտնել և չէին մտնում վրաց գործիչների նախագծումների մեջ, Վրաստանը ընդամենը փորձում էր ընդարձակել իր սահմանները՝ ընդգրկելով Հայաստանի տարածքները, իր տիրապետությունը հաստատել Հայաստանում և Հայոց նկատմամբ ազդեցությունը պահպանելու նպատակով ներկայանալ որպես Հայոց հովանավոր: Հայոց օժանդակությունը փնտրելու խնդրում հակադրվում էին վրաց-ռուսական շահերը, իսկ Հայաստանի մահմեդական իշխանութունները Հայոց ազատագրական ձգտումների մեջ, բնականաբար, տեսնում էին միայն իրենց տիրապետության վախճանը:

Հայոց քաղաքական միտքը ազատագրական ծրագրերում մշտապես կարևոր տեղ է հատկացրել Վրաստանին և հայ-վրացական հարաբերություններին:

Հայոց հասարակական-քաղաքական կյանքի ուղղորդիչ իր դերակատարումով ԺԸ. դարի կեսերից առանձնապես կարևորվում է էջմիածնի կաթողիկոսությունից ազդեցությունը, որը աստիճանաբար թոթափելով 1730-40-ական թվականներին ճգնաժամային իրադարձությունները, 50-ական թվականներին վերջերից սկսում է վարել առավել նպատակաուղղված քաղաքականություն և վերածվում առավել ազդեցիկ գործոնի: Այդ գործընթացում նշանակալի էր Հակոբ Շամախեցի, իսկ այնուհետև նրա աշակերտ Սիմեոն Երևանցու և ապա Ղուկաս Կարնեցու վարած հավասարակշիռ և շրջահայաց գործունեությունը: Դեռևս 1745 թ. Նազիր շահի կողմից Ղազար Զահկեցուն կաթողիկոսական դահից արտաքսումից և Հովհաննես Ազուլեցուն կաթողիկոս կարգելուց հետո, Ղազար Զահկեցուն կրկին կաթողիկոսական Աթոռին վերադարձնելու գործում կարևոր դերակատարում ունեցած Հակոբ Շամախեցին, 1749 թ. ընդունում է նաև Արևմտյան Վրաստանի գահազուրկ եղած Ալեքսանդր V թագավորի կողմից օժանդակություն ակնկալելով զենսպանդանացությունը էջմիածին ժամանած Տիմոթեոս արքեպիսկոպոս Գարաշվիլուն: Հայոց Ղազար Զահկեցի կաթողիկոսի անունից գրած իր նամակում նա ներկայացնում է Մայր Աթոռի վիճակը և դրանով պայմանավորված օժանդակության ցուցաբերման անհնարինությունը: Ընտրվելով Հայոց կաթողիկոս, Հակոբ Շամախեցին 1759 թ. վրաց թագավորներին ուղղված նամակում, ներկայացնելով իր ընտրության պարագաներն ու Մայր Աթոռի ծանր վիճակը, խնդրում-պարտավորեցնում է վրաց թագավորներին «ղջկուժիկն ոչ գնել ի միջի, այլ որպիսեօք սրտիւք և մտօք, որք զձեզ և զձերայինսն հոգայք, նոյնպիսեօքն զմեզ և զձերայինսն հոգայք...»:

Ստեղծված նոր պայմաններում հայ քաղաքական միտքը ձևավորող գործիչները շարունակում են Վրաստանի հզորացումը երաշխիք համարել Հայաստանի ազատագրության համար և ոչ միայն համաձայնել, այլև անգամ Հայաստանը Վրաց թագավորության կազմի մեջ տեսնելը փրկություն համարել՝ այն պատկերացնելով որպես հայ-վրացական միավորյալ պետություն՝ հայոց էական դերակատարումով:

Հակասամանյան դաշինք ձևավորելու ծրագրերում դեռևս ԺԸ. դարից շրջանառվող գաղափարը, թե հնարավոր է Օսմանյան տիրապետության ներքո գտնվող Հայ, վրացի, թուրքմեն, ասորի, եզդի և այլոց դաշնակցությունը, իր շարունակությունն է ունենում ԺԷ-ԺԸ. դդ. ևս:

1760-ական թթ. Թիֆլիսում էր գտնվում Հովսեփ Էմինը, որը մտադիր էր ստանալ Հերակլի աջակցությունը, անցնել Արևմտյան Հայաստան և այն ազատել թուրքական լծից: Դուրդ-եզդիներն ու ասորիները որպես հայերի դաշնակից էին դիտվում Օսմանյան պետության դեմ հայոց պայքարի ընթացքում, ինչպես այդ մասին վստահաբար Հովսեփ Էմինին գրում էր Հովնան վարդապետը Մուշից: Ըստ Հովնան վարդապետի Հերակլ 2-րդի կողմից Հովսեփ Էմինին տրամադրվելիք ուղղակիան ուժերը կարող էին լինել անգամ փոքր, նույնիսկ սիմվոլիկ (ընդամենը 20 հոգի), միայն տպավորություն գործելու համար, թե Հերակլը ևս մասնակից է հակասամանյան պայքարին:

Թե որքան իրատեսական չէին Հովնանի՝ Հովսեփ Էմինին գրած նամակում Օսմանյան Թուրքիայի մասին ունեցած պատկերացումները, ցույց են տալիս հետևյալ տողերը: Արձանագրելով, որ իրոք «Թուրքերը այն չեն, ինչպիսին եղել են հարյուր տարի առաջ», Հովնանը 1763 թ. պնդում էր, թե «Նրանք կղիջն ամեն ինչ առանց պայքարի, և քանի որ նրանց քաղաքները ամրացված չեն, ապա կարող ես ենթադրել, որ նրա գրավումը շատ դյուրին գործ պետք է լինի»: Նրանց մտքերում արմատացել է մարգարեությունը, որ իրենց տիրապետությունը մոտենում է ավարտին, և որ նրանց պայքարը քրիստոնյաների դեմ ոչ մի իմաստ չի կարող ունենալ: Նրանք նույնպես լսել են Ռուսական կայսրությունից քո ժամանելու մասին, որ Ռուսական կայսրությունը երաշխավորել է Վրաց արքայազնին, և թուրքերը չեն համարձակվի աճաճ մեկ քրիստոնյայի արյուն թափել: ...Եթե Հերակլի հետ ոչինչ չստացվի, քեզ իմ հայրական խորհուրդը՝ երբեք մի թուլանա և առաջ ընթացիր, մի երկնչիր ոչ մի վտանգից և ապավինիր Աստծուն: Կհասցնես քո նպատակին թե ոչ՝ քեզ ապահովված է փառքը»:

1750-60-ական թվականները Օսմանյան պետության պատմության մեջ իրոք հայտնի են որպես կենտրոնական իշխանության թուլացման և փաշաների կենտրոնախույս ձգտումների դրսևորումներով հաղեցած շրջան: Թուրքական բռնատիրությունը ոչնչացումով ու ամայացումներով էր պատասխանում Օսմանյան տիրապետության դեմ ելույթները նաև Սիրիայում, Լիբանանում, Եգիպտոսում և այլուր: Իրադրության լրջությունը հայ իրականության մեջ առաջացրել էր երկակի վերաբերմունք՝ երկու թև:

1. Մեկ կողմից անխուսափելի էր համարվում ազատագրական զինված պայքարին ձեռնամուխ լինելը, առանց որի անհնար էր ժողովրդի ազա-

րապահելով թագավորական իշխանության կողմից կատարելիք բարեփոխումներին:

Սիմեոն Երևանցու զիրքորոշումը իր որոշակի ազդեցությունն է գործել Հնդկահայ Հասարակական մտքի ձևավորման վրա, ունեցել իր համակիրները նաև Հնդկահայ գաղթօջախում, ստիպել է ավելի իրատեսորեն գնահատել ժամանակի իրադրությունը և հետևողական աշխատանք ծավալել ազատագրական պայքարում որոնելու լուրջ զաշնակիցներ և միջոցներ՝ ազգային արժեքներն ու ժողովրդին իրական վտանգներից զերծ պահելու ուղղությամբ:

«Նոր տեսրակը» Հայաստանի փրկության գործում տեսնում է Վրաստանի և, մասնավորապես, Հերակլի հետ դաշինքի և վերջինիս կամեցողության պարագան: Վրաստանում բազմազգ բնակչության առկայության պայմաններում Հերակլի արտաքուստ տոյերանտ ներքին քաղաքականություն վարելու հանդամանքը հետագա ուսումնասիրողներին ևս դրդել է մտածելու, թե Հերակլը, անգամ իր կամքից անկախ, փաստորեն ստեղծել էր «Կովկասյան ժողովուրդների փորձնական մի Ֆեդերացիա»:

Հնդկահայ գաղթօջախի ներկայացուցիչները, սակայն, ի մոտո ծանոթ չլինելով իրական փոխհարաբերություններին, անտեսում էին Հերակլ 2-րդի և Իբրահիմ խանի մտերմության ու դաշինքի փաստը, որ գոյություն ուներ մինչև 1783 թ. Գեորգիեյան պայմանագրի ստորագրումը և հակադիր էր Իբրահիմի դեմ պայքարի ելած հայ մելիքների զիրքորոշմանը:

Հերակլն իր առջև իրականում ոչ միայն Հայաստանի ազատագրման նպատակ էր դրել, այլև առաջարկում էր քննարկել անգամ Հայոց և Վրաց եկեղեցիները տարանջատող «որոշ» դրույթներ վերանայելու հարցը, որը նշանակում էր եկեղեցիները միացնելու փորձ՝ «երկուստեք զիջումների միջոցով»: Հովսեփ Էմինը դեմ էր այդ առաջարկին: Այդ էր նաև հիմնական գրողապատճառներից մեկը, որը Սիմեոն Երևանցուն ստիպում էր վերապահությամբ մոտենալ Հերակլի վարած «սիրալիր» քաղաքականությանը և նրան ետ էր պահում Հովսեփ Էմինի լավատեսությանը անվերապահ սատար կանգնելուց: Սիմեոն Երևանցին առավել չափով լավատեղյակ ու իրազեկ էր Վրաստանում և, մասնավորապես, վրաց արքունիքում տիրող իրադրությունն ու վրաց թագավորի նպատակներին:

Սիմեոն Երևանցու նպատակասլաց գործունեությունը վերլուծությունը հիմքեր է տալիս պնդելու, որ նա Հայոց քաղաքական իշխանության բա-

ցակայություն և նրա շուտափույթ վերականգնման անհուսույթյան պայմաններում փորձում էր ազգի գոյատևումը ապահովելու նպատակով համախմբման կենտրոն դարձնել ամենայն Հայոց կաթողիկոսության Մայր Աթոռը: Սիմեոն Երևանցու գլխավոր մտահոգությունը ներազգային դժվարությունները հաղթահարելն ու միաձույլ ազգային կառույց ստեղծելու գործն էր: Սիմեոն Երևանցու նշված քաղաքականության ակնհայտ դրսևորումներից էր նաև Հայոց միջավայրում կաթողիկե քարոզիչների գործունեությունը կասեցնելու գործողությունները: Թշնամական հարձակումներից էլ միաձնի պաշտպանությունը կազմակերպելու համար Սիմեոն Երևանցին նախաձեռնել էր Մայր Աթոռի պարիսպները վերանորոգությունը և ամրացումը: Սիմեոն Երևանցին մեծացրել էր թուանկչիների (հրացանավորներ) խումբը, որի նպատակը ոչ միայն վանքի պահպանությունն էր թշնամական հարձակումներից, այլև տարրեր հանձնարարությունների և առաքումների ուղեկցումներն ու նրանց անվտանգության ապահովումը: Ուշագրավ է, որ անգամ Երևանի խաներն արշավանքներ կազմակերպելու դեպքում զինվորներ (թուանկչիներ) էին խնդրում կաթողիկոսից, իսկ կաթողիկոսը էլ էր վարանում նաև մերժելու նրանց խնդրանքը:

1778 թ. Հերակլ 2-րդը նախաձեռնեց և 1779 թ. սեպտեմբերին իրականացրեց Երևանի խանի անհնազանդությունը ճնշելու և խանությունը Վրաստանին միացնելու փորձ: Արշավանքը թեև իր նպատակին չհասավ և Երևանի բերդը մնաց անառիկ, սակայն Երևանի խանությունը առավել թուլացնելու նպատակով Արարատյան դաշտի հայ բնակչությունը փոխադրվեց Վրաստան՝ այնտեղ մարդավթափ որոշ վայրեր բնակեցնելու համար:

Ի վերջո, Սիմեոն Երևանցին, ամբողջ իր հեղինակությամբ ու ազդեցությամբ միջամտելով հանդերձ, ի զօրու չհղավ կասեցնելու նաև Արցախի հայ մելիքների միջև եղած գժտությունները:

1780 թ. Հերակլը փորձեց ավարտին հասցնել իր մտադրությունը և արշավել դեպի Երևան: Սակայն Երևանի խնդրի լուծման ճանապարհին արդեն կանգնած էր Ռուսաստանի հետ փոխհարաբերությունների սրման վտանգը: Խնդիրն այն էր, որ Վրաստանի համար անընդունելի էր ինչպես Երևանի վրա Իրանի տիրապետության վերականգնումը, այնպես էլ հայ գործիչների կողմից Հայոց անկախ պետականության վերականգնման նպատակով Ռուսաստանի հետ սկսված բանակցությունների վարումը:

Հերակլի կողմից Երևան կատարած արշավանքից երկու ամիս անց, 1780 թ. հունվարի 1-ին անակնկալ ձևով, Պետերբուրգում գտնվող Հ. Արղությանին է այցելել ռուսական արքունիքի բարձրաստիճան պաշտոնյաներից Ի. Պ. Գորիչը և, հայտնելով, թե ռուսները մտադիր են արշավել Մերձկասպյան տարածքներ՝ իրենից տեղեկություններ է խնդրել Այսրկովկասի և Պարսկաստանի իրազրության մասին: Հաջորդ օրը՝ հունվարի 2-ին, Հ. Արղությանին են այցելել նաև Ա. Սուվորովը և Հ. Լազարյանը: Ա. Սուվորովը, հուսադրելով հայ գործիչներին, թե ռուսները մտադիր են վերականգնելու Հայոց պետականությունը, տեղեկություններ է հարցրել էջմիածնի և ընդհանրապես Հայաստանում տիրող իրավիճակի մասին: Այնուհետև Ա. Սուվորովը ճանապարհվել է Գ. Ա. Պոտյոմկինի մոտ՝ ղեկուցելու նրան տեղի ունեցած զրույցի մասին: Հունվարի 3-ին Գ. Ա. Պոտյոմկինը իր մոտ է հրավիրում Հ. Արղությանին ու Հ. Լազարյանին, որոնց հետ զրույցի ժամանակ հարցեր է ուղղում հայերի և վրաց թագավորի մասին: Գ. Պոտյոմկինը պահանջում է նամակ գրել և Ռուսաստան հրավիրել նաև Հովսեփ Էմինին: Հունվարի 13-ին Հ. Լազարյանին ու Հ. Արղությանին իր մոտ է հրավիրում Ա. Սուվորովը և մանրամասն տեղեկություններ խնդրում Արցախի մելիքների և Վրաց թագավորության մասին: Ըստ 1780 թ. հունվարի 10-ով թվագրված և Հովհաննես Լազարյանին վերագրվող վավերագրի, Հայաստանի ազատագրության ու հայ պետականության վերականգնման գործում հիմնական դերակատարումը պետք է ունենան հայ իշխաններն ու ժողովուրդը, սակայն անհրաժեշտ է, որ նրանք ստանան Ռուսաստանի օգնությունը: Համոզմունք է հայտնվում, որ Արցախի հայ իշխանները կմիանային այդ արշավանքին, և կազատագրվեն նաև Երևանը: Հայ նորաստեղծ պետությունը, ունենալով ռուսաց օժանդակությունը, իր հերթին կարող կլինի հենարան լինելու Ռուսաստանին:

1780 թ. հունվարի 21-ին Ա.Վ. Սուվորովը ուղևորվում է Աստրախան, որտեղ պետք է զբաղվեր արշավանքի նախապատրաստման աշխատանքներով: Ռուսական արշավանքի նախապատրաստման մասին լուրերը լայնորեն տարածվեցին ողջ երկրամասում: Նույն թվականի սեպտեմբերին Ռուսաստանի հյուսիսարևմտյան Ի. Վ. Թուրանովսկու հաղորդմամբ, տեղի ողջ ընկալչությունը՝ Դեբրենտից մինչև Գիլան, «և հատկապես հայերը, բոլորը միաբերան ասում են, որ իրենք մեծ ուրախությամբ անհամբեր սպասում են Ռուսական զորքերին...»: «Մրազրված» արշավանքը թեև տեղի չունեցավ,

և Ա. Վ. Սուվորովի գործունեությունը Աստրախանում աստիճանաբար դարձավ այլևս ավելորդ, սակայն այդ մի հզոր միջոց էր, որով նոր փոխհարաբերություններ հաստատվեցին տարածաշրջանում: Լայն ծավալ ստացան Արցախի մելիքների և Ռուսական արքունիքի միջև թղթակցությունները ու միաժամանակ Իրրահիմ խանի հետ նրանց փոխհարաբերությունները դարձան ծայրաստիճան լարված: Բունաճնչումները Հայաստանում ավելի էին ընդգծում Հայրենիքի ազատագրման կարևորության գիտակցումը և որպես ազատագրության միակ երաշխավոր այլևս ընկալվում էր միայն Ռուսական բանակի կողմից շուտափույթ օղնություն ցուցաբերումը: Հետագա տարիներին ևս շարունակվում էր դիվանագիտական ուղիներով հայերին հուսադրելու և նրանցից խնդրագրեր կորզելու գործընթացը: Պարսկա-թուրքական սպառնալիքներին դիմակայելու և Ռուսաստանի օժանդակությամբ տարածքային նվաճումներ ունենալու ակնկալիքով Հերակլ 2-րդը երկար քննարկումներից ու տատանումներից հետո Ռուսաստանի հետ 1783 թ. հուլիսի 24-ին կնքեց Գեորգիեյան հայտնի պայմանագիրը: Պայմանագրի կնքումով Հերակլը մտադիր էր ամրապնդել իր ազդեցությունը Արևելյան Այսրկովկասում, և այդ գաղտնիք էջր անվամբ Կ. Պոլսում: Օսմանյան պետությունը Վրաստանի դեմ ուղղեց Հարավային Կովկասի ու Ասրպատականի, Գաղստանի ու Հյուսիսային Կովկասի դրեթե բոլոր իշխողներին: Վրաստանին հարկի վճարումը դադարեցրին Երևանի ու Գանձակի խաները: Հերակլին դադարեցին ենթարկվել Ղազախ-Շամշադիների թաթարները: 1785 թ. ավարների Օմար խանի արշավանքի ժամանակ ավերվեցին Ախթալայի հանքերը, և շուտով պարզվեց, որ Հերակլ 2-րդը Արևելյան Այսրկովկասում ոչ միայն այլևս ի վիճակի էջր վարելու ակտիվ քաղաքականություն, այլև պետք է մտահոգվեր իր ունեցած դիրքերը գեթ պահպանելու մասին:

Այդ իրավիճակը իր կնիքը թողեց հայ-վրացական հարաբերությունների վրա: Հայագրի գործիչները Հայոց պետականության վերականգնման հեռանկարն սկսեցին կապել ուղղակիորեն Ռուսաստանի հետ՝ ավելի քիչ տեղ թողնելով Վրաստանին: Այդ ակնհայտորեն դրսևորվեց նաև հայ-ռուսական դաշնագրերի նախագծերում և Ալի Մուրադ խանի հետ վարվող բանակցությունների ընթացքում: Գեորգիեյան պայմանագրից հետո տեղի տալով այն լուրերին, թե Ռուսաստանը պատրաստվում է բացի Վրաստան առաքվող սահմանափակ զորամասից Այսրկովկաս արշավել մեծաքանակ

բանակով, իրազեկ լինելով նաև Ալի Մուրադ խանի հետ ընթացող բանակ-ցությունների փաստին, Հերակլը 1784 թ. Ռուսաստան ուղարկած նամակում թվարկում էր իր ակնկալություններն ու պահանջները այդ ձեռնարկումից, բայց և ստիպված էր դիվանագիտորեն գրել Ռուսական արքունիք, թե շատ հեշտ է Հայոց պետականության վերականգնումը, եթե Ռուսաստանն այդ բարեհաճի և եթե Հայերը նման ցանկություն հայտնեն: Տվյալ դեպքում Հերակլ Երկրորդն այդ քայլով փորձում էր իր ձեռքում պահել Ռուսաստանի օժանդակությամբ Հայ պետականության ստեղծման Հայոց հույսը, իր համար ճշգրտել Ռուսաց նպատակների լրջություն աստիճանը և Հայոց մոտ պահպանել իր բարձր վարկանիշը, ազատարարի առաքելության իր համբավը: Ընդգծելի է, որ հայ-ռուսական դաշնագրի նախագծի մեջ Վրաստանի մասին որևէ ակնարկ իսկ չկա, և Հայաստանի ազատագրության խնդիրը պայմանավորված է միայն Ռուսաստանի կողմից ցուցաբերելիք օժանդակության հետ: Հ. Արղությանի կազմած տարբերակում Հայաստանի մայրաքաղաք պետք է ընտրվեր Անին կամ Վաղարշապատը: Արդյո՞ք Երևանի անվան շրջանցումը այս դեպքում կապված էր Վրաստանին նրա հարկատու և կամ խանության կենտրոն լինելու հանգամանքի հետ: Փաստ է միայն, որ Անիի փառքը, որպես Հայոց անկախ պետականության և ազգային հպարտության խորհրդանիշ, շարունակում էր անմար մնալ Հայոց մեջ և օգտագործվել ԺԸ. դարի երկրորդ կեսին քաղաքական հեռանկարի ու հավակնությունների նպատակներով:

Հայ գործիչները, այնուամենայնիվ, ինչպես Հնդկաստանում, այնպես էլ Ռուսաստանում անտես չէին առնում Վրաստանի գործոնը: Այդ հստակորեն դրսևորված ենք գտնում հատկապես Հովսեփ Արղությանի կողմից 1784 թվականին Գ. Ա. Պոտյոմկինին գրած նամակներում:

Ի տարբերություն Հայ գործիչների դիրքորոշման, Հերակլը նոր համաձայնության եկավ Իբրահիմ խանի հետ: Իբրահիմ խանի հետ Գանձակին համատեղ տիրելու համար նա 1785 թ. դարնանը արշավանք ձեռնարկեց Գանձակի խանության դեմ: Այդ ժամանակ, սակայն, Գերբեղի Ֆաթ Ալի խանը, որ արշավանք էր նախապատրաստում Իբրահիմ խանի դեմ, Հերակլին առաջարկեց համատեղ արշավել դեպի Շուշի և գրավել Ղարաբաղի խանությունը, որից հետո Արցախի հայությունը պետք է անցներ Հերակլի տիրապետության ներքո, իսկ մահճեղականները՝ խանի: Հերակլը ոչ միայն

չհամաձայնեց այդ առաջարկին, այլև թողնելով Գանձակի պաշարումը, իր գործերը ուղարկեց Իբրահիմին պաշտպանելու համար:

1786-87 թթ. ստեղծված իրադրության մեջ Հովսեփ Արղությանի դիրքորոշման մեջ նկատվում է շրջադարձ: Ե. Շահամիրյանին 1786 թ. սեպտեմբերի 3-ին գրած նամակում Հ. Արղությանը Ռուսական կողմից իր դժգոհությունը ներկայացնում է Հայոց զեսպան Ստեփան Դավթյանի նկատմամբ ունեցած վերաբերմունքի համար. «Երկու ամ յուսադրեն և պահեն, զկատարածն գործոյ նորա չգիտեմք»: Հ. Արղությանը դժգոհ է Ղուկաս կաթողիկոսից, որովհետև «մեր սրբազան կաթողիկոսն առ տիրուհին ոչ գրեաց զիր (թէպէտ բազմիցս ստիպեցին սոքա), այլ զօրազուլուն՝ ծածկեալ բանիւք»: Արղությանը դրան հակադրում է Ե. Շահամիրյանի մտահոգությունները և գրում, թե նման խնդիրների մասին «չէիք ոք խորհօղ և մտածօղ ազգի մերում... այլ միայն Հայցեն թէ՛ “զմեզ փրկեցէք”»: Երբ փրկեն սրով, ըստ օրինի թագաւորաց, հարկաւորին ծառայ առնել իւրեանց»: Խնդրելով նամակ ու նվերներ առաքել կայսրուհուն, որպեսզի «առաւել դիտասցին, թէ գոյ ի մէնջ այնպիսի իշխան ի ազգէն Հայոց, որ կարէ համապատասխանել իւրեանց յօժարութեան»: Նույն միջոցին Հնդկահայոց համակրանքը Վրաստանի նկատմամբ պահպանելու համար Հերակլը 1786 թ. Ե. Շահամիրյանին շնորհում է Վրաց իշխանի տիտղոս:

1788 թ. հունվարի 29-ին նամակով Արցախի մեխիքները կրկին դիմում են Գ. Պոտյոմկինին՝ խնդրելով զինական օգնություն: Մեխիքները իրենց դիմումը կրկնել են նաև նույն թվականի մարտին: Ի պատասխան մեխիքների խնդրագրերի, Գ. Ա. Պոտյոմկինը նրանց առաջարկել էր ընդամենը տեղափոխվել Ռուսաստան, որտեղ նրանց կարող էին շնորհվել կալվածքներ: Հովսեփ Արղությանին մնում էր հուսադրել Արցախի մեխիքներին՝ համախմբելու Վրաստանի շուրջ, գոնե ժամանակավորապես այլևս չհուսալ Ռուսական օժանդակություն ու սպասել սկսված ռուս-թուրքական պատերազմից հետո Ռուսաստանի արտաքին քաղաքականության հնարավոր շրջադարձին: 1788 թ. մայիսի 2-ի նամակում նա Մեջլում և Աբով մեխիքներին գրում է. «Ձեր գալն աստ ոչ է բարւոք...»: Ամիսներ անց, 1788 թ. հուլիսի 30-ին, Հովսեփ Արղությանը կրկին պատասխանելով մեխիքների նամակին, գրում է. «... չկարծեմ ի յայսմ միջոցի օգնութիւն ինչ լինի ձեզ աստի, եթէ կարէք այլ իմն դուռն գտանել և բախել, և կամ նորին արքայա-

կան մեծութեանն աղաչել՝ օգնել ձեզ, ըստ ժամանակին արարէք և զժամանակն մի անցուցանէք...»:

Նշելի է, որ Վրաստանից ռուսական զորքերի ետ կանչվելուց հետո Հերակլ Զ-րդը ևս ստիպված էր Վրաստանը ավերումներից զերծ պահելու նպատակով որդեգրել նոր քաղաքականություն: Հերակլը ստիպված նոր ղեկավարություն ուղարկեց Կ. Պոլիս և «բարեկամություն» պայմանագիր կնքեց Օսմանյան արքունիքի հետ: Այդ շրջադարձը, բնականաբար, որջուկնեց նաև Ախալցխայի փաշան: Նման պայմաններում խոսուհն է այն փաստը, որ Գ. Ա. Պոտյոմկինը, որ ռուսական գումարտակները դուրս էր հանել Վրաստանից, Հերակլին ներկայացնում է մի արտառոց պահանջ, այն է՝ որպեսզի վերջինս, համաձայնելով Սոլոմոն Առաջինի հետ, հարձակվի թուրքական ուժերի վրա: Բնականաբար, Հերակլը չէր կարող իր համար նման կործանարար քայլի դիմել:

1787-1791 թթ. ռուս-թուրքական պատերազմի ավարտից հետո Ռուսաստանը չէր շտապում Վրաստան վերադարձնել Գեորգիեյական պայմանագրով նախատեսված զորաբանակը, թեև իրազրույթյան փոփոխությունների և իրանական կողմից սպառնալիքների պայմաններում Հերակլը անընդմեջ նամակներ ու խնդրագրեր էր առաքում Ռուսաստան՝ խնդրելով Վրաստան առաքել ռուսական որևէ զորամաս: Նման իրազրույթյան մեջ Արցախի հայ մելիքների համար ևս հասկանալի էր, որ Հայոց թագավորության վերականգնման մասին իրենց ցանկությունները չէին կարող արժանանալ Հերակլի հավանությունը, ուստի Հերակլի աջակցությունը ստանալու նպատակով նրանք հակվում են առաջադրելու նոր տարբերակ:

Ռուսական արքունիք ուղղված նամակներով Արցախի հայ մելիքները 1793 թ. գրում են իրենց համաձայնությունը՝ Իրրահիմի լծից ազատագրվելուց հետո ընդունելու Ռուսաստանի դաշնակից համարվող Հերակլ Զ-րդի թուռան՝ Դավիթ արքայազնի իշխանությունը, հակառակ դեպքում խնդրում են Գեորգիեյսկի և Կասպից ծովի ափերին տեղ հատկացնելու պարագայում փոխադրվել այնտեղ՝ իրենց հպատակ բնակչությամբ, եթե Ռուսաստանն այլևս մտադիր չէ գեթ փոքրիկ զորախումբ առաքել Այսրկովկաս: Ռուսական կողմից պատասխանի հասցումն և Այսրկովկասում իրադարձությունների սրնթաց զարգացման պայմաններում հայ մելիքները ստիպված էին կատարել սեփական զիջողորոշման նոր հստակացումներ: Աղա Մահմադ խանի արշավանքը Այսրկովկասում ստեղծում էր ուժերի նոր հարաբերակ-

ցություն: Մելիք Մեջլումը հայ իշխանությունների ոխերիմ հակառակորդ Իբրահիմ խանի դեմ փորձում է օգտագործել Իրանի նոր բռնակալի հետ նրա հակամարտության հանգամանքը՝ այլևս չհուսալով ռուս վրացական օժանդակության ձգձգվող ու անորոշ սպասումին և իր զորաբանակով միանում է Արցախ ներխուժած Իրանական բանակին՝ հուսալով Իբրահիմ խանի տապալումից հետո ստանալ Արցախի իշխանությունը: Աղա Մահմադ խանի արշավանքը, սակայն, որքան սրնթաց, նույնքան և կարճատև լինելով, չի ապահովում Այսրկովկասում նրա կայուն իշխանություն հաստատումը, անառիկ է մնում Արցախի միջնաբերդը հանդիսացող Շուշին: Իբրահիմ խանը ևս Աղա Մահմադ խանի թշնամին լինելու խաղաքարտով հայտնվում է նրա դեմ թշնամանքով արամադրված Ռուսաստանի դաշնակիցների բանակում: Աղա Մահմադ խանի Իրան մեկնելուց հետո Մելիք Մեջլումը, մնալով Հայաստանում, Գանձակի խանի հետ միասին փորձում է զիմակայել Վրացական բանակի պատժիչ արշավանքին, որտեղ և կնքում է իր մահկանացուն:

Մոտալուտ փրկություն սպասումներն ու ոգևորությունը ընդհատվեց Ռուսաստանում զահ հարձրացած Պավել I-ի կողմից ռուսական բանակի արշավանքը դադարեցնելու մասին հրամանով: Ռուսաստան վերադարձող չուխսի Արդուլթյանի հետ 1797 թ. դեսպանադեսպանությամբ ճանապարհվում են նաև Ջիմչիզ և Փրիդոն մելիքները: Այդ դեսպանագնացությունը պետք է պատասխան տար Արցախի սպագա կարգավիճակի հարցին: 1797-1799 թթ. մելիքները չեն պնդում միայն ռուսական զորքի առաքման պահանջը և ռուսական արքունիք են դիմում մի խնդրագրով, որի մեջ ներկայացվում են նաև այլ առաջարկություններ.

1. Զինական օժանդակություն Ղարաբաղում Հայոց պետականության վերականգնման և մահմեդական տիրապետությունից ազատագրվելու համար:
2. Եթե այդ առժամանակ անհնար է, ապա խնդրել Վրաց թագավորին Վրաստանում ժամանակավոր ապաստան տալու մեկնություններին:
3. Եթե այդ ևս անհնար է, ապա թույլատրել փոխադրվելու Ռուսաստան՝ իրենց հպատակ ողջ բնակչությամբ հանդերձ:

Վրաց արքունիքի կողմից 1798 թ. դեկտեմբերի 16-ին Պավել Առաջին կայսրին ներկայացրած 11 կետանոց խնդրագրի երկրորդ կետը վերաբերում

էր Հայ մեղիքներին ենթակա ժողովրդին: Խնդրվում էր թույլատրել նրանց բնակվելու Վրաստանում, սակայն Վրաց արքայի ենթականեր դառնալու պայմանով: 1799 թ. փետրվարի 11-ին ի պատասխան այդ խնդրանքի, Ռուս սահմանադրության համաձայնում է, որ Հայերը ենթարկվեն Վրաց արքային, սակայն և պահանջվում է նրանց նեղություն չպատճառել ու նաև որ պետք է Հայ բնակչությունն իրավունք ունենա վերաբնակվել կամ առևտրական գործունեություն ծավալել նաև Ռուսաստանում:

Ուշագրավ է, որ Հովսեփ Արղունցի 1798 թ. մարտի 25-ին Պետերբուրգից Գեորգի թագավորին գրած նամակում շնորհավորելով նրա գահակալությունը, միաժամանակ խորհուրդ է տալիս «որպես իսկական թագաւորի Հայոց, փութով գորդին ուղևորել արժանաւոր պատասխանաւ ի Դուռն կայսերական»: 1799 թվականին Պավել Առաջինը ավարտված է համարում նախապատրաստական փուլը և հրամայում գորք ուղարկել Վրաստան՝ այնտեղ Ռուսաստանի տիրապետությունը հաստատելու համար: Մեղիքների կարգավիճակը որոշակիացվում է Վրաստանում նրանց ժամանակավոր կացություն տրամադրելու ձևով, սակայն, ի տարբերություն նախորդ դեպքերի, երբ Հայ մեղիքները Վրաստանում ապաստանելու պարագայում հայտնվում էին փախտական կարգավիճակով, այս դեպքում Պավել Առաջինի միջնորդությամբ Գեորգի 12-րդը վրաց պետության սահմաններում նրանց է տրամադրում իրենց իսկ պահանջած Ղազախ գավառի փոխարեն Լոռի գավառը, որը մինչ այդ արդեն շնորհվել էր Շ. Շահամիրյանին: Մեղիքները պետք է տնօրինեն այն մինչ Շահամիրյանների Լոռի ժամանելը:

1799 թ. դեռևս. Լազարևի հրամանատարությամբ ռուսական զորքի մուտքը Վրաստան արմատապես փոխում է իրավիճակը ողջ Այսրկովկասում: Վրաստանը վերածվում է հենակետի, որտեղից և պետք է ձեռնարկվեր նաև բուն Հայաստանի ազատագրման գործընթացը:

Ռուսահայ գաղթաբանի բնակչության քանակական կազմը – Հայ-ռուսական փոխհարաբերությունների իրական պատկերի վերհանման համար կարևոր է հստակ պատկերացում ունենալ ինչպես ռուսահայ գաղթաբանի բացարձակ թվաքանակի, այնպես էլ նրա աճի ու փոփոխությունների միտմաների մասին:

Հայ բնակչության թիվը 18-րդ դարի վերջին գերազանցել էր 40 հազարի սահմանագիծը, որից ավելի քան 10 հազարը՝ Հյուսիսային Կովկասում:

Համեմատության համար հարկ է ընդգծել, որ նույն ժամանակամիջոցին Հյուսիսային Կովկասում ենթադրվում է մոտ 2500ից մինչև 3000 վրացիների առկայություն, որոնց մի զգալի մասը ևս վրաստանցի հայեր էին, հաճախ՝ հայկական անձնանուններով, որոնք ցուցակներում ընդգրկված են որպես «վրացիներ» (վրաստանցիներ):

Ռուսական պետության վարած քաղաքականության հետևանքով Ռուսաստանի տարածքում ձևավորվեցին բազմամարդ ու Հայազգի հոծ զանգված ունեցող բնակավայրեր: Ինչպես Լազարյանները, այնպես էլ Հովսեփ Արղունցի գերազանց դիտակցում էին Ռուսական պետության համար Հայ բնակչության դերն ու նշանակությունը, հենվում էին այդ զանգվածի վրա և այդ ամբաստանում էր նրանց դերքերը:

Եթե 1780-ական թվականների սկզբներին Ռուսաստանը Հայ գործիչներին ներկայանում էր որպես ապագա դաշնակից պետություն, որի հետ Հայաստանը կարող էր ունենալ պայմանագրային հարաբերություններ, ապա 1790-ական թվականների վերջին Ռուսաստանը սկսում է ընկալվել որպես երկրորդ հայրենիք և Հայ բնակչության Ռուսաստան փոխադրումը խրախուսվում էր Հայ գործիչների կողմից:

Պայքարը Հայաստանի համար, սակայն, ոչ միայն չէր դադարել, այլև թևակոխել էր նոր փուլ և ընթանում էր ավելի նպատակասլաց ձևով, թեև արտաքուստ՝ խուլ և աննկատ:

Հայ ազատագրական շարժման գործիչները 18-րդ դարի երկրորդ կեսին մտահղացան մի համարձակ ծրագիր, այն է՝ Հայ ժողովրդի հայրենագարձությունը գաղափարը և փորձեցին իրականացնել այն:

Առաջինը նման ծրագիր մշակվեց Հնդկաստանում: Այդ փորձը պայմանավորված էր այն դիտակցությամբ, որ արձանագրել է Շ. Շահամիրյանը Ղուկաս կաթողիկոսին դրած նամակում. «եթե կարէ խոստանալ ժամանակն աշխարհին մերոյ Հովանաւորել մեզ, որ ոք ազատութեամբ բարիոք լինի հանել մեզ ի յայս պանդխտութենէ, զոր ինչ որ կարող լինիցիմք ի պողոյ աշխատանաց մերոց հանել աստի և մուծանել առ սեպհական աշխարհն մեր՝ նա միայն մնալոց է վասն մնացորդաց և սեպհական ազգին մերոյ, քանզի ի յայս տարրաշխարհի՝ թէ շինութիւն տանց, թէ՛ արուեստաշահութեանց, կատարածն մնալոց է ի Հնդկիս՝ վասն սեպհական ազգին Հեթանոսաց»: Նոր նախիջևանի հիմնումից հետո Ղզլարը դիմում էր Հայոց հավաքագրման հաջորդ հանգրվանը: Մինչև Հայաստանի ազատագրումը

«Նշագավար» Հնդկահայերին առաջարկում էր «տեղ բնակութեան ի յարեւել կոյս Հայաստանեաց ի գաւառն անուանեալ Ղզլար՝ ի պահպանութիւնն պերճապայծառ Կայսերութեանն Ռուսաց՝ վաղնջոց բարերարի յազգին Հայոց»։ Նախքան այնտեղ բնակութիւնն հաստատելը, սակայն, անհրաժեշտ է դիտուում իրավական կարգավորում տալ հայ-ռուսական փոխհարաբերութիւններին. «այլ յառաջ քան զշինել տուն և բնակիլ ի նմայ, հաստատեցեք դաշինս ընդ Կայսերութիւնն Ռուսաց»։

Այդ հույսը ամրապնդվում է 1783 թ. Գեորգիեւյան պայմանագրի կնքումից հետո: 1786 թ. ստանալով Վրաց իշխանական տիրոջու, Ծ. Շահամիրյանը փորձում է հայահայտարարի համար արդեն դիմել նաև Հերակլին: Նա փորձ է կատարում համաձայնեցնել Հերակլ թագավորի հետ և նրա թույլտվությամբ ու կոչով, նրա անունից դիմել տարասփյուռ Հայ ժողովրդին՝ հավաքվելու Վրաստանին ենթակա հայկական տարածքներում: Հերակլին ուղղված 1787 թ. Շահամիրյանի նամակից պարզվում է, որ նա, տեսնելով Հերակլի "բարեպէս ձգտումն" ստվարացնելու Վրաստանի բնակչութիւնը, խորհուրդ է տալիս աշխարհասփյուռ Հայութեանն ուղղել մի "Նամակ շնորհաց և պահպանութեան": Հերակլ Երկրորդը որոշ խմբագրումից հետո ուղարկված շարագրանքը, ստորագրել ու հաստատել է այն (1790 թ. դեկտեմբերի 4) և ուղարկել Մաղրաս: Ուղերձը տպագրվել է 1792 թ. Հարութիւն Շմալոնյանի տպարանում, 1000 օրինակ տպաքանակով: Պահպանվել է այդ ուղերձի հայերեն տպագիր օրինակից վրացերեն թարգմանութեան 1819 թ. արտագրութիւնը:

Հայ բնակչութեան կարգավիճակը Ռուսաստանում անընդհատ սրբագրութիւններին ենթարկվելով, տարբեր ժամանակներում ունեցել է տարբեր մակարդակ, սակայն և ձեռք է բերել որոշակի ուղղվածութիւն ու որակ: Հետևելով կարգավիճակի փոփոխութիւններին՝ կարող ենք հասկանալ նաև արքունիքի վարած քաղաքականութեան տրամաբանութիւնը հայ բնակչութեան նկատմամբ ու ըստ այդմ մակարբերել նաև Այսրկովկասի նկատմամբ ունեցած նրա միտումները: Միաժամանակ հայ վերարձակիչները ևս հետևողական գործունեութիւն են ծավալել բարելավելու իրենց իրավաստեանական կարգավիճակը Ռուսաստանում՝ առ այդ օգտագործելով Ռուսաստանի քաղաքական ու տնտեսական շահագրգռութիւնները:

Ռուսական պետութեան վարած հովանավորչական քաղաքականութիւնը տարածվում էր հայ բնակչութեան առավել լայն խավերի վրա, որը

խթանում էր դեպի Ռուսաստան բնակչութեան հոսքին: Այդ առաջին հերթին վերաբերում էր Ռուսաստանի հարավային դարպասը հանդիսացող Աստրախանին, որը Արեւելքից ժամանող հայ, բուխարացի, գիւանցի և հնդիկ վաճառականները կարևոր հավաքատեղին էր:

Հայոց իրավական կարգավիճակի խնդիրը ունեցել է զարգացման իր փուլերը և որպես այդպիսին, առաջին փուլ ընդունված է համարել 1747-1765 թթ. ժամանակամիջոցը:

1760-ական թվականներին Աստրախանի ռուս վաճառականութիւնը պահանջներ է ներկայացնում իշխանութիւններին՝ ռուս վաճառականութեան հետ համահավասար օտարերկրացիներին հարկման ենթարկելու մասին: Թեև այդ պահանջը, որը հակասում էր կենտրոնական իշխանութիւնների վարած հովանավորչական քաղաքականութեանը, էական շրջադարձ չարձանագրեց Հայոց կարգավիճակի հարցում, սակայն եղան որոշակի կառուցվածքային փոփոխութիւններ: Հայկական ռատհաուզի և թաթարական զբառանյակի փոխարեն ստեղծվեց Աստրախանահայոց ընդհանուր դատարան՝ երկու բաժանմունքներով: Այսպիսով, Աստրախանահայոց իրավական ու հարկային արտոնյալ կարգավիճակը գոյութիւն ունեցավ մինչև 1785 թ.:

Աստրախանահայոց ինքնավարութեան խնդրի հաջորդ փուլը կապված էր 1785 թ. ընդունված քաղաքային բարեփոխումների իրականացման հետ: Ըստ նոր կանոնադրութեան, հայագլի բնակչութիւնը ևս այսուհետև պարտավոր էր զբանջվելու քաղաքային դասերի մեջ (վաճառական, քաղքենի և այլն): 1797 թ. փետրվարի 28-ին ստորագրված Պավել Առաջինի հրովարտակով հրահանգվում էր Աստրախանահայերին վերադարձնել իրենց նախկին արտոնութիւններն ու կարգավիճակը: Վերականգնվեց «Ախիական ընդհանուր դատարանը», իսկ Սենատի 1800 թ. նոյեմբերի 19-ի որոշմամբ ստեղծվեց «Հայկական դատարան»-ը:

Հայ բնակչութիւնը ձգտում էր Ռուսաստանում ստանալ միանման արտոնութիւններ: Հովսեփ Արղունցիյանը 1799 թ. օգոստոսի 11-ին աստրախանահայերին Պետերբուրգից ուղղված նամակում շտապում է հաղորդել բառացիորեն «այսօր» ստացված «զհաստատութիւնն պրվիլէկի», որը ինքը տվել է «թարգմանել հայերէն, որ ընդ ռուստերենի ի միասին գրեցեալ լինիցի ի պրվիլէկիս, ենթ որոյ և նորին մեծութիւնն ձեռք դնելոց է և հաստատելոց»: 1799 թվականի հոկտեմբերի 28-ին ի վերջո հրապարակվեցին

Պատիւ Առաջինի ստորագրած հրովարտականները, որոնք ընդգրկում էին Ռուսաստանի զբիթի բոլոր հայկական խոշոր գաղթավայրերը: Այդ հրովարտականների հրապարակումը համընկավ դեպի Այսրկովկաս ուսուսական բանակի առաքմանը:

Պատիւ Առաջինի չորս հրովարտականները կազմված են 1799 թ. ապրիլի 15-ին Սենատին տրված հրահանգի համաձայն և խմբավորված են ըստ Հովսեփ Արղուժյանի 1798 թ. սեպտեմբերի 13-ին ներկայացրած "Հայկական բոլոր համայնքների կարիքների մասին" գեկուլցագիր-խնդրագրի: Համեմատությունից պարզվում է, որ հայ համայնքները Ռուսաստանում իրենց ներքին խնդիրներով բաժանվում էին հինգ խմբի, և նրանցից յուրաքանչյուրը բացի տեղական առանձնահատկություններով թելադրված արտոնություններից, ստացել էր նաև միասնական հոգևոր, դատական ու տնտեսական արտոնությունները, որոնք ընդհանուր էին Ռուսաստանում բնակվող բոլոր հայերի համար:

Հայ հասարակությունը բնավ էլ միասեռ և միատարր համայնք չէ եղել, համայնքի մեջ եղել է խոր ունեցվածքային շերտավորում, ունեցել է իր ներքին պայքարը տարբեր դասերի միջև:

Հայ-ուսական տնտեսական կապերի պատմությունը ներկայանում է մեկ կողմից բուն Ռուսաստանում հայկական գաղթօջախների տնտեսական ու առևտրական գործունեությունը, որը հանգամանորեն ուսումնասիրված է գաղթօջախների պատմությանը նվիրված մենագրական աշխատություններում, և մյուս կողմից՝ Ռուսաստանի և Արևելքի տարբեր երկրների միջև արտաքին առևտրական հարաբերություններում հայ վաճառականության ակտիվ մասնակցությունը, որը համեմատաբար քիչ է հայտնի և մնում է պակաս ուսումնասիրված:

ԺԸ. դարի երկրորդ կեսից փոխվում է Ռուսաստանի վերաբերմունքը Միջին Ասիայի նկատմամբ: Ուզբեկական խանությունները հետզհետե սկսում են դիտվել ոչ որպես Հնդկաստան տանող ճանապարհին գտնվող լոկ տարանջիկ երկրներ, այլ առևտրա-տնտեսական ու քաղաքական համագործակցության ինքնուրույն կազմավորումներ: Մերիբում առևտրական գործառնությունները իրականացվում էին հիմնականում բնիկների միջոցով և հաղվադեպ միայն՝ ուսուս վաճառականների: Ալիլին, դեպի Ջինաստան, Տիրեթ և Աֆղանստան ճանապարհվում էին հիմնականում միջինասիական և հայ վաճառականները՝ ինչպես ասվեց, ուսուսների մուտքը նշված

երկրներ արգելված լինելու պատճառով: Եթե ԺԸ. դարի առաջին կեսին ուսուս-հնդկական առևտուրը կատարվում էր հիմնականում Աստրախանից Կասպից ծովի վրայով և Այսրկովկասի ցամաքային ծովափով ու հասակորեն չէր տարանջատվում ուսուս-իրանական առևտրաշրջանառությունից, ապա ԺԸ. դարի երկրորդ կեսին ակնհայտորեն աճեց Միջին Ասիայի և Հնդկաստան տանող նրա քարավանային ուղիների դերը: 1735 թ. հիմնադրված Օրենբուրգ էր փոխադրվում Աստրախանի ուսուսական պետական հիմնարկների մեծ մասը, որոնք կոչված էին կառավարելու նաև Միջին Ասիայի հետ Ռուսաստանի տնտեսական ու դիվանագիտական հարաբերությունները: Հետզհետե Արևելք էր տեղափոխվում նաև հայ վաճառականների մի մասը: Ռուսական կառավարությունը միջոցներ էր ձեռնարկում ավելի սերտ հարաբերություններ հաստատելու Միջին Ասիայի և Աֆղանստանի ու Հնդկաստանի հետ: Նման հանձնարարություններով այնտեղ էին ուղարկվում ինչպես այլազգի (Մեհտի Ռաֆաիլով), այնպես էլ հայ վաճառականներ ու դիվանագետներ Բոգդան Ասլանովը, Միմեոն Մադաթովը, Իվան Մուրատովը և այլք: ԺԸ. դ. վերջերին կազմված Ռուսաստանի և Արևելքի երկրների միջև առևտրական հարաբերությունների զարգացման տարբեր ծրագրերում հաճախ են հիշատակվում հայ խոշոր վաճառականների անուններ, որոնց հետ էին կապվում այս կամ այն ծրագրի իրականացման հույսերը:

Հայ վաճառականությունը մի զգալի մասով թեև չըջվել էր դեպի Օրենբուրգ և Միջին Ասիա, սակայն Աստրախանում մնացած հայազգի վաճառականությունը շարունակում էր իր մասնակցությունը ունենալ ուսուս-իրանական առևտրին, իսկ Կասպից ծովի վրա ունեցած նրանց առևտրական նավերը երթևեկում էին Աստրախանից մինչև Գիլան, Մազանդարան ու Բաբու՝ փոխադրելով ինչպես նավատերերին պատկանող ապրանքներ, այնպես էլ վճարովի ծառայություններ մատուցելով այլևայլ վաճառականներին:

ԺԸ. դարի երկրորդ կեսի հայոց ազատագրական ձգտումներին համար միավորման առանցք կարող էր ծառայել միայն եկեղեցին, որի հնարավորությունները լիակատար օգտագործելու գործին ձեռնամուխ եղավ 1763 թ. դահ ըարձրացած Միմեոն Երևանցի Հայոց կաթողիկոսը: Միմեոն Երևանցին 1766 թ. Պետերբուրգ է ուղարկում մի դեսպանություն՝ Դավիթ վարդապետի ղեկավարությամբ: Լուծելիք հարցերից գլխավորն էր Ռուսահայոց թե-

մը Գանձասարի կաթողիկոսությունից էջմիածնի իրավասությունները էջմիածնի իրավասությունները փոխանցելը և Ռուսաստանի Հայ Համայնքի կողմից միայն էջմիածնի գերագահության ընդունման ապահովումը: Պատվիրակությունը պատվով կատարեց իր առաքելությունը և 1768 թ. վերադարձավ էջմիածին՝ իր Հետ բերելով եկատերինա երկրորդ կայսրուհու հրամանագրերը այն մասին, որ Հայոց եկեղեցու ոչ մի հոգևորականի չի թույլատրվի այլևս մուտք գործել Ռուսաստանի տարածք առանց էջմիածնի երաշխավորության: 1773 թ. Սիմեոն Երևանցին Ռուսահայոց թեմի առաջնորդ նշանակեց երիտասարդ եպիսկոպոս Հովսեփ Արղունցյանին: 1774 թ. Իրանի Ռեշտ նավահանգստից Հ. Արղունցյանը ժամանեց Աստրախան: Նույն թվականին ավարտվում էր ռուս-թուրքական պատերազմը՝ Քյուչուկ Կայնարջիում կնքված պայմանագրով (1774 թ. հուլիսի 10), որի հաստատումն ու հրապարակումը տեղի ունեցավ մոտ մեկ տարի անց: Հովսեփ Արղունցյանը, ձեռք ձգելով հաշտության պայմանագրի տեքստը, այն թարգմանում է հայերենի և առաքում էջմիածին: Պայմանագրի 7-րդ կետով Կ. Պոլսում Ռուսաստանի դեսպանին իրավունք էր վերապահվում հանդես գալու Օսմանյան տերությունից մեջ քրիստոնյաների շահերի պաշտպանությունը: Սիմեոն Երևանցու առաջարկով ռուսական արքունիքը կարգադրում է Կ. Պոլսի ռուսական դեսպանին հետամուտ լինել պաշտպանելու նաև Հայ քրիստոնյաների շահերը:

1780-1790-ական թվականներին անընդմեջ ստիարացող ռուսահայ գաղթօջախում ձևավորվող դավանական փոխհարաբերությունները ևս ձեռք են բերում քաղաքական ուղղվածություն: Արդեն իսկ 1780 թ. փետրվարի 18-ին մեծ հանդիսավորությամբ կատարվում է Պետերբուրգի սուրբ Կատարինե եկեղեցու օծումը: Օծման հանդիսություններին, ըստ Հովսեփ Արղունցյանի շիշատակարանի, ներկա են եղել «ամենայն նախարարքն և յոյժ հաւանեցան ամենայն արարողութեանցն մերս սուրբ եկեղեցւոյ և բազում գայթակղութիւնք բարձան»:

Սիմեոն Երևանցուն հաջորդած Ղուկաս Կարենցու գահակալության տարիներին կազմված Հայ-ռուսական դաշնագրի նախագծի առաջին իսկ կետը պահանջում էր դավանական խնդիրներում երկուստեք հանդուրժողական վերաբերմունք: Հայոց եկեղեցու համար դավանական հանդուրժողականության միջնորդող ձևավորելու գործում մեծ կարևորություն ունեցավ Պավել Առաջին կայսեր կրոնի ուսուցիչ Պլատոն միտրոպոլիտի դիրքորո-

շումը: Ըստ Հ. Արղունցյանի վկայության, Պլատոնը բազմիցս սանձել է ռուս և հույն հոգևորականության հարձակումները Հայոց եկեղեցու և եկեղեցականներին դեմ: Որոշակի նպատակադրումով և, ամենայն հավանականությամբ Հ. Արղունցյանի նախաձեռնությամբ, Պետերբուրգում հայերենի թարգմանվում Պլատոն միտրոպոլիտի «Քրիստոնեական աստվածաբանությունը», «Քարոզներ» և «Ուղղափառ կրթություն» գրքերը (թարգմանությունը), «Քարոզներ» և «Ուղղափառ կրթություն» գրքերը (թարգմանությունը) Ստեփանոս Ասլանյան): Ռուսերենի է թարգմանվում և Պետերբուրգում 1799 թ. տպագրվում «Հայոց եկեղեցու դավանանքը» գիրքը, որն այնուհետև Պետերբուրգում վրաց գեսպանության քարտուղար Գեորգի Ավալիշվիլին ռուսերենից թարգմանում է նաև վրացերենի:

Պավել Առաջինի 1799 թ. հոկտեմբերի 28-ի հրամանագրերում ընդգծված շեշտվում է, որ թույլատրվում է ազատորեն դավանել Հայոց դավանանքը, կառուցել եկեղեցիներ և կրոնական հարցերում ենթարկվել միայն էջմիածնի կաթողիկոսին ու Ռուսահայոց առաջնորդ Հովսեփ Արղունցյանին: Ավելին, Ղուկաս կաթողիկոսի մահից հետո, Ռուսական արքունիքը պաշտպանում է Հ. Արղունցյանի թեկնածության առաջադրումը Հայոց կաթողիկոսական գահի համար և Ռուսական բանակի վրաստանում լինելու հանգամանքով թեկնադրված՝ Հովսեփ Արղունցյանի միջոցով է 1801 թ. փետրվարին հրապարակում վրաստանը Ռուսաստանին միացնելու Պավել Առաջինի հրովարտակը:

Հայ-ռուսական եկեղեցական հարաբերությունների ուղղվածությունը պայմանավորվում էր քաղաքական հարաբերությունների պահանջով ու մակարդակով:

1790-ական թվականներին Աղա-Մահմադ խանի հզորացմամբ Իրանի պատմության մեջ սկսվում էր նոր շրջան, որն ավարտվեց Ղաջարական դինաստիայի հաստատմամբ: Այդ ընթացքում Աղա-Մահմադ խանն ավերիչ արշավանք ձեռնարկեց դեպի Այսրկովկաս, գրավեց և ավերեց Թիֆլիսը: Չնայած Թիֆլիսում նա մնաց ընդամենը մեկ շաբաթ, սակայն Աղա-Մահմադ խանը Թիֆլիսն ավերելուց հետո դեռևս մտադիր չէր արագորեն թողնելու Այսրկովկասի սահմանները և հրամայել էր բանակի համար Մուղանի դաշտում կուտակել պարեն ու զինամթերք: Հովսեփ Արղունցյանը Թիֆլիսի վերահաս ավերումը կանխելու համար Հերակլ 2-րդի խնդրանքով դիմել էր Ի. Գուրգուլիին՝ օգնական զորք ուղարկելու առաջարկով, ուստի 1795 թ. դեկտեմբերի 15-ին, այսինքն՝ արշավանքից հրեք ամիս անց, Գրիգորիսպո-

լից Ստեփան Դավթյանին ուղղած նամակում ղժգոհում էր, թե՛ «Մեղավորն Կուտովիչն է, ողորմիլի անբախտ արքային ի մարտի առաքեալ էր առ նա և գրեալ՝ օգնել կամ Հրաժարիլ, թէպէտ ես շատ խոսեցայ ընդ նմա՝ վասն այսմ, որ երկիրն առանց ձեր օգնութեանն փչանալոց է, այլ Հաստ զլուխ նորա ոչ ընկալաւ»։ Վավերագրերից պարզվում է, սակայն, որ Ի. Գուգուլիչը ոչ միայն Հասկանում էր, այլև ինքն իր Հերթին զեկուցագրեր էր ներկայացնում արքունիք՝ Հուսալով կարգադրություններ ստանալ գործելու համար։ Ժամանակին զորք չտրամադրելու փաստը խիստ սասանեց Ռուսաստանի վարկը, և Վրաստանում ծավալում ստացան Հակոբուսական արամադրությունները։ Ռուսական քաղաքականության վարկը փրկելու և առաջիկայում Այսրկովկաս արշավանքի ձեռնարկումը արդարացնելու նպատակով ռուսական հրամանատարությունը, և մասնավորապես Ի. Գուգուլիչը, Թիֆլիսի զբաղումը սկսեցին վերագրել ոչ թե ուժերի անհավասարությունը, այլ ներքին դավաճանությունը։ Թիֆլիսի զբաղումը դավաճանություն վերագրելը սկիզբ է առել Ռուսաստանում, ռուս հրամանատարության տարածած լուրերից։

Այսրկովկասի նկատմամբ իր Հավանությունների բացահայտ զբնուրում էր Ռուսաստանի կողմից գեներալ Վ. Ա. Զուբովի հրամանատարությունում 1796 թ. գարնանը ռուսական բանակի առաքումը։ Հայ գործիչները ոչ միայն չէին կարող լով դիտորդի դերում մնալ, այլև որոշակի ոգևորություն լծվեցին այդ գործընթացին՝ բարեհաջող ավարտին Հասցնելու փայփայած իրենց ձգտումները։ Ռուսահայ գործիչներին ու բնակչությանը համախմբելու զործում մեծ է Հովսեփ Արղունի զերը։ Նա ոչ միայն անձամբ էր մասնակցում արշավանքին և փորձում իր նպաստը բերել արշավանքի Հաջողությունը, այլև Հորդորում կամ պահանջում էր այլևայլ գործիչներին՝ ժամանելու զործող բանակ։ Նրանից բացի ռուսական բանակում էին գտնվում Մանուչար Կաճկաճյանցը, որ նշանակվել էր Վ. Զուբովի մոտ թարգման, Ստեփան Դադաշյանը, Ավերյան Սերբերովը, Նիկիտա Գաջանովը, մայր Ախվերզովը, Հարություն Արարատյանը, աստրախանցի Սերգեյ Բոդաևովը, որ Վ. Զուբովի կողմից ուղարկվել էր Շուշի, և շատ ուրիշներ։ Հ. Արղունյանի հետ Ղլարից դեպի Դերբենա՝ ռուսական բանակ են ճանապարհվել նաև Աստրախանաբնակ Դերբենացի ու Շամախեցի շատ կամավորներ, որոնց ընտանիքները գտնվում էին Հ. Արղունյանի հոգատարության ներքո։

18-րդ դարի վերջին քառորդին փորձ է արվում օգտվելու բուն իսկ Պարսից պետությունն ներքին հակասություններից և գործարքի գնալ հակամարտող ուժերից այն թևի հետ, որը կարող էր ընդառաջել Հայոց բաղձանքին և որի համար կարող էր բարենպաստ լինել ինչպես Ռուսաստանի, այնպես էլ Հայ գործիչների օժանդակությունը։ Ջանքեր են գործադրվում կապեր հաստատելու Իրանի գահի համար պայքարում Ռուսաստանի օժանդակության կարիքն զգացող Ալի-Մուրադ խանի ու այնուհետև Աղա-Մահմադ խանի եղբայր Մուրթուզա Կուլի խանի հետ։ Վերջինիս հետ ավելի քան մեկ տասնամյակ հայ գործիչներին մտերմությունը թելադրված էր ինչպես Իրանի գահի համար նրա թեկնածությունը Ռուսաստանի կողմից պաշտպանվելու խնդրով, այնպես էլ Ռուսական արքունիքում բարենպաստ կարծիք ստեղծելու մեջ Հայ գործիչներին միջնորդությունը դիմելու նրա մտահոգությունը։

Ձախտվելով Աղա Մահմադ խանի հետ հարաբերություններում, Ռուսաստանը փորձ է ձեռնարկում հարաբերությունները սերտացնելու Աղա մահմադ խանի հակառակորդ Ալի Մուրադ խանի հետ։

Օգտվելով Իրանում կենտրոնական իշխանության բացակայությունից Գ. Ա. Պոտյոմկինը Գեորգիելյան պայմանագրի կնքումից հետո մտահոգանում է Այսրկովկասում ռուսական ազդեցությունը ընդարձակելու նոր տարբերակ։ Այդ նպատակով փորձ է արվում օգտագործել Ալի Մուրադ խանին Ռուսաստանի Հովանավորության և նրան Իրանի նոր շահ ճանաչելու խոստումով գայթակղումը։ Գ. Ա. Պոտյոմկինի Հանձնարարությունում 1783 թ. հոկտեմբերին Ալի Մուրադ խանի մոտ՝ Սպահան է ուղարկվում հայազգի Հակոբ Թոխաթյանը (Անտոնյան)։ Ալի-Մուրադ խանը պատրաստակամություն է Հայտնում Ռուսաստանի հետ փոխանակել պաշտոնական ներկայացուցիչներ, ազատել մաքսատուրքերից ռուսական վաճառականներին և միաժամանակ զգուշացնում, թե ինքը չի կարծում, որ Ռուսաստանը տարածքներ կպահանջի Իրանից։ Ջեկուցագրից ակնհայտ է, որ Հակոբ Անտոնյանը հանձնարարություն է ունեցել հաղորդելու Ռուսաստանի կողմից տարածքային պահանջների մասին, որին և ի պատասխան հսկել է Ալի Մուրադ խանի վերորբերյալ առարկությունը։ Այդ հանդամանքը ընդգծելի է, որովհետև պատմագիտություն մեջ համընդհանուր տարածում է ստացել այն դրույթը, թե իբր տարածքային զիջումներին նախաձեռնությունը պատկանում էր Ալի Մուրադ խանին։ Էնդելիում Ռուսական Հյուպատոս Ի. Վ.

Թուամանովսկին ևս 1783 թ. դեկտեմբերի 1-ին Ալի-Մուրադ խանի մոտ է ուղարկում Հայազգի Մեղքոմ Պոպովին:

Թեև Ռուսաստանի Համար գայթակղիչ էր այն, որ Ալի-Մուրադ խանի՝ Ռուսաստանի օժանդակությունը ստանալու դիմաց կարելի էր պահանջել Ղարադաղը, Ղարաբաղը, Նախիջևանի ու Երևանի խանությունները և Այսրկովկասի մերձկասպյան տարածքները, սակայն այդ ծրագրի խափանումը կապված էր ոչ միայն Ալի-Մուրադ խանի անակնկալ մահվան հետ: Դեռ մինչև մահը նա դրսևորել էր ռուսական ծրագրերի դեմ իր դիրքորոշումը և պատահական չէ, որ Դերբենտի Ֆաթալի խանը ևս «Ալի Մուրադ խանից հրաման ստացավ խզել ռուսների հետ ամեն տեսակի կապերը»: Ուստի միանգամայն իրավացի է այն հետևությունը, թե Ալի-Մուրադ խանի կողմից ևս Ռուսաստանին խոստումների քաղաքականությունը զուտ դիվանագիտական խայժ էր, որպիսին շարունակել էր կիրառել նաև Աղա Մահմադ խանը Ալի Մուրադ խանի մահից հետո՝ սակայն այս դեպքում Օսմանյան պետության հետ վարվող բանակցություններով իր տիրապետությունը ընդունելի դարձնելու նպատակով: 1785 թ. սկզբներին (փետրվարի 7) մահանում է Ալի-Մուրադ խանը: Զենդերի կողմն անցած Մուրթուզա Կուլի խանը անցնում է թալիշների մոտ և Ռուսաստանից օգնություն ստանալու Համար փորձում հավաստիացնել, թե իր և իր եղբոր՝ Աղա Մահմադ խանի, միջև թշնամանքը հետևանք է այն բանի, որ ինքը հովանավորել է Վոյնովիչի ռուսական արշավախմբին:

Ի դեմս Մուրթուզա Կուլի խանի Ռուսաստանը տեսնում էր մի ուժ, որը անհրաժեշտ պահին կարելի էր հակադրել Աղա Մահմադ խանին:

1794 թ. աշնանը Իրանը արդեն գրեթե միավորված էր Աղա Մահմադ խանի արի ներքո:

Մուրթուզա Կուլի խանին ու նրա ղեկավարին հասցեագրված Հ. Արղուլթյանի մեզ հայտնի առաջին նամակները գրվել են 1791 թ. փետրվարի 12-ին Յաչից: Ուշադրավ է Հ. Արղուլթյանի այն նշումը, թե ռուսական կողմի հանձնարարությունը ինքը ևս լիազորված է տնօրինելու դիվանագիտական բանակցությունների ընթացքը: 1792 թ. դեկտեմբերի վերջերին Մուրթուզա Կուլի խանը, վերջնականապես զգալով իր վիճակի անհուսալիությունը Գիլանում, ռուսական նավով, իր հետ վերցնելով նաև Աբաս և Ռիզա խաներին, ճանապարհվում է Ռուսաստան: Ռուսական արքունիքը նրան պահում է Աստրախանում: Աղա Մահմադ խանը միջոցներ և ուղիներ էր ու-

րոնում Ռուսաստանում գտնվող եղբորը կրկին Իրան վերադարձնելու և Իրանում իր տիրապետության համար այդ սպառնալիքը չեղոքացնելու նպատակով: 1795 թ. սկզբներին Մուրթուզային սեղափոխում են Պեսերբուրգ և չքեղ ընդունելություն կազմակերպում Ռուսական արքունիքում: Աղա Մահմադ խանը 1795 թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսներին գրավում է Այսրկովկասի զգալի մասը, ավերում Թիֆլիսը և վերագառնում Խորասան:

Վ. Զուբովի ղեկավարությամբ Ռուսական զորքի արշավանքի ժամանակ իշխանությունները Մուրթուզա Կուլի խանին ուղարկում են Սարի կղզի և նրան ուղեկցող նշանակում Պետր Կովալենսկուն, որտեղից նրանք բանակցություններ էին վարում մահմեդական ցեղերի առաջնորդների հետ՝ նրանց Աղա Մահմադ խանի դեմ ոտքի հանելու համար: 1796 թ. նոյեմբերին մահանում է Եկատերինա Երկրորդը, և զորքերը 1797 թ. ետ են քաշվում դեպի Ռուսաստան:

Ռուսական քաղաքականության այդ անակնկալ շրջադարձը շտիկուններ է մտցնում ինչպես Հայ գործիչներին ծրագրերում, այնպես էլ Մուրթուզա Կուլի խանի ճակատագրում: 1797 թ. Աղա Մահմադ խանի սպանությունից հետո Պարսկաստանում սկսված գահակալական կռիվներում հաղթում է Բարա խանը, և այնուհետև օժվում որպես Իրանի նոր շահ՝ Ֆաթ-Ալի շահ անունով (1797-1834): 1798 թ. հունիսին Պեսերբուրգ է ժամանում վերջինիս ղեկավար Միրզա Սադրը Հասանը, բերելով Ֆաթ-Ալի շահի շնորհավորանքները Պավել Առաջինին՝ նրա գահակալելու առիթով և միաժամանակ պատրաստակամություն էր հայտնվում բարելավելու երկու երկրների միջև խանգարված առևտրական հարաբերությունները: Մուրթուզա Կուլի խանի թեկնածությունը հնարավորություններ էր տալիս համար այսպիսով այլևս վերանում է:

Հովսեփ Արղուլթյանը առիթն օգտագործում է և մաղթանքներ ու խնդրանքներ է հղում Բարա խանին: 1798 թ. մարտի 12-ին Պեսերբուրգից Աբաս խանի միջոցով Հ. Արղուլթյանը շնորհավորում է Բարա խանին. «Զի թագաւորեացի է ի վերա Պարսից աթոռոյն վասն խաղաղութեան, վասն աշխարհաշինութեան և վասն գթութեան և ողորմութեան ի վերա հպատակաց իւրոց ... և զգոյթ խնամոց և ողորմութեան իւրոյ տարածեսցէ ի վերա հպատակաց իւրոց մահմետականաց և քրիստոնէից»: Այնուհետև խնդրում է, «որպէս նախնի թագաւորն Պարսից ևս Աղայ Մահմատ խան թագաւորն հայրն և հօրեղբայրն իւր ողորմութեամբն իւրեանց միշտ պահպանել

գտուրը Աթոռն մեր էջմիածին՝ Ուչքելիտայ կոչեցեալ, և մեծ խալիֆ նորին... առաւել ցուցանել առ նա զգոյթ և զողորմութիւն իւր և հրամայել Երևանայ խանին, որ չզրկեն զՈւչքելիտէն և կամ յափշտակէն գմուլք նորա, զի նախնի թագաւորքն մաղաֆ են արարեալ զգիւղորայս Ուչքելիտէի...»: Հաջորդ կետով խնդրում է «զգոյթ ողորմութեան իւրոյ տարածանել առ ողորմելի ազգս մեր, որք են ենթ խնամոց և հովանաւորութեան իւրոյ մեծութեանն, որ նորա վայելելով զայն՝ փախուցեցաւքն ի բռնութենէ խիստ տեսարցն յետս դարձցին ի հայրենի աշխարհն իւրեանց»: Հինգերորդ խնդրանքը վերաբերում է Արցախի խնդրին. Հ. Արղությանը պահանջում է Ղարաբաղի Իրրահիմ խանին «բառնալ ի Շուշու բերթէն և կործանել զնա», քանզի նա էր Աղա-Մահմադ շահի սպանման պատճառը և «կործանիչ իմոյ ազգին և ջնջիչ յերկրէ անտի»: Այնուհետև Հ. Արղությանն իր ծառայութեանն էր խոստանում պարսկա-ուսական բանակցութեանն հետևել և փոխարենը պահանջում թիֆլիսից տարված գերիներին ազատութիւն շնորհել և «զարձուցանել զնոսա յերկիրն իւրեանց»: Վերջին ութերորդ, կետով Հ. Արղությանը խնդրում է Արաս խանից, որ «գոր ինչ պարոն Մելիք Ջիմշիտին ասացեալ էիր և կամ զրով նշանեալ, այն կատարուին ես»:

Հայ գործիչները թեև դիվանագիտական մեծ ջանքեր էին թափում Պարսից արքունիքում և իշխող զասի մոտ հայոց նկատմամբ բարեհաճ վերաբերմունք ձևավորելու համար, սակայն և մտադիր չէին ետ կանգնելու իրենց հայրենիքը Ռուսաստանի օժանդակութեամբ Պարսից լծից ազատագրելու խնդրից:

Հայ գործիչների համար հստակ էր, որ հայ-ուսական հարաբերութեանն մեկուսի՝ առանց Վրաստանի մասնակցութեան, չեն կարող ձեւավորվել Այսրկովկասում, Վրաստանը հական դեր պետք խաղար ինչպես իր աշխարհազրական դիրքի, էթնիկ կազմի, այնպես էլ ռազմա-քաղաքական ու անտեսական շահերի առումով: Ավելին, հայ-ուսական հարաբերութեանն սերտացման համար անհրաժեշտ էր ոչ միայն օժանդակել վրաց-ուսական, այլև հայ-վրացական փոխհարաբերութեանների բարելավմանն ու խորացմանը: Այդ է պատճառը, որ հասարակական – քաղաքական գործիչները հայ ազատագրական ծրագրերում հական տեղ էին հատկացնում Վրաստանին, հուսալով նրա դիրքորոշման նպաստավորութեանը, և փորձում օժանդակել նրա հզորացմանը:

ԺԸ. դարի երկրորդ կեսին ուս-վրացական հարաբերութեանն հակադրվում էին նորովի՝ արմատական վերափոխումների ենթարկելով դարի առաջին կեսին ստեղծված չափանիշներն ու լծակները:

1744 թվականին Քարթլիի գահին Բագրատունյաց տան Կախեթի ճյուղավորման ներկայացուցիչ Թեյմուրազ 2-րդի գահակալութեամբ սկսվեց նոր փուլ ուս-վրացական հարաբերութեանն: Վախթանգի VI-ի ժառանգ Բաքարը, նրա որդին՝ Ալեքսանդրը, ինչպես նաև Վախթանգի արտամուսնական ժառանգ Պաստան փորձում են հենարան փնտրել Վրաստանում իշխանութեանը վերադարձնելու համար՝ այլևս չհուսալով Ռուսաստանի օժանդակությանը, իսկ Թեյմուրազ և Հերակի թագավորները ձգտում են Ռուսաստանի հետ մերձեցումով չեղոքացնել Վախթանգի ժառանգների հավակնութեանները վրաց գահի նկատմամբ, իրավական ճանաչում ստանալ Ռուսաստանի կողմից ու նաև զինական կամ ֆինանսական օժանդակություն հայցել իրենց անվտանգությունը ապահովելու ու իշխանութեանը Վրաստանում և նրա հարակից տարածքներում ամրապնդելու նպատակով: Նման պայմաններում 1748 թ մայիսին Ռուսաստանից Վրաստան վերադառնալու համար Ելիզավետա կայսրուհուն էր դիմել Բաքար արքայազնը և մերժում ստացել: Բաքար արքայազնը համառել էր Վրաստան վերադարձի իր որոշման վրա և 1750 թ. փետրվարի 1-ին անսկնկալ մահացել: Թեյմուրազ 2-րդ և Հերակ 2-րդ թագավորները Ռուսաստան են ուղարկում մի դեսպանություն, որը պետք է պաշտոնական հարաբերութեաններ հաստատելու սկիզբ դառնար: Վրաց դեսպանությունը գլխավորում էին Սիմոն Մաղաչվիլին և Թիֆլիսի հոգևոր առաջնորդ Աթանաս արքեպիսկոպոսը՝ վերջինիս ղեկավարութեամբ: Ռուսական օժանդակության տրամադրման դեպքում վրաց թագավորները չէին թաքցնում իրենց մտադրությունը զբաղվելու Վրաստանին սահմանակից Իրանի մի շարք քաղաքներ: 1754 թ. կանցլեր Բեստուժև-Ռյումինի առաջարկով Քարթլիից որոշվեց վրաց դեսպանությունը վերադարձնել առանց պաշտոնական պատասխանի, քանզի վրացիները "ի վիճակի չեն" այն գաղտնի պահել:

1760 թ. ձեռնարկվեց Վրաստանից նոր դեսպանության առաքումը Ռուսաստան, որը գլխավորում էր անձամբ Թեյմուրազ 2-րդ թագավորը, որի հետ բանակցությունների վարումը արդեն իսկ կնշանակեր Ռուսական կառավարության կողմից Քարթլիի թագավոր ճանաչելու հանգամանք: 1760 թ. ապրիլին Թեյմուրազ թագավորը հարյուր հոգիանոց շքախմբով

ժամանեց Չերվյենի սահմանային կայան: Մայիս ամսին նա գտնվում էր արդեն Ղզլարում: Թեյմուրազի Ռուսաստան ժամանումը ուստական արքունիքի կողմից նպատակահարմար էջը դիտվում, ուստի և տարբեր պատրվակներով խոչընդոտներ էին հարուցվում նրա ճանապարհորդութային համար այն դեպքում, մինչ Թեյմուրազը ձգտում էր օր առաջ հայտնվել ուստական մայրաքաղաքում: Թուրք-պարսկական միջավայրում կասկածները փարատելու համար Վրաստանում լուրեր տարածվեցին Թեյմուրազ-Հերակլ հակամարտության մասին և հորինվեց վարկած՝ Վրաստանից Թեյմուրազի ընդմիջում հեռանալու կամ փախուստի մասին: Այդ լուրերը պետք է մեծացնեին Հերակլի նկատմամբ պարսից վստահությունը, ամրապնդեին նրա դիրքերն ու վարկանիշը: Որ այդ լուրերը շինծու էին, ցույց է տալիս Թեյմուրազի օժանդակելու մասին Հակոբ Շամախեցու 1760 թ. հունիսի 16-ին Թեյմուրազի ճանապարհովուց հետո և, անշուշտ, Հերակլի պահանջով դրած նամակը Ելիզավետա կայսրուհուն, որը սակայն էջը առաքվել և բնագիրը մնացել ու պահպանվել է Էջմիածնում: Հակոբ Շամախեցին շարունակում էր ակնկալելով սպասել Թեյմուրազի առաքելության մասին հուսադրող լուրերի և Հերակլին մաղթում էր, որ իրագործվեն Թեյմուրազի ցանկությունները և նա վերստին վերադառնա «յօրհնեալ երկիրդ և յօթևանդ ձեր»:

Թեյմուրազի Պետերբուրգում գտնվելու ընթացքում այնտեղ է ժամանում նաև Հովսեփ Էմինը: Թեյմուրազի և Էմինի ծանոթությունը տեղի է ունեցել կանցլեր Մ. Վորոնցովի մոտ Թեյմուրազի ընդունելության ժամանակ, որից հետո Հ. Էմինը գրեթե ամեն օր այցելել է Թեյմուրազին և նրա հետ մի քանի անգամ ևս ճաշի է հրավիրվել կանցլերի մոտ: Հանդիպումների ժամանակ Թեյմուրազի հետ զրույցների բովանդակության մասին թեև Հ. Էմինը որոշակի արձանագրումներ չի թողել, սակայն հանդիպումների հաճախականության մասին վկայություններ ինքնին հիմք է տալիս ենթադրելու, թե այդ զրույցները նրանց միջև սառնություն էջ, որ հարուցել են և Էմինի մոտ Վրաստան ճանապարհակալու իր մտադրությունը մնացել է հուսադրող:

Թեյմուրազը պատրաստվում էր վերադառնալ հայրենիք, երբ 1761 թ. դեկտեմբերի 25-ին մահացավ Ելիզավետա կայսրուհին: Երկու շաբաթ անց, 1762 թ. հունվարի 8-ին Պետերբուրգում մահացավ նաև Թեյմուրազ 2-րդը:

Վրաց դեսպանությունը բռնեց տունդարձի ուղին՝ բերելով Թեյմուրազի դին, որն ամփոփվեց Աստրախանում:

Ռուսական արքունիքի ցավալիցական նամակում Հերակլն անվանված էր Քարթլիի և Կախեթի թագավոր, որով ուստական արքունիքը փաստորեն ճանաչում էր Հերակլի իշխանության օրինականությունը: Այդ փաստը լիովին բացահայտում էր ուստական արքունիքի բացասական դիրքորոշումը նաև Վախթանգ VI-ի ժառանգորդների հավանությունների նկատմամբ: Ակալից ուս-վրացական հարաբերությունների ձևավորման նոր փուլ:

1768-74 թթ. ուս-թուրքական պատերազմը կարծես նոր հորիզոններ ու հնարավորություններ էր ստեղծում ուս-վրացական համագործակցությանը ինչպես Հերակլի, այնպես էլ Հերակլի օժանդակությունը ակնկալող Հովսեփ Էմինի ծրագրերի իրականացման համար: 1768 թ., սակայն, Հովսեփ Էմինը վերջնականապես թողեց Վրաստանի հետ համագործակցելու 1763-1768 թթ. իր փորձերը և հեռացավ Հնդկաստան: Հերակլ 2-րդ և Սողոմոն I թագավորները 1768-69 թթ. դիմել էին Ռուսաստանին դիմական օժանդակություն ստանալու խնդրանքով Օսմանյան պետության դեմ պայքար ծավալելու նպատակով: 1769 թ. Ռուսաստանի Արտաքին գործերի կոլեգիային էր դիմել նաև Մովսես Սարաֆյանը Հայաստանի ազատագրման համար Վրաստան Ռուսական զորք ուղարկելու առաջարկությամբ: Պետերբուրգում հաղորդագրություն էր տպագրվել անգամ, թե «Հաստատվում է Պարսկաստանում տեղի ունեցող խոչոր ուղղակի նախապատրաստությունների մասին լուրը: Հայերը տարանջատվել են թուրքերից և նրանց պատրիարքը, որը մեծ իշխանություն ունի, ծանուցել է Կ. Պոլսում մեծ քանակ կազմող իր հավատակիցներին, որպեսզի նրանք հույների հետ մնալով համաձայնության մեջ, անհրաժեշտ պահին զորք են համատեղ ուժերով: 1769 թ. ամռան վերջին ուստական մի զորամաս գնն. Տոտլբեհնի հրամանատարությամբ ի վերջո ժամանեց Վրաստան: Գնն. Տոտլբեհնը, սակայն, օգտագործելով Հերակլից դժգոհ վրաց իշխանների օժանդակությունը, գնեքի ուժով փորձում էր զբաղել Արևելյան Վրաստանը և կայագործներ էր տեղադրում Վրաստանի քաղաքներում: Հերակլը ակտիվ գործունեություն սկսեց Տոտլբեհնի ձեռնարկած քայլերի չեղոքացման ուղղությամբ: Ռուսական արքունիքը ստիպված էր ետ կանչել Տոտլբեհնին և նրա փոխարեն Վրաստանում ուստական զորքի հրամանատար նշանակելով գնն. Սուխո-

տինին՝ փրկել ռուս-վրացական հարաբերությունները խզումից: 1771 թ. դեկտեմբերին, երբ ռուսական զորքերը հասել էին մինչև Սև ծովի ափ և կրկին անհաջողություն մատնվել Փոթիի պաշարման ժամանակ, Եկատերինա 2-րդը Սուխոտինին և ռուսական բանակը հո կանչեց Վրաստանից: Այսպիսով, ռուսական զորամասը, որի օգնությամբ, ըստ հայ և վրաց գործիչների, պետք է իրականանար Վրաստանի և Հայաստանի ազատագրումը օտար լծից և վերականգնվեր նաև Հայոց ազգային պետականությունը, հեռանում էր առանց էական նպատակ բերելու առաջադրված խնդիրների ու ծրագրերի լուծմանը:

Հերակլը փորձելով օգտվել պատերազմում Թուրքիայի կրած պարտությունից հանգամանքից և քայլեր ձեռնարկել Ախալցխայի նկատմամբ, որոշում է կրկին դիմել Ռուսաստանի օժանդակությանը՝ խնդրելով դեն. Մեդեմին զորքով մոտենալու Վրաստանի սահմաններին: Ստանալով դեն. Մեդեմի գեկուցադիրը այդ մասին, Եկատերինան 1775 թ. հուլիսի 28-ին պատասխանում է, թե Հերակլը արժանի չէ ուշադրության և կարգադրում է «оестомея в молчалии», մինչև Հերակլի կողմից կրկին նոր դիմումի ստացվելը, իսկ այնուհետև ծանուցել նրան, թե նրա խնդրանքի բավարարելը անհնար է և թող նվաճումներն ու ձեռքբերումները կատարի իր սեփական ուժերով:

ԺԸ. դարի վերջին քառորդին հայ-ռուս-վրացական հարաբերություններում եռանդուն գործունեություն էր ծավալել Հ. Արղությանը: Նա մեծ դեր էր ունեցել նաև 1783 թ. ռուս-վրացական Գեորգիևսկի դաշնագրի կնքման գործում և 1783 թ. գարնանը ռուս-վրացական դաշնագրի նախապատրաստական աշխատանքների ժամանակ կազմել էր (անչուշտ Ռուսական իշխանությունների գիտություններ) նաև Հայ-ռուսական դաշնագրի նախագիծը: 1784 թ. Պետերբուրգ է ժամանում նաև հայ ժողովրդի լիազոր ներկայացուցիչ Ստեփան Դավթյանը: Ղուկաս կաթողիկոսի խնդրանքով Հերակլ 2-րդը 1784 թ. օգոստոսի 13-ին հանձնարարական նամակ է գրում Ստեփան Դավթյանի համար Պ. Ս. Պոտյոմկինին, խնդրում «բարեհաճ լինել նրա նկատմամբ և օժանդակել նրան»: Հայ և վրաց ժողովուրդների քաղաքական համագործակցության համար Պետերբուրգում ևս ստեղծվում է կապող օղակ: Այդ կապերի առավել եռանդուն կազմակերպիչ կրկին հանդես է գալիս Հ. Արղությանը:

Հայ-ռուս-վրացական հարաբերությունները նոր երանգ են ստանում ռուս-թուրքական 1787-1791 թթ. պատերազմի ժամանակ: Պատերազմական գործողությունները թեև ընթանում էին Այսրկովկասի սահմաններից հեռու, սակայն հայ և վրաց ժողովուրդների ներկայացուցիչները որոշակի հույսեր էին կապում Ռուսաստանի կողմից պատերազմի հաղթական ավարտից հետո կնքվելիք պայմանագրի հետ, գտնվում էին Յաշու, որտեղ ևս պետք է ստորագրվեր հաշտության պայմանագիրը: Պայմանագրում ուղղակիորեն չարտացոլվեցին անմիջապես Հայաստանին և վրաստանին առնչվող հարցեր: Պատվիրակությունները վերադարձան առանց որոշակի հաջողությունների: Էականը, սակայն, այն էր, որ Թուրքիան պայմանագրի հինգերորդ կետով ձեռնպահ էր մնում Քարթլիի նկատմամբ թշնամական քայլերից:

1795 թ. Աղա-Մահմադ խանի կողմից Թիֆլիսի ավերումից հետո Հովսեփ Արղությանը Գրիգորիոսովից նամակով ղեմում է Հերակլ Երկրորդին, և, հայտնելով իր դառն ակրումներն այդ դեպքերի առթիվ, գրում է. «...ոյս Հայաստանեայց աշխարհի և թագավորութիւն ձեր էր, ողբասցեն ընդ ձեզ ամենայն ազգ և ազինք հայոց, որք սիւեալք են ի ծագս աշխարհի»: Հ. Արղությանը հայտնում է նաև, թե մինչև Աղա Մահմադ խանի արշավանքը ինքը շատերին էր գրել ու հայտնել սպասվելիքի մասին, սակայն նրանք «ոչ հաւատային հաւատարմութեանն տանն Վրաց»: Կատարվածն արդեն փաստ էր և Հովսեփ Արղությանը հուսադրում է Հերակլին, թե Ռուսաստանն անպաշտպան չի թողնի Վրաստանին:

Աղա Մահմադ խանին պատժելու պարտավորվելով 1796 թ. դեպի Այսրկովկաս Ռուսաստանի կազմակերպված արշավանքի ժամանակ Հ. Արղությանը ձեռնամուխ է լինում արշավանքի համար իր պլանները մշակելու և ռուսական հրամանատարությունները ներկայացնելու գործին, միաժամանակ նաև Արցախի մելիքներին ու Հերակլ Երկրորդին հորդորում է ավելի հաստատակամորեն, առանց վերապահումների օժանդակել Ռուսական բանակին՝ հուսադրելով նրանց մոտակա ազատության հեռանկարով: Մեզ է հասել Շամախիից Հերակլ Երկրորդին Հ. Արղությանի գրած 1796 թ. սեպտեմբերի 14-ով թվագրված նամակը, որ արժեքավոր է մի շարք առումներով: Այն պատասխանն է Հերակլի կողմից Հ. Արղությանին գրած նամակի, որը պետք է ներկայացվեր նաև Վալերիան Զուբովին: Դատելով Հ. Արղությանի պատասխան նամակից, Հերակլը պահանջել էր շուտափուլ թշնամություն

ցուցաբերել ինչպես դրամական, այնպես էլ գինական առումով, սպառնալով հակառակ դեպքում նման օգնություն ստանալու համար դիմել այլ ուղիներին: Ակնարկելով այդ մասին, Հերակլը իր նամակին կցել էր նաև թուրքական սերասքարից ստացած նամակը: Հ. Արղունթյանը խորհուրդ է տալիս լինել համբերատար ու հեռատես և օժանդակություն չփնտրել թուրքերի մոտ, «չլսմել այն պղտոր ջրից, որն արդեն բազմիցս... աննկարագրելի չարիքներ է բերել»: Արշավանքի դադարեցումից հետո Հերակլ 2-րդի ու ռուս հրամանատարության խնդրանքով Հովսեփ Արղունթյանը պետք է Ռուսաստան վերադառնար Վրաստանով:

Վրաստանի տնտեսական ու հասարակական-քաղաքական ծանր վիճակի պայմաններում Հ. Արղունթյանի ներկայությունը Վրաստանում խիստ անհրաժեշտ է նկատվում և, պարզվում է, նրա ներկայությամբ կամ միջոցով ակնկալվում էր մեղմել տեղում առաջացած սոցիալական լարվածությունը: Մեծացել էր Վրաց արքունիքի քաղաքականության նկատմամբ դժգոհությունը, և աճել էր, ինչպես բնդունված է վրացագիտություն մեջ, պարսկական կողմնորոշում ունեցող ավատատերերի թիվը: Այն ավարտվեց 1797 թ. թագավորի դեմ կազմակերպված դավադրությունով: Իրականում այդ դժգոհություն էր Ռուսաստանի վարած քաղաքականությունից, որը դադարեցնելով արշավանքը, փաստորեն Վրաստանին կրկին թողնում էր Պարսկաստանի վտանգի դեմ միայնակ, ուստի և Պարսկաստանի անվան հոլովումը ոչ թե կողմնորոշում, այլ հակակշիռ էր, որով պետք է ապահովագրեին Վրաստանը Աղա-Մահմադ խանի հնարավոր նոր արշավանքից: Այդ անհանգստությունը բունկել էր ոչ միայն հայազգի բնակչությանը, այլև վրաց կաթողիկոսին, ուստի միանգամայն անհիմն է վրաց պատմագիտության մեջ վերոբերյալ անհանգստությունը ազգային երանգ վերագրելը՝ ելնելով միայն թիֆլիսի բնակչության մեծամասնության հայազգի լինելու հանդամանքից:

Բարձր գնահատելով Հ. Արղունթյանի գործունեությունը Վրաստանում, Հերակլը նույն թվականի հունիսի 10-ով թվագրված իր նամակով հանձնարարում է նրան Վրաստանի վիճակի մասին հաղորդել ռուսական արքունիք և հավաստել Ռուսաստանի նկատմամբ իր հավատարմությունը:

Հ. Արղունթյանը 1798 թ. փետրվարի 14-ին Գեորգի Արքայազնին գրած նամակում խորհուրդներ է տալիս նրան ինչպես ռուս-վրացական հարաբերությունների կարգավորման, այնպես էլ նրա գահակալության ժամանակ

վարվելիք ներքին ու արտաքին քաղաքականությունն ու հայ-վրացական հարաբերությունների հիմնահարցերի շուրջ:

Ավարտելով այն միջոցառումների թվարկումը, որոնք իր կարծիքով կարող էին նպաստել Վրաստանի քաղաքական ու տնտեսական կայունության ամրապնդմանը, Հ. Արղունթյանը անցնում է հայ-վրացական հարաբերությունների բարելավման անհրաժեշտության հիմնավորմանը: Ակնարկելով Գեորգիի 1790 թ. համաձայնությունը Լոռու գավառը Շահամիր Շահամիրյանին ժառանգաբար տնօրինելու մասին հրովարտակ շնորհելու հանգամանքը, Հ. Արղունթյանը պահանջում է. «ՁԼոռին, զոր հաստատ գրով շնորհեալ էք աղայ Շահմիրին և նա ևս յանձնեալ է ի Մէլէք Ապովն, հաստատ պահեալիք զայն ուխտ, որով ոչ թէ ի հովանավորութիւն ձեր հրապիրէք միայն զհնդկաբնակ Հայս, այլև Կարսն և Ախլցխայն դատարկեալ բնակչօք նոցա՝ լնանելոց ևն Փանբակն և Բօրչալուն»:

Նա Գեորգիից պահանջում է. «Որովհետև ի ձեզ պարծեն միշտ Հայք և ուրախ են, թէ՛ ունիմք մեր թագավոր ի սերնդոց թագավորացն մերոց, պարտ է Ձեզ ևս բանիւ և գրով զհայրական իմն խնամ ցուցանել նոցա, զի տեսանելով զայդ, որպէս եղեալքն ընդ հովանեաւ ձերով Հայք՝ ջերմեռանդաբար ծառայեսցեն Ձեզ, նոյնպէս և արտաքինքն դիմեսցեն ի հովանավորութիւն Ձեր»:

Պարսկաստանում դահ ըրածրացած Բաբախանը Գեորգի 12-րդից պահանջում է խզել կապերը Ռուսաստանի հետ և որդուն պատանդ ուղարկել Պարսից արքունիք, խոստանալով նրան հանձնել Երեւանի, Գանձակի, Շաբրի ու Շիրվանի կառավարումը, իսկ հակառակ դեպքում սպառնում էր արշավել Վրաստան: Այդ պահանջը Գեորգի թագավորը ստանում է 1798 թ. հուլիսի 3-ին: Բաբախանի վերջնազրկը առավել մեծ խուճապ է առաջացնում Վրաստանում: Պետերբուրգից Վրաստան վերադարձած Գավիթ Արքայազնը Բաբախանի պահանջի մասին 1798 թ. հունիսի 28-ի նամակով տեղեկացնում է Հովսեփ Արղունթյանին: Հ. Արղունթյանը շտապում է Ռուսական իշխանություններին իր կողմից ևս հորդորել՝ միջամտելու Այսրկովկասյան գործերին և անընդհատ շտապեցնում է Գեորգի 12-րդին՝ դեսպանություն ուղարկել Ռուսաստան:

Հասկանալով հանդերձ Ռուսական արքունիքի պատրաստակամության իրական պատճառները, Հ. Արղունթյանը դեռևս հույս ուներ ռուսական գործի մտնելուց հետո Այսրկովկասում աեսնել Ռուսաստանի հովանու

տակ գոյատևող Հայ-վրացական միացյալ թագավորություն: Բացատրելով իր ջանադրությունները զրոգապատճառներն ու նպատակները, նա հիշեցնում է. «Իմ կամքն է ծաղկեցուցանել զգոսսա եւ կոչել ոչ միայն թագավոր Վրաց, այլև Հայոց»: Անդրադառնալով Պետերբուրգում գտնվող հայ մելիքների ճակատագրին, Հ. Արղությանը գտնում է, որ նրանց «բանն կախեալ կայ ի զոցանէ (իմա՝ Վրաստանի ճակատագրից – Պ. Չ.) եւ Աստուծով լավ են լինելոց, ասա նոցին ընտանեացն՝ լինիլ միամիտ»:

Հայ հասարակական-քաղաքական գործիչները, որ ուշի ուշով հետևում էին միջազգային հարաբերությունների զարգացմանը և փորձում նպաստել հայ ժողովրդի ազատագրմանն ու անկախության վերականգնմանը, հիմնականում միանշանակ կողմնորոշվել էին դեպի Ռուսաստան և ոչ միայն զենքով ու ուսուսական բանակի կազմում կամավորական ջոկատներ կազմելով մասնակցում էին 1787-91 թթ. ռուս-թուրքական պատերազմին, այլև տարբեր դիվանագիտական առաքելությունների ու հանձնարարությունների իրականացումով, ձգտում էին օժանդակել նաև ռուսական դիվանագիտությանը՝ հաղթահարելու մրցակից պետությունների դիմադրությունը և նպաստավոր պայմաններ ստեղծել ռուսական ռազմական օժանդակություններ Այսրկովկաս հասցնելու համար:

1796-1797 թթ. հեղափոխության նվաճումների պաշտպանությունից Ֆրանսիան անցավ բացահայտ նվաճողական քաղաքականության: Գահ բարձրանալու իսկ առիթով հրապարակած իր շրջաբերականում Պավել Առաջինը հայտարարում էր, թե պետք է բոլոր հնարավոր միջոցներով դիմադրավիլ Ֆրանսիական հանրապետությանը, որ սպառնում է Եվրոպային «օրենքի, իրավունքի, ունեցվածքի ու բարոյականության լիակատար ոչնչացմամբ»: Բռնապարտի հաջողությունները ինչպես կենտրոնական Եվրոպայում, այնպես էլ Թուրքիայում, լրջորեն սպառնում էին Ռուսաստանի շահերին: Փորձելով կանխել Ֆրանսիայի առաջխաղացումը, Պավել Առաջինը արդեն իսկ Նապոլեոնի Իտալիական ու եզիպտական արշավանքների նախօրյակին որոշեց օգտագործել Թուրքիայի դժգոհությունը և նրան առաջարկեց իր նավատորմը՝ պաշտպանության համար: 1798 թ. օգոստոսի 23-ին (սեպտ. 2) Թուրքիան պատերազմ հայտարարեց Ֆրանսիային: Ռուս-ֆրանսիական մրցակցություն մեջ ակնհայտորեն վճռվում էր նաև Այսրկովկասի հարցը, և այդ դուրս չէր մնացել հայ գործիչների տեսադաշտից:

Հայ հասարակական և եկեղեցական գործիչների վերաբերմունքը ֆրանսիական հեղափոխությունից նկատմամբ պայմանավորված էր նաև դիվանագիտական այն գործունեությամբ, որ վարում էր Նապոլեոնը իր արտաքին հարաբերությունները կարգավորելու նպատակով: Գրավելով Եգիպտոսը, Նապոլեոնը հատուկ շրջաբերականով դիմում է Եզիպտոսի ժողովրդին և իր արշավանքը բացատրում և արդարացնում մամլուկների լծից նրանց ազատագրելու և մահմեդականությունը սատար կանգնելու իր մտահոգությունները և վճռականությամբ: Շրջաբերականը, ընկանաբար, անհանդուցաբեր է հայազգի գործիչներին և այն թարգմանվել է հայերեն:

Ֆրանսիական եկեղեցական առաջնորդներից մեկի՝ Պլուտայի եպիսկոպոս Հենրիկոս (Անրի) Կրեկուարի (1750-1830) հանձնարարությունում Շ. Զրպետյանի 1800 թ. հունվարի 28-ին Ղուկաս կաթողիկոսին ուղարկված նամակում ասվում էր, թե «...Գաղղիա, որ յոյժ սիրէ զազգն մեր Հայոց և քաջ ճանաչէ զսեպհական բարս նորա, գուցէ ընդ մերձենալն բանակին իւրոյ (որ այժմ յաշխարհ եզիպտացւոց եւ Ասորւոց) դէպի Կիլիկիա, ի Փոքր և ի Մեծ Հայաստան, յայնժամ Գաղղիա աւելի Հայոցս լինի նպաստամատոյց և այլն, քան թէ այլոց ազգաց Արեւելեայց»:

Նապոլեոնի եզիպտական արշավանքն ավարտվեց լիակատար ձախողումով: Դաշինք կնքելով Թուրքիայի հետ, Ռուսաստանը ձեռնամուխ եղավ ի թիվս այլ հարցերի, լուծելու նաև Այսրկովկասի խնդիրը: Ռուս-թուրքական պայմանագիրը կնքվեց 1799 թ. հունվարի 3-ին (1798 թ. դեկտ. 23) և լայն հնարավորություններ բացեց Ռուսաստանի առաջ: Անգլիան ևս 1799 թ. հունվարի 5-ին միացավ այդ համաձայնությունը: Այն պահին, երբ խոշոր սերունդները ուշադրությունը սեեռված էր միջերկրածովյան տարածաշրջանում կատարվող իրադարձություններին, Ռուսական արքունիքը դիվանագիտական վերջին նախապատրաստական աշխատանքներն էր կատարում գործերը Այսրկովկաս առաքելու համար: Տվյալ պահին հարցի լուծումը պայմանավորվում էր ռուս-թուրքական համաձայնագրի կնքման հանգամանքով:

Ուշադիր հետևելով հակաֆրանսիական երկրորդ կողմից այլ գործողություններին, Հովսեփ Արղությանը ոչ միայն պաշտպանում է Ռուսաստանի դիրքորոշումը, այլև փորձում է այդ մասին կող անել իր ողջ թեմին: Ստանալով Պավել Առաջինի հրովարտակի տեքստը, նա բազմացնում է այն

և նրան կցելով իր կողմից գրած Հորդորներն ու կոչերը, այն ուղարկում է Ռուսահայոց բոլոր գաղթօջախներ:

ԺԸ. դարի երկրորդ կեսը Հայ ժողովրդի պատմության մեջ առանձնանում էր Այսրեղովկասի և, մասնավորապես, Արևելյան Հայաստանի քաղաքական իր կարգավիճակի յուրահատկությունը: Երեանի, Նախիջևանի, Գանձակի և Արցախի երկրամասերը հայտնվում են գրեթե անկախ կարգավիճակում, սակայն Երեանում, Արցախում ու Նախիջևանում հայազգի նշանավոր գործիչները դառնում են վանազան դավադրությունների զոհ, իսկ նրանց ունեցած հայկական զինված ուժերի մի մասը կամ ցրվում է և կամ ծառայության անցնում օտար տիրակալների մոտ: Չնայած էական նվազմանը, Հայ բնակչության դերակատարումը Արևելյան Հայաստանում շարունակում էր դեռևս որոշակի լինել և ունենալ իր ազդեցությունը ԺԸ. դարի քաղաքական ու տնտեսական հարաբերություններում, որով և պայմանավորվում էր Հայոց պետականության վերականգնման հնարավորությունների հոլանքը:

Առանախոսության մեջ ապացուցվում է, որ Հայաստանից օժանդակություն ակնկալում էին ոչ միայն Արևելյան Վրաստանի, այլև Արևմտյան Վրաստանի իշխանությունները: Առանձնանում է Արևմտյան Վրաստանի Ալեքսանդր V թագավորի հայ և վրաց պատմագիտությունը դեռևս անծանոթ մնացած դեսպանության ժամանումի փաստը էջմիածին:

Օսմանյան տիրապետության ներքո գտնվող Արևմտյան Հայաստանում հայ բնակչության նկատմամբ անյուր բռնությունների պայմաններում անգամ շարունակվում էր զգալի լինել Հայ ժողովրդի դիրքորոշման կարևորությունը տեղական ներքին փոխհարաբերություններում և Հայաստանը օտարի բռնակալությունից ազատագրելու ծրագրերում: Մեր կողմից հայտնաբերված ու հրատարակված ժամանակագրության քննությամբ ներկայացվում են էրզրումի փաշայության դեմ հայոց անհնազանդության ու ապստամբության դրվագներ:

Խանությունների անկախություն ստանալուց անմիջապես հետո Հայ իշխող դասի կտրուկ վատթարացող քաղաքական կարգավիճակը պատճառ է դառնում աստիճանաբար Հայ-վրացական միացյալ թագավորություն ստեղծելու գաղափարի վերականգնման համար: Այն տարբեր ձևով են ընկալել նաև Հայ ու վրաց գործիչները ԺԸ. դարում:

Հովսեփ Արզությանը Հայաստանում վրաց թագավորի լիակատար իշխանություն հաստատման հեռանկարը համարում էր Հայաստանի զոհաբերում Վրաստանին:

Աշխատության մեջ կարևորելով Հայ բնակչության նկատմամբ Վրաստանում վարվող քաղաքականությունը և Հայ բնակչության կարգավիճակի հարցի պարզաբանումը, հանդուս էր այն հետևություն, թե որքանով Հայ բնակչությունը Վրաստանը համարում էր առավել հանդուրժելի ու նախընտրելի դաշնակից ու հենարան և ըստ ամենայնի նպաստում էր Վրաստանի բարգավաճմանն ու տնտեսական ու քաղաքական հզորացմանը, վրաց արքունիքը բնավ մտադիր չէր ընդառաջելու Հայաստանի ազատագրության և Հայոց պետականության վերականգնման հայոց ծրագրերին և ընդամենը հմտորեն օգտագործում էր Հայոց ակնկալիքները հիմնականում իր ներքին ու արտաքին խնդիրները լուծելու համար:

Այդ հանգամանքով էր պայմանավորված Սիմեոն Երեանցի կաթողիկոսի կողմից վարվող Հայոց ազգային ինքնահաստատման ուղղված շրջահայաց, հասուն ու հեռատես քաղաքականության նկատմամբ վրաց արքունիքի կոշտ դիրքորոշումը և նրա քաղաքականության նկատմամբ թերահավատություն սերմանող լուրերի տարածումը:

Հայ-վրացական միասնության գաղափարի կենսունակությանը նպաստել էր մինչև ԺԸ. դարի կեսերը արձանագրվող Սոմխիթ-Սոմխեթ նահանգի առկայությունը Վրաց պետության կազմում և նրա հարաբերական ինքնուրույնությունը վրաց վարչա-քաղաքական կառուցվածքի մեջ: ԺԸ. դարի երկրորդ կեսից վրաց իրականության մեջ աստիճանաբար դուրս է մղվում այդ հասկացության Հայաստան ընկալումը և այն ընդգրկվում-ընկալվում որպես Ստորին Բարթլի, որ շարունակվում է առ այսօր:

Ազգի միասնության հիմքը ազգային եկեղեցին նկատելով, ժամանակի հոգևոր առաջնորդները՝ Հակոբ Շամխեցին, Սիմեոն Երեանցին ու Ղուկաս Կարնեցին մեծ ջանքեր են գործադրել Հայոց եկեղեցու միասնությունը վերականգնելու և ամրապնդելու ուղղությամբ: Այդ քաղաքականությունը պետք է որակել որպես առաջադիմական ու ազգանպաստ:

Հայ ազատագրական ծրագրերի հետամուտ գործիչները՝ Հովսեփ Էմինի, Մովսես Բաղրամյանի, Շահամիր և Հակոբ Շահամիրյանների, լուսավորական-առաջադիմական գործունեությունը Հայ-վրացական հարաբերությունների ռոտորում ևս արձանագրելով կարևոր ներդրում, որոշակի ներ-

գործութիւնն ունեցալ հայ-վրաց-ուսական հարաբերութիւնների սերտացման գործում՝ օրակարգի մեջ դնելով հայոց կողմից Հայաստանի ազատագրութեան ուղիների որոնումներն ու նրա գործնական իրականացման քայլերի փնտրութիւնները:

ԺԸ. դարի երկրորդ կեսը հայ-ուսական հարաբերութիւնները ոլորտում բուռն զարգացման շրջան էր: Այն վճռական ազդեցութիւնն ունեցալ հայոց պատմութեան հետագա ընթացքի մեջ, այդ հարաբերութիւնների ծավալումով հայ իրականութեան մեջ դադարեց հայ-վրացական թագաւորութեան ապագայի նկատմամբ հուսերի փայփայումը:

Հայ-ուսական քաղաքական հարաբերութիւնները ձևավորումը ընթանալով տնտեսական ու մշակութային առնչութիւնների սերտացման հետ փոխկապակցված ու Ռուսաստանում հայ բնակչութեան ստվարացման գործնական ուղեկցումով, Ռուսահայ գաղթօջախը ԺԸ. դարի երկրորդ կեսին ձևավորվեց որպէս միասնական ընդհանուր շահերով, իրավական կարգավիճակով ու արտոնութիւններով կապակցված համայնք:

Հայ բնակչութիւնը կարեւոր դերակատարում ուներ ոչ միայն Ռուսաստանի տնտեսական ներքին զարգացումներում, այլև Ռուսաստանի հետ արևելյան, այդ թվում և ուս-հնդկական, առևտրա-տնտեսական հարաբերութիւնների ձևավորման ոլորտում:

Ռուսաստանի արտաքին-քաղաքական միտումներն ու ձգտումները որոշակի հանդուրժողականութիւն էին հաղորդում հայ բնակչութեան նկատմամբ կենտրոնական իշխանութիւնների քաղաքականութեանը և թելադրում հայոց արտոնութիւնների դեմ ուս վաճառականութեան ու տեղական վարչակազմի ոտնձգութիւններից նրանց պաշտպանելու դիրքորոշում: Այդ հանգամանքը իր ցայտուն գրսերումն էր ստանում հատկապէս հայ-ուսական եկեղեցական հարաբերութիւնների ոլորտում:

Հայ-ուսական հարաբերութիւնները, սակայն, ծավալվում էին կողմերի միանգամայն ոչ համարժեք ձգտումների հենքի վրա: Եթե հայ իրականութիւնը ի դեմս Ռուսաստանի տեսնում էր հայոց պետականութեան վերականգնումի մեջ շահագրգիռ և կարող կողմ, ապա ուսական պետութիւնը մտահոգ էր իր տարածքները ընդարձակելու համար տեղական օժանդակութիւն և «կամավոր» հպատակութիւնն ապահովելու խնդրում: Ռուսական դիվանագիտութիւնը օգտագործելով պետականութիւնը վերականգնելու և Ռուսաստանի օժանդակութիւնը ստանալու ձգտումը, հայոց

համակրանքը շահելու նպատակով հմտորեն հրահրում էր նրանց ելույթները և բորբոքում հուսերը առանց լրջորեն մտահոգվելու մահմեդական տիրապետութեան պայմաններում նրանց անվտանգութեան խնդիրներով: Ռուսաստանի առաջնադասումից սարսափած և դրան դիմակայելու պատրաստակամ ուժերը թշնամաբար արամադրվելով ուսական օժանդակութիւնը ակնկալող հայկական ուժերի նկատմամբ, առավել հետևողականութիւն են հանդես բերում հայկական ուժերը արմատախիլ անելու խնդրում: Այդ առումով մեծ կորուստներ արձանագրվեցին հայ-ուսական հարաբերութիւնների մեջ առավել չափով ընդգրկված Արցախի ազատագրական ուժերի կազմում:

Առավել ուշադիր ուսումնասիրութիւնը պարզում է, որ Ալի Մուրադ խանի հետ Ռուսաստանի վարած բանակցութիւնները բնավ չէին կարող խոստանալ Այսրկովկասի «կամավոր» ձեռքբերում, իրականում Ալի Մուրադ խանը հստակորեն մերժել էր Ռուսաստանին տարածքային զիջումներ կատարելու առաջարկը, ուստի և այդ պատրվակը ևս չէր կարող հիմնավորում դառնալ արդարացնելու Ռուսաստանի ձեռնպահ քաղաքականութիւնը Արցախի ազատագրութեանը սատար կանգնելու գործում, որպիսին մինչև այժմ շրջանառվում է պատմագիտութեան մեջ:

Հայ-ուսական հարաբերութիւնների ոլորտում զարգացող հայ-պարսկական փոխհարաբերութիւնների ձևավորումը նոր երևույթ էր հայ դիվանագիտութեան բնագավառում: Ռուսական իշխանութիւնների աջակցութիւնը փնտրող Աղա Մահմադ խանի եղբայր և նրա քաղաքական հակառակորդ Մուրթուզա Կուլի խանի հետ շ. Արդուլխանը և շ. Լազարյանը Ռուսաստանում փորձում են համագործակցութեան եզրեր մշակել Պարսկաստանում նրա գահ բարձրանալու դեպքում Հայաստանի նկատմամբ բարեհաճ և հայանպաստ քաղաքականութիւն պարտադրելու համար:

Հայազգի գործիչները, այսպիսով, ԺԸ. երկրորդ կեսին հայոց պետականութիւնը վերականգնելու հարցը ունենալով որպէս գերխնդիր, զանազան միջոցներով փորձել են լծվել հնարավոր տարբերակների քննարկմանն ու իրենց օժանդակութեան ներդրմանը՝ հայ ժողովրդի կենսունակութիւնը խթանելու, նրան ուժացումից փրկելու և Հայաստանի ազատագրութեան համար նախադրյալներ ստեղծելու խնդիրը լուծելու համար:

П. А. ЧОБАНЯН

АРМЯНО-РУССКО-ГРУЗИНСКИЕ ОТНОШЕНИЯ ВО ВТОРОЙ ПОЛОВИНЕ XVIII ВЕКА

РЕЗЮМЕ

Во второй половине XVIII в., в условиях междоусобных войн и ослабления центральной власти в Персии, а также войн из-за трона после смерти Надир шаха, административные единицы Восточной Армении (Ереванское, Нахичеванское, Гандзакское /Гянджинское/ и Арцахское /Карабахское/ ханства), бывшие в составе Персии, приобрели определенную возможность и перспективу восстановить свой самостоятельный политический статус, добиться фактической независимости.

При правлении Надир шаха центральная власть значительно сдерживала самовольность местных персидских правителей. Армянское население приобрело определенную роль и вес в губерниях Восточной Армении, восстанавливались права армянских духовных заведений, утраченные в период османского владычества. После убийства Надир шаха (1747г.) армянским политическим деятелям не удается сохранить свое положение и установить господство в своей же стране. В новой ситуации в результате их неосмотрительной политики, не только местами восстанавливается правление прежних персидских губернаторов, но и утверждается деспотизм новых завоевателей. Как в Ереване, так и в Арцахе и Нахичеване армянские деятели становятся жертвами разных заговоров. Вооруженные силы армян распадаются или же переходят на службу к чужому владыке. Так, в Ереване, после убийства мелика Манучара, войска его расходятся, а состоящие на службе у Ереванского хана армянские военные подразделения теряют возможность действовать самостоятельно. Значительную часть войск новосозданного Карабахского ханства составляли армяне. В грузинской армии также служили представители армянского населения Грузии.

В политическом и экономическом плане армянское население продолжало играть существенную роль почти во всех закавказских

ханствах, чем и была обусловлена надежда армянских общественных деятелей на возможность восстановления армянской государственности. Помощь и поддержку из Армении ожидали правители не только Восточной, но и Западной Грузии. Примечателен в этом аспекте факт прибытия в Эчмиадзин посольства Имеретинского царя Александра V под руководством знаменитого церковно-политического деятеля Тимофея Габашвили.

Несмотря на гнет и насилие в Османском государстве, армянское население Западной Армении все же играло значительную роль во внутривосточных отношениях. Нововыявленные архивные документы свидетельствуют не только о жестоком угнетении армян в Османской Империи, но и об эпизодах сопротивления властям и о восстаниях армян (в частности, в Эрзрумском вилайете Западной Армении), а также о намерениях и надеждах грузинского царя Ираклия с помощью западных армян организовать широкомасштабную борьбу против Османского государства.

С начала 1750-х годов Ереванское и Гандзакское ханства находились в зависимости от соседнего Грузинского государства. Резко ухудшающийся политический статус армянского правящего класса стал причиной возникновения и распространения идеи создания совместного армяно-грузинского царства. Армянские и грузинские деятели в XVIII в. по разному воспринимали эту идею.

Иосиф Аргутян считал, что если в Армении утвердится политическая власть грузинского царя, то Армения станет жертвой Грузии. Интересно, что подобным образом воспринимался в Грузии русско-грузинский Георгиевский трактат. Эта позиция Аргутяна в конце 1790-х годах обусловлена его деятельностью и может объясняться только разочарованием в политических ожиданиях 1780-х годов восстановления армянской самостоятельной независимой государственности. Иосиф Аргутян советует, наставляет и даже диктует свои распоряжения грузинскому царю Георгию XII по поводу его вступления на престол в 1798 г.

Исследователи указывали разные причины и обстоятельства в числе преград к созданию предполагаемой армяно-грузинской единой государственности. В последнее время высказывалось даже мнение,

будто причина отказа Ираклия от идеи создания военного союза и помощи программе Иосифа Эмина была в том, что если "в случае освободительной борьбы армяно-грузинский союз завершится успешно, то в действительности получится не союз, а в сущности – армянское государство...".

Для полноценного восприятия сущности армяно-грузинских отношений в работе изучается и уточняется политика грузинских властей в отношении армян, а также статус армянского населения в Грузии. Исследование приводит к выводу, что армянское население, считая Грузию возможной и желаемой союзницей и опорой в борьбе за освобождение Армении, всякими способами содействовало усилению экономической и политической мощи Грузии. Грузинский царь ни за что не согласился бы пойти навстречу освобождению Армении и восстановлению армянской государственности, и всего лишь использовал чаяния и надежды армян только для решения внутренних и внешних проблем Грузии. Этим именно обуславливаются взаимоотношения грузинского царского двора с эчмиадзинским католикосом Симеоном Ереванци, имеющим в свою очередь большой авторитет и влияние в среде армянского населения.

Позиция католикоса Симеона Ереванци в армяно-грузинских взаимоотношениях не однозначно оценена в историографии. С. Ереванци стремился установить добрососедские отношения с грузинским царским двором и в то же время не допустить вмешательства грузинской стороны во внутренние дела армянской церкви.

Относительный суверенитет Сомхит-Сомхети (на груз.: "Армения") в грузинской административно-политической структуре в армянской среде способствовал возрождению идеи армяно-грузинского возможного политического союза, в грузинской же действительности Сомхити постепенно вытесняется как этно-географическое понятие "Армения", и с середины XVIII в. воспринимается как составная часть Картли и представляется как Нижняя Картли (Квемо Катли).

Во второй половине XVIII века в армянской действительности немало трудностей было также в церковной сфере. Осознав важную роль церкви в деле достижения национального единства, духовные

лидеры Акоп Шамахеци, Симеон Ереванци и Гукас Карнеци приложили большие усилия для восстановления и укрепления армянской церкви.

Деятели армянского освободительного движения Иосиф Эмин, Мовсес Баграмян, Шаамир и Акоп Шаамиряны начали национально-просветительскую деятельность и искали новые подходы в сфере армяно-грузинских отношений.

Армяно-грузинские отношения складывались не только в Грузии, а также в ханствах Еревана, Карабаха, Нахичевана и Гандзака. Эти отношения включают как внешнюю политику, так и экономику, культуру, церковную жизнь и др. Во второй половине XVIII в., в отличие от Грузии, где армяне не имели никаких специальных привилегий и были зарегистрированы определенные ограничения в политико-правовом статусе, в России армяне получали определенные привилегии.

В отличие от армянских колоний в других странах, армянская колония в России в конце XVIII в. формировалась как одна цельная община, получив общее духовное руководство, правовой и экономический статус.

Во второй половине XVIII в. армяно-русские отношения переживали стадию бурного развития. Оформление армяно-русских политических отношений протекало в условиях взаимной экономической заинтересованности и сотрудничества, культурной близости и сопровождалось процессом увеличения количества армянского населения в России. Армянская колония в России во второй половине XVIII в. удвоилась, стала привилегированной общиной. Армянское население играло важную роль в развитии внутренней торгово-экономической жизни России, а армянское купечество – в формировании русско-индийских торгово-экономических отношений.

Тенденции внешней политики России обусловили определенную толерантность в отношении армянского населения центральных властей, часто даже бравших их под защиту от своевластия губернской или местной администрации и русского купечества. Это обстоятельство имело свое определенное проявление особенно в области армяно-русских церковных взаимоотношений. По предложению католикоса Симеона Ереванци русские власти, признав верховную юрисдикцию Эчмиадзинских духовных властей над армянами России и запретив

приход в Россию армянского духовного лица без санкции Эчмиадзина, тем самым внесли свою лепту в повышение престижа и роли Эчмиадзинского духовного престола в армянской действительности и более усилили ожидания армян от России. Примечателен факт упоминания имени и восхваление русского императора во время церковного обряда в Эчмиадзине в окружении мусульманских властей.

Армяно-русские отношения однако развиваются не на одинаковых основаниях сторон. Если армянская сторона считала Россию той силой, которая могла и была готова содействовать освобождению Армении и восстановлению армянской государственности, то Россия стремилась использовать надежды армян и облегчить распространение своего влияния на Закавказье путем "добровольного" признания местными народами покровительства России. Внимательно следя за развитием русско-армянских отношений, враждебно настроенные против России политические силы Закавказья считали армяно-русское сближение и политические переговоры опасными для своего будущего статуса. Они стремились всякими способами препятствовать этому путем уничтожения радикально настроенных сил армян и активных деятелей армянского освободительного движения. Русские власти, однако, не могли действительно препятствовать такому ходу событий и брать под защиту этих деятелей, вследствие чего армянское освободительное движение имело существенные потери. Это было наиболее очевидно именно в Арцахе, где активно разворачивались переговоры с Россией и имели место приготовления для будущей освободительной борьбы.

Армянские и грузинские деятели осознали суть политики России именно после прибытия русского батальона в Грузию вследствие подписания Георгиевского покровительственного трактата между Грузией и Россией. Это событие не только не принесло Грузии облегчения, но и более ухудшило внешнеполитическое положение Грузии и Арцаха, стало поводом новых разорений.

Более внимательное исследование документов показывает, что переговоры России с Али Мурад ханом не могли принести России успеха в попытках "мирными переговорными" способами "добровольно" завладеть Закавказьем. Али Мурад хан однозначно отклонил территориальные претензии русского правительства.

Разочарованием завершились ожидания армянских деятелей во время похода русских войск в 1796 г. в Закавказье, в котором приняли активное участие армянские военные и общественные деятели, а также местное армянское население. Впервые более пространно представляется в армяно-русско-грузинских отношениях военно-дипломатическая деятельность Манучара Качакачяна.

Вызывает большой интерес попытка формирования армяно-персидского политического сближения в русле армяно-русских отношений. Это было новым явлением в истории армянской дипломатии. Создав тесные отношения с искавшим помощи России Муртузой Кули ханом, И. Аргутян и О. Лазарян пытались разработать критерии сотрудничества с персидскими деятелями и получения гарантии для армянского населения в пределах персидского государства, оставаясь в рамках официальной политики русского государства.

В сфере армяно-русских взаимоотношений проблема освобождения Армении всегда обуславливалась также русско-турецкими отношениями. Идея освобождения Армении от турецкого и персидского ига всегда вдохновляла армянские добровольческие отряды участвовать в русско-турецких войнах на стороне России. В конце XVIII века в связи с походом Наполеона в Египет, сильно обостряются франко-турецкие отношения, и в то же время между Турцией и Россией подписывается договор о взаимопомощи и сотрудничестве. Этот договор дает возможность России без особого шума и опасений, в ответ на просьбу грузинского царя Георгия XII о помощи, отправить войска в Закавказье. Армянские деятели воспринимают русско-турецкий договор с восторгом. По оценке И. Аргутяна – “И это особый дар христианам от Бога”.

Итак, во второй половине XVIII века армянские деятели, имея сверхзадачу – восстановление армянской государственности, всеми методами старались более углубить армяно-русско-грузинские добрососедские отношения и внести свою лепту в дело реализации плана освобождения Армении от чужеземного ига.

Հ Ա Վ Ե Լ Վ Ա Օ

1

1745 – ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՀԱԿՈՐ ՇԱՄԱԽԵՑՈՒ ՆԱՄԱԿԸ ՎՐԱՑ ԹԵՅՄՈՒՐԱԶ 2-ԴԻ ԹԱԳԱՎՈՐԻՆ

Եւ ընդ օրհնութեան նամակիս յայտնի լիցի տերութեանդ քուժմ եւ պանծալւոյդ մերում, քանզի վասն ձովացեալ մեզաց մերոց պատահեցաւ այս ճախողակի եւ ցաւս անբուժելի Սրբոյ Աթոռոյս եւ Հայրապետականի իշխանութեանս մերոյ: Եւ թէ որպէս է՝ Համառօտաբար գրեալ եմք առ մերային ազգս, որք կան ի յօրհնեցելում քաղաքի քուժմ Թիֆլիզ: Եթէ Տէրութիւնդ յոժարեսցիս զիտեղ՝ անտի զիտացես: Բայց ահա ազաչանօք բազմօք ինդրեմք ի քրիստոսապսակ արքայէդ, զի որպէս լուսահոգի նախնիքն քոյ ի ժամանակս իւրեանց զսէքս եւ զինամածութիւնս են ունեցեալ ի վերայ Աթոռոյս, նաև ազգիս մերոյ, եւ միշտ բարեբարութիւնս եւ լաւութիւնս են արարեալ եւ ի նեղութեան ժամանակիս օգնեալ, նոյնպէս եւ դու օրհնեալ շառաւիղդ նոցունց ի դուժ եւ ի սէր շարժեալ կամեսցիր եւ յօժարեսցիր առնել ի ժամանակս քո ի փառս Աստծոյն մերոյ Քրիստոսի եւ վասն սիրոյ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ եւ սակս խաթերց Հոգելոյս ծնողացն քոց եւ նախնեացն եւ մանաւանդ՝ վասն արեւշատութեանդ քո եւ Քրիստոսի զօրացեալ որդւոցդ:

Ժտեմք այժմ, զի որպէս մեք Հանդերձ ազգիւ մերով արդ եմք արարեալ բազմյաղթ (շահին), նոյնպէս եւ պարծանքդ եւ տէրդ մեր շնորհ եւ ողորմութիւն առնելով՝ արդ արացես նմա, ըստ պատշաճին: Գիտեմք իսկ, զի նա լուսիցի քեզ՝ սակս քոյ խաթերդ կատարեսցէ զինդիրս մեր: Այսինքն՝ զՊատրիարզն մեր, որ փոխեաց եւ զայլն կացոյց ի տեղի նորա, վերստին զԱռաջին Պատրիարզն մեր զայն կացուցէ: Վասնզի զիտես իսկ յոգնահանճար արքայդ, զի ոչ է օրէն մեզ փոխել Պատրիարզի եւ թէ փոխիցի՝ պակասութիւն է Հաւատոցս մերոց եւ օրինացս, եւ առաւել Սրբոյ Աթոռոյս վնաս մեծ լինի: Վասնորոյ Հայցեմք ի բարեպաշտութենէդ քուժմէ, զի մի զանց առնիցես, այլ ողորմեալ զինդիրս մեր, կատարեսցես եւ լիցիս պատ-

ճառ բարեաց ի յաւիտեանս և զվարճս յԱստուծոյ ընկալցիս, զօրհնութիւնս և զշնորհս ի նեղութեան ժամանակիս Սրբոյ Աթոռոյս յօգնութիւն ժամանիցիս, Քրիստոսասէր և քաջամարտիկ արքայդ ի Քրիստոսասէջ Աթոռոյս ժառանգեացես միշտ:

Ողջ լիբր ի Տէր ի պարծանս մեր: Ամէն:

ՄՄ, ձեռ. 6241, թ. 14ա (Թուղթ առ Թամրազ վրաց արքայն, որ ի Թիֆլիզ):

2

1749 - ՀԱԿՈՐ ԵԱՄԱՍԵՑՈՒ ՆԱՄԱԿԸ¹ ԱՐԵՒՄՏՅԱՆ ՎՐԱՍՏԱՆԻ ԹԱԳԱՎՈՐ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՎԻՆ

Յորմէ ժամանեցի օրհնութեան և նախախնամութեան Հայրական ողջոյն և պահպանութիւն որդիական, սէր և գթութիւն հոգեկան: Ծնորճք և խաղաղութիւն առաքելական ի վերայ յԱրմատոց բարեաց վերաբուսելոյդ և յօրհնածառանգից տոհմից շառաւիղիւր ի Հարց առաքինութեանց և ի քաջաց Բագրատունեաց ըստ լրոյ բողոքելոյդ: Աստուածապաշտիդ և Քրիստոսասիրիդ, սիրելոյդ իմոյ հոգւոյս և ցանկալւոյդ սրտիս, Պարոնաց Պարոնիդ և իշխանաց իշխանիդ և սքանչելագործ սրբոյ զեղարդեանս Աստուածաշօշափ (Աղէքսանդրոսի) Քրիստոսագօր (Թագաւորիդ) և Աստուածապսակ (Արքայիդ Բացազլխաց) տիրախնամ տանց և բնակութեանց քոց: Հոգւու սրբով ծաղկեցեալ և զօրացեալ որդւոց և դստերաց քոց և այլոց ա-

¹ Նամակը անստորագիր է և թվագրվում է 1749 թ.: Այդ թվականին Հայոց կաթողիկոսական գահին աթոռագուրդ արված Պետրոս Քուլթուրին փոխարինեց Սևանի բանտարկությունից ազատված Ղազար Ջահկեցին, սակայն սույն նամակը ամենայն հավանականությամբ չի պատկանում նրանց զրչին, որովհետև ձեռագրում հասուկ նշում է արված, թե «Յայս տեսրիս միջի շարադրեցեալ բանքն են ի Յակոբայ Շամախեցոյ, որոց սկիզբն է ի ՌՃԶԶ (1737) թուականիս մերում, յորում վախճանեցաւ Թէքիրդաղցի լուսահոգի կաթողիկոսն՝ յապրիլի Ը (8): Ի սոյն ամի ընտրեցաւ ի կաթողիկոս Ճահկեցի Ղազար Աստուածաբան վարդապետն, բայց ի ՌՃԶ և է (1738) թուին և ի տօնի Սահակայ Պարթևի Հայոց Հայրապետին օծեցաւ ի Հայրապետ» (ՄՄ. ձեռ. 6241, թ. 35բ): Նկատի ունենալով, սակայն, նամակի մեջ եղած այն արտահայտությունը, թե «այսր և անդր երթեալ վասն մեր բազումք եղեն», գուցէ հնարավոր է ենթադրել, թե նամակը գրվել է Ղազար Ջահկեցու անունից և այն ստորագրել է Ջահկեցին: Հակոբ Շամախեցուն իր ուսուցիչն է համարել Սիմեոն Երևանցին. «զհոգևոր ծնողն և վարժապետն իմ գՇամախեցի Յակոբ նրբամիտ և գիտնական վարդապետն, որ ի նարդեանս իրրև զնոր իմն արեգակն փայլի գիտութեամբ և հանճարով ի սուրբ յերկնանման յԱթոռոջս ի մէջ վարդապետաց...» (տե՛ս «Արարատ», 1888, էջ 156):

մենեցունց ընդ տամբք քովք եղելոց և ընդ ձեռամբ Հնազանդեցելոց: Ամէն:

Խնդրեմք ևս, զի շնորհօք Աստուածաձիջի տեղւոյս և Առաքելականի Աթոռոյս և զօրութեամբ ամենայաղթ Փայտին կենաց և այլոց սրբոց նշանաց և Քրիստոսամուխ Աջոյս Լուսաւորչին մերոյ սրբոյն Գրիգորիոսի: Նակ այլոց սրբոց մասանց, որք աստ կան: Եւ մանաւանդ մաղթանօք սրբուհւոյ Աստուածածին և Գայիանեաց և Հռիփսիմեանց սրբուհեաց և ամենից սրբոց այլոց:

Ամենագօրն Աստուած հովանի և պահպան եղիցի քեզ միշտ և յամենայն ուրեք: Եւ ըստ Դաւթի ձեռամբ իւրով զքեզ ընկալցի և բազկաւն զօրացուցէ, զկարօղութիւնս ի պատերազմի զգեցուցէ, զթշնամիս և զատելիս քոյ ի պարտութիւնս մատնեցէ, իշխանութեանդ քոյ զեղջիւր բարձրացուցէ, զգաւակս քոյ և զԱթոռ մինչև ի կատարած աշխարհի հաստատ պահեցէ: Ամէն:

Այլև օրհնեցէ զքեզ Տէր Հոգւով և մարմնով, տամբք և տեղեօք, զարմօք և զաւակօք, տիկնով և աղախնովք, իսկապէս սիրելեօք և բարեկամօք: Համախոհ բարձակցօք և զինուորական դասուք և ծառայական իմբիւք, շարժուն և կայուն գոյիւք, ուրախական և յաջողակի ամօք բազմօք և խաղաղական կենօք, զարդարեալ հոգեկան և մարմնական առաքինութեամբք: Ամէն:

Եւ ընդ օրհնանուէր ողջունամատոյց նամակիս գիտութիւն լիցի սիրելւոյդ մերում, քանզի թուղթ մեծանձնութեանդ քոյ էհաս առ մեզ ի ձեռն ցանկալւոյ եղբոր մերոյ Տիմօթեայ Արհւոյ եպիսկոպոսի ի հոգտեմբերի... աւուրն: Զոր ընթերցեալ մեր, յոյժ ուրախացաք, զի գողջութունէ քումմէ լուաք: Վասնզի զբարեհամբաւութենէ քումմէ կանխագոյն լուեալ մեր՝ փափազէաք տեսանել զքեզ և գտնեչանս մեր լցուցանել, այլ այսու թղթով որպէս թէ տեսաք և բերկրեցաք: Բայց կատարեալ տեսութեանց միմեանց տէր արժանացուցէ զմեզ: Բայց տրտմեցաք ևս, զի պատահեալ է բարեպաշտութեանդ քոյ ձախողակի դիպուածդ այդ, վասն որոյ ժտեմք յԱստուծոյ, զի զքեզ զբաղձալիդ մեր զպարծանսդ քրիստոնէից ի ձախողակի պատահմանց և ի չար դիպուածաց անվնասելի պահեցէ և առաջի ամենեցունց քաղցր երևեցուցէ և վերստին ի յԱթոռ քո զքեզ անդրադարձուցէ մեծագոյն փառքք քան զառաջինսն: Ամէն:

Ընկալիք ևս բազմաւ սիրով զընծայսն քո սիրանշանս, զորս առաքեալ էիր՝ և համարեցաք իբրև զազնուագոյնս և զպատուականագոյնս, ուստի Տէր Աստուած գքեզ շէն պահեսցէ, կարի շնորհակալեցաք և շնորհակալեցուք, գոհացաք և գոհասցուք ևս գքէն, օրհնեցաք զքեզ և օրհնեսցուք ևս և անմոռանալի պահեսցուք զաստուածասիրութիւն քո ի մտաց մերոց:

Արդ խնդրեմք, զի որպէս մեք զՊատուականութիւն քո պահելոց եմք ի միտս մեր անմոռանալապէս, ապա դու բզսուրբ և զգերապայծառ Աթոռս և զմեզ թարց մոռացման պահել և զկատարեալ սէր քո հաստատուն ունիլ առ մեզ և զօրհնութիւնս ժառանգել: Քանզի յայսմհետէ, եթէ Տէր կամեսցի, առաւել սէր ցուցանելոյ եմք քան զնախնիսն մեր: Աստանօր լուր և զորպիստութեանց մերոց, զի ըստ ժամանակիս կամք ի ներքոյ բազմաց հոգւոց, բայց հնարիւք իւրք ապրիմք յաջողմամբն Աստուծոյ, քանզի ազգք մեր աղքատացեալք են և սրբոյ Աթոռոյս ծախքն այժմ շատք են և մանաւանդ այսր և անդր երթեալ վասն մեր բազումք եղեն, զոր թերևս զիտիցէ խոհեմութիւն քո:

Եւ զայլս զորպիսութիւնս մեր իմաստիւր ի սիրելոյ եղբօրէ մերմէ Տիմոթեոսէ արհւոյ եպիսկոպոսէ, զոր ահա խաղաղութեամբ և սիրով ուղեւորեցաք առ Մեծութիւն քո: Ողջ լիբ ի Տէր և ի պարծանս մեր:

ՄՄ, ձեռ. 6241, Թ. 13բ-14ա (Թուղթ առ Աղէքսանդրոս Արքայն վրաց, որ ի Բաշաշուխ):

3

1759 դեկտեմբեր - ՀԱԿՈՒ ԵԱՄԱԽԵՑՈՒՆ ԵԱՄԱԿԸ ԹԵՅՄՈՒՐԱԶ 2-ՐԴ ԵՒ ՀԵՐԱԿԸ 2-ՐԴ ՎՐԱՑ ԹԱԳԱՎՈՐՆԵՐԻՆ

Յիսուսի Քրիստոսի ծառայ Յակոբ, որ և շնորհիւն նորա՝ կաթողիկոս ամենայն Հայոց և ճայրագոյն Պատրիարք Աստուածեան Աթոռոյս և Առաքելական եկեղեցւոյս սրբոյ էջմիածնի, որ ի Վաղարշապատ մայրաքաղաքի: Յորմէ ժամանեցի զիր հայրական օրհնութեան և նախախնամութեան, որդիական ողջունի և պահպանութեան, հոգեկան սիրոյ և գթութեան: Ծնորէք և խաղաղութիւն Առաքելական ի վերայ Արմատոց բարեաց վերաբերու (և այլն): Եւ ընդ օրհնանուէր և ողջունամատոյց նամակիս յայտնի լիցի Աստուածասիրութեանցդ ձերոց:

Քանզի գիտէք իսկ, սիրելիքդ մեր, որ յետ վախճանելոյն Տէր Աղէքսանդրի Հայրապետին Ծնորհածնի հօրն իմոյ կայի ի սուրբ Աթոռոջս և վարէի զիշխանութիւնս ի մեր Տեղապահական՝ զանազան ցաւօք անձնականօք և պէսպէս վշտակրութեամբ արտաքսականօք ըստ կարի իմում: Յայսմ միջոցին նախակոչեցեալ ի Հայրապետութիւն մեր Իսահակ արհիպատիւ եպիսկոպոս եղբայրն մեր, առ որ թէպէտ գրէաք ազաչանօք բազում անգամ, զի եկեսցէ ի Սուրբ Աթոռս ի յօգուտ սորին, և մանաւանդ զի մեք ևս զերծցուք թերևս ի նեղութեանց գործոյս մերոյ, բայց նա ոչ լսէր աղաչանաց մերոց և ոչ դայր ինքն, այլ գրէր միշտ առ իս, թէ դու մինչ ոչ դայցես առ իս, ես ոչ եկից ի Սուրբ Աթոռդ: Առ այս յոյժ յօժար էի ես գնալ, զոր գիտէ արտագէտն Աստուած, վասն երկուց պատճառաց հարկաւորաց. նախ, զի տեսանէի վասն անմեծաւոր լինելոյ սրբոյ Տանս կարի վնասք լինէին: Երկրորդ, զի ես վատարագոս, որովհետև անձամբ ցաւահարեցեալ էի: Կամօքս ի վերայ գործակալութեանս անյօժար էի և մանաւանդ սրտիւս յոյժ վիրաւորեցեալ էի սակս արտաքսական անթիւ նեղութեանցն, զորս կրէի միշտ՝ յուսահատութեամբ բազմաւ: Յայն սակս ամենայօժար մտօք կամէի գնալ ի Կարին կամ բերել գնա ի Սուրբ Աթոռս, որպիսի հնարիւք և իցէր և կամ սիրով հրաժարեցուցանել գնա, եւ զիտակցութեամբ և կամակցութեամբ Պոլսեցոց զայլ ոմն ընտրել ի Հայրապետութիւն և գնա բերել ի Սուրբ Աթոռս: Զի զայսքան ամս, յորս առաջնոյն յամեցմամբքն այլամտեցան և զայթակղեցան մարդիկք՝ միամտեցին, և վնասքն, որ լինէին Սրբոյ Տանս, այնք պակասեցին, և մանաւանդ թերևս ես՝ բազմավշտակիրս, ի տեղապահական գործոյս ազատիցիմ: Վասն այսց պատճառացս ես յիրաւի յոյժ յօժարէի գնալ ի Կարին: Բայց վասն իմ մեղացս աստ արգելուին զիս և ոչ թողուին ի գնալ: Ինչևիցէ, որ եղևն և էանց, բայց վերջապէս ելեալ ի սրբոյ Աթոռոյս հանդերձ օրհնեալ քաղաքիդ ձերոյ առաջնորդ և մեր սիրելի եղբայր Զաքարիա վարդապետիւն և ձեր սիրոյ և յորդորական և հարկաւորական թղթովն և Զաման խանիւն զնացաք ի Կարին, յորում հանդիպեցաք սիրով մեծապատիւ եղբօրն մերոյ Իսահակայ Արհւոյ եպիսկոպոսին, որ էր օր [...(չլրացված)] զդ ամսոյ օգոստոսի: Եւ թէ զինչ եղեն և կամ զինչ խօսեցան անդ ի Կարին, եւ կամ ի Մեծն Պօլիս, վասն ընտրելոյ զանարժանութիւնս իմ ի Հայրապետութիւն և կամ զայն զիպուածսն մեր, որ պատահեցաւ ի Կարին: Եւ կամ թէ որպէս եղև ելն մեր ի Կարնոյ անտի, եւ կամ զմեր դալն ի Բայազիտ և զգալն անդ Արրհամու խոհեմազարդ վարդապետ

տին համահասնական և բազմակնիք մահարիւն Պոսեյնոց և արքունական խաթրը հումայունովն: Եւ անդէն զսինհոդոսն մեր արարեալ և ի նմա զխոսեցեալ բանսն մեր: Եւ անտի զգալն մեր ի սուրբ Աթոռս, յորում զօծանիլն մեր ի հայրապետութիւն, եւ զայլս պէսպէս եղելութիւնսն մեր զամենայն գրեալ եմք զայնս ի կարճոյ ի մեծի կոնդակոջն մերում, զոր ահա գրեալ յղեցաք յօրհնեալ մայրաքաղաքդ ձեր ի վերայ սիրելոյ և օրհնեցելոյ ազգին մերոյ Հայոց: Զորս եթէ իմանալ կամիցիք՝ անտի իմասջիք, և մանաւանդ ի Զաքարիայ վարդապետէզ եղբօրէ մերմէ, որ ինքն իսկ ականատես և ականջալուր էր և հասու եղելութեանց իրակութեանցն բազմաց: Այլ աստ միայն զայսքան բանս ծանուցանեմ իսկապէս սիրելի և ճշմարիտ բարեկամաց սրբոյ Աթոռոյս և մեզ: Զի ես կամէի ճշմարտութեամբ և առանց այլ և այլ մտաց զայն տեղապահական դործն իմ, որ էր բեռն, բայց թեթեւ՝ ինչն ի բաց բառնալ և ազատիլ, որպէս ի վերջ ևս գրեցաք, այլ անկայ ի ներքոյ և ևս առաւել ծանրագունից բեռանց և անտանելեաց, արդարև ի վեր է քան զկար ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ տկարիս իմոյ: Սակայն և զի այսպէս եղև, ուրեմն այլ ինչ ասելիք և մտածելիք ոչ կարեն օգնել ըստ ամենայնի անկարիս, բայց միայն յուսալ ինձ յամենակարօղն Աստուած և ի նա ապաւինիլ, զփառս նմա տալ հանդերձ գոհութեամբ բազմաւ, որ կամեցաւ և ետ անարժանիս զայս իշխանութիւն հոգևոր, վասն զի ոչ յայլ ուստեք է իշխանութիւն, եթէ ոչ ի Աստուծոյ է, զի արժանաւոր աղօթիւք աստուածասէր և մեծահաւատ բարեկամացդ իմոց և սիրելի ազգին իմոյ, զիս զօրացուցէ և կարօղացուցէ հոգևով և մարմնով, առ ի ըստ հաճոյից և կամաց իւրոց զայս իշխանութիւնս վարել աստ՝ զսուրբ Տունս իւր և նոյնակերտ Աթոռս մեր շէն և հաստատ և պայծառ պահել հոգևորօք և մարմնաւորօք, զի անդ մի ամաչեցից առաջի իւր, այլ աջ...մէ նորա, զի ըստ քանքարաշահ ծառային, յանեղբական ուրախութիւնն իւր մտեալ բերկրեցայց ի յաւիտեանս յաւիտենից: Այժմ խնդրեմք ի քրիստոսապսակ Արքայէզ և ի տիրազօր և ի թշնամաւան (Հերակլ վալի) էզ, զի որպէս լուսահոգի նախնիքն ձեր ի ժամանակս իւրեանց՝ զսէրս և զխնամածութիւնսն ևս ցուցեալ, զբարեբարութիւնս և զլաւութիւնս են արարեալ ազգի մերում և մանաւանդ զհաւատարմութիւնս և զսիրողութիւնս են ունեցեալ առ Սուրբ Աթոռս մեր և առ նստող հայրապետն ի սմա և ըստ ճշմարիտ բարեկամաց յօգնութիւն ժամանելով սմա յաւուր նեղութեան, նոյնպէս և դուք Աստուածասէրք և օրհնութեանց շառաւիղքդ և բարեպտղաբեր ոստքդ

նոցունց որպէս ըստ նոցա արարեալ էք և ունեցեալ էք առ սուրբ Գահս և առ հոգելոյս հայրապետսն մեր մինչև ցայժմ, նոյն սէրն զխնամածութիւնն զբարեբարութիւնն, զլաւութիւնն, զհաւատարմութիւնն և զբարեկամութիւնն յայսմհետէ պարտիք ևս առաւելապէս ունիլ միշտ ի սիրտս և ի կամս ձեր և մանաւանդ արդեամբք առնել և կատարել: Յաստուածապաշտիցդ ժտեմ (վասն սիրոյ սրբոյ Գրիգորի Լուսաւորչին մերոյ և մանաւանդ ի) փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ, որ պատուիրեաց հաւատացելոց և աշակերտելոց իւրոց զայս սէր ունիլ առ միմեանս և այսու նշանաւս ճանաչիլ գոյն Քրիստոնեայ, ըստ այնմ: Յայսմ զիտացեան ամենեքեան եթէ իմ աշակերտ էք, եթէ սիրիցէք զմիմեանս: Զայս վասն իւրոյ պատուէրս Տիրական յայնժամ կատարէք, զի զազգս մեր՝ զհաւատացեալսն ի Քրիստոս, իբրև զձերդ համարիցէք և զՍուրբ Աթոռս մեր և Աթոռակալս և զԱթոռայինսն որպէս զձերդ իմանայցէք և, ըստ որում, սիրող բարեկամ և խնամածու լինիցիք միշտ, վասնզի մեք մի եմք ի Քրիստոս Յիսուս փրկիչն մեր, ուստի արդարև ըստ ձերդ աղօթողաց աղօթեմք և մեք հանապաղ՝ սակս հաստատութեան Արքայութեան ձերոյ և յաղագս երկայնակեցութեանց ձերոց և զօրեղութեանց և յաղթողութեանց զօրաց և զաւակաց ձերոց և մանաւանդ վասն միշտ յաղթողութեանց և փրկութեանց ձերոց, ըստ հոգւոց և մարմնոց: Ուրեմն հայցեմք ևս՝ զլուրութիւնս ոչ զնել ի միջի, այլ որպիսեօք սրտիւք և մտօք, որք զձեզ և զձերայինսն հոգայք, նոյնպիսեօք զմեզ և զմերայինսն հոգասջիք (կատարելով և զայն հրաման Աստուածային, թէ սիրեսցես զընկեր քո իբրև զանձն քո): Որք թէպէտ մինչև ցայժմ ևս հոգացեալ էք, սակայն այժմ՝ յաւուրս մերում և ևս առաւել հոգալ պարտիք, վասն երկուց պատճառաց: Նախ, զի դուք Աստուածասէրքդ ևս զիտէք իսկ, որ ես՝ մեղաւորս, ի բնէ բարեկամ, սիրելի և նախածանօթ ձեր եմ և վասն կենաց և հաստատութեան ձերոյ յար աղօթօք: Որում և սիրտք ձեր ևս վկայեն: Գիտեմ և ես, զի դուք սիրէք զիս և զբարիս կամիք վասն իմ և ընդ յաղողմանս իմ ուրախանայք, որում և հոգի իմ վկայէ առանց կարծեաց: Ուրեմն այնպէս իմանայջիք, թէ իսկապէս սէրն և ճշմարիտ բարեկամութիւնն, զոր ունիցիք առ Սուրբ Աթոռս և առ իս՝ մեղաւորս, այնք ևս հարկեցին և արկին զիս տկարս յայս անտանելի դործս: Երկրորդ պատճառն, զի ժամանակս այսպէս վրդովեցեալ է և աշխարհս մեր անթաղաւոր, վասն որոյ Սրբոյ Աթոռոյս և ինձ՝ վատաբաղդիս, և Աթոռայնոցս նեղութիւնքն և վիշտքն կարի բազումք են յամենայն կողմանց և մանաւանդ սակս ընչից պակասութեանց,

զորս Աստուածասէրքդ ևս զիտէք՝ Տիրապարզև իմաստութեամբք ձերովք: Եւ այսպէս, կամք խեղճք և ողորմելիք և անկեալք ի մեծամեծ Հոգացողութիւնս և ի տարակուսութիւնս մշտապէս մտատանջեցեալք՝ եթէ արդեօք յու՞ր իցէ եզերելոյ վախճանն մեր՝ ի բարի՞ս և թէ ի չա՞րս: Սակայն ոչ իսպառ յուսահատիմք, այլ յուսամք յամենակարօղ և յողորմածն Աստուած, զի ողորմեսցի մեզ, ըստ մեծի ողորմութեանն իւրում ի փորձութեանց և ի նեղութեանց մերոց աստի՛ զմեզ, զձեզ և զազգս մեր ազատեսցէ և ի բարիս աւարտեսցէ վերջն մեր: Եւ զի յայսպիսի չարարեր ժամանակս եմք և անյաջող զիպուածս այժմ, այն յազգաւ խնդրեմք առաւել Հոգածու և օգնական լինիցիք Սրբոյ Աթոռոյս և մեզ՝ Աթոռայնոցս, զի շէն և պայծառ մնասցի սա ըստ Հոգևորին և մարմնաւորին և զուք բարեաց պատճառքդ ի սմա եղելոց աղօթից և ամենայն Աստուածայնոց շնորհարաշխութեանցն Հազորդք զտանիցիք միշտ աստ և ի Հանդերձելումն յանվախճան արքայութեան արժանասցիք: Ամէն:

Ահա զսուրբ և զՔրիստոսակէջ Աթոռս, զիս և զամենայն Աթոռայիսնսն (որք եմք աղոթօղք վասն կենաց ձերոց և սակս Հաստատութեան Աստուածահաստ իշխանութեանցդ ձերոց) ձեզ յանձն առնեմ և զձեզ, հանդերձ ձերայնովք Աստուծոյ ամենակարողի Հաստատչին րնաւից էից:

Գիտելի է և զայս, զի իբրև լսեմք միշտ և մանաւանդ յայսմ ամի արարեալ զյաղթութեանց ձերոց, յոյժ յոյժ ուրախանամք ըստ Հոգևոց և ըստ մարմնոց մերոց, և զնոր օրհնութիւնս, զփառս և զգոհութիւնս մատուցանեմք Քրիստոսի Աստուծոյ մերոյ, որ ետ զկարողութիւնս և զյաջողութիւնս, որով յաղթեալ վանեցիք զչարագոյն թշնամիսն զայնոսիկ: Զձեզ և զքաջամարտիկ զօրսն ձեր ևս օրհնեցաք և վասն ձեր աղոթեցաք և աղոթեմք և աղոթեսցուք առ Տէր, զի միշտ յաղթողս արասցէ զձեզ ի պատերազմունս ամենայն թշնամեաց ձերոց: Ամէն:

Ողջ լիբ ի Տէր զօրացեալք ի նոյն ի փառս Աստուծոյ և ի պարծանս սրբոյ խաչին և ի ցնծութիւն մեզ: Ամէն: ԶՍրբոյ Աթոռոյս ճորասն, որք կան յօրհնեալ քաղաքիդ ձերում, զորս իբրև զձերդ համարելով, յողորմութիւնս և ի խնամս ձեր պահել ի ձենջ խնդրեմք:

Գրեցաւ ի ՌՄԸ (1759) թուին (և այլն):

ՄՄ, ձեռ. 6241, թ. 15ր-16ա (Թուղթ առ արքայն Վրաց)

1760 – ՀԱԿՈՐ ՇԱՄԱԽԵՏՈՒ «ԹՈՒՂԹ ԱՌ ՎՐԱՅ ԱՐՔԱՅՆ ՀԵՐԱԿԼԷՍ, ՎԱՍՆ ՀԻՒՍԷՒՆ ԱԼԻ ԽԱՆԻՆ՝ ԶԻ ԽՆԱՄԵՍՅԷ»

Յորմէ ժամանեսցի զիբ սիրոյս...

Եւ ընդ սիրոյ, որղուռի և օրհնութեան թղթոյս զիտասջիր իսկապէս սիրելի իմ և ճշմարիտ բարեկամ Սրբոյ Աթոռոյս էջմիածնի, քանզի գիտես և դու խակ, որ սովորութիւն է և օրէն ի մէջ իսկապէս սիրելեաց և ճշմարիտ բարեկամաց վստահանալ ի սիրելութիւնս և ի բարեկամութիւնս իւրեանց՝ զպիտանի և զօգտակար իրս և իրակութիւնս ինքեանց ծանուցանել միմեանց, սա՛ նմա և նա՛ սմա: Ըստ այսմ սիրականի և բարեկամականի օրինի և կանոնի ահա և ես վստահացեալ առնեմ: Լուիցէ, ուրեմն մեծութիւն և աստուածատուր իմաստութիւն քո, զի որպէս միշտ մինչև ցայժմ թէ օրհնեալ և բարեպաշտ հայրն քո (զոր տէր ի պանդխտութեանն նորա անփորձ և ուրախ պահեսցէ և զբարեյաջողութիւնս տացէ նմա և զամենայն խորհուրդս բարիս կատարեսցէ և առաջնորդեալ խաղաղութեամբ վերստին՝ յօրհնեալ երկիրդ և յօթեանդ ձեր հասուսցէ) և թէ դու՛ օրհնաժառանգդ, սիրեալ էք զսուրբ Աթոռս մեր և զսորին բարին էք կամեցեալ և արարեալ, նոյնպէս զազգս սիրեալ էք, սիրէք և որոց վասն զբարիս կամեցեալ էք՝ կամիք և առնէք, որպէս զձեր Աթոռդ և ազգդ: Վասն այն սիրոյն և բարեկամութեանն ձերոյ, զոր ունիք առ Սուրբ Աթոռս և առ ազգս մեր, ընդ այլազգեսցն երկրիս այսորիկ և մանաւանդ բերդակալացն բերդիս մերոյ, թէ ընդ տեղականացն և թէ ընդ օտարացն՝ զսէրս և զբարեկամութիւնս ևս էք արարեալ և նոցա ի ձեռն թղթոց և մարդկանց միշտ պատուիրեալ, զի զսուրբ Աթոռս և զմեզ խնամօք պահեսցեն և մի նեղացուցեն: Թէ նոքա ձեր սիրելիք և բարեկամք ևս չեն եղեալ, բայց սակս Սրբոյ Աթոռոյս և մեր, զսէրս և զբարեկամութիւնս էք արարեալ ընդ նոցա: Զայս ևս քաջապէս գիտեմ, վասն որոյ ահա գրեմ և վկայեմ անկարծիք:

(Թ. 98ր) Եւ զի մինչև ցայժմ այսպէս էք արարեալ միշտ ընդ երկրիս մերոյ այլազգեսցն,² վասն որոյ խնդրեմ ի խոհեմապաշտ Մեծութենէդ քումմէ, զի այժմ ևս սակս սիրոյ և բարեկամութեան Սրբոյ Աթոռոյս և մերոց և մեր և ազգի մերոյ առնիցես զսէրս և զբարեկամութիւնս ընդ սոցա և

² Ընդգծված արտահայտությունները գրված են լուսանցքում՝ նույն ձեռագրով և նույն թանաքով:

մանաւանդ ընդ Հուսէյն Ալի խանին, որ այժմ իշխողն սա է, որում և սորին մեծ եղբորն բարերարութիւն և լաւութիւն շատ ես արարեալ, մինչ զի ի մահուանէ ազատեալ Հանդերձ ազգօք իւրովք, ևս առաւել զիշխանութիւնս և զմեծութիւնս ևս տուեալ սոցա, զոր ինքն ևս զիտէ և երբեմն ևս յիշէ չնորհակալութեամբ ի պատկանաւոր ժամու, սակայն այլոց հետեւեալ՝ երբեմն զկարմրազլխութիւն առնէ և տրմարդութիւն երեկեցուցանէ: Այլ ոչ իսպառ մոռացեալ է սա զբարերարութիւնսն ձեր, որ այժմ առ մեզ և առ սուրբ Աթոռս զսէր և զբարեկամութիւնս ևս առնէ (զայս ևս Համարիմք մեք ի պախւ ձեր առնել), զորմէ գիտեմ պատմեալ է Մեծութեանդ սիրելի եղբայրն իմ Զաքարիա աստուածարան վարդապետն: Ուստի կրկին աղաչելով խնդրեմ ի քէն, զի վասն երկուց պատճառաց, այսինքն, նախ՝ սակս կատարման հրամանին Քրիստոսի Աստուծոյ մերոյ, յոր հաւատացեալ իսկ ես, որ ասէ, թէ սիրեցէք զթշնամիս ձեր և բարի արարէք ատեկեաց ձերոց: Երկրորդ՝ վասն ձեր առաջին արարեալ լաւութեանն, որ սոցա արարեալ էք, զոր մեք ևս գիտեմք: Երրորդ, վասն սիրոյ Սրբոյ Աթոռոյս և մեր և ողորմելի ազգիս մերոյ, սմա տիրութիւն և բարերարութիւն առնիցես, յայսմիկ նեղութեան աւուրս սորա: Եւ մանաւանդ, զի երկիրս այս երկրակից և յարավան քո է, և բնական բնակիչք սորին նախածանօթք են լուսահողի նախնեացն ձերոց՝ նոյնպէս և դուք՝ սոցա: Ինչևիցէ, երկրակիցն կերպիւ իւրք երկրացասէր լինի՝ քան հեռագոյնն և անծանօթն, ի զիպօղ ժամու, զոր դու ևս լաւապէս գիտես իսկ: Եւ թէ որպէս տիրութիւն առնել խնդրեմ, այս է, զի ի շահատանէ եկողին ձեռն անկանիցի երկիրս մեր՝ ոչ խանափոխութիւն լինիցի և ոչ այլ իմն վնաս մեր խանին պատահեսցի և ոչ Սրբոյ Աթոռոյս և ոչ երկրիս և այսպէս լինիլս, որպէս Աստուած տնօրինէ և իմաստութիւն Մեծութեանդ քոյ գիտէ և կարէ, այնպէս Հոգասցի: Եւ թէ կամիցիս զայս խնդիրս մեր կատարել, խնդրեմ փոյթ ընդ փոյթ կատարել և ոչ յամեցուցանել: Որոյ սակս ահա աղօթեմք առ Աստուած կամեցող բարեաց քեզ կամակից լինիլ և զքեզ կարողացուցանել առ ի կատարել զայս խնդրելիս մեր, որ յիրաւի մեծագոյն բարերարութիւն է այս առ Սուրբ Աթոռս, առ մեզ, առ խանն և առ բոլոր երկիրս մեր: Որ և մեք ոչ մոռացուք ի յաւիտեանս: Ապա խնդրեմք առնել, զի լինիցիս պատճառ բարեաց՝ զվարձս ի տեառնէ, զչնորհս ի Սրբոյ Աթոռոյս և զօրհնութիւնս մեր ընկալցիս: Ամէն:

(ՄՄ, ձեռ. 2911, թ. 98ա-98բ)

5

1760 – ՀԱԿՈՐ ՇԱՄԱԽԵՑՈՒ «ԹՈՒՂԹ ԱՌ ԱՐԳԱՅՆ ՎՐԱՑ ՀԵՐԱԿԼԷՍ, ՎԱՍՆ ՀԻՒՍԷՅՆԱԼԻ ԽԱՆԻՆ. ՈՒՍԱԳԻՐՈՒԹԵԱՆՆ ԸՆԴ ՆՄԱ»

Յորմէ Հայրական օրհնութեամբ, որդիական ողջունիւ և Հոգեկան սիրով զիտասջիբ իսկապէս սիրելի մեր, հարազատ հաւատարիմդ Սրբոյ Աթոռոյս, Աստուածասէր և բարեպաշտօն, բազմայաղթ և թշնամահալած Քրիստոսագոր Արքայորդի Արքայդ Հերակլ:

Քանզի երկակի զիր մեծութեանդ քոյ հասին առ մեզ, այսինքն՝ թէ ի մայիսի ԻԱ (21) –ին գրեցեալն և թէ ի ԻԵ (25)–ումն նորին ամսոյ գրեցեալն, զորս և ընթերցեալ ծանեաք զամենայն ի նոսա գրեցեալսն, որք էին օգտակարք Սրբոյ Աթոռոյս, մեզ և երկրիս մերոյ: Առ այն, որ յերկրորդում թղթում քում գրեալ էիր պատասխանի երկրորդի թղթոյն մերոյ, թէ յառաջ քան զգալ թղթոյդ քոյ Հուսէյնալի խանն առաքեալ էր առ մեզ զմօլլա Ալին և զմեր Աղա Մասուամն՝ Հանդերձ թղթով, որոյ զպատասխանն գրեալ եմ և յղեալ առ Հուսէյնալի խանն՝ ձեռամբ նոյն մօլլա Ալիին և մեր Աղա Մասուամին, որով զհաստատուն և զհաւաստի պայմանագրական թուղթս եմ խնդրեալ ի նմանէ, որ եթէ գրեալ յղեաց զասացեալն իմ և ես յայնժամ աբարից Աստուծով ըստ կամաց նորս և կատարեցից զխնդիրսն ձեր, և զայլս ըստ այսմ ոճի գրեալ էիր:

Արդ, ահա աստ խանն, Հանդերձ մեծամեծօք ժողովեալ ի խորհուրդ ընդ Աղա Մասուամին, զոր և ինքեանց որպէս թէ վէքիլ են արարեալ և զնա հաւատացուցեալ և ընդ զուխտագրական բանս խօսեցեալ և զթուղթս ևս առ խոհեմաշատ մեծութիւնդ քո գրեալ, զոր և ահա յղեցին առ քեզ: Ի թղթոյ խանին և ի բերանոյ Աղա Մասուամին իմանալոց ես և խոկալոց: Յայնժամ, որպէս տնօրինիչն ամենայնի Աստուած և նոյնատուր իմաստութիւնդ քո ազգելոց են քեզ, այնպէս առնելոց ես: Բայց զի եթէ զբանս խանին և սոցա ոչ հաւանիցիս և ոչ հաւատայցես և ոչ կամիցիս տիրութիւն առնել երկրիս մերոյ և խանին՝ հասարակապէս, այլ խնդրեմ ի ճշմարիտ բարեկամէդ մերմէ, զի յատկապէս սակս Սրբոյ Աթոռոյս ազատութեան պարտիս նախապէս հոգալ և զհնարս գտանել և առնել փութով և ոչ զանց առնել ի փառս Քրիստոսի, ի պարծանս խաչին և ի սէր Սրբոյն Գրիգորի

Լուսատուին հոգևոց մերոց: Եւ այսու լինիլ պատճառ բարեաց և զվարճս ի Քրիստոսէ և զշնորհս ի Սրբոյ Աթոռոյս և զօրհնութիւնս ի մէնջ միշտ ընդունիլ յազգաց յազգս և յորւոց յորդիս:

Արդ, այն բարի խորհուրդ այժմ ոչ կատարեցաւ, վասն յոյժ ըշտապմամբ գալոյն այլը աղա Մասուժին, այլ կատարեցից Աստուծով և պատրաստեցից առ ի յղել:

Ողջ լեր ի տէր զօրացեալ ի նոյն ի փառս Աստուծոյ և ի պարծանս ամենազօր խաչին, որ կարօղացուցէ գրեց միշտ: Ամէն:

ՄՄ, ձեռ. 2911, թ. 100ա:

6

1763 (՞)- ՍԻՄԵՈՆ ԵՐԵՒԱՆՑԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ «ԹՈՒՂԹ ՀԱՂԲԱՏԱ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵԱՆ»

Եւ ընդ սիրոյ և օրհնութեան գրոյս ծանուցումն լիցի սիրելեաց մերոց և հարազատ որդւոց Սրբոյ Աթոռոյս, զի որովհետեւ վասն մեղաց մերոց բազում վանօրայք և եկեղեցիք ամայացեալք և զրկեցեալք եղեն ի ընակչաց և ի միաբանից, ընդ յորս և Հաղբատու և Սանահնոյ վանօրայքդ ձեր, զորս ոչ Առաջնորդ կարէր նստիլ և ոչ միաբանք, վասնորոյ և լուսահոգի հայրապետքն մեր զթէմս և զժողովուրդս նոցին Տէրունիս արարին, զի մի տուրք նոցին աստ և անդ իղուր կորիցէ: Որպէս և երանեալ հոգի սրբազան Աղէքսանդր և Յակօբ հայրապետքն մեր զթէմս և զժողովուրդս յիշեցեալ Հաղբատոյ և Սանահնոյ վանիցդ արարին տէրունիս: Եւ զայս երկու մտօք արարին. նախ, զի մի ծանրութիւն և ձանձրութիւն լինիցի օրհնեալ քաղաքիդ Թիլֆիզու՝ նստելով այնց վանորէից առաջնորդացն: Եւ երկրորդ, զի մինչ վանօրայքն անմարդաբնակք ի ներկայումս և տուրք ժողովրդեանն նոցա ոչինչ է օգուտ, մի այս և այն մտնելով իղուր կորիցեն: Այսու մտօք արարին զթէմս և զժողովուրդս այգոցիկ վանօրէից և գրեցին, զի գիտութեամբ Առաջնորդին քաղաքիդ Թիլֆիզու ոմն հաւատարիմ կարգիցի գանձապետ գնուէրս այնց վանօրէիցն ի յինքն պահիցի ամբողջապէս, որպէսզի յետոյ ողորմութեամբն աստուծոյ պիտոյասցին ի նորոգումն նոցին, որպէս և գիտէք իսկ ամենեքեան: Իսկ այժմ մեք զՀաղբատու վանից առաջնոր-

դութիւնն վերստին շնորհեցաք եղբօրն մերոյ և ձեր սիրելւոյ Զաքարիայ հանճարաշատ վարդապետին, և զնա արարիք Առաջնորդ ի վերայ սեպուհ և բնական թէմից և ժողովրդոցդ Հաղբատու վանիցն միայն: Վասնզի որովհետեւ Աստուածազօր և խաչիւ պսակեցեալ արքայն Հերակլէս, որ ի ներկայումս է պարծանք և շնորհ ազգացս քրիստոնէից, ամուր պարիսպ և ընդդիմակաց վահան ամենայն թշնամեաց խաչին Քրիստոսի և օգնական և այցելու և ըստ յամենայնի խնամատար և մխիթարիչ եկեղեցեաց և եկեղեցականացն...», զոր տէր միշտ զօրաւոր և անյաղթելիս պահեցէ, խնդրեալ էր ի մէնջ, վասնորոյ և մեք յերախտիս և ի բարերարութիւնս սորա նկատելով, ոչ կարացաք բացասել և ոչ պատշաճ համարեցաւ զանց առնել: Վասն այսորիկ այս ըստ խնդրոյ վերոյ յիշեցելոյ բարեպաշտին և իմոյ հոգոյս յատկականի սիրելւոց արքայազնոյ արքային զձեզ՝ որք էք բնական թէմ և վիճակ Հաղբատու վանիցն, շնորհեցաք եղբօրս մերում Զաքարիայն ձերունազարդի վարդապետին, զի ըստ օրինի բարետաժ և սրտացաւ հովուի հովուեսցէ զձեզ և կառավարեսցէ ըստ կարգի և ըստ աւանդութեան Հայաստանեայցս եկեղեցւոյ և տաժեսցէ զձեզ հոգևոր և աստուածային բանիւ: Որում և դուք պարտիք⁴ ըստ բնական և ըստ նախնի սովորութեան ձերում, զամենայն հասս և զիրաւունս առաջնորդական հատուցանել զմա՝ առանց արտնջանաց և թարց ընդդիմութեանց, և պարտիք ևս հլու և հնազանդ լինիլ զմա ի խրատս հոգեշահս և ի հրամանս կանօնաւորս և Աստուածահաճոյս, ըստ Պօղոսի թէ ունկնդիր լերուք առաջնորդացն ձերոց և այլն, որպեսզի դուք բարի և օրինաւոր հրամանաց դորին Հնազանդելով և դա Աստուածահաճոյ վարուք և ճշմարիտ վարդապետութեամբ ըստ քաջ հովուի զձեզ կառավարելով, երկրքեանդ ևս ընդունիցիք յԱստուծոյ զվարճս և ի Սրբոյ Աթոռոյս և ի մէնջ զօրհնութիւնս միշտ: Կատարողքդ հրամանաց մերոց լիջիք օրհնեալք յԱստուծոյ:

(ՄՄ, ձեռ. 2911, թ. 9ա)

7

³ Մեկ բառ անընթեանելի:

⁴ Լուսանցբում:

1776 – ՍԻՄԵՈՆ ԵՐԵՒԱՆՑՈՒ «ԹՈՒՂԹ ԱՌ ԱՄԵՆԱՅՆ ԱԶԳՍ ՄԵՐ,
ՎԱՍՆ ՍՐԲՈՑ ԱԹՈՒՈՅՍ ՊԱՐՄՊԻ ՆՈՐՈԳՈՒԹԵԱՆՆ»

...Պատուիրեմք ևս Հարազատ որդւոցդ սրբոյ Աթոռոյս, զի արտաքին պարիսպ Սրբոյ Աթոռոյս ի Հոգելոյս և ի բազմերախտ Մովսէս կաթողիկոսէ անտի, նաև յայլոց Հայրապետաց ոմանց շինեցեալ է Հողացելի Հասարակ որմօք, որ է բազմաժամանակեայ և Հնացեալ և խարխլեցեալ և ի տեղիս տեղիս երբեմն փլուզեցեալ և կրկին նոյնպէս շինեցեալ (զի վասն ապահովութեան ժամանակին ոչ էր լեալ Հարկ կոպտագոյն և ամրապէս շինելոյ: Իսկ ի Ղազար լուսահոգի կաթողիկոսէն մինչև ցայժմ, յորժամ երկիրս եղաւ անտէր, երանելիքն միշտ ջանային և Հողային առ ի շինել Հաստագոյն Հիմամբք, բայց ոչ եղէն ձեռնհաս: Իսկ ի մեր ժամանակս կողմն արեւմտեան բողոքն իսպառ փլաւ և միւս կողմունքն ևս որպէս թէ փլելի իսկ էին), զոր ասեմքս գիտէք իսկ, զի ոմանք ի ձէնջ աչօք տեսեալ էք և ոմանք ականջօղովք լուեալք, զի այսպէս է: Ուրեմն վասն երից պատճառաց Հարկ եղև մեզ շինել զբողոքն ի Հիմանէ: Նախ, սակա Հնութեան և քայքայեցելոյն: Երկրորդ, վասն Հարկեցուցիչ մարդից՝ թէ մերազգեաց և թէ այլազգեաց, որք միշտ յորդորին զմեզ առ ի շինեցուցանել յայսպիսում ժամանակիս, սակա օգտից Սրբոյ Աթոռոյս: (Թ. 95բ) Երկրորդ՞, սակա երկրորդ թշնամեաց, որ կայ միշտ առ Սուրբ Աթոռս յայսմ աշխարհիս մերում և յայսմիկ ժամանակիս, զոր դուք ևս գիտէք իսկապէս:

Բայց կամադրեալ եմք, զի կամօքն Աստուծոյ և աջողմամբն նորա կիսատաշ քարամբք և կրաշաղախ ցելաբ շինեցուցանել բոլորապէս, չըջապատեցեալ զՔրիստոսալիջիւ և զԱստուածակառուցիւ զՍրբով և զմեծաւ տաճարաւս, որ յիրաւի յոյժ ամրագոյն՝ զարմանալի և զեղեցկագոյն լինելոց է՝ ի փառս Աստուծոյ, ի պատիւ Սրբոյ Աթոռոյս, ի յիշատակ և ի պարծանս Համայն ազգի մերոյ սիրելւոյ և օրհնելւոյ: Բայց և զի չորք կողմունք են, այսինքն՝ արեւելք, արեւմուտք, Հիւսիս և Հարաւ, իւրաքանչիւր կողմունքն ըստ չափոյ ԲՃ (200) դազից լինելոց է, որ է ԳՃ(300) Հալարի⁷, ըստ այսմ Հաշուի բովանդակին չափք չորից կողմանցն և լինին ԸՃ (800)

⁶ Պետք է լինելը՝ երրորդ:

⁷ Հալարի գազը համասար էր 0.677 մետր:

գազք, որ է ԱՌԲՃ (1200) Հալարի, յորոց իւրաքանչիւր գազ ըստ երկուց քարանց լինելոց է, որոյ ջամն լինի ԱՌՁՃ (1600) քար ուղղագիծ չարադրութեամբք՝ այսք որմոց մէկ երեսի քարինքն: ԱՌՁՃ (1600) ևս միւս երեսի քարինքն, որոց ջամն լինի ԳՌԲՃ (3200) քար: Զատն ի քարանցն՝ բոլորակի բրգացն, որք լինելոց են վեցտասանք (16) բուրգք, սոցա իւրաքանչիւրոց բոլորակի արտաքին երեսն լինելոց է ԺՁ (16) գազ և ներքին երեսն՝ Ը (8) գազ, որոց ջամն լինի ԻԴ (24) գազ, որոց մէկ գազն՝ Բ (2) քարիւք, ջամն լինին քարանց ԽԸ (48) քարինք: Որով յայտ է, զի Ժ և Զ (16) բրգաց բոլորակաց ներսին և արտաքին երեսաց քարանց բովանդակից ջամքն լինին էՃԿԸ (768) քարինք: Զստաւ ևս գնեմք ի վերոյն ուղղաչարադրած որմոց ԳՌԲՃ (3200) քարանցն, լինին երկուց ջամն ԳՌԹՃԿԸ (3968) քարինք: Այս մէկ առաջին կարգ, որ դնի ի վերայ խորափոր Հիմանն, որ Հանեցեալ է յերես գետնոյն: Եւ այսպէս Ի (20) կարգ պարտի բարձրանալ պարիսպն չըջապատ:

Ուրեմն Ի (20) կարգ երկու երեսով քարանց բովանդակից ջամն կանէ եօթանուս Հազար ԳՃԿ (70360) քար:

Եւ արդ, այսքանեօք քարամբք կիսատաշիւք չըջապատ պարիսպն արտաքին Սրբոյ Աթոռոյս յերեսէ գետնոյ կառուցեալ կանգնին, բայց ի յորձաքարանցն մեծամեծաց, որք ի խորագոյն փոսս Հիմանցն գնին և թէ որքանք և նոքա լինիցին՝ ոչ իմանին: Որոյ պատի լայնութիւնն է (5) Հալարի գազ և բարձրութիւնն՝ ԺԲ (12) Հալարի գազ, որպէս և արեւմտեան կողմն անցելուս ամի շինեցաք, ողորմութեամբն Աստուծոյ և կատարեցաք և զայլս կողմունսն ևս ահա Աստուծով շինեմք յուսով տրոց օրհնեալ ազգիս մերոյ:

Արդ, այս պարսպաշէն վարպետաց և Հասարակ մշակաց քարանց, կրից և այլոց նիւթից պիտանեացն, ուտելեաց և ըմպելեաց խարճն Հէսար արարեալ եղաք ի վերայ քարանց, աժան Հէսարով, իբր թէ՛ մէկ քարն ԱՌ (1000), որ է ՀՌԳՃԿ (70360) քար, որոց զբամից ջամն լինի եօթն Հազար երեսուն և վեց թուաման աճէմի փող, որ կանէ մէկ Հարիւր Հիւզ Հազար ԵՃԽ (105540) զուռուչ սաղ օսմանցի դրամ: Որ է երկու Հարիւր Ժ և Ա (211) քսակ և Խ (40) զուռուչ փող: Այս Հէսարս ըստ մեծամեծաց իրաց և նիւթոցն եղև, իսկ ըստ մանրամասնաբար իրաց և նիւթոց, յիրաւի, քան զվերոյ ասացեալ դրամզ առաւել խարճք լինին: Կարէք խոհմութեամբ մտածել, թէ որքան լինի և ուստի, զի պարսպաշինութիւնս այս ոչ է փոքր գործ, այլ

մեծագոյն և բազմածախ և յոյովաշխատ. ևս առաւել՝ յայսպիսի ժամանակիս և յայսպիսուոջ երկրում, յորում յոյժ պակասէն ամենայն պէտք և կարիք այս գործոյս, և մանաւանդ՝ մարդիկը մշակք, որք քան զամենայն հարկաւոր պէտք են այսմ գործոյս ծանրագունի, և մեք յայլ երկրէ բերեմք զքարահատ վարպետս և զմշակս նոյնպէս և զայլս նիւթս, զոր դուք ևս կարէք գիտել իմաստութեամբք ձերովք:

Արդ, սիրելիք մեր և հարազատ որդիք Սրբոյ Աթոռոյս, ի վերոյ ծանուցաք Աստուածախրացոյ զնեղութիւնս մեր և զկարի աղքատութիւնս Սրբոյ Աթոռոյս, որ արդարև ճշմարիտ է: Բայց աստ զեկուցանեմք ձեզ, թէ զայսպիսուոյ բազմածախ գործոյ բուռն հարաք առ ի կատարել: Ընդ այս մի մեզադէք զմեզ, քանզի, եթէ պատճառելով զաղքատութիւնս մեր, թոյլ տամք, յայնժամ վերոասացեալ երեք պատճառքն հարկեցուցիչք և մանաւանդ խիղճ մտաց մերոց ոչ թողուն, ասելով թէ, եթէ թոյլ տաս և ոչ փութով շինել տաս, յայնժամ սակաւ սակաւ իսպառ քակի և աւերի և լինի մեծ մեղք: Վասնորոյ հարկեն և յորդորեն զմեզ ի առնել: Վասնորոյ և մեք, ի բաց զնելով զաղքատութիւնս մեր, ապաւինեալ յողորմած և ի բարեկամս Աստուած և յուսացաք ի տուրս և յողորմութիւնս սիրելի և օրհնելի ազգիդ մերոյ ամենայնի և անձնամուրի եղաք յայս անձնատանջ և ընչածախ, բայց Աթոռաշահ հասարակաօգուտ և հոգեւորախ գործս մեծ:

Ուստի ահա զայս օրհնութեան կոնդակս յատկապէս գրեալ, վասն իմտատիլի և քեօմէկի և օգնութեան յղեցաք ձեռամբ սիրելի և հոգևոր որդւոյ մերոյ, հարազատ և հաւատարիմ զաւակիդ Սրբոյ Աթոռոյս և ծայրագոյն նուիրակիդ ձերոյ (Քլն) Աստուածիմաստ վարդապետիդ, որ եկեալ այդք, զամենայն որպիսութիւնս մեր յայտնեցէ ձեզ: Յաղագս սորայ ահա պատուիրելով պատուիրեմք հարազատ որդւոցդ մերոց, զի ի լսելդ ձեր զայսոսիկ, պարտիք ամենեքեան ուրախանալ և շարժիլ ի դութ և ի սէր որդիական վասն Հոգևորի և բազմերախտի ծնողիս ձերոյ Սրբոյ Աթոռոյս և առատութեամբ և յօժար կամօք տալ զտուրս և զողորմութիւնս ձեր ամենաքեան, արք և կանայք, հարուստք և աղքատք, մեծամեծ և փոքունք, զի ամենեքեանքդ մասնակիցք լինիցիք այսմ յիշատակի մեծի և Հոգևորի, այսինքն՝ շինութեանն շրջապատ պարսպի Սրբոյ Աթոռոյս նորոյս Սիօնի և նորոյս Երուսաղէմի: Որոյ սակս աղօթել ևս պարտիք ասելով, բարի արատէր կամօք քովք Սիօնի նորոյս, զի շինեսցին պարիսպքն նորս և կատարեսցին յաջողմամբք քովք: Եւ այսպէս առատ տրօք ընչից և աղօթիւք բա-

նից՝ օժանդակք և օգնականք լերուք մեզ, զի նոքօք շինեցուցեալ աւարտեսցուք դսս ի փառս Աստուծոյ ի պարծանս և ի յիշատակ մեծ բոլորի ազգիդ մերոյ օրհնեցելոյ և սիրեցելոյ: Կրկին պատուիրեմք հարազատ որդւոցդ սրբոյ Աթոռոյս և ի յամրութիւն միածնաէջ և սրբոյ Տեղւոյս և լուսակերտ Տաճարիս և ի սմա բնակչացն, (96ա) զի ըստ իւրաքանչիւր կարեաց ձերոց, ոմանք ի ձէնջ զխարճս ԱՌ (1000) քարանց տացեն, և ոմանք զխարճս միոյ քարի տացեն և ոմանք ի մէջ հազարաց և ի մէջ միոյ քարանցն եղեալ թուացն որքան կարասցեն զխարճս այնքան քարանցն տացեն: ...Եւ տուօղին խարճից քարանց, թէ միոյ և թէ բազմաց, զանունս իւրեանց ի թղթոջ գրեալ տացեն նուիրակիդ մերոյ, զի բերցէ աստ, զի ըստ զնեալ քարանց իւրեանց զանունս նոցա զրեցուսցուք ի վերայ քարանց ոմանց և դիցուք ի յորմունս պարսպին ի տեղիս տեղիս՝ ի յիշատակ նոցա ի յաւիտեան, զի զին միոյ քարին ամենայն պարազայիւքն մինչև ի տեղն զնիլն մեք վատսուն (60) փարայ հաշուեցաք էժան գնով, զի մի ծանր թուեսցի ձեզ: Գիտասջիք և զի յայսմ օրհնութեան կոնդակուսս զտուրս և զնուէրս, զորս խնդրեմք ի ձէնջ, ոչ է ի կողմանէ նուիրակական արդեանցն, զորս բնական կարգ է ի ժամանակի իւրում՝ յերեք տարին միանգամ տալ, այլ զայս տուրք և նուէրք, որպէս թէ պատահմամբ ի կողմանէ շինութեան շրջապատ պարսպի մեծի Սրբոյ Աթոռոյս խնդրեմք ի ձէնջ յատկապէս: Ուրեմն պարտիք տալ անխնայ և առատապէս և զմիմեանս յորդորելով...

ՄՄ, ձեռ. 2911, թ. 95ա-96ա

9

1779 (?) - ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ ՀԱՂԲԱՍԻ ՎԱՆՔԻ ԹԵՄԻ ՎԵՐԱՔԵՐԾԱԼ

Ի ժամանակս թագաւորացն Յունաց Միքայէլի, Վրաց Բագրատունեան Բագրատին և որդւոյ նորին Գէւորգեայ, և Հայոց Գագկայ և որդւոյ նորին Սմբատայ և որդւոյ Աշոտեան Բագրատունւոյ և Աղուանից Կիւլիկէի և որդւոյ նորին Ռոորիօսի և Ներսէսի, որ միաբանութեամբ և սիրով պատրաստեցան երթալ ի Պարս՝ ի սպաս Մէլիք շահ մեծ թագաւորին⁸, զի թագա-

⁸ Մէլիք-շահ - 1072-1092 թթ.

ւորաց թագաւորն Մէլիք շահ, կամեցաւ խաղաղութիւն և սէր արկանել ընդ քրիստոնէից, վասն որոյ առաքեաց զղեհպան զմին ի Հաւատարիմ ծառայից իւրոց, որոյ անուն էր Արդուլ, որ եկն հրաւիրակ թագաւորացն քրիստոնէից, այսինքն՝ Յունաց, Հայոց, Վրաց և Աղուանից, առ ի գնալ ի Դուռն մեծ թագաւորին Պարսից, բայց թագաւորն Յունաց ոչ կամեցաւ գնալ ի տեսութիւն մեծ թագաւորին, վասնորոյ թագաւորքն Վրաց Գէւորք, Հայոց՝ Գագիկ և Աղուանից՝ Կիւրիկէ ժողովեցան առ Բագրատ և սիրով միաբանեցան, զի գնացեան ի Պարս առ մեծ թագաւորն Մէլիք շահ, որ և այնու միաբանութեամբն եկին ի դուռն սրբոյ և մեծի վանիցն Հաղբատու ի աղաչել զԱստուած, և զսուրբ Նշանն Տէրունական թերևս օգնեսցէ և յաջողեսցէ զճանապարհս նոցին մաղթանօք արքեպիսկոպոսին Հաղբատայ և խոստացան արեամբ ներկեալ Սուրբ Նշանին Քրիստոսի խոստմունս և ընծայս մեծամեծս, զի եթէ խաղաղութեամբ վերադարձցեն ի Պարսից երկրէն, մեծ պատիւս տացեն սրբոյ վանիցն Հաղբատայ և մինչ գնացին յաջողութեամբ Տնառն և Սրբոյ Նշանին, թագաւորն Պարսից ի տեսանելն զթագաւորսն քրիստոնէից մեծաւ պատուով և // սիրով ընկալաւ զնոսա և առննթեր իւր պահեաց և շնորհեաց բազում պարգևս և զթուղթս ազատութեան, և վերջապէս այսպիսի փառաւոր պատուով վերադարձոյց զնոսա ի բնակութիւնս իւրեանց: Եւ նորա եկեալ յաջողութեամբ և մեծաւ ուրախութեամբ ի յերկիրս իւրեանց ժողովեցան միաբանութեամբ և եկին ի դուռն սրբոյ վանիցն Հաղբատու՝ առ ի կատար Հասուցանել զխոստմունս իւրեանց: Անդ գտանեցան յայնմ ժամու և երկու կաթողիկոսքն Հայոց Բարսեղ և Աղուանից Ստեփաննոս, որք եկեալ էին ի թաղումն Հանգուցեալ արքեպիսկոպոսին Հաղբատայ, յետոյ լուեալ էին Բագրատ, Ներսէս և մեծն Յովհաննէս ելեալ էին ընդ առաջ և գնացեալ յուխտ ի Հաղբատ և ընտրեցին անդ քահանայոմն ի յառաջադրութեան տանն Հաղբատու, Գագիկ արքայի սուրբ և փիլիսոփայ խաղաղ և յամենայն առաքինութեամբ զարդարեալ Բարսեղ անուն և հրամանաւ թագաւորաց երկու կաթողիկոսքն ձեռնադրեցին զքահանայն ի յառաջնորդութիւն Սրբոյ վանիցն Հաղբատու:

Եւ այս երկու կաթողիկոսքն ընծայեցին յատուկ իւրեանց վիճակիցն բազում վիճակս ի ծառայութիւն մեծի վանիցն Հաղբատայ հրամանաւ և կամակցութեամբ բոլոր արքայիցն և մեծամեծ իշխանացն Հայոց և Աղուանից: Բարսեղ կաթողիկոսին վիճակիցն Այստեանցն, Տաշիրն և ամրոցն Լօսի իւրեան բոլոր թէմիւն, Բաղանց տաղտն իւրեան բոլոր թէմիւն, Խօրնուտա-

կոտն իւրեան թէմիւն, Հայուենոյ և Մանկունոյ տախտն՝ իւրեան թէմիւն, Օձնու տախտն՝ իւրեան թէմիւն, Թիֆլիզ քաղաքն, Վերն Գորի,

Սամշվիլդէն, Դոննիսն և Բուղամու ձորն իւրեանց թէմիւն, Վերի Յիսելվան, Թամարաշէնն⁹, Զօրնիսն, Չիխօրն, Սամձուէրն և Մձովրէթն՝ իւրեանց թէմիւն, Բրինձն, Նարաստէվն և այլն Սուրամն զօգիցին ատէնն դեղումն, Կախէթն, Շաքին, Վարխուանն, Զուրբութի ծայրն, բոլոր Սումխէթայ տանն Նախէգուռն, Ճապալայն, Տալաւէրն, զոր ինչ վրացի արքայի վիճակումն հայք գտանին Գրիգոր Լուսաւորէջու դասնութեամբն՝ բոլորն Հաղբատայ ծառայող լինին, Վրաց արքայից Բագրատայ և Գէւորգեայ նուիրեալն այս է Ախալքալաքն, Սամցխէն, Թմօզվին¹⁰, Սաջալախօն, Զաւպէն, Իմէրէթ, զԱրգանուճն, Բուլբուլեանն, Քօրուլեանն, Սվանտայէն, Թատումն, Աձողվէրն և այլ նորին վիճակքն մեծի Յովհաննու հրամանաւ և մեր հայոց ազգքս ետուք Սրբոյ Նշանին Հաղբատայ վիճակն Աղուանից Տայօղն, Գօրականն, Զորագեղն, Կայեանն, Կայէձօնն, Աղէստաֆէն, Խօջաբագարն, Մահկանն, Գաբէն, Շաքօրն, Շաքէն. և մերս թեմից Գաւազէնն, Բարամն՝ իւրեան թէմիւն, Մանասն՝ իւրեան թէմիւն, մինչև ի Վօղամած իւրեան շրջակայ վիւօրէիւքն, շէնիւքն և անշէնիւքն, այսոքիկք բոլոր Վրաց թագաւորին, Հայոց թագաւորին և Աղուանից թագաւորին նուիրեալն է: Երդմամբ և դաշնադրութեամբ խոստացաք և կատարեցաք այսու պայմանաւ՝ զի զոր ինչ Հայոց և Աղուանից վիճակումն Վրաց ազգք գտանիցին՝ Մծիխթայու ծառայեսցեն և զորս ի Վրաց վիճակումն Հայոց ազգք գտանին՝ սրբոյ վանիցն Հաղբատայ ծառայող լինիցին, հրամանաւ և կամօք Աստուծոյ օրհնեալ մեծ պսակաւոր թագաւորին Վրաց, Բագրատայ և որդւոյ նորին Գէւորգեայ Բագրատունւոյ և Հայոց թագաւորին Գագիկայ և Աղուանիցն թագաւորին Կիւրիկէ, Աստուածասէր և բարեպաշտօն անշարժ պահօղբոյ անսուտ հրամանսն մեծ թագաւորացն և կաթողիկոսացն օրհնեալ լիջիւք ի սրբոյ երրորդութենէն և ամենայն սրբոց նորա. աստ երկար ամօք և խաղաղութեամբ և ի Հանդերձնն զուարթիւրես և չարայաղթք լինիջիւք, և արքայութեանն Աստուծոյ արժանի մեծաւ պատուով և յաղթօղբ թշնամեացն խաչին Քրիստոսի, որք զալոց են ի վերայ քրիստոնէից և յաւուրն գատաստանի յաջակողմեան դատուն արժանի լինիջիւք տեսութեան Քրիստոսի և լսելոյ զբաղջր բարբառն, որ ասէ՝ եկայք օրհնեալք Հօր իմոյ, ժա-

⁹ Տպագրութեան մեջ՝ Թամարէշէնն:

¹⁰ Տպագրութեան մեջ՝ ի մօզվին:

ուանգեցէք զպատրաստեալն ձեզ զարքայութիւնն ի սկզբանէ աշխարհի: Եւ ով ոք սորին եղծմանն ձեռնամուխ լիցի, և այլոց թագաւորաց նուիրեալ յիշատակն խափանել ջանասցէ՝ կամ թագաւոր, կամ կաթողիկոս, կամ եպիսկոպոս, կամ քահանայ և կամ մեծ և փոքր իշխանք, արք և կանայք և այսց վանօրէջից ժողովուրդն Հանցէ, զորս մեք նուիրեալ եմք, և զխոստմունս մեր կատարել Հրամանաւ մերով թագաւորքս և կաթողիկոսքս սորին եղծանողն անիծեալ լիցի ի յԱստուծոյ և զպատիժս դատաստանի Աբեղօնի, Կայէնի, Յուդայի և խաչահանուացն առցէ և զտանջանս դժոխոցն ժառանգեացէ յաւիտեանս յաւիտենից, ամէն: Նա ևս ի յետագայից մերոց, թէ թագաւոր, թէ կաթողիկոս և թէ պատրիարզ գտանիցին զայս մերս նուիրեալ անջնջելի յիշատակն եղծանել, իլիկ, խափանել չունին կարողութիւն, վասնզի ետուք անշարժ և անխափան սրբոյ վանիցն Հաղբատայ: Նա ևս, եթէ Հայոց կամ Աղուանից կաթողիկոս կամ պատրիարզ ոչ գտանիցին, Հրամանատուն լինելոց է սրբոյ վանիցն եղեալ Հաղբատայ արքեպիսկոպոսն, իսկ եթէ նա ևս սրտացաւորէն ոչ աշխատիցէ՝ զնուիրեալ յիշատակն մեր ի սուրբ վանիցն Հանեալ ի կորուստ վատնիցէ, ինքն ևս Հանցի ի եպիսկոպոսէն իւրմէ և, զոր ինչ նզով ի վերն գրեալ եմք, նա ևս ժառանգեացէ: Նմանապէս Հաստատ պահօղքն և կատարողքն սորին եղիցին օրհնեալք յԱստուծոյ և զուարճացի Հոգի նոցին ի յուրախութիւնս արքայութեան յերկնից ի յարութեան յաւուրն յետուծմ. և ով ոք լիցին սիրօղք սրբոյ երրորդութեանն և Քրիստոսական Հաւատոյն այս Հրամանս թագաւորական Հաստատ և անշարժ պահեցն, որ և շնորհք տեառն Աստուծոյ և ամենայն սրբոց նորա վայելեսցն ուրախութեամբ յաւիտեանս յաւիտենից, ամէն:

Գրեցաւ ի թուին Հայոց Հինգ Հարիւր և երկու տասանին:

Մեք, օծեալ Թամրազ արքայի որդի արքայ Վրաց, Կախից, Ղազարու, Բոնչալուու և Շամշաղնու տիրօղ, կալնօղ և Հրամայօղ Երկրորդ Հերակլ, քննեցաք զՀախբատայ ժողովուրդն և զՀին գուՂարներն և ստոյգն իմացաք, որ Քարթլու, Կախէթու և Իմէրէթու բնակիչ բրիստոնեայքն Հախբատայ ժողովուրդն են լեալ, որովհետև ի յառաջին թագաւորացն նուիրեալ էր Քարթլու, Կախէթու և Իմէրէթու Հայոց ժողովուրդն ի ծառայութիւն Հաղբատու, թէ իշխանք, թէ ազնիւորդիք, թէ ոսմիկք, վասն որոյ մեք ևս այսպէս Հաստատեցաք դուշարի օրինակս զայս, զի եթէ ի Քարթլ և կամ ի Կախէթ Հայոց դաւանութեամբն եկամուտ ժողովուրդք գտանիցին, նոքա ևս

Հաղբատայ ծառայօղ են լինելոց և բաց ի նմանէ ոչ ոք կարէ ձեռնամուխ լինել, զի ի մէջ ամենայն քրիստոնէից այսպիսի սահմանադրութիւնս կայ: Մայիսի 4-ին, ի 1779 թրւին:

«Լուամայ», 1898, գիրք Ա, էջ 261-264: Վրացերէն թարգմանությունը տես Վրաստանի Հանրապետութեան Գիտությունների Ակադեմիա, ակադ. Կ. Կեկելիձեի անվ. Ձեռագրերի ինստիտուտ, Արխիվային բաժին, վավ. Հժ-14634. Հաստատել են նաև Դարեջան թագուհին և Գեորգի Արքայազնը:

10

1780 թ. մայիսի 22 – ՍԻՄԵՈՆ ԵՐԵՒԱՆՑԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ
ՋՄՅՈՒՌՆԵՒԱՅԻ ԹԵՄԻՆ
ՀԵՐԱԿԼ 2-ԴԻ 1779 թ. ԱՐՇԱՎԱՆՔԻ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ ՏԷՐ ՍԻՄԷՕՆ ՈՐՈՅ ՇԵՈՐՀԻՆԵ
ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԵՒ ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԿ ԱՄԵՆԱՅԵ ՀԱՅՈՑ
ԱՍՏՈՒԱԾԱՅԵՆՈՅ ԵՒ ԱՌԱՔԵԼԱԿԱՆԻ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՔՐԻՍՏՈՍԻ, ՆԱԵՒ ԼՈՒՍԱԿԵՐՏԻ ՔՐԻՍՏՈՍԱԻՋԻ ԵՒ ՇԵՈՐՀԱՏՈՒԻ ՄԵՍԻ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱՄԵՆ

Յորմէ ժամանեցի թուղթ սիրոյ, ողջունի և օրհնութեան և նամակ պահպանութեան, շնորհք առաքելական, և Աստուածային բազմապատիկ օրհնութիւնն և նախախնամական զթութիւնն, ի վերայ սիրելի և Հոգևոր որդւոց մերոց՝ Հարազատ և լուսածնունդ գաւակացդ և տերունի ժողովրդոցը Սրբոյ Աթոռոյս, Հայկասեր Լուսաւորչակրօն և միաբնադաւան Հաւատացելոց ի Քրիստոս, որք գետեղեալ կայք ի Տէրունի վիճակս մեր ի յԱստուածախնամ մայրաքաղաքը Զմիւռին և ի շրջակայ վիճակս դորա, սիրելի և Հոգևոր որդւոց մերոյ և շնորհասուն գաւակիդ Սրբոյ Աթոռոյս և ծայրագոյն նուիրակիդ և Առաջնորդիդ դոյնոյ օրհնեցելոյ մայրաքաղաքիդ Փիլիպպոս Աստուածիմաստ վարդապետիդ, այլև Համայնից սրբասէր քահանայից, ուսումնասէր սարկաւազաց, պերճապատիւ իշխանաց, փառազարդ Դօլվաթաւորաց, Հարազատ և Հաւատարիմ գանձապետաց և եկեղեցական իշխանաց, Հանճարեղ արուեստապետաց, վայելչագործ արհեստաւոր-

րաց, իմաստնախոճ վաճառականաց, արդարավաստակ երկրազործաց և այլ առհասարակ միահամուռ ամենայն ժողովրդականաց խմբից, մեծամեծաց և փոքրից, արանց և կանանց, ծերոց և տղայոց, երիտասարդաց և կուսից խնդալ ի Տէր յարազուարճ ցնծութեամբ և ուրախութեամբ: Ամէն:

Ենորհք ընդ Ձեզ և երկնաւոր խաղաղութիւն յԱստուծոյ Հօրէ ամենակալէ և ի Տեառնէ մերմէ Յիսուսէ Բրիստոսէ, և ի սրբոյ Հոգւոյն կենարարէ իջեալ Հանգիցէ ի վերայ Ձեր, եկեացէ և բնակեցի առ Ձեզ, իբրև զյորճանս գետոց: և որպէս զվտակս աղբերաց, յորդահոս զլիմամբ, և առատապէս ծաւալմամբ: Ընդ որոյ Հովանաւորութեամբն զօրասջիբ և պահպանեալիբ միշտ: Ամէն:

Եւ ընդ սիրոյ և օրհնութեան զրոյս ծանուցումն լիցի սիրելեացդ մերոց և Հարազատ որդւոցդ և տէրունի ժողովրդոցդ Սրբոյ Աթոռոյս Էջմիածնի: Զի զիրք սուրբք զաշխարհս ծովու նմանեցուցանեն, որ և յիրաւի և ճշմարիտ իսկ է: Զի որպէս ծովն ոչ կարէ միշտ ի միակերպ կացութեան և ի նոյնութեան մնալ, նոյնպէս և աշխարհս իւրովք բնակչօքն: Բայց այս Հասարակ նմանութիւնս առ յայնպիսի աշխարհ և երկիր յարմարի, որք զՀանրաբախիսոյ թագաւորութիւնս ունին: Քանզի որպէս ծովն մինչ ոչ Հարկի ի բուռն բաղխմանէ Հողմոյ՝ ոչ վրդովի և ոչ խռովի, նոյնպէս և Հանրաբախիսոյ և ըստ կանօնի թագաւորք մինչ ոչ Հարկին ի զօրեղ պատճառաց և ի Հարկաւոր նիւթոց, ոչ վրդովին և ոչ զխռովութիւն ինչ յարուցանեն: Ուստի, այսպիսիքս որպէս ի կռուիլն և ի խռովիլն՝ ունին զզօրեղ պատճառս և զհարկաւոր նիւթս որովք վրդովին, նոյնպէս և ի Հաշտիլն ունին զհաստատուն դաշնադրութիւնս և զկանօնս՝ որովք մնան ի խաղաղութեան: Իսկ առ յայնպիսի աշխարհ և երկիր, որք ոչ ունին զհանրաբախիսոյ թագաւորս, ոչ յարմարի այս նմանութիւն, քանզի այնպիսեաց երկրաց և կալուածոց բնակիչքն՝ ոչ ի կռուիլն և ոչ ի վրդովիլն ունին զզօրեղ պատճառս և զհարկաւոր նիւթս և ոչ ի Հաշտիլն և ի խաղաղիլն՝ զհաստատուն կանօնս և զդաշնադրութիւնս: Քանզի այսպիսեաց կալուածոց բնակիչքն ամենեքեան լինին անկանօնք և անզուխք, ամենեքեան լինին չափազանցք և ի վեր ձկտօղք, վասն այսորիկ և ոչ պակասին յայսպիսեաց ի զուր վրդովմունք և անպատճառ կռիւք: Քանզի, որք զօրեղքն են և կարողք կերպիւ իմն, կամին զանգօրսն և զտկարսն իսպառ կլանել և կամ մերկիկ չափահելով զկանօնս Հասարակաշինութեան: Իսկ որք անգօրքն են և տկարք, ոչ կամին Հնազանդիկ և ընդ բռամբ ուրուք լինիլ, չճանաչելով զչափ անձին: Վասն

Գրեցեալ է անհետ զայս և անհետ զայս արեւմտեալ

Եւ ընդ սիրոյ և օրհնութեան զրոյս ծանուցումն լիցի սիրելեացդ մերոց և Հարազատ որդւոցդ և տէրունի ժողովրդոցդ Սրբոյ Աթոռոյս Էջմիածնի: Ամէն:

Եւ ընդ սիրոյ և օրհնութեան զրոյս ծանուցումն լիցի սիրելեացդ մերոց և Հարազատ որդւոցդ և տէրունի ժողովրդոցդ Սրբոյ Աթոռոյս Էջմիածնի: Ամէն:

Եւ ընդ սիրոյ և օրհնութեան զրոյս ծանուցումն լիցի սիրելեացդ մերոց և Հարազատ որդւոցդ և տէրունի ժողովրդոցդ Սրբոյ Աթոռոյս Էջմիածնի: Ամէն:



մերուժ, վերստին արթնացաւ նոյն խռովութիւնն յոչինչ պատճառաց, որպէս ի վերջ ասացաք: Որ և թէպէտ կամեցաւ գալ, սակայն արգելեցաւ պատճառաւ իւրիք: Իսկ ի մտանելն մեր ՌՄԻԸ (1779) թիւն, ի յամիսն մարտի, սկսաւ յաճախիլ ձայնն և տարածիլ երկիւղն զպլստեան նորին ի սիրտս երկրականացս: Ուստի և իշխողն երկրիս մերուժ ի մարտ ամսոյն սկսաւ զպատրաստութիւն ամրոցին տեսանել և զերկիրն որքան Հնար է, դատարկել՝ զբնակիչսն զորս ի Ղարս, ի Բայազետ և յայլ յերկիրս փախուցանել աղիւիւքն իւրեանց, և զորս ի յամրոցն իւր ժողովել: Այսպէս եկաց երկիրս այս երերեալ և երկիւղափակ ի մարտէն մինչև ի յօգոտոսի վերջն, յամենայնի ամայացեալ, որպէս թէ՛ բաց ի յամրոցէն և յԱթոռոյս: Ապա ի սեպտեմբերի Հինգն եկողն եմուտ յերկիրս մեր մեծաւ պատրաստութեամբ և ծանու զօրօք, որք էին աւելի, քան զքսան Հազարս. Լէզկի, Ջէրքէզ, Օս, Թուշ, Բաշաշուխ, Տաճիկ և Վրացի. այլատեսակք և այլալեզուք, և որպէս թէ՛ ոչ մարդիկք, այլ՝ մարդակերք: Իսկ և մերոցն ճարահատեալ յայս անգամ ևս առաքեցին զմեզ ընդ յառաջ, զի թերևս զոցուք զհնարն խաղաղութեան: Որև գնացաք իսկ. և ի սեպտեմբերի Ժ (10) պատահեցաք նմա ի յՕշական գեօղն մեր, ուր նստաւ յաւուրս վեց ընդ մեզ: Եւ յետ բազմակերպ խօսակցութեանց, տեսաք, զի ոչ աղաչանաց լսէ, և ոչ խաղաղութեան տեղի տայ: Իսկ պահանջմունքն օն անդր քան զչափն և պատրաստութիւնն՝ որպէս թէ՛ զամրոցն առնլոց է և իսպառ ընդ ձեռամբ ածելոց: Ապա և մեք գրեցաք երկիցս յամրոցն իշխողին մերոյ՝ ծանուցանելով զամենայն պարագայսն և զկերպ գալստեանն և զպահանջմանն: Եւ նա ևս ոչ մեր գրեցելոցն անսաց և ոչ սորին պահանջմանցն տեղի ետ: Եւ այսպէս երկու կողմունքն ևս մնացին յամառութեան: Եւ ապա ի Սուրբ Խաչի Կիւրակէին ելեալ ի յՕշականու՝ եկեալ նստաւ ի Փարաքար գեօղն, որ է ի մէջ Սրբոյ Աթոռոյս և բերդին Երևանու, ուր և նստաւ յաւուրս յիսուն: Եւ յայսքան միջոցում մեք ևս ընդ նմա ի մէջ բանակին տատանէաք: Իբրև ետես թէ՛ յամրոցէն նշան Հնազանդութեան և կամ ըստ պահանջմանն տալոյ կամք ոչ գոյ, և ամրոցն ևս ոչ առնանի, զի ամուր է և անառիկ, ապա և սա սկսաւ այնուհետև ցրուել զայլանդակ զօրս իւր ի բոլոր երկիրս Երևանու, որք և քակեցին և աւերեցին զամենայն շէնս, զմարդ դտեալ գերեցին, զանասունս և զայս կահս և զինչս, և զամբարս Հատից և զղարանս պահեստից զամենայն Հանեալ աւարեցին և առին, և զփախստեայսն երկրիս ի Ղարս, ի Բայազիդ և յայս տեղիս դարանեալս զամենայն ընդ ձեռամբ ածեալ բե-

րին առ յինքեանս, և յետոյ զամենայն զկայունս և զգնայունս, և զի ձեռն բերեալ փախստեայսն՝ վարեցին ի յիւրեանց երկիր, և ապա զմնացեալ շէնսն և զգեօղսն միահամուռ Հրոյ ճարակ տուեալ՝ ինքեանք ելեալ գնացին ի նոյեմբերի Գ (3):

Եւ մնացաք յերկրոջս՝ Աթոռս իւրովին, մեր էջմիածնի և յՕշականու գեօղականքն իւրայնովքն, որք յԱթոռոջս գոլով՝ ոչ կարացին տանիլ: Նաև այնք, որք ի բերդն էին ամրացեալք: Եւ յայլ ուրեք ի յերկրոջս բաց ի քարանց, զոչ ինչ թողին: Երկրիս որպէսն այսպէս: Իսկ գոլով մեր այսքան միջոցս ի մէջ բանակին, տեսանելով զայս ամենայն, և մարմնով ևս տկար, արդեօք զի՞նչ իցեմք կրեալ յայնքան բարբարոս ազգաց և զկեանս մեր ո՞րպէս իցեմք անցուցեալ, ոչ կարեմք ի զիր արկանել, յիրաւի մահու ցանկայաք և ոչ Հասանէաք: Եւ Սուրբ Աթոռս թէ՛ որքան վնասեցաւ և որքան նեղութիւնս և տառապանս կրեաց ի բարբարոս զօրաց, Հանդերձ միաբանիւք, խոհեմութեամբ է իմանալի, զի յերկրոջս այլ շէն ոչ գոյր, բաց ի յԱթոռոյս. ուստի այնքան զօրքն, որք անխափան միշտ յԱթոռս լցեալք էին՝ ի յուտիլ, ի յըմպել, և զայլ Հարկաւոր պէտս լցուցանել:

Բաց ի յասպիսեաց ներքուստ վնասուց զՀնդեսին մեծամեծ այգիսն մեր Հիմնայատակ արարին, և զԺ (10) մլքատու գեօղորայսն մեր ամայացուցին, թողումք և զայսն, որք չեն գրելիք: Եւ սոքա այսպէս արարեալ գնացին: Իսկ յետ այտորիկ մինչ կիին բերդարգելքն և տեսին զորպէսն գեօղից և տանց իւրեանց և զաւարիլն ամենայն կահից և ընչից իւրեանց, և զինքեանս մերկ և զրկեալք յամենայնէ, ոչ տուև ունին նստելոյ, ոչ Հաց ունին ուտելոյ, ոչ անասուն ունին լծելոյ և վարելոյ, և ոչ սերմն՝ ցանելոյ, վասնորոյ և նոքա ի մէջ սկսան խնդրել զամենայն պիտոյսն, և մեք ևս ետուք և տամք ևս, թէ՛ կամաւ, և թէ՛ ակամայ, թէ՛ սիրով և թէ՛ ի Հարկէ:

Արդ, յանցեալ տարւոյ մարտ ամսոյն մինչև ցայժմ այսպէս թշուառութեամբ անցուցաք զկեանս մեր, և գրեթէ զամենայն Հոգալիս և զյատուկ գործս մեր ամենեկին ի բաց թողաք և զգիր և զգրիչ մեր խափան արարաք որպէս յուսահատեալք ի կենաց: Եւ այժմ ևս մինչ գրեմ զայս, կամք ի մէջ մեծի վարանման և ցաւոց վասն երկուց զլիսաւոր պատճառաց: Նախ, զի երկրիս մնացորդքն ամենեքեան, թէ՛ Հայք և թէ՛ Տաճիկք, գոլով աղքատք և մերկացեալք յամենայնի, ի վերայ մեր կուտեալք ի մէջ խնդրեն և առնուն զամենայն պիտոյսն, չհաւատալով, զի և մեք դատարկացաք յամենայնէ: Դատարկացաք զոր ասեմ, մի Հարևանցի և ըստ սովորութեան այլոց կար-

ծիցէք (զոր չհմք ի գործ ածեալ մեք մինչև ցայսօր, շնորհօքն Աստուծոյ), ալ զճճարիտն գրեմ, քանզի յամիսս յերկուս զծանրութիւն քսան հազար զօրացն կրեցաք՝ տալով և կերակրելով, և յետ այնորիկ զպակասութիւն միոյ երկրի լցուցաք և լնուճք դեռևս: Ուստի այնքան դատարկացաւ Սուրբ Աթոռս յամենայնէ և մանաւանդ ի յուտելեաց մարդոյ և անասնոյ, մինչ զի ի Ղարսայ և ի Բայազիտու զօգնութիւն խնդրեցաք, զորս Աստուած օրհնեցէ իւրեանց զեօղորէիւքն, զի եթէ նոքա ոչ օգնեցէին մեզ յայս նեղ ժամանակիս, շատ դժուարին լինէր Աթոռոյս բանն: Աստուած չէն պահեցէ զնոսս՝ բոլոր ազգան մերով, զի օգնեցին ցաւակցօրէն, և ևս օգնեն յամենայնի: Եւ երկրորդ ցաւն մեր է վասն ապագային, թէ արդեօք զընչ է լինելոց, յորմէ մնացորդք երկրիս որպէս թէ ի վերայ փշոց նստեալ կան, կասկածելով զվերստին զալստենէ նորին, որ հաւաստի լինելոց է՝ եթէ հաշտութիւն ոչ լինիցի: Եւ յայնժամ մեք և Աթոռս թէ որպէս եմք կելոց Աստուծոյ է յանձին, բայց ջանամք մեք և այլք դտանել զհնարն խաղաղութեան, զոր Աստուած գտցէ: Եւ այժմ ևս տակաւին եմք իրր ի կալանի երկրաւ, զի ոչ զնացօղ գոյ և ոչ եկօղ՝ վասն ամայութեան երկրիս և վտանկաւորութեան ճանապարհացն: Եթէ ի Ղարսայ և ի Բայազիտու եկօղ և զնացօղ պատահի ի մէնջ, և կամ գիրք Ժ(10) թուանկէով պարտիմք տանիլ և բերել: Ահա այս էր ստոյգն, զոր կարճաօտ գրեցի սիրելեացդ մերոց: Ուստի, ի լսելն ձեր, ի միոյ կողմանէ պարտիք տրտմիլ և ցաւիլ վասն թշուառութեան խղճալոյ երկրիս և բազմադիմի վնասակրութեանն սրբոյ Աթոռոյս՝ ծնօղիս ձերոյ, և ի միոյ կողմանէ պարտիք մխիթարիլ և փառս տալ Աստուծոյ, զի շնորհօք նորին և Սրբոյ իջման տեղոյս, և օգնականութեամբ Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ, Սուրբ Աթոռս՝ մայրս ձեր, թէպէտ ըստ մարմնաւորին կարի վնասեցաւ և դատարկացաւ յամենայնի որպէս ասացաք, սակայն ըստ հոգևորին մնաց պայծառ և անարատ յամենայնի իւրովք միաբանիւք, որպէս տապանն Նոյի ի մէջ աշխարհածուփ արէկոծութեան: Եւ բազմաց փախստէից ևս՝ թէ հայոց և թէ տաճկաց պահապան և ազատութեան պատճառ եղև, զի բաց ի բազմաց անձանց որք ընդ հովանեաւ մերով զերծան ի գերջաց, աւելի քան զերկու հարիւր ևս զգերիս դրամով ազատեցաք ի լէզկեաց, թէ զհայս և թէ զտաճիկս, ի փառս Աստուծոյ և ի պարծանս ազգիս մերոյ՝ և ի բարձրութիւն անուան Սրբոյ Աթոռոյս: Եւ այսպէս գիտացեալ զորպէսն մեր՝ լերուք ողջք և օրհնեալք և զօրացեալք ի Տէր և յանձնեցեալք ի խնամս և ի գթութիւնս Նորին և Շնորհք Սրբոյ Աթոռոյս եղիցի ընդ ձեզ յամենայն ժամ: Ամէն:

Գրեցաւ ի ՌՄԻԹ (1780) թուոյս, ի մայիսի ԻԲ (22) առ Դրան լուսածաւալ և տիեզերաբաղձ Մեծի Աթոռոյս Սրբոյ էջմիածնի:

ՄՄ, Կաթողիկոսական դիւան, թղթ. 243, վաղ. 50:

1780 թ. հուլիսի 21-ին կաթողիկոսի հիվանդության ժամանակ (մահ. հուլիսի 26) գրված և որոշ խմբագրումների ենթարկված (որով պատասխանատվության հիմնական մասը բարդվում էր Երեանի խանի վրա) Ռուսահայոց ուղղված նույնարժեք նամակը տես Դ. Ա. Эзов. Начало сношений Эчмиадзинского патриаршата с русским правительством. Приложение 2 - "Кавказский вестник" (ежемесячный научно-литературный журнал), Тифлис, 1901, № 10 (Книга XXII), с. 64-72.

11

Օգոստոսի 10 և դրբ 23 թալապ այ պարոն Կարապետ Գասպարին

Ի Թիֆլիզու թուճան հսպէս, որ Թիֆլիսուց իւր բերեալ վկայական և յորդորական գրովն, որ Մադրասիս Հայոց վերայ բերել էր, այս կողմն է. Մադրասիս Հայոց պարոնաց է ժողովեցեալ էճՎ (760) Հատ Կուճպանու սբայ ըռուփն նաղտ յինք առեց որպէս տուողաց անուճք և քանակութիւնն դրամոյ ջամ այ կեկ, որ և մապլազին չորս միակերպ սանատ արետ տարւոյս... Մատրասիս Հայոց, որ բաց կառավարիչք պարոնաց Նազար Յակոբջան աղայ Շամրինց, Սահակ Աբրահամ և Աէթ Սամեանին անուճանց, այս զաշնօվն, որ ասացեալ մապլազն անվնաս ի Թիֆլիս տանելէն, Թիֆլիսու Բունի թաղին վհին վերայ մին կարմունջ կազմին, որով և նոր շուկայք շինէ, հաստատապէս, որ անցաւորստ անվնասապէս երթևէկ առնիցեն, որ և եթէ այնպէս կատար հասուցանիցէ, յայնժամ յիշեալ դրամն ոչ լինի պարտական յետ հատուցանելոյ, և եթէ մինչև ի հինգ տարի ոչ յօրինեցէ զկարմունջն շուկայիւքն, յետ հինգ տարւոյն պարտ է էճՎ (760) ոռւփին, որ գինն լինի յիսուն և եօթն թուճան Թիֆլիզու ըռայիճ փող, Թիֆլիս յետ հատուցէ վեր ասացեալ կառավարչացն որբոց, կամ ի նոցանէ յետ, ով ոք որ կառավարիչք լինիցին, նոցա և յիշեալ սանատոց մինն բարևագրով առաքեցանք ի Թիֆլիս, առ տեառն մէլիք Աւետիք Բէհրուղիանցին, տեառն Մանուշար Գորջասպի Թուճանեանին և տեառն Գաւիթ Տէր Յօհանեանին, որ նոքին տեղեկանայցեն վասն բանին կատար լինելն և ոչ լինիլ և մեզ գրեցանն նաև յիշեալ դրամին, ծովային և ցամաքային վնասն ի վերայ մեր

յանձն առինք մինչև Թիֆլիս Հասանիլին, որպէս ի սանատոցն զրեցեալ գօյ¹²: [...]

(Թղթի վնասված լինելու պատճառով շարունակութունը բացակայում է):
ՄՄ, ձեռ. 10756, Թ. 10ա.

12

1787 (°) – Ռուզնամայ

50 Դեկտեմբերի 10 և Համիրայ 25 թալապայ

Թիֆլիս[ոյ] Նորաշէն Սուրբ Աստուածածին անուն եկեղեցւոյ քաթում վասն եկեղեցւոյս ժողովեցեալ զբամն, որ էր ԱՃԺԱ (111) 50 հուն Մազբասի սասողի աւաք տվինք Հինգ Հարիւրապետ պարոն Յօսէփ Խատին և երեք մին կերպ մուրհակ պարտուց զիր յինք առինք Դձէ (407) զիր ծովու և երկրի վնասն ի վերոյ իւր տեղէս ի Թիֆլիս տանելէ ապրանաց վերայ և ամենայն ստացուածոցն այլն օվ և ամենայն ծախն իւր վերայ, որ ամենայնիւ ամբողջ Թիֆլիս Հասնելոցն յետ 30 աւուրց՝ Դձէ (407) դանայ Մազբասի Կուսմպանու սքյ ռուփին Հնդստանայ ռուփի և կամ Ֆի մին ռուփին տասնևհինգ շայի Թիֆլիսու ռայիչ փող, որն որ իւրն յաջողակ լինի տեղն տայ նոյն եկեղեցւոյն աւաքէրէց Տէր Առաքել Շմաւօնին կամ յետ նորին ով ոք աւաքէրէց ինին տայ նոցա, այլ եթէ վնաս ինչ պատահիցէ՝ վնասն իւր բոլոր ապարանաց վերայ բաժանում լինի, Դձէ (407) ռուփու ըստինն մեզ՝ կառաւարիչք Մազբասիս որբոց Մարութ Յօսեփ և Յակոբ Յարութիւն և Աէթ Տէր Աւետիս Կոնթէն լինի, որպէս և իւր տուեցեալ մուրհակ պարտուցին զօրութիւնն, որ թեպէն զրեցի ի Ֆ[ա]րդ 21 հմբ: [Վերջ]

ՄՄ, ձեռ. 10756, Թ. 9ա

¹² 1788 թ. Մազբասի Հայերի Հավաքում են 4675 ռուփի, որից 3134 ռուփի ռուսմնարանի և տպարանի համար, պայմանով, որ եթէ տաս տարվա ընթացքում չբացվեն ուսումնարանը և տպարանը, այդ գումարը կգնա Մազբասի ուսումնարանի օգտին: Մնացած 1541 ռուփին տրվում էր տնանկների համար շինութուն կատարելու նպատակով (Վ. Բ. Բարխուդարյան, Նոր Նախիջևանի Հայկական գաղութի պատմութիւն, Եր., 1967, էջ 333-334, հղվում է՝ ՄՄ, ԿԴ 16/99):

13

1791 թ. փետրվարի 12 – ՀՈՎՍԵՓ ԱՐԴՈՒԹՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՄՈՒՐԹՈՒՋԱ ԿՈՒԼԻ ԽԱՆԻ ԴԵՍՊԱՆ ԱՂԱ ՄԱՀՄԱԴ ԲԵԿԻՆ

Յաջ

Գերապատուելի աղայ Մահմատ բեգ, իմ Հաւատարիմ բարեկամ

Ախորժ գիրն Ձեր, զոր վասն յաջողութեան անգին բարեկամին մերոյ Մուրթուզալի խանին ընկալաք և գիտացեալ զյաջողութիւն նորա ի գրոյ իւր և ի գրոյ պարոն Մկրտումին, մեր Թաղայ Դաւիթին, ի սրտէ ուրախացաք և Աստուծոյ զփառս մատուցաք:

Եւ զամենայն որպէսն մի ըստ միտջէ գրեալ որպիսաբար մտանելն նորա ի Գիլան, հտուք պայծառափայլ քնեազին, նա ևս ի սրտէ ուրախացաւ և ահա պայծառափայլ խանին գիր գրեաց, այնքան քաղցր և ախորժ և մեծ յուսով, որ չէ կարելի երկարելն, որպէս գիտեցոց ես: Գրեաց և ողորմած թագուհոյն, որ իբրև գորդի ընկալցի զՄուրթուզալի խանն և մի թողցի ի ձեռաց: Գիտացես միանգամայն, որ քնեազն մեծ շնորհ ունի առ խանն և այժմ ուրախ է ի վերայ յաջողութեան նորա և որպէս խանի կամքն է, լինելոց է բոլորովին:

Այսու գիտացիր, որ մեծամեծ էլէիք կան, ապա քոյ Մահմատին, վասն սիրոյ նորայ շատ է ընդունել և ընդ նմա միշտ շախալով խօսել, քան այլոց էլչոցն: Այժմ Մահմատն ընդ պօսպօռօջիկ Յակորին ուղեորեցի առ քեզ: Կամենաս գիրն և Յակօրն առեալ գնացես առ խանն, կամենաս Մահմատն և Յակօրն դրկես. պայծառափայլ քնեազն այս քոյ և իմ կամացն է տուեալ: Քնեազն այժմ գնաց ի Պետրպօլք և ես ևս ընդ նմա: Եթէ դու գնացես և կամ Մահմատն և Յակօրն յղեսցես, զրեսցես խանին՝ միամիտ լինիլ, որ ողորմած թագուհին մեծ շնորհ ունի ի վերայ իւր, միայն թէ շուտով քնեազի զրոյ պատասխանն գրեսցէ: Ես տեղս պատրաստ եմ ի սրտէ ծառայել: Իմ անգին բարեկամ Մուրթուզալի խանին առ այս միամիտ լերուք և ի մահմատէն իմացէք: Մահմատն ամենայն պատուոյ արժանի է, որ այնպէս շարժեցաւ, որպէս քնեազին Հաճոյ էր, քնեազի մեծ բարեկամն է: Դու ևս միամիտ լեր, որպէս դու կամիս, այնպէս է լինելոց բանն: Ես խանին ևս զրեցի, որ զքեզ զրկիցէ աստ շուտով Մահմատի հետ, յայնժամ ամենայն ինչ լինելոց է:

Գրեցի խանին. քնեազի դրան մարդիկքն, զորս բարեկամ եմ արարեալ խանին, ենարալ և կավալեր Վասիլ Ստեպանիչ Պօսպօլն, բլղաղիր և կավա-

լէր Ասրգէ Հազրիչ Լաշկարովն, պօտպօլկովնիկ և կալալեր Անդրէի Մաք- սիմիչ Եանչիկովն, պրիմէր մայօր Վասիլ Վասիլիչ Թէթէրինն, որք են քննազի դրանն և ամենայն բանն ի ձեռ սոցա է և սոքա ամենեքեան խանի և ձեր բարեկամն են, վասն այն գրեցի, որ զիտենաք և ըստ պատահմանն գրէք սոցա զհարկաւորն:

Մահմատին շատ պատուիրես և սիրես, խանին ևս գրեցի, միամիտ լի- նիս, ես վասն ձեր եմ եկեալ աստ, եթէ դու եկեսցես, աստուծով ամենայն բանն լինելոց է և եթէ գրեիր զրկես, Մահմատի ձեռքն լինի: Մեր Յակօբն քոյ ձեռին է, որպէս կամիս, այնպէս արա՝ եթէ խանին զրկէս և կամ յիտ զարձուցանես:

Մնամ բարեյաջողութեան ձերոյ միշտ ազօթարար
խոնարհ Յովսէփ արքեպիսկոպոս:
ՄՄ, ձեռ. 2949, թ. 213ա-բ, (էջ 419-420), թիւ 809 (ի Հաշտարխան,
սո Մուրթուզա Կուլի խանի էլչի աղա Մահմատրէզն):


14

1791 փետրվարի 12 – ՀՈՎՍԵՓ ԱՐՂՈՒԹՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ
ՄՈՒՐԹՈՒՋԱ ԿՈՒԼԻ ԽԱՆԻՆ

ի Յեաշ

Գերապայծառ և փայլուն Մուրթուզալի խան
իմ ողորմած տէր և անգին բարեկամ
Բարեկամութիւնն իմ ի սրտէ առ պայծառութիւն քոյ յայտնի է Աստու- ծոյ և աշխարհի ամենայնի, նաև ողորմած Թադուհոյն և պայծառափայլ քննազին և քեզ իսկ, որ ես ամենայն յօժար սրտիւ կամիմ բոլորովին յաջո- ղութիւն քոյ և յառաջադիմութիւն: Յառաջ քան զայս էլչին ձեր՝ աղայ Մահմատ Հարազատ ծառայն քոյ իւր ծառայ Մահմատն առաքեալ էր առ մեզ և մեզ գրեալ, զոր ինչ հարկաւորն էր վասն ձեր, զորս մեք ծանուցաք բոլորովին պայծառափայլ քննազին և զնոյն Մահմատ ծառայն նորա տա- րաք առ քննազն, շատ մեծ ողորմութեամբ ընկալաւ զնա, որպէս ինքն յայտնելոց է ձեզ, որ մեծ-մեծ էլչոց հետ բնաւ խօսիլ չէր, այլ վասն սիրոյն, որ ունի առ քեզ, միշտ հետ նմա խօսակցութիւն առնէր ուրախ սրտիւ:

Իսկ այժմ ընկալաք մեք դիր ի մեր Թաղայ Դաւիթ ծառայէն քումմէ և ի յէլչի աղայ Մահմատէն և ի պարոն Մկրտում Գալստեանէն, որ դուք աս- տուծոյ յաջողութեամբն հոգտեմբերի 12 առեալ զԳիլան, մտեալ էք ի



Յովսէփ Արքեպս. Արղուբյանի կնիքը

1791 ասլրիլի 28/29 – Հ. ԱՐԴՈՒԹՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ
ՄՈՒՐԹՈՒՋԱ ԿՈՒԼԻ ԽԱՆԻՆ

Ի Պետրպոլք

Բարձրապատիւ և պայծառափայլ Մուրթուզալի խան, իմ ողորմած տէր և անգին բարեկամ¹³.

Զամենայն որպէսն մեր ի փետրվարի 8 ընդ գրոյ պայծառափայլ քնեազին ձեր էլչի աղայ Մահմատի տղայ Մահմատովն գրեցի և առաքեցի, յուսամ ընկալեալ և գիտացեալ իցէս և նորին պատասխանն գրեալ քնեազին և մեզ:

Յետ այնորիկ եկի ես ի Պետրպոլք ընդ քնեազին և զոր ինչ որպէս աղայ Մահմատ էլչին և պարոն Մկրտումն գրեալ էին մեզ զյաջողութենէ քուամէ և զկատարմանէ զօրացն թշնամւոյն քոյ և կամ անմեղ սպանումն եղբայրն քոյ և այլն, ամենայն գրով գրեալ ետու պայծառափայլ քնեազին, տրտմեցաւ վասն սպանութեան եղբորդ և ուրախացաւ ի վերայ յաջողութեան քոյ:

Զկնի ընկալայ և զախորժ գիրն քոյ, որ առ իս և առ քնեազն, առ այն ի սրտէ շնորհակալութիւն: Իմ գիրն ևս ուռւերեն թարգմանեալ ի միասին ետու պայծառափայլ քնեազին: Միամիտ լինիս, բոլոր արարմանցն Շիշկինի տեղեկացաւ և Հրամայեաց զնա փոխել վասն սիրոյ քոյ: Իմ պայծառ բարեկամ, ողորմած թագուհին մեծ շնորհ ունի առ քեզ և քնեազն մեր յոյժ, ապա եթէ խնդիրքդ շուտով ոչ կատարի, վասն այն մի ինչ մտածեր, զի այս մեծ պատերազմն որ կայ, բազում բանից արգելումն առնէ: Ապա գիտացես, որ այժմ քնեազն իւր գրոյ պատասխանոյն սպասէ, եթէ գրեսցես, Հրամայեսցես էլչուն քոյ և բարեկամին իմոյ ենարալ անշեֆ Կուտովիչի գիտութեամբն առնուլ գիրն քոյ և գալ առ քնեազն, ես ի բոլոր սրտէ այնքան հոգացող եմբանից քոց և ցանկացող յառաջադիմութեան քոյ, որպէս իմ սեպհական անձին: Եւ յոյս մեծ ունիմ յաստուծոյ, որ յաջողելոց է քեզ մեծ և երևելի առնելոց ի վերայ երկրի, որ անցեալ նեղութիւնքն քո և ձախորդութիւնքն մոռացեալ, գիտացես և ճանաչիցես զմեծութիւնն աստուծոյ,

¹³ Նշում էջ 220ր՝ «1791 ասլրիլի 29. Ի Պետրպոլքու առ Մուրթուզալի խանն գրեցաք ընդ մեր Յովհաննէսին»:

որ խրատեաց զքեզ, թէպէտ որպէս Հայր զթած, սակայն ոչ եթող զքեզ ի ձեռաց, որ դու ժողովրդեանն իւրոյ, որք քեզ Հպատակ լինելոց են, յայսմ հետէ լինիցիս որպէս Հայր զթած, սփոփող, միխթարիչ և ամենայն Հանգստութեանց տուիչ, որ այնու լինիցիս հաւատարիմ ծառայ աստուծոյ և սիրելի ժողովրդեանն քում, որով առաւել բարձրանալ կարես, զի քաղցրութիւնն քոյ կարէ զսիրտ ամենայնիցն առ քեզ քարշել, որ առանց պատերազմի և արեան Հեղման կամաւորապէս ծառայեսցեն քեզ: Ատելի է Աստուծոյ անպարտ արիւն Հեղութիւնն և կողոպտումնքն: Ամենայն թագաւորք երկու իրօք Հաճոյանան Աստուծոյ՝ ողորմածութեամբ և արդարութեամբ, առանց զրկանաց, սիրելի լինին ժողովրդեանն մարդասիրութեամբ և խոնարհութեամբ: Յանկալի լինին Հեռաւորաց աշխարհաշինութեամբ և խաղաղութեամբ և ահարկու՝ թշնամեաց, արիութեամբ և քաջութեամբ, ահա այսոքիկ են...

Գերապայծառ մօրք զալուստն առ քեզ լսեցի և ուրախացայ յոյժ, խնդրեմ իմ խոնարհութիւնն յայտնել ընդ օրհնութեան մեր: Պօօջիկ Յակօբն, որ ընդ Մահմատ ծառային ձերոյ եկեալ է առ ձեզ, յանձնեմ ի շնորհս քոյ և խնդրեմ շուտով արձակել և գիր գրել քնեազին և զորպիսութիւնդ ծանուցանել նմա և մեզ: Կողմանցս որպիսութիւնն է այս, որ Եւրոպիութեամբաւորքն միջնորդ եղեալ, կամին զսա Հաշտեցուցանել ընդ օսմանցոց, ապա գեռ ոչինչ ի գլուխ եկեալ չէ, երբ նորագոյն Համբաւ լինիցի աստ, ծանուցից ձեզ:

Սոյն թղթամատոյց Յովհաննէսն իմ յանձնեմ ի խնամս քոյ և խնդրեմ շնորհ ունիլ ի վերայ նորայ յատկապէս միշտ և Հանապազ և մարդասիրութիւն ցուցանել առ նա ի Հանգիւսմանն, վասն յայսմ մեծապէս շնորհակալ լինելոց եմ զքէն և այլն...

Մնամ Զերոյ... Յովսէփ արքեպիսկոպոս
Ռուսաց երկրի Հայոց ազգին
ՄՄ, ձեռ. 2949, Թ. 220բ-221բ (էջ 434-436, Թիւ 877):

[1791թ. մայիս] – Մ ՈՒՐԹՈՒՋԱ ԿՈՒԼԻ ԽԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՀՈՎՍԵՓ ԱՐԴՈՒԹՅԱՆԻՆ

Долгом себя поставляю уведомить ваше высокопреосвященство любезнейшего моего приятеля о здешних обстоятельствах.

Имел я два сражения нынешнюю зиму с злоковерным Гилянским народом, которого с помощью всевышняго творца и шастием всеавгустейшей государыни моей разбив, завладел Гилянию, начальники онаго со всем своим семейством взяты в плен и находятся теперь под стражею. Гилянскою областью владел я спокойно два месяца с половиною, стараясь приласкать тамошних рассеянных жителей к себе, из коих не малое число и привагели под покровительство всемиловивейшей монархии: но между тем находящийся при гилянском прте над казенными судами командир господин Шишкин злобствуя на меня, написал письмо чрез астраханских купцов к гилянскому Аге-Тагы, яко преданному и вернослужащему Аге-Мегметхану, с овнадеживанием вспомогать ему воинскими разными орудиями, с тем, чтобы Ага-Тагы соврав войско и согласясь с ним, Шишкиным, напал на меня и чрез то пострадал бы я как и Аднат-хан и был бы подвержен равной ему //участи. По таковым несносным для меня обстоятельством нахожу себя принужденным со всеми состоящимися при мне чиновниками и с войском удалиться в область Талишскую. Я предписал находящемуся в Астрахане моему посланнику, чтобы он письмо сие препроводил к вам, по получении которого прошу вас, любезнейший приятель, донести о вышепомянутых обстоятельствах благосклонному моему благодетелю, славнейшему России визирю, его чтобы вспомоществованнем своим не оставил меня, нижайшаго, снабдить тремя фрегатами с капитаном-лейтенантом Федором Матвеевичем Скиличием, с командою до трех сот человек солдат и с орудиями, дабы я мог себя защитить от угнетающего меня хеприятеля, а за продерзость помянутого Шишкина благоволено бы было судить его по законам в чем полагаюсь не поколебимо на милость и покровительство ея императорскаго величества и на предстательство его светлости и уверяю Вас, что российскийскому престилу пребуду верен службою моею не шадя никогда и последней капли крови

моей, в прочем остаюсь с моим высокопочитанием к Вашему Высокопреосвященству верным приятелем.

[печатать] Муртуза Кули хан

Ваше высокопреосвященство, милостивый отец, полученное мною от хана моего к Вашему высокопреосвященству письмо при сем доставить честь имею и с которого усмотреть изволите хана моего прозьбу, то покорнейше прошу пересказать его светлости, что господин Шишкин нетолько не хочет быть на многие повелении исполнителем, но и не посылает господина капитана Аклечева для пособия к моему хану, а я надеясь на Ваше милостивое покровительство осмеливаюсь именоватьца Вашего Высокопреосвященства милостиваго отца покорнейши сын, посланник Муртаза Кули хана Ага Мамет бек.

Мая 13 дня 1791 года

ՇԱԳԱԸ, Գոսարխիվ, ֆ. 15, լ. 192, ք. 67–68. Սովորույթ.

Перевод с письма Муртузы Кули хана к его Высокопреосвященству господину армянскому архиепископу Иосифу.

17

1798 թ. մարտի 12 – ՀՈՎՍԵՓ ԱՐԴՈՒԹՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ԱՐԱՍ ԽԱՆԻՆ

*Բարձրապատիւ և մեծանձն Արազխան,
մեր ողորմած տէր և բարեկամ.*

Ի փետրվարի 2էն զրեալ ախորժ գիրդ ընկալաք որպէս ի բարեկամէ մերմէ, որ ետ ինձ պատճառ յառաջացուցանել զփափակն իմ առ անձին ձերոյ իղձն կատարման: Թէպէտ և մեր մեծ խալիֆէն Ուլէքիլիսու քանիցս զրեալ էր մեզ, որ մեք աստ հոգս տանիմք, նոյնպէս և խօջայ Մկրտումն տեղդ յինէն խնդրեալ էր և միշտ զրէր մեզ, այլ այժմ ի ձեռն մեխիքացն մերոյ ընկալման զթուղթս ձեր, որ առ մեծ և հզօր կայսրն ամենայն Ռուստաց առ վէզիր ազամ և լուսափայլ քնեազ Աղէքսանդր Անզրէյիչ Բէզրօրդկին և առ այլն՝ ես ինքնս մատուցի ամենիցն միջնորդութեամբ և հետևողութեամբ ենարալ մայեօր և կազալէր Սերգէ Լազրիչ Լաշկարովին և ինչ

Հարկն էր խնդրեցի ի վեզիր ազամ լուսափայլ քնեազ Բէզբորողկուցն, Հաճութեամբ ընկալաւ զաղերս մեր և խոնարհաբար ծանոյց մեծի կայսերն զամենայն եղելութիւնս ձեր, զխնդիրքն մեծ խալիֆայի և իմ, ի գրոյ քոյ ևս ծանեաւ անմեղութիւն քոյ, որ դու, որպէս Հաւատարիմ ծառայ, կատարելով զհրամանն տեառն քոյ, փորձանաւորեալ ես: Ուստի ամենաողորմածաբար Հրամայեաց վէզիր ազամ լուսափայլ քնեազին, Հրաման գրել առ տեղւոյդ պարոն գուբեռնաթ Նիկոլայ Եագուլիչ Արշինովսկուն, որ քեզ արձակեցցէ զնալ առ կարօտեալ ընտանիսն քոյ և առ ողորմելի ծնողք, տալ քեզ ըստ բարեհաճութեան մեծի կայսերն Հարիւր թուման ճանապարհի խարջի և մնացեալ օրական ոտճիկն քոյ, զոր յառաջ տային և յետոյ կատարեալ էին, ի զալ շարաթին ողորմութեամբն աստուծոյ ուրբան բարձրագոյն ուղևորեալ լինելոց է առ ձեզ և ես նորին կօպիէն առաքեցից առ քեզ: Ուրախ եմ, որ ես կարացի ծառայել քեզ և ստանալն զմեծանձնութիւն ձեր լինելի ինձ միշտ բարեկամ ի յերկրի քոյ: Աստուածն ամենայնի տացէ քեզ բարի ճանապարհ, որ ողորմութեամբն նորին արժանասցիս տեսութեան կարօտեալ ընտանեացն քոյ և անտի գրեցես մեզ զորպէսն ձեր: Եւս խնդրեմ յաստուծոյ յառաջացիս ի փառս և ի պատիւս բարձրագոյնս և յուսով եմ, որ Հզօր և մեծափառ Բաբախան սարդարն¹⁴ յիշելով զգուրն Հօրն իւրոյ և թագաւորին Աղայ Մահմատ խանին¹⁵, ոչ արասցէ զքեզ անտես ի յատուկ խնամոց իւրոց: Այլ ես խոնարհաբար խնդրեմ ի քէն ունիլ ի մտի զնեքոյ գրեցեալս, որպէս ի բարեկամէ քուսմէ և յատուկ բարեկամեցողէ տանն Աղայ Մահմատ խանի մեծ պատիւ և Հզօր թագաւորին պարսից, զի ես երկրացի եմ, արիւնն իմ բռնադատէ զիս զՀաւատարմութիւն ունիլ առ տունն նորս և առ թագաւորութիւնն, որ եթէ նոքա լինիցին Հզօր, խաղաղաբար, աշխարհաշէն և արդարադատ՝ ընձ մխիթարութիւն է այն, պատճառն՝ որ յազգէ իմմէ բազումք են եթ իշխանութեան նոցա բնակեալք:

Նախ, խնդրեմ իմ խոնարհութիւնն Հայտնել իւրոյ մեծութեանն՝ Բաբախան սարդարին, ցանկամ, զի թագաւորեցցէ ի վերա Պարսից Աթոռոյն վասն խաղաղութեան, վասն աշխարհաշինութեան և վասն գթութեան և ողորմութեան ի վերա Հպատակաց իւրոց, զի այս է կամքն աստուծոյ՝ քաղցրութեամբ կառաւարել զժողովուրդս և զմեծ թագաւորութիւնս Պարսից Ա-

¹⁴ Հետաքրքիր է, որ Հ. Արղուժյանը Բաբախանին դեռ սարդար է անվանում և ոչ՝ շահ:
¹⁵ Հանգուցյալ Աղայ Մահմատ շահին Հ. Արղուժյանը անվանում է խան տիտղոսով և ոչ՝ շահ:

թոռոյն, ոչ եթէ սպանմամբ և ահաջուցմամբ և երկիր աւերելով, այլ Աթոռն իւր Հաստատելով ի վերա արդարութեան, զգոյթ խնամոց և ողորմութեան իւրոյ տարածեցցէ ի վերա Հպատակաց իւրոց մահմետականաց և քրիստոնէից, որպէս աստուած ինքն առ Հասարակ ածէ ի վերա Հարեաց և բարեաց և ծագէ զարեգակն ի վերա արդարոց և մեղաւորաց, որ ի կեանս իւր ամենայն մարդիկ օրհնեցցեն զանուն նորս և ամաչելով ի յողորմութեան նորին՝ մնացցեն միշտ ի Հարազատութեան:

Երկրորդ, զխանս, որ կացուցանէ զամենայն աշխարհի (թ. 162թ) որ եթէ այնպիսին նենգեցցէ իւրոյ թագաւորութեանն և կամ բռնասցի ի վերա ժողովրդեանն, զրկել զնոսս, փոխել և պատժել, լինել երկիրդ և այլոց Հարագործաց, զի ժողովուրդքն իւրոյ թագաւորութեանն են:

Երրորդ, որպէս նախնի թագաւորքն պարսից ևս, Աղայ Մահմատ խան թագաւորն՝ Հայրն և Հօր եղբայրն իւր ողորմութեամբն իւրեանց միշտ պահպանել զՍուրբ Աթոռն մեր էջմիածին՝ Ուչքիլիսայ կոչեցեալ, և մեծ խալիֆի նորին՝ միշտ խիլայիւ և հրովարտափօք պատուեալ են յիւրն առաւել քան զամենայն խանս, որպէս աղօթաբար ծառայի իւրեանց, զնոյն խնդրեմ և ես ի մեծութեանն նորին, առաւել ցուցանել առ նա զգոյթ և զողորմութիւն իւր և Հրամայել Երեւնայ խանին, որ չզրկեն զՈւչքիլիսէն և կամ յափշտակեն զմուրք նորս, զի նախնի թագաւորքն մաղաֆ են արարեալ զգիւղորայս Ուչքիլիսի, որ նոքա վայելելով զայն միշտ առ աստուած աղաչեցցեն վասն թագաւորին կենաց երկարութեանն և Հանգուցելոցն արժանաւոր առնել միշտ բարութեամբ յիշատակել:

Չորրորդ, զգոյթ ողորմութեան իւրոյ տարածանել առ ողորմելի ազգս մեր, որք են եթ խնամոց և Հովանաւորութեան իւրոյ մեծութեանն, որ նոքա վայելելով զայն՝ փախուցեալքն ի բռնութեանն խիստ տեսարցն, յետս դարձցին ի Հայրենի աշխարհն իւրեանց:

Հինգերորդ, Ղարաբաղու ջարջու որդի Իբրահիմ խան կոչեցեալն, որ թշնամին է տան իւրոյ, պատճառ այսքան խռովութեան և սպանման այն մեծ թագաւորին, և առիթ կործանման ողորմելի մելիքացն մերոց, բառնալ ի Շուշու բերթէն և կործանել զնա, զի ի նմա ճշմարտութիւն ոչ գոյ, եթէ գիր գրէ, թէ ընծայ և մարդ զրկէ, ամենայն սուտ է և Հնաբք՝ խաբուութեան, զի ես լաւ գիտեմ զբարս նորս և նա՝ կործանիչ իմոյ ազգին և ջնջիչ յերկրէ անտի:

Վեցերորդ, լուաք, որ նորին մեծութիւնն կամի դեսպան առաքել առ Հօր և յամենայն աշխարհի փառաւորեալ և իբրև զարեգակն բարձրացեալ մեծ կայսրն ամենայն Ռուստաց և Հաստատել զխաղաղութիւն ի մէջ երկուց թագաւորութեանցն, շատ և շատ բարի է և մեծ շահ է իւր թագաւորութեանն՝ (թ. 163ա) ունիլ իւրն օգնական այս մեծ և Հօր թագաւորութիւնն, երբ առաքեցէ՝ որքան կարօղ եմ ես, ծառայեցից ամենայնի, որպէս և արժանաւորն յիշատակի Աղայ Մահմատ խան թագաւորն զՄիրզայ Մահմատային առաքեալ էր, ես շատ հետեւեցայ, որ ամենայն բանն ըստ կարգի լինիցի, այլ ոչ եղև Հնար լսել ինձ Միրզայ Մահմատալուն, որպէս յառաջ ասացեալ եմ բարձրանձնութեան ձերում և եթէ Հնար լինի և ոչ լինի ընդդէմ իւրոյ մեծութեանն, Հրամայեցէ յամենայն իշխանութեան իւրոյ՝ ուր յուրէք Թիլֆիղու գերիք կան, դարձուցանել զնոսա յերկիրն իւրեանց, այսու ի վերա աշխարհի մեծ անուն ստանայ և ինքն մեծ և Հօր թագաւորն կարծեմ, որ շնորհակալի յոյժ, այլև աստուած ևս շնորհակալի, այժմ քոյ մեծութիւնն ի վերայ քոյ ճանաչեա, թէ որքան դառն է գերութիւնն և որքան քաղցր է ազատութիւնն: Ազատարար թագաւորն Աստուծոյ է նման և վարձն նորա ինքն Աստուած է:

Եօթներորդ, իմ մէկ ճորտ տէր Ստեփան քահանայի դուստրն, անունն՝ Շուշան, տասն և Հինգ տարեկան, այժմ Փահրապատ է, աղաչեմ վասն սիրոյ իմոյ, Հրամայել զտանել և առաքել առ խօջայ Մկրտումն, զի ողորմելի մայրն նորա աստ ի Մօզղօկ է, որ տեսանէ և օրհնէ զկեանս քոյ: Եւ ես վասն այնմ ծառայեցից ձեզ:

Ութերորդ, գոր ինչ պարոն Մէլիք Ջիմշիտին ասացեալ էիր և կամ զըով նշանեալ, այնմ կատարուամն ետ, որպէս և ինքն գրեաց բարձրանձնութեանն ձերում, ի Հարկէ և Դուք, ըստ Ձերդ բանի կատարուամն տալոց էք և ձերդ յատուկ շնորհակալութիւն գրելոց առ հնարալ Սերգէ Լազրիչ Լաշկարովն և առ վէզիր ազամն: Այլն ի զրոյ Մէլիք Ջիմշիտին գիտացես:

Եւ գրեալ եմ Թադդէոս վարդապետին և խօջայ Մկրտումին, որք զան առ քեզ և այսու ամենայն գրեցեալս իմ մի առ մի ասեն ձեզ, որ Դուք պարսեբէն գրէք և միշտ ի մտի ունիցիք և զմեր բարեկամութեան շողկապն պահելով, զձեր որպէսն գրել և բարձրապատիւ մօրդ և ամենայն ընտանեացդ զմեր օրհնութիւնն յայտնեցես: Եւ պատահեալ բանիցն մերոց, որպէս բարեկամ հոգասցես:

Մնամ վասն Ձերոյ բարձրապատութեան և պայծառութեանն միշտ ի սրտէ աղօթարար Յովսէփ արքեպիսկոպոս

ՄՄ, ձև. 2951, թ. 161բ-163ա:

18

1798 մայիսի 12 – ՄՈՒՐԹՈՒՋԱ ԿՈՒՂԻ ԽԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՀՈՎՍԵՓ ԱՐ-ՂՈՒԹՅԱՆԻՆ

յԱժդարխան

Պսակազգեաց սրբազան արքեպիսկոպոս, իմ ամէնողորմ տէր

Յարգմամբ մեծաւ ընկալայ զշնորհանիչ զիր ձերոյ սրբազնութեան ի յանցեալ փօշտն և յայտնի եղև այնու առաւելութիւն սիրոյ ձեր առ իս, զօրէն ճշմարիտ բարեկամի, ուստի և իմ խոնարհեալ ի շնորհակալութիւնս, ցանկամ վերստին տեսանել զբարերարդ իմ, և ընծայել սրտի իմոյ մխիթարութիւն մեծ:

Առաքեցի ահա յայդը ընդ սուրհանդակի զհաւատարիմն մեր Իբրահիմ բէգն, որպէսն մեր լիովին ի դմանէ յայտնի:

Խնդրեմ մեծապէս, որ ինչ ի կողմանէ մերմէ բանք իցէն դմա խօսելիք, այնց ամենայնից օգնական և նպաստ լինիլ մեծաւ Հետեղութեամբ, զի ամենայն մեղապատկան բանք բերանոյ դորին գիտացէ սրբազնութիւն ձեր, որ թարց կարծեաց խօսք իմ են և խորհուրդք սրտիս:

Նաև խնդրեմ զգիր բարեկամական սիրոյն ձեր անպակաս առնել յինէն՝ Հանդերձ տեղոյդ որպիսութեամբն, զորս մեծ շնորհ Համարիմ ի յիս:

Մնամ Ձերոյ բարձր սրբազնութեանն ամենախոնարհ ծառայ (կնիք)

ՄՄ, Կաթող. Դիւան, թղթ. 8, վավ. 42, ընագիր, կնիք՝ արաբատառ:

1798 թ. մայիսի 13 – ՀՈՎԱԵՓ ԱՐԴՈՒԹՅԱՆԻ ԱԲԱԱ ԽԱՆԻՆ ԳՐԱԾ
ՆԱՄԱԿԻ ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ս. Պետերբուրգ

Առ բարձրապատիւ Աբաղխանն ի Հաշտարխան

Գրոյն ընկալնուլն, ողորմած կայսեր ուքազն, որ առ նոր գուբեռնալն Հաշտարխանու, սակս գնալոյն իւրոյ ի Հայրենիսն մեծաւ պատուով, որոյ և զօրինակն ընդ գրոյս առաքելն մեր առ ինքն: Յորդորմունք՝ չմոռանալ զբարեկամական սէրն մեր, որ առ միմեանս և եթէ մէլիք Ջիմշիտին բան ինչ անկանիցի նմա, ոչ անտես առնել զնա, որպէս փոխանակ սիրոյ նոցա, զոր սիրեն զնա: Նոյնպէս յանձնարարութիւն վասն ազգին և Սրբոյ Աթոռոյն, որպէս գրեալ եմք քանիցս իւրն և այլն:

ՄՄ, ձեռ. 2951, թ. 177ա:

1799 թ. օգոստոսի 17 – ՊԵՏՐ ԿՈՎԱԼԵՆՍԿՈՒ ՆԱՄԱԿԸ
ՊԼ. ԶՈՒԲՈՎԻՆ (՞)

Աստրախան

Сиятельный граф, милостивый государь,
Армянский мелик Джимшит Шахназаров, находящийся здесь для окончания собственных своих дел, и в скорости отправляющийся в Моздок для совокупного со мною переезда в Грузию, представил ко мне полученное им от Бабахана письмо в сопровождении такового же от некоего Абазхана, содержащегося здесь в плену и по высочайшему соизволению отпущенного в свое отечество¹⁶. Письмы сии по недостатку здесь надежных персидского языка переводчиков не могли быть переведены в точности. По содержанию

¹⁶ Ըստ Պավել Առաջին կայսրին գրած Մելիք Ջիմշիտի նամակի, Բաբա խանի նամակը գրվել է Աբաս խանի միջնորդութեամբ, որը, ինչպես գիտենք, Հովսեփ Արղուսթյանի խնդրանքի արձագանքն էր: Ստացված նամակները Մելիք Ջիմշիտը Հանձնել է Պ. Կովալենսկուն, իսկ նա էլ իր բացատրական նամակի Հետ միասին այն ուղարկել է արքունիք (տե՛ս Армяно-русские отношения..., IV, с.510):

оных заключаются оне в том, что Баба хан похваляя прежния его, мелика, верность и усердие на службе Аги Магомед хану, приглашает его возвратиться паки в Персию со овнадеживанием содержать его в особенном уважении и милостях своих. Я, препровождая при сем означенныя письма в оригинале, приобщая тут же и порученный мне от помянутого мелика на высочайшее имя всеподданнейший его по поводу сих писем отзыв, с коего следует у сего для сведения Вашего сиятельства список, долгом моим имею честь донести, что сем случае Мелик Джимшил не оставил возобновить предо мною изустно священный свой обет пребывать всегда верным и усердным к службе Е. И. В. без малейшаго когда-либо от подобных предложений твердости своей колебания.

Петр Коваленский

1799 года августа 17 дня
Астрахань

АВВР, ф. СРП, оп. 77/6, д.473, л.306.

1794 թ. Հոկտեմբերի 25 – ՀՈՎԱԵՓ ԱՐԴՈՒԹՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ
ՆՈՐ ՆԱԽԻԶԵԻԱՆԻ ՄԱԳԻՍՏՐԱՍԻՆ

Յայտնի է մագիստրաթին յանդուզն Համարձակական լրբութիւն քաղաքիս խառնիճաղանճ ժողովրդեանն յառաջ քան զմտանելն մեր ի քաղաքս և զկնի մտանելոյն, թէ որքա՞ն խոռվութիւնս յարուցին ընդ վայր և իզուր որքա՞ն ամբոխս կուտեցին ի տումն ընդդէմ բարձրագոյն Հրամանին կայսերական մեծութեանն և ընդդէմ բարեկարգութեան քաղաքիս, մինչև Համարձակիլ և առ մեզ գրել գիր լրբութեան, անուամբ տումն տեղոյս, ոչ երբէք էր կապակցեալ Համաձայնիլ ընդ խոռվարարաց և նոցա անպատշաճասութիւնն գրել մեզ, ոչ ունէր գիրաւունս տումն և իւր անպատշաճ ժողովն գիր շինել և արտաքսիլարՀամարՀանօք գերեկիլ արսն քաղաքիս, ոչ պատշաճ էր տումին և իւր խոռվարար ժողովոյն յանդգնիլ և զգործս և զվճիռս մագիստրաթին արՀամարՀել յաղաքս Սուրբ Լուսաւորչու Հայեաթին, որ Հասարակաց Հաւանութեամբ, թագաւորական կնքով և դատաւո-

րաց ստորագրութեամբ տուեալ է մեզ հոգևոր իշխանութիւնն, ոչ ունէր զիրաւունս Տուան և իւր չար ժողովն խռովարար պահանջել եկեղեցւոյ արդիւնքն և արգելուլ տանելոյ ի յԱռաջնորդարանն, ոչ ունէր Տուան իրաւունս՝ ինքն իւր խռովարար ամբօրհիւն համարձակիլ ձեռնամուխ լինիլ ի հոգևոր իշխանութիւնս մեր, զորս ունիմ յաստուծոյ ի թագաւորէն և ի Հայրապետէն և ի յիմ յատուկ աշխատանացն քաղաքիս, որ նա կարիցէր պահանջել զեկեղեցական անօթսն:

